Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* http://www.armin.am

*Էլ. փոստ՝* info@armin.am

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

# ВЛАДИМИР МАЯКОВСКИЙ

# Избранное

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН — 1982

# ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

# Հատընտիր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1982

ԳՄԴ 84 Ռ 7
Մ 230

Կազմեց՝ ԽԱՉԻԿ ՀՐԱՉՅԱՆԸ

Մայակովսկի, Վ. Վ.

Մ 230 Հատընտիր/Կազմ. Խ. Հրաչյանը։ Ռուս. թարգմ.՝ Ե. Չարենց, Պ. Սևակ և ուրիշներ.— Եր.։ Սովետ. գրող, 1982.— 696 էջ.

Վ. Վ. Մայակովսկու «Հատընտիրը» բաղկացած է երեք բաժնից՝ բանաստեղծություններ, պոեմներ և պիեսներ։ Միհատորյակում ընդգրկված են Մայակովսկու ինչպես նախահեղափոխական, այնպես էլ սովետական շրջանի լավագույն ստեղծագործությունները։

Առաջին անգամ Մայակովսկի դրամատուրգը հայ ընթերցողին է ներկայանում իր բոլոր պիեսներով՝ «Միստերիա-բուֆ», «Փայտոջիլը» և «Բաղնիք»։

Աննշան բացառությամբ պահպանված է նյութերի ժամանակագրական կարգը։

Մ 4702010200 (707) / 705 (01) 82 — 82 «Տ»

ԳՄԴ 84 Ռ 7
Р 2

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1982

# ԵՍ ԻՆՔՍ

## ԹԵՄԱՆ

*Ես բանաստեղծ եմ։ Հենց դրանով էլ հետաքրքիր եմ։ Այդ մասին էլ գրում եմ։ Մնացածի մասին՝ եթե միայն հասունացել է բառը։*

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՍ

*Բուրլյուկն* ասում էր՝ Մայակովսկու հիշողությունը՝ ոնց որ Պոլտավայում ճանապարհը, ամեն ոք իր կրկնակոշիկն է թողնում այնտեղ։ Սակայն դեմքերն ու տարեթվերը հիշողությանս մեջ չեն մնում։ Հիշում եմ միայն, որ* 1100 *թվականին ուր որ գաղթեցին ինչ-որ «դորիացիներ»։ Այս դեպքի մանրամասները չեմ հիշում, բայց պետք է որ լուրջ գործ եղած լիներ։ Իսկ մտքում պահել, թե՝ «Սույնը գրված է մայիսի 2-ին։ Պավլովսկ։ Շատրվաններ», միանգամայն մանր բան է։ Ուստի ազատ լողում եմ իմ ժամանակագրության մեջ։*

## ԳԼԽԱՎՈՐԸ

*Ծնվել եմ հուլիսի 7-ին,* 1894 *թվականին (կամ* 93. *մայրիկիս և հորս ծառայության ցուցակի կարծիքները բաժանվում են։ Համենայն դեպս՝ ոչ վաղ)։ Հայրենիքս է՝ Բաղդադի* գյուղը, Քութայիսիի նահանգ, Վրաստան։*

## ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

*Հայրս՝ Վլադիմիր Կոնստանտինովիչը (անտառապետ Բաղդադիում), մեռել է* 1906 *թ.։*

*Մայրս՝ Ալեքսանդրա Ալեքսեևնա։*

*ա) Լյուդա*

*Քույրերս՝*

*բ) Օլյա։*

*Եղել է նաև Անյուտա հորաքույրս։ Ուրիշ Մայակովսկիներ ըստ երևույթին չկան։*

## 1-ԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Նկարչական հասկացողություններ։ Տեղն անհայտ է։ Ձմեռ։ Հայրս դուրս էր գրել «Ռոդինա» ժուռնալը։ «Ռոդինա»-ն ուներ «հումորիստական» հավելված։ Ծիծաղելիների մասին խոսում են և սպասում։ Հայրս ման է գալիս ու երգում իր մշտական «Ալոն զանֆան դը լա չորս-չորս»-ը։ «Ռոդինա»-ն եկավ։ Բացում եմ և իսկույն (նկար) բղավում՝ «Ի՜նչ ծիծաղելի է։ Մի տղամարդ և կին համբուրվում են»։ Ծիծաղեցին։ Ավելի ուշ, երբ հավելվածն եկավ, և պետք էր իրոք ծիծաղել, պարզվեց՝ առաջ միայն ինձ վրա են ծիծաղել։ Այսպես բաժանվեցին մեր հասկացողությունները նկարների և հումորի մասին։*

## 2-ՐԴ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Բանաստեղծական հասկացողություններ։ Ամառ։ Եկվոր բազմություն։ Գեղեցիկ երկարահասակ ուսանող Բ. Պ. Գլուշկովսկին։ Նկարում է։ Կաշեկազմ մեծ տետր։ Փայլուն թուղթ։ Թղթի վրա մի երկար մարդ առանց վարտիքի (գուցե և կիպ՝ մարմնին) հայելու առջև։ Մարդուն անվանում են «Եվգենի-օնեգին»։ Թե Բորյան էր երկարահասակ, թե նկարված մարդը։ Պարզ է, Բորյային ես համարում էի այդ նույն «Եվգենի-օնեգինը»։ Կարծիքս մնաց երեք տարի։*

## 3-ՐԴ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Գործնական հասկացողություններ։ Գիշեր։ Պատի ետևում պապայի ու մամայի անվերջ քչփչոցը։ Դաշնամուրի մասին։ Ողջ գիշեր չքնեցի։ Ծակում էր միևնույն դարձվածքը։ Առավոտը վրա պրծա վազելով. «Պապա, ի՞նչ բան է վճարման տարաժամկետումը»։ Բացատրությունը շատ դուր եկավ։*



## ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ամառ։ Հյուրերի ցնցող քանակ։ Կուտակվում են անվանակոչությունները։ Հայրս պարծենում է իմ հիշողությամբ։ Բոլոր անվանակոչությունների համար ինձ ստիպում են ոտանավորներ անգիր անել։ Հիշում եմ՝ հատկապես հորս անվանակոչության համար՝*

*«Մի օր, ցեղակից լեռների*
*խիտ բազմության մեջ...»**

*«Ցեղակից» և «լեռներն» ինձ զայրացնում էին։ Թե ովքեր էին դրանք, ես չգիտեի, իսկ կյանքում դրանք չէին կամենում ինձ հանդիպել։ Հետագայում ես իմացա, որ դա բանաստեղծականություն է, և կամացուկ սկսեցի ատել այդ բանը։*

## ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

*Առաջին տունը, որ պարզորոշ հիշում եմ։ Երկու հարկ։ Վերինը մերն է։ Ներքինը՝ գինու փոքրիկ գործարան։ Տարին մեկ անգամ՝ խաղողով լի սայլեր։ Ճմլում էին։ Ես ուտում էի։ Նրանք խմում էին։ Այդ ամբողջը՝ Բաղդադիի մոտ գտնվող վրացական հնագույն բերդի տերիտորիան էր։ Բերդը քառանկյունանում է բերդապարսպով։ Պարսպի անկյուններում՝ պատվանդաններ թնդանոթի համար։ Պարիսպների վրա՝ մարտկոցներ։ Պարիսպներից դենը՝ խրամատներ։ Խրամատներից այն կողմ՝ անտառներ ու շնագայլեր։ Անտառների վերևը՝ լեռներ։ Մեծացա։ Վազում էի ամենաբարձրի վրա։ Լեռներն իջնում էին դեպի հյուսիսակողմ։ Հյուսիսում շղթան քանդվում է։ Երազում էի. դա Ռուսաստանն է։ Անասելի քաշում էր այն կողմը։*

## ԱՆՍՈՎՈՐԸ

*Յոթ տարեկան եմ։ Հայրս սկսեց ինձ տանել ձիով՝ անտառային շրջագայությունների ժամանակ։ Լեռնանցք։ Գիշեր։ Վրա է հասել մշուշը։ Նույնիսկ հորս չեմ տեսնում։ Արահետը շատ նեղլիկ է։ Հայրս, երևի թևքով, քաշեց մասրենու ճյուղը։ Փշերով ճյուղը թափով կպավ իմ թշերին։ Փոքր-ինչ ճչալով, հանում եմ փշերը։ Մեկեն չքացավ թե մշուշը, թե ցավը։ Տեղի տվող մշուշում՝ մեր ոտքի տակ, երկնքից պայծառ է։ Դա էլեկտրականությունն է։ Իշխան Նակաշիձեի տակա-*

ռագործարանը։ Էլեկտրականությունից հետո բոլորովին թողի բնությամբ հետաքրքրվելը։ Կատարելագործված բան չէ։

## ՈՒՍՈՒՄ

Սովորեցնում էր մայրս և ամեն տեսակի քույրերս։ Թվաբանությունը թվում էր անճշմարտանման։ Պետք է հաշվել տղաներին բաժանելիք խնձորներն ու տանձերը։ Իսկ ինձ շարունակ տվել են, և ես շարունակ տալիս էի առանց հաշվի։ Կովկասում մրգեր՝ ինչքան ուզես։ Կարդալ սովորեցի սիրով։

## ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Ինչ-որ «Թռչնալաճառ Ագաֆիա»։ Թե որ այն ժամանակ մի քանի այդպիսի գիրք ընկներ ձեռքս՝ կարդալը կթողնեի բոլորովին։ Բարեբախտաբար, երկրորդը «Դոն Կիխոտն» էր։ Այ թե գիրք է։ Շինեցի փայտե սուր ու զրահ և հարվածում էի շուրջս։

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տեղափոխվեցինք։ Բաղդադիից Քութայիսի։ Քննություն՝ գիմնազիա մտնելու։ Բռնեցի։ Հարցրին խարսխի մասին (իմ թևքի վրա), լավ գիտեի։ Բայց տերտերը հարցրեց՝ ինչ բան է „ОКО"։ Ես պատասխանեցի՝ «Երեք ֆունտ» (այդպես է վրացերեն)։ Սիրալիր քննողներս բացատրեցին ինձ, թե „ОКО" կնշանակե «աչք», հին եկեղեցասլավոնական լեզվով։ Այդ պատճառով քիչ մնաց, որ կտրվեի։ Դրա համար միանգամից ատեցի բոլոր հինը, բոլոր եկեղեցականն ու բոլոր սլավոնականը։ Հնարավոր է, որ այստեղից է առաջ եկել և՛ իմ ֆուտուրիզմը, և՛ իմ աթեիզմը, և՛ իմ ինտերնացիոնալիզմը։

## ԳԻՄՆԱԶԻԱ

Նախապատրաստական, 1-ին և 2-րդ։ Առաջադիմությամբ առաջինն եմ։ Ամբողջը հինգեր են։ Կարդում եմ Ժյուլ Վեռն։ Առհասարակ ֆանտաստիկ բաներ։ Ինչ-որ մեծամորուք մարդ սկսեց նկարչական ընդունակություններ հայտնաբերել իմ մեջ։ Սովորեցնում է ձրի։

## ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Տանն ավելացավ լրագրերի և ժուռնալների թիվը։ «Ռուսկիե վեդոմոստի», «Ռուսկոե սլովո», «Ռուսկոե բոգատստվո»



և այլն։ Կարդում եմ բոլորը։ Անգիտակից կերպով լարված եմ։ Հիացնում են բացիկները՝ հածանավեր նկարած։ Մեծացնում եմ և արտանկարում։ Հանդես եկավ «պրոկլամացիա» բառը։ Պրոկլամացիաները կախում են վրացիները։ Վրացիներին կախում են կոզակները, ընկերներս վրացի էին։ Ես սկսեցի ատել կոզակներին։

## ԱՆԼԵԳԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայից եկավ քույրս։ Ոգևորված։ Թաքուն տվեց ինձ երկար թղթիկներ։ Դուր էր գալիս, շատ ռիսկով բան էր։ Հիմա էլ հիշում եմ։ Առաջինը՝

Ուշքի՛ եկ, ընկեր, ուշքի՛ եկ, եղբայր,
Շո՛ւտ արա, ձգի՛ր հրացանդ վա՛յր...

Եվ էլի ինչ որ մեկ ուրիշը, որ վերջանում էր՝

...Թե չէ՝ կգնաս գերմանացոց մոտ
Կնոջդ, որդուդ և մայրիկիդ հետ։

(Թագավորի մասին)։

Դա հեղափոխություն էր։ Դրանք ոտանավորներ էին։ Ոտանավորն ու հեղափոխությունը ինչ-որ միացան գլխումս։

## 905 ԹՎԱԿԱՆ

Սովորելու ժամանակ չէր։ Սկսեցի երկուներ ստանալ։ Չորրորդ դասարանը փոխադրվեցի միայն նրա համար, որ գլուխս քարով ջարդել էին (Ռիոնի ափին կռվել էի), խղճացին վերաքննությունների ժամանակ։ Ինձ համար հեղափոխությունն սկսվեց այսպես. իմ ընկերը՝ քահանայի խոհարար Իսիդորը, ուրախությունից ոտաբոբիկ թռավ պլիտայի վրա՝ սպանել էին գեներալ Ալիխանովին*։ Վրաստանի ճնշողն էր։ Ծայր առան ցույցերն ու միտինգները։ Ես էլ գնացի։ Լավ էր։ Ըմբռնում եմ նկարչորեն՝ անարխիստները սև են հագել, էսէռները՝ կարմիր, էսդեկները՝ կապույտ, մնացած գույներով՝ ֆեդերալիստները։

## ՍՈՑԻԱԼԻԶՄ

Ճառեր, լրագրեր։ Այդ ամենից՝ անծանոթ հասկացողություններ և խոսքեր։ Բացատրություն եմ պահանջում ինքս

կինձից։ Պատուհաններում՝ սպիտակ գրություններ՝ «Մորկա-հավ»։ Նույն թանկ մնացին։ Առնում եմ ամեն ինչ։ Վեր եմ կենում առավոտը 6-ին։ Կարդում եմ անդադար։ Առաջինը՝ «Կորչեն սոցիալ-դեմոկրատները»։ Երկրորդը՝ «Տնտեսագիտական զրույցներ»։ Ինձ ամբողջ կյանքումս զարմացրեց սոցիալիստների ընդունակությունը փաստերը պարզաբանելու, աշխարհը սիստեմի վերածելու խնդրում։ «Ի՞նչ կարդալ», կարծեմ Ռուբակինի։ Կարդացի ամեն բան, ինչ խորհուրդ էր տրվում։ Շատ բան չեմ հասկանում։ Հարցնում եմ։ Ինձ մտցրին մարքսիստական խմբակ։ Ընկա «Էրֆուրտյան»-ի մեջ։ Կեսից։ «Լյումպենպրոլետարիատի» մասին։ Սկսեցի ինձ սոցիալ-դեմոկրատ անվանել, հորս բերդան հրացանները փախցրի էսէռական կոմիտե։

Պատկերով՝ դուր եկավ Լասսալը**։ Երևի նրա համար, որ անմորուս էր։ Ավելի ջահելավուն։ Լասսալին ես շփոթում էի Դեմոսթենեսի հետ։ Գնում եմ Ռիոնի ափը։ Ճառեր եմ արտասանում՝ բերանս քարեր լցրած։

## ՌԵԱԿՑԻԱ

Ըստ իս, սկսվեց հետևյալից. Բաումանի հիշատակին կազմակերպված ցույցին, խուճապի (թերևս, ցրման) ժամանակ իմ գլխին (երբ վայր էի ընկել) մի մեծ թմբուկ դիպավ։ Ես վախեցա, կարծում էի՝ ինքս եմ տրաքել։

## 906 ԹՎԱԿԱՆ

Հայրս մեռավ։ Մատը ծակել էր (թղթերն էր կարում)։ Արյան վարակում։ Այդ օրվանից քորոցներ տանել չեմ կարող։ Բարեկեցությունը վերջացավ։ Հորս թաղումից հետո՝ մեզ մոտ 3 ռուբլի կար։ Բնազդաբար, տենդագին մենք ծախծխեցինք սեղաններն ու աթոռները։ Շարժվեցինք դեպի Մոսկվա։ Ինչո՞ւ։ Նույնիսկ ծանոթներ չկային։

## ՃԱՆԱՊԱՐՀ

Ամենից լավը Բաքուն է։ Վիշկաներ, ցիստեռններ, լավագույն դուխի՝ նավթ, իսկ այնուհետև՝ տափաստան։ Անապատ նույնիսկ։



## ՄՈՍԿՎԱ

Իջևանեցինք Ռազումովսկիում։ Քրոջս ծանոթները Պլոտնիկովներն են։ Առավոտը գնացքով՝ Մոսկվա։ Բնակարանիկ վարձեցինք Բրոննայա փողոցում։

## ՄՈՍԿՈՎՅԱՆԸ

Ուտելիքի կողմից վատ է։ Կենսաթոշակ՝ 10 ռուբլի ամսական։ Ես ու երկու քույրերս սովորում էինք։ Մայրս ստիպվեց վարձով տալու սենյակներ և ճաշեր։ Սենյակներն անպետք էին։ Աղքատ ուսանողներ էին ապրում։ Սոցիալիստներ։

## ՀԱՃՈՒՅՔՆ

Ուղարկված էի նավթի։ 5 ռուբլի։ Կոլոնիալ խանութում ինձ տվին 14 ռուբլի 50 կոպեկ մանրուք։ 10 ռուբլի— զուտ վաստակ։ Խիղճս տանջեց։ Երկու անգամ խանութում շրջեցի («Էրֆուրտյանն» էր ձեռքում)։ Ո՞վ էր հաշվի մեջ սխալվել, տե՞րը, թե՞ ծառայողը, կամաց հարցնում եմ գործակատարին։— Տերը։— Գնեցի ու կերա չորս շաքարահաց։ Մնացածը ծախսեցի Պատրիարքի լճակում նավակով ման գալուն։ Այն օրվանից շաքարահաց ուտել չեմ կարողանում։

## ԱՇԽԱՏԱՆՔ

Ընտանիքը փող չունի։ Ստիպված էի կիզաքանդակել ու նկարել։ Հատկապես մտքումս են մնացել զատկական ձվերը։ Կլոր, պտտվում ու ճռճռում են դռների պես։ Ձվերը վաճառում էի Նեգլիննայա փողոցի մի տնայնագործական խանութի։ Հատը 10—15 կոպեկով։ Այն օրից անսահման ատում եմ Բեմերին*, ռուս ոճն ու տնայնագործությունը։

## ԳԻՄՆԱԶԻԱ

Փոխադրվեցի 5-րդ գիմնազիայի 4-րդ դասարանը։ Միավորներ՝ թույլ ձևով զանազանակերպված երկուսներով։ Նստարանիս տակ՝ «Անտի-Դյուրինգ»։

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Բելետրիստիկան ամենևին չէի ընդունում։ Փիլիսոփայություն։ Հեգել։ Բնագիտություն։ Բայց գլխավորապես՝ մարք-

սիզմ։ Չկա արվեստի մի ստեղծագործություն, որով ես տարվեի ավելի, քան Մարքսի «Առաջաբանով»։ Ուսանողների սենյակներից գալիս էր անլեգալ գրականություն։ «Փողոցային կռվի տակտիկան» և այլն։ Որոշակի հիշում եմ լենինյան կապտագույն «Երկու տակտիկա»-ն։ Դուր էր գալիս, որ գիրքը մինչև տառերը կտրված էր։ Անլեգալ կերպով խցկելու համար։ Առավելագույն տնտեսման էսթետիկա։

## ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՌՈՏԱՆԱՎՈՐԸ

Երրորդ գիմնազիան հրատարակում էր փոքրիկ անլեգալ ժուռնալ՝ «Պորիվ»-ը։ Վիրավորվել էի։ Ուրիշները գրում են, իսկ ես չե՞մ կարող։ Սկսեցի գրիչս ճռճռացնել։ Ստացվեց անսպասելիորեն հեղափոխական և նույն չափով այլանդակ։ Այժմյան Կիրիլովի պես մի բան։ Ոչ մի տող չեմ հիշում։ Գրեցի երկրորդը։ Քնարերգական դուրս եկավ։ Անհամատեղելի համարելով սրտի այդպիսի վիճակն իմ «սոցիալիստական արժանապատվության» հետ՝ գրելը թողի իսպառ։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1908 թիվ։ Մտա ՌՍԴԲՊ (բոլշևիկների) կուսակցության մեջ։ Քննության ենթարկվեցի առևտրաարդյունաբերական ենթաշրջանում։ Բռնեցի։ Պրոպագանդիստ։ Գնացի բուլկեգործների մոտ, հետո՝ կոշկակարների և վերջապես՝ տպագրիչների մոտ։ Համաքաղաքային կոնֆերանսում ընտրեցին Մ. Կ.-ի անդամ։ Այնտեղ էին Պովոլժեցը, Սմիդովիչը և ուրիշները։ Կոչվում էի «ընկեր Կոնստանտին»։

## ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Գրուզինի փողոցում ոստիկանների դարանն ընկա։ Մեր անլեգալ տպարանը։ Կերա բլոկնոտս։ Հասցեներով էր և կազմած։ Պրեսնյայի ոստիկանական տեղամասը։ Օխրանկա։ Սուշչևսկի ոստիկանական տեղամասը։ Քննիչ Վոլտանովսկին (ըստ երևույթին իրեն խորամանկ էր համարում) ստիպեց գրել թելադրությամբ. ինձ մեղադրում էին պրոկլամացիա գրելու մեջ։ Ես անհուսալիորեն սխալներ արի թելադրության մեջ։ Գրեցի „социяльдимокритическая“։ Խաբեցի։ Բաց թողին երաշխավորությամբ։ Ոստիկանատանը տարակուսանքով



կարդացի «Սանին»-ը*։ Չգիտես ինչու, այդ գիրքը ոստիկանական ամեն մի տեղամասում էլ կար։ Ըստ երևույթին հոգեփրկչական էր։

Դուրս եկա։ Մոտ մի տարի՝ կուսակցական աշխատանք։

## ԵՐԿՐՈՐԴ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մեր տան կենվորները փորում են տագանկայի բանտի տակը։ Ազատելու տաժանակիր կանանց։ Հաջողվեց փախուստ կազմակերպել Նովինսկի բանտից։ Ինձ բռնեցին։ Տանն ատրճանակ և անլեգալ գրականություն գտան։ Չէի ուզում նստել բանտում։ Սկանդալ էի անում։ Փոխադրում էին մի ոստիկանատնից մյուսը, Բասմաննայա, Մեշչանսկայա, Մյասնիցկայա և այլն, և վերջապես՝ Բուտիրկի բանտը։ Մենախուց № 103:

## ԲՈՒՏԻՐՅԱՆ 11 ԱՄԻՍՆԵՐ

Կարևորագույն ժամանակ ինձ համար։ Երեք տարվա տեսականից ու գործնականից հետո՝ վրա ընկա բելետրիստիկային։

Կարդացի ամբողջ նորագույնը։ Սիմվոլիստներ՝ Բելի, Բալմոնտ։ Ձևական նորույթն հավեսի էր բերում։ Բայց օտար էր։ Թեմաները, պատկերները իմ կյանքից չէին։ Փորձեցի ինքս գրել նույնքան լավ, սակայն այլ բանի մասին։ Պարզվեց, որ նույն ձևով ուրիշ բանի մասին՝ չի կարելի։ Դուրս եկավ շինծու և հեղափոխական-լալկան։ Ինչ-որ այսպիսի մի բան.

Անտառներն հագան ոսկի և պուրպուր,
Արևն էր խաղում գմբեթներում բյուր,
Սպասում էի, բայց կորչում էին ամիսների մեջ
Հարյուր և հարյուր օրեր սնամեջ։

Մի ամբողջ տետրակ լցրի այսպիսի ոտանավորներով։ Շնորհակալություն բանտի հսկիչներին, դուրս գալու միջոցին խլեցին։ Թե չէ՝ կարող էի նույնիսկ տպագրել։

Արդիականը կարդացի-պրծա, վրա տվի կլասիկներին։ Բայրոն, Շեքսպիր, Տոլստոյ։ Վերջին գիրքը «Աննա Կարենինա»-ն էր։ Չվերջացրի։ Գիշերով դուրս կանչեցին «իրերով,

քաղաքի միջով։ Այդպես էլ չիմացա՝ ինչով վերջացավ այդտեղ նրանց, այդ Կարմիրների պատմությունը։

Ինձ բաց թողին։ Ես պետք է երեք տարով Տուրուխանսկ գնայի (Օհանջանյանն էր որոշել)։

Նստածս ժամանակ ինձ դատեցին առաջին գործով. մեղավոր է, բայց հասակը փոքր է։ Ենթարկել ոստիկանության հսկողության և ծնողների պատասխանատվությանը հանձնել։

## ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԴՈՒԼԵՄԱՆ

Դուրս եկա ալեկոծված։ Նրանք, որոնց ես կարդացել էի, այսպես կոչված մեծ էին։ Սակայն ինչքան դժվար չէ նրանցից լավ գրելը։ Ես հիմա էլ արդեն ունեմ ճիշտ վերաբերմունք աշխարհի հանդեպ։ Միայն հարկավոր է փորձ՝ արվեստի մեջ։ Ո՞րտեղից վերցնել։ Ես համբակ եմ։ Ես պետք է լուրջ դպրոց անցնեմ։ Իսկ ես դուրս եմ նետված նույնիսկ գիմնազիայից, նույնիսկ Ստրոգանովի ուսումնարանից։ Եթե մնալու լինեմ կուսակցության մեջ, պետք է դառնամ անլեգալ։ Անլեգալ մնալով, թվում էր ինձ, բան չես սովորի։

Հեռանկարս՝ ամբողջ կյանքում գրել թռուցիկներ, դուրս հանել մտքեր, վերցրած ճշմարիտ, բայց ոչ իմ հորինած գրքերից։ Եթե իմ միջից հանեն, թափ տան կարդացածս, ինչ կմնա։ Մարքսիստական մեթոդը։ Բայց մանկական ձեռքերի մեջ չի՞ ընկել արդյոք այդ զենքը։ Դյուրին է այն գործածել, երբ գործ ունես միայն յուրայինների մտայնության հետ։ Հապա թշնամու հանդիպելի՞ս։ Չէ՞ որ Բելիից լավ ես այնուհանդերձ գրել չեմ կարողանում։ Նա իրենի մասին խոսում է ուրախ՝ «Անանաս նետում է երկինք», իսկ ես իմինի մասին նվում եմ՝ «Հարյուր և հարյուր օրեր անամեջ»։ Մյուս կուսակցականների բանը լավ է։ Նրանք համալսարան էլ ունեն։ (Իսկ բարձրագույն դպրոցը — ես դեռևս չգիտեի, թե դա ինչ բան է — ես այն ժամանակ հարգում էի)։

Ի՞նչ կարող եմ հակադրել վրաս ծանրացած հնության էսթետիկային։ Մի՞թե հեղափոխությունը ինձնից չի պահանջելու լուրջ դպրոց։ Ես անցա այն ժամանակ դեռ կուսակցական ընկերոջս՝ Մեդվեդևի մոտ. «Ուզում եմ՝ կերտել սոցիա-



լիստական արվեստը»։ Սերյոժան երկար ծիծաղեց՝ ասելով. «Աղիքդ բարակ է»։

Կարծում եմ, այնուամենայնիվ, որ նա թերագնահատեց իմ աղիքը։

Ես ընդհատեցի կուսակցական աշխատանքը։ Նստեցի սովորելու։

## ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Թվում էր՝ չեմ կարող ոտանավոր գրել։ Փորձերս ողբալի էին։ Ձեռք զարկեցի նկարչությանը։ Սովորում էի Ժուկովսկու մոտ։ Ինչ-որ տիկինների հետ արծաթե սպասք էի նկարում։ Մի տարի հետո գլխի ընկա՝ ձեռագործ եմ սովորում։ Գնացի Կելինի մոտ։ Ռեալիստ է։ Լավ նկարող։ Լավագույն ուսուցիչ։ Կայուն է։ Փոփոխվող։

Պահանջն էր՝ վարպետություն, Հոլբեյն*։ Տանել չէր կարող սիրունիկություններ։

Հարգած պոետս Սաշա Չյոռնին* է։ Ուրախացնում էր նրա հակաէսթետիկիզմը։

## ՎԵՐՋԻՆ ԴՊՐՈՑԸ

«Գլխի» վրա նստեցի մի տարի։ Մտա նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը. միակ տեղը, ուր ընդունեցին առանց բարեհուսության վկայականի։ Լավ պարապում էի։

Զարմացնում էր՝ ընդօրինակողներին շոյում են, ինքնուրույններին՝ քշում։ Լարիոնով, Մաշկով։ Հեղբնազդով դուրս արվողների կողմն էի։

## ԴԱՎԻԹ ԲՈՒՐԼՅՈՒԿԸ

Ուսումնարանում երևան եկավ Բուրլյուկը։ Տեսքը հանդուգն է։ Լոռնետ։ Սերթուկ։ Ման է գալիս երգելով։ Ես սկսեցի ընդհարումների առիթ ստեղծել։ Գրեթե դիպանք իրար։

## ԾԽԱՐԱՆՈՒՄ

Ազնվականների ժողովարանը։ Համերգ։ Ռախմանինով։ Մեռածների կղզին։ Փախա անտանելի մեղեդայնացրած ձանձրույթից։ Մի րոպե անց՝ նաև Բուրլյուկը։ Քրքջացինք իրար երեսի։ Դուրս եկանք միասին թափառելու։

## ԱՄԵՆԱՀԻՇԱՏԱԿԵԼԻ ԳԻՇԵՐԸ

Խոսակցություն։ Ռախմանինովյան ձանձրույթից անցանք ուսումնարանայինին, ուսումնարանայինից՝ բովանդակ կլասիկական ձանձրույթին։ Դավիթի զայրույթը ժամանակակիցներից առաջ անցած վարպետի զայրույթ էր, իմը՝ պաթոս սոցիալիստի, որ գիտե հնի խորտակման անխուսափելիությունը։ Ծնվեց ռուսական ֆուտուրիզմը*։

## ՀԱՋՈՐԴԸ

Ցերեկն ինձ հաջողվեց մի ոտանավոր գրել։ Ավելի ճիշտ՝ կտորներ։ Վատն է։ Ոչ մի տեղ չի տպագրված։ Գիշեր է, Սրետենսկի բուլվար։ Կարդում եմ տողերս Բուրլյուկին։ Ավելացնում եմ՝ իմ ծանոթներից մեկն է գրել։ Դավիթը կանգ առավ։ Նայեց ինձ։ Գոռաց. «Այդ հո հենց ինքներդ եք գրել։ Դուք հո հանճարեղ պոետ եք»։ Իմ նկատմամբ այդպիսի վիթխարի և ոչ արժանի մակդիրի գործադրությունն ուրախացրեց ինձ։ Ես ամբողջապես նվիրվեցի ոտանավորի։ Այդ երեկո ես միանգամայն անսպասելի դարձա բանաստեղծ։

## ԲՈՒՐԼՅՈՒԿՅԱՆ ՏԱՐՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդեն առավոտյան Բուրլյուկն ինչ-որ մեկի հետ ինձ ծանոթացնելով՝ ասաց բարձրաձայն. «Չե՞ք ճանաչում։ Իմ հանճարեղ բարեկամը։ Հռչակավոր բանաստեղծ Մայակովսկին»։ Հրում եմ։ Բայց Բուրլյուկն անհողդողդ է։ Հեռանալիս՝ դեռ մռնչում էլ էր ինձ վրա. «Այժմ գրեցեք։ Թե չէ՝ դուք ինձ դնում եք ամենահիմար դրության մեջ»։

## ԱՅԴՊԵՍ ԱՄԵՆ ՕՐ

Ստիպվեցի գրել։ Եվ գրեցի առաջինը (առաջին պրոֆեսիոնալը, տպագրվածը)՝ «Բոսորագույնն ու սպիտակը» և այլ բաներ։

## ՍՔԱՆՉԵԼԻ ԲՈՒՐԼՅՈՒԿԸ

Մշտական սիրով մտածում եմ Դավիթի մասին։ Հիանալի բարեկամ։ Իմ իսկական ուսուցիչը։ Բուրլյուկը ինձ բանաստեղծ դարձրեց։ Ինձ համար կարդում էր Ֆրանսիայի և Գեր-



մանիայի գրողներին։ Գրքեր էր ճխտում ձեռքս։ Ման էր գալիս և խոսում անվերջ։ Մի քայլ հեռու բաց չէր թողնում ինձ։ Տալիս էր օրական 50 կոպեկ։ Որ առանց քաղցելու գրեմ։

Ծննդին ինձ տարավ իր մոտ՝ Նովայա Մայաչկա։ Այնտեղից բերի «Նավահանգիստը» և ուրիշ գործեր։

## «ԱՊՏԱԿԸ»

Մայաչկայից վերադարձանք։ Եթե ոչ պարզորոշ հայացքներով, գոնե սրված տեմպերամենտով։ Մոսկվայումն էր Խլեբնիկովը։ Այն ժամանակ նրա հանդարտ հանճարեղությունն ինձ համար բոլորովին մութի մեջ էր մնացել Դավիթի հախուռնության պատճառով։ Այստեղ էլ երևան եկավ խոսքի ֆուտուրիստական ճիզվիտ Կրուչոնիխը։

Լիրիկայի մի քանի գիշերներից հետո մենք միասին ծնեցինք մանիֆեստը։ Դավիթը հավաքեց, արտագրեց, անունը որոշեց և լույս ընծայեցինք՝ «Ապտակ հասարակական ճաշակին»*։

## ԾԱՐԺՎՈՒՄ ԵՆ

«Բուբնովի վալետ*»-ի ցուցահանդեսները։ Դիսպուտներ։ Իմ և Դավիթի կատաղի ճառերը։ Լրագրերն սկսում էին լցվել ֆուտուրիզմով։ Տոնն այնքան էլ քաղաքավարի չէր։ Այսպես օրինակ՝ ինձ պարզապես «շան որդի» էին անվանում։

## ԴԵՂԻՆ ԿՈՖՏԱ

Կոստյումներ ես երբեք չեմ ունեցել։ Ունեի երկու շապիկ՝ զզվելի տեսքով։ Փորձված միջոց էր՝ զարդարվել փողկապով։ Փող չկա։ Քրոջիցս վերցրի դեղին ժապավենի մի կտոր։ Կապեցի։ Ֆուրոր։ Ուրեմն մարդու մեջ ամենանկատելին ու գեղեցիկը փողկապն է։ Ակներև է՝ մեծացնես փողկապը՝ կմեծանա ֆուրորը։ Իսկ որովհետև փողկապների չափը սահմանափակ է, ես խորամանկություն բանեցրի. շինեցի փողկապային շապիկ և շապկային փողկապ։

Տպավորությունն անկասելի էր։

## ՀԱՍԿԱՆԱԼԻ Է

Արվեստի գեներալիտետը զայրացած է։ Իշխան Լվովը։

Ուսումնարանի դիրեկտորը։ Առաջարկեց դադարեցնել քըննադատությունն ու ագիտացիան։ Հրաժարվեցինք։

«Նկարիչների» խորհուրդը մեզ արտաքսեց ուսումնարանից։

## ՈՒՐԱԽ ՏԱՐԻ

Շրջում էինք Ռուսաստանով։ Երեկույթներ։ Դասախոսություններ։ Նահանգապետությունն ականջները սրեց։ Նիկոլաևում մեզ առաջարկեցին չդիպչել ոչ իշխանությանը, ոչ Պուշկինին։ Հաճախ ոստիկանության կողմից ընդհատվում էինք զեկուցման կեսից։ Մեր ուրախ խմբին միացավ Վասյա Կամենսկին։ Հնագույն ֆուտուրիստը։

Ինձ համար այդ տարիները ֆորմալ աշխատանքի, խոսքին տիրապետելու տարիներ էին։

Հրատարակիչները մեզ չէին ընդունում։ Կապիտալիստական քիթը մեզանից դինամիտչիկների հոտ էր առնում։ Ինձնից չէին առնում և ոչ մի տող։

Վերադառնալով Մոսկվա, հաճախ ապրում էի բուլվարներում։

Այդ շրջանն ավարտվեց «Վլադիմիր Մայակովսկի» ողբերգությամբ։ Բեմադրվեց Պետերբուրգում։ Լունապարկ։ Սուլեցին մինչև ծակծկելը։

## 14 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԻԶԲԸ

Զգում եմ վարպետություն։ Կարող եմ տիրապետել թեմային։ Ընդհուպ։ Թեմայի հարց եմ դնում։ Հեղափոխական թեմայի։ Մտածում եմ «Վարտիքավոր ամպի» մասին։

## ՊԱՏԵՐԱԶՄ

Ընդունեցի հուզված։ Սկզբում միայն դեկորատիվ, աղմկային կողմից։ Բանաստեղծություն՝ «Պատերազմը հայտարարված է»։ Պատվիրված պլակատների նկարում։

## ՕԳՈՍՏՈՍ

Առաջին ճակատամարտը։ Ընդհուպ կանգնեց պատերազմական սարսափը։ Պատերազմը զզվելի է։ Թիկունքը՝ առավել զզվելի։ Պատերազմի մասին խոսելու համար հարկավոր է



այն տեսնել։ Գնացի կամավոր գրվելու։ Թույլ չտվին։ Բարեհուսություն չկար։

Գնդապետ Մոդլի գլխում ևս գտնվեց մի լավ գաղափար։

## ՁՄԵՌ

Գարշանք և ատելություն դեպի պատերազմը։ «Ա՜խ, փակեցե՜ք, փակեցե՜ք լրագրերի աչքերը» և այլ գրվածքներ։

Հետաքրքրությունս արվեստի հանդեպ կորավ իսպառ։

## ՄԱՅԻՍ

Շահեցի 65 ռուբլի։ Գնացի Ֆինլանդիա։ Կուոկկալա։*

## ԿՈՒՈԿԿԱԼԱ

Յոթնածանոթային սիստեմ (յոթնադաշտային)։ Հաստատեցի յոթ ճաշկերութային ծանոթություն։ Կիրակի օրն «ուտում եմ» Չուկովսկուն, երկուշաբթի՝ Եվրեինովին և այլն։ Հինգշաբթի օրերն ավելի վատ էր. Ռեպինյան խոտեր էի ուտում։ Մի սաժեն հասակով ֆուտուրիստի համար դա մի բան չէր։

Երեկոները թափառում եմ լողափում։

Գրում եմ «Ամպը»։

Մեջս ամրապնդվել է մոտալուտ հեղափոխության գիտակցությունը։

Գնացի Մուստամյակի։ Մ. Գորկին։ Նրան կտորներ կարդացի «Ամպից»։ Հուզեցի ոտանավորով։ Ես մի փոքր հպարտացա։

## «ՆՈՐ ՍԱՏԻՐԻԿՈՆ»

65 ռուբլին գնաց թեթև ու առանց ցավի։ «Դատողություն անելով, թե ինչ ուտեմ»՝ սկսեցի գրել «Նոր սատիրիկոն»-ը։

## ԱՄԵՆԱՈՒՐԱԽԱԼԻ ՏԱՐԵԹԻՎ

915 թվականի հուլիսը։ Ծանոթանում եմ Լ. Յու. և Օ. Մ. Բրիկների հետ։

## ԶՈՐԱԿՈՉ

Զինվորագրեցին։ Այժմ ռազմաճակատ գնալ չեմ ուզում։ Ձևացա գծագրիչ։ Գիշերով մի ինչ-որ ինժեների մոտ սովո-

րում եմ ավտո գծագրել։ Տպագրվելու գործն ավելի վատ է։ Զինվորներին արգելում են։ Ուրախացնում է միայն Բրիկը։ Գնում է իմ բոլոր ոտանավորները տողը 50 կոպեկով։ Տպագրեցի «Ֆլեյտա- ողնաշարը» և «Ամպը»։ Ամպը փետրանման դուրս եկավ։ Գրաքննությունը փչեց նրա վրա։ Վեց երես ամբողջովին կետեր։

Այդ ժամանակվանից է իմ ատելությունը դեպի կետերը։ Դեպի ստորակետերը նույնպես։

## ԶԻՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վատթարագույն ժամանակ։ Նկարում եմ (գլուխս պահելու համար) մեծավորների պատկերները։ Գլխումս ծավալվում է «Պատերազմն ու աշխարհը», սրտումս՝ «Մարդը»։

## 16 ԹՎԱԿԱՆ

Ավարտված է «Պատերազմն ու աշխարհը»։ Մի քիչ ուշ՝ «Մարդը»։ Կտորներ տպագրում եմ «Լետոպիս»-ում։ Զինվորականությանը հանդգնաբար չեմ երևում։

## ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ը, 17 ԹՎԱԿԱՆ

Ավտոմոբիլների հետ գնացի Դումա։ Ներս պրծա Ռոդզյանկոյի կաբինետը։ Զննեցի Միլյուկովին։ Լուռ է։ Բայց ինձ, չգիտեմ ինչու, թվում է, թե նա կակազում է։ Մի ժամից հետո ձանձրացրին։ Հեռացա։ Մի քանի օրով ընդունեցի ավտոդըպրոցի հրամանատարությունը։ Գուչկովանում է։ Հին սպայությունն առաջվա պես ման է գալիս Դումայում։ Ինձ համար պարզ է՝ դրանից հետո անխուսափելիորեն սոցիալիստներն են լինելու անմիջապես։ Բոլշևիկները։ Հեղափոխության առաջին իսկ օրերին գրում եմ «Հեղափոխություն» պոետոխրոնիկան։ Կարդում եմ դասախոսություններ՝ «Արվեստի բոլշևիկները»։

## ՕԳՈՍՏՈՍ

Ռուսաստանն աստիճանաբար հեռանում է կերենսկիականությունից։ Կորցրել են հարգանքը։ Հեռանում եմ «Նովայա ժիզն»-ից։ Հղանում եմ «Միստերիա-բուֆ»-ը։



## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ընդունե՞լ, թե չընդունել։ Այսպիսի հարց ինձ համար գոյություն չուներ։ Իմ հեղափոխությունն է։ Գնացի Սմոլնի։ Աշխատում էի։ Անում, ինչ որ լինում էր։ Սկսում են նիստեր գումարել։

## ՀՈՒՆՎԱՐ

Գնացի Մոսկվա։ Ելույթներ եմ ունենում։ Գիշերը՝ «Պոետների կաֆեում»։ Նաստասինսկի նրբանցքում։ Հեղափոխական տատիկն այժմյան կաֆեպոետական սալոնչիկների։ Գրում եմ կինոսցենարներ։ Խաղում եմ ինքս։ Նկարում պլակատներ կինոյի համար։ Հունիս։ Դարձյալ Պետերբուրգ։

## 18 ԹՎԱԿԱՆ

ՌՍՖՍՀ-ը արվեստի համար ժամանակ չունի։ Իսկ ինձ համար իսկական ժամանակն է։ Անցա պրոլետկուլտ Քշեսինսկայայի մոտ։

Ինչո՞ւ կուսակցության մեջ չեմ։ Կոմունիստներն աշխատում են ռազմաճակատներում։ Արվեստի և լուսավորության մարզում՝ համաձայնողականները։ Ինձ կուղարկեին Աստրախան՝ ձուկ որսալու։

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ը, 18 ԹՎԱԿԱՆ

Վերջացրի «Միստերիան»։ Կարդացի։ Շատ են խոսում։ Բեմադրեցին։ Շուրջը սոսկալի գոռում էին։ Մանավանդ կոմունիստականություն անող ինտելիգենցիան։ Էլ ինչեր չարեց Անդրեևան։ Որ խանգարի։ Երեք անգամ բեմադրեցին, հետո ջախջախեցին։ Եվ ծայր առան «Մակբեթ»-ները։

## 19 ԹՎԱԿԱՆ

«Միստերիայով» և իմ ու ընկերներիս ուրիշ գրվածքներով շրջում եմ գործարանները։ Ուրախ ընդունելություն։ Վիբորգի շրջանում կազմակերպվում է կոմֆուտ, հրատարակում ենք «Կոմունայի արվեստը»։ Ակադեմիաները ճաքճքվում են։ Գարնանը տեղափոխվում եմ Մոսկվա։

Գլուխս բռնված է «150.000.000»-ով։ Գնացի Ռոստա՝ ագիտացիայի։

## 20 ԹՎԱԿԱՆ

Ավարտեցի «Հարյուր հիսուն միլիոն»-ը։ Տպագրում եմ առանց ազգանվան։ Ուզում եմ, որ ամեն ոք շարունակելով գրի և բարելավի։ Այդ չէին անում, դրա փոխարեն բոլորն էլ գիտեին ազգանունս։ Միևնույն է։ Այստեղ տպագրում եմ իմ անվան տակ։

Գիշեր և ցերեկ՝ Ռոստա։ Հարձակվում են ամեն տեսակի դենիկիններ։ Գրում եմ և նկարում։ Պատրաստեցի մոտ երեք հազար պլակատ և մոտ վեց հազար մակագրություն։

## 21 ԹՎԱԿԱՆ

Անցնելով բոլոր քաշքշուկների, ատելության, կանցելյարշչինայի և բթամտության միջից՝ բեմադրում են «Միստերիայի» երկրորդ տարբերակը։ Գնում է I ՌՍՖՍՀ-ում և կրկեսում՝ գերմաներեն լեզվով՝ Կոմինտերնի 3-րդ կոնգրեսի համար։ Կրկնվեց մոտ հարյուր անգամ։

Սկսեցի գրել «Իզվեստիա»-ում։

## 22 ԹՎԱԿԱՆ

Կազմակերպում եմ ՄԱՖ հրատարակչությունը։ Հավաքում եմ ֆուտուրիստների կոմունան։ Հեռավոր Արևելքից եկան Ասեևը և մեր տուրուդմփոցներին մասնակից այլ ընկերներ։ Սկսեցի գրի առնել երրորդ տարին մշակած «Հինգերորդ ինտերնացիոնալ»-ը։ Ուտոպիա։ Ցույց կտրվի արվեստը 500 տարի անց։

## 23 ԹՎԱԿԱՆ

Կազմակերպում ենք «ԼԵՖ»-ը*։ «ԼԵՖ»-ը մեծ սոցիալական թեմայի ընդգրկումն է ֆուտուրիզմի բոլոր գործիքներով։ Այդ բնորոշումով, իհարկե, խնդիրը չի սպառվում, հետաքրքրվողներին հանձնարարում եմ ժուռնալի №№-ը։ Սերտ համախմբվեցին՝ Բրիկը, Ասեևը, Արվատովը, Տրետյակովը, Ռոդչենկոն, Լավինսկին։



Գրեցի «Այդ մասին»։ Անձնական մոտիվներով ընդհանուր կենցաղի մասին։ Կշռադատում եմ «Լենին» պոեմը։ «ԼԵՖ»-ի լոզունգներից, նրա մեծ նվաճումներից մեկը՝ արտադրողական արվեստների ապաէսթետացումը, կոնստրուկտիվիզմն է։ Բանաստեղծական հավելված՝ ագիտկա և տնտեսական ագիտկա՝ ռեկլամ։ Չնայած պոետական հայ-հույերին՝ համարում եմ «Ոչ մի տեղ, բացի Մոսսելպրոմից»-ը ամենաբարձր որակավորման պոեզիա։

## 24 ԹՎԱԿԱՆ

«Հուշարձան Կուրսկի բանվորներին»։ Բազմաթիվ դասախոսություններ ՍՍՀՄ-ում «ԼԵՖ»-ի մասին։ «Հոբելյանական»-ը՝ Պուշկինին։ Եվ այդ տիպի ոտանավորների մի շարք։ Ճամփորդություններ՝ Թիֆլիս, Յալթա—Սևաստոպոլ։ «Թամարան և Դևը» և այլն։ Վերջացրի «Լենին» պոեմը։ Կարդացի բանվորական շատ ժողովներում։ Ես շատ էի վախենում այդ պոեմից, քանի որ հեշտ էր իջնել մինչև հասարակ քաղաքական վերապատմումը։ Բանվորական լսարանի վերաբերմունքն ուրախացրեց և ամրապնդեց պոեմի պիտանիության համոզմունքի մեջ։ Շատ եմ գնում արտասահման։ Եվրոպական տեխնիկան, ինդուստրիալիզմը, յուրաքանչյուր փորձ՝ միացնել դրանք դեռևս անանցանելի նախկին Ռուսաստանին՝ ֆուտուրիստ-լեֆականի մշտական իդեան է։

Չնայած ամսագրի տիրաժային անմխիթար տվյալներին՝ «ԼԵՖ»-ը ծավալվում է իր աշխատանքի մեջ։

Մենք գիտենք այդ «տվյալները»՝ պարզապես Գիզ-ի մեծ ու պազարյուն մեխանիզմի հաճախակի գրասենյակային անշահագրգռվածությունն առանձին ամսագրերի նկատմամբ։

## 25 ԹՎԱԿԱՆ

Գրեցի «Թռչող պրոլետար»-ը ագիտպոեմը և ագիտ ոտանավորների ժողովածու՝ «Ինքդ անցիր երկինքներով»։

Գնում եմ շուրջերկրյա ճանապարհորդության։ Այդ ճամփորդության սկիզբը՝ վերջին պոեմն է (առանձին ոտանավորներից) «Փարիզ» թեմայով։ Ուզում եմ և կանցնեմ չափածոյից արձակին։ Այս տարի պետք է ավարտեմ առաջին վեպս։

«Շուրջը» գլուխ չեկավ։ Նախ՝ Փարիզում կողոպտեցին, երկրորդ՝ կես տարվա ճանապարհորդությունից հետո՝ գընդակի պես նետվեցի ՍՍՀՄ։ Նույնիսկ Սան Ֆրանցիսկո (կանչել էին դասախոսելու) չգնացի։ Շրջեցի Մեքսիկա, ԱՄՆ և Ֆրանսիայի ու Իսպանիայի մասերը։ Արդյունքը՝ գրքեր—հրապարակախոսություն—արձակ։ «Ամերիկայի իմ հայտնաբերումը» և ոտանավորներ— Իսպանիա, Ատլանտյան օվկիանոս, Հավաննա, Մեքսիկա, Ամերիկա։

Վեպն ավարտեցի մտքումս, իսկ թղթի վրա չանցկացրի, որովհետև մինչև գրել վերջացնելը տոգորվում էի ատելությամբ դեպի մտացածինը և ինքս ինձնից սկսեցի պահանջել, որ լինի հականե-հանվանե, լինի փաստացի։ Ասենք, դա 26—27 թվականների համար էլ է։

## 1926 ԹՎԱԿԱՆ

Աշխատանքի մեջ ինձ գիտակցաբար փոխադրում եմ լրագրողի դերին։ Ֆելիետոն, լոզունգ։ Պոետները հարայհրոց են բարձրացնում, սակայն իրենք լրագրել չեն կարողանում և ավելի շուտ տպագրվում են անպատասխանատու հավելվածներով։ Իսկ ինձ համար ծիծաղելի է նայել նրանց լիրիկական տխմարության վրա, այնքան հեշտ է դրանով զբաղվել, և ոչ ոքի համար, բացի իր կնոջից, հետաքրքիր չէ։

Գրում եմ «Իզվեստիա»-ում, «Տրուդ»-ում, «Ռաբոչայա Մոսկվա»-ում, «Զարյա Վոստոկա»-ում, «Բակինսկի ռաբոչի»-ում և ուրիշ թերթերում։

Երկրորդ աշխատանքս՝ շարունակում եմ տրուբադուրների և մենեստրելների ընդհատված տրադիցիան։ Գնում եմ քաղաքները և կարդում։ Նովոչերկասկ, Վիննիցա, Խարկով, Փարիզ, Ռոստով, Թիֆլիս, Բեռլին, Կազան, Սվերդլովսկ, Տուլա, Պրագա, Լենինգրադ, Մոսկվա, Վորոնեժ, Յալթա, Եվպատորիա, Վյատկա, Ուֆա և այլն, և այլն, և այլն։

## 1927 ԹՎԱԿԱՆ

Վերականգնում եմ (փորձ էին արել «կրճատելու») «ԼԵՖ»-ը, արդեն «Նորը»։ Հիմնական դիրքը՝ մտացածինի, էսթետիկականության և արվեստով հոգեկենակցելու դեմ, հօգուտ ագիտե. ռեակավոր հրապարակախոսության և խրոնիկայի։ Հիմնական աշխատանքս «Կոմսոմոլսկայա պրավդա»-ում է, և արտաժամյա մշակում եմ «Լավը»։

«Լավը» համարում եմ ծրագրային գործ, ինչպես «Վարտիքավոր ամպ»-ը՝ այն ժամանակի համար։ Սահմանափակում բանաստեղծական վերացական ձևերի (հիպերբոլի, վինյետային ինքնարժեք կերպարի) և խրոնիկային ու ագիտացիոն նյութի մշակման համար ձևերի հայտնագործում։

Հեգնական պաթոս մանրուքների նկարագրման մեջ, որոնք, սակայն, կարող են լինել նաև ճիշտ քայլ դեպի ապագան («պանիրները չեն նստված, լամպերը փայլում են, գներն իջեցված են»), պլանների ընդհատման համար, զանազան տրամագծի պատմական փաստերի գործածում, որոնք օրինական են միայն անձնական ասոցիացիաների կարգով («Խոսակցություն Բլոկի հետ», «Ինձ պատմում էր խաղաղ հրեան՝ Պավել Իլյիչ Լավուտը»)։

Պետք է մշակեմ ծրագրվածը։

Նաև՝ գրված են սցենարներ և մանկական գրքեր։

Նաև՝ շարունակել եմ մենեստրելությունս։ Հավաքել եմ մոտ 20.000 տոմս, մտածում եմ «Ունիվերսալ պատասխան» գրքի մասին (տոմսատերերին)։ Ես գիտեմ, թե ինչի մասին է մտածում ընթերցող մասսան։

## 1928 ԹՎԱԿԱՆ

Գրում եմ «Վատ է» պոեմը։ Պիես և իմ գրական կենսագրությունը։ Շատերն ասում էին՝ «Ձեր ինքնակենսագրությունն այնքան էլ լուրջ չէ»։ Ճիշտ է։ Ես դեռևս չեմ ակադեմիկոսացել և սովոր չեմ խնամք տանել իմ անձին, համ էլ ինձ հետաքրքրում է իմ գործը, եթե միայն դա ուրախալի է։ Վեբելք ու վայրէջք շատ գրականությունների, սիմվոլիստներ, ռեալիստներ և այլն, մեր պայքարը նրանց դեմ. այդ ամենը, որ կատարվել է իմ աչքի առջև. դա մեր շատ լուրջ պատմության մի մասն է։ Դա պահանջում է, որպեսզի գրվի նրա մասին։ Եվ կգրեմ։

*[1922—1928]*

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԻՄ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Անհայտ ծովերի հեռավոր ափով
անցնում է լուսինը՝
իմ կինը։
Իմ շիկահեր սիրուհին։
Իր կառքի ետևից թափով
ձգվում է համաստեղությունների երփներանգ ամբոխը։
Պսակվում է ավտոգարաժի հետ,
համբուրում է թերթի կիոսկները,
իսկ շլեյֆի կաթնծիրը, որպես նամիզտ,
զարդարված է փայլուն զարդերով։
Իսկ ե՞ս։
Իմ ծարաված սրտին քո հոնքերի կեռով՝
քո աչքերի հորից բերում էիր դույլեր։
Կախվում էիր լճե մետաքսներում,
աթե ջութակների պես երգում էին կոնքերդ։
Այնտեղ, ուր իշխում են գժնի տանիքները,
չէր նետի ցոլքը քո դուռ։
Բուլվարներում խեղդվում եմ՝ դեմքիս թախիծ փռած։
Ախր դա դուստրն է քո՝
իմ երգը,
աժուր շուլքիններով՝
կաֆեների առաջ։



## ԱՅ ՁԵ՛Զ

Մի ժամ անց՝ այստեղից դեպ մաքուր նրբանցքը
կհոսի ձեր ճարպը լույծ, բաժին-բաժին.
իսկ ես՝ բացի ձեր դեմ այնքան երփեր-գանձեր,
ես՝ անգին խոսքերի վատնիչ ու տրանժիր։

Այ դուք տղամարդ եք։ Ձեր բեղերին նստել է
թափթփած մնացորդը լավ չկերած բորշչի։
Իսկ դուք ահա, որ կին եք, այդ ինչքան եք քսել.
ոստրեի պես նայում եք դուք իրերի ոջիից։

Բոլորդ էլ պոետի սրտի թիթեռնիկին
կոխոտում եք կեղտոտ ու կեղտոտում միջինը։
Ամբոխը, զայրացած, կբարձրանա ոտքի,
կգալարե ոտները բյուրոտանի ոջիլը։

Իսկ եթե ես այսօր չցանկանամ քծնել,
եթե կոպիտ հոնիս համբերությունն հատնի,
ես կքրքջամ ուրախ ու կթքեմ,
կթքեմ դեմքին ձեր,
ես՝ անգին խոսքերի տրանժիր ու վատնիչ։

## ԼՍԵՑԵՔ...

Լսեցե՛ք...
Ախր եթե աստղերը վառվում են,
ուրեմն, այդ մեկնումեկին պե՞տք է։
Ուրեմն մեկն ուզո՞ւմ է, որ դրանք լինեն։
Ուրեմն, մեկն այդ թուքերը մարգարի՞տ է անվանում։

Եվ, նեղվելով անչափ,
կոլոլված կեսօրվա փոշում,
աստծու մոտ է խուժում,
վախենում է ուշանա,
լալիս է,

Համբուրում նրա ձեռքը մկանուտ,
աղաչում է,
որ անպայման աստղ լինի,
երդվում է,
որ չի դիմանա անաստղ այդ տառապանքին։
Իսկ հետո
գնում է տագնապահար,
բայց առերես հանգիստ։
Ասում է ինչ-որ մեկին.
«Հիմա ոչի՞նչ։
Էլ չե՞ս վախենում։
Այո՞»։
Լսեցե՛ք...
Ախր եթե աստղերը
վառվում են,
ուրեմն, այդ մեկնումեկին պե՞տք է։
Ուրեմն, անհրաժեշտ է,
որ ամեն երեկո
տանիքների վրա
վառվի գեթ մի աստղ։

## ԲԱՑ ԵՎ ԱՅՆՊԵՍ

Փողոցը փլվել, ոնց քիթը սիֆիլիտիկի,
գետը հեշտասիրություն է՝ լորձունքով փռված.
Նետելով սպիտակեղենը մինչ վերջին տերևիկը՝
Այգիներն հունիսին ձգվել են ցոփ ու բաց։

Ես ելա հրապարակ,
խանձված թաղամասը,
դրել եմ գլխիս շեկ կեղծամ, ինչպես
մարդիկ սոսկում են. բերնիցս կամաց
շարժում է ոտները չծամված մի ճիչ։

Բայց ինձ չեն մեղադրի, բայց ինձ չեն հայհոյի,
ինչպես մարգարեի՝ կծաղկապատեն հետքս.



գիտեն այդ փլված քթերով մարդիկ,
ձեր պոետն եմ ես։

Ոնց պանդոկ, ահավոր է ձեր դատարանն ահեղ,
միայն ինձ՝ շենքերի միջից բոցավառ՝
պոռնիկներն, ինչպես սրբության, ձեռքի վրա կտանեն
և աստծուն ցույց կտան իրենց արդարացման համար։

Եվ աստված լաց կլինի իմ գրքույկի վրա,
խոսքեր չեն, ջղաձգումներ են գունդուկծիկ,
և կվազի երկնքով, տանավորներս թևի տակ,
ու հևալով կկարդա իր ծանոթներին։

## ՄԱՅՐԻԿԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՆՎԱԾ ԵՐԵԿՈՆ

Սև փողոցներում սպիտակ մայրերը
տարածվեցին, ինչպես սև դագաղի գլազեթ*.
Հաղթանակի մասին կանչողներին ասին.
«Ա՛խ, փակեցե՛ք, փակեցե՛ք գազեթների աչքերը»։

Նամակ։

Մայրիկ, բարձր։
Ծուխ։
Ծուխ։
Ծուխ։
Էլ ի՞նչ եք, մայրի՛կ, երկարում։
Տեսնո՞ւմ եք,
օդն ամբողջ քարած է
թեժ ռումբերի ուժից դղրդացող քարով։
Մայ-րի՛-կ։
Հենց հիմա բերեցին վիրավոր երեկոյին.
երկար դիմադրում է՝
անհարթ,
մռայլ,
կուզիկ.

և հանկարծ,
ցնցելով ամպե ուսերը,
արտասվեց՝ փաթաթվելով Վարշավայի վզին։
Կապույտ շապիկ հագած ոսկեաչք աստղերը
ճչացին.
«Սպանված է
մեր անգին,
թանկագինը»։
Եվ մահիկն իր մի աչքը սառնասրտաբար հառեց՝
արույրը պինդ սեղմած, մխոտած, սառած ձեռքին ասես։
Վազեցին տեսնելու լատվիական գյուղերը»
թե ինչպես, հաշմանդամ դարձած,
արցունքներով ոսկե կաստելների աչքերը
կոտրատում է Պավյակի* փողոց-մատյանների անձայնը։
Իսկ երեկոն ճչում է՝
անձեռ,
անոտ.
«Սուտ է.
կարող եմ դեռ
զնգացնելով սարսափած՝ շղթաներս,
բեղըս ոլորել»։

Զանգ են տալիս։

Մայրիկ։
Ի՞նչ պատահեց.
լսիր։
Սպիտակ է, ինչպես սև դագաղի գլազեթ։
«Թողեք.
Հեռագիր է
սպանվածի մասին։
Ա՛խ, փակեցե՛ք, փակեցե՛ք գաղեթների աչքերը»։



## ՋՈՒԹԱԿ ԵՎ ՄԻ ՔԻՉ ՋՂԱՅԻՆ

Ջութակն աղերսելով ցնցվեց,
և հանկարծ, մանկաբար,
այնպես լացեց,
որ թմբուկը չդիմացավ.
«Դե լավ, դե լավ»,— ասավ։
Իսկ ինքը հոգնեց,
չունկնդրեց մինչև վերջ ջութակի խոսքին,
սուրաց դեպ լուսավառ Կուզնեցկին
ու գնաց։
Նվագախումբը նայում էր խորթ՝
թե ո՞նց է ողբում ջութակը՝
անտակտ,
անխոսք,
և միայն ուր որ
հիմար ծնծղան
շաչեց.
«Այդ ի՞նչ է»,
«Ինչպե՞ս»։
Իսկ երբ պղնձյա,
քրտնած
Գելիկոնը
ճչաց՝
«Հիմա՛ր,
սրբվի՛ր,
լացկա՛ն»,—
ես ելա,
օրորվելով, նոտաների վրայով անցա.
անցա սարսափի տակ կքվող պյուպիտրների վրայով
և, թե ինչու, գոչեցի՝
«Աստվա՛ծ»։
Փարվեցի փայտե պարանոցին.
«Գիտե՞ք ինչ, ջութա՛կ,
մենք սարսափելի նման ենք մեկս մյուսին.
ահա ես էլ
գոռում եմ,

բայց ապացուցել անկարող եմ»։
Երաժիշտների ծիծաղը թնդում է.
«Ո՜նց էլ կպե՜լ է.
եկել է փայտե Հարսնացուի մոտ
դդո՛ւմը»։
Ինձ համար՝ թքա՛ծ,
թող խոսեն, ասեն,
ես լավն եմ։
«Գիտե՞ք ինչ, ջութա՛կ,
եկե՛ք
ապրենք միասին,
հը՞»։

## ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇՈՒՆ ԴԱՐՁԱ ԵՍ

Այս արդեն բոլորովին անտանելի է։
Ես ոտից գլուխ լի եմ չարությամբ։
Ջարանում եմ ո՛չ այնպես, ինչպես սովորաբար.
ինչպես շունը՝ լերկաճակատ լուսնի դեմքին անամպ,
ուզում եմ այդպես
ոռնալ երկա՜ր-երկար։

Ջղերս են երևի...
Դուրս գամ,
օդ առնեմ։
Փողոցում էլ չեմ հանդարտվում բոլորովին։
Ինչ-որ մեկը բղավում է՝ «Բարի երեկո»։
Բարի՜...
Պետք է պատասխանել՝ )
ծանոթ է, կին։
Ուզում եմ։
Բայց տեսնեմ՝
չեմ կարող մարդավարի։

Խայտառակությո՛ւն։
Քնա՞ծ եմ, ինչ է։



Շոշափում եմ ինձ՝
նույնն եմ, ինչ ամեն ժամանակ,
դեմքս էլ առաջվանն է,
նույն ինքը։
Շոշափում եմ շրթունքս,
իսկ շրթունքիս տակ՝
ժանի՜ք է։

Ծածկում եմ երեսս, իբրև քիթս եմ մաքրում։
Նետվում եմ դեպի տուն քայլերով լայն-լայն։
Զգուշությամբ շրջանցում ոստիկանական որջը,
և հանկարծ խլացուցիչ.
«Ոստիկա՛ն։
Պո՜չը»...

Ձեռքս տանում եմ ետ ու քար կտրում։
Ժանիքներն ի՜նչ են,
դատարկ բա՜ն,
կատաղի վազքի մեջ չեմ նկատել, ո՛չ.
պիջակիս տակից դուրս է պրծել
շան
ահռելի մի պոչ։

Ի՞նչ անեմ։
Ոռնում եմ, բազմություն հավաքելով։
Երկրորդին երրորդը, չորրորդն է հաջորդում։
Տրորում են մի պառավի։
Խաչ հանելով,
պառավը սատանային անեծք է կարդում։

Եվ, երբ բեղ-ավելները
դեմքի վրա ցից-ցից,
ամբոխը վրա պրծավ
վիթխարի
ու չար,
ես չորեքթաթ կանգնեցի
և սկսեցի հաչալ.
Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ։

## ՀԻՄՆ ԿԱՇԱՌՔԻՆ

Նկել, հլությամբ փառաբանում ենք քեզ,
թանկագին կաշառք,
վերջին դռնապանից մինչև ոսկեդեզ
հարուստը։ Փա՜ռք քեզ, օ՜, փա՜ռք։

Այն սրիկաներին, որ կհամարձակվեն
մեր պարզած ձեռքին նայել խեթ,
նախանձի համար այդ անվայել
կպատուհասենք խստությամբ։

Որպեսզի չհանդգնի կշտամբանքն ամբարիշտ,
կախ կտանք մեդալներ ամեն տեսակ
և, առաջ պարզած բռունցքն համոզիչ,
կհարցնենք. «Տեսե՞լ ես սա»։

Վերից նայես Ռուսիային՝ խուտո՞ր, բոստա՞ն,
ուրախությունից սիրտդ խաղ է անում.
ուղղակի անծայրածիր բանջարանոց-բոստան,
որ ծլում-ծաղկում է ու փարթամանում։

Լսվա՞ծ բան է միթե, որ այծը բոստան
տեսնի և ծուլանա փորձել այդ խայծը...
Ժամանակ լիներ՝ ցո՜ւյց կտայի ձեզ,
Թե որն է բոստանը, որն է այծը։

Դե, ի՜նչ ապացուցել, մտե՛ք ու խժռե՛ք,
թերթային տականքը թող ձայնն իրեն քաշի,
սեփական հայրենիքում հերիք քաշվեք,
խուզեցե՛ք նրան, քերթեցե՛ք կաշին։

## ՀՐԵՇԱՎՈՐ ԹԱՂՈՒՄ

Մարդիկ դուրս եկան մթնդած, մռայլ,
ծանր ու կանոնավոր շարվեցին ի տես,



ասես գումարվեր պիտի անայլայլ
խոժոռադեմ վանականների ուխտը սևազգեստ։

Ագռավների կռինչը պատուհանների տակ բաց,
երկինքը հղի է փոթորկով էլի.
ամեն ինչ այնպես է սարքված-հարմարեցված,
որ կամա-ակամա սպասվում է սարսափելին։

Այնժամ տնքոցով, դժկամորեն ճեղքվեց
փոշեշաղախ օդը շորացած օբրա՞ն,
դուրս պրծավ օդից, քայլել սկսեց
լուռ դիակառքը հրեշավոր թաղման։

Տագնապահար աչքերի զանգվածն աշխուժացավ,
հայացքների լեռներ փլվեցին դագաղին պաղ։
Հանկարծ ծամածռությունը դագաղից դուրս պրծավ,
և ապա՝
հազարակուրծք փուքսից
(հազարը քի՞չ է)
դուրս պոռթկաց, բազում արձագանքներից միլիոնացած,
դագաղի ետևից ընթացող ճիչը.
«Թաղում են ծիծա՞ղը մեռած»։

Եվ նույնժամ դանակները հուսահատ լացի
մխրճվեցին, հարկադրելով ոչինչ չկռահել։
Ահա դագաղի ետևից արտասվող պառավ կյա՞նքը
հանգուցյալ ծիծաղի մայրը ալեհեր։

Այդ ո՞վ է գնում, նման քաթանի,
տեսեք ճաղատին այդ, խեղճ ու կրակ հոգուն.
դա հայկական խոշոր, մեծքթանի
անեկդոտն է լալիս հոնգուր-հոնգուր։

Չէին մոռացել դեռ, ո՞նց էր ծռում բերանը։
Եվ նրա ետևից, գզգզված, պոչատ,
ահա ճղճղալով փախչում է սրամտությունը։
Ո՞ւր կորչեր, երբ մեռել էր ծիծաղը։

Ո՛չ, այդ
լացի կունձըն է արդեն երկինք հասնում։
Բայց ինչ-որ տեղից
էլի՛, էլի՛ լացիկներ են.
այդ՝ ժպիտ-ժպտիկների ամբոխն է կոտրատում
փխրուն մատիկները։

Եվ ահա նրանց շարքի միջով, ոտից-գլուխ թրջված,
ինչպես համատարած հեծկլտացող Գարշի՛ն,
դուրս պրծավ սարսափը, որ անցնի առաջ,
ամբողջովին տրված թաղման այդ մարշին։

Դեմքը ջրակալած շիլա է դարձել,
ճակատը կնճռապատ, մթնել է աչք-ունքը,
իսկ եթե մեկը ծիծաղել փորձեր,
կթվար՝ պատռել են շրթունքը։

## ԼԻԼԻԱՅԻՆ՝ ՆԱՄԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Ծխախոտի ծուխն ելնում է հանդարտ
Ու ամպի նման իջնում բազմոցին։
Հիշո՞ւմ ես,
այս նույն պատուհանի տակ
առաջին անգամ ձեռքդ շոյեցի։
Փակե՛լ ես իմ դեմ
այսօր սիրտը քո,
վաղն էլ,
ո՞վ գիտե,
դո՛ւրս քշես տնից...
Խավար միջանցքում դողացող ձեռքով
հազի՜վ եմ գտնում թեքը բաճկոնիս։
Դո՛ւրս կգամ,
փողո՛ց կնետվեմ կրկին,
վայրի խենթությամբ
լքումս կերգեմ.
լսո՞ւմ ես, պետք չէ՛,



իմ լա՜վ,
իմ անգի՜ն,
լավ է՝ հենց հիմա՛ բաժանվենք մեկեն։
Մե՜կ է՝
իմ սերը,
որպես ծանր քար,
կախվա՜ծ է քեզնից՝
ուր էլ որ փախչես,
թույլ տուր գեթ վերջի՜ն ճիչով հեկեկամ
իմ տրտունջների դառնությունը ջերմ...
Թե եզը հոգնի դժվարին գործից,
կերթա
սառնորակ ջրում կպառկի,
ես այլ ծով չունե՜մ
քո սիրուց բացի,
իսկ քո սիրուց՝ չի՜ք դադար ու հանգիստ։
Թե հանգիստ տենչա փիղը վաստակած,
կերթա
կփռվի տաք ավազներում.
քո սիրուց բացի
ա՛յլ արև չկա,
իսկ ես չգիտեմ՝ ո՞ւմ հետ ես և ո՞ւր...
Թե բանաստեղծին տանջեիր այսպես,
նա քեզ կփոխեր փառքի հետ, փողի,—
ո՛չ մի հնչյուն ինձ քաղցր չէ՛ այնպես,
ինչպես քո անվան հնչյունը թովիչ։
Ոչ թո՛ւյն կընդունեմ,
ոչ գնդա՛կ՝ քունքիս,
ոչ էլ գետի՛ մեջ կգտնեն մեռած.
իմ հանդեպ,
բացի քո մեղմ հայացքից,
ուժ չունի ո՛չ մի դանակի բերան։
Վաղն էլ չե՜ս հիշի,
որ քեզ տվի թագ,
այրած քո սիրով ծաղկազարդ հոգիս,
և սին օրերի քամին խեղկատակ
ցիր ու ցա՜ն կանի թերթերը գրքիս։

Որգիս չորացած տերևնե՞րն են, որ
պիտի ստիպեն քեզ վերադառնալ...
Թույլ տուր
գեթ վերջին քնքշությունս որբ
փռե՛մ հեռացող քայլերիդ առաջ։

## ԷԺԱՆ ԼՈՒՍԱՐՔԱՎԱԾՅՈՒՔ

Կնո՛ջն եմ սրտաշարժ սիրավեպում խճճում,
թե անցորդներին եմ նայում
պարզապես,—
ամեն մեկն ահարեկ գրպանն է բռնում։
Խեղճե՛ր։
Աղքատներից
ի՛նչ պիտ թողընես։
Քանի տարի կանցնի, մինչև կիմանան՝
սաժենահասակ թեկնածուս քաղաքային մորգի,
ես
անսահմանորեն ավելի հարուստ եմ,
քան
ամեն մի Պյերպոնտ Մորգան։
Այսքան ու այսքան տարիներ հետո,—
մի խոսքով,
մինչ այդ չեմ ապրի ես,—
քաղցից կմեռնեմ,
թե պիստոլետով,
ինձ,
այսօրվա ծաղրածուիս,
պրոֆեսորները կսերտեն մինչև վերջին տառը, որ կա՝
ինչպե՛ս,
ե՛րբ,
որտե՛ղ է հայտնվել։
Ամբիոնից
մի ոմն ապուշ մեծաճակատ
կսկսի
ինչ-որ աստվածաստանի մասին ծամծմել։



Կխոնարհվի ամբոխը
պարապ
ու քծնող։
Անգամ չեք ճանաչի՝
ես՝ ես չեմ,
վե՛րջ.
կպատկերի նա
մի գլուխ ճաղատացող՝
եղջյուրներով կամ լուսապսակի մեջ։
Ամեն մի ուսանողուհի,
քնելը նախքան,
չի մոռանա նվաղել՝
ոտանավորներս կարդալով։
Ես
հոռետես եմ,
գիտեմ՝
մշտապես
երկրի վրա ուսանողուհի ապրելու է անպայման։
Լսեցե՛ք.
այն ամենը, ինչով հոգիս շռայլ է,—
իսկ նրա գանձերը թե կարող եք՝ հաշվե՛ք,—
սքանչելիքը,
որ հավերժ կզարդարի իմ քայլը,
և իմ անմահությունն ինքը,
որը, թնդալով դարերում անհամար,
կգումարի
ծնրադրողներով ժողով համաշխարհային,
այդ ամենը,
ուզո՞ւմ եք,
կտամ ես հիմա
լոկ մի խոսքի համար՝
քնքուշ,
մարդկային։
Մարդի՛կ,
փոշի հանելով պողոտաներում,
արտերը տրորելով,
աշխարհի բոլոր ծայրերից եկեք,

ինչքան որ կաք։
Այսօր
Պետրոգրադում,
Նադեժդինսկում*,
անգրոշ
վաճառվում է թանկարժեք մի թագ։
Մեկ հատիկ մարդկային խոսքով,
ճիշտ չէ՞, շա՜տ է էժան։
Գնա՛,
փորձի՛ր,
ո՜նց չէ՝
կգտնե՜ս այն։

## ՀԵՂԻՆԱԿԸ ՍԻՐՈՎ ԻՐԵՆ Է ՆՎԻՐՈՒՄ ԱՅՍ ՏՈՂԵՐԸ

Չորս բառ։
Ծանըր, հարված ինչպես։
«Կայսրինը՝ կայսրին, աստծունը՝ աստծուն»։
Իսկ
որտե՞ղ հապա
խցկվեմ պիտ ես,
որտե՞ղ է ինձ համար որջը պատրաստվում...

Եթե ես լինեի
փոքըր,
ինչպես Մեծ օվկիանոսը,
ալիքների թաթերին կկանգնեի,
կգգվեի լուսնին։
Որտե՞ղ գտնեմ ինձ համար սիրած,
ինչպես ես եմ...
Փոքրիկ երկնքում չէր պարփակվի այդպիսին։

Օ՜, եթե ես աղքատ լինեի...
Ինչպես միլիարդատեր...



Ի՞նչ է փողը հոգուն.
անհագուրդ գող այնտեղ։
Իմ ցանկությունների սանձապուրծ հորդային
չէր բավի բոլոր Կալիֆորնիաների ոսկին։

Եթե ես թլվատ լինեի,
ինչպես Դանթը, Պետրարկը կամ թե...
Հոգիս մեկի դեմ վառել,
երգով հրամայել նրան՝ մխա՛ էլի...
Եվ բառերը,
և սերն իմ,
հանց հաղթական կամար.
փառահեղ, անհետ անցնում են նրա միջով
սիրուհիները բոլոր դարերի։
Օ՜, եթե ես
լուռ լինեի,
ինչպես ամպրոպ,
կնվայի,
ցնցելով երկրագնդի ճգնարանը զառամ։
Եթե ես
գոռայի ամպրոպաձայն,
ահռելի ուժով,
գիսավորները վշտից ցած կթափվեին
ձեռքերով վառված։

Գիշերվա աչքերը լույսերով կկրծեի,
օ՜, եթե լինեի ես
աղոտ,
ինչպես արևն ինքը...
Շատ է հարկավոր ինձ
իմ փայլով ոռոգել
երկրի ամայացած գիրկը։
Կանցնեմ,
իմ մեծ սերը քարշ տալով ինձ հետ։
Ինչպիսի՞ գիշերում
զառանցանքային,
ախտավոր,
ինչպիսի՞ Գողիաթից եմ ես սաղմնավորվել՝

այսքան ահագին
և այսպես անհարկավոր...

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ահա քայլում եմ ես—
անդրծովյան քայլամ—
հանգով ու վանկով փետրաքաղարգ։
Աշխատում եմ
հիմարըս
գլուխս թաքցնել՝
թաղելով փետրում երգաձայն։

Քոնը չեմ ես, այլանդակություն ձնի.
խորը
հոգիս՝
փետուրներում թաղվիր,
և կբացվի մուրիշ մի հայրենիք,
տեսնում եմ՝
հրկիզված հրով հարավի։
Շոգ ու տապի կղզի։
արմավներով պճնած։
«Է՜յ,
ճանապարհ տվե՜ք»։
Անրջանք եմ հյուսում.
Եվ կրկին,
մինչ մյուս օազիսը,
հյուսում եմ նոր հեռքեր վայրկյանների փոշով։
Ոմանք փախչում են.
— Երևի կծում է։
Ոմանք՝
ստոր
քծնում։
«Մայրի՜կ,
այ մայրի՜կ,
ածո՞ւմ է նա ձու»։



«Չգիտեմ, հոգյակս,
երևի ածում է»։

Վրնջում են էտաժները։
Փողոցները դժժում։
Շնչում են ջրի ցրտություն։
Ամբողջովին խոցված մատներով ու ծխով՝
անցնում են տարիներս ցուրտ։
Դե, ի՞նչ, խեղդի՜ր հիմա ինձ գզվանքով պաչիր,
փետուրներս խուզի՜ր քո ցուրտ քամու ձեռքով։
Թո՜ղ կորչեմ,
օտար ու սառնասիրտ,
բոլոր ձմեռներից մրրիկների ներքո։

## ՀԵՔԻԱԹ ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Եղել է, չի եղել աշխարհում մի կադետ,
կարմիր գլխարկ է ծածկել կադետն էդ։
Բացի ժառանգած գլխարկից իր,
հոգում նա չուներ ոչ մի բան կարմիր։
Ռևոլյուցիայի լուրը կլսեր նա հենց,
մեկ էլ էն տեսար՝ գլխարկը ծածկեց։
Ապրում էին նրանք միշտ դեպքերի հետ,
և՛ հայրը, և՛ պապը՝ սերնդով կադետ։
Բայց շաչեց մի օր էլ փոթորիկը մեծ,
կադետի գլխարկը ծվեն-ծվեն արեց։
Էլի մնաց սև, ու այս որ տեսան,
ռևոլյուցիայի գայլերը ճանկեցին նրան։
Դե մեզ հայտնի է գայլերի դիետը,
խժռեցին կադետին՝ մանժետներն էլ հետը։
Երեխեք, երբ հասուն մարտիկներ դառնաք,
կադետի հեքիաթն այս դուք չմոռանաք։

## ԼԱՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ՁԻԵՐԸ

Դոփելով, սմբակները
երգում էին կարծես.
— Գրի՛բ։
— Գրաբ։
— Գրոբ։
— Գրուբ։
Քամուց լիզված,
սառցոտ,
սահում էր փողոցը։
Ձին
հանկարծ
սայթաքեց.
Հավաքվեցին նրանք,
և ընկավ հռհռոցը։
Նրանք, որոնք անգործ
իրև էին տալիս,
հավաքվեցին։
Ծիծաղ։
— Ձի՛ն ընկավ։
— Ձի՛ն։
Ծիծաղում էր փողոցը,
Միայն ես
չխառնեցի իմ ձայնը այդ ոռնոցին անձուկ։
Մոտեցա ու տեսնում եմ...
ձիու աչքերը...
Փողոցը շրջվել է,
հոսում է նրանցում...
Մոտեցա ու տեսնում եմ.
կաթիլ առ կաթիլ
արցունքը,
հոսելով մռութից,
թաքնվում է բրդում։
Եվ ինչ-որ ընդհանուր
անասնական թախիծ
իմ մեջ ծփաց հանկարծ



և հորդեց դուրս.
«Ձի՛,
հարկավոր չի՛.
մտի՛կ տվեք ինձ.
ինչո՞ւ եք դուք կարծում, որ վատ եք նրանցի՛ց էլ։
Մանկի՛կս,
բոլո՛րս էլ
ձիեր ենք մի քիչ.
մեզանից ամե՛ն մեկը իր տեսակի մի ձի է»։
Կարելի է
ծեր ձին
կարիք է՛լ չուներ դայակի.
կարելի է՝ խոսքե՛րս իսկ
տափակ թվացին նրան,
ձին
սակայն
կանգնեց հանկարծ ոտքի,
խրխնջաց
ու գնաց։
Խաղացնում էր պոչը։
Մանկան պես ուրախ էր։
Ուրախ մսուրն հասավ,
պոչը շարժեց։
Եվ թվում էր նրան,
թե ինքը քուռակ է.
արժե ապրել կյանքում
և աշխատել արժե։

## ՁԱԽ ՄԱ՛ՐՇ

(Նավաստիներին)

Տարածվեցեք դուք քայլերթով,
Տեղը չէ բառային կլյաուզի։
Լռեցե՛ք, հռետորներ բոլոր։
Խոսքը
ձերն է,
ընկեր մաուզեր։

Բավական է ապրենք օրենքով՝
Ադամ ու Եվայից ստացած։
Քշենք պատմության ձին քոսոտ։
Ձա՛խ,
ձա՛խ,
ձա՛խ։

Է՜յ, կապտաբաճկոններ,
սուրացե՜ք ավելի,
օվկիանոսներից անցե՛ք։
Թե՞ ռեյդում կանգնած զրահանավերի
սուր ողնուցներն են բթացել։

Թող թագի ժանիքները բաց անի
բրիտանական առյուծը և մռնչա՛։
Կոմունան նվաճած չի լինի։
Ձա՛խ,
ձա՛խ,
ձա՛խ։

Այնտեղ,
վշտի լեռների ետևում
անպարփակ երկիրն է արևավոր։
Քաղցի ծովերի,
սովի ետևում
դրոշմիր քայլերդ միլիոնավոր։

Թող պատի մեզ վարձկան բանդան,
պողպատե ջրցիրից հորդեն ցած։
Ռուսաստանին չի կպչի Անտանտան։
Ձա՛խ,
ձա՛խ,
ձա՛խ։

Արծվային մեր ա՞չքը պիտի շաղվի.
հնի՞ն պիտի սկսենք նայել։
Ամրացրու



կոկորդին աշխարհի
պրոլետարիատի մատները։

Անվեհեր կրծքերով առաջ։
Երկնքում դրոշներ արա կախ։
Ո՞վ է այնտեղ քայլում աջ։
Ձա՛խ,
ձա՛խ,
ձա՛խ։

## ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ

Ես գիտեմ,
հերոսները չէ,
որ ժայթքում են ռևոլյուցիայի լավան։
Հերոսների հեքիաթը
ինտելիգենտական սուտ է չնչին։
Բայց ո՞վ ապուշը
չի ձգտի
գովերգել փառքը
մեր Իլյիչի։

Ոտքերն անուղեղ՝ անհեթեթ են.
անուղեղ
ձեռքերը՝ գործ չունեն անելու։
զարկվում էր դես ու դեն
աշխարհի մարմինն անգլուխ։

Մեզ
մորթելու էին վաճառում նրանք,
ռազմական ոռնոցն էր,
երբ
աճեց
աշխարհի վրա
Լենինը՝
հսկայական գլուխ։
Եվ երկրները

բևեռների բաժանվեցին։
Բոլոր հարցերը պարզացան։
Եվ քաոսում
երկու
աշխարհներ
իրենց ողջ հասակով բարձրացան։

Մեկը՝
փոր փորի տված.
մյուսը՝
ժայռեղեն, անթեք։
Միլիոնների մեջ հավատներ լցրած,
մկանոտ,
լեռան պես կանգնեց։

Այժմ
էլ մենք չենք վրիպի։
Մենք գիտենք, ում նշան բռնել։
Գիտենք մեր ոտքերը հիմի,
թե ում դիերով քայլեն։

Տեղ չունեն կասկած ու վայնասուն,
խխունջային «սպասենք»-ը կորչի թող։
Մեր ձեռքերն արդեն գիտեն
ում խփել
մահվան անձրևի տարափով։

Հրդեհներով ծխելով աշխարհը հանուր,
ուր էլ որ
ժողովուրդը գերի լինի,
ռումբի պես
պայթում է
մի անուն.
Լենին,
Լենին,
Լենին։



Դա այն չէ, իբր,
հոբելյարի համար
շարժել երգերի հովհարը։
Ես
Լենինի մեջ
փառաբանում եմ
աշխարհի հավատն ու
իմ հավատը։

Բանաստեղծ չէի լինի ես,
չերգեի եթե
РКП-ի երկինքն անեզր՝
աստղերով հնգաթև։

## ԱՆՕՐԻՆԱԿ ԱՐԿԱԾ, ՈՐ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ ԱՄԱՌԸ, ԴԱՉԱՅՈՒՄ

Հարյուր քառասուն հսկա
արևների ուժով
հուրհուրում էր ամռան
մայրամուտը։
Հուլիսին էր, շոգին,
հոսում էր շոգը շոգ,
դաշայում էր,
տոթ էր։
Փոքրիկ լեռան ներքևո—
Ակո՛ւլինո սարի—
ընկած էր գյուղը՝
տեղը
տանիքների պարի։
Գյուղի ետևը փոս էր,
և այդ քոսոտ որջում
ամեն անգամ
արևը

իջնում էր ու կորչում։
Իջնում էր նա, որ վաղը
կրկին ելնի, վառվի,
որ ողողի
աշխարհը
իր շողերով կարմիր։
Եվ ամեն օր
նա նո՛ւյնը,
ու ճշտությամբ
խստիվ.
և այս ամենը
ինձ
բարկացրեց սաստիկ։
Մի օր այնքան ես
բարկացա,
որ գունատվեց սարսափից,
և գոռացի ես.
— Իջի՛ր ցած,
բավական է տապես։
Եվ գոռացի ես.
— Ձրիակեր,
դու այդտեղ քնքշացել ես.
իսկ ես այստեղ
ամառ-ձմեռ
ներկում եմ պլակատներըս։
Եվ գոռացի ես.
— Սպասի՛ր,
լսի՛ր, ոսկեճակա՛տ,
անգործ շրջում ես,
է,
լավ չէ՞
ինձ մոտ թեյի գաս։
Ես ի՞նչ արի...
Օ, ես կորա...
Ինձ մոտ,
հոժար կամքո՛վ իր,
ահա արևը հուրհուրան՝



դաշտով գալիս։
քայլում է...
Ուզում եմ
վախս
թաքցնեմ,
գնում եմ ետ-ետ,
բայց պարտեզում է նա հրեն,
գալիս է
նա
արդեն։
Մտնում է դուռ ու պատուհան,
թափվում է ներս
անհասը.
մտավ
և շունչ առավ մի պահ,
հետո հնչեց իր բասը.
— Քաշում եմ
ետ
շողերըս
ես այս անգամ թեպետ,
սակայն
դու ինձ
կանչել ես,
պոետ,
դե թեյը բեր...
Եվ,
քրտինքի մեջ լողալով,—
օ, շոգն հոգիս վառել էր,—
ես,
ինքնաեռը ցույց տալով,
ասի՝
— Նստի՛ր, արևըս...
Ո՞ր սատանան էր՝ ինձ դրդեց,
որ ես
կանչեմ նրան,
բայց, քաշվելով, ես նստեցի,
որ չխնդա վրաս։

Ու լուսավոր մի պարզություն
հորդում է նա,
և վախըս
ես մոռանալով
նրա հետ
խոսում եմ
և
ուրախ եմ։
Խոսում եմ
ես
դեսից-դենից,
ասում եմ.
— Շատ է գործս։
Իսկ նա ասում է.
— Պարզ նայիր
կյանքին,
դեռ դու անփորձ ես։
Կարծում ես
հե՞շտ է
ապրել.
հապա գնա՛,
փորձի.
բայց դե,
ես պե՛տք է ապրեմ,
ես չե՛մ փախչում գործից...
Այսպես
խոսում ենք երկուսով,
կորչում է մութի հետքը.
էլ ի՞նչ
գիշեր,
արդեն դու-ով
խոսում ենք իրար հետ մենք։
Քիչ անց արդե՛ն ես՝
մտերիմ՝
խփում եմ իր ուսին,
իսկ նա.
— Նույն բախտն է վիճակված,



պոե՛տ, մեզ երկուսիս։
Գնանք, պոե՛տ,
գոռա՛նք,
երգե՛նք,
խրվենք կյանքի գորշ խորքը.
ես իմ
շողերը կցրեմ,
դու քոնը՝
երգերո՛վ քո։
Էլ ո՛չ ստվեր կա,
ո՛չ խավար,
ընկավ մութի պատնեշը.
հիմա երգի՛ր դու
ու շողա,
էլ լույսն ու երգն անվե՛րջ է։
Երբ նա հոգնի,
ուզի պառկել
գիշերն՝ այդ բութ քնկոտը,
ես իմ շողերը կարձակեմ,
և գիշերի՛ մեջ
կծագե
իմ լույսն ու առավոտը։
Լուսել ընդմի՛շտ,
երգել անվե՛րջ,
մինչև սառչի լեզուն քո,
լուսել,
ա՛յ սա է արևի
և իմ
միակ
լոզունգը...

## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ՕՐԻՈՐԴԸ

Այդ երեկոն պիտի վճռեր՝
սիրեկաններ չդառնա՞նք մենք.
մութ է,
ո՞վ կարող է մեզ տեսնել, ո՞վ...

Ես խոնարհվեցի իսկապես,
և իսկապես,
ես,
խոնարհվելով,
առաջի նրան,
ինչպես բարի հայրիկ.
«Կրքերի քարափը շատ է թեք,
եղեք բարի,
հեռացե՛ք։
Հեռացե՛ք,
եղեք բարի»։

## ՀԱՅՆԵԱԿԵՐՊ

Աչքերից շանթեր արձակեց ազդու.
«Ես տեսա՝
քեզ հետ ուրիշ կին կար։
Դու ամենաստոր,
ամենացած դու...»։
Եվ տեղաց,
և տեղաց,
և տեղաց հայհոյանքը։
Ես ուսյալ մարդ եմ, սիրելիս,
Թողեք թնդյունները ձեր։
Եթե կայծակը չսպանեց ինձ,
ապա ամպրոպն,
աստված վկա,
սարսափելի չէ։

## ԱՆՊԵՏՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փա՜ռք, փա՜ռք, փա՜ռք հերոսներին։
Ի դեպ՝
նրանց
մեր հարկը բավական ենք մատուցել։



Այժմ
անպետքության մասին
մի քիչ էլ։

Ռևոլյուցիոն մրրիկները խաղաղվեցին,
տիղմի փառով պատվեց սովետական խառնուրդը։
Եվ դուրս եկավ
ՌՍՖՍՀ-ի մեջքի ետևից
քաղքենու
մռութը։

(Չեք բռնեցնի դուք ինձ խոսքերով այս իմ,
քաղքենի խավի դեմ ես ոչինչ չունեմ.
ես քաղքենիներին
առանց խավ ու դասի
փառաբանում եմ)։

Ռուսական անծայր արտերից բոլոր,
առաջին իսկ օրից սովետի՝ նորածին,
նրանք հոսելով
և փետուրները շտապ փոխելով,
հիմնարկների մեջ բոլոր՝ նստեցին։

Հինգ տարվա նստելուց՝ նստուկներին կոշտեր
և լվացարանների պես ամուր,
ապրում են նրանք մինչև հիմա դեռ
ջրի պես լուռ։
Սարքել են ննջարան հանգստավետ
և կաբինետ։

Եվ երեկոյան,
այս կամ այն զազրելին,
նայել իր կնոջ
պիանինոյի վարժության,
ասում է՝
մեղկանալ հեշտաեռից.
«Ընկեր Նադյա...
Տոներին՝ ավելացում։

24 հազար։
Է՜հ, ռոճիկի դրույք.
Կգնեմ ինձ համար
գալիֆե խաղաղօվկիանոսյան,
որ դառնամ դրանով՝ կարմիր,
ինչպես կորալի խութ»։
Իսկ Նաղյան.
«Եվ ինձ՝ էմբլեմով շոր։
Առանց մուրճ ու մանգաղ երևալ չի լինում։
Ես ինչո՞վ պիտի
աչքի ընկնեմ
այսօր
ռազմռևսովետի պարահանդեսում»։

Պատի վրա՝ Մարքսը։
Կարմիր շրջանակ։
Տաքանում է կատուն
«Իզվեստիայի» վրա պառկած։
Իսկ առաստաղի տակ
ծվծվում է
դեղձանիկը չփացած։

Մարքսը պատի վրայից նայում է, նայում...
Եվ հանկարծ,
բերանը բանալով,
ինչպե՜ս է բղավում.
«Ռևոլյուցիան խճճել են օբիվատելյան թելերը։
Օբիվատելյան կենցաղը սարսափելի է Վրանգելից։
Իսկույն
ոլորեցեք դեղձանիկների գլուխները,
որ կոմունիզմը չպարտվի
դեղձանիկներից»։



## ՀՐԱՄԱՆ № 2 ԱՐՎԵՍՏԻ ԲԱՆԱԿԻՆ

Այս ձե՜զ,
բտված բարիտոննե՜ր,
որ Ադամից ի վեր,
մինչ մեր օրերը բորբ,
դղրդեցնում եք թատրոն կոչվող որջերը
Ռոմեո և Ջուլիետի արիաներով։

Այս ձե՜զ,
նկարիչնե՜ր,
որ ձիերի պես գեր պարարտացած՝
խժռում եք, խրխնջում զարդն
Ռուսաստանի,
արվեստանոցում թաք կացած
հնի պես ներկողներ՝
ծաղիկներ ու մարմին։

Այս ձե՜զ,
որ ծածկվել միստիկ թերթիկներով՝
ճակատին կնճիռներ տված՝
ֆուտուրիստիկնե՜ր,
իմաժինիստիկնե՜ր,
ակմեիստիկնե՜ր,
հանգերի ոստայնում խճճված։

Այս ձե՜զ,
կոկիկ սանրվածքը
գզգզվածությամբ փոխարինողնե՜ր,
լաքի տեղ տրեխներ՝
պուշկինյան խունացած ֆրակի վրա
կարկատան գցող
պրոլետկուլտցինե՜ր։

Այս ձե՜զ,
պարողնե՜ր, սրինգ փչողնե՜ր,

և բաց ու արձակ շվայտացողնե՛ր,
և մեղանչողնե՛ր Թարուն, ծածկըված,
պատկերացնողնե՛ր գալիքն ապագա՝
ակադեմիական օրապահիկով հսկա։
Ձե՛զ եմ ասում
ես,
հանճարեղ եմ ես, թե ոչ հանճարեղ,
որ զիգի-բիգի բաները թողել
և աշխատում եմ այժմ Ռոստայում.
ասում եմ ես ձեզ,
քանի հրացանակոթով ձեզ չեն վռնդել,
Թողե՛ք։
Թողե՛ք։
Մոռացե՛ք,
Թքե՛ք
Թե՛ հանգի,
Թե՛ արիայի,
Թե՛ վարդի թփի
և Թե՛ արվեստի զինանոցից վերցրած
ուրիշ զանազան բաների վրա։
Այդ ո՞ւմ է արդյոք հետաքրքրում,
Թե՝ «Այս խեղճը, ա՛խ,
ինչպե՞ս էր սիրում,
և ինչպես նա դարձավ դժբախտ...»։
Վարպետներ
և ոչ թե երկարածամ քարոզիչներ
են այսօր մեզ պետք։
Լսեցե՛ք,
ահա շոգեքարշերն են տնքում ուժգին.
փչում է ճեղքերից, հատակից.
«Մեզ ածուխ տվեցե՛ք Դոնից։
Փականագործներ
և մեխանիկներ ղրկե՛ք դեպոյին»։

Ամեն մի գետի ակունքում
պառկել, մի կողքը ծակված,



նավերը ոռնում են, նվում.
«Նավթ տվե՛ք մեզ Բաքվից բերված»։

Մինչ վիճում ենք, ձգձգում՝
փնտրելով իմաստը Թաքուն.
«Մեզ տվե՛ք դուք ձևեր նորանոր»,
անցնում է վայնասունն
Իրերի վրայով։

Չկան տխմարներ այլևս՝
բերանբաց ամբոխի նման
մաեստրոյի առջև կանգնած
սպասող, թե ի՞նչ պիտ դուրս գա իր շուրթից։
Ընկերնե՛ր,
տվե՛ք նոր գեղարվեստ
այնպիսին,
որ պետությունը դո՛ւրս հանի կեղտից։

## ԺՈՂՈՎԱՄՈԼՆԵՐԸ

Հազիվ է գիշերը սահում դեպի լույս,
տեսնում եմ ամենայն օր ես՝
ով՝ գլուխ,
ով՝ վարչ,
ով՝ քաղ,
ով՝ լուս,
ցրվում են մարդիկ հիմնարկներ պես-պես։
Հեղեղում է թղթային գործերի անձրևը,
հենց որ շենք ես մտնում։
Զոկելով հիսուն թուղթ,
ամենակարևորնե՛րը,
ծառայողները ժողովի են շտապում։

Ներկայանում ես.
«Չե՞ք կարող արդյոք ընդունել,
վաղուց եմ արդեն գալիս-գնում»։

«Ընկեր Իվան Վանիչը նիստի է գնացել՝
Тео-ն և Гукон-ը միավորելու»*։
Մաշում ես հարյուր սանդուղք։
Աշխարհը սև է թվում.
և նորից.
«Ձեզ ասացին, որ մի ժամից գաք։
ժողով են անում՝
գավկոմը գնելու է
մի սրվակ թանաք»։

Մի ժամ անց՝
ոչ քարտուղար,
ոչ քարտուղարուհի կա,
դատարկ է չորս դին։
Բոլորը, մինչև 22 տարեկան,
գնացել են կոմսոմոլի ժողովին։

Նորից եմ բարձրանում, աչքս գիշերին,
յոթհարկանի շենքի հարկը էն վերին։
«Ընկեր Իվան Վանիչը եկա՞վ ժողովից»։
«Ոչ, նա ժողովի է
այբ-բեն-գիմ-կոմի»։

Ցասկոտ,
լավայի պես,
ներխուժում եմ ժողով,
ճամփին վայրենի անեծքներ տեղալով։
Եվ տեսնում եմ՝
նստած են կեսերը մարդկանց։
Օ՜, չար տեսիլք...
Որտե՞ղ են մյուս կեսերը սրանց։
«Մորթե՜լ են։
Սպանե՜լ»։
Ճիչով ցած եմ սուրում։
Խելքս թռցրել եմ ահեղ պատկերից։
Հանկարծ
քարտուղարի հանգիստ ձայնն եմ լսում.



«Նրանք երկ-երկու նիստի են մեկից։
Օրական
քսան նիստի
պետք է հասնել։
Ակամայից հարկ է կիսվել.
մինչև գոտին՝ այստեղ,
մնացածը՝ այնտեղ»։
Առավոտ է։
Հուզմունքից չեմ կարող քնել։
Տենչանքով եմ դիմավորում այգաբացը խաղաղ.
«Օ՜,
գոնե դարձյալ
մի ժողով լիներ՝
բոլոր ժողովներին վերջ տալու համար»։

## ՄԵՆՔ ՉԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ

Ինչպես մի ստվեր իջնի գարնան դեմ,
կառավարական փակցված է բյուլետեն։
Ո՛չ։
Հարկավոր չէ՛։
Մի՞թե ամպրոպին կասես
չպայթի։
Ո՛չ։
Շանթը շղթայել հնարավոր չէ՛։
Հավերժ կհնչի
հազարէջանի
ահազանգումի
լենինյան լեզուն։
Մի՞թե որոտը կարող է լինել համրությամբ
տկա՛ր։
Մի՞թե կարող ենք զսպել պտույտը
ահեղ թարթառի...
Ո՛չ։
Չի՛ թուլանա կամքը լենինյան
ՌԿԿ-ի միլիոնահզոր անսասան կամքով։

Այդպիսի տապը
չափելու համար
մի՞թե կարող է
լինել ջերմաչափ։
Զարկերակն այդ
կարո՞ղ է թնդալ
վայրկյան առ վայրկյան։
Հավիտյան կապրի սիրտը լենինյան
Ռևոլյուցիայի եռուն կրծքի տակ։
Ո՛չ։
Ո՛չ։
Ո՜-ոչ...
Չենք ուզում,
չենք հավատում քեզ, թյուլենե սպիտակ։
Հեռո՛ւ մեր աչքից,
դու ստվերում ես գարնան պայծառը
տեսքով քո մռայլ։

## ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ

Մա՛հ,
չհանդգնե՛ս։

Կառուցո՛ւմ,
քանդո՛ւմ,
ձևո՛ւմ
և պոկո՛ւմ,
խաղաղվո՛ւմ,
եռո՛ւմ,
փրփրի՛ն է տալի,
սուլո՛ւմ է,
խոսո՛ւմ,
լռո՛ւմ,
մռնչո՛ւմ
լենինյան
բանա՛կը պատանի։
Մենք



արյո՛ւնն ենք նոր
երակների քաղաքային,
մարմի՛նն արտերի
և թե՛լն
իդեայի մանարանի։
Լե՛նինն
ապրե՛լ է։
Լե՛նինն
ապրո՛ւմ է։
Լե՛նինը
կապրի՛։
Ողողե՛լ են վըշտով։
Տարե՛լ են մավզոլեյը
մասնի՛կը Լենինի՝
մարմի՛նը նրա։
Բայց չե՛ն առնի
քայքայումը,
ոչ հո՛ղը,
ո՛չ մոխիրն
առաջնագո՛ւյնը Լենինի՝
գո՛րծը նըրա։
Մա՜հ,
ցա՛ծ դիր գերանդիդ.
դատավճիռդ է կե՛ղծ։
Երկինքն
այդպիսինին
չի է՛լ դըրվատի։
Լենինն
ապրե՛լ է.
Լենինն
ապրո՛ւմ է,
Լենինը
կապրի՛։
Լենինն
ապրում է
քայլվածքով Կրեմլի՝
առաջնորդի

կապիտալյան գերիների։
Եվ պիտի ապրի՛,
Լենինի՛ անունով
պարծենա պիտի երկիրն։
Դեռևս
աշխարհով
խռովություններ կանցնեն,
սահմաններից ամեն
կոմո՛ւնան
ուղի՛ղ կհարթի։
Լենինն
ապրե՛լ է։
Լենինն
ապրո՛ւմ է։
Լենինը
կապրի՛։
Ի գիտություն մահվան
պառավ վըհուկին,—
գերեզմա՛ն քըշող,
և պառավեցնո՛ղ.
«Լենինն» ու «մահը»՝
բառեր թըշնամի։
«Լենինն» ու «կյանքն»՝
ընկերներ։
Տըխրությունդ
պահի՛ր դու պինդ։
Կրծքով
վըշտին դիմադրի՛ր,
Մեզ
պե՛տք չէ տխրել։
Լենինն
ապրե՛լ է։
Լենինն
ապրո՛ւմ է։
Լենինը
կապրի՛։
Լենինը՝



ահա՛,
կողքներըս։
Գալի՛ս է,
և մեզ հետ կըմեռնի...
Եվ կրկին
ամե՛ն ծնվածում կծնվի՝
որպես ո՛ւժ,
գիտությո՛ւն
և դրո՛շ։
Բոլո՛ր սահմաններով,
խո՛սք,
սըլանալով՝
ճախրի՛ր
Լենինն
ապրե՛լ է.
Լենինը
ապրո՛ւմ է.
Լենինն
կապրի՛։
Լե՛նինն էլ
չէ՞ որ
սկսեց «այբ»-ի՛ց,
կյա՛նքը՝
հանճարի՛ արհեստանոց։
Տարիքից ցածի՛,
ցածի՛ դասակարգից
ձգտի՛ր հըսկայանալ՝
ինչ Լե՛նինը մեծ։
Պալատների՛ հարկեր, դողացե՛ք։
Շահույթի՛ բիրժա,
զարկված՝
կռնա՛ս դու
ցավից։
Լե՛նինն
ապրե՛լ է։
Լե՛նինն
ապրո՛ւմ է։

Լե՛նինը
կապրի՛։
Լե՛նինը
մե՛ծ է
ամենամեծերի՛ց,
բայց նո՛ւյնիսկ
ա՛յդ
զարմանքին
մանուկնե՛րն են ստեղծել
բոլոր դարերի,
մենք,
մանուկնե՛րս կոլեկտիվ։
Մըկանըդ
հանգույցով հյուսի՛ր,
ատամըդ՝ դանակ,
գիտությա՛ն մեջ
խրի՛ր և մանրի՛ր։
Լենինն
ապրե՛լ է։
Լենինն
ապրո՛ւմ է։
Լենինը
կապրի՛։
Կառուցո՛ւմ,
քանդո՛ւմ,
ձևո՛ւմ
և պոկո՛ւմ։
Խաղաղվո՛ւմ,
եռո՛ւմ,
փրփրի՛ն է տալի,
սուլո՛ւմ է,
խոսո՜ւմ,
լռո՜ւմ,
մռնչո՛ւմ
լենինյան
բանակը պատանի։
Մենք արյո՛ւնն ենք



նոր
երակների քաղաքային,
մարմինն արտերի
և թե՛լն
իդեայի մանարանի։
Լենինն
ապրե՛լ է։
Լենինն
ապրո՛ւմ է։
Լենինը
կապրի՛։

## ԸՆԿԵՐ ՆԵՏՏԵԻՆ

### ՇՈԳԵՆԱՎԻՆ ՈՒ ՄԱՐԴՈՒՆ

Ես զուր չէր, որ ցնցվեցի։
Սին տեսիլք չէր անդրշիրիմյան.
Նավահանգիստ,
վառման,
ուր հալչում է ամառ
ու տենդ,
ծավալվում,
մտնում է հիմա
ընկեր «Թեոդոր
Նետտեն»*։
Այդ նա՛ է։
Նրան ճանաչում եմ ես։
Ափսե-ակնոցներով փրկող օղակների։
— Բարև քե՛զ, Նետտե՛,
ի՛նչ ուրախ եմ, որ ողջ ես,
մխոտ կյանքով ծխնելույզների,
կեռի,
թոկերի։
Մո՛տ արի այստեղ։
Ծանծա՞ղ է միթե.
Բաթումիից,
երևի, կաթսաներով ես եռում...

Հիշո՞ւմ ես, Նետտե՛,
երբ մարդ էիր դեռ,
թեյում էիր հետս
դու դիպ-կուպեում։
Դանդաղում էիր։
Քնկոտներ էին կողքից խռռում։
Կնիքի զմուռսին
աչքդ
շեղելով՝
անվերջ խոսում էիր
Ռոմկա Յակոբսոնից
և ծիծաղելի քրտնում՝
ոտանավոր սովորելով։
Լուսո դեմ քնում էիր։
Մատդ
շնիկին դրած...
Մոտ եկե՛ք,
եթե կտա քեֆներդ։
Կմտածեի՞,
որ ընդամենը մի տարի անցած՝
կհանդիպեմ քեզ հետ՝
շոգենավի հետ։
Նավախելից դեն՝ լուսինը։
Ա՛յ, հիանալի է։
Պառկել է,
լայնությունն երկու կես արել.
կարծես հավետ
հետևից միջանցքի կռվի
հերոսի հետքն ես տանում,
ցինց և արյունայի։
Կոմունիզմին գրքով
հավատում են միջակ։
«Միթե՞ քիչ կարելի է
փչել գրքում մի»։
Իսկ այդպիսին՝
կկենդանացնի «ցնորքը» հանկարծ
և ցո՛ւյց կտա



կոմունիզմի
բնությունն ու մարմինը։
Մենք ապրում ենք
սեղմված
երկաթե երդմա՛ք պիրկ։
Դրա համար
խաչ ելնում,
և փորվում գնդակով,
որպեսզի
աշխարհում
առանց Ռուսիաների, Լատվիաների՝
ապրե՛նք միասնական
մարդկային կյանքով։
Մեր երակներում
արյո՛ւն է, ո՛չ ջուր։
Ատրճանակային հաչոցի
միջով ենք գնում անվերջ,
որպեսզի
մեռնելով
մարմնանանք վերջում
շոգենավերում,
տողերում,
այլ գործերում հավերժ։
Ինձ ապրել ու ապրել,
տարիների միջով սահել։
Բայց վերջում ուզո՛ւմ եմ
և այլ ցանկություն չգիտեմ,
իմ մահվան ժամն
ուզում եմ այնպե՛ս հանդիպել,
ինչպես
մահվանն հանդիպեց
մեր ընկեր Նետտեն։
15 հուլիսի, Յալթա։

## ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Ես
երկու ամիս
թափառեցի բնության գրկում,

որ ծաղիկները դիտեմ
ու հուրն աստղերի։
Չեմ տեսել այդպիսին։
Բնությունն ամբողջ, ինչպես
գիրք հեռախոսային։
Ամենուրեք—
հատակին ժայռերի,
ծանրաքաշ բեռին
Կովկասի
ու ժայռադեմ Ղրիմի,
պատերին զուգարանների,
ամպերին,
ու անգամ
փորին
Մեծն Պետրոսի երիվարի,
սկսած ճամփի փոշիներից
մինչև
լեռները բարձրադիր,
ուր որոտ կա,
դղիրդ ու կայծակներ,
ամենուրեք՝
հատվածներ երգերի ու արձակի,
ազգանուններ
ու հասցեներ։
«Սոնյան ու Վանյան խայիլով այստեղ են եղել,
հանգստացել է ընտանիքը ու սնվել»։
«Կոլյան ու Զինան
ջերմացրել են այստեղ իրենց հոգին»։
Ալաք,
ու տանձի պես
սիրտը կողքին։
«Միացե՛ք, պրոլետարներ, բոլոր երկրների։
Պյոտր Պարուլայտիս՝ կոմերիտ»։
«Մըսյո Գոգից,
վարսավիր Տաղանրոգից»։
Մշտադալար նոճուն



դարերով կանգնած՝
ամբողջ այբուբենն է
փորագրված՝
այբ, բեն, գիմ, դա...
Իսկ սա՝
մագլցելով,
տաղանդն սպառած,
արծվաթռիչք շերտերն ընտրած հորիզոն,
պարզ ու հասարակ՝
«Իսակ
Լեբենզոն»։
Մեղադրե՞նք
մարդկանց,
որ նրանք
չեն կարող առանց ազգանվան
ու դատաների
ապրել։
Սովորել են
զբաղվել հավիտյան գրասենյակայնությամբ։
Նրանք
և ժայռին են
նայում ինչպես մանդատների։
Երբ այդպիսին
թեյելիս բալկոնից
նայում է,
թե ոնց է արևը
բարձրանում անտառից,
ո՛չ արշալույս,
ո՛չ մայրամուտ՝
արևն անգամ սրան
ելից
ու մտից է
թվում։
Է՛հ.
գարնան դեմ
կկերտեի
երկաթե դեկրետ։

«Ազգանուններով
իմանալ
լեռների ու ծառերի վրա
ստորագրող ջահելներին։
Յուրաքանչյուրի
ձեռքը տալ
մի ջնջոց, մի չուլ,
կռնակին մի դույլ,
ու մա՛րշ առույգ։
Ստորագրող
և՛ Կոլյաներին,
և՛ Ջինաներին՝
սեփական անունները
մաքրել ուժով բենզինային,
և որպեսզի
էներգիան չկորչի անհոգ,
ի դեպ և Այ-Պետրին
մաքրել սկիպիդարով։
Իսկ նրանց,
ով այնքան է
սովորել գրելու,
որ նորից
ձգում է դեպ ժայռերի դեզը։
Նրանց համար
ընդմի՛շտ փակվում է
լիկ-
բեզը»։
Դեկրետի տակ ստորագրություն՝
հեռձիգ իմ ազգի
Վլադիմիր Մայակովսկի։

*Յալթա, Սիմֆերոպոլ, Գուրզուֆ, Ալուպկա*



# ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

**Ալեքսանդր Սերգեևիչ,**
**թույլ տվեք ներկայանալ։**
**Մայակովսկի։**

Տվե՛ք ձեր ձեռքը։
Ահա կրծքավանդակըս։
Լսեցե՛ք,
տնքոց, այլ ոչ բաբախում,
մտահոգում է ինձ նա,
կորյունս՝ դարձած հեզ լակոտ։
Բնավ չգիտեի,
որ իմ թեթևամիտ գլխում
կրում եմ ես
այսքան հազար տոնն
կրակոտ։
Ես քարշում եմ ձեզ,
իհարկե՝ զարմացաք,
կտանեմ տունը։
Հո՞ւպ տվի։
Ցավե՞ց։
Ներեցե՛ք ինձ, բարեկամ։
Ինձ ու ձեզ համար
ամբարված է
հավերժությունը։
Մե՞ղ ինչ՝
կորցնել
մի քանի ժամ։
Եկ վազե՛նք՝
շաղակրատելով
ինչպես առուն,
ինչպես գարուն՝
ազատ,
շղթայազերծ։
Տե՛ս վերևում՝
լուսինն
այնքան է թարմ, սիրուն,

որ նրան
առանց ուղեկցի
դուրս գալն անգամ վտանգ է մեծ։
Ես
այժմ
ազատ եմ
սիրուց
ու պլակատներից։
Խանդի արջից
մնացել է լոկ մորթին
ճիրանակիր։
Կարող ես համոզվել,
որ երկիրը
թեք է նորից,
Նստի՛ր
նստուկիդ սեփական
ու սահի՛ր։
Ո՛չ,
ես չեմ տրվի տրտմության չար
ու ոչ ոքի հետ
խոսել իսկ չեմ ուզում։
Միայն՝
մեզ նման մարդկանց
ուռչում է անդադար
խռիկը հանգերի
բանաստեղծության ավազում։
Անուրջը վնաս է,
և զուր է երազել,
պետք է տանել
ծառայության ձանձրույթը։
Բայց երբեմն
կյանքը
բացվում է քեզ նորաձև
և չնչինից
խոշորն ես
հասկանում դու։
Ընդդեմ լիրիկայի



գրոհել ենք սվինով
մենք շատ անգամ,
փնտռում ենք մենք խոսքեր
մերկ
ու ճշմարտացի։
Բայց պոեզիան՝
մի բան է դա սաստիկ սրիկայական.
Նա կա՛,
թեկուզ գլխովդ տաս քացի։
Այ, օրինակ,
հենց այս՝
խոսվո՞ւմ է, թե՞ մայվում այսօր։
Կապտամութ,
դեղին բեղերը կախ,
ինչ որ մի բիբլիական
Նաբուգոդոնոսոր՝
«Կոոպսախ»*:
Տվե՛ք մեզ բաժակներ,
գիտեմ միջոցը հին՝
վիշտը գինով
խեղդելու,
բայց նայում ես,
օ՛հ,
Red և White star-ից*
դուրս են հոսում կրկին
բազում վիզաների
խայտաբղետ դեզով։
Ձեզ հետ ինձ հաճելի է,
ուրախ եմ,
որ հյուր եք ինձ այսօր։
Մուսան
այդ լավ է պար գալիս
ձեր ձեռքերում։
Ինչպես էր այդ՝ խոսո՞ւմ
ձեր Օլգան,
որ...
Չէ՛, Օլգան չէ՞։

Օնեգինն էր
Տատյանայի՜ն գրում։
Իբրև թե՝
մարդը ձեր
հիմար է,
ծեր, անատամ,
ես ձեզ սիրում եմ,
անպայման իմն եղեք, օ՜,
ես այժմ իսկ,
առավոտ,
պետք է հավատամ,
որ կտեսնեմ ձեզ այս երեկո։
Ամեն ինչ կար.
լուսամուտի առաջ հոգին բանալ,
նամակներ,
ցնցումի ժելեն ներվային։
Այ,
երբ
ի վիճակի չես
անգամ վշտանալ։
Այդ,
Ալեքսանդր Սերգեյիչ,
ավելի շատ է դժվարին։
Հայդա՜, Մայակովսկի,
փառոսի՜ր դեպ հարավ,
սիրտըդ
հանգերով տանջիր քիչ,
սերն էլ, ահա,
այստեղ մարավ,
թանկագի՜ն Վլադիմիր Վլադիմիչ։
Ո՜չ,
ծերություն չեն կոչում սրան։
Պրկած
մարմինս ահագին՝
ես
ուրախությամբ
երկուսին կտամ պատասխան՝



բարձացնեն՝
նաև երեքին։
Ասում են՝
ես նյութով
ին-դի-վի-դու-ալ եմ։
Entre nous...*
ցենզուրը չճանկոչ։
Հաղորդեմ ձեզ.
ասում են՝
տեսել են
ВЦИК-ի
անգամ երկու
սիրահարված անդամների։
Այ,
թողել են բամբասանք
ու սիրտն են փայփայում։
Ալեքսանդր Սերգեյիչ,
դուք նրանց մի՜ էլ լըսեք։
Գուցե
ես,
միակս,
իսկապես եմ ցավում,
որ դուք այսօր
կենդանի չեք։
Ինձ
կյանքում
ձեզ հետ
բացատրվել էր պետք։
Այ, շուտով
[illegible] էլ
կմեռնեմ,
կպապանձվեմ։
Մահից հետո
մենք համարյա
իրար կողքի պիտի կանգնենք։
Ձերը Пе.
իսկ իմը՝
эМ

Ո՞վ է մեր միջև։
Ո՞ւմ կուզեք ծանոթ լինել։
Երկիրն իմ
պոետներից
անչափ է աղքատիկ։
Մեր միջև—
այ, խաթա—
Նադսոնն է խցկվել։
Մենք կխնդրենք
նրան՝ հեռու
որևէ տեղ,
Ща-ին մոտիկ։
Իսկ Նեկրասով
Կոլյան,
հանգուցյալ Ալյոշայի տղան,
նա՝ երգեր էլ,
նա՝ և քարտ,
այնպես,
վատ չէ տեսքով։
Գիտե՞ք, արդյոք, նրան.
այ, նա
լավ մուժիկ է, հա՞։
Դա
արդեն մեր թայն է,
թող կանգնի մեր քով։
Ժամանակակիցնե՞րս։
Չէին սխալվի
ձեր փոխարեն
հիսունը տալով։
Հորանջելուց
կճեղքես
այտեր ու բերան։
Դորոգոյչենկո,
Ռոդով,
Կիրիլով,
Գերասիմով*,



ի՜նչ
միապաղաղ տեսարան։
Նու, Եսենին,
ոհմակը մուժիկացողների։
Ծիծաղ։
Կովը կողքին,
ձեռնոցները՝ լաք։
Մի անգամ լըսես...
բայց չէ՞ որ դա խորից է,
ձեռքին բալալայկ։
Պետք է
բանաստեղծը
կյանքում էլ խաս վարպետ լինի.
Ոնց որ սպիրտը պոլտավյան շտոֆում՝
մենք թունդ ենք, լուրջ։
Բայց, ի՞նչ է, ա՜յ, Բեզիմենսկին,
վնաս չունի...
ոչինչ...
գազարի սուրճ։
Ճիշտ է,
կա
մեզ մոտ
Ասեև
Կոլկան։
Դա կարող է,
կա այդտեղ
իմ կնիքը։
Բայց չէ՞ որ պետք է
վաստակել ինչքա՜ն։
Փոքր է.
բայց
ընտանիք է։
Կենդանի լինեիք,
կդառնայիք Լեֆին
համախմբագիր։
Ես ձեզ
կվստահեի

անգամ ազիտկաներ։
Կասեի մեկ անգամ.
— Ա՛յ, այսպես,
կամ այնպես գրիր...
Դուք կարող
կլինեիք,
լավ է ոճը ձեր։
Ես մահուդը
և ժիրկոստը*
ձեզ կտայի,
Գումի տիկնանց
իբրև
ռեկլամ։
(Ես նույնիսկ
յամբով փսփսացի,
որպեսզի
միայն
ձեզ դուր գամ)։
Դուք այսօր
կհրաժարվեիք
թլվատ յամբից։
Սվինն
ու եղանն են
գրիչը մեր
այսօր,
հոկտեմբերյան մարտերն
ավելի լուրջ են
Պոլտավայից,
ու սերն՝
օնեգինյան սիրուց
ավելի հզոր։
Վախեցե՛ք պուշկինիստներից,
պառամուղեղ մի Պլյուշկին
գրիչը բռնած
խցկվում է
ժանգոտած ու խեթ։



Իբրև թե՝
լեֆերից
նույնպես
առաջ եկավ
մի Պուշկին։
Ա՛յ խաբեբա,
մրցում է դեռ
Դերժավինի հետ...
Ես ձեզ սիրում եմ,
բայց կենդանվույն,
այլ ոչ թե մումիան։
Ծածկել են ձեզ փայլով
ժողովածվի։
Դուք
նույնպես
ձեր կյանքում
ասում են—
հաճախ մոլեգնել եք։
Աֆրիկացի՛։
Շանորդի Դանտես.
մեծաշխարհիկ վնասարար։
Մենք հարց կտայինք նրան.
— Իսկ ծնողները ձեր ո՞վքեր են,
Դուք ի՞նչ էիք անում
17 թվից առաջ։—
Միայն այդ Դանտեսին տեսնեինք
մի կերպ։
Բայց ի՞նչ եմ
շաղակրատում։
Հոգեհարցուկ ոնց որ։
Այսպես ասած՝
պատվո գերի եք...
գնդակով զարկված...
Նրանք
վխտում են
նաև մինչև այսօր—
ամեն կարգի

այդ որսորդները
մեր կանանց։
Լավ է մեզ մոտ,
երկրում Սովետական։
Հեշտ է ապրել,
համերաշխ աշխատել։
Բայց, այ,
բանաստեղծներ,
դժբախտաբար, չըկան,
Սակայն, թերևս,
հարկավոր չի այդ էլ։
Դե բավ է,
շողերը
այգաբացն արդեն փորեցին,
Հանկարծ
միլիցիոները
հարցնի սրան-նրան։
Տվերսկոյ բուլվարում
շատ են սովոր ձեր բրոնզին։
Նու, կօգնեմ,
ելե՛ք
պատվանդանի վրա։
Ինձ
կենդանության օրով
հուշարձան կհասներ։
Կպայթեցնեի
անշուշտ
ուժանակով։
Ատում եմ
ամեն կարգի մահացումներ։
Հարգում եմ
ամեն կարգի կյանքով։



# ՎԵՐՍԱԼ

Այս ճանապարհով,
շտապելով պալատ,
անհամար Լյուդովիկները
ցնցել են
ոսկեզօծ կառքերում
մետաքսապատ
տասփթանոց
ցմփոր մարմինները։
Եվ իր
գիտերի
շարժաբները ցնցելով,
այստեղով,
ուր «Մարսելյոզ» են երգել,
թքելով թագին,
վարտիքը կորցնելով,
Փարիզից
Կապետն* է
փախել։
Այժմ
նույն տեղով
Փարիզն է անցնում,
շողացնելով
ավտոները փայլերես...
Անցնում են կոկոտկաներ,
ռանտյեներ են անցնում,
ամերիկացիներ
և ե՛ս։
Վերսա՛լ։
Առաջին բացականչությունն է.
«Լա՛վ են ապրել անզգամները»։
Պալատներ՝
հազարավոր դահլիճ, ննջասենյակներով,
և ամեն մեկի մեջ՝
մահճակալ
ու սեղան։

Այսպիսի
երկրորդը
կառուցել չես կարող,
թեկուզ ողջ կյանքումդ
գողանաս։
Իսկ պալատի ետևում,
այստեղ
ու այնտեղ,
որպեսզի նրանց կյանքը
լինի
անհոգ,
լճակներ,
շատրվաններ
և նորից լճակներ՝
պղնձյա դոդոշների
շատրվանով։
Չորս կողմը,
ի խրախույս
սեթևեթ ձևերի,
ծառուղիները
լի են արձաններով պես-պես.
ամենուր Ապոլոններ,
իսկ այդ
անթև Վեներաներին
թիվ չկա պարզապես։
Իսկ հետո
Պոմպադուրուհիների*
կացարաններն են արդեն՝
Մեծ
և Փոքր Տրիանոնները։
Այստեղ, ահա,
Պոմպադուրուհուն
ցնցուղի տակ են տարել։
Ահա դա
Պոմպադուրուհու ննջարանն է։
Նայում եմ այս կյանքին՝
ա՜խ, որքան է հին.



գեղեցկությունը
հոգիդ է մաշում ուղղակի։
Ասես թե
ծեփվել ես
Բենուայի ջրաներկին,
ինչ-որ
ոտանավորիկներին Ախմատովայի։
Ամեն ինչ զննեցի,
շոշափեցի զատ-զատ,
և այդ բոլորի մեջ
ամենից շատ
ինձ
դուր եկավ
ճեղքվածքը հին՝
Անտուանետայի*
փոքրիկ սեղանին։
Նրա մեջ ռևոլյուցիայի
սվինն են խրել,
պարելով
երգի տակտով,
երբ
սանկյուլոտները
քարշ են տվել
թագուհուն
դեպի էշաֆոտ։
Նայում եմ՝
նախանձելի են
վարդերի մեջ կորած
այգիները։
Տեսարաններ են նախանձելի։
Շուտով լիներ
այսպիսի կուլտուրա
մշակված,
բայց նոր,
մեքենայական թափի ու ձևի։
Մուզեյներ
քըշել

այս խրճիթներն ահա,
այստեղ ահա՛,
ապակեպատ,
պողպատաշեն,
բանվորական պալատ կանգնե՛լ՝
միլիոն տարողությամբ,
այնպես,
որ նայելիս աչքերդ ցավեն։
Բոլորին,
ովքեր ունեն դեռ
ոսկի և կուպոններ,
դեռ գոյություն ունեցող
թագավորներին
ի խրատ,
երկնքի գիլիոտնից,
Անտուանետայի գլխի պես,
արևը
գլորվեց
մեռնելու
տանիքների վրա։
Լողաց,
կպավ-մնաց.
և շագանակենիները
տերևները
շրջեցին թեթևակի։
Երեկոյան
թափանցիկ,
երկնային ծածկոցը
թաքցրեց
թանգարանային Վերսալը կրկին։

## ՀՐԱԺԵՇՏ

Նստում եմ ավտո,
փոխանակած ֆրանկը վերջին։
— Ո՞ր ժամին է մեկնում գնացքը Մարսելի։



Փարիզը
վազում է,
ուղեկցելով ինձ
իր ողջ
գեղեցկությամբ անասելի։
Մոտեցի՛ր
աչքերիս,
հրաժեշտի հուզում,
սիրտս
դյուրազգացությամբ
փխլի՛ր մի պահ։
Ես կուզեի
ապրել
ու մեռնել Փարիզում,
թե չլիներ
այն երկիրը,
որ կոչվում է Մ ո ս կ վ ա՛։

## ՎԵՑ ԿՈՒՅՍԵՐ

Երկինք հառած
դեմքերը՝
եփած գետնախնձոր,
նեգրից էլ սև,
որ բաղնիք չի տեսել
բնավ,
վեց ջերմեռանդ կաթոլիկ կույսեր
խմբով
բարձրացան
«Էսպան» շոգենավ։
Առջևից
և ետևից
ձիգ են, ինչպես պարան,
ասես մեխից՝
ուսերից կախ
մի-մի շալ,

իսկ դեմքերը
պատել են
ծալքերը ճերմակ,
ինչպես
խոզի տոտիկներն են
զատկին շինում ծալ-ծալ։
Տարիները թո՛ղ լցնեն
կյանքի քվոտան*.
Քավակա՛ն է
հիշել
հրաշքն այդ միայն,
բերանս
ճեղքում է
խոր մի հորանջ՝
Մեքսիկական ծոցից էլ լայն։
Զգաստ
ու մաքուր,
ինչպես բորյան թթվուտ,
էսկադրոնով,
մեկտեղ,
նստում են ճաշի։
Ճաշից հետո
միասին զուգարան են մտնում։
Մեկն հորանջեց՝
հորանջում են վեցն էլ անհաշիվ։
Հայտնի մասերի տեղ,
ձիգ ու համաչափ,
ուր կանանց մոտ ուռուցիկություն է,
սրանցը՝ ձոր.
մի ձորի մեջ կախված է
արծաթյա խաչ,
մյուսի մեջ՝ մեդալներ
Լևոնով
և Պիուսով*։
Դեռ շատ վաղ,
չռելով աչքերը անխուսափ,—
դրախտում



(իհարկե)
կառնեն քունները,—
ինչպես անդիրիժոր նվագախումբ,
հանում են
ճամփի
վեց ավետարանիկները։
Գիշերը թե գաս՝
մռթմռթում եմ նստած։
Այգը շառագունել է՝
մռթմռթում են լրբերը...
Ե՛վ գիշեր,
և՛ ցերեկ,
և՛ առավոտ,
և՛ կեսօր
նստել,
մռթմռթում են
հիմարներն աստծու։
Իսկ թե օրը
մթնեց
ու ամպեց
շատ քիչ,
կմտնեն կաբին,
12 կրկնակոշիկ
կհագնեն մեկտեղ
և դուրս կգան նորից,
և նորից
կհոսի
փսփսուկը հուշիկ։
Թե իմանայի
իսպաներեն...
Կհարցնեի ցասկոտ.
— Հրեշտակնե՛ր,
պատասխանե՛ք,
ձեզ պարզ մի հարցում.
թե մարդ եք,
ի՞նչ են
ագռավներն

արդյոք։
Թե ագռավ եք,
ինչո՞ւ
հապա չեք թռչում...
Ագիտպրոպնե՛ր,
կաշվից մի դուրս գաք իզուր,
երկրագունդը
իզուր մի հետախուզեք։
Ամենահրաշալի
անաստվածն անգամ
սուր
այս կարիկատուրան
չի հնարի երբեք...
Ցնծա՛, խաչված Հիսուս,
ցնծա՛,
հրճվի՛ր,
և ցած մի՛ իջիր
քո խաչափայտից,
իսկ եթե կրկին հայտնվես՝
այստեղ
մի՛ խցկվիր,
թե չէ,
միևնույնն է,
կկախվես ձանձրույթից...

## ԲԼԱՔ ԸՆԴ ՈՒԱՅԹ*

Եթե
Հավաննան
դիտես մի ակնթարթ՝
թվում է հրաշք երկիր,
եդեմ է թվում։
Կանգնած են
ֆլամինգոները
արմավենու տակ։



Ծաղկում է
կոլլարիոն*
ողջ Վեդադոյում*։
Հավաննայում
ամեն բան
պարզ է, որոշակի.
սպիտակներն ունեն դոլար,
սևերը՝ չէ։
Դրա համար է
Վիլլին
խոզանակը ձեռքին
կանգնել
«Հենրի Քլեյ ընդ Բոք լիմիթըլտի»* առջև։
Շատ կեղտ է մաքրել
իր կյանքում Վիլլին,—
հենց միայն փոշու
մի ողջ անտառ,—
դրա համար էլ
Վիլլիի
մազերը թափվել են,
դրա համար էլ
փորը
ներս է ընկել իսպառ։
Նրա ուրախության սպեկտրը
շատ է աղոտ.
վեց ժամ
քնով անցնել կողքի վրա,
ու մեկ էլ թե՝
նավահանգստի վերատեսուչը
գող՝
անցնելիս
մի ցենտ նետի
նրան։
Այդպիսի կեղտից կազատվե՞ս միթե...
Գուցե միայն
գլխի վրա
քայլելու դեպքում։

Այն ժամանակ
կեղտը ավելի կկիտվեր՝
Մազերը հազար են,
ոտքերը՝
երկու։
Կողքից
ձգվում է
պճնազարդ Պրադոն։*
Մերթ թնդում,
մերթ բռնկում է
ջազը եռավերստ։
Հիմարին կթվա,
թե իսկապես որ
նախկին դրախտը
Հավաննայում է հենց։
Վիլլիի ուղեղը
քիչ ծալքեր ունի,
քիչ են ծիլերը,
քիչ են ցանքերը։
Միայն
մի բան է
լավ սերտել Վիլլին,
ավելի պինդ,
քան Մասեոյի
արձանաքարը.
«Սպիտակն
ուտում է
անանասը հասուն,
սևը՝
փտությամբ ջրկալածը։
Սպիտակ աշխատանքը
սպիտակն է անում,
սևը՝
սև աշխատանքը»։
Քիչ հարցեր էին նրա միտքը փորում։
Բայց մեկը կար՝
խրթինը խրթիններից։



Եվ երբ
այդ հարցն էր
Վիլլին մտաբերում,
խողանակն
ընկնում էր
նրա ձեռքերից։
Եվ պետք է պատահեր,
որ հենց այդ ժամանակ
սիգարի արքա
Հենրի Քլեյին
այցելության գար
ամպերից էլ ճերմակ
մեծագույնը
շաքարի արքաներից։
Նեգրը
մոտեցավ
ցմփորին մսեղ։
«Այ բեգ յոր փարդը՛ն*
միստըր Բրեգզ։
Ինչո՞ւ շաքարըն էլ՝
ճերմա՜կ-ճերմա՜կ,
պետք է պատրաստի
նեգրը սև։
Սև սիգարը
բեղերին ձեր
չի սազում,
նա սազում է
նեգրի բեղերին սև։
Իսկ եթե
քաղցր սուրճ
դուք շատ եք սիրում,
ուրեմն
հաճեցեք
շաքարը դուք շինել»։
Այդպիսի հարցը
չի անցնի իզուր։
Արքան

Ճերմակից
դեղին դարձավ։
Պատվեց
արքան
հարվածի հետ սուր,
Նետեց ձեռնոցներն
ու հեռացավ։
Ծաղկե՜լ էին
շուրջը
բնության հրաշքները։
Բանաններն
հյուսել էին
համատարած ծածկույթ։
Քսեց
սպիտակ վարտիքին
նեգրը
ձեռքը,
որ քթի արյունն էր մաքրում։
Նեգրը
փնչացրեց ծեծկըված քթով,
բարձրացրեց խոզանակը,
այտը հենեց ձեռքին։
Նա ո՞րտեղից իմանար,
որ նման հարցով
պետք է դիմել
Մոսկվա՜,
Կոմինտերնի՜ն։

## ԾԱՆԾԱՂ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՈՒՆԿ ՏԵՂԵՐՈՒՄ

Չդառնամ
Տոլստոյ,
կդառնամ հաստափոր,—
ուտում եմ,
գրում,
շո՜գն ամենուր է։
Ո՞վ ծովի վրա չի փիլիսոփայում։
Ջո՜ւր է։
Երեկ
օվկիանոսը՝ սատանի պես չար,
փրձակում էր մռինչ,
այսօր խաղաղ է ավելի,
քանց թխսկան աղավնին։
Ի՞նչ տարբերություն։
Հոսում է ամեն ինչ...
Ամեն ինչ փոխվում։
Ջուրն էլ
ունի
իր ժամանակը՝
ժամեր տեղատվության,
ժամեր մակընթացի։
Իսկ Ստեկլովի
գրչից
չի պակասում ջուրը։
Շատ է անարդարացի։
Սատկած մի ձուկ
լողում է միայնակ,
լողաթևիկներն ընկած են՝
ոնց վարկված թևեր,
և զարմանք՝
լողում է շաբաթներ՝
չունի ոչ սահման,
ոչ վերջ։
Դիմացից
դանդաղ, ոնց մարմինը տյուլենի՝
նա՞վն է Մեքսիկայից—
իսկ մենք—
դեպ այնտեղ։
Այլ կերպ էլ չի՜ լինի՝
փոխադարձ շարժում է—
աշխատանքի բաժանո՜ւմ։
Սա կետ է,— ասում են։
Գուցեև այդպես է.

ոնց ձկների բեղնին—
եռատակ հաստության,
միայն թե բեղե՛րը Դեմյանի
դրսի՛ց են,
իսկ կետի՛նը՝
ներսից։
Ճայեր են տարիները։
Կթռչե՛ն շարքով
ջրի՛ մեջ՝
փորները ճըխտելով ձըկնե՛ր։
Չըքացան ճայերը՝
ճի՛շտ որ ասենք,
ո՞ւր են թռչունները։
Ծընվե՛լ եմ,
մեծացե՛լ,
կերակրե՛լ են կրծքով,—
ապրե՛լ եմ,
աշխատե՛լ,
ու կարծես ծերացա...
Եվ ահա կյա՛նքն էլ կանցնի,
ինչպես
Ազորյան կղզինե՛րը անցան։

## ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՄԲ

Քրիստափոր Կոլումբը եղել է Քրիստափոր Կոլոմբ՝ իսպանական հրեա։

Ժուռնալներից

1

Տեսնում եմ, ինչպես հիմա,
կրճոն ու շշեր...
Լոկ կաբակով
հայտնի
մի նավահանգստում
Կոլոմբ Քրիստափորը



և այլ հարբեցողներ
գլխարկներն աչքերին՝
նստել են,
կոնծում։
Քրիստափորին չարացնում են,
նեղում Քրիստափորին.
«Դուք ի՞նչ ազգություն եք։
Լոկ մի Սիոն,
ահա՛։
Ամեն մի խեղճ պորտուգալացի
քեզ հանգիստ կզոռի»։
Քրիստափորի հոգին հանեցին,
և նա
(հրեայի
հիվանդոտ
ու նուրբ լարին կպան)
խցանների ճայթյունը
դիսկանտով
խլացրեց.
«Ի՞նչ եք խցկըվում՝
Եվրո՛պա, հա Եվրո՛պա։
Կվերկենամ
և մի նոր երկիր
կհայտնագործեմ»։
Զարմացած են ընկերները.
«Կոլոմբին ի՞նչ է եղել։
Չի գալիս զբոսանքի,
գինի չի խմում։
Պետք է հետևել՝
խելքը հո չի՞ թռցրել։
Ողջ գիշերը նստած,
կարկիններն է շարժում»։

2

Կառչում է բռնվածքը ջահել հրեայի.
չի ուտում,
խորհում է՝

ողջ գիշերներ անքուն։
Լիվրեի քղանցքներն է
քաշում
լակեյների,
անգամ
արքաների
ննջարանները խցկվում։
«Մարջա՞ն եք ուզում։
Բողկից էլ էժա՛ն։
Ամեն մի երեխա
կըորսա
ի՛նքը։
Ուրիշ բան է,
ա՛յ,
ցամաքն հնդկական.
ո՛չ թե հնոտի՝
փիրուզ,
մարգարիտ է։
Գործը հաստատ է.
ահա՛ ձեզ քարտեզ։
Սա օվկիանոսն է,
իսկ սա՝ մենք,
ահա՛։
Կետգիծը՝ ճամփան է...
ադամանդի կարատներ—
պարտք տված
ամեն հիսունոցի դիմաց»։
Ջարչիները նեղվում են,
կրակվում անհանգիստները։
Քարավանը
ցամաքով
մի տարում էլ չի հասնի։
Եվ կաթում են
ֆլորիններն ու պեզետները
ծակ գրպանի մեջ
Քրիստափորի։



3

Գալիս են,
շվացնելով,
հանդուգնները հանդուգններից։
Ծտեում՝ բանտ։
Առջևում՝
ո՛չ մի կոպեկ փող։
Արաբներ,
ֆրանսիացիք,
իսպանացիք,
դանիացիք
մագլցում են
Կոլոմբի
նավասանդուղքներով։
«Ո՞վ է այստեղ Կոլոմբը։
Մինչ Հնդկաստա՞ն։
Գիշերում մի՛։
(Ի՞նչ չես հայտնագործի,
երբ փորումդ վնգստոց է)։
Գլորի՛ր տախտակամած
մի տակառ օղի,
իսկ հետո
տա՛ր թեկուզ
գրողի ծոցը»։
Հրաժեշտ՝ ինչպես հարկն է։
Ո՛չ թե մեկնում,
այլ շո՜ւք.
մի ամբողջ օր
չէին չորանում
կաթիլները բեղերին։
Կողմնացույցին նայելով,
ժամանակն էին
ստուգում։
Հարբածությունից
շալվարները խառնում առագաստներին։
Վառած փարոսը

քիչ մնաց վայր գցեին։
Նավաստիները տախտակամածին
սայթաքում էին հարբած։
Եվ ահա՛,
գուցե այստեղից,
ժիժոնից,
առաջ սլացավ
Կոլումբը՝
առագաստները բաց։

4

Այսօր մի մի՛տք է հաճելի լոկ ինձ,
որ ահա այս ալիքները
Կոլումբին փարվել են,
որ այս նույն ջրի մեջ
Կոլումբի ճակատից
թափվել են
քրտնքի
հոգնած կաթիլները։
Որ ցամաքով ծանծաղող
այս երկնքի վրա,—
ցույց տալով
հարավից բարձրացող ամպն այն,—
«Դեպ կայմե՛րը, եղբա՛յրք։
Տեսեք,
երկի՛րն ահա»,—
աղաղակել է
խելացնոր յունգան։
Եվ նորից
օվկիանոսը
տարածությունից թեք
մխում է
երկնքի մեջ
սեպն իր դղրդոցով,
իսկ հետո
եղբայրանում


սարագույն ալիքի հետ,
և մեկտեղ
խոտի խրձեր քաշ տալիս դեպ ծով։
Նա էլ
այս փոթորկի մռունչն է լսել։
Իսկ երբ
զայրույթին հաջորդում է
անդորր,
թվում է՝
ջրում երևում են
Կոլումբի հետքերը,
որոնք տանում են Սան Սալվադոր։

5

Օրերն աճում,
դառնում են մորուքավոր ամիսներ։
Նավակայմի ծայրին
լուսինները են
մեռնում։
Ձանձրացել է Ատլանտյանը,
ցասկոտ ցատկում է վեր։
Կատաղել է Քրիստափորը,
Կոլումբն է մաշվում։
Հազարերորդ ալիքից
եռակայմն իջավ։
Հազարմեկերորդին է մնում
բարձրանալը։
Տեսե՞լ եք Ատլանտյանը։
Մի՛ ծիծաղեք բնավ։
Անձնակազմը փրփրում է,
հոգնել է անձնակազմը։
Քչփչում են.
«Սատանային ուղեկից դարձանք։
Մի՞թե վատ էր տանը՝
և՛ սեղան,
և՛ մահճակալ։

Մենք գիտենք
գործերը այդ
ջհուդական
զանազան
Ամերիկաներ
ծածկել ու բանալ»։
Կապիտանի ետևից քայլում են կրնկակոխ։
«Վերադարձի՛ր,—
պիստոլետներն են խաղացնում ձեռքերի մեջ։—
Ինչպիսի
կապիտան-մապիտան էլ լինես,
մենք էլ քեզ համար
չնչին բաներ հո չե՞նք»։
Մագլցում է
Կոլումբը
առաջակայմից բռամառագաստ,
աչքերը դուրս պրծած,
նիհարած դեմքով,
ամե՛ն ինչ է անում՝
հնարում է ֆուկուսը պարզ
այն օրից հայտնի դարձած
Կոլումբի ձվով։
Բայց ի՞նչ բան է ձուն.
խաղալիք մի օրվա։
Գող կյանքից
անգամ
մի օր չես շահի։
Նայելով Կոլումբին,
գոռում է կոմանդան.
«Ամուր է
օղակը
Ջենովայի պարանի։
Վերջացրո՛ւ,
Քրիստափո՛ր,
քո շնային կյանքը...»։
Եվ դաշույններն են



օդը
ձաղկում։
«Երկի՛ր»։
Հորիզոնը միգապատ է։
Եվ նայում են,
ոնց ե՛ս եմ
Մեքսիկային նայում,
նայում, ահա,
վարդագույն
այս ավազին՝
աչքերը չռած։
Հուսալ չեն հանդգնում.
հասարակածի օդը
պղնձյա ռունգերին,
հնդիկների ցամաքն էր
դեմից բարձրանում։

6

Տարիներ անցան։
Ջահել,
հպարտ Ատլանտյանը
փոխվեց
ջրթմնջացող
ծերուկի չնչին։
«Մաժեստիկների» նավերից
յուրաքանչյուր խուժան
թքում է
նրա
ճերմակաբեղ դնչին։
Կոլո՛մբ,
ժառանգությունը քո
չքացավ
հոտած նավամբարներում,
սերունդները քո արդ
մեքենական դժոխքի
բարկ հարևանությամբ,
պառկած են՝

մախաղները
գլուխների տակ։
Իսկ վերը,
առաջին կարգի դահլիճներում,
գլորելով փորերը,
պարերից մինչ գինիներ,
ընթերցարան—
կինո—
ճեմիշների հարմարանքում
թավալվում են
դոննաներ,
սինյորներ,
յանկիներ։
Դու անտաշ ես,
Կոլո՛մբ,
կասեմ ուղղակի։
Ինչ վերաբերում է ինձ,
ապա ես
անձամբ
Ամերիկան կփակեի,
կմաքրեի թեթևակի,
ապա
կհայտնագործեի նորի՛ց,
երկրո՛րդ անգամ։

## ԵՐԿՆԱՔԵՐ ՇԵՆՔԻ ԿՏՐՎԱԾՔԸ

Վերցրո՛ւ
մի շատ մեծ
տուն Նյու Յորքում,
թափանցիկ
նայի՛ր
դու նրան։
Կտեսնես
որջեր



և խուցեր հնադույն,—
ճիշտ
Ելեց կամ Կոնոտոպ
մինչհոկտեմբերյան։
Առաջին.
ոսկերիչներ,
պահակի պես մշտական՝
կողպեքը
կպել է փեղկերի հոնքին։
Կինոյի հերոս
ոստիկանները՝
գորշ հագած,
հսկում են
շան պես
ուրիշի ունեցվածքին։
Երրորդ.
բյուրո-գրասենյակներն են քնած։
Ծծաններն ուտում են
քրտինքը
ծառայողների ճորտ։
Որպեսզի աշխարհը
տիրոջը
չմոռանա,
ցուցանակներին
ոսկով գրված է՝
«Վիլյամ Շպրոտ»։
Հինգերորդ։
Հաշվելով օժիտի
շապիկներն իրա,
միսսը,
ավելի քան հասած,
փեսացուներ է մտորում։
Կրծքով
իր ամուր զարդակարն
ուռեցրած,
փարթամ թևատակերի մորթիներն է քորում։
Յոթերորդ։

Իշխելով ընտանեկան օջախի վրա,
սպորտով
ուժերը խնայած
ջահելությունից դեռ,
սրրն իմանալով
դավաճանությունը
օրինական միսիսի իրա,—
դունչն է նրա արյունոտել։
Տասներորդ։
Զույգը պառկել է։
Մեղրամսում։
Եվայից և Ադամից
երջանիկ են ավելի։
Կարդում են
ռեկլամների բաժինը
«Թայմս»-ում.
«Մաս-մաս վճարումով վաճառք ավտոների»։
Երեսուներորդ.
Փաստերերը
մտազբաղ նստել են,
բաժանում են միլիարդները՝
մտահոգ և ագահ։
Շահույթն է տրեստի՝
«Վեսթինգհաուզի պատրաստելը
Չիկագոյի
լավագույն
շան մսից
սատկած»։
Քառասուներորդ.
Ննջարանի մոտ
օպերետային հրաշագեղի։
Փականի
անցքից ներս,
եռանդը լարած,—
որպեսզի կուլիսն ապահարզանը
չարգելի,
դետեկտիվները պետք է



բռնեն ամուսնուն
անկողնում նրա։

Ազատ նկարիչը,
որ նկարում է հետույքներ,—
նիրհում է իննսուներորդում,
մի բան է մտածում լուկ.
տանտիրոջ աղջկա
սիրտն ի՞նչպես առնել,
այն էլ՝
տանտիրոջ վզին
կտավներ կապելով։
Իսկ կտուրից հալչում է
սփռոցների ձյունը վառ։
Միայնակ,
ռեստորանում այն վերի,
ուտում է
մեծ փշրանքները՝
նեգրը հավաքարար,
իսկ մանրերը հասնում են
մկներին։
Ես նայում եմ
կատաղի դառած՝
քարե ֆասադի ետևում
թաքնվածների հանդեպ։
Ես ձգտում էի
7000 վերստ առա՜ջ։
բայց եկա
7 տարի ե՜տ։

## ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Ջայրույթի լեռները
ոտքերս են կքում։
Նույնիսկ վիզս
փքվում է, ինչպես հրկնակզակ։
Բերնիս մեջ,

աչքերիս,
ներսս է խցկվում,
սրտիս է նստում
այդ գայրույթը բարկ։
Ամբողջովին կրակի մեջ,
կանգնած եմ Ռիվերսայդում։
Կողքիցս
ֆորդերն են գրոհում
խավարի ամրոցները։
Երկնաքերները
ձեռքերս են մեջքիս ոլորում։
Առջևումս
ամերիկյան նավատորմիղն է։
Ես ծիծաղում եմ
նրանց եռակի գրոհի վրա,
Նիք Քարտերներն*
իմ վիզան
աչքիս փախցըրին։
Ես
երգի դեսպանն եմ,
և իմ երկրի հետ,
ահա՛,
մարտահրավեր եմ նետում
ձեր նահանգիկներին։
Եթե փշրանքը
հոտել է
ու բորբոսնել,
դուրս են նետում
ամբողջ
մգլած պատառը։
Չկերած
մեկ ամիս,
ես դո՛ւրս եմ թքել
ձեր առաքինությունը,
օրենքներն
ու ճաշակը։
Թո՛ղ կորչեն կեղտոտ



սատանաների մոտ
բոլոր տերությունների
դոլարները բոլոր։
Ուզո՞ւմ եմ կյանքս ավարտել
այն շալվարով,
որով
կյանք եմ մտել՝
մ օրում
ոչինչ չշահելով։
Թույլտվության զոնաները ծիծաղելի են
մեզ համար։
Ամուսինների դասա՞կ,
ցինիզմից
կանգնի՛ր քարացած։
Մենք համբուրում ենք,—
ապօրինի,—
Հուդզոնի վրա
ձեր
երկարատո կանանց։
Մեր օրն աղմկոտ է
և երեկոն՝
ճոխ։
Հետախույզներ ուղարկեցե՛ք՝
ճեղքերից գաղտնալսելու։
Խմում ենք ամեն օր,
ձեր պրոհիբի՛շընին*
թքելով,
օղին այն,
որ «Սպիտակ ձի» է կոչվում։
Ահա՛ ես էլ
երգով
եղբայրանալու եմ
եկ.
և գլուխների մեջ
մտքեր եմ մխում,
որոնք դեպորտացիաներից չեն վախենում.

ո՛չ արտաքսել կարելի է նրանց,
ո՛չ աքսորել։
Մտքին
կհետևեն բառերը,
բառերին՝ գործերը,
և տեսար՝
տանիքներից երկնաքերների,
ճռճելով,
սալահատակին են զարկում
դիակները
Վանդերլիպի,
Ռոկֆելլերի
և Ֆորդերի։
Բայց առայժմ
դոլարն է
բոլոր պոեմներից տոհմիկ։
Կողոպտելով,
շորթելով,
գոփելով աշխարհը,
հանդես է գալիս,
հագած Բրոդվեյ-ծիրանին,
նորին գերլկտիություն
կապիտալը։

## ՓԱՐԻԶՈՒՀԻՆ

Դուք պատկերացնու՞մ եք ձեզ
փարիզյան կանանց—
Պարանոց մարգարտապատ,
ձեռքը ադամանդաշող թափիշ է…
Թողե՛ք, մի՛ պատկերացրեք
կյանքն
ավելի դաժան,—
Իմ փարիզուհու տեսքը
ուրիշ է։
Ճիշտն ասած, չգիտեմ,



ջահե՞լ է նա
թե՞ պառավ,
դեղնության չափ
կոկված է նա փայլով։
Ծառայում է
նա
ռեստորանի պետքարանում,
փոքրիկ ռեստորանում—
Գրանտ Շոմյոր։
Խմել են բուրգոնյան գինի—
ցանկանան գուցե
թեթևության համար
դուրս գալ— պահանջում է հանդիսար։
Մաղմաղելի պարտքն է—
սրբիչ հրամցնել,
նա
այդ գործում
ուղղակի
արտիստ է։
Մինչև
հայելու մոտ
երեսիդ բշտիկը կտնտղես,
նա,
խաղացնելով
ժպիտը դեմքին,
շպար, օծանելիք
կըհրամցնի քեզ,
կմատուցի պիպիֆաքս
և ջուրը կըմաքրի։
Նա,
այդ սորկուհին,
զըրկված արևի շողից,
ամբողջ օրերով
ցցված է
կըլոզետային հորում։
Հիսուն սանտիմի համար—
որ արժեքով չերվոնեցի,

տըղամարդուց—
մոտ
չո՛րս կոպեկ է անում։
Լըվացարանի մոտ
ձեռքերըս լվանալով,
շնչելով
անուշահոտության
առատությունը զարմանալի,
այդ մադմազելի վրա
տարակուսելով,
ցանկանում եմ
ասել մադմազելին.
— Մադմազե՛լ,
ներեցե՛ք,
ձեր տեսքը,
խըղճալի է։
Պետքարանում
սպանել ջահել հասակը—
ափսոս չէ՞։
Թե՞
ինձ
փարիզուհու մասին սըտել են,
թե՞
դուք, մադմազել,
փարիզուհի չեք։
Ձեր տեսքը
թոքախտավորի է,
թառամած եք։
Հասարակ չուլքիներ...
ինչո՞ւ ոչ մետաքսից։
Ինչո՞ւ
չեն ուղարկում ձեզ
պարմյան մանուշակներ
երախտապարտ պարոնները—
լեփ-լեցուն քըսակներից։
Մադմազելը լռել էր,
գըլորվում էր թնդյունը



պանդոկի,
առաստաղի
և մեր վրայով։
Այդ
փարիզեցիների մեջ
Մոնպառնասի հոնդյունն էր
պտտվում
ուրախության
ծաղրաթափորով։
Ներեցե՛ք,
կրճտացող տողերիս համար
այս անհարմար
և
գարշահոտ ջրափոսերի
պատկերացման համար,
որ հրում են
Բայց Փարիզում
դըժվար է շատ
կանանց համար,
եթե
կինը
չի ծախվում,
այլ ծառայում է։

## ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻՆ

Դուք անցաք,
ինչպես ասում են,
այն աշխարհը։
Ունայնություն...
թռչում եք՝
աստղերը ճեղքելով։
Էլ քեզ ոչ ավանս,
ոչ գինետուն։
Զգաստությո՛ւն։
Ո՛չ, Եսենին,
սա չէ հեգնանք

ու ծաղր,—
վիշտը
կոկորդումըս
գունդ է անմարսելի։
Տեսնում եմ՝
կտրված երակով՝ դուք դանդաղ
ճոճում եք պարկը
սեփական
ոսկորների։
Դադարեցե՛ք,
թողե՛ք։
Խելքը գլխի՞ն է ձեր։
Թույլ տալ,
որ մահվան կավիճն
այտերը
ներկի՞։
Դուք չէ՞ որ
գիտեիք այնպես սխրագործել,
որ չէր մատչելի
աշխարհում
ոչ մեկի։
Ինչի՞ց,
ինչի՞ համար։
Կասկածն ինձ ուտում է։
Քննադատները փնթփնթում են.
— Պատճառն այս բանի՝
այս է, այն է,
իսկ հիմնականը՝
չըկար զոդումը,
հետևանքը՝
անչափ գարեջուր ու գինի։—
Իբրև թե
փոխարինե՛ք դուք
բոհեման
դասակարգով,
դասակարգը ձեզ կազդե՛ր,
չէր հասնի բանը տուրուդմփոցի։



Նու, իսկ դասակարգը
ծարավը
կոտրում է կարագո՞վ։
Դասակարգը— նա էլ
խմելում բնավ դըմբո չի։
Իբրև թե,
ամրացվե՛ր ձեզ
մի Նապոստովական*,—
կդառնայիք դուք
բովանդակությամբ
օժտված ավելի,
կգրեիք,
իբրև,
հարյուր տող
դուք օրական,
Դորոնինի* նման՝
երկար
ու տաղտկալի։
Ըստ իս,
իրական դառնար
այդ թեկարդը,
ավելի քան վաղ
կզրկեիք դուք ձեզ կյանքից։
Լավ է էլի՝
արաղից մեռնի մարդը,
քան ձանձրույթից։
Չեն բացատրի
մեզ
կորստյան պատճառները
ո՛չ պարանը,
ո՛չ էլ գրչահատը հատու։
Թերևս
թանաք ունենար
«Անգլեթերը»*,
Ձեր երակը
չէիք
բանա դուք։

Ընգօրինակողներն ուրախացան,
բիս։
Ինքն իր հետ
դատաստան տեսավ
ամբողջ մի դասակ։
Ի՞նչ օգուտ
ինքնասպանների
ահագին խմբից։
Լավ է պատրաստել
ավելի մեծ քանակով
Թանաք։
Այժմ,
ընդմիշտ,
լեզուն
բերանում փակվեց։
Ծանր է,
անտեղի է
միստերիաներ
սարքել։
Ժողովուրդը,
լեզվաշինարարը մեծ,
կորցրեց
մի շաչուն,
շվայտ աշակերտ։
Եվ բերում են ցախը
հոգեհանգստյան
ոտանավորների
դեռ անցյալ
Թաղումներից
անավարտ, կիսաշնչին,
որ պատեն
շիրմաքլուրը
ցցերով բութ հանգերի։
Միթե այդպե՞ս էր պետք
պատվել
բանաստեղծին։
Ձեզ մինչև իսկ չեն էլ ձուլել դեռ


Հուշարձան,—
Ո՞ւր է նա,
որձաքարի զանգվածը
կամ զնգոցը բրոնզի,—
այնինչ շիրիմի ցանկապատին
արդեն
մոտեցան
նվիրումների
և հուշերի
աղբն ու զիգիբիգին։
Ձեր անունը փսլնքոտել են
Թաշկինակով,
ձեր խոսքը Թըքոտում է մի Սոբինով,
Թխելով,
սատկած կեչու տակ,
իր տողը.
«Ни слова, о друг мой,
ни вздо-оха!»
Է՜խ,
այլ կերպ կխոսեի
ես իսկույն ևեթ
այդ Լեոնիդ Լեոնդրինիչ
կոչվածի հետ։
Ինչպես մի սկանդալիստ՝
ելնել այստեղ
աղմըկոցով.
— Թույլ չե՛մ տա
ծամծմեք պոեզիան
ու ճմռթեք,—
խլացնել նրանց
եռամատ
մի շվոցով.
— Դե բա՛վ է,
ձեր հե՛րն էլ, մե՛րն էլ...
լռեցե՛ք...
Ո՞րպեսզի ցրվեր
ապաշնորհ գարշանքը՝

Պիջակ-առագաստների
խավարն ուռցնելով,
որպեսզի Կոզանը
հողմավար
ցիրուցան գար՝
բեղերի տեգը
հանդիպողների
կողերը խրելով։
Աղբը
տակավին
քիչ է նոսրացել։
Անելիքներ շատ կան—
հասցրնե՛ք միայն։
Պետք է
կյանքը
նախ
վերակառուցել։
Վերակառուցելով,
ներբողել և այն։
Այս դարը
դժվար է
գրչով նկարագրել,
բայց ասացե՛ք,
դուք,
երկսեռ հաշմանդամնե՛ր,
ո՞րտեղ,
ե՞րբ,
ո՞ր մեծն է այն՝ ընտրել
մի ճանապարհ,
որ ավելի մաշված
ու հեշտ լիներ։
Խոսքը
զորավարն է
մարդկային ուժի։
Մա՛րշ։
Թող պայթի



ետևում
ժամանակի արկը։
Դեպի հին օրերը
հողմի պես
թռ՛ղ քըշվի
միայն մազերիդ խճճվածքը։
Մեր մոլորակը
քիչ է հարմարեցված
ուրախության համար։
Պե՛տք է
կորզել
ուրախությունը
գալիք օրերի։
Այս կյանքում
մեռնելն այնքան էլ չէ դժվար։
Կառուցել կյանքը՝
դժվար է
շա՛տ ավելի։

## ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆՏԵՍՉԻ ՀԵՏ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի ֆինտեսո՛ւչ։
Ներե՛ք, որ պիտ անհանգստացնեմ։
Շնորհակալ եմ...
մի՛ նեղվեք...
ես կանգնած կմնամ...
Ձեզ հետ
նուրբ բնույթի
ես մի գործ ունեմ.
պոետի
տեղի մասին
կարգերում բանվորական։
Ալրատուն ու կալվածք
ունեցողների շարքում
ես էլ եմ տուրքադրված
և պե՛տք է պատժվեմ։

Դուք պահանջում եք
ինձանից
հինգ հարյուր՝ կիսամյակում
և քսանհինգ ռուբլի,
որ դեկլարացիա չեմ տվել։
Աշխատանքն իմ
ազգակից է
ամեն մի այլ
աշխատանքի։
Նայեցե՛ք՝
որքա՛ն եմ ես կորցրել,
իմ արտադրության մեջ
ծախքեր կան
ինչպիսի,
և նյութերի վրա
որքան է ծախսվել։
Ձեզ
հայտնի է, անշուշտ,
թե ինչ է ճանգը:
Ասենք,
թե տողն ավարտվեց
բառով
«հնձան»։
Եվ այնժամ,
մի տող անց,
կրկնելով վանկը,
դնում ենք
մի որևէ
«լամցադրիցա-ցա՛»:
Ձեր լեզվով ասած,
հանգը՝
մուրհակ է։
Զեղչել մի տող անց՝
խնդիրը այս է։
Եվ փնտրում ես
թեքման ու վերջածանցի մանրուք
հոլովման



ու խոնարհման
դատարկ դրամարկղում։
Այդ բառը
տողի մեջ
խցկել ես ուզում,
իսկ նա չի հարմարվում։
Սեղմեցիր՝
ջարդվեց։
Քաղաքացի ֆինտեսուչ,
ազնիվ խոսք եմ ասում,
բառերը
բանաստեղծին
շատ թանկ արժեն։
Մեր լեզվով ասած,
հանգը
տակառ է։
Տակառ՝ դինամիտով։
Տողը՝
պատրույգ։
Տողը ծխում է,
պայթում է տողը,
և քաղաքը
քառյակով
օդ է ցնդում։
Որտե՞ղ
և ի՞նչ տարիֆով կգտնես
հանգեր,
որ մեկեն նշան առած՝
սպանեն։
Գուցե
մի հինգ հատ
չկրկնված հանգեր
Վենեսուելայում միայն
մնացած լինեն։
Եվ քաշում է
ինձ
ցուրտ ու տաք կողմեր։

Նետվում եմ,
խճճել են ինձ
ավանս ու փոխառում։
Քաղաքացի՛,
հաշվառե՛ք ուղետոմսը մեր։
— Պոեզիան,
ամբողջովի՛ն,
երթ է անհայտ հեռուն։
Պոեզիան՝
այդ նույն հանույթն է ռադիումի։
Մի գրամ հանույթ՝
տարվա աշխատանք։
Պեղում ես,
հանուն մի՛ միակ բառի,
հազարավոր տոննա
բառահանք։
Բայց ինչպե՜ս
մոխրացնող է
այդ բառերի այրումը՝
բառ-հումքի
անբոց
ծխալու մոտ։
Այդ բառերը
կրկին ու կրկին
շարժում են
հազարավոր տարիներ,
սրտեր միլիոնավոր։
Իհարկե,
տարբեր են պոետների տեսակները։
Հմուտ ձեռք ունեն
որքա՜ն պոետներ։
Ֆոկուսնիկի պես
դուրս կքաշի
տողերը
թե՛ իր բերանից,
թե՛ ուրիշի,
թե՛ ձեր։



Ի՞նչ ասել
կռտածների մասին լիրիկական...
Ուրախ են,
երբ ուրիշի
տողն են սեփականում։
Դա գողություն է,
վատնում
սովորական՝
Երկիրը պատած վատնումների թվում։
Այսօրվա
ներբողները և երգերը
այդ,
ծածկված աղմուկով
ծափահարությունների,
պատմության մեջ
կանցնեն,
իբրև վերադիր ծախք
մեր երկուսի
կամ երեքի
արածներին։
Մի փութ,
ինչ ասում են,
ճաշի աղ կուտես
և հարյուր գլանակ,
թերևս,
ծխես,
որպեսզի
դուրս հանես
խոսքը թանկագին
մարդկային
արտեզյան ջրհորի խորքից։
Եվ իսկույն
կիջնի
աճը հարկի։
Դուրս գցե՛ք
իմ հարկից
զրո ակը։

Մեկ ռուբլի վաթսուն՝
աղը կերակրի,
մեկ ռուբլի իննսուն՝
հարյուր գլանակը։
Ձեր անկետայում
բազում հարցեր կան.
— Ուղևորություններ եղե՞լ են,
թե՞ չեն եղել։
Իսկ ի՞նչ,
եթե ես
տասնյակ պեգասներ եմ
վերջին
15 տարում
քշելով ուժասպառել։
Դուք հարցնում եք,
մտեք իմ դրությունը,
ծառայի,
գույքի մասին
անկետայում ահա՛։
Իսկ ի՞նչ,
եթե ես
ժողովրդի առաջնորդն եմ
և միաժամանակ՝
ժողովրդի ծառան։
Դասակարգը
ձայնում է
մեր երգի բառերով,
իսկ մենք,
պրոլետարներս,
շարժիչ ենք գրչի։
Հոգուդ
մեքենան
մաշում ես տարիներով։
Ասում են.
— Սպառվել է,
թո՛ղ արխիվ թռչի։—



Ավելի քիչ ես սիրում,
խիզախում օրն օրին,
և ժամանակը
ճակատն իմ
փշրում է իր վազքում։
Գալիս է
մաշումներից ամենասոսկալին՝
մաշումը
մարդկային
սրտի և հոգու։
Եվ երբ
այս արևը,
հանց ճարպակալ վարազ,
անաղքատ և անհաշմ
գալիքի վրա
ծագի,
ես
վաղուց
պատի տակ
կլինեմ փտած
իմ տասնյակ
ուրիշ
ընկերների կողքին։
Կազմեցե՛ք
ետմահու
հաշվեկշիռն իմ։
Ես պնդում եմ,
և գիտեմ, որ չե՛մ ստում.
այսօրվա
ճարպիկների ու գործարարների
ֆոնին
կլինեմ
միա՛կը
ես անանց պարտքում։
Մեր պարտքն է՝
պղնձյա շչակի պես
գոռալ

քաղքենության մուժում,
փոթորկին շաչող։
Պոետը
տիեզերքի պարտապանն է
հար՝
վշտի դիմաց
տոկոս
և պեններ
վճարող։
Ես
պարտք եմ
Բրոդվեյի գունալապտերի առջև,
ձե՛ր առջև,
Բաղդադիի երկինքներ,
կարմիր բանակի,
Ճապոնիայի բալենիների առջև
և ա՛յն ամենի,
որոնց մասին
չհասցրի երգել։
Իսկ ինչի՞ համար է
այդ բեռը վերցնելը...
Որ հանգով նշան առնես,
մոլեգնե՞ս խիստ։
Պոետի խոսքը՝
ձեր հարությունն է,
ձեր անմահությունը,
քաղաքացի կանցելյարի՛ստ։
Հարյուրամյակներ հետո
թղթե շրջանակում
վերցրո՛ւ տողը
և ժամանակը ետ դարձրո՛ւ։
Եվ կհառնի
այս օրը՝
ֆինտեսուչներով,
հրաշքների փայլով
ու թանաքի գորշ հոտով։
Համոզված բնակիչ



մեր այս օրերի,
էնկապեէսից
անմահության տոմսակ
ճարե՛ք
և, հաշվառելով
ուժը
երգերիս,
հոնորարս
երեք հարյուր տարվա
բաժանե՛ք։
Բայց պոետի ուժը
ո՛չ միայն այդ է,
որ
ձեզ հիշելով,
մարդիկ կզկռտան։
Ո՛չ։
Եվ այսօ՛ր իսկ
պոետի հանգը
գգվանք է՝
ու լոզունգ,
ու սվին,
ու մտրակ։
Քաղաքացի ֆինտեսուչ,
ես հինգ եմ վճարում,
բոլոր
զրոներին
խաչ քաշելով։
Ես իրավամբ
մի թիզ հող եմ պահանջում՝
բանվոր-գյուղացիների
շարքում
չքավոր։
Իսկ եթե
ձեզ թվում է,
որ ամբողջ գործը
այդ է՝
ուրիշների

խոսքից օգտվել,
ուրեմն,
ահա ձե՛զ,
ընկերնե՛ր,
իմ գրիչը,
և կարող եք
ինքներդ
գրել։

## ՆԱՄԱԿ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊՈԵՏՆԵՐԻՆ

Ընկերնե՛ր,
Թույլ տվեք
առանց պոզայի
և դիմակի,
իբրև ավագ ընկեր,
ո՛չ հիմար,
սրտագին
խոսել ձեզ հետ,
ընկեր Բեզիմենսկի՛,
ընկեր Սվետլո՛վ,
ընկեր Ուտկի՛ն։
Մենք այնքան ենք վիճում,
մինչև որ կոկորդներս
խնդրում են կլայեկվել,
էստրադային հաղթանակներից
շնչակտուր ենք լինում,
իսկ ես ուզում եմ ձեզ
մի բան առաջարկել.
եկե՛ք կազմակերպենք
ուրախ մի ճաշկերույթ։
Ոտքերի տակ փռենք
հաճոյախոսության գորգերը,
ով որ ատամ սրի՝
ատամը սղոցենք։
Լունաչարսկու



բաշխած
դափնեպսակները
ընկերական
ընդհանուր
սուպի մեջ գցենք։
Ընդունենք,
որ բոլորը
յուրովի իրավ են։
Ամեն մեկն երգում է
ըստ իր ձայնի,
ուժի։
Կտրատենք
փառքի ընդհանուր հնդկահավը
և տանք
ամեն մեկին
հավասար բաժին։
Իրար խայթելու
սովորույթը թողնենք,
մշակենք
խոսքի
նրբությունը վսեմ։
Իսկ երբ
ընկերները
խոսքն ինձ տրամադրեն,
ես կվերցնեմ այդ խոսքը
և կասեմ.
— Ես թվում եմ ձեզ
ակադեմիկ
մեծահետույք,
ե՛ս եմ, իբրև,
միակ քուրմը
պոեզիայի անմատչելի։
Իսկ ինձ
մի բան է պետք միայն
իրականում,
որ շատ լինեն պոետներ՝

և՛ լավ,
և՛ ինքնատիպ։
Շատերն
օգտվում են
վեճերից նպաստավոր,
որպեսզի
իրենց
մեծ անունով կոչեն։
— Մենք, իբրև,
միա՜կն ենք,
մենք՝ պրոլետարակա՜ն...
Իսկ ե՛ս, բարեկամնե՛ր...
Ես վայլուտչիկ հո չե՞մ։
Ես,
ըստ էության,
վարպետ եմ, եղբայրնե՛ր,
չեմ սիրում
փիլիսոփայությունն այդ
տաղտկալի ու նենգ։
Կքշտեմ թևերս.
աշխատե՞լ,
կռվե՞լ...
Շնորհ արեք, խնդրե՛մ,
այս կողմ տվեք։
Մեր առջև
վիթխարի մի աշխատանքի
ասպարեզ է փռվել՝
երգի համար։
Եկեք աշխատենք
մինչ յոթերորդ քրտինք,
քանակի բարձրացման,
լավ որակի համար։
Ես կոմունայով եմ
չափում
երգի տեսակները.
Հոգիս
այն պատճառով է



կոմունան դյութում,

որ կոմունան,
ըստ իս,
հսկա բարձունք է,
վե՛ր է,

որ կոմունան
է՛
խորագույն խորություն։
Պոեզիայի մեջ
չպե՛տք է լինեն
քեռի-հարազատներ,

պրոտեկցիայով
իրար չե՛ն կապի
հանգերը։

Շքանշանների
բաշխումը
եկեք մի կողմ նետենք,

թողնե՛նք,
ընկերնե՛ր,
պիտակներ փակցնելը։

Ես չեմ ուզում
փքվել՝
հայտնելով նոր մտքեր,

բայց, ըստ ինս,
պնդում եմ առանց հավակնության,

կոմունան
այն տե՛ղն է,
ուր չինովնիկները կչքանան,

և որտեղ կլինեն
շատ
հրաշալի երգեր։

Հենց որ
հիանում ենք
մի զույգ հանգերով,

սկսում ենք
պոետիկին
հանճար անվանել։

Մեկին կոչում են
կարմիր Բայրոն,
մյուսին՝
ամենակարմիր Հայնե՛։
Մի բանից եմ վախենում,—
ձեզ համար և ինձ,—
որ չծանծաղեն
հոգիները մեր,
որ մենք
կոմունիստական շքաստիճանի
չբարձրացնենք
չաստուշկաների
անմտությունն անմեղ։
Մենք հոգով մի՛ ենք,
դուք էլ եք հասկանում.
սրտերի գծով
բաժանում չկա։
Եթե մենք
իրար համար
չենք աշխատում,
սատանան տանի՛,
էլ ի՞նչ կա հապա...
Իսկ եթե ես
ձեզ
երբեմն ձաղկում եմ,
թափահարում
ձեզ վրա
գրիչ-ձեռքս,
այդ ես արյունով եմ նվաճել,
ոնց ասում են,
ես
ձեզանից շատ եմ
հղկում երգս։
Ընկերնե՛ր,
թողնե՛նք
չարչու հակումները.
— Իմն է, իբրև,



պոեզիան,
իմ լաբազն է.

այն բոլորը,
ինչ ես արել եմ,
ձե՛րն է՝

հանգերը,
թեմաները,
դիկցիան,
բասը։

Ի՞նչը կարող է
փառքից
քմահաճ ու սին լինել...

Հետըս
գերեզմա՞ն պիտի տանեմ,
ի՛նչ է...

Ամենափառավոր կերպով
թքել եմ, ընկերնե՛ր,

փողի,
փառքի վրա
և այլ ամեն ինչի։

Քան թե
պոետական իշխանություն
բաժանել,

կուտակե՛նք
բառ-քնքշանքներն
ու մտրակ բառերը,

և բերենք
աննախանձ,
անազգանուն
շարենք

կոմունայի կառուցման մեջ
բառ-աղյուսները։

Եկե՛ք,
ընկերնե՛ր,
համերաշխ ընթանանք։

Մեզ պետք չէ՛

փնթփնթացող
ճաղատ կեղծամը։
Իսկ թե հայհոյել ուզենք՝
թշնամիներ կան շատ
կարմիր բարիկադների
ա՛յն կողմը։

## ԶՈՐՍՀԱՐԿԱՆԻ ԽԱՆՏՈՒՐԸ

Պետհրատն է կենտրոնը
երկրագընդի.
ծառայության կրքից
աճում են
շտապ ու բաժին։
Որպեսզի
ժողովուրդը
ատամներով գրքերը կրծի,
զոռ են տալիս
միլիոնանոց
տիրաժին։
Փայլում է
բյուրաչյա
տրեստի երեսին
էլեկտրական կերոնը՝
թերթերն Ավերչենկոյի,
կարում են
Մարքսին,
հոնորար է ստանում Կիկերոնը։
Պատրաստ է։
Իսկ վարիչը մյուս օր
խոթվում է քրտնաճաք՝
վերնագրի մեջ,
ինչպես բակ մըտնող լծափայտ։
Մի գրքով
կազմել են
12 հեղինակ։



— Ախար, սիրելիներըս, ո՞նց պատահեց
այդ։
Մութը նկուղների
ներկած
ճերմակ իր տիրաժով՝
պառկել է գիտությունը,
և այդ պահին
վազվըզում է
գրքային կույտի վրայով
լոկ մուկը—
պարարտ գավառուհին։
Իսկ ընթերցողը,
նստած
իր գավառի մոխրում,
տարվում է օտարով՝
խնայելով ուղեղը։
Բենուաների հետ
Աֆրիկա է ճախրում՝
տանիցը դուրս չեկած,
տեղնուտեղը։
Առած ինչ-որ ուսադիր
«պրոլետ»
կոչումը,
անսխալ
արտագրելով
Պուշկինից
ներբողը գարնան,
պրոլետարական պոետները
երգում են՝
ծավալելով
վերստանոց տըների
փաթեթն անսահման։
Ի՞նչով եք պրոլետարական,
մեծապատիվ պոետ.
դուք ձուլված եք բոհեմին
ինը տարի առաջ։
Դե, ասացե՛ք,

մեծապատիվ պրոլետ,
դուք վաղո՞ւց
զինամը
տեսել եք աչք առ աչք։
— Ներեցեք դո՛ւք
մեզ,
չուխայավորներիս,
որ թույլ են մեր երգերը։
Ջունե՞ք, արդյոք,
զարմոշկայով կաքավելու փափագ։—
Այդ,
տրեխներ հագած,
եկել են հովեկները՝
գյուղացիական գրողների
վերնագրի տակ։
Որքա՞ն է այս ամենը տաղտկալի,
որ վայր կընկնեն մեռած
ճանճերն անգամ,
միայն մի Ռադիմով
ինչե՞ր չի կատարի
հեկզամետրով
իր հույն-ռյազանական։
Լուսնյակային
ճաղատների լաքով.
գրիչը ձեռքներին
ու համոզված հոգով,
խառնշտելով մըրգի
խռիվ խրձերը,
Հոկտեմբերի մասին
ազնվորեն գրում են
ուղեկիցները։
Առաջ
փոքր էր թըվում անգամ Լեսկովը—
Տոլստոյի կողքին
նա չէր էլ երևում։
Դե ինձ ասեք,
թե ի՞նչ հեռադիտակով էր,

ոչ-կերևար Լիդինն
այն օրերում։
— Ռուսաստանում՝
կոնծելն է
միակ հաճույքը հին...

Իսկ կոնծելու համար՝
մի քիչ պանիր
ու մի կտոր չոր հաց։

Եվ խռպոտած՝
գոռում են գրողները
կենցաղի մասին՝

Պետհրատային
կասիրների
կյանքով ոգևորված։
Թխում են անհեթեթ՝
ծխամորճի
քուլաների ներքո,—

Ամեն շիլաշփոթ
խժռում է
Ցոկան ընթերցող։
Իսկ չնկարագրված կյանքը
անցնում է
կողքով՝
փողոցներից ու լուսամուտների տակից
փռշտացող։

Իսկ չորս բոլոր
քննադատներն են թռչկոտում.
փրփուր, օճառ։

— Եղբա՛յր, մեր գրողները լավ են,
առավել։

Հանճար է Կազինը,
Սաննիկովը— հանճար...

Ամեն ինչ հիասքանչ է.
պատրաստ ենք ծառայել—

Աճուրդի է հանված
գրականությունը։

Ո՞ւր եք դուք,
որ ասողեր ցանող
կամ ճշմարտության կառող եք։
Լոկ չորսհարկանի է խալտուրայի տունը՝
Պետհրատը,
քննադատը,
ընթերցողն
ու գրողը։
Այժմ
սակավ է դարձել
դալարը ճյուղերի։
Գրականության ծառը
չոր է, մերկ։
Որպեսզի պոետը
ճյուղի պես դալարի—
վարպետությունը բարձրացրե՛ք։

## ՄԵՐ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆԸ

Հարյուրավոր բեմեր եմ նետում ես ինձ,
դեպի երիտասարդների հազարավոր աչքերը։
Ինչքա՜ն տարբեր են ցեղերն իմ երկրի,
տարբեր թե՛ լեզուն,
թե՛ տարազները։
Հազիվհազ,
քրտինքը քունքից սրբելով,
ճեպընթացը դուրս սողաց Թունելի նեղ կոկորդից,
և խլացնելով
հրաժեշտի շչակով,
սուրաց
Կուրսկյան կայարանից։
Ջավոդներ։
Կեչիներն են ընդառաջ փութում,
տերևները շրշելով
խրճիթից մինչ անտառը,
և հստակ,



ասես թե MXAT-ն* ես լսում,
հնչում է մոսկովյան բարբառը։
Անտառներով հատված
հորիզոնի եզրից
առաջ են վազում
խրճիթների խմբեր։
Թեք ու ծղոտապատ կտուրների տակից
երևում են պատերը՝
գույներով տարբեր։
Բերե՛ք ոտանավորով լեցուն ողջ մի պարկ,
կարող եք անգամ տրաքվել
տաղանդից,
չի՛ չքանա ներողամիտ ժպիտը
ի պատասխան՝
ուկրաինացի ջահելի
շրթունքներից։
Տարածությունը վազում է,
պոչից աճելով,
արև-խոհարարն է
նրան տապակում։
Եվ գնացքն
արդեն
սուրում է դեպ Ռոստով,
ծխապատ Խարկովը թողած ետևում։
Դաշտերը՝
հացի միլիոն տոննաներ,
ասես թե մաքուր
արդուկել է ռանդան։
Ցորենի դեղնության մեջ
արծաթե Դոնն է
փայլում՝
կուբանկայի ժապավենի նման։
Գոռում է շոգեքարշը մինչև խռպոտվելը,
և տե՛ս՝
սկսվեց կովկասյանը արդ.
լեռները մերթ ցցում են շաքար-գլուխները,

մերթ արևից փայլում,
ինչպես սաղավարտ։
Թռչում եմ կիրճերով,
սուլոցս խեղդած,
ճերմակ են ձյունը,
փափախները։
Կանգնած են ինգուշները՝ դաշույնները սեղմած,
հետևում են
թամբերից
օսերը։
Լեռների
բարձունքը
սառցում է,
ստորոտը՝
տապ է
ըմպում,
իսկ արևը յող է թափում։
Թիֆլիսցոց
կճանաչես դեռ հարյուր մետրից.
զբոսնում են շոգին ժամերով,
Նորաձև շլյապաներով,
կոշիկներով մեծքիթ,
ասես փարիզցի են իրոք։
Ամեն մեկն
յուրովի է
սերտում այբուբենը,
Թվերն իսկ յուրովի է տեսնում երազում։
Ամեն մի երրորդը
ունի իր ազգությունը
և իր սեփական լեզուն։
Մեկ անգամ,
հյուրանոց գցելով իրերս,
մոռացա,
թե որտե՛ղ եմ գիշերում։
Խոխուլից*
հասցես
հարցրի



ռուսերեն ես,
Նա պատասխանեց.
— Не чую:
Իսկ երբ անցնում են
թեմային գիտական,
ռուսերենի շրջանակները
նեղ են արդեն.
Թիֆլիսի ակադեմիայի հետ
Կազանի ակադեմիան
գրագրություն է վարում ֆրանսերեն։
Սիրում եմ չափից դուրս Փարիզը
ես էլ
(գեղեցիկ են բուլվարները գիշերը)։
Քի՞չ բան կա միթե՝
Մալարմե,
Բոդլեր
և այլ այսպիսի ուրիշները։
Բայց մի՞թե մենք,
որ անցել ենք հրով-ջրով,
տարիների մարտերում
թրծվել,
պետք է աճեցնենք
մեզ փոխարինող՝
թրևող
ֆրանսալեզու պիժոններ։
Օգտագործե՛ք,
ով եղել է անլեզու ու մերկ,
ազատությունը սովետական կարգերի։
Փնտրե՛ք ձեր արմատն
ու բայը ձեր,
սողոսկե՛ք մթնում ֆիլոլոգիայի։
Դիտե՛ք կյանքը
առանց ակնոց-աչքակալի,
ագահ աչքերով որսացե՛ք դուք
այն ամենն,
ինչ որ ձեր երկրում լավ է
և ինչ որ լավ է Արևմուտքում։

Սակայն տեղ չկա
չարության շպարին,
մի՛ շպարեք կարմիր հոգիներդ։
Ընկեր պատանինե՛ր,
հայացքներդ՝ Մոսկվային,
դեպի ռուսերենը սրե՛ք ականջներդ։
Թեկուզև լինեի
նեգր զառամյա,
անձանձրույթ,
անվհատ էլի՛ ես
ռուսերեն կսովորեի
լոկ նրա համար
որ այդ լեզվով
խոսել է Լենի՛նը։
Երբ
Հոկտեմբերը
խուժեց փողոցները՝
արյունով,
փոթորկով հրանոթների,
գիտեմ,
Մոսկվայում էր լուծվում ճակատագիրը,
և՛ Կիևների,
և՛ Թիֆլիսների։
Մոսկվան
օղապարան չէ՛ տերունական,
որ հողեր է քարշ տալիս իր ետևից շատ,
Մոսկվան
ո՛չ թե որպես ռուսի է
ինձ համար թանկ,
այլ որպես հրեղե՛ն դրոշակ։
Խոսքի
երեք
տարբեր խաղամոլ կա
իմ մեջ։
Ես
բերանբաց կացապներից* չեմ։
Իմ պապը



կոզակ էր,
մյուսը՝
սեչևիկ,
իսկ ծնունդով՝ ես
վրացի եմ։
Երեք
տարբեր կաթիլներ
իմ մեջ համատեղած,
վերցնում եմ ահա՛
այս իրավունքը իմ՝
խփե՛լ
սովքաղքենուն համամիութենական,
թե՛ ձեր,
թե՛ բոլոր ռուսամոլների։

## «ԼԵՆԻՆԸ ՄԵԶ ՀԵՏ Է»

Լինում են դեպքեր,
պատահում է հանկարծ
սրտից
պոկվում է ֆրազը։
Եվ տարիներով
չես մտածի
ավելի լավ խոսք,
քան միանգամից ասվածը։
Այդպես էր
մուտքը
Լենինի՝ Պիտեր,
աշտարակի վրա
զրահապատի։
Այդ օրից
խոսքերն ու խինդն իմ, գիտեմ,
չեն մշուշապատի
ո՛չ օրերը,
ո՛չ տարիները,
ո՛չ դարերը։

Այդ օրերից
ի վեր
եռում են
հոգիները
ֆաբրիկների ու խրճիթների։
Եվ ես
ձեզ կբերեմ
պարզապես ցիտատներ
իմ երգերից
ու սրտից իմ ջերմ։
Փետրվարյան բոցը
շուտով խամրեց,
ճառերում
սուզվեց
խինդը
փետրվարի։
Տասը
կապիտալիստ մինիստրներ
արդեն
բուրժույներին էին
շոյանքով նայում։
Հողում էր
Կերենսկին
իր հաղթանակում,
ռևոլյուցիային
տալով
տոն փաստաբանական։
Եվ ահա
անցնում է
գործարանից տուն,
գալի՛ս է։
— Ո՞վ է գալիս։
— Նա՛։
Եվ մտնելով քաղաքն այդ
ճարպով ողողուն՝
Նևայի կողմից հանկարծ,
ֆինլանդական կայարանից,



Վիբորգյանի վրա սողալով,
զրահապատը դղրդաց։

Հասարակ
մեքենա էր այդ՝
շատերի նման
Նևայով անցնող։

Անցա՛վ,
իսկ արդ
ամբողջ աշխարհում
նրա շունչն է ցնցող։

Եվ նորից
քամին՝
թարմ ու ցնցող,
ռևոլյուցիայի ալիքները
փրփուրով ցցեց։
Կիտեյնով
հորդեցին
կեպի ու բլուզներ։
— Լե՛նինը մեզ հետ է,
Լե՛նինը կեցցե՜։

Եվ այդ օրերից՝
ամենուր,
ամեն գործում
Լենինի անունը
մեզ հետ է,
մեր ուղին է նա որոշում։
Եվ մենք կտանե՛նք,
տարե՛լ ենք
ու տանո՛ւմ ենք

նրա՝
Լենինի դրոշը։
— Ընկերնե՛ր,—
և առաջին հարյուրների
գլխի վրայով՝
ղեկավարող
ձեռքը նա պարզեց։ *

— դե՛ն նետենք

էսդեկության
զառամած ձորձերը։

Կորչի՛
կապիտալիստների,
հաշտվողականների
իշխանությունը ձեր։

Այնժամ
բանվորը
հարցումին առաջին
պատասխանեց՝
շարքերով դեռ խռիվ.
— Պատրա՛ստ ենք։

Իսկ այսօր
բուրժույը
ջերտատված, նետված է անել,
երբ մեր իշխանության
տասը տարին ենք
բոլորել։

— Մենք
ձայնն ենք
ցածրերի կամքի ցնցող,
ամբողջ աշխարհի
բանվորական ցածրերի։

Կեցցե՛ պարտիան՝
կոմունիզմ կառուցող,
կեցցե՛ ապստամբությունը
հանուն Սովետների։

Լսեցին այդ խոսքերը
թնդանոթներն հաստերախ,
ու ծառս եղան
սպիտակները՝
սվիններով փայլուն։

Իսկ հիմա
Սովետներն ու
պարտիան
ապրում են կենսուրախ՝
միլիոնավոր գյուղացիների



հետ
միաձույլ։

Առաջին անգամ,
ամբոխի առաջ զարմացած,
հենց այստեղ՝
ձեր առաջ,
մոտիկ ու զգալի—
կանգնում է,
ինչպես կատարվող
մի գործ պարզ,
անհասելի բառը՝
«Սոցիալիզմ»։

Իսկ հիմա
մասնավորին ենք
լծասայլին լծում։

Հարյուր տեսակ
կոոպերի
ցանցերն ենք հյուսում,
ամեն օր մի նոր տեղամասում
կենդանի սոցիալիզմն ենք
կառուցում։

Հենց այստեղ՝
զավողներից զնգացող,
հորիզոնին ծիրանի՝
դեպ լուրթ երկինքը հրավառ,
վեր է հառնում,
առանց ճորտ ու պարոնի,
առանց բուրժույ
ու պրոլետար,
էգուցվա
աշխատավոր մարդկության
լուսապայծառ կոմունան։

Կոմունան
դեռևս
օրերի գործ չէ,
և մենք

Թշնամու
շրջապատումն ենք դեռ,
բայց
անցել ենք
այդ ճամփով
դեպի նա՛,—
կոմունա՛ն,—
տասը
շատ դժվար,
փառավոր քայլեր։

## ԶՈՒԼՈՂ ԲԱՆՎՈՐ ԻՎԱՆ ԿՈԶՐԵՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես պրոլետար եմ։
Բացատրվելն ավելորդ է։
Ապրում էի,
ոնց մայրըս ինձ աշխարհ բերեց։
Եվ ահա
բանվորական
կոոպերատիվը իմ՝
ինձ
նոր բնակարան տվեց։
Ահա՛ լայնությունը։
Բարձրությունն ահա՛,
օդափոխում,
ջերմություն
և լույս։
Ամեն ինչ լավ է։
Բայց ամենից շատ
ինձ
դուր է գալիս
այս։
Այդ՝
ավելի սպիտակ,
քան լույսը լուսնի,



ավելի հարմար,
ավետյաց երկիրը քան,
այդ...
դե ի՞նչ ասել դրա մասին,—
այդ է՝
վաննան։
Ջուրը ծորակում՝
կոկորդ է ծակում։
Մյուս
ծորակին՝
ձեռք չես տա կարգին։
Կարող ես
մազերըդ
պահել սառն ջրի տակ,
տաքով
դառնալ քրտնախառըն։
Մի ծորակի վրա
գրված է
«Տաք»,
մյուս ծորակին՝
«Սառըն»։
Գալիս ես հոգնած,
ուզում ես կախվել։
Ո՛չ սպասն է ուրախացնում
և ո՛չ երգը թեյի։
Իսկ թե որորի պես ճղփես՝
կքրքջա մեռածն էլ
խտտանքիցը այդ
հաճելի։
Ասես թե
գնացել ես
սոցիալիզմի մոտ հյուր։
Բավականությունից
բռնվում է շունչըդ։
Շալվարըդ կեռից,
բլուզդ մեխից կախ տուր,

սապոնը վերցրու
և...
շը՛մփ-շը՛մփ...
Նստում ես,
լողանում,
լողանում՝
որքա՛ն
ուզում ես։
Մի խոսքով՝
պակաս կամ ավել։
Պարզապես
սենյակումդ են
ամառն ու Վոլգան,
միայն թե չկան
ձկներ,
շոգենավեր։
Թեկուզ կեղտըդ
տասնամյա
ստաժ ունենա,
միևնույնն է,
ինչպես ծառի կեղևը երկար,
համարյա մաշկիդ հետ գնում է
մուրն այդ,
կորչում է
սրիկան։
Եվ, ա՜յ, քրտնում ես, հա՜,
եփում ես, ա՜յ...
Ուզում ես՝
պտտիր բռնակը պինդ,
կշռռա
սառնավուն անձրևը
այդ՝
ծակ-ծակ
երկաթե ամպից։
Ա՜յ թե սքանչելի է
ցնցուղն այդ տաքուկ...
Ո՛չ մի նվնվոց,



կամ նման բան ինչ-որ.
շտկում է մազերըդ,
ականջներըդ մաքրում,

և ջուրը
հոսում է
թիակներիդ միջով։
Ջուրը ցամաքեցնում ես
մարմնիցդ թաց՝

սրբիչով,
որ բրդոտ է մորթի պես։
Ոտքերիդ տակ
փայլատ հատակն է
փռված,

խցան որպես։
Ինքըդ քեզ շըտկելով
պատի հայելու մեջ,

մաքուր շապիկը
գցիր ճիտըդ։
Հագնում եմ,
մտածում.
— Իշխանությունն այս մեր

Սովետական,
աղնիվ խո՛սք,
խի՛ստ ճշմարիտ է։

## ԵՐԿՉՈՏԸ

Չափավոր՝
և սև՛ են և շե՛կ են,
պահած հայացքնե՛րը,
պահած ճաշա՛կն էլ,

կողքի՜ց՝
ստվերի՜ պես,
գաղտագո՛ղ,

սողո՛ւմ են
երկչոտները ստորաքա՛րշ այդ՝

երկրում.
խիզախներո՛վ մեր
փառավոր։
Երկչոտին՝ տո՛ւղ է.
ամե՛ն վարիչ։
Նո՛ւյնիսկ
հանդեպ նըրա ազգակցի՛—
երկչոտն աչքե՛րն է կախում մի քիչ
և օձիքո՛ւմ իր
պահվում քըծծի։
Խըրվե՛լ է թղթերում
աչքերով ներփակ,
ոտների կարկի՛նն իր
սեղմել ամուր.
«Միա՜յն թե՝ թաքնվե՛լ
հրամանի տակ...
Հրահանգների՛ տակ
պահվել թաքուն»։
Չգիտե՛ս,
սա մա՞րդ է,
թե ձո՜ւկ է սա—
հնչո՛ւն անգամ,
զուր,
սա չի՛ խոսա։
Ո՞ւր մնաց՝ կնի՛ք.
կամ ստորագրո՛ւմ.
«Միա՜յն թե՝
չընտրե՛ն ինձ, արի ասա,
միա՜յն թե՝
չանե՛ն ինձ
պատասխանատո՛ւ»։
Ականջը՝ մի մե՛տր
— պակասը քի՛չ է—
և նա քայլում է
պետի
հետքից,
որպեսզի



լըսի՛
նրա՜նց կարծիքը
և վաղը
նույնը
ասի իրենց։
Իսկ եթե
պետը
փոխի՛ կարծիքն իր—
նո՛րն է շտապում
նա
յուրացնել։
Կարծիքն— ասենք, դե,
հո մի կալվա՜ծք չի—
սարսափելի՛ չէ
այն
կորցնել։
Թեկուզ կողոպտե՛ք դուք
նրա կողքին,
մորթե՜ք թեկուզ՝
ոչ լա՛ց կլըսի
և ոչ ոռնոց.
«Իմ գործը փո՜քր է,
աննշա՜ն է,
ինքզինքս հո չե՞մ
մի համր մեծ.
և չո՛ւր է լցված
բերանն իմ գոց.
Ես՝
մե՜կ է, թե
լվացարա՜ն եմ»։
Երկչոտին
պատե՛լ է
կեղևը թղթի.
«Ինչպե՞ս վճռեմ ես,
ուրի՛շը թող...
հանկարծ՝ չդո՜ւրս գա...
հանկարծ՝ խփե՛ն...

Հանկարծ՝ ընկնե՛մ ես
սխալմունքով»...
Եվ օր ավուր
նա նո՛ւրբ հյուսում է
օտար հարսանիքի
մի բարդ կծիկ—
ինչպե՞ս կապի
գառն
առյուծի՛ հետ,
կատվին մկա՛ն հետ
հաշտեցնի։
Ողջ օրը սի՛րտն իր
սարսափի տակ.
դողարիթներ՝ ամբողջ մի հակ։
Նա վախենում է
ավտոբուսից ու բանգյուղտեսչից,
պետի՛ց,
կնոջի՛ց իր,
նաև գրիպի՛ց,
տնկոմ-տեղկոմի՛ց,
պա՛րտք խնդրողից,
գերեզմանատնի՛ց,
միլիցիայի՛ց
և անտառի՛ց։
եղանակի՛ց,
բամբասանքի՛ց,
շների՛ց,
ինչպես և ձմեռի՛ց
և ցուցադրակա՛ն մեր
պրոցեսներից։
Մի քիչ դողում՝
կրկին պառկո՛ւմ է.
գիշերը
դո՛ղն է իրեն կծկում...
Ընկե՛ր,
ինչո՞ւ այդպես դողո՞ւմ եք.
ինչո՞ւմն է բանը,



ասե՛ք,
ինչո՞ւմ։
Ակվարիո՞ւմ նստեցնենք ձեզ,
ի՞նչ է։
Ռևոլյուցիայի
կտրո՛ւկ պահանջն է.
լինել խիզա՛խ,
խիզա՛խ
և կրկի՛ն անգամ
խ-ի-զ-ա՛-խ։

## ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Գծերի կույտով,
դեպքերի շփոթով
ցերեկը հեռացավ՝
իջավ գիշե՛ր մթին։
Երկո՛ւսս ենք սենյակում.
ես
և Լե՛նինը՝ ինձ մոտ—
լուսանկա՛րն իրա՝
կախված ճերմակ պատի՛ն։
Բերանն իր բաց՝
լարված,
ճառի պահին,
ցցվե՛լ են վեր
մազերն իր բեղերի.
կրնճիռներում ճակտի
տեղմել է՝
մարդկայի՞ն,
հսկա ճակատո՛վը մեկ,
իր մի՛տքը վիթխարի։
Առջևը,
երևի,
անցնում են հազարնե՛ր...

Անտա՛ռը դրոշների…
անթիվ ձեռքե՛ր, գույնե…
Ելնո՛ւմ եմ աթոռից՝
խնդությամբ մի լի,
ուզում եմ մոտենամ,
ողջունեմ,
զեկուցե՛մ։

«Ընկեր Լե՛նին,
ես
զեկուցում եմ Ձեզ.
բայց ո՛չ ըստ պաշտոնի,
այլ ի սրտե՛։
Ընկեր Լե՛նին,
գո՛րծը դըժոխային
կըկատարվի
և կատարվում է արդեն։
Լուսավորում ենք,
հագցընում
մերկ ու աղքատին։
Ծավալվում է
հանույթը
ածխի ու պղնձի՛.
իհա՛րկե,
դեռ շա՛տ կան
դըրա կողքին
զանազան կեղտեր,
տականքներ կծծի՛։
Հոգնո՛ւմ ես
վանելուց,
օձի՛ք թոթափելուց։
Շատե՛րն էլ
առանց ձեզ՝
գնացին արդեն ձեռքից։
Դեռ շատե՛րն էլ կան,
հոգիներով գծուծ՝
շրջում են



մեր հողում
և սահմանին մեր կից։
Չունեն նըրանք
անուն,
չունեն և թիվ,
Ձըգվո՛ւմ է
տիպերի
ամբողջ մի ժապավեն։
Կուլակ և վալակի՛տշիկ,
քծնողներ,
սեկտանտ ու հարբեցողն ամեն։

Շրջում են դեռ
հըպա՛րտ,
կուրծքները ցցա՛ծ,
պատած
գըրիչներո՛վ,
և կրծքներին նըշան…
Իհա՛րկե, կոլորե՛նք
մենք բոլորին—
դըրանց—
բայց բոլորի՛ն ոլորելը
դըժվա՛ր է շատ։
Մենք, ընկեր Լե՛նին,
գործարանում ծխոտ,
մեր դաշտերում՝
ծածկված
և՛ ձյունով,
և՛ հընձով,

Ձե՛ր,
ընկեր Լե՛նին,
անունո՛վ
ու սըրտով
մըտածո՛ւմ ենք,
շընչո՛ւմ,
ապրո՛ւմ,
ու մարտընչո՛ւմ»։
Գործերի կույտով,

դեպքերի շփոթով
ցերեկը հեռացավ,
իջավ գիշեր մըթին։
Երկո՛ւսս ենք սենյակում.
ես
և Լե՛նինն՝ ինձ մոտ—
լուսանկա՛րն իրա՝
կախված ճերմակ պատին։

## ԶՐՈՒՅՑ ԿՈՒԶՆԵՑԿՍՏՐՈՅԻ ԵՎ ԿՈՒԶՆԵՑԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

Հնգամյակի ընթացքում այստեղ 1.000.000 վագոն շինարարական նյութեր են բերվելու։ Այստեղ կառուցվելու են մետալուրգիայի գիգանտը, քարածխային գիգանտը և քաղաքը՝ հարյուրհազարավոր բնակիչներով։

Խոսակցությունից

Երկնքով
ամպերն են վազում,
խավար է
թանձրամած,
հին սայլակի տակ՝
երազուն
բանվորներն են պառկած։
Հպարտ շշունջն է լսում,
տե՛ս,
ջուրը
վերի,
վարի.
«Մի չորս տարի հետո
այստեղ
քաղաք-այգի
կլինի...»։
Կապարային խավար է սև,



հորդ անձրևն է
տեղում.
բանվորներն են
ցեխում
նստել
ու լուռ մարխ են
վառում։
Ցրտից
շուրթերն են, տե՛ս,
սառել,
բայց խոսում են
կրկին.
«Մի չորս տարուց հետո
այստեղ
քաղաք-այգի
կլինի...»։
Թրջվել է
տակն ու վրան,
ապաստանը
թաց է.
Նստած
խավարի մեջ,
նրանք
ծամում են
թաց
հացը։
Քաղցից էլ է
շշունջն ուժեղ,
ուժեղ է
անձրևից.
«Մի չորս տարուց հետո
այստեղ
քաղաք-այգի
կլինի։
Դինամիտի
դղրդյունը
կըքշի

արջերին․
շախտեր
կդարձնի
ընդերքը
«Գիգանտը»
ահռելի։
Կելնեն
պատերը
մետրերով,

շոգին
դուրս
կըհորդի։
Անթիվ
արև-
մարտեններով
կվառենք քե՛զ,
Սիբի՛ր։
Այստեղ
մեզ
լավ տներ
կտան,

լավ կլինի
այնքան...
Դուրս շպրտված՝
Բայկալից դեն
կնահանջի
Տայգան»։
Նրանց ձայնը
սլացավ
վեր,
ամպերից էլ
անդին,
ու խլացավ։
Լսելի էր
միայն՝
«քաղաք-այգի»։
Գիտեմ՝



քաղաքն այդ
կլինի՛,
կծաղկի՛
այդ այգին,
քանի
երկրում
սովետական
կա՞ն
այդպիսի մարդի՞կ։

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Գայլի՛ պես
կըկրծեի
ամեն բյուրոկրատիզմ։
Չունե՛մ հարգանք
մանդատների հանդեպ։
Ամեն սատանայի
մոր գի՛րկը սլացիր,
Թո՛ւղթ ամեն տեսակ։
Միայն թե՝ սա...
Կուպե
և կայուտի
ֆրոնտով երկարավուն
անցնում է
պաշտոնյան
հեզահամբույր։
Հանձնում են
պասպորտները,
հանձնում եմ նաև ես
անձնագրքույկը իմ
վառ,
ծիրանագույն։
Որոշ պասպորտներին—
շուրթին ժպիտ։

Իսկ մյուս պասպորտներին՝
արհամարհանք թաքուն։
Հարգանքով,
ասենք,
առնում են պասպորտներ՝
անգլիական երկտեղ
առյուծներով կնքում։
Կլանելով
բարի քեռուն
հայացքներով՝
Չդադարելով
նրան ողջունելուց՝
առնում են
ասես՝ «Նաչայ»
պասպորտներն
ամերիկացո՛ւց։
Լեհականի՛ն
նայում են՝
ոնց աֆիշին
մի այծ։
Լեհականին
նայում են՝
աչքերը դուրս չռած՝
ոստիկանի
փղայնությամբ դանդաղ—
իբրև թե՝
ո՞րտեղից
և ի՞նչ տեսակ
աշխարհագրական մի նորությո՞ւն է դա։
Չըթեքելով
կաղամբը գլուխների՝
չըճաշակելով
և ոչ մի զգացում,
աչքը չըթարթելով՝
առնում են
պասպորտը դանիացուց
և զանազան



և այլ
շվեդներից։
Եվ հանկարծ՝
ասես թե
խանձումից՝
Ուժգին ծամածռվում է
դունչը պարոնի։
Պաշտոնյա պարոնը,
ահա,
դառնում է ինձ,
կարմրամաշկ պասպորտըս
առնում է իմ ձեռքից։
Առնում է՝
ոնց որ ռումբ,
առնում է՝
ոնց ոզնի,
ոնց որ
մի ածելի՝
երկսայր սըրած,
ոնց որ
ֆըշշացող, քըսան խայթով,
երկումետրյան
մի օձ։
Թարթում է
բազմիմաստ
աչքը
բեռնակրի։
Իրերն իմ
կկրի
թեկուզ ձրի։
Նայում է հարցական
ժանդարմը լրտեսին,
լրտեսը՝ ժանդարմին։
Ինչքան մեծ հաճույքով
ինձ կտանչեր վայրագ,
և խաչ կըհաներ ինձ
կաստան ժանդարմական,

քանի որ
իմ ձեռքում
կար մի մուրճակիր,
մանգաղակիր
պասպորտ սովետական։
Գայլի պես
կկրծեի
ամե՛ն բյուրոկրատիզմ։
Չունեմ հարգանք՝
հանդեպ մանդատների։
Ամեն սատանայի
մոր գիրկը սլացի՛ր
Թո՛ւղթ ամեն տեսակ։
Իսկ սա...
Հանում եմ ես
գրպանից իմ լայն—
որպես մի դուբլիկատ
մի անգին բեռան։
Կարդացե՛ք,
նախանձեցե՛ք։
Քաղաքացին եմ ես
Սովետական Միության։

# ՊՈԵՄՆԵՐ

## «ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ» ՏՐԱԳԵԴԻԱՅԻ ՊՐՈԼՈԳԸ

Կարո՞ղ եք
դուք
հասկանալ,
թե ինչո՞ւ ես
հանգիստ՝
հոգիս եմ ափսեով տանում
գալիք օրերի ճաշին։
Փողոցի չսափրած դեմքից
հոսելով, ինչպես արցունք,
ես,
գուցե,
պոետն եմ վերջին։

Նկատե՞լ եք.
ճոճվում է
քարե ալեյներում
զոլավոր կերպարանքը ձանձրույթի, որ մեռել է.
իսկ վազող ջրերի
սապնափրփուր վզին
կամուրջներն են ծալել երկաթե ձեռները։

Երկինքը լալիս է
անզուսպ,
բարձրաձայն,
իսկ ամպի կնճռոտ շրթունքին
խեղկատակ գրիմաս կա։
Կարծես թե մանկիկ է երազել մի կին,
իսկ աստված պարգևել է մի իդիոտ երեխա։
Շեկլիկ ու մազածածկ։
Գիրուկ մատներով իր
ձեզ գուրգուրել է արևը՝ բոռի պես աներես։
Ձեր հոգում ճորտ կա պառկած։
Իսկ ես,
անվախ,
ատելությամբ լցված դեպ ցերեկվա լույսերը՝
երկաթե լարերի նման
իմ հոգին ձգել եմ—
ես՝ լամպերի արքա։
Եկե՛ք բոլորդ մոտս,
ով ծվատում էր լռությունը,
ով ոռնում էր, քանի որ
ցերեկների հանգույցը ձիգ է.
խոսքերով, որ պարզ են
ինչպես բառաչյունը—
ես կբանամ ձեզ մեր նոր հոգիները՝
դժժացող, ինչպես հեռագրասյունը...
Ես ձեր գլխին միայն
կդիպչեմ մատներով—
և կբուսնեն շրթեր հսկայական՝
համբույրների համար,
և կունենանք լեզու, որ հարազատ է
տիեզերքին համայն։
Իսկ ես,
կաղլիկ հոգով,
կքայլեմ դեպի գահս,
որի հին
գմբեթներին
կան աստղային ծակեր։



Կպառկեմ՝ լուսավոր
ծուլության շորերով,
իմ փափուկ անկողնում, որ իսկական թրքից է,—
և անչափ կամացուկ,
շպալների ծնկերը գգվելով,
շոգեկառքի անիվը կհամբուրե իմ վիզը...

# ՎԱՐՏԻՔԱՎՈՐ ԱՄՊԸ

## (ՊՈԵՄ)

Ձեր միտքը,
որ ձեր կակղած ուղեղում երազում է ծույլ,
Ինչպես գիրացած սպասավորը՝ թախտին ճարպոտած,
ես կուշտ կծաղրեմ, կծանակեմ ես՝ լպիրշ ու կծու,
և կգրգռեմ սրտի պատառով իմ արյունոտած։

Մի սպիտակած-ճերմակ մազ անգամ չկա իմ հոգում,
և ծերունական քնքշանք էլ այնտեղ ես չպեղեցի։
Համայն աշխարհը խլացնելով ձայնովս ահարկու՝
քայլում եմ ահա— քսաներկամյա,
ինքս էլ գեղեցիկ։

Քընքուշնե՛ր,
սերը դուք սազեցնում եք ջութակի համար։
Կոպիտը սերը հարմարեցնում է միայն ծնծղային։
Իսկ դուք չե՞ք կարող ձեզ շուռ տալ այնպես, ինչպես ես հիմա.
այնպե՛ս, որ դառնաս մի համատարած շրթունք մարդկային։

Եկեք ուսանե՛ք.
կերպասով պատված հյուրանոցներից նախ արի դեռ դո՜ւ,
ո՛վ հըրեշտակաց լիգայի չնչին չինովնիկուհի։

Եվ դո՛ւ, որ հանգիստ շրթերդ ես թերթում,
ինչպես թերթում է խոհարարուհին ճաշագիրքը հին։
Ուզո՞ւմ եք՝
լինեմ կատաղի՝ մս՛~,
— և երկընքի պես փոխելով գույներ—
ի՞նչ է հարկավոր.
ուզո՞ւմ եք՝
ո՛չ թե տղամարդ— ա՛մպ վարտիքավոր։



Ես չեմ հավատում, թե կան Նիցցաներ՝ համակ ծաղկանոց։
Փառաբանվում են իմ կողմից հիմա
մարդիկ՝ պառկոտած, ոնց հիվանդանոց,
և կանայք՝ մաշված, առածի նման։

### 1

Ի՞նչ է, կարծում եք, թե զառանցում է ինքը մալա՞րիան։

Այս կատարվել է,
և— Օդեսայում։

«Գալու եմ չորսին», ասաց ինձ Մա՛րիան։

Ութն է։
Եվ ինը,
տասն էլ է սահում։

Եվ հեռանալով լուսամուտներից՝
գիշերվա ահ ու զարզանդի մեջ է երեկոն մտնում,
ցուրտ դեկտեմբերյան
երեկոն խոժոռ։
Եվ քրքջում են նրա ետևից,
ու խրխնջում են գիշերվա մթնում
աշտարակները՝ մանրիկ ու խոշոր։
Չէին ճանաչի ինձ՝ այստեղ տնկված։
Ջղուտ զանգվածըս
ջղաձգվում է,
տնքում է,
հազում։
Ի՞նչ կցանկանար նման մի զանգված։
Իսկ այդ զանգվածը շա՜տ բան է ուզում։
Չէ՞ որ քեզ համար փույթ չէ այն, թե պաղ
բրոնզ ես ինքըդ,
ու սիրտդ էլ՝ երկաթ, ճարպակալած չի՛։
Գիշերն ուզում ես ղողանջդ տալ պահ
ինչ-որ փափկության,
այն էլ կանացի։

Եվ ահա հսկա
գիշերվա կեսին
ապակին հալում ճակատիս հրով՝
լուռ սապատվում եմ լուսամուտի մեջ։

Լինելո՞ւ է սեր։
Արդյոք ինչպիսի՞,
պուճուրի՞կ մի սեր, թե՞ գուցեև մեծ։
Նման մարմնի մեջ
ինչպե՞ս ես ախր դու մեծ սեր գտնում։
Փոքրիկ կլինի, համեստ մի սերիկ։
Նա ավտոների շչակից խրտնում,
բոժոժիկներն է սիրում ձիերի։

Կրկի՛ն ու կրկի՛ն,
դեմքըս՝ անձրևի ծաղկատար դեմքին,
խրված ցանցի մեջ նրա թացության՝
սպասում եմ ես՝
թրջված ցայտքերով
քաղաքի հսկա մակընթացության։

Եվ կեսգիշերը, դանակ ճոճելով,
վազում-հասնում է,
«Տարե՛ք»՝ գոչելով՝
խփում դարանից։

Ժամը տասներկուսն ընկնում է՝
ինչպես
մահապարտյալի գլուխն է ընկնում կառափնարանից։
Ապակու վրա իրենց ոռնոցով կաթիլներն են գորշ
ձեն ձենի տալիս՝
անվերջ դիզելով ծամածռումին նոր ծամածռում,
ասես պայիկներն ու ճիվաղներն են ոռնում անախորժ
Փարիզ քաղաքի սուրբ Աստվածամոր հայտնի տաճարում։

Ա՜խ, դու անիծված։
Ի՞նչ է, մի՞թե քեզ այսքանը բավ չի։



Շուտով, ա՛յ, ճիչից կպատառոտվի բերանս բացված։

Լսում եմ.
կամա՜ց,
ինչպես հիվանդը՝ բարձունքից մահճի,
մի նյարդ է ցատկում։
Եվ նախ կարկամած
մի կերպ ման գալիս,
հետո վազում է պարզորոշ
հուզված։
Եվս երկուսը
մոլեգին դոփում, տեղում են տալիս՝
նրա հետ մեկտեղ մի եռյակ կազմած։

Ներքևի հարկում սվաղն է պոկվում։

Նյարդեր՝
պուճուրիկ
ու մեծ—
բազմաթիվ,
ցատկում են, ոստնում, թռչում մոլեգնած,—
և ահա արդեն ծալվում են, թեքվում
ծնկները հոգնած։

Իսկ սենյակիս մեջ գիշերն է անվերջ իր տիղմը թափում,—
ծանրացած աչքըս չի կարողանում իրեն դուրս քաշել
տղմից վատամիտ։
Դռներն են հանկարծ այնպես կափկափում,
ասես չի բռնում խեղճ հյուրանոցի ատամն ատամին։

Եվ դու ներս մտար
խիստ, ինչպես «մտեք»՝
ըլկելով զամշե ձեռնոցըդ։
Եվ դու
ասացիր.
«Գիտե՞ք,
գնում եմ մարդու»։

Է՜հ, դե ի՜նչ արած, գնացե՛ք։
Ոչի՜նչ։
Ուժ կառնեմ արագ։
Տեսե՛ք՝
հանգիստ եմ,
հանգիստ եմ... ինչպես մեռածի երակ։
Հիշո՞ւմ եք արդյոք։
Դուք ասում էիք.
«Դրա՛մ,
Ջե՛կ Լոնդոն,
սե՛ր,
կի՛րք, գոհանա՜լ»։
Իսկ ես գիտեի.
դուք՝ Ջոկոնդա*,
այն նկարն եք, որ պիտի գողանալ։

Եվ գողացա՜ն էլ։

Նորի՛ց սիրահար՝
հոնքերիս ծալքում ցոլանք ու կրակ,
ես ինձ կնետեմ խաղի մեջ մոլի։
Ի՜նչ արած.
չէ՞ որ նաև տան մեջ,
որը դարձել է հրդեհի ճարակ,
երբեմն ապրում է անտուն շրջմոլիկ։
Գրգռում եք ինձ.
«Ձեր խելառության թանկ զմրուխտները քիչ են ավելի,
քան կոպեկները խեղճ մուրացկանի դատարկ բռանը»։
Հիշե՛ք.
մատնըվեց Պոմպեյն ավարի,
երբ գրգռեցին Վեզուվ լեռանը։

Է-հե՛յ,
պարոննե՛ր,
դուք սիրահարներ
սրբապղծությա՛ն,
պանդանոցի՛,
ծանր հանցանքի՛։



Տեսե՞լ եք արդյոք
ահավորներից մեծ ահավորը,
և գիտեք ո՞րը.
իմ դեմքը,
երբ նա
բացարձակապես լինում է հանգիստ։

Սրտիցս ինչ-որ բան—
և համառաբար—
դուրս գալ է ուզում՝
շատ լավ զգալով,
որ իմ իսկ «ես»-ը քիչ է ինձ համար։

Այդ ո՞վ է խոսում։
Այդ ո՞վ է։
Allo!
Դո՞ւ, մամա՛,
մամա՛։

Մամա՛,
ձեր տղան չքնաղ հիվանդ է։
Հիվանդությո՜ւնը։
Կարծեմ սրտային... սրտային հրդեհ։
Ասեք քույրերիս՝
Օլյա-Լյուդային,
որ ինչ անելն իսկ չգիտի արդեն։
Ամե՛ն մի բառը
և մինչև անգամ իր հանաքները,
որ նա որձկում է բերան-հնոցից,
ճողոպրում են դուրս,
ինչպես մերկանդամ անառակները՝
կրակի տրված պոռնկանոցից։

Երթևեկները իրենց մռութներով
հոտոտում են և
առնում են հոտը ճենճերող մսի։
Ու հավաքում են պսպղուն մարդկանց

սաղավարտներով։
Այս հրշեջներին ասեք ա՛յն մասին,
թե քընքշա՞նք է պետք—
հո չի կարելի վառվող սրտի մեջ՝
սապողներ հագած կոպիտ ոտներով։
Ես ի՛նքըս, ի՛նքըս
իմ արտասվալից աչքերի խորքից
ջուր կքաշեմ դուրս տակառ առ տակ.
և վառվող սիրտս ինքս կթրջեմ։
Միայն թե թողեք մարդ իր կողերին կռթնի ու կառչի։
Ես դո՛ւրս կթռչեմ։ Ես դո՛ւրս կթռչեմ։ Ես դո՛ւրս կթռչեմ։
Նրանք փուլ եկան։
Սեփական սրտից, չէ՞, դուրս չե՞ս թռչի։

Շուրջբոլոր այրվող դեմքերի վրա
ճեղքը շրթերիս՝
խանձված-ածխացած մի համբույրիկ է շտապ առաքում։

Մամա՛,
չեմ կարող ես երգել հիմա.
սրտիս ժամատան երգչադասին էլ հուրն է ճարակում։
Ինչպես որ վառվող տնից են փախչում խեղճ բալիկները,
այդպես թռչում են հիմա իմ գանգից
բոլորշի այրված խոսք ու թվերի պատկերիկները։
Հենց այսպես ահա սարսափն ստիպեց,
որ «Լուզիտանիա»-ն* վառվող ձեռքերով
կառչի երկնքից։

Դողահար մարդկանց,
Նրանց մշտանդորր կացարան-որջին՝
Նավամատույցից հազար գլխանի մի հրացոլք է
նետվում ընդառաջ։
Այն մասին, որ ես
այրվում եմ այսպես,
գոնե դարերին արտահառաչիր
դու՝ ճի՛չ իմ վերջին,
իմ վերջի՛ն հառաչ։



2

Փառաբանե՛ք ինձ,
թեպետ մեծերին բնավ չեմ սազում։
Ես ամե՞ն բանի, ինչ որ արված է,
դնում եմ «nihil»։

Երբեք ո՛չ մի բան կարդալ չեմ ուզում։
Գրքե՞ր։
Ո՞ւմ են պետք—
նոր լինեն թե հին։

Կար մի ժամանակ, երբ կարծում էի,
թե գրքերն ահա այսպես են սարքում.
պոետը գալիս,
բերանն է բանում և— ի՞նչ բառ փընտրել.
միանգամից է այդ ոգեշընչված ցանցառը երգում—
համեցե՛ք, խնդրեմ։
Բանից պարզվում է՝
երգելու համար կա ուրիշ պայման.
քայլում են երկար՝
մինչև եփ գալուց կոշտուկապատվեն,
և թպըրտալով ներս է ընկղմում
հիմար տառեխը երևակայման,
ներս է ընկըղմում
սրտի մութ տիղմում։
Քանի հանգեր են անվերջ ճզվըզում՝
ապուր եփելով սիրուց և սոխակ կոչված թըռչունից.
ջղաձըգվում է փողոցն անլեզու.
ո՛չ մի ճչալիք, ասելիք չունի։

Մեր գոռոզացած ձեռքով, վերըստին,
սև քաղաքների նոր բաբելոնյան
աշտարակներ են հառնում ու հառնում,
իսկ աստված
կրկին այդ քաղաքներն է վերածում արտի,
բարբառը խառնում։
Փողոցն իր ցավն է հաղիվ քարշ տալիս։

Նրա կոկորդից ճիչն է դուրս ցրցվում։
Թըմբըլիկ taxci-ներ ու կառքեր լղար՝
փըվելով գալիս ու բուկն են խցվում։
Ոտնահետքել են կարծես փողոցի կուրծքը բովանդակ,
որ և տափակ է անգամ Թոքախտից։

Քաղաքը ճամփան մԹով է փակել։
Եվ այնուհանդերձ,
երբ ազատվելով կոկորդի վրա հարձակվող գաղԹից՝
Նա հաջողում է ողջ հրմշտոցը հրապարակ Թքել,
Թվում է, Թե ա՛յ,
հրեշտակապետաց երգվող խորալով
ատված,
կողոպտված,
գալիս է ահա պատիժ Թափելու։
Մինչդեռ փողոցն է պպզել՝ գոռալով.
«Գնանք լափելու»:

Կըրուպիկները ու կրուպները
քաղաքի դեմքին գրիմ են դնում՝
ահեղ հոնքերի կնճիռներ դաժան,
իսկ դիակները մեռած բառերի
նեխում են ահա նրա բերանում,
միայն երկուսն են ապրում-գիրանում՝
«բորշչ»,
մեկ էլ կարծես
ինչ-որ մի «խուժան»։

Պոետներ՝
Թրջված դառըն փղձուկից ու լացից կերկեր,
փողոցն են խկույն լքում՝ վազելով,
խռիվ մազերով.
«Այդ երկու բառով ախր ո՞նց երգել
և՛ սեր,
և՛ օրիորդ,
և՛ ծաղիկ՝
վրան անապակ շաղիկ»։



Իսկ նրա պոչից—
հազարներ՝ քուչից.
կապալառունե՛ր,
ուսանող տղե՛րք,
անառակ կանա՛յք։

Սպասեք մի պահ.
դուք մուրացկան չեք,
ինչո՞ւ եք հապա
մուրալ հանդգնում,
է-հե՛յ, պարոնա՛յք։

Մենք՝
առողջներըս,
որ սաժենանոց քայլեր ենք զգում,
պիտի չլսենք, այլ պոկե՛նք նրանց,
որ երկտեղանի մահճակալների արյունն են ծծում՝
կպչելով իբրև ձրի հավելված։

Մե՞նք նրանց հայցենք.
«Մեզ ողորմացեք»,
հենց ա՛յդ էր պակաս։
Մե՞նք խնդրենք օրհներգ կամ օրատո՛րիա։
Ո՛չ, մենք ենք կերտում հիմնը ապագա
ա՛յն ժխորի մեջ,
ուր հռնդում են հազար ֆաբրիկա, լաբո՛րատորիա։

Եվ ի՞նչ գործ ունեմ ես Ֆաուստի հետ,
որ շլացուցիչ իր հրԹիռներով
Մեֆիստոֆելի առաջնորդուԹյամբ սահում է անվերջ
պարկետի վրա երկնաօդային։
Ես գիտեմ՝
մեխը իմ կոշիկի մեջ
շատ ավելի է մղձավանջային,
քան Թե ֆանտազիան իրեն՝ ԳյոԹեի։

Ես՝
ամենամեծ ոսկեբերանըս,
ում ամեն բառը
նորածնում հոգի,
հետո էլ մարմին է անվանակոչում,
ես ձեզ եմ գոչում.
ամենամանրիկ փոշին կենդանի
ավելի թանկ է,
քան թե այն փոշին, որ այդ ոսկեբերանը
արել է արդեն և պիտի անի։

Լսե՜ք։
Ինքն իրեն գցելով դես-դեն, անելով ախ-վախ՝
արդի ծուռբերան Զրադաշտն* է քարոզում հրես։
Մե՛նք,
որ շուրթ ունենք ջահի պես կախված
և սավանի պես ճմռթված երես,
մե՛նք՝
բանտվածներըս այս քաղաք կոչված բորոտանոցում,
ուր փողն ու փոշին բորախտ են ցրել,
մենք շա՜տ ավելի մաքուր ենք,
քան թե այն վենետիկյան լազուրը ղոծուն,
որին ծովերն ու արևն են մեկեն լա՜վ լվացել։
Թքա՛ծ, եթե մենք
հոմերների մոտ ու նազոնների
չենք կարող համբել
մեզ նման մարդկանց՝ ծաղկատար մրից։
Ես գիտե՜մ.
պիտի արևը խամրեր՝
մեր հոգում պահված ոսկեվազ, ցոլուն կարմըրից։

Ջիղ-մկաններին ես աղոթքներից շատ եմ վստահում։
Ի՜նչ է,
մե՞զ մնաց ժամանակներից շնորհ պոկելը։
Մենք—
ամե՜ն մեկըս—



մեր հինգմատնանի թաթում ենք պահում
բյուր աշխարհների շարժափոկերը։

Հենց այդ էր, որ ինձ
Պետրոգրադում և Օդեսայում, Մոսկվա-Կիևում
բռնեց ու դրեց նոր Գողգոթայի՝
ամբիոնի վրա,
և չէին ճարվի գոնե երկուսը,
որ ձայն չըտային.
«Ի խա՜չ հան սրան»։

Բայց ինձ ավելի թանկ եք ու մոտիկ
դո՛ւք, մարդի՜կ,
և դո՛ւք, ումից հասել է
ինձ ցավն ու վերքը։
Տեսե՞լ եք՝
շունը ինչպես է լիզում
իրեն հարվածող ու ջարդող ձեռքը։

Ես՝
ծաղրվածս արդի սերնդից,
ծաղրված՝
իբրև մի անվայելուչ անեկդոտ երկար,
ժամանակների լեռներից անդին
տեսնում եմ նրան, որին չեն տեսնում,
և որ գալիս է ու պիտի որ գար։

Այնտեղ, ուր մարդկանց պուչատ աչքերի հայացքն է հատվում
հեղափոխության փշե պսակով,
քաղցած հորդայի գլխով անհատնում՝
տասնըվեց թիվն է բարձրանում ահա ամբողջ հասակով։

Ու ես եմ ձեր մեջ մարգարեն նրա.
ես կամ՝ ուր կա ցավ— ամե՛ն տեղ, ամե՜ն՝
արցունքի ամեն կաթիլի վրա
խաչել եմ ես ինձ, ես ինձ եմ գամել։
Ներել ո՛չ մի բան էլ չի՜ կարելի։

Այրել եմ հոգիս,
ուր քնքշանք էին դիտմամբ բուսցրել։
Եվ դա դժվար է, քան թե ահռելի
հազար ու հազար Բաստիլի տիրել․

Ու երբ,
կանգնելով փրկիչի առաջ՝
հեղափոխության գալուստի մասին
դուք խռովությամբ նրան փողհարեք,
ինքըս
անհառաչ
կալոկեմ հոգիս ու կկոխկըրտեմ
և տափա՛կ արդեն,
արդեն մե՛ծ դառած՝
կհանձնեմ ձեզ, որպես արյունոտ մի դրոշ—
առե՛ք։

3

Ա՜խ, այդ որտեղի՞ց
և ախար ինչո՞ւ
կեղտոտ ու կոպիտ այս բռունքների թափ տալն այս
ահա՝
պայծառ ու լուսե խնդության կեսին։

Եկավ,
գլուխն իր կախեց հուսահատ
այս մթին միտքը՝ գժատան մասին։
Եվ ինչպես հսկա դրեդնոուտի խորտակման պահին
հուր ու հեղձուկից ջղաձգվելով՝
նավախցերից, նավամիջանցքից
նետվում են դեպի դռնանցքն ու լյուկը,
այդպես էլ ահա
իր իսկ սեփական և ճչալու չափ բզկտված աչքից
սաես խենթացած՝ սողաց Բուրլյուկը։

Եվ համարյա թե այրելով կոպերն իր արցունքալի՝
դանդաղ սողաց դուրս



ու ոտքի ելավ,
և մի քընքշությամբ,
որ գիրուկ մարդուց չես ակնկալի,
ետ-առաջ քայլեց,
ասաց․
«Լավ է, լա՜վ»։
Լավ է, երբ հոգիդ աչքերից օտար
լավ թաքնված է բաճկոնում դեղին։
Լավ է, երբ գցված կառափնատեղի,
նրա կատաղի ատամների տակ
հանկարծ գոչում ես ամբողջ ձայնով մեկ․
«Լոկ Վան Գուտենի կակաոն խմեք»*։

Եվ այդ վայրկյանը— բենգելյա՜ն, զնգո՜ւն—
ես չէի փոխի ո՛չ մի բանի հետ,
և ա՛յն բանին էլ…

Իսկ սիգարեթի ծխից թանձրացած,
լիկյորի գավից,
խմիչքից մաշված՝
անգույն ու անքուն
իր դեմքն է տնկում
Սևերյանինը։

Ո՞նց եք հանդգնում դուք պոետ կոչվել
և գո՜րշ լորի պես ծվծվալ։
Հետո՞։
Չէ՛, գանգն աշխարհի արդ ձևել է պետք
միայն կաստետով։

Դո՛ւք,
որ հուզվում եք միայն մի մտքից՝
«Նո՞ւրբ է ստացվում արդյոք պարածըս»,—
տեսե՜ք, թե ո՜նց եմ ես զվարճանում,
ե՛ս՝
փողոցային խաղախարդախըս ու բոզարածըս։

Ձեզանից,

ովքեր թացվել-թրջվել են սիրաբանելով,
ձեղանից,
որոնց արցունքն է հոսում ձեր գաբերի մեջ
վտակ առ վտակ,
ես կհեռանամ՝
լայնորեն չռված աչքիս դնելով
արևը, որպես միափող դիտակ։

Սաստիկ դուր գալու, կիզելու համար
անհավատալի ինձ զարդարելով՝
կելնեմ ման գալու աշխարհում համայն,
հենց Նապոլեոնին առջևս գցած հանգիստ տանելով՝
շղթայված փոքրիկ շնիկի նման։

Կպառկի երկիրն իմ դեմ, որպես կին,
և խաղացնելով մսերն իր բոլոր՝
տրվել կցանկա.
կկենդանանա ամեն առարկա,
առարկաների շրթերն ահագին
կըվսըվացնեն.
«Կակա՞... ա՛ռ, ա՛ռ, կա՜»։

Հանկարծ և՛ ամպերը,
և՛ ամպութխպյան ողջ «և այլ»-երը
երկնում գցեցին մի չտեսնված ճոճք ու ճարճատում,
ասես թե ճերմակ բանվորներն են այդ
տարբեր կողմ ուղղում իրենց քայլերը՝
գոռոզ երկնքին հայտարարելով ցասկոտ գործադուլ։

Ամպերի ճեղքից, գազանանալով, շանթը դուրս փռվեց՝
հսկա ռունգերից կռվարարորեն խնչելով կարգին,
ու երկնի դեմքը մի պահ ծռմռվեց
ծամածռությամբ ահեղ Բիսմարկի։
Եվ ինչ-որ մեկը՝
ամպե ճամփեքում մոլորված նորեն,
սրճարան պարզեց ձեռքերն անոթի՝
և՛ կարծես քնքուշ,
և՛ կանացիորեն,
և՛ կարծես իբրև սայլ հրանոթի։



Ի՞նչ է, կարծում եք,
թե արեգակն է այդպես քնքշալի
սրճարանների այտը քաշքշում։
Օ, ո՛չ, գեներալ Գալիֆեն է դա սրարշավ գալիս,
ապստամբներին սպանդի քշում։

Է՜յ, զբոսնողնե՛ր.
ձեռքներդ հանեք դուք ձեր գրպանից
ու վերցրեք արկ, դանակ կամ քար,
իսկ ով զրկված է ձեռք ասված բանից՝
թող գա ու խփվի ճակատով անգամ։

Եկե՛ք, սովածնե՛ր,
հնազանդ-հեզիկ ու քրտնքապատ,
դո՛ւք,
որ լվառատ աղբերի մեջ եք թթվելով կոխվել։

Հավաքվե՛ք եկեք.
արյունով ներկեք ուրբաթ ու շաբաթ,
որ... տոնի փոխվեն։

Թող երկրագունդը— դանակների տակ— իր միտը պահի,
թե ում այսպես գռեհկացրեց։
Երկրագունդը,
որ ճարպակալել է, ինչպես սիրուհի
մի Ռոտշիլդի, որ նրան անվերջ քամելով սիրեց։

Որպեսզի ծփան դրոշակները հրաձգության խելագար
տենդում՝

ինչպես վայել է ամեն մի կարգին տոն ու հանդեսի,
է՜լ ավելի վեր խոյացեք օդում
լապտերասյուներ, ալրավաճառներ ցմփորատեսիլ։

Հայհոյեցի՛ կուշտ,
կուշտ պաղատեցի՛,
թափով հատեցի՛,
և ինչ-որ մեկի ետևից ընկած՝
կողը կրծեցի՝ ատամ մարզելով։

Կապույտ երկնքում, ուժգին սարսելով,
փայտացավ հանկարծ
վերջալույսը բորբ, ինչպես մարսելյոզ։

Նման է արդեն խելագարության։
Ոչինչ դուրս չի գա։
Գիշերը կգա՜,
կկրծի՜,
կուտի՜։

Տեսնո՞ւմ եք՝
նորից հուղայություն է երկինքը անում
դավաճանությամբ
մի բուռ աստղային շաղված արծաթի։

Եկավ գիշերը։
Քաղաքի վրա դրած նստուկը՝
խնջույք է սարքել, որպես Նոր Մամայ։
Գիշերը այս սև,
սև՝ ինչպես Ազեֆ։
Աչքերով արդեն չե՞ս ծակի հիմա։

Եվ շպրտվելով պանդոկի անկյուն՝
ահա կուչ գալիս,
սփռոց ու հոգի գինով եմ թրջում
և տեսնում հանկարծ՝
անկյունում տնկված մի աստվածամայր
կլոր աչքերն է սիրտս մխրճում։

Ինչո՞ւ պարգևել այս պանդոկային ամբոխին գծուծ
տափակ շաբլոնով քամված փայլը։
Չարաբար, ավա՜ղ,
Նայի՛ր, թքոտված գողգոթացուց
գերադասվում է Նոր Բարաբբան*։
Մարդկային խառնակ շիլա-շփոթում
իմ կերպարանքը դիտմամբ է գուցե, որ նոր չէ այնքան։
Սակայն.



Թերևս,
քո զավակների ողջ շրջապատում
գեղեցկագույնը հենց ես եմ, որ կամ։

Ուրախության մեջ բորբոսնածներին
դու քո վաղաժամ վախճանը հղիր,
որ մեծանալիք երեխեքն աճեն
ու դառնան այրեր,
տղերքը՝ հայրեր,
իսկ աղջկերքը՝ տիկիններ հղի։

Նորածիններին թույլ տուր թող պատվեն
ճերմակ հարցասեր հերքով մոգերի,
որոնք պիտի գան, և որոնց ձեռքով
երեխաները պիտի մկրտվեն
հենց անուններով իմ այս երգերի։

Ե՛ս, որ Անգլիա ու մեքենա եմ գովում երգերով,
ես— չսարսափես—
գուցե պարզապես
ամենքին ծանոթ Ավետարանի
մի առաքյալ եմ՝ տասներեքերորդ։

Ու երբ որ ձայնս,
ժամ ժամի հետքից,
ողջ գիշերները ու ցերեկները
անպատկառաբար դժժում է օդում,
իմ չահել հոգու անմոռուկները
ինքը՝ Հիսուսն է գուցե հոտոտում։

4

Մա՛րիա, օ՜, Մա՛րիա,
Նե՜րս թող ինձ, Մա՛րիա։
Դրսում չեմ կարող։
Դու չե՞ս ցանկանում դուռդ բաց անել։
Դու սպասում ես, որ իմ այտերը փոս ընկնեն,
ու ես՝

ամենքի կողմից արդեն ճաշակված,
անհամ-անալի,
գամ
և անատամ սվսվացնեմ,
թե արդ՝
«Ազնիվ եմ ես զարմանալի»։

Մա՛րիա,
տեսնո՞ւմ ես,
իմ մեջքի վրա մինչև իսկ կուզ է սկսում ծագել։

Եվ փողոցներում մարդիկ կծակեն
վզուռուցքների եռա-քառահարկ հաստլիկ ճրագուն
ու քառասնամյա մի քաշքշումով ճմռթված՝ անքուն
աչիկներն իրենց ներքև կհակեն։
ու կըհռհռան կրկի՛ն ու կրկի՛ն,
թե ատամներիս արանքում
— կրկի՜ն—
մնում է միայն անցած գգվանքի չորացած բուլկին։

Մայթերն անձրևն է լացել ու կոծել,
այդ ավազակը՝ ամուր սեղմըված ջրափոսերով,
թաց՝ լափլիզում է փողոցների դին սալարկով փակված։
Իսկ թարթիչներից ճերմակած—
այո՜—
սառցալուլայի պաղ թարթիչներից
արցունք են անվերջ կաթկթում—
այո՜—
ջրհորդանների աչքերը հակված։

Անձրևի դունչը բոլոր կողմերից ծծում է քայլող
հետիոտներին.
իսկ կառքերի մեջ՝ ըմբի՜շ ու ըմբի՜շ, գեր ու կրակուն.
անհոգ լափելուց մարդիկ են ահա ասես տրաքում,
ճեղքից չռռում է ճարպ ու ճրագուն,
և նույն կառքերից հոսում է անհագ ու անհատնելի,
պղտոր գետի պես հոսում է անվերջ ու չի բարակում



մինչև վերջ ծծված բուլկու հետ մեկտեղ՝
հսկա ծամվածքը հին կոտլետների։

Մա՛րիա,
այդ ինչպե՞ս ճարպից կխսափակ նրանց ականջում
մեղմիկ խոսք խոթես։
Օրվա ապուշը երգով է մուրում ամեն մի թռչուն.
երգում է քաղցր ու բարձրահնչուն,
մինչդեռ ես, Մա՛րիա, մարդ եմ հասարակ,
մի մարդ, որին— տե՜ս—
գորշ Պրեսնյայի կեղտառատ ձեռքին
այս թոքախտավոր գիշերն է ահա թքել անեկատ։

Մա՛րիա,
ուզո՞ւմ ես այսպիսի մեկին։
Նե՜րս թող ինձ, անգի՜ն,
Մատներս ուժգին ջղաձգումով սեղմում են զանգի
կոկորդը երկաթ։

Ա՜խ, Մա՛րիա, Մա՛րիա։

Լայն փողոցների գորշ արոտներն են, տե՛ս, գազանացել։
Իրենց մատներով վիզս են ճանկռտել հրմրոցները։

Բա՛ց արա դուռը։

Ցավում է։

Նայի՛ր,
իմ աչքերի մեջ ծաղիկներ են բացել
կանանց գլխարկի սուր քորոցները։

Ներս թողեց։

Բալի՜կ, դու մի՛ վախենա,
որ ես իմ
եզի
վզին

կրում եմ թաց սարի նման բազում կնիկներ՝
փորով քրտնառատ։
Դա... կյանքի միջով ես քարշ եմ տալիս
միլիոն ու միլիոն կեղտոտ սերիկներ
և միլիոն հսկա սերեր անարատ։

Դու մի՛ վախենա, թե ես վերստին
կփարվեմ հազար սիրունիկների՝
նոր ու հների,
դավաճանության վատ եղանակը հենց որ դարձյալ գա,—
«Մայակովսկուն սիրողնե՞ր»,—
ախր դա դինաստիա է թագուհիների,
որ խելագարի սիրտն են դարձրել իրենց համար գահ։

Արդյոք մերկացած անամոթությա՞մբ,
թե՞ երկյուղագին սարսուռով անկամ՝
մե՞կ է, անթառամ քո շրթունքների
ծով հրապույրը շրթներիս սփռիր։
Ես և իմ սիրտը մայիս չենք հասել դեռ ոչ մի անգամ,
իսկ ապրած կյանքում՝ լոկ հարյուր ապրիլ։

Մա՛րիա,
պոետը սոնետ է երգում իր Տիանային*,
իսկ ես
համակ միս, ամբողջովին մա՛րդ,
ես միայն, նայի՛ր,
միա՛յն մարմինդ է, որ խնդրում եմ արդ,
ինչպես խնդրում է խաչապաշտը միշտ.
«Մեր հանապազօր
հացը տուր այսօր»։

Մա՛րիա, տո՛ւր։

Մա՛րիա,
ես վախենում եմ հանկարծ անունդ այնպես մոռանալ,
ինչպես պոետն է վախենում հանկարծ միտը չպահել,
ձիգ գիշերների տանջանքով ծնված



ինչ-որ բառ կամ խոսք,
որ հավասար է աստծուն մեծությամբ։

Ես քո մարմինը սիրով կպահեմ
ու կփայփայեմ,
ինչպես մարտերում անխիղճ բզկտված՝
այլևս անտեր
և անպետք արդեն
իր միակ ոտքն է զինվորը պահում՝
երկյուղածությամբ։

Մա՛րիա,
չե՞ս ուզում։
Չե՛ս ուզում։
Հա՞-հա՛։

Այդ ասել է թե՝ ես նորից ահա,
մթնած ու վհատ,
կվերցնեմ սիրտս՝
արցունքներիս մեջ նրան թաղելով,
այնպե՛ս կտանեմ,
ինչպես որ շունը
գնացքի տակից իր թաթը հանել՝
տանում է բույնը։

Սրտիս արյունով կզվարթացնեմ իմ ճանապարհը,
բաճկոնիս փոշուն ալ ծաղիկների փունջը կկառչի։
Եվ հազար անգամ նորից կպարի արևն իր պարը,
Ինչպես Հերովդան*
հատված գլխի շուրջ արդար Մկրտչի։

Եվ տարեցտարի,
երբ կյանքս հատվի
պարող արևի կիզիչ ոտերով,
իմ հոր տուն տանող Գետքը կպատվի
արյան պուտերով։

Դուրս կելնեմ՝
կեղտոտ (ջրանցքների մեջ քնելուց՝ հար սև),
իմ կողով նրա հաստ կողին քսված՝
նրա ականջին կթեքվեմ, կասեմ.

— Է՜յ, պարոն աստված.
ո՞նց չեք ձանձրանում
ամեն օր թրջել աչքերդ բարի
այն շփոթի մեջ,
որ եփվում է միշտ ամպերից լուսե։
Գիտե՞ք ինչ... եկեք
բարու և չարի ճանաչման ծառին
սարքենք կարուսել։

Որտեղ պահարան՝
այնտեղ կլինես դու, Ամենակա՛լ,
և մեր սեղանին պետք է այնպիսի գինիներ շարել,
որ մռայլ Պետրոս Առաքյալն անգամ
խենթորեն ցանկա
կու-կա-պու պարել։
Իսկ քո դրախտում կբնակեցնենք եվայիկների.
Հրամա՛ն տուր ինձ,
և հենց ա՛յս գիշեր անթիվ-անհամար
բուլվարների և բուլվարիկների
սիրունիկներին հավաքեմ իսկույն, բերեմ քեզ համար։

Կուզե՞ս։

Չե՛ս ուզում։

Փաշոտ գլուխդ ես թափ տալիս իզուր,
ճերմակ հոնքերդ ես կիտում։ Մի՛ կիտիր։
Քո մեջքին կանգնած այդ թևավորն էլ,
մի՞թե կարծում ես, որ գեթ նա գիտի,
թե ինչ է սերը, թե սերը որն է։

Ես էլ եմ հրեշտակ, մի օր եղել եմ.
շաքարից շինված գառան աչքերով հայացք հեղել եմ,
բայց ես չեմ ուզում մատակ ձիերին նվեր բաժանել



սևրրյան ցավից և ոչ էլ կավից կերտված վաղաներ։
Ամենակարո՛ղ, մի զույգ ոտք ու ձեռք դու հնարեցիր,
այնպե՛ս արեցիր,
որ ամեն մեկը գլուխ ունենար,
բայց ինչո՞ւ եղար մի հարցում անփույթ,
ինչո՞ւ չգտար ևըս մի հնար՝
անտանջանք համբույր, համբույր ու համբույր։

Մի ամենազոր մեծ աստված էի ես քեզ իմանում,
իսկ դու աստված ես թերուս ու պստիկ։
Տե՛ս, կռանում եմ,
կոշիկիս ճիտքից կոշկակարային դանակս եմ հանում,
որ սուր է սաստիկ։

Դո՛ւք, ստահակնե՛ր, որ ունեք թևեր,
ձեր սին դրախտում կո՛ւչ եկեք, ցցե՛ք փետուրիկներդ
սարսափից հսկա։
Քե՛զ՝ խունկի հոտով պինդ ներծծվածիդ, հիմա կձևեմ
այստեղից մինչև... մինչև Ալյասկա։

Թողե՛ք։
Մի՛ բռնեք։
Այլևըս մեկ է, իրա՞վ եմ արդյոք,
ստո՞ւմ եմ կարգին,—
արդեն չեմ կարող ես հանգիստ լինել։
Տեսե՛ք.
աստղերն են գլխատել կրկին
ու երկինքն էլի սպանդ են շինել։

Հե՜յ դուք,
Է՜յ երկինք։
Այդ ես եմ գալիս։
Հանիր գլխարկըդ ու տուր ինձ պատիվ։

Խորի՜ն լռություն. զուր է իմ կանչը։

Ողջ տիեզերքը մտել է խոր քուն՝
դրած իր թաթին
շնաճանճերի աստղաբույլերով պատված ականջը։

# ՈՂՆԱՇԱՐ-ՖԼԵՅՏԱ

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Բոլորիդ համար,*
*որ դուր եք եկել կամ դուր եք գալիս,—*
*սրբապատկերներով պահպանած հոգուս անձավ-հանքը,—*
*ինչպես խրախճանքում կենաց բաժակը լի,*
*բարձրացնում եմ ահա քերթվածներով լի գանգս։*

*Օրըստօրե ավելի ու ավելի հաճախ եմ մտածում՝*
*ավելի լավ չէ՞*
*գնդակով վերջ դնեմ կյանքիս։*
*Ես այսօր,*
*համենայն դեպս, վերջում*
*հրաժեշտի համերգ եմ տալիս։*

*Հիշողությու՛ն,*
*գումարիր գանգիս դահլիճում*
*հերթերը սիրելիներիս,*
*որ անհաշիվ են։*
*Աչքից աչք լցրու ծիծաղն հարաճուն։*
*Անցած հարսանիքներով զուգիր գիշերը։*

*Խնդությունը թող մարմնից մարմին լցվի մեղմ,*
*այս գիշերը թող ոչ ոք չմոռանա։*
*Ես այսօր պիտի ֆլեյտա նվագեմ*
*սեփական ողնաշարիս վրա։*

### 1

*Փողոցների վերստերը ճզմում եմ լռնքերիս տակ։*
*Ո՞ւր կորչեմ, դժոխքն այս ներսս թաքցրած։*
*Ո՞ր երկնային Հոֆմանն է բազմագիտակ*
*հորինել քեզ, անիծյա՜լ։*



*Խնդության փոթորկի դեմ փողոցները փոքր են ու նեղ։*
*Զուգվածների տոնը կռճել եմ ու կռճել։*
*Մտածում եմ։*
*Մտքերս, արյան թանձրուկներ,*
*հիվանդ ու մակարդված, գանգիցս դուրս են պրծել։*

*Ես, հրաշագործս այն ամենի, ինչ տոնական է, շռայլ,*
*չունեմ մեկը, որի համար տոնախմբության դուրս գամ։*
*Կվերցնեմ հիմա ու կշրմփամ ըձրանքսիվայր*
*և գլուխս Նևսկու քարերին կտամ։*

*Ահա սրբապղծություն արի։*
*Գոռում եմ՝ աստված չկա,*
*իսկ աստված հանում է հնոցի հրից*
*մեկին, որի դեմ լեռն իսկ կերերա,*
*ու հրամայում՝*
*սիրի՛ր։*

*Անչափ գոհ է աստված։*
*Երկնքի գահավեժքին*
*վայրենացած մեռավ տանջահար մա՛րդ մի։*
*Աստված շփում է ափերը ձեռքի։*
*Խորհում է աստված՝*
*կա՛ց, Վլադիմիր։*

*Այդ նրա խելքին փչեց, նրա խելքին,*
*որպեսզի ով լինելդ չկարենաս հիշել,*
*տալ քեզ իսկական ամուսին*
*և ռոյալին դնել մարդկային ձայնանիշեր։*

*Եթե ծածուկ ննջարանի մուտքին գնաս մոտ-մոտ,*
*մի կողմ տանես վերմակի փեշը,*
*գիտեմ՝*
*կառնես այրված բրդի խանձահոտ,*
*և ծծումբ կհոտի սատանայի լեշը։*

*Փոխարենը, մինչև առավոտ շուտ,*
*սարսափած, որ քեզ սիրելու տարան,*
*զարկվում էի պատեպատ,*

Ճիչերս տողերի մեջ թրաշում,
արդեն կիսախելագար ոսկերչի նման։

Թուղթ խաղամ գուցե։
Գինու մեջ ողողեմ
կոկորդն իմ տանջահար սրտի։
Պետք չե՛ս։
Չե՛մ ուզում։
Միևնույն է,
գիտեմ,
շուտով սատկեմ պիտի։

Եթե ճիշտ է, որ կաս,
աստված իմ,
աստված,
եթե աստղագորգն այս դու ես սարքել,
եթե այս ցավը,
ամեն օր բազմապատկված,
դու ես ինձ առաքել,
դատավորի շղթան կախիր շուտով։
Սպասիր, կգամ։
Լսիր,
ամենաբարձրյալ ինկվիզիտոր,
ես ճշտապահ եմ,
չեմ ուշանա վայրկյան անգամ։

Բերանս կփակեմ։
Եվ ոչ մի ճիչ
կծոտած շրթունքներիցս դուրս չի պրծնի։
Ներիր։
Կապիր ինձ գիսաստղերին, ինչպես ձիու պոչից,
և թռցրու՝
զարկելով աստղերի ատամներին։

Կամ ահա ինչ.
երբ հոգիս դեպի քեզ խաղա,
գա քո դատաստանին,



դու,
նոթերդ կիտած,
Ծիրկաթինը կանգնելով իբրև կախաղան,
առ ու կախիր ոճրագործիս, աստված։

Արա ինչ կուզես։
Քառատիր, այրիր։
Ես ինքս, արդարադատ, կցայեմ քո ձեռքերը։
Միայն,
լսո՞ւմ ես,
վերցրու այդ անիծյալին,
որին դարձրել ես իմ սիրեցյալը։

Փողոցների վերստերը ճզմում եմ լոնքերիս տակ։
Ո՞ւր կորչեմ, դժոխքն այս ներսս թաքցրած։
Ո՞ր երկնային Հոֆմանն է բազմագիտակ
հորինել քեզ, անիծվա՜ծ։

2

Ե՛վ երկինքը,
որ ծխից մոռացել է կապույտը ջինջ,
և՛ ամպերը՝ նման քրջոտ փախստականների,
ես կարշալուսեմ սիրով իմ վերջին,
վառ, ինչպես կարմրությունը թոքախտավորի։

Ուրախությամբ կխլացնեմ ոռնոցը նրանց,
ովքեր մոռացել են հարմարավետ տուն-տեղ։
Մարդի՛կ,
լսեցե՛ք։
Խրամատներից թաց
ելե՛ք։
Ձեր կռիվը հետո կավարտեք։

Եթե նույնիսկ
ճոճվող Բաքոսի պես
հարբած մարտ է գնում,
այնժամ էլ սիրո խոսքերը խունացած չեն,
միևնույն է։

Սիրելի գերմանացիք,
ես գիտեմ՝
ձեր շուրթերին նույն
գյոթեական Գրեթխենի անունն է։

Ֆրանսիացին,
ժպտադեմ, մեռնում է սվին-զենքով,
խորտակվող օդաչուն նույնպես կժպտա,
եթե հիշում է
համբուրվող բերանը քո,
Տրավիատա։

Բայց ես գործ չունեմ փափուկ մսի հետ,
որը ծամծմում են հարյուրամյակներ։
Այսօր նոր ոտքերի առաջ խոնարհվեք։
Քե՛զ եմ երգում ես,
ներկվա՜ծ,
կարմրահե՜ր։

Գուցե այս օրերից,
ահավոր, սվինների սայրերի պես,
երբ դարերը մորուքս դարձնեն ճերմակ-ճերմակ,
կմնանք միայն
դու
և ես,
քեզ հետապնդող քաղաքից քաղաք։

Ծովերից այն կողմ հարս տանեն քեզ,
թաքնվես գիշերվա որջում անմատչելի,
Լոնդոնի մառախուղներում,
միևնույն է, քեզ,
կհամբուրեմ բոցե շուրթերը լապտերների։

Քարավաններդ ծավալես անապատում շոգ,
ուր առյուծները մտել են դարան,
քեզ,
որ ծածկված ես հողմահար փոշով,
տաք այտս կհպեմ իբրև Սահարա։



Շրթունքներիդ մեջ թե դնես ժպիտ,
նայես՝
գեղեցի՞կ է տորեադորը քո,
ես
խանդս կնետեմ օթյակները դեպի՝
մերձիմահ ցուլի մարմրող աչքով։

Կելնես կամրջին քայլերով երեր,
խորհելով՝
վատ չէր լինի գլորվել ցած։
Իսկ ես ներքևում Սենայի պես վարարել,
կանչում եմ քեզ,
մերկացնելով ատամներս փտած։

Ուրիշի հետ, վարգաձիերը չափ գցած,
դեպի Սոկոլնիկի, Ստրելկա թե թռչես,
այդ ես եմ, այնտեղ վերև բարձրացած,
մերկ լուսին կտրած, սպասում քեզ։

Ուժեղ եմ,
պետք գամ նրանց՝
հրամայում են՝
կռվում մահկանացուդ կնքի՛ր։
Վերջին խոսքը
կլինի քո անունը՝
մակարդված արկից պատառոտված շրթունքիս։

Թագակի՞ր եմ դառնալու։
Սուրբ Հեղինե՞։
Սանձած ալիքները մրրկածուփ կյանքի,
ես կարող եմ
և՛ աշխարհի արքա լինել,
և՛ շղթայակիր։

Եթե արքա լինեմ ամենեցուն,
պատկերդ մեկ հատիկ
իմ դրամների արևային ոսկուն՝
կհրամայեմ ժողովրդիս՝
հատի՛ր։

Այնտեղ,
ուր փռվել է խունացած տունդրան,
ուր գետը քամու հետ առևտուր է անում,
շղթայիս կճանկռոտեմ Լիլիայի անունը թանկ,
և շղթան կհամբուրեմ աքսորի խավարում։

Լսեցե՛ք,
մոռացածներ, որ երկինքը կապույտ է, չինչ,
փշաքաղվածներդ՝
նման գազանների։
Սա, թերևս,
աշխարհում սերն է վերջին,
արշալուսված կարմրությամբ թոքախտավորի։

8

Կմոռանամ տարեթիվ, ամիս և օր,
կփակվեմ մի թերթ թղթի հետ մեն-մենակ։
Արարվի՛ր խոսքի տառապանքով լուսավոր,
գերմարդկային կախարդանք։

Այսօր,
հենց որ ձեզ մոտ ոտք դրի,
զգացի՝
տանը վատ բան է հոտում։
Դու մետաքսե շորում ինչ-որ թաքցրիր,
և խնկի բույրը տարածվեց օդում։

«Ուրա՞խ ես դու»։
Սառը՝
«Շա՛տ»։
Խռովքը փշրում է մտքիս պատնեշ ու դուռ։
Հուսահատությունս կուտակում է պաշար։

Ահավոր խոսքը գլխիս տեղաց լավայի պես։
Լսիր,
միևնույն է,
չես կարող դիակը թաքցնել։
Միևնույն է,



ամեն մկանը քո ասես
շեփորում է՝
մեռե՛լ է, մեռե՛լ է, մեռե՛լ։

Չէ,
պատասխանիր։
Մի՛ ստիր։
Վե՛րջ։
(Ինչպե՞ս ետ դառնամ այսպես։)
Աչքերդ թաղվել են երեսիդ մեջ՝
գերեզմանի երկու փոսերի պես։

Գերեզմանները խորանում են։
Ոչ հատակ, ոչ բան։
Թվում է,
կփլվեմ օրերի լաստակից ցած։
Հոգիս անդունդի վրա ձգել եմ որպես ճոպան,
օրորվում եմ վիհի վրա բառաձեռնածությամբ։

Գիտեմ՝
սերը նրան մաշել է արդեն։
Ձանձրույթը գուշակում եմ նշաններով այնքան։
Քեզ ջահելացրու հոգում իմ հրեղեն։
Սիրտդ ծանոթացրու տոնին մարմնական։

Գիտեմ՝
կնոջ համար
վճարում են՝ էժան կամ թանկ։
Բան չկա,
որ առայժմ ես,
փարիզյան շքեղ հագուստների տեղակ,
ծխախոտիս ծխով պարուրեմ քեզ։

Իմ սերը,
ոնց առաքյալը հին-հին ժամանակ,
կանգնի հազար-հազար ճամփա ու կածան։
Քեզ դարերում գալիք սպասում է թագ,

իսկ խոսքերն իմ այդ թագին՝
չզաձիգ ծիածան։

Ինչպես փղերը Հարյուրփթանոց երթով
պսակեցին Հաղթանակը Պյուռոսի,
այդպես ուղեղդ խորտակեցի ես հանճարիս քելքով։
Իզո՞ւր։
Ես չեմ պահի քեզ։
Չօրորվեմ հույսերով սին։

Ուրախացի՛ր,
ուրախացի՛ր,
Հոգիս առար։
Հիմա
ինձ այնպիսի թախիծ է պաշարել,
որ մնում է միայն վազեմ մինչև ջրանցք
և ջրի երախը կոխեմ գլուխս ջահել։

Շրթունքներդ տվիր։
Բայց որքա՜ն կոպիտ։
Հպվեցի ու քարացա։
Ասես համբուրում եմ շուրթերով մեղապարտ
պաղ պատերը վանքի՝
ժայռերում կառուցած։

Շրխկացին
դռները։
Ողողված
փողոցների խինդով, ներս մտավ նա։
Ես
ասես ճիչից սեփական
երկու կես եղա.
«Լավ,—
ասացի,—
լավ,
ես կհեռանամ։
Թող քոնը լինի։
Փալաս-փուլուսում գցիր,
երկչոտ թևերը մետաքսի մեջ ճարպոտեն թող էլ։



Զգույշ, չփախչի։
Քարի պես պարանոցին
կախ տուր մարգարտյա բազում մանյակ-օղեր»։

Ա՜խ,
գիշերն այդ մահի՜։
Հուսահատությունը կոկորդս սեղմեց։
Իմ հեկեկանքի ու քրքիջի ահից
սենյակի մութը ծամածռվեց։

Եվ հեռացած կերպարանքը կանգնեց իբրև տեսիլք,
աչքերով նրան գորգին նկարեցիր,
ասես երազում էր ինչ-որ նոր Բյալիկ*
հրեական Սիոնի թագուհուն գեղեցիկ։

Տառապելով
նրա առաջ, որին հանձնեցի,
գլուխս, ծնկաչոք, խոնարհեցի վար։
Ալբերտ արքան*,
որ հանձնեց
քաղաքներն իր,
իմ համեմատությամբ անվանակոչիկ էր նվիրյալ։

Ոսկեզօծվե՛ք արևով, ծաղիկներ ու խոտեր։
Գարունքվե՛ք, կյանքի տարերքներ բոլոր։
Մի թույն եմ միայն քեզնից խնդրում, տեր՝
ըմպել ու ըմպել լոկ ոտանավոր։

Սիրտս կողոպտած,
զրկած ամեն ինչից,
զառանցանքում լլկած հոգիս տառապագին,
ընդունիր ընծան իմ այս շնչին,
ուրիշ ոչինչ չունեմ քեզ տալու, անգի՜ն։

Այսօրվա ամսաթիվը ներկեք կարմիր ներկով։
Արարվի՛ր
մոգություն խաչելության պես։
Տեսնո՞ւմ եք՝
խոսքի մեխերով
թղթին եմ գամված ես։

# ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ

## (ՊՐՈԼՈԳ)

Հեշտ է ձեզ։
Ննջեցյալք ո՛չ ամաչեն։
Մեռած մարդասպանների հանդեպ
ոխըդ մարի՛ր։
Մաքրագործող ջրով մաքրվում է արդեն
մեղքը հոգու,
որ թռել է այս աշխարհից։
Հեշտ է ձեզ։
Իսկ ես
այս շաչյունի,
այս բիրտ շառաչյունի միջից
ի՞նչպես տանեմ
սերը
դեպի մարդը։
Թե սայթաքեմ,
սիրո
փշրանքն անգամ վերջին
այս ամեհի ծխում
կըխեղդըվի արդեն։

Նրանց,
որ դառնում են—
ինչի՞ն է նրանց հարկավոր
ձեր տխրությունը կամ
ձեր երգերի օրորը։
Նրանք,
որ պիտի մի կերպ
կաղալով
մթնացնեն օրը։



Վախկոտ եմ։
Վախում եմ սպանե՞ն։
Իսկ այսպես
կարող եմ դեռ մի դար ճորտանման աճե՞լ։
Սուտ է։
Ընդունակ եմ ես ևս
առաջինը լինել
հերոսության
մարտի շառաչում։
Այն ո՞վ է,
ո՛վ է
որ—
քանդիչ տարիների այս նաբաթով կանչած—
չի՛ լինի խիզախ ու արի։
Իսկ ես
աշխարհում
միակն եմ—
գալիք օրերի մարգարե։

Այսօր հրճվում եմ ես։
Առանց թափթըփելու
հոգին իմ
կարողացա բերել։
Օ՛,
միակ մարդկայինը
այս ոռնոցի միջին՝
բարձրացնում եմ
ձայնս
հրե՛ս։

Կուզեք—
կապե՛ք սյունին,
կամ դեմ տվե՛ք պատին,
ե՞ս պիտի արդյոք վարանեմ։
Ուզո՞ւմ եք—
տուզը
փակցնեմ ճակատիս,
որ լա՛վ տեսնեք նշանը…

# ՍԻՐՈՒՄ ԵՄ

## ՍՈՎՈՐԱԲԱՐ ԱՅՍՊԵՍ Է

Սերն ամեն մի ծնվածին՝ ընծայված է,—
բայց
ծառայության մեջ,
եկամուտի
և այլնի,
օր օրի
կարծրանում է հողը սրտային։
Սրտին՝ մարմին է հագցված,
մարմնին՝ շապիկ.
բայց դա էլ քիչ է։
Մեկը՝
ապո՛ւշ—
դաստակապատ է հնարել,
կրծքերը ողողել օսլայով։
Ծերության պահին են խելոքանում։
Կինը քսվում է։
Տղամարդն ըստ Մյուլլերի*
ոնց ջրաղաց՝ պտտվում։
Բայց ուշ է։
Կընճիռներով է մաշկը շատանում։
ծաղկում է սերը,
ծաղկում
և՛ թառամում։

## ԵՐԲ ԵՐԵԽԱ ԷԻ

Ինձ սերը չափով էր շնորհված։
Բայց մանկուց
մարդիկ
աշխատանքով են բռնի վարժեցված։
Իսկ ես
փախել էի ափը Ռիոնի,
և ի՞նչ,
թրևում էի,



արածս՝ ոչինչ։
Բարկանում էր մայրիկը.
«Հիմա՛ր, վա՛տ տղա»։
Գոտիով քոթակել էր սպառնում հայրիկը։
Իսկ ես,
հարստացած երեքանոցով կեղծ,
գերադասում էի խաղալ
չափարների տակ
զինվորների հետ «երեք թղթիկը»։
Առանց շապիկների բեռի,
առանց կոշիկների բեռի
տապակվում էի քութայիսյան շոգում։
Մեկ շրջում մեջքս,
մեկ փորս արևին,
մինչև սովից կըծկվում։
Զարմանում էր արևը.
«Մեկ նայիր բոյի՜ն։
Նա էլ
սըրտիկով է։
Ջանում է պստիկը։
Ո՞րտեղից է
սըրա մեջ—
մեջն այս արշինի,
տեղ—
և՛ ինձ,
և՛ գետին,
և՛ ժայռերին հարյուրվերստ։

## ԵՐԲ ՊԱՏԱՆԻ ԷԻ

Պատանուն զբաղմունք շատ կա։
Քերականություններ են
սովորեցնում
անմիտ տխմարներին։
Իսկ ի՛նձ
հինգերորդ դասարանից քշեցին։
Գընացի թափառելու մոսկովյան բանտերը*։
Մեր փոքրիկ

սենյակային աշխարհում
Ննջարանների խոպոպավոր լիրիկներ են աճում։
Այդ ելունդավոր լիրիկների մոտ
ի՞նչ փնտրել։
Այ ի՛նձ
Բուտիրկայում են
սովորեցրել
սիրել։
Տխրել Բուլոնյան անտառի՞ համար։
Ախ քաշել բացվող ծո՞վը տեսնելիս։
Ես
սիրահարվել եմ ահա՛
«Հուղարկավորության բյուրոյին»—
103 կամերայի պատուհանից։
Նայում են— արև է ամեն օր,
և փքվում են...
«Ի՞նչ արժեն— իբր թե— ճառագայթիկներն այս»։
Իսկ ե՛ս
դեղնավուն մի ճառագայթին,
որ գգվում է,
այն օրերում կլտայի
աշխարհում ամբողջ ունեցածս։

## ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Ֆրանսերեն գիտե՞ք։
Բաժանո՞ւմ եք։
Բազմապատկո՞ւմ։
Հոլովո՞ւմ հիանալի։
Եվ հոլովեցե՛ք։
Ասացե՛ք,
իսկ շենքի հետ երգել
կարո՞ղ եք,
էլեկտրաքարշի լեզուն
հասկանո՞ւմ եք։
Ճուտն էլ մարդկային,
նոր դուրս եկած ձվից,



ձեռքը գցում է գրքին,
կիտուկին տետրակների։
Իսկ ե՛ս
ցուցակներից եմ սովորել այբուբեն,
թերթելով
երկաթի և թիթեղի թերթեր։
Հողագունդն են վերցնում,
խուզում,
գըջըլտում՝
ուսումնասիրում են։
Եվ ամբողջը— պլստիկ գլոբուս մի։
Իսկ ե՛ս
աշխարհագրությունը սովորել եմ
կողերովն իմ,
իզուր չէ՛,
որ գիշերներով պառկել եմ
գետնին։
Պղտորում են ցավատանջ հարցերը
Իլովայսկիներին*.
— Դեղնամորո՞ւս է եղել Բարբարոսը։
Թո՛ղ լինի։
Չեմ փորփրում փոշեծածկ անմտությունը,
ինձ հայտնի է
Մոսկվայում ամեն մի պատմություն։
Վերցնում են Դոբրոլյուբով
(որ չարությունն ատեն),
ազգանունն՝ ընդհակառակը
տոհմային է։
Ես մանկությունից
ճարպոտներին ատել եմ,
վաճառելով ճաշի համար
ի՛նձ։
Սովորում են,
նստում—
որ դուր գան կանանց։
Պղնձե ճակատիկներով, մտքերով ունայն։
Իսկ ես

խոսել եմ
հետը շենքերի։
Ջրհան մեքենաներն են եղել
զրուցակիցներս միայն։
Լսապատուհանը ուշադիր լարած՝
որսում էին տանիքները՝
ի՞նչ կասեմ իրանց,
իսկ հետո—
գիշերվա
և միմյանց մասին
շաղակրատում իրարու,
շարժելով ֆլյուգեր-լեզուն։

## ՉԱՓԱՀԱՍ ԺԱՄԱՆԱԿ

Մեծերին՝ գործեր շատ։
Փողը դրած գրպանները։
Սիրե՞լ։
Խնդրե՛մ։
Մի հարյուր ռուբլու։
Իսկ ե՛ս,
անտուն,
ձեռքերըս
պատռտած գրպանըս դրած՝
աչեղ թափառում։
Գիշեր։
Հագնում եք զգեստ ընտիր.
հոգով հանգստանում կանանցով, այրիներով։
Իսկ ինձ
Մոսկվան էր գրկի մեջ խեղդում
իր անծայր Սադովյան օղակներով։
Սրտերում,
ոնց ժամացույց,
սիրուհիներն են բախում։
Սիրո մահճի խաղակիցնե՜ր
մեջն են զմայլանքի,
իսկ ես
մայրաքաղաքի սրտի տրոփյունն էի բռնում,



պառկած—
նման Ստրաստնոյ հրապարակին։
Սրտաբաց եմ,
Սիրտս համարյա դրսում է
բացում եմ ինձ և՛ արևին, և՛ ջրափոսերին։
Մտե՛ք ձեր կրքերով։
Սերերով թափանցե՛ք ներս։
Այսօրվանից
ես սիրտս ղեկավարել՝ անկարող եմ,
գիտեմ ես տեղը ուրիշների սրտի տան։
Յուրաքանչյուրին հայտնի է՝ նա կրծքավանդակումն է։
Բայց ինձ վրա
գժվել է անատոմիան։
Համատարած սիրտ է—
ղողանջում է ամեն տեղ ուժեղ։
Օ՜, որքան են նրանք,
միայն գարունները
այս 20 տարիներին
բորբոքված ներս խուժել։
Ուղղակի անտանելի է նրանց բեռը չծախսված։
Անտանելի է ո՛չ թե այնպես—
բանաստեղծության համար,
այլ բառացի ասված։

## Ի՞ՆՉ ՍՏԱՑՎԵՑ

Ավելին, քան կարելի է,
ավելին, քան հարկավոր է,—
Կարծես կախված երազում՝
զառանցանքով պոետական,—
սրտային փոքրիկ գնդիկը աճեց՝
լեռնակույտի հզոր.
լեռնակույտի՝
սիրո,
ատելության։
Քայլում են
բեռան տակ
ոտքերս երերուն։

— Որ ես
ամուր եմ կազմվածքով,—
դու գիտե՛ս,
բայց էլի՝
ստիպված եմ սրտային հավելումով քայլելու,
խոնարհած ուսերիս եռարշինը թեք։
Ուռչում է սիրտս ոտանավորային կաթից,
բայց չի՛ թափի,—
ո՞ւր թափի։
Կըլցվի նորից։
Ես հոգնել եմ
միրիկայից,—
որ սնուցանում է աշխարհը,
որ հիպերբոլն է
Մոպասանյան նախատիպի։

## ԿԱՆՉՈՒՄ ԵՄ

Բարձրացրի հսկայի պես,
լարախաղացի պես տարա,—
ինչպես կանչում են միտինգի ընտրողներին,
ինչպես գյուղումն են
ահազանգում
հրդեհի՛ ժամին,—
ես կանչում էի.
«Ահա և նա՛,
ահա՛,
վերցրե՛ք»։
Եվ երբ
նման վիթխարին հառաչել է,—
չընայելով,—
փոշի,
ձնակույտ.
ցեխ,—
կանայք
ինձանից
հրթիռի պես փախել են.
«Մեզ ավելի փոքր է պետք,



այ, ի՛նչպես տանգո գուցե»...
Տանել չեմ կարող,
կրում եմ սեփական իմ բեռը։
Ուզում եմ դեն գցել նրան,
և գիտեմ,
չե՛մ գցի։
Ճնշմանը չեն դիմանա կողաշարերս։
Կրծքավանդակս է ճարճատում պրկումից։

## ԴՈՒ

Եկար դու—
գործունյա,
եկար մռունչիս համար,
հասակիս,
նայեցիր դու,
տնտղեցիր ինձ— հասարակ մի տղա։
Վերցրիր,
խլեցիր սիրտս
և ուղղակի
գնացիր խաղալու,—
ինչպես մի աղջիկ՝ գնդակի հետ խաղա։
Եվ հրաշք է թվում
ամեն մեկին,—
այստեղ՝ զարմանում է օրիորդը,
այնտեղ՝ տիկինը։
«Սիրել այսպիսինին։
Սա հարձակվող է,
հարկավոր է սրա համար
գազանանոցի սանձահարող մի կին»։
Իսկ ես հրճվում եմ։
Չկա նա—
ճնշումը։
Առել է հրճվանքն ինձ
առել եմ ես թև,
ցատկում եմ,
ինչպես հնդիկն հարսանիքումը,
այնպես ուրախ եմ ես,
այնպես թեթև։

## ԱՆՀՆԱՐԻՆ Է

Մենակ չեմ կարող—
դաշնամուրը չեմ տանի
(նամանավանդ թե՝
չըհրկիզվող պահարան)։
Եթե դաշնամուր չէ,
կամ պահարան չէ,
կարո՞ղ եմ տանել ես սիրտն իմ ետ առած։
Գիտի փողատերը.
«Հարուստ եմ անծայր ես։
Չի բավի գրպանը—
կգնեմ հրկիզվող գանձարանը ես»։
Սերս
դեպի քեզ
պահել եմ,
ինչպես գանձը— երկաթում։
Հանց Կրեսոս
քայլում եմ,
և հրճվում։
Եվ միայն
կառնեմ
այնտեղից, երբ
ցանկամ ես,
կառնեմ ժպիտ մի,
կամ կեսը,
ավելի մանր անգամ ես,
և քեֆին՝ ուրիշների հետ,
երբ գիշերը դառնա կես,
կծախսեմ մի տասնհինգ ռուբլի՝
մանրուք լիրիկական։

## ԱՅԴՊԵՍ ԷԼ ԻՆՁ ՀԵՏ

Նավերը— նրանք էլ են գալիս նավահանգիստ։
Գնացքը— նա էլ է կայարան քշվում։
Իսկ ինձ դեպի քեզ՝ ձգում է վաղուցվանից։
Չէ՞ որ ես քեզ սիրում եմ։



Ամեն օր
Պուշկինյան ասպետը ժլատ
իջնում է,
քրքրում նկուղն իր, քրքրում— հրճվում է։
Այդպես էլ
քեզ մոտ եմ,
սիրելիս, վերադառնում։
Իմն է, չէ՞, սիրտն այս,
իմովն եմ հրճվում։
Բերկրանքով մենք տուն ենք
երբ վերադառնում,—
լվացվում սափրվում ենք,
կեղտը քերելով։
Այդպես էլ
քեզ մոտ եմ վերադառնում,
բայց քեզ մոտ գալով ես,
չե՞մ գնում միթե տուն։
Երկրայինին երկիրն է իր գիրկն ընդունում։
Վերջնանպատակին ենք մենք վերադառնում։
Այդպես էլ
քեզ մոտ եմ ձգտում, սիրելիս,
հազիվ բաժանվում ենք,
հեռանում հազիվ։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սերը չեն ջնջի
ո՛չ գժտությունը,
ո՛չ վերստերը։
Մըտածված է,
Ճըշտված է,
ստուգվա՛ծ։
Ես բարձրացնում եմ հանդիսավոր
այս տողերը,
երդվում եմ
սիրե՛լ
հավատարիմ և անդա՛րձ։

# ԱՅՍ ՄԱՍԻՆ

## ԻՆՁԻ՛ ՄԱՍԻՆ՝ ԱՅՍ ՄԱՍԻՆ

Այս թեմայում,
և՛ մանր,
և՛ անձնական,
որ հազար անգամ է երգվել,
ես պտտվել եմ
որպես սկյուռ
պոետական
և նորից
ուզում եմ պտտվել։
Այս թեման
Բուդդայի աղոթքում էլ
կա հիմա,
և նեգրի դանակն է
տիրոջ դեմ սրում,
թե Մարսի վրա էլ
շնչում է մի մարդ,
ապա նա էլ
այս մասին է գրում։
Այս թեման կգա,
կբռնի անդամալույծին,
կհրի թղթի մոտ,
կհրամայի.
— Խզմզի՛ր.—
իսկ անդամալույծը
թղթից,
ծղրտալով,
կպոկվի հազիվ,
և երգը կշողա
արևի տակ միայն։



Այս թեման կգա,
խոհանոցից կգնա,
շուռ կգա
և իսկույն կշքվի,
ու մի ակնթարթում
հսկան փուլ կգա
և իրեն կթաղի
կույտի տակ թղթի։
Այս թեման կգա
կհրամայի.
— Ճշմարտությո՛ւն.—
այս թեման կգա,
կստիպի.
— Գեղեցկությո՛ւն։
Եվ թող թևերդ
գամված լինեն խաչին,
միևնույն է, քթիդ տակ
վալս կմռռաս դու։
Այս թեման այբուբենին
թե դիպչի ու անցնի,—
դե գիրքն այդ, հայտնի է,
պարզ է ու մեկին.
իսկույն կդառնա «Ա»-ն
Կազբեկից էլ անմատչելի,
հացից
ու քնից կզրկի,
կպղտորի հոգիդ։
Այս թեման կգա
ու չի մաշվի հավիտյան,
միայն կասի.
— Նայի՛ր այսուհետ ինձ,—
և կնայես նրան,
նրա հետևից կերթաս,
հողագնդին ծածանելով
կրակը կարմրամետաքս։
Խորամանկ է այս թեման,
կսուզվի դեպքերի մեջ,

*բնազդների գաղտնարանում*
*կպատրաստվի Թուլշքի,*
*և, ասես կատաղելով,—*
*համարձակվել են մոռանա՜լ նրան,—*
*կյնցի,*
*ու կթափվեն*
*հոգիները մաշկից։*
*Այս թեման*
*հայտնվեց ինձ ցասկոտ,*
*հրամայեց.*
*— Տա՛լ օրերի սանձը.—*
*ծոկտելով*
*իմ առօրյայի մեջ նայեց*
*և ամպրոպի պես ցրեց*
*գործեր ու մարդկանց նա։*
*Այս թեման եկավ,*
*դուրս մղեց մյուսներին*
*և մենակ դարձավ*
*անբաժան, մոտիկ։*
*Այս թեման դանակի պես*
*մոտեցավ կոկորդիս,*
*Կռանահարեց*
*սրտից քունքերին։*
*Այս թեման ցերեկը դարձրեց գիշեր,*
*Հրամայեց.*
*— Զարկեցեք իրար, տողե՛ր։*
*Անունն է այս թեմայի՝*
*...!*

I

**ԹԵԴԻՆԳՅԱՆ ԲԱՆՏԻ ԲԱԼԼԱԴԸ**

Կանգնած էր, հիշում եմ,
Այդ փայլը կար.
Եվ այդ
այն օրերին
կոչվում էր Նևա...

Մայակովսկի, **«Մարդը»**

**Բալլադի և բալլադների մասին**

*Այնքան էլ ջահել չէ բալլադը,*
*բայց երբ բառերը հիվանդ են,*
*և բառերն իրենք են ասում,*
*որ հիվանդ են,*
*ջահելանում է և բալլադը։*
*Կյուբյանսկի Նրբանցք։*
*Նրբանցք Վոդոպյաննի։*
*Ահա*
*տեսքը։*
*Յոնն*
*ահա։*
*Անկողնում է Նե,*
*Նե պառկած է։*
*Նա։*
*Սեղանին հեռախոս կա։*
*«Նա»-ն և «Նե»-ն*
*իմ բալլադն են։*
*Այնքան էլ ահավոր նոր չեմ ես,*
*ահավորն այն է պարզապես,*
*որ «Նա»-ն ես եմ այդ,*
*և որ իմն է «Նե»-ն։*
*Իսկ ինչո՞ւ բանտ,*
*երբ վանդակ չունեն*
*պատուհանները տան։*
*Ծնունդ է,*
*խառնաշփոթ։*
*Ձեր գործը չէ՛։*
*Ասում եմ բանտ։*

Սեղան։
Իսկ սեղանի վրա՝
ծղոտ։
**Համարն անցնում է լարով**
Ձեռքդ կբշտի,
թե ծղոտին դիպչես,
և լսափողը կընկնի վայր։
Մակնիշից
երկու սլաք
հեռախոսը
լցրել են կայծակով։
Հարևան սենյակ։
Այնտեղից լսվում է քնատ.
— Այդ ե՞րբ,
որտեղի՞ց հայտնվեց
գոճին այդ։—
Զանգը այրուքից ճչում է,
Ապարատը շիկացել,
ճերմակ է դարձել։
Հիվանդ է Նե։
Նե պառկած է։
Վազի՛ր,
հասի՛ր,
ժամանակն է։
Սեղմում եմ դաղոցս
և ծուխը մսահոտի,
մարմնովս իսկույն անցնում է կայծակը՝
լարվածությամբ
միլիոն վոլտի։
Շրթունքս հպել եմ հեռախոսի տապին։
Տան մեջ անցքեր է փորում լարը,
և հերկելով Մյասնիցկայա փողոցը
տենդագին,
գնդակի պես սլանում է համարը,
հեռախոսավարուհուն է հասնում,
տեսնում՝ խամրել են աչքերն աղջկա,
քի՞չ բան է՝ աշխատել մինչև լույս։
Կարմիր լապտերը նորից է վառվում։



Զանգահարում է...
Եվ լույս չկա։
Ու հանկարծ
լույսերը խառնվում են իրար,
կարծես կտրատվում է ողջ ցանցը,
67—10
միացրեք,
շո՛ւտ,
Վոդոպյաննի
խաղաղ նրբանցքը։
Ո՛ւխ...
Թե չէ,
սպասելի է հոսանքից.
տեսար՝ Ծննդի նախօրեին
երկինք թռար մեկից
քո ամբողջ ցանցով
հեռախոսային...
Մյասնիցկայա փողոցում
կար
բնակիչ
մի հին.
հետո նա հարյուր տարի ապրեց
և այդ մասին
հարյուր տարի պատմեց
իր զավակներին։
Իբր եղել է կիրակնամուտ,
ուզել է առնել խոզապուխտ
և ուզել է, որ լինի էժան.
բայց ցնցվել է հանկարծ գետինը,
երկրաշարժ է եղել,
այրվել են ոտքերը,
ներբաններն են այրվել։
Չեն հավատացել
զավակները,
թե օրը ցերեկով
երկրաշարժ է եղել,

այն էլ ձմռանը,
փոստի մոտ։

**Հեռախոսը ճարձակվում է բոլորի վրա**

Բարակ լարի մեջ հրաշքով խցկված,
լայն բացած հրախը խոսափողի,
զանգերի զնգոցով լռությունը խեղդած,
հեռախոսը ժայթքեց լավան իր դողի։
Զարնվելով պատերին՝
այդ վժժոցը,
զրնգոցն այդ
կարծես ուզում էին պատերը փուլ տալ,
և պատերից
զանգերի փշուրներն հապար
գլորվում էին
մահճակալի,
աթոռների տակ։
Առաստաղից ցած ընկավ
մի զանգ ահագին,
գնդակի պես
վեր թռավ նորից
և զնգոցներն իր
շաղ տվեց հատակին։
Ապակիներն ամեն
և վառարանը հին
ձայնակցեցին
հեռախոսի
զնգոցին ծով,
ամբողջ տունն ասես
հեռախոսի ձեռքին
խաղալիք էր դարձել
մի զնգացող։

**Մարտավկան**

Ասեղի անցքի պես
աչք-կետերը
հազիվ են երևում աղախնի
քնատ,
կարմրած
դեմքի վրա։
Ահա նա


ծուլորեն, հապալով
ելնում է մի կերպ,
դեմքն ասես
թառամած
խնձոր լինի.
մոքերը կնճռոտել են
դեմքը նրա...
Ո՞ւմ եք ուզում...
Վլադիմ Վլադիմիչի՞ն...
Հա-ա՜...
Եվ նորից գնում է քստացնելով,
հաշվելով քայլերը,
ինչպես մարտավկա։
Հազիվ են լսվում
ոտնաձայները հեռվից։
Մնացած աշխարհը
մի կողմ թողած,
անհայտը խոսափողով
նշան է բռնել ինձ։

**Աշխարհի լուսավորումը**

Ճառախոսներն ամեն քարացել են ասես,
ինչպես կային, այնպես մնացել են
կանգնած՝
բերանները բաց,
ու նայում են այստեղ՝
ամենամեծ ծննդին,
որ կարող էր լինել։
Նրանց կյանքը՝
գզվռտոց է չնչին,
նրանց տունը՝
առօրյայի
ճահիճ է մի հիմար,
նրանք ի՛նձ են նայում,
ասես իրենք իրենց վրա,
և սպասում,
թե սիրո մահաբեր
մենամարտ կլինի հիմա։
Քարացել են շշակների ճիչերը ասես,

իրարանցումը չի շարժում
ոչ անիվ, ոչ քայլ․
միայն մենամարտի դաշտն է սպասում
և ժամանակ-բժիշկը՝
բուժիչ մահվան
անծայր վիրակապով մռայլ։
Լուռ է Մոսկվան։
Մոսկվայից այն կողմ լուռ են
դաշտերը,
լուռ են ծովերը,
ծովերից այն կողմ
լուռ են լեռները։
Ամբողջ տիեզերքն ասես
երևում է հեռադիտակից՝
հսկա մի հեռադիտակից,
բայց հակառակ կողմից։
Հորիզոնն ուղղվել է։
Ձգվել է լարը լարանի պես,
մի ծայրում ես եմ՝ իմ սենյակում,
մյուսում՝ դու ես։
Իսկ մեջտեղում, չքնաղ մի երազի նման
հպարտ ու ճերմակազգեստ՝
ամբողջ տիեզերքով մեկ
ձգվել է Մյասնիցկայան․
կարծես փղոսկրե մանրաքանդակ լինի։
Պարզ է ամեն ինչ,
խոշտանգումն անգամ
թափանցիկ ու զուլալ
մի պարզություն ունի։
Մյասնիցկայա փողոցում
բարակ մի լար կա՝
նուրբ, անձեռագործ,
ուղղակի թելիկ․
և ամեն ինչ կախված է հիմա
բարակ այդ թելից։

**Մենամարտ** Մե՛կ...
Խոսափողն ահա ուղղվում է ինձ։



Ամեն ինչ
դառնում է
անհուսալի․
Երկու․
Նշան են բռնում
ուղիղ իմ աչքերի մեջ՝ աղաչանքով լի։
Ուզում եմ ճչալ
դանդաղկոտ այդ կնկա վրա․
ի՞նչ ես քիթդ տնկել, ի՛նչ...
Կանգնեք Դանտեսի պես․
անցք փորեք լարի մեջ
և թունոտ գնդակով տապալեցեք ինձ։
Բայց գնդակից ավելի
ահավոր է,
ահա,
հորանջով նետած
խոսքն աղախնի,
որը լարի միջով դեպի ինձ է սողում,
ինչպես գորտը՝ օձի փորում։
Դա սարսափելի է ամենահին բառերից,
երբ դեռ ժանիքով էին էգին ձեռք բերում։
Եվ ահա լարից դուրս է սողոսկում
տրոգլոդիտյան սիրտ կրծող
հրեշը խանդի։
Բայց կարող է պատահել...
երևի կարո՛ղ է,
որ ոչ ոք չի մտել հեռախոսի մեջ
և չի էլ մտնո՞ւմ,
որ ոչ մի տրոգլոդիտյան ռեխ չկա,
այդ ե՛ս եմ հեռախոսի հայելու մեջ,
նրա երկաթե հայելում։
Դե թող Կենտգործկոմը հրահանգներ գրի,
գնա իմացիր քո ճշմարտությո՞ւնն է ուղիղ,
թե՞ էրֆուրտյանը։
Առաջին ցավի միջով՝
անիմաստ
ու կատաղի․

ուղեղին հաղթելով,
դուրս է գալիս գագաթը։

**Ինչ կարող է պատահել մարդու հետ**

Գեղեցիկ է։
Ընկերնե՛ր,
Նայեցե՛ք։
Մի բանաստեղծ,
որ ամռանը Փարիզ
գաստրոլի պիտի գնա,
«Իզվեստիայի» թղթակիցը մեծարգո,
կոշիկից դուրս պրծած մատներով
աթոռն է ճանկռոտում հիմա։
Երեկ դեռ մարդ էի,
միանգամից այսօր
ժանիքներով տեսքս արջացավ,
բրդոտվել են վրաս
հագուստ ու շոր,
Արջին՝ հեռախո՞ս...
պե՞տք է որ...
Կորի՛ր
Ծովերը սառուցյալ՝
ձերոնց մոտ։

**Արջացում**

Եվ կատաղի արջի պես
հեռախոսի վրա եմ
նետվում ես։
Սիրտս է խրվում նրա
գեղարդը արյունոտ։
Հոսում է։
Հոսում է պղնձի կարմիր առուն,
խավար,
կլանի՛ր
և՛ մռունչ,
և՛ արյուն։
Չգիտեմ,
արջերը լալի՞ս և...
թե ոչ,
թե լալիս են,
ապա՝



առանց կեղծիքի,
կիրճով մեկ գցում են
երկար մի ռռնոց։
Հենց այսպես էլ
նրանց պատկից հարևան Բուլչինը՝
կղժգոհի՝ ռռնոցից արթնացած։
Այսպես միայն արջերը կարող են
իրենց մագիլներով
փորփրել գետինը՝
որջում պառկած
և ռռնալ՝
մռութները անշարժ ցցած։
Անհանգստացնում են
թե՛ փլվում, թե՛ տերևը ընկած,
միայն չընկնեն
միանգամից
հրացան-կոները.
միայն նրա՛նց աչքին՝
արցունքով ու բրդով
վարագուրված,
կերևան նման բաները։

**Հսող սենյակ**

Մահճակալ։
Երկաթե ձողեր։
Մաշված վերմակ։
Երկաթների մեջ
ընկած է ծուլորեն։
Դողդողաց, ահա՛։
Դողը անցնում է ձողերին։
Սավանը թպրտում է,
անցնում է սարսուռ.
սառնություն է դիպչում ոտքերին...
Ինչո՞ւ։
Որտեղի՞ց այսքան ջուր։
Արցունքներն են իմ.
ցեխ է ամենուր։
Լալկա՛ն։
Ճիշտ չէ։

Չի կարելի արտասվել այսքան։
Վաննան է, սառանման տանի,
Ջուր է բազմոցի տակ,
պահարանի։
Ճամպրուկն
ընկել է ցած,
Հեռացել բազմոցի մոտից։
Բուխարիկ։
Ոչ։ Դա իմ գցած
մնացորդն է ծխախոտի։
Կբռնկվի։
Մարել է պետք։
Դողում է սարսափից։
Ո՞ւր ես գնում,
ի՞նչ բուխարիկ։
Խարույկներ են վառվում
մղոններ այն կողմ,
այն ափ...։
Ամեն ինչ լվացվել է։
Խոհանոցից անգամ
չքացել է
կաղամբի հոտը՝ տոթի, քաղցրահամ։
Գետ։
Մեծ գետ։
Ցուրտ-սառնամանիք։
Սպիտակ արջի պես
նստել եմ սառցասալին։
Բարձ-սառցասալին նստած՝
լողում եմ,
սուրում են ափերը
իրար հետևից,
ես իմ սառցե բարձին՝
պտտո՛ւմ եմ։
Լադոգայից փչում է քամին։
Ջուրը սառում է։
Թռչում է բարձ-լաստն իմ։
Միայն մի զգացում



ջուրը չի լվացել.
Ես պետք է
կամ մահճակալի,
կամ ինչ-որ կամրջի
տակով անցնեմ։
Էլի այսպես էր.
ես էի
ու քամին.
Նույն գետն էր։
Ո՛չ, ուրիշ էր,
այս չէր։

Ո՛չ։
Ուրիշ չէր։
Կանգնած էր,
փայլում էր,
կար։
Հիշում եմ հիմա։ Միտքս է գալիս։
Ո՛չ, չեմ կարող։
Ես պարծ։
Ջուրը բաց չի թողնի լաստը անկար։
Երևում է, երևո՜ւմ...
պարզ
ու պարզ ավելի։

Ահա
հիմա կերևա
անխուսափելի։

**Մարդը յոթ**
**տարի հետո**

Ջրերը լվանում են հիմքերը պողպատ,
մայրաքաղաքի կողերին հենված՝
անշարժ է, ինչպես սարսափ,
հարյուրհարկ իր սյուներին կանգնած։
Երկնքին օդերին ժանյակ է հյուսել,
վեր է խոյացել՝
պողպատե շքեղություն սանս։
Նայում եմ վեր
և
այնտեղ, վերևում,
ահա, տեսնում եմ ես,

Կանգնած է նա
կամրջի բազրիքին...
Ներիր, Նևա՛...
Քշում է, չի ներում...
Խղճա՛...
չի խղճում կատաղի վազքը։
Նա՞...
Նա է բորբոքված ֆոնին երկնքի,
ինձ նման կուչ եկած՝ տեսնում եմ մեկին։
Կանգնած է։
Մազերը խռիվ են,
տված քամուն։
Գլուխս առնում եմ ափերիս մեջ...
Իզո՞ւր եմ ձգում։
լսում եմ իմ սեփական ձայնը,
ձայնիս դանակը թաթերս է ծակծկում։
Խնդրում է, աղաչում
ձայնն իմ սեփական.
— Մի՛ լքիր, կանգ առ,
Վլադիմիր,
ինչո՞ւ այն ժամանակ
չթողեցիր սակայն,
որ ընկնեմ սյուներին
ու փշրեմ սիրտն իմ։
Յոթ տարի է կանգնած եմ։
Նայում եմ ջրերին.
տողերի պարանով կապված եմ բազրիքին։
Յոթ տարի ինձանից
աչք չեն կտրում ջրերն այս,
ե՞րբ կգան վերջապես
ազատման օրերը։
Գուցե դարձել ես դու նրանց դասի՞ց,
Համբուրում ես,
ուտում
և գցում փոր,
ուզում ես խցկվել նրանց կյանքի մեջ
որպես աքլո՞ր։



Մտքովդ չանցնի։
Նրա ձեռքը իջնում է ցած։

Սպառնում է։
Չփորձես փախչել.
այդ ե՛ս եմ կանչել քեզ։

Կգտնեմ,
կհասնեմ,
կբռնեմ,
տաղնապահար կանեմ։

Այնտեղ՝ քաղաքում
տոն է հիմա,

թնդյունը լսում եմ ես։
Ուրեմն,
ասա,
որ գան նրանք.

բեր
գործկոմի
որոշումը

և
իմ տանջանքները
չեղյալ արա.

ու քանի
Նևայի ջրերը
չեն բերել

սերը փրկարար,
թափառիր,
դու էլ
ինձ պես

թիավարիր,
անցիր
քարերի միջով։

Եվ չեն սիրի նաև քեզ։
Փրկեցեք Կանգ առ
դու, բարձ,
իզուր են ջանքերդ,

թաթ-թիակները
ոչինչ չեն անում.

կամուրջը սեղմվում է։
Նևան իր հոսանքով
տանո՛ւմ է,
տանո՛ւմ է,
տանում
ու տանո՛ւմ։
Արդեն հեռու եմ ես
մեկ օրվա ճամփով,
մեկ օրվա չափ
հեռացել եմ
իմ ստվերից,
որ կանգնած է այնտեղ,
կամրջի վրա.
բայց դեռ
ականջիս է հասնում
ահարկու
ամպրոպ-ձայնը նրա։
Հետապնդման վախից
առագաստ եմ բացում.
ուզում ես մոռանա՞լ
Նևայի փայլը.
ուզում ես փոխե՞լ,
բայց ո՞ւմ,
ո՞ւմ հետ կփոխես.
Նևան
մե՛կ է։
Հիշիր։
Քո «Մարդ» պոեմի
դրոշակը կրիր
մինչ ի մահ.
սկսեց գոռալ։
Կարո՞ղ ես
այդ ձայնը
դու խեղդել հիմա։
Փոթորիկը
գոռում է՝
երգե՛ք...



Այնտեղ,
Նևայի կամրջին
մարդ կա.
փրկեցե՛ք,
փրկեցե՛ք,
փրկեցե՛ք...

## II

### ԾՆՆԴՅԱՆ ԳԻԾԵՐ

**Ֆանտաստիկ իրականություն**

Իրար հետևից
սուրում են ափերը։
Ես
նստած եմ
սառցե բարձին.
Լադոգայի քամուց
ուռչում են ալիքները,
թռչում է լազուր սառցի։
— Փրկեցե՛ք,—
կանչում եմ խոսքի հրթիռով
և տապալվում եմ ցած.
գետը վերջանում է.
դուրս է գալիս ծով,
իմ դեմ փռվում է օվկիանոսը բաց։
— Փրկեցե՛ք,
փրկեցե՛ք,
փրկեցե՛ք,—
ոռնում եմ,
ինչպես հրանոթի մարտկոցն է ոռնում.
Ներքևում, իմ տակ
մեծանում է բարձը,
կղզի է դառնում։
Մեղմանում է,
մեղմանում է,
մեղմանում է աղմուկը,
դառնում է ավելի խլաձայն.

ո՛չ մի ծով.
ես
ձյան վրա եմ,
շուրջս՝
ցամաքն է անծայր։
Ցամաքը բառ է լոկ։
Ցամաքը թաց է ձյունով,
ես բքի բերանն եմ նետված.
այս ի՞նչ ցամաք է,
ո՞ր երկրում եմ ես,
Գրեն-
Լապ-
Սեր-լանդիան է, ասավա՛ծ։
Նղեկության ցավը Լուսնի սեխը ծնվեց ամպերից,
պատի վրա փռվեց ստվերը լայն։
Պետրովյան այգի։
Ես վազում եմ։
Խոդինկյան ընկել է իմ հետևից։
Առջևում Տվերսկայան է,
ինչպես սավան։
Առւ-ու-ու-ո՜ւ...
Մինչև Սադովայա է հասնում «ու»-ն.
լծափա՞յտ էր,
թե՞ մեքենան արավ.
Մռութս
ձյան մեջ է,
շուրջս՝ ձյուն։
Հայհոյանքի տարափ.
«Քոռացե՞լ ես ՆԷՊ-ից,
Ես քու մերը նէպեմ.
աչքերդ ո՞ւր ես կոխել,
սրա՜ն տեսեք,
շորերն է փոխել»։
Ա՜խ,
այո,
չէ՞ որ
արջի մորթի է հագիս,



թյուրիմացություն է.
պետք է մարդկանց ասել,
որ ես արջ չեմ,
նման եմ ուղղակի։

Փրկիչը Ահա,
մի մարդուկ է գալիս ուղեկայից.
կարճլիկը մեծանում է
ամեն մի քայլից։

Լուսինը գլխին,
ասես պսակ լինի դրած,

անհրաժեշտ է,
հենց հիմա,
ես կհամոզեմ նրան, որ հենց հիմա,
նավակում...

դա փրկիչն է։
Հիսուսինն է դեմքը՝
լուսապսակով, խաղաղ ու անմեղ.
մոտենում է։
Չէ՛, ջահել է բոլորովին
և անբեղ։

Հիսուսը չէ։
Ավելի ջահել ու ավելի նրբին՝
նման չէ սրբի։
Մոտենում է։
Կոմերիտական է դառնում.
առանց գլխարկի է և առանց մուշտակի,
փաթթաններ ունի
և ֆրենչ ունի հագին։
Մերթ ձեռքերը թափահարում է այնպես,
կարծես միտինգում լինի.

և մերթ ծալում է, կարծես
աղոթում է հիմի։
Տղան քայլում է բամբակի վրայով,
ձյունն ասես լինի բամբակ.
բամբակը՝ ոսկեզօծ.
կա՞ ավելի տափակ բան։

Բայց տխուր է,
տխուր է այնքան,
որ ուզում ես հալվել
ռոմանսում գնչուական։

**Ռոմանս**

Հայացքը վերջալույսին հառած,
տղան քայլում էր
ու քայլում,
իսկ վերջալույսը դեղին էր չտեսնված,
Նույնիսկ ձյունն էր դեղնել
Տվերսկայա ուղեկալում։
Քայլում էր
և հանկարծ
կանգնեց ինչպես արձան.
ձեռքերի պողպատը
մետաքս դարձավ։
Տղայից այն կողմ, հորիզոնի գծից՝
աչքերը հառած վերջալույսն է նայում.
ձյունը ճռռում է,
հոգերը ջարդում.
ինչո՞ւ,
ինչի՞ համար,
ո՞ւմ։
Խուզարկում է տղային
գող-քամին,
նրա ձեռքին է թուղթը տղայի.
և քամին զանգում է
Պետրովյան այգուն.
— Մնաք բարով...
Կներեք...
Վերջ եմ տալիս...

**Ի՞նչ արած**

Տեսեք մի,
նման է ինձ շատ,
ընկնում է ջուրն ու
հանում բաճկոնը թաց.
ի՞նչ արած,
ընկերներ,
եղել է ավելի վատ.



յոթ տարի նա
այս կամրջից նայել է ցած։
Ջափսն իրենը չի,
չի լինում հագին։
Սապնվել չի կարող.
դողում է տենդագին։
Շող-ածելիով, սառցե հայելում
մազոտ մռութն ու թաթերն է սափրել...
Գրեթե այսպես,
և ձևով այդ նույն,
վազում եմ՝
մաքառման հասցեներ տարբեր։
Նախ՝
Պրեսնյա...
ետնաբակերով
այնտեղ է ձգում
բույնն ընտանեկան.
իսկ իմ հեռվից
գալիս են մեկ-մեկ
քույր ու եղբայրներ
համառուսական։

**Ամենքի ծնողները**

Վոլոդյա, եկա՞ր,
Մենգին հասա՞ր...
Ի՞նչ ուրախություն,
աստված իմ, ի՞նչ բախտ...
Նախասենյակում
դեռ մութ է, խավար,
իսկ լույս սենյակում
ծամածռվում են դեմքերն հարազատ։
Այդ ի՞նչ ես հագել,
ի՞նչ է սա,
աստված,
այդ ի՞նչ կարմիր է,
օձիքդ շուտ բաց։
— Կարևոր չէ, մայրիկ, կլվանամ տանը.
հիմա ես ջրից
հարուստ եմ շատ։

*Հարազատներս, սիրելիներս,*
*դրանում չէ՛ բանը,*
*չէ՞ որ ինձ սիրում եք,*
*սիրո՞ւմ եք*
*հաստա՞տ...*
*Դե լսեցեք,*
*մորաքույր,*
*մայրիկ, քույրե՛ր,*
*հանգցրեք տոնածառը,*
*փակեք դուռը տան.*
*ես ձեզ կուղեկցեմ... կգնաք ուղիղ...*
*Հենց հիմա կգնանք,*
*կվերցնենք ամեն բան։*
*Մի՛ վախեցեք... հեռու չէ,*
*ընդամենը 600 մղոն է չնչին,*
*մի ակնթարթում կթռչենք,*
*նա այնտեղ է,*
*կսլնենք ուղղակի կամրջին։*
*— Վոլոդյա,*
*սիրելի՛ս,*
*հանգստացիր։*
*Բայց ես*
*պատասխանում եմ նրանց*
*տանու*
*այդ*
*ծվծվոցին.*
*— Ուրեմն սերը*
*փոխում եք*
*թեյո՞վ,*
*սերը փոխում եք*
*գուլպա*
*կարկատելո՞վ։*

**Ճանապար-**
**հորդություն**
**մայրիկի հետ**

*Ոչ թե դուք, ոչ թե մայրիկը՝*
*Ալյանդրա Ալեքսեևնան,*
*ամբողջ տիեզերքն է*
*ընտանիքով լցված.*
*Նայեցեք,*



*հալարավոր կայմեր կան,*
*Ծղերի սեպը Գերմանիայի մեջ է խրված։*
*Մայրի՛կ,*
*իջեք ցած,*
*մենք արդեն հասել ենք Շթեթին,*
*հիմա Բեռլին ենք սլանում,*
*իսկ հիմա մոտորը անքալով,*
*ձեզ դեպի Փարիզ,*
*Բրուքլինյան կամուրջ՝*
*Ամերիկա է տանում։*
*Սահարա։ Այստեղ էլ նեգրիտոսուհու հետ*
*գանգուր*

*թեյ է լակում նեգրիտոսն իր ընտանիքում։*
*Դուք կարող եք փետրաբարձի նման*
*տրորել և՛ կամք, և՛ քար.*
*նույնիսկ գունդուկծիկ կդառնա ձեր եռանդի*
*առաջ կոմունան։*

*Հոկտեմբերը դղրդաց՝*
*պատժող, արդարադատ.*
*դուք նրա հրեղեն թևի տակ հիմա*
*նստել եք ձեր աման-չամանով հիմար։*
*Դե ի՛նչ, սարդային մաղերը մանրիկ*
*ցցով չե՞ս սանրի։*
*Ջքվիր տո՛ւն, հարազատ դու վա՜յր,*
*մնաք բարով... սանդուղքով սլանում եմ*
*գլխիվայր։*

*Ինչո՞վ ինձ կարող է օգնել մի ընտանիք,*
*ուր ճտի սեր կա միայն և սեր գոթանի։*

**Միրաժներ**
**Պրեսնյայում**

*Վազում եմ, և ի՛նչ...*
*բոլորին ի տես,*
*Կուպրինյան աշտարակի պես,*
*թևիս տակ նվերներ առած,*
*ինքս ինձ գալիս եմ ընդառաջ։*
*Կայմը փռվել է ջրերին, որպես*
*խաչելություն,*

*իսկ նավը թափում է բեռներն իր.*
*անիծվե՜ս դու, դատարկման թեթևություն։*

Իսկ հեռվում ժայռերին ցցված տներ կան,
ոչ մարդ կա, ոչ ուղեկալ։
Ձյունն անձև վառվում է, մերկ է ամեն բան.
և միայն փեղկերից այն կողմ
կայծկլտում են փշերն եղևնու.
իսկ շենքերն ինչպես արգելակներ՝
իմ դեմ են ելնում։
Ապակիների վրա, ինչպես ֆիգուրները
տիրի,
պտտվում են ստվերներն ու կանչում տուն.
Նեայից չի կտրում աչքը,
սառել է,
կանգնած սպասում է։ Կհասնի օգնություն։
Եվ ինձ նետում եմ ներս
հենց առաջին պատահած շենքից.
Նախասենյակում զառանցում է մի հարբած.
Հանկարծ թողնում է քեֆը, վազում է
դահլիճ,
դահլիճը ճչում է.
— Ա՛րջ,
ա՛րջ,
ա՛րջ,
ա՜-ա՜-ա՜-րջ...

**Թեկլա Դավիդովնայի ամուսինը ինձ և բոլորի հետ...**

Հետո ծռվելով ինչպես հարցական նշան՝
տանտերը կիսախուփ աչքերով ասաց.
— Սակայն... Մայակովսկին է սա։
Եվ տանտերն սկսեց խոսքն իր մեղրանուշ.
— Խնդրե՜մ... համեցե՜ք...
Ոչինչ, միամիտ էի... չէինք սպասում.
անսպասելի էր ուրախությունն այս,
ինչպես Բլոկն է ասում։
Կինս է՝ Թեկլա Դավիդովնան,
իսկ սա աղջիկս է, տեսեք, ինչքա՜ն է
ինձ նման,
հազիվ տասնյոթուկես է տարիքը...
Իսկ սա... դուք կարծեմ ծանոթ եք,
չունեք իմ կարիքը։



Եվ ովքեր մտել էին ծակը մկան,
Մահճակալների տակից դուրս եկան.
պահարանի տակից դուրս սողացին
երկրպագուները ձիգ,
մի խոսքով, անգույն մարդիկ.
որ գալիս են, գալիս խաղաղ թափորով,
մորուքները խճճված, փայլուն, հսկա
փորով։

Եվ մնացին կանգնած, ինչպես
կանգնած են եղել դարերում հին,
չե՜ն էլ քշել
ու չի՜ շարժվել տեղից կենցաղի ձին։
Միայն թե պահապան ոգիների և
ֆեյայի տ՛
պահապան-հրեշտակն է կանգնած՝
տնվորը, հագին գալիֆե։
Բայց սարսափելին ամենից այն է,
որ հասակով, հագուստով ու մաշկով
և քայլվածքով նույնիսկ,
երկվորյակի նման,
նման եմ ես նրան։
Ներքնակներից ելած փայտոջիլներն ամեն,
սավան ու քուրջերը մի կողմ նետած,
ողջունում են իրենց թաթիկներով ինձ։
Անգամ ինքնաեռը՝ շողշողուն, շիկնած,
գրկել է ուզում իր կանթերով։
Ճանճի կետերով նախշված
նախշ-պսակները պատի
պսակում են մեկը մեկու.
իսկ հրեշտակները իրենց շեփորներով
տուշ են նվագում։
Ձեռքին փշյա պսակ, խոնարհ գլուխ է
տալիս
Հիսուսը սիրալիր,
անգամ Մարքսը քաղքենու լուծն է
քաշում
կարմիր շրջանակում իր։

Երգում են ծտերը թառերի վրա,
խորդենին բուրմունքն իր քիթը է խոթում։
Տատիկներն,
        ինչպես որ կային
                նկարների վրա, չոքած,
պատերից իջնում են ցած.
Խոնարհվում են,
                սեպերը բացում,
        հյուրերը բոլոր՝
մեկն իր բասով,
        մյուսը՝ դիսկանտով տիրացուական.
— Շնորհավո՜ր.
            շնորհավո՜ր,
              շնորհավո՜ր,
                շնորհավո՜ր,
                  շնորհավո՜ր,
                    շնոր-
հա-
    վո՜ր։
Տանտերը
    մեկ սեղանից
            փշուրն է թափում ցած,
մեկ աթոռն է վերցնում, դնում ետ.
— Ախր ես չգիտեի...
            թե չէ մի օր առաջ...
Կարծում էի՝ զբաղված ես...
                Տանը...
                    ձերոնց հետ։

Անիմաստ խնդրանքներ

Իմո՞նք-ձերո՞նք...
        Ա-յ-յո՜...
                ա՜յ թե մարդիկ են,
սրանց չէր ճարի նույնիսկ
        վհուկը՝ ցախավելին նստած,
իմոնք-ձերո՞նք
    Ենիսեյից, Օբից
        գալիս են չորեքթաթ.
Իմ տունը ո՞րն է.



քիչ առաջ
սառույցն արած բարձ՝
լողում էի Նևայով արձակ.
Իմ տունը
պատնեշների միջև
սառույց դարձավ։
Եվ այնտեղ ահա
ես բառեր էի առնում
մերթ շողոմ, մերթ անրջուն,
մերթ մռնչացող,
մերթ քնարական, հնչուն։
Շահից
        շեղվում էի
                դեպի փառքը հավերժական.
աղաչում էի,
        սպառնում,
            խնդրում,
            ագիտացիա անում անգամ։
— Սա բոլորի համար է, չէ՞,
    ձե՜զ համար.
ասենք «Միստերիան»
                    հո ի՞նձ համար չէ,
բոլորն էլ կարիք ունեն բանաստեղծի,
մենակ իրեն համար հո չէ՞,
                իր անձի։
Ես, ասենք, արջ եմ, կոպիտ ասած,
Բայց բանաստեղծությունը պետք կգա,
ախր կաշի են քերթո՜ւմ...
Հանգից թե սատար դնեմ՝
            մուշտակն արդեն կա։
Հետո... այնտեղ՝ բուխարու մոտ
            ծխում են, այնտեղ
                խմում են սուրճ.
Հասարակ բան է,
            մի տաս րոպե...
Գուցե ծափ կտաք,
                կասեք՝ հուսա՜,

միայն թե հիմա,
միայն թե լուրջ...
Ժպտալով լսում են
անվանի խեղկատակին
ու տրորում միջուկը հացի.
Թե նրանց ես ասել, թե՝ պատին,
մեկից բացի,
որ, գինուց փափկացած,
ազդվեց հանկարծ.
— Սպասեցեե՜ք...
Սպասսս-սեցեե՜ք...
Իհարկե, հասարակ բան է...
Ես կերթամ...
Ի՞նչ են ասում...
Նա կամրջի վրա է սպասում...
Ես գիտեմ,
Կուզնեցկի մոստն է դա,
դե թողե՜ք,
թողեք ինձ հապա...
Աղմկում են շուրջը.
— Կթնկթնկա՜ էլի,
էլի թունդ հարբեց...
Ուտենք-խմենք
խմենք-ուտենք
և... սկսենք 66.
գրողի ծոցը թեորիան.
ՆԷՊ-ը
պրակտիկա է դա.
լցրու բաժակը,
մի կտոր միս տուր դրան,
է՜յ, ֆուտուրիստ,
հայդա՜...
Եվ առանց քաշվելու
ծնոտները
գործի անցան եռանդով,
ամեն մի
բաժակից հետո



սկսվեցին վեճերը պոետական,
փայտոջիլները բոլոր
բարևեցին և... ներքնակի տակ մտան։
Իրերին նստած է
փոշին դարավոր։
Իսկ նա սպասում է, հավատում, թե
շուտով...

Ես նորից խփում եմ ճակատով,
ես նորից մտնում եմ ուժով խոսքերի,
նորից գրոհում եմ և՛ այսպես, և՛ այնպես,
բայց, ավա՜ղ... խոսքերը անցնում են
հենց այնպես։

**Անսովոր բան**

Սեղմվում է բառը,
մոծակի տզզոց է դառնում.
լռում են ափսեները,
խամրում են պատերը,
պաստառները։

Եվ
օֆորտի
նրբին
գույներ են առնում։
Պատից նայում է Բեկլինը*,
որն ամբողջ մի քաղաք է դառել,
և իր մեռյալների կղզով
ամբողջ Մոսկվան է առել։
Վաղուց,
վա՜ղ վաղուց,
առավել ևս հիմա,
պարզ է ամեն ինչ էլ.
ահա
նավակում,
ուսերին սավան,
նստած է
անշարժ փոխադրիչը։
Ծովե՞ր են,
թե՞ դաշտեր,
լռությունը սրբել է

Շրշյունը նրանց.
Իսկ ծովերից այն կողմ
բարդիներն են ձգվում՝
մահացումը երկինքն ի վեր պարզած։
Ի՞նչ արած,
առաջ կգնամ,
և բարդիներն իսկույն
պոկվեցին տեղից,
քայլեցին.
Հանգստության պահապաններ
բարդիները դարձան,
դարձան միլիցիոներ,
գիշերային պահակներ անձայն։
Եվ ճերմակ Քարոնը
դարձած չորս,
փոստային
սյունաշար
դարձավ։
Ծառ չկա Այդպես մտնում են կացինը ձեռքներին,
քնածների ճակատին նշան անում,
և իսկույն
ցնդում է ամեն ինչ,
ու կացնի բութն է
միայն մնում։
Այդպես կմտնեն քնիդ մեջ
թմբուկները փողոցի,
ու կհիշես իսկույն,
որ աշխարհում
կարոտ կա,
կա անկյուն,
և անկյան հետևում՝
մեղավորը օրվա։
Պատուհանները անկյան ափով ծածկած,
խաղաթղթերի պես
ապակիներն են քաշում մեկ-մեկ,
կյանքս պատուհանների
խաղաթղթերին տված։



Թե դուրս գա ապակու քառանմեկ՝
տանուլ կտամ ես։
Միրաժների խաղանենգ մավրը լպիրշ
պատուհաններին
ցնծության բծեր է ցանել ասես։
Գիշերվա թաթերի միջից
խաղաթղթերն ապակի
փայլփլում են հաղթությամբ
վառ կրակի։
Ա՛յ թե մեծանար մարդ,
ինչպես առաջ էր,
և, բանաստեղծություն դարձած,
պատուհանից ներս թռչեր։
Ո՛չ,
խոնարհվիր
պատի խոնավությանը.
Հիմա ոչ օրերն են այն,
ոչ էլ
բանաստեղծությունը այն է։
Ցախավելներն էլ
հազվադեպ են թռչում հիմի.
և սառն են քարերն այնպես,
որ զգում ես դողը շիրմի։
Կոշիկներս հանած, թքոտելով,
ոտքս սանդուղքին եմ դնում.
աճում է ցավը սրտիս,
ոչ մի կերպ
չի հանգստանում։
Ահա այսպես,
սպանելուց հետո,
Ռասկոլնիկովը*
զանգ տալու էր եկել.
հյուրեր են անցնում սանդուղքով...
Դեպի պատն եմ նետվում,
ու պատին եմ ձուլվում...
Մեկ էլ
լսում եմ

լարեր են պնդում.
դուցե նա այդպես,
պատահմամբ նստել,
հյուրերի համար է նվագում։
Իսկ մատները
հուսահատ այնպես,
վիշտը ծաղրելով
շարժվում են անզուսպ։
**Բարեկամներ**
Իսկ հյուր-ազգականնե՞րը...
ո՞ւր են...
Դռները թևերի պես փարկվում են
միջանցքի կողերին
հարյուր անգամ.
Ճիչ-աղմուկով դեպի ինձ են գալիս
հյուրերը՝ հարբած, լակած։
Տեսնում եմ լույսի շերտեր,
ճեղքեր,
հազիվ լսվող
ձայներ.
«Անհուշկյան կարմրաթուշ է...
Կարկանդակը,
վառարանը...
Մուշտակը... օգնում է...
արդեն ուշ է...»։
Խոսքերը հնչում են ուսնստեպի ամեպով,
և նորից խոսքեր,
խոսքեր՝ ուսնստեպով։
«Ինչո՞ւ եք այդպես ուրախ...
Մի՞թե...»։ Ձուլվում եք իրար...
Նորից լույսի շերտ է ընկնում խոսքի վրա։
Խոսքե՛ր, խոսքե՛ր,
անհասկանալի՝
մանավանդ միմյանցից ասված.
խոսքեր, որ ասվում են այնպես,
առանց չարության.
մեկն այստեղ ոտքը ջարդեց,


դե ուրախանում ենք՝ ինչքան տվել է
աստված.
պարում ենք, է՛լի, մեզ համար.
Այո,
նրանց ձայնե՞րն են...
կանչերը ծանոթ են այնքա՜ն...
Ճանաչում եմ...
այդ նրանք են,
խոսում են իմ մասին։
Թղթի շրշյուն,
նոտաներ են թերթում երևի...
Դարձյալ կենացներ,
բաժակների զնգոց՝
ապակու կայծեր են թռչում բաժակների
երեսից։
Եվ էլի
խոսում են հարբած։
«Այ քեզ բա՜ն,
ասում եք,
ուղղակի մեջտեղից ճաքե՞ց
հանկարծ,
որքան էլ այդ լինի ցավալի,
պետք է ասեմ,
ոչ թե ճաքեց,
այլ՝ շթթաց»։
Եվ նորից՝
դրան շրխկոց ու կռավոց.
և նորից՝
հատակին քամրռված պարեր,
և նորից՝ հարթ ու շիկացած պատեր։
Տուստեպն է հառաչում, զնգում
ականջիս տակ։
**Միայն թե ոչ դու**
Կանգնած եմ պատի մոտ, ես՝ ես չեմ.
Թող որ կյանքս անցավ
ինչպես զառանցանք,
միայն թե չլսեմ, չլսեմ նրա
անտանելի ձայնը ես,

Թեև առօրեության տվի
օրերս, տարիներս։
Ես ինքս խեղդվում էի
այդ զառանցանքից,
որը կյանքս կերավ
տնային մուժով իր.
կանչեց,
իջի՛ր բարձր հարկից,
փողոց իջիր...
Ես փախչում էի բաց պատուհանից,
փախչում էի սիրելով՝
թեկուզ միակողմանի,
թեկուզ միայն երգով,
թեկուզ միայն քայլքով.
փայլքով թակալում ես,
և հոգիները դառնում են թակալած,
և սիրում եմ երգով՝
համր եմ արձակի մեջ.
ուղղակի չեմ կարող խոսել,
չեմ կարող և վերջ։
Բայց որտե՞ղ է իմ սիրելին,
սիրունը իմ,
որտե՞ղ է երգի մեջ,
մի՞թե դավաճանել եմ
սիրույն իմ։
Այստեղ խոստովանություն է,
ճիչ է
ամեն մի հնչյուն,
բայց երգից ոչ մի բառ
երբեք դուրս չի թռչում։
Կնետվեմ ես դեպի
քո դայլայլն ու գամման.
աչքերս սևռած քեզ,
կկանգնեմ զույգ ոտքերի վրա՝
հպարտ, առնական
ու կասեմ՝
— Տե՛ս...



Կասեմ՝
— Նայիր, թանկագինս,
այստեղ անգամ,
Երգով ջարդելով սարսափն առօրեական,
խնայում եմ
անունը քո թանկագին,
քեզ իմ անեծքներից
պահում եմ հեռու,

արի,
արձագանքիր երգիս։
Ես բոլորի մոտ արդեն եղել եմ,
եղել ամենուր,
միայն դո՛ւ կարող ես ինձ փրկել,
վեր կաց,
վազենք կամրջի մոտ,
ձեռքդ տո՛ւր։
Գլխիս խփել են այնպես,
ինչպես եզան գլխին
սպանդանոցում են խփում
մորթելուց առաջ.
Կհաղթահարեմ ինքս ինձ,
կգնամ,
մի վայրկյան և... կնետվեմ առաջ։

**Բանաստեղ-
ծության
քայլեր**

Եվ վայրկյանը այդ,
վայրկյանը վերջին,
սկիզբ եղավ
անտանելի
մի շառաչի։
Շառաչում է հյուսիսը ողջ,
շառաչ քիչ է ասել,
Օդի դողոցից,
տատանումից օդի,
զգում եմ
շառաչը կյուրան* է հասել
Սառնությունից
և զռների ձայնից,
հասկանում եմ՝

արդեն Տվերում* կլինի.
աղմուկից
թափով բացվող պատուհանի՝
զգում եմ, հասել է Կլինին*։
Հիմա էլ ամպրոպով
Ռազումովսկոյեն ջրեց,
հասավ Նիկոլաևյան կայարանը մեծ։
Ամենուր շունչն է նրա,
Իսկ ոտքերիս տակ
սանդուղքները
երերում են,
շարժվում՝
ասես նավակի փրփուրների վրա։
Սարսափը հասնում է,
ուղեղումն է արդեն,
լարում է ջղերս,
սկսում է քանդել
մինչև որ պայթում է հանկարծ,
մեխում է տեղում՝
կա՛նգ առ։
Եկել եմ
յոթ տարվա հեռվից ես,
վեց հարյուր վերստ եմ անցել.
եկել եմ ասելու.
— Ո՛չ,—
եկել եմ, որ հրաման տամ՝
— Թո՛ղ,
թո՛ղ, պետք չէ՛
ո՛չ խոսք,
ո՛չ խնդրանք։
Օգո՞ւտն ինչ,
մենակ դու ոչինչ չես կարող,
սպասում եմ,
որպեսզի այդ անեմ
սիրազրկված երկրագնդի հետ,
որպեսզի ինձ հետ գան
աշխարհի բոլոր մարդիկ։



Յոթ տարի կանգնած եմ,
երկու հարյուր էլ
կկանգնեմ ես,
ծաղրված ու արհամարհված
եկար տարիներ էլի
կկանգնեմ այսպես,
որպես երկնային արդար քավության նշան,
պիտի կանգնեմ և՛ իմ, և՛ բոլորի,
բոլորի փոխարեն,
հաշիվս կմաքրեմ բոլորի փոխարեն,
ու պիտի լամ բոլորի փոխարեն։
Ռոտոնդա
Տասնյակից ջարդվում են պատերը,
երեք, չորս հարյուր կտոր են դառնում
ինչպես Մոնմարտրի վրա բարձրանում է
ծերը,
ես սեղանի վրա եմ հասնում։
Ամեն ինչ հայտնի է՝
գրողի ծոցը.
վաղուց եմ հանել համախորդների հոգին.
պիտի կանչեմ (սա էլ նոր գործ է),
պիտի կանչեմ մատուցողին
ինչ-որ մեկին։
Տան տերը բացատրում է հարբած.
— Ուշ է.—
իսկ կանայք՝
մերկ ու լանջի կապույտ,
ծիծաղում են, քաշքշում ոտքս,
հրում են ուսս.
«Գնանք գնա,
էն իբր...
Մենք պոետիկ ենք։
Մենակ թե նման կլինե՞ր...»։
Անցնում եմ Սենայի միջով
ամբողջ հասակով մեկ
ծաղրված,
ծեծված,
մրոտված մի հերձվածող.

և բուլվարներում ճչում եմ
զինվորների շարքին.
— Շուտ անցեք կարմիր դրոշի տակ,
մի՛ մնացեք գերի.
քայլեցե՛ք,
անցե՛ք կենցաղի վրայով,
տղամարդկանց ուղեղով անցեք,
անցեք կանանց սրտերի միջով։
Այսօր առանձնապես
անզուսպ են քշում,
շա՜տ է շոգ...
Հարկավոր է թարմ օդ շնչել.
ելնեմ-գնամ,
գլուխս տամ քամուն.
անցնում են սերժանտները
սուլիչներով հնչեղ։
Դռնապանները
մայթից
մարմինն են ավլում-տանում։
Լուսաբաց։
Բարձրանում եմ Սենայի ափով ես,
Սինեմայի մթին ստվերի պես։
Դեռ գիմնազիստ՝
տեսնում էի այս ամենը,
պատից կախված էր
քարտեզը Ֆրանսիայի.
հիշողությանս վերջին ճիգով
գնում էի ես,
որ արևելքին հրաժեշտ տայի։

**Պատահական կայարան**

Թափով
առաջ եմ նետվում
և ընկնում ծանծաղուտ,
ինչ-որ բանից
կախվում են ձորձերս.
Նայեմ՝
ողորկ է
գմբեթի խնձորակի պես,



ոսկեզօծ է,
հսկա.
խնձորակի տակ զանգի ղողանջ կա։
Երեկո է։
Պարիսպների ատամները մութով
երիզվեցին,

և գագաթներ ասես,
աշտարակները Կրեմլյան
խոյանում են վեր.

ես Իվանի վրա եմ,
Իվան Մեծի.
հազիվ երևում են
պատուհանները մոսկովյան,
պատուհաններում՝ տոնածառեր։
Երգի ու ծննդյան
զանգերի ղողանջի
ալիքը խփում է
Կրեմլի կիրճին։
Յոթ բլուրներից Մոսկվային,
որպես Թերեք մի կատաղած,
Դարյալով՝ տունը
գլորում է ցած։

Մաղերս
կանգնում են բիզ-բիզ,
լարում եմ զորտի պես ինձ.
թե նահանջեմ թեկուզ մի թիզ՝
Ծննդյան սարսափն այս
կուլ կտա ինձ նորից։

**Անցյալի կրկնություն**

Ձեռքերս
խաչի պես
պարզած
աջ ու ձախ,

ես օրորվելով,
հազիվ պահում եմ ինձ ոտքի վրա,
ոչինչ չեմ տեսնում՝
գիշերն այնպես է սևացել,

ելնում է լուսինը՝
ոտքերիս տակ Մաշուկն է
սառցե։
ոչ մի կերպ չեմ կարող
ինձ ողջից պահել,
կարծես կարտոնից եմ, Վերբայից գնված։
Կնկատեն ինձ.
այստեղ ես աչքի առաջ եմ,
նայեցեք,
պինկերտոններով ողջ Կովկասն է
լցված։
Նկատեցին։
Ազդանշան են փողոց տալիս։
Եվ տափաստաններից ամբողջ
մարդկային ժապավենն է ձգվում՝
մոտիկ ընկերներ,
բարեկամներ են գալիս։
ուզում են հաշիվ մաքրել,
գալիս են մենամարտի,
գալիս են փշաքաղ,
սրված են գալիս,
ափերի մեջ թքոտելով,
գալիս են մարդիկ,
անթիվ,
անհաշիվ,
անխիղճ,
ապտակներ են տալիս։
Շուկան ձեռնոցի կրպակներով է լի,
գալիս են կանայք,
գալիս են, գալիս՝
օծանելիքներով քաղցրավուն,
շպարված,
ձեռնոցները դեմքիս են նետում
հարված առ հարված։
Լրագրեր,
համալսարաններ,
ի՞նչ եք աչք ածում,



օգնության հասեք
նետվող երկրին,
գրականությամբ և հայհոյանքներով
հարցերս լուծեք...

Եվ այսպես,
ահա,
ես սերտ ցանցի
անդամալույծ եմ։
Ձեզ համար թողեք
կեղտաջրերը ձեր,
ես չեմ խառնվում ձեզ,
թողեք ինձ հանգիստ.
Հոգին եմ ես միայն, դրում եմ երգեր։
— Ո՛չ,—
ցածից ասում են ինձ խիստ,
— դու մեր դասակարգի թշնամին ես,
մենակ դու ես այսպես,
հասա՛ր.
դե՛հ,
հասարակի փառաբանը,
արժանի համար սա,
կուրծքդ բաց արա, վախկոտ,
և փրկություն մի հուսա։

Վերջին մասը

Հեղեղից էլ ուժեղ,
ամպրոպից արագ,
հոնքերը կիտած
ուղղել են ինձ
հրացանները բոլոր
և մաուզերները, բրաունինգները՝
հարյուր մետրից,
տասը մետրից,
երկու մետրից,
և ուղղակի
կրծքիս սեղմած
կդատարկեն լիցքերը։
Թե կանգնեն էլ՝
միայն շունչ առնելու համար.

և նորից արճիճը կտեղա.
վե՛րջ դրան, խփեք սրտի՛ն,
որ նույնիսկ չդողա։
Եվ վերջապես
ամեն ինչ վերջ ունի,
և դողն էլ պիտի վերջանա։

Այն, ինչ մնացել է

Սպանդն ավարտվում է։
Հոսում է ցնծությունը։
Մարդիկ պատմելով դեպի դուրս են քայլում.
միայն Կրեմլի վրա
կարմիր դրոշի պես
պոետի ծվեններն են փայլում։
Այո՛,
լիրիկական է
դարձյալ երկինքը։
Զարմացած նայում է
աստղը երկնային,
Մեծ Արջը ինքը.
ինչո՞ւ։
Ուզում ես պոետների արքա՞ լինես...
Լավ չէ՞ Արարատ-դարերի միջով,
երկնի հեղեղով անցնել
Նոյան տապանի պես։
Աստղաթիրից,
որպես Մեծ Արջի եղբայրը,
տիեզերքով մեկ
կգցեմ ձայնս...
Շուտո՛վ,
շուտո՛վ,
շուտո՛վ...
Դեպի հեռո՛ւն,
ավելի սեռուն.
արևից փայլում են սարերը,
մառույցից ժպտում են օրերը։



## ԽՆԴՐԱԳԻՐ . . . . .-ԻՆ
(Խնդրում եմ, ընկեր քիմիկոս,
ինքներդ լրացրեք)

Տապա՛նն է գալիս։
Լույս տվեք այստեղ։
Նավամատույց։
Է՛յ,
գցիր ճոպանը ինձ։
Եվ ուսերիս վրա
զգացի տեղնուտեղ
քարերի ծանրությունը
պատուհանի։
Արեգակն իր կրակով
խմեց ջրհեղեղի գիշերը մութ։
Իմ օրը
հանդիպում եմ ես
շոգին,
պատուհանի մոտ։
Կիլիմանջարոն է նայում
գլոբուսից միայն,
Աֆրիկական քարտեզից՝ Քենիան։
Գլոբուսն իր մերկ գլխով։
Ես վշտից գալարվում եմ՝
հենված գլոբուսին։
Աշխարհը կուզենար
այդ կույտի մեջ վշտի
կրծքերը գրկել
իսկական լեռների։
Այնպես կուզենայի
ես՝ կոմունիստ-արջս,
հիմա հեծկլտալ,
որ բևեռներից բոլոր ջղերով
հոսեր լավան քարքարոտ ու տաք։
Իմ հայրը
տոհմական ազնվական է,
Նուրբ է կաշին իմ ձեռքերի.
բանաստեղծությամբ էլ

գուցե
օրերն իմ կլանեմ,
այդպես էլ չտեսած դազգահը խառատի։
Բայց ամբողջ իմ շնչով
տրոփյունով սրտիս,
իմ ձայնով
սարսափից ցցված մազերիս
ամեն մի ծայրով,
անցքերով քթիս,
աչքերիս մկանով
գազանային կրճտոցով ատամներիս,
Հոնքերիս ցասման կույտերով,
ողնիսիս մաշկիս,
բառացի՝ տրիլիոն ծակոտիներով,
ծակոտիներովս բոլոր,
աշնանը,
ձմռանը,
գարնանն ու
ամռանը,
քնի մեջ
թե արթուն,
չե՛մ կարող տանել,
ատո՜ւմ եմ,
ատո՜ւմ
այդ ամենը։
Ամենը,
ինչ մեր մեջ
անցյալի ստրկությամբ է կերտված,
ամենը,
որ մանրուքի պարանով
նստել է
և կենցաղում տեղ է նստվածքով
նույնիսկ կարմրադրոշ մեր շարքերում։
Ես Հաճույք չեմ պատճառի,
որ տեսնեք
թե ինչպես եմ սպիտակել ես լեզվից Հանում։
Իմ տաղանդի Հոգու Համեստության Համար



չեք երգի շուտով՝
ինձ դանակով...
կարելի է անկյունից,
Դանտեսներն իմ ճակատին
նշան բռնելու չեն.

չորս անգամ կծերանամ՝
չահելացած նորից

դագաղիս կՀասնեմ մինչև։
Որտեղ էլ որ մեռնեմ՝ կմեռնեմ երգելով,
որ անկյունում էլ թե ընկնեմ մի օր,
գիտեմ,
արժանի եմ նրանց Հետ պառկելու,
որ պառկած են
դրոշի տակ բոսոր։
Բայց ինչի Համար էլ ընկնես,
մաՀը մաՀ է էլի,

սարսափելի է չսիրելը,
չՀամարձակվելն՝ աՀռելի։
Ես բոլորի Համար կգնամ գնդակի,
դանակի կգնամ բոլորի Համար,
իսկ ինձ Համար ե՞րբ,
իսկ ի՞նչ ինձ Համար։
Մանկությանս մեջ գուցե,
խորքերում էլի
մի տաս օր գտնեմ
մի կերպ տանելի։
Բայց ինչ ուրիշներինն է,
ի՛մը լիներ, ա՛յ։

Այդ չկա։
Տեսնո՞ւմ եք—
չկա այդ։
Հավատացի թե անդրշիրիմին՝
Հեշտ էր փորձնական մի զբոսանք,
Հերիք էր
ձեռքը երկարել,
և գնդակն

իսկույն
դեպի էն կյանք
շառաչուն ուղի կգծեր։
Ի՞նչ անեմ,
եթե ես,
ամբողջովին,
սրտիս ամբողջ չափով
կյանքին այս,
այս աշխարհին
հավատում եմ
ամբողջ իմ
հավատով։

**Հավատ** Թող ինչքան ուզում են
սպասումներն երկարեն,
պարզ տեսնում եմ,
հալյուցինացիայի պես պարզ.
այնքան պարզ,
որ թվում է,
թե հանգից այս պոկվեմ,
մի հրաշք կյանք կընկնեմ
տողի հետ վազեվազ։
Ա՞յս է,
թե՞ այն է,
ե՞ս հարցնեմ պիտի։
Տեսնում եմ պարզ,
մինչև մանրուքը վերջին.
օղը՝ օղի մեջ խրված,
ինչպես քարն ի քարոց,
անմատչելի բոլոր
որդերին ու մանրուքին,
ճանաչվում է
դարերով բարձրացած
մարդկային հարության մի
արհեստանոց։
Ահա նա,
մեծաճակատ
քիմիկոսը լուռ,



փորձի առաջ՝
ճակատը կնճռոտած։
«Ամբողջ աշխարհ»
գիրքը։
Անուններ է փնտրում.
քսաներորդ դար։
Հարություն տանք՝ ո՞ւմ։
— Մայակովսկին ահա...
փնտրենք դեմքեր ավելի վառ,
այնքան էլ գեղեցիկ բանաստեղծ չի,—
իսկ ես կճչամ,
ահա այս
էջից այսօրվա.

— Հարություն տուր,
լսո՞ւմ ես,
էջերը մի՛ թերթիր։

**Հույս** Սրտիս մեջ
արյուն լցրու
մինչև երակը վերջին,
ուղեղ դիր գանգիս մեջ։
Ես չապրեցի իմ կյանքը երկրային,
երկրի վրա
չսիրեցի մինչև վերջ։
Հասակ ունեի ես
գազ ու կես.
իսկ այդքանն իմ ինչի՞ն էր.
նման գործեր կաներ ճճին էլ։
Գրիչ էի ճռռացնում սենյակում՝
կռացած մատյանիս,
ակնոցներով հպված պատյանիս։
Ինչ ուզում եք, ձրի կանեմ ձեզ համար—
մաքրել,
լվանալ,
հսկել,
ավլել,
վազվռտուք.

ես կլինեմ ձեզ մոտ.
նույնիսկ շվեյցար,
շվեյցարներ ունե՞ք դուք։
Ուրախ եմ եղել ես,,
բայց ի՞նչ օգուտ,
երբ նստել է վիշտը և չի անցնում։
Հիմա կրճատցնելու
և գրիչներս համար են
մարդիկ միայն
ատամները թափում։
Ծանրություն և վիշտ—
լինում է ինչ ասես.
կանչեցեք,
պետք կգա
կատակն էլ հիմարի.
բանաստեղծության գրախոսությամբ
կզվարճացնեմ ես
Եվ շարադներով հիպերբոլայի։
Սիրել եմ ես...
շարժել քարերը հինը։
Ցա՞վ է տալիս։
Ոչի՜նչ...
Հաճախ ցավն էլ
թանկ է, լինում մարդուն։
Գազաններ էլ եմ ես սիրում—
Թողեք ես նրանց պահակ կլինեմ,
գազաններ
ունե՞ք
դուք։
Սիրում եմ գազաններ ես։
Հենց մի շուն եմ տեսնում,—
փուռի մոտ մեկը կա,
ամբողջովին քոս է,—
պատրաստ եմ
սեփական թոքերս հանելու.
Թանկագինս, կեր
չեմ ասի ափսոս է։



### Սեր

Գուցե,
գուցե երբևէ
նա էլ,—
նա գազաններ սիրում էր,—
կմտնի այգի,
կանգնի ծառուղիներով
կենդանաբանական—

ահա այսպես,
ինչպես սեղանիս նկարի վրա՝
ժպիտը դեմքին։

Նա գեղեցիկ է։
Նրան երևի
հարություն կտան։

Երեսուներորդ
դարը ձեր
կանցնի սիրտ մաշող
մանրուքի երամներից.
Կլրացնենք մենք
այսօրվա կիսատ թողածը
անհամար գիշերներով
աստղալից։
Հարություն տուր գոնե
նրա համար, որ ես,
որպես պոետ,

մի կողմ նետած
անհեթեթությունն առօրյայի,
սպասեցի քեզ.

Հարություն տուր
դրա համար գոնե,
հարություն տուր,
ապրել եմ ուզում ես,
որ չլինեն սերեր-աղախիններ՝
ամուսնության,
տափանքի,
հացի,
անկողինն անիծելով,
թախտից ելած,

որ ամբողջ տիեզերքով սերն անցնի։
Որ վշտով անցնող
օրը մեր
չմուրանք ձեռքներս պարզած։
որ առաջին
կանչին՝
— Ընկե՛ր,—
Հողագունդը դառնա։
Որ չդառնանք զոհը
սենյակ-ծակուռների։
Որ Հարազատներ
լինեն
ինձ Համար՝
Աշխարհը գոնե
Հայր լիներ ինձ,
Երկրագունդը գոնե
լիներ մայր։
(1922—1923)

# ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

Ռուսաստանի կոմունիստական
կուսակցությանն եմ նվիրում

Ժամանակն է,
սկսում եմ
Լենինի պատմությունը։
Բայց ո՛չ նրա Համար,
որ չկա
այլևս վիշտ,
Ժամանակն է,
քանզի
խոցող տխրությունը
դարձել է Հստակ
և գիտակցված ցավ։
Ժամանա՛կ,
լենինյան լոզունգները
փոթորկիր դու նորից։
Միթե մե՞նք
պիտի թափենք
արցունքի գուբեր։
Լենինը
Հիմա էլ ողջ է
բոլոր ապրողներից։
Մեր ուժը,
մեր զենքը
և գիտությունն է մեր։

Նավակներ են մարդիկ՝
թեև ցամաքում։
Եվ քանի
ապրում ենք
կյանքը մեր,

կպչում են
շարունակ
կողքերից մարդու
ամեն տեսակ
կեղտոտ
խեցիներ։
Իսկ հետո,
ճեղքելով
հողմը կատաղի,
նստում ես տաքանալու
արևի տակ
և մաքրում
կանաչ մորուքը ջրիմուռների
ու մեդուզաների
մորեգույն լորձունքը տաք։
Ես
ըստ Լենինի եմ
մաքրում ինքս ինձ,
որպեսզի լողամ
հեղափոխության հեռուն։
Այնպես եմ վախենում
անթիվ այս տողերից,
ինչպես կեղծիքից ես
մանկուց վախենում։
Շողացնում են գլխի տեղ
պսակիկը հին.
ես տագնապում եմ՝
չծածկեն այն՝
իսկական,
իմաստուն
և մարդկային
վիթխարի ճակատը
լենինյան։
Վախենում եմ
թափոր
ու դամբարաններ,
մեծարանքների



սահմանված կարգ-սատատուտը
ողողեն
օծյուղով քաղցր ու մեղցր՝
լենինյան
պարզությունը։
Դողում եմ նրա համար
աչքի-լույսի պես,

որ
կոնֆետային
սիրունությամբ չզրպարտվի։
Քվեարկում է սիրտը՝
գրել պարտավոր եմ ես.
մանդատով պարտքի։
Ողջ Մոսկվա՛ն։
Սառցակալ գետինը։
դողում է դղրդյունից։

Գիշերվանից
խարույկների մոտ
սառած մարդիկ, կյանք, տե՛ս։

Ի՞նչ է արել նա։
Ո՞վ է
և որտեղի՞ց։

Ինչո՞ւ են
նրան
մեծարում այդպես։
Մտքից դուրս քաշեցի
խոսք խոսքի հետևից,

ո՛չ մեկին
չեմ ասի՝
տեղդ նստի՛ր։
Ի՞նչ աղքատիկ է
աշխարհի
խոսքի արհեստանոցը։
Որտեղի՞ց վերցնել
բառն հարմար ու ընտիր։
Շաբաթը
յոթն օր

ունենք մենք,
օրը
տասներկու ժամ է։
Մեզնից ավել
հազիվ թե ապրենք։
Ներողություն չգիտե
մահը։
Իսկ թե վատ է
ժամերի բանը,
փոքր են
օրացուցային չափերը,
ասում ենք՝
«դարաշրջան»,
ասում ենք՝
«է՛րա»։
Մենք
քնում ենք
գիշերը,
ցերեկն սկսում
արարքներ գործել։
Սիրում ենք
մեր ջուրը
մեր սանդում
ծեծել։
Իսկ թե մեկը
բոլորի փոխարեն
կարողանում է
երևույթների ընթացքը տալ,
ասում ենք՝
«մարգարե»,
ասում ենք՝
«հանճար»։
Մենք
չունենք հավակնություններ,
չեն կանչում՝
չենք էլ խցկվում,
թե կնոջը



դուր ենք գալիս
մեր,
անսահման
գոհ ենք մնում։
Իսկ թե,
հոգով ու մարմնով մեկ,
մեզ վրա է քշում
մի ոմն
մեզնից տարբեր,
ասում ենք՝
«տերունական տեսք»,
զարմանում՝
«աստվածային պարգև»։
Ասում ենք,
և ստացվում է
ո՛չ հիմար, ո՛չ խելացի։
Ծխի պես կախվում են
խոսքերը և լողում։
Նման կեղևներից
ոչինչ դու չես կճպի.
Ձեռքերիդ,
գլխիդ համար՝
և ո՛չ մի զգացում։
Էլ ինչպե՛ս
Լենինին
չափել նույն արշինով։
Չէ՞ որ
ամեն ոք
աչքով տեսավ կարգին՝
այդ «էրան»
հանգիստ ներս մտավ դռնով,
առանց անգամ
գլուխը
դիպցնելու շրջանակին։
Մի՞թե Լենինի մասին
նույնպես
երկարածոր՝

«Առաջնորդ
ողորմությամբն աստուծո՞»։
Թե
լիներ նա
աստվածային ու արքայական,
ես,
լցված ցասմամբ,
ինձ չէի խնայի,
կկանգնեի
թափորների երթին
հակառակ,
ընդդեմ
մեծարանքների և բազմությունների։
Բայց ամուր են
դագաղի մոտ
քայլերը Ձերժինսկու։
Հիմա
Չեկան
կարող էր
իր պոստերից հեռանալ։
Միլիոնավոր աչքերից,
և աչքերից
իմ երկու,
լոկ արցունքի շիթերն են
այտերիս սառած։
Պաշտոնական մեծարանքները
նորություն չեն
աստծուն։
Ո՛չ։
Այսօր,
սի՛րտ իմ,
իսկական վշտով քարացիր։
Մենք
թաղում ենք
ամենաերկրային մարդուն՝
աշխարհով
անցած



բոլոր մարդկանցից։
Նա երկրային է,
բայց ո՛չ նրանցից,
ովքեր
աչքը
տնկում են
իրենց տաշտակին։
Ողջ
երկրագունդը
ընդգրկելով մեկեն,
տեսնում էր
այն,
ինչ ծածկված է ժամանակի տակին։
Նա
ճիշտ այնպիսին է,
ինչպես ես
և դուք,
միայն
միգուցե
շուրջը աչքերի
մտքերը մեզնից շատ են
մաշկը կնճռոտում,
և շրթունքներն
ավելի ծաղրող
ու ամուր են մեզնից։
Ո՛չ սատրապային ամրություն,
որ հաղթակառք նստած,
տրորում է
քեզ,
ցնցելով սանձերը։
Նա
ընկերոջ հանդեպ
լի էր
մարդկային քնքշությամբ։
Նա
թշնամու հանդեպ
երկաթից էլ

կարծր էր։
Թուլություններ
ունեի,
որ ծանոթ են և մեզ,
մեզ պես
հաղթահարում էր հիվանդությունները,
երբ տկար էր։
Ասենք,
ինձ՝ բիլիարդը—
աչքս եմ վարժեցնում ես,
Նրան՝ շախմատը—
առաջնորդներին
դա ավելի օգտակար է։
Եվ շախմատից
անցնելով
թշնամուն իրական,
մարդկանց շարք հանելով
պեշկաներին երեկվա,
հաստատեց
դիկտատուրա
մարդկային-բանվորական,
կապիտալի
բանտային տուռայի վրա։
Ե՛վ նրան,
և՛ մեզ
միևնույն բանն է թանկ։
Հապա ինչո՞ւ,
նրանից հեռու
կանգնած,
ես կյանքս
նրա
լոկ մի շնչի համար
կտայի,
հիացմունքից խենթացած։
Ինչո՞ւ միայն ես։
Ես ավելի լա՞վ եմ,
թե ինչ։



Թեկուզ մի էլ կանչիր,
միայն բերանդ բաց,
Մեզանից ո՞վ,
գլխապատառ,
գյուղերից, հանքահորից
չի նետվի առաջ։
Օրորվելով,—
ասես խմել եմ
չափից շատ վիշտ ու գինի,—
բնազդորեն
պաշտպանվում եմ
գծերից տրամվայի։
Ո՞վ կըսգար
չնչին
իմ մահը
հիմի,
թաղված վշտում
ահա այս
անսահմա՜ն մահի։
Անցնում են դրոշակներով
ու այնպես։
Ասես
Ռուսաստանը
նորից
դարձել է թափառական։
Եվ Սյունազարդ դահլիճը
ցնցվում է ամբողջապես
ոտքերի տակ։
Ինչի՞ համար։
Ի՞նչ պատճառ կա։
Խռպոտել է
հեռագրատունը
վշտի բվվոցից։
Ձյան արցունքներն են
կախվել
դրոշների
կարմրած կոպերին։

Ի՞նչ է արել նա,
ո՞վ է
և որտեղի՞ց
Մարդն այդ
ամենամարդկային։
Կարճ է,
և մինչև վերջին ակնթարթը
Հայտնի է
մեզ
կյանքը Ուլյանովի։
Բայց ընկեր Լենինի
բազմավաստակ կյանքը
պետք է գրել
ու պատկերել նորից ու նորից։
Առաջին լուրերը
Լենինի մասին
հասնում են քեզ ու ինձ
Երկու հարյուր տարվա
հեռու-հեռուներից։
Լսո՞ւմ եք,
ճեղքելով
դարերը հին,
Կլայեկած
ու երկաթե,
Մեզ է հասնում
Բրոմլեյ և Գուժոնի*
նախապապի
առաջին շոգեքարշի
ձայնը կերկեր։
Նորին մեծություն
կապիտալը,
անպսակ
և անթագակիր,
Հայտարարում է
նվաճված՝
ուժը ռամիկի։



Քաղաքը
գոփում էր,
թալանում անխնա,
տաղացնում
դրամարկղների որովայնը,
իսկ դազգահների մոտ,
նիհար, կորաքամակ,
կանգնում էր
բանվոր դասակարգը։
Եվ արդեն
սպառնում էր,
ծխնելույզները երկինք պարզած։

— Մեզնո՛վ
սալարկեք ուղիները,
որ դեպ ոսկին են տանում։

Մենք կծնենք,
կուղարկենք,
կգա երբևէ նա՝

մարդը,
մարտիկը,
պատժիչը,
վրիժառուն։—

Եվ արդեն
խառնվում են
ամպեր ու ծուխ,

ինչպես
շարքայիններ
միևնույն գնդի։

Ծուխը
ամպերն է
ծածկում,

երկինքը
երկտակվում է անդին։
Ապրանքներն են
աղքատության մեջ
աճում ժամ առ ժամ։

Դիրեկտորը,
ճաղատ սատանան այդ շիլ,
Թռցնում է հաշվիչը,
փնթփնթում.
«Ճգնաժա՛մ»,
և կախ տալիս բառը.
«Վերջնահաշիվ»։
Ցողվում է
քաղցրավենուն
կեղտը ճանճերի,
հացամբարներում
փտում է,
ինչքան կուզես՝
հաց,
իսկ ցուցափեղկերի մոտ
բոլոր Ուլիսեսների*
քարշ է գալիս
գործազրկությունը՝
փորը ներս գցած։
Եվ մռունչն էր
հետնախորշերի արգանդից լսվում,
մանկական լացիկը
խլացնելով.
— Աշխատանքի համար
կամ զենքի,
ա՛ռ
ափերըս զույգ։
Արի՛ դու,
պաշտպա
և հատուցող։
Էհե՛յ,
ո՛ւղտ,
հայտնագործիչ գաղութների։
Էհե՛յ,
զորաշարքեր պողպատե նավերի։
Առա՛ջ,
դեպի անապատները



հրից էլ հրաշեկ։
Թղթից էլ սպիտակ
փրփուրը փրփրացրեք։
Սկսում են
սևով կարկատանվել
օազիսները
արմավյա գրգանքների։
Ահա,
ոսկեփայլ պլանտացիաներն ի վեր
լսվում է
բառաչյունը
գանակոծ նեգրի.
— Ու-ու-ու-ո՜ւ,
ու-ու-ո՜ւ,
Նեղոս իմ, Նեղոս,
ճողփա
և նետիր
սև օրերը
դուրս։
Որ ավելի սև լինեն,
քան երազում ես,
և որ հրդեհ լինի
կարմիր այս արյունից էլ,
տե՛ս։
Որպեսզի սուրճի մեջ այս՝
եռման ու տաք,
խաշվեն ցմփորները՝
սև և սպիտակ։
Ամեն մի
ձեռք բերված
փղային ժանիք
խրիր նրա մսի մեջ,
սրտի մեջ գամիր։
Ծառների համար թեկուզ,
արյունը չհոսի
թող զուր,
պաշտպա՛ն արևադեմ,

դո՛ւրս լողա,
դո՛ւրս։
Մեռնում եմ՝
եկել տանում է
մահերի սառնամածն ինձ ուրս։
Հիշիր
այս նզովքըս,
Նեղո՛ս,
իմ Նեղո՛ս։
Ջյուներում Ռուսաստանի,
Պատագոնիայում տենդահար
հյուծող
դազգահ է շարել
ժամանակն անճամանք։
Քարե լեշերը
Իվանովո-Վոզնեսենսկում
չաստուշկաներն են
խռովում,
անհանգիստ անում.
«Հե՜յ, գործարան, գործարան,
աչքերով դեղին։
Ժամանակն է կանչում նոր
Ստենկա Ռազինին։»
Թոռներս
հարց կտան.
— Ի՞նչ բան է կապիտալիստ։
Ոնց մանուկներն
հիմա.
— Ի՞նչ ասել է
ու-տի-կա՜ն...
Գրում եմ
մի թերթ,
թողնում թոռներիս
կապիտալիզմի
պատկերը տոհմական։
Կապիտալիզմը,
ջահել իր հասակում,



ոչինչ,
գործարար էր լոթի։
Առաջինն էր աշխատանքում,
չէր վախենում,
թե գործի մեջ
կրծկալն իր
կըյուղոտվի։
Ֆեոդալական տրիկոն
նեղ էր գալիս նրան։
Խցկվում էր
ոչ պակաս,
քան հիմա են խցկվում։
Հեղափոխություններով
ծաղկեց
կապիտալիզմն
իր վաղ գարնան
և նույնիսկ
«Մարսելյոզ» էր երգում։
Խորհեց
ու հնարեց
մեքենա։
Մարդիկ էլ՝
նրան ենթարկվեն թող որ։
Ողջ հողագնդում
բազմացրեց նա
անհաշիվ
բանվորական մանուկներ
աշխատավոր։
Կայսրություններ
խժռեց,
կոմսություններն էլ հետը,
իրենց թագերով
և առյուծներով։
Տողեց,
ինչպես բիբլիական եզ
կամ կով,

լիզեց շրթունքները։
Լեզուն պառլամենտն է։
Տարեցտարի
պողպատը մկանների
թուլացավ,
ուռեց
և պարարտացավ նա,
ժամանակին
ճիշտ այնպիսին
դարձավ,
ինչպես իր մայր-Հաշվեմատյանը։
Պալատ կանգնեցրեց՝
ասես շինված չէ ձեռքո՞վ։
Նկարիչներ,—
և քանի՞սը,—
մագլցում են պատերովը։
Հատակը՝ ամպիրային,
առաստաղը՝ ռոկոկո,
պատերը՝
Լյուդովիկ XIV,
Կատո՛րզի։
Շուրջը՝
մի դեմքով,
որ կարող է
հավասարապես ծառայել
և՛ իբրև հետույք,
և՛ դեմք՝
ոստիկանությունը
հետույքադեմ։
Ե՛վ ներկի,
և՛ երգի հանդեպ
հոգին իր՝
խուլ,
ինչպես
մարգագետնի
ծաղիկները՝
կովինը։



էթիկան, էսթետիկան
և այլ հիմարություն
պարզապես․
նրա
աղախիններն են հին։
Ե՛վ դժոխք,
և՛ դրախտ
պատկանում են նրանց.
ծախում է
պառավներին
գնով շնչին
գամածակերը
խաչի տերունական
և փետուրը իսկական
սուրբ հոգու
պոչի։
Վերջապես
նա էլ
գերաճեց իրեն,
ճորտն է
աշխատում
նրա փոխարեն։
Լոկ հարստանալով,
խժռելով
և քնելով,
կապիտալիզմն ուռեց
ու թորշոմեց շուտով։
Թորշոմեց
և պառկեց
պատմության՝
դեպի խաղաղություն տանող
ճանապարհին.
մեկնվեց,
ոնց որ
սեփական մահճակալին։
Ո՛չ շրջանցել կարող ես,
ո՛չ անցնել,

միակ ելքն է՝
պայթեցնե՛լ։
Գիտեմ,
քնարերգուն
կծամածռվի դառը,
քննադատը
կնետվի
ծեծելու ինձ մտրակով.
— Ո՞ւր է հայա հոգին։
Հռետորությունն ախր
հենց դա՛ է։
Պոեզիան ո՞ւր է։
հրապարակախոսությո՛ւն է լոկ։—
Կապիտալիզմ՝
գեղեցիկ խոսք չէ բնավ,
շատ ավելի գեղեցիկ է հնչում՝
«սոխակ»,
բայց ես
նորից ու նորից
կանդրադառնամ դրան։
Տո՛ղ իմ,
ագիտատորի լոզունգի պես փողփողա՛։
Ես պիտի գրեմ
և՛ այս մասին,
և՛ այն,
բայց այժմ
ժամը չէ երգել
սիրո շաղակրատանք։
Ես
իմ ողջ
զնգուն ուժը պոետական
քե՛զ եմ նվիրում,
գրոհող դասակարգ։
Պրոլետարիատ,
անճոռնի
ու նեղ է այսօր,
ում համար



կոմունիզմը՝՝ ծուղակ է բանտի։
Մեզ համար
այդ բառը
երաժշտություն է հզոր,
որ կարող է
մեռածներին իսկ
հանել մարտի։
Հարկերը
արդեն
դողում են կծկված,
նկուղների կանչն է
բարձրանում հարկերով՝
— Մենք կխուժենք
երկնքի
կապույտները բաց։
Կանցնենք
քարակոփ ջրհորներով։
Այս թախտերից ելած
բանվորի որդին
պրոլետարիատին
կռվի կառաջնորդի—
Բուրժույի համար
արդեն
երկրագունդը փոքր է։
Եվ ձեռքով,
մատանիներից
ծանրակալած,
ձգվում է
կապիտալի լեշը
պարարտացած
բռնելու
ուրիշների կոկորդը։
Գնում են,
երկաթը
զնգացնելով ու ճնգացնելով։
— Սպանեցե՛ք։
Տեղը նեղ է

երկու բուրժուաների։—
Ամեն գյուղ՝
եղբայրական գերեզման է լոկ,
ամեն քաղաք՝
գործարան պրոտեզների։
Վերջացա՜վ։
Ծածկեցին
թեյի սեղանները։
Հաղթանակ-կարկանդակը
դրին սեղանին։
Լսեք
գերեզմանների
որովայնաձայները,
կաստանյետները հենակների։
— Կտեսնեք
մեզ
նորից կռվի զարթնումին։
Ժամանակն
այդ մեղքը
երբեք ձեզ չի ների։
Կհատուցի նա,
կգա,
կազդարարի
պատերազմ
ձեզ
և ձեր պատերազմներին։—
Աճում են
հողագնդում
արցունքի լճեր,
արյան ճահճուտները
շատ են
անանցանելի։
Եվ խոնարհվեցին
միայնակ երազողներ՝
լուծելու
ուտոպիաներ անիրակայելի։
Զարկելով կյանքին,



գլուխները ջարդեցին
ֆիլանտրոպները։
Մի՞թե
միլիոնների ուղին
ֆիլանտրոպների կածաններն են։
Եվ արդեն
կապիտալիստն ինքը
անզոր է,
այնպես է
թափ առել
նրա մեքենան.
կարգերն իր,
ինչպես դեղնած տերևն աշնան,
քշում է
ճգնաժամերի
և գործադուլների քաոսը։
— Ո՞ւմ գրպանն ենք
հոսում
որպես ոսկու լավա։
Ո՞ւմ հետ գնանք
արդյոք
և կշտամբենք ո՞ւմ։—
Աչքն է լարում
իրեն ըմբռնելու համար
դասակարգը միլիոնագլուխ։
Ժամանակը
կապիտալի
ժամերն էր
գողանում քայլ առ քայլ,
շլացնելով
պայծառությունը
լուսարձակների լույսի։
Ժամանակը
ծնեց
լենինյան
ավագ եղբայր
Կարլ Մարքսին։

Մա՞րքս։
Կանգնում է դեմդ
մի ալեհեր մարդու
նկարի շրջանակ։
Որքա՞ն է
նրա կյանքը
մեր պատկերացումներից հեռու։
Մարդիկ
տեսնում են
մարմարում ներփակ՝
գիպսի մեջ
սառչող մի ծերունու։
Բայց երբ
հեղափոխական արահետով
բանվորներն
առաջին
քայլիկն էին անում
իրենց,
օ՛, ինչպիսի՜
անհավատալի մի հնոցով
Մարքսը
իր սիրտն ու միտքը
բոցավառեց։
Ասես
ամեն մի գործարանում
կանգնած էր ինքը,
վարժվելով
անձամբ
ամեն մի աշխատանքի։
Հավելյալ արժեք
գողողների
ձեռքը
բռնեց հենց տեղում
հանցանքի։
Ուր դողում էին մարմնով,
առանց աչքերը բարձրացնելու
անգամ



մինչև գործարար-բիրժևիկի
պորտը,
Մարքսը
տարավ
դասակարգային կռվում
չախչախելու
ցուլի չափ մեծացած
ոսկեղեն հորթին։
Մեզ թվում էր,
թե մեզ
կոմունիզմի գետնախորշերը
պատահմունքի ալիքները
կնետեն միայն
[illegible]։
Մարքսը
հայտնագործեց
պատմության օրենքները,
պրոլետարիատին
դրեց
ղեկի մոտ։
Գրքերը Մարքսի
սյունակներ չեն շարվածքի,
ոչ էլ
չոր թվերի
աղյուսակներ սառը։
Մարքսը
բանվորներին
կանգնեցրեց ոտքի
և տարավ
զորասյուներով,
որ թվերից էլ գերազանց են։
Տարավ
և ասում էր.
կռվելիս պառկեցեք,
գործը՝
սրբագրումն է
մտքի հաշվարկների։

Կգա նա,
կգա
պրակտիկը այն մեծ,
կառաջնորդի
մարտի դաշտով,
և ո՛չ թղթերի։
Աղալով
վերջին աղունն իր
մտքի երկանքով
և ավարտելով
գրելիքը
մոմեղեն ձեռքով,
գիտեմ,
Մարքսը
տեսել է
տեսիլքը Կրեմլի
և կոմունայի
դրոշը
Մոսկվայի վրա կարմիր։
Անում,
հասնում էին օրերը,
ինչպես սեխ,
հասակ էր առնում
պրոլետարիատը,
մանկությունից ելնում։
Կապիտալի
ամրոցները ուղղաբերձ
ողողում են ալիքները
և փշրտում։
Ինչ-որ
մի քանի տարվա
տարածությամբ
քանի՛-քանի ամպրոպներ են
ճայթում
հարաճուն։
Ցասման աճն
ավարտվում է



ապստամբությամբ,
ապստամբության պոռթկումներից
հեղափոխությունններն են
աճում։

Բիրտ է
գազանային բնույթը
բուրժույների։
Թյերներից խոշտանգված
ողբ ու հառաչանքով,
տվերները նախահայրերի՝
Փարիզի կոմունաների,
այժմ էլ
հեծեծում են
պարսպի շրթունքներով.
— Լսեցե՛ք, ընկերներ։
Եղբայրնե՛ր, տեսե՛ք։
Վա՜յ անհատներին,
մեր փորձը ձեզ դաս։
Պայթեցրեք համատեղ։
Կուսակցությամբ զարկեք,
բանվոր դասակարգը
մի բռունցք
դարձրած։—
Կասեն.
«Մենք առաջնորդներ ենք»,
քծնողներ են
մինչդեռ։

Ճանաչիր դու
մորթին
ճառերի տակ։
Կգա
մի առաջնորդ՝
մանրուքներում էլ մեզ հետ,
հացից հասարակ,
ռելսերից շիտակ։
Խառնուրդով դասակարգերի
հավատի,

դասի,
բարբառների
ուրվի-անիվներով
աշխարհն էր շարժվում առաջ։
Կապիտալը
ոգնու պես
հակասությունների
սվինները ցցած,
աճեց
ու ամրացավ։
Կոմունիզմի
ուրվականն էր
Եվրոպայում շրջում,
հեռանում
և առկայծում հեռու-հեռվում
կրկին։

Բոլոր այս պատճառներով
Սիմբիրսկի խորքում
ծնվեց
սովորական մի մանուկ՝
Լենին։

Ես մի բանվոր գիտեի։
Անգրագետ էր ինքը։
Այբուբենի աղը
չէր ծամել անգամ։
Բայց լսել էր,
թե ինչպես է խոսում
Լենինը։
և նա
գիտեր
ամե՛ն բան։
Լսել եմ
պատմությունը
սիբիրցի մի ռամիկի.
խլել են հողը,



զենքով պաշտպանել
և դարձրել գյուղակը
դրախտ։

Նրանք չէին կարդացել,
չէին լսել Լենինին,
բայց
լենինյաններ էին
դրանք։
Տեսել եմ լեռներ,
որոնց վրա
թուփ էլ չէր աճում։
Միայն
ամպերն էին
ժայռերին
բերանքսիվայր պառկած։
Եվ հարյուրավոր վերստերի վրա
միակ լեռնցու
ցնցոտիները
լենինյան նշաններով էին
ճառագած։

Կասեն՝
դրանք ախեր են լոկ
գնդասեղի մասին։
Օրիորդները
կրում են
քմայքից չնչին։
Ո՛չ,
դա գնդասեղ չէ,
որ ծակել է շապիկը,
սի՛րտն է այրել՝
սիրով լի
հանդեպ Իլյիչի։
Դա
չես բացատրի
եկեղեցական
սլավոնական
կեռագրերով.

ոչ էլ
աստված հրամայեց
նրան՝
ընտրյա՛լ եղիր։
Քայլով մարդկային,
աշխատող ձեռքերով,
սեփական գլխով
անցավ
նա այդ ուղին։
Վերևից
մի հայացք
նետիր Ռուսաստանին՝
կապտել է գետակներով,
հատվել,
ասես
հազար մտրակ է
խաղացել մարմնին,
ասես
խարազանով է շերտավորվել, կտրատվել։
Բայց գարնան գետերից էլ
կապույտ են ավելի
կապտաբծերը
ճորտական Ռուսիայի։
Դու
կողքերից
Ռուսաստանին նայիր ու տես՝
ուր էլ
հայացքդ
գցես,
մխրճվել են
երկնքի ապակում
լեռները՝
հանքահոր,
աքսորավայր։
Բայց աքսորից էլ
ավելի ծանր
ֆաբրիկային



ստրկությունն էր կքում։
Եղել են երկրներ
ավելի հարուստ,
ավելի գեղեցիկն
ու բարեկիրթն եմ տեսել։
Բայց մի երկիր
սրանից ավելի վշտոտ՝
տեսնել
դեռևս
չի վիճակվել։
Ամեն մի հարված
այտերիցդ չես ջնջի,
չես սրբի։
Կարծրանում էր կանչը.
— Ելե՛ք
հանուն ազատության ու հողի։

Եվ միայնակ խռովարարները
ռումբին,
ատրճանակին են
պարզում ձեռքերը։

Լա՜վ է
ցարի վրա
պահունակը պարպել։
Դե, իսկ եթե՛
անիվի մոտ
միայն թող ես հանե՞լ...

Իբրև
ցարի սպանության կազմակերպիչ,
բռնվեց

Ուլյանովի եղբայր
Ալեքսանդրը
Նարոդովոլեց։

Մեկին սպանում են՝
մյուսը
եռանդով մեծ

ջանում է

գնացածներին
պատիժներով գերազանցել։
Եվ Ուլյանով
Ալեքսանդրը
կախաղան հանվեց,
իբրև
հազարերորդ շլիսելբուրգցի։
Եվ այնժամ
ասաց
Իլյիչը տասնյոթամյա,—
խոսքն այդ
ավելի հաստատ էր,
քան երդումը մարտիկի.
— Եղբա՛յր,
մենք պատրաստ ենք
փոխարինել քեզ հիմա,
կհաղթենք,
բայց կընտրենք մենք
մի այլ ուղի։—
Արձանները դիտեցեք,
տեսնո՞ւմ եք
հերոսների տեսակները։
Կանգնած է սնապարծ,
իսկ դու
մեծարի՛ր նրան, սիրի՛ր։
Ո՛չ այդպիսին,
ոնց սևագործ,
ամենօրյա սխրանքն էր
առնում
Իլյիչը
իր ուսերին։
Քեզ հետ է,
սովորեցնում է դարբնոցի բովում՝
ո՞նց անել,
որ վարձդ
հինգ կոպեկով աճի։
Ի՞նչ անես,



երբ վարպետն է
հետդ
կռվում։
Ո՞նց վարվես,
որ տերդ
տաք ջուր տալ բարեհաճի։
Բայց այդ մանրուքը չէ
նպատակի վերջում.
հաղթեցիր,
մի՛ կանգնիր գլխահակ դու
չորացած գուբի
եզերքին։
Սոցիալիզմը
նպատակն է։
Կապիտալիզմը՝
թշնամին։
Ո՛չ թե ցախավելը,
հրացա՛նն է զենքը։
Միևնույն բանը
հազար անգամ
գամում,
մեխում է նա
ծանր ականջում,
իսկ վաղը
իրար կբերի
ձեռքերը
երկու խելքի եկածների։
Երեկ՝ չորս հոգի,
այսօր՝ չորս հարյուր։
Թաքնվում ենք,
իսկ վաղը
բացահայտ կելնենք,
և այդ
չորս հարյուրը
կդառնան հազար ու բյուր։
Աշխարհի աշխատավորներին
ապստամբության կհանենք։

Մենք արդեն
չենք կանգնում
խոնարհ գլուխներով,
աշխատավորների
ցասումը
խտանում է ամպում։
Հատում է
Իլյիչի գրքույկների
կայծակներով։
Թերթ-թռուցիկների
կարկուտ է
թափում։
Զարկվում էր
Լենինին
դասակարգը մութ, անգետ,
ետ-ետ հոսում՝
նրանից
իր լույսը առած,
և աճում էր
Լենինը
դասակարգի հետ,
մասսաների
ուժով
ու մտքով ճառագած։
Եվ արդեն
իրականություն է դառնում
ցանկալի
այն,
ինչում պատանի Լենինը
երդվեց.
— Մենք
անհատներ չենք,
բանվոր դասակարգի
ազատագրման
պայքարի միություն ենք
մենք մեծ։—
Լենինիզմը



խորանում է
ավելի ու ավելի հեռուն՝
շնորհիվ
Իլյիչի
աշակերտների փորձված։
Վոլոդիմիրկայի
փոշիներում անվերջ
ու ցեխերում
ընդհատակի հերոսությունը
արյունով է
գրված։
Այժմ
շուռ ենք տվել
երկրագունդը հիմքից։
Մինչև իսկ
եթե կրեմլյան բազկաթոռներում մենք
թեք ընկած,
հանկարծ
քանիսի՜ս ականջին
դեկրետների տակից
Ներչինսկը
շղթաներով կզնգա։
Ես ձեզ
կրկին կհիշեցնեմ
հավքերի այդ ուղին։
Բանտաճաղերից դուրս՝
տրամվայների
վազքը էլեկտրական։
Ո՞վ ձեզանից,
արդյոք,
երկաթաձողերը իր
չի ճանկռել
ու չի կրծոտել անգամ։
Ջարդի՛ր
ճակատդ,
պատի քարին զարկի՛ր։
խուցը

Հետևից լվացել են,
որ հետքը կորի։
«Ծառայեցիր դու կարճ, բայց ազնիվ՝
Հօգուտ հայրենի քո հողի»։
Արդյոք
Լենինը
ո՞ր աքսորավայրում
սիրեց
այս երգի ուժը՝
սգավոր ու տրտում։
Ասում էին՝
մուժիկը
կգնա իր ճամփով,
կհաստատի
սոցիալիզմ՝
անխարդախ ու պարզ։
Ո՛չ,
Ռուսիան էլ
ծխնելույզներից
դառնում է հաղթաշեփոր։
Քաղաքը
ծխամորուքով է ծածկվել հպարտ։
Չեն հրավիրի դրախտ՝
համեցե՛ք,
տունը ձերն է էլի,—
բուրժուազիայի դիակի վրայով է
կոմունիզմի քայլը։
Պրոլետարիատն է
ուղեվարը
հարյուր միլիոն գյուղացիների,
Լենինը՝
պրոլետարների ղեկավարը։
Խոստանում է լիբերալը
կամ ճարպիկ մի էսէռիկ,
որ սիրում է
բանվորների վզին գնել
թամբը, .



Լենինը
նրա ֆրազիկներն է
պոկում
մեկիկ-մեկիկ,

որպեսզի գրքերից
շողա
ազնվական մերկությամբ իր։

Եվ պարապ խոսքերը
ավելորդ են
արդեն,—

ազատությո՛ւն,
մարդիկ եղբայրնե՛ր են որ կան,—

մենք,
Մարքսի ուսմունքով սպառազեն,
աշխարհում
միակ կուսակցությունն ենք բոլշևիկյան։
Ամերիկան ես
ճեղքում,
նստած ճեպընթացի կուպեն,

Չուխլոմայով անցնում
կամ թե,

այժմ ամենուր
աչքերիդ մեջ մխրճվում է՝
էս—կա—պե

և փակագծերի մեջ՝
մի փոքրիկ «բե»։

Այժմ
Պուլկովոն
որսում է Մարսեր,

պրպտելով
երկնային արկղիկը անվերջ։
Բայց աշխարհի համար
հասարակ այդ
տառը

հարյուր անգամ ավելի գեղեցիկ,
փառահեղ
ու պայծառ է.

խոսքերը
        մեզ մոտ,
                ամենակարևորներն անգամ,
սովորույթ դառնալով,
                        խունանում են, ոնց հագուստ։
Ուզում եմ
        հարկադրել նորից փայլելու—
Կ ո ւ ս ա կ ց ո ւ թ յ ո ւ ն—
                մեկ հատիկ խոսքը վսեմագույն։
Միավո՞ր։
        Ո՞ւմ է հարկավոր նա։
Ձայնը նրա
        բարակ է ծվոցից անգամ։
Ո՞վ կլսի այն։
        Գուցե կինդ միայն։
Այն էլ եթե
        մոտ է,
                չի գնացել շուկա։
Կուսակցությունը
                մրրիկ է
                        մի միասնական,
մամլված
        բարակ ու մեղմ
                        ձայներից.
նրանից
        պայթում են
                ամրոցները թշնամական,
ինչպես
        թմբկաթաղանթը՝
                        հրանոթային համազարկից։
Վատ է մեկի բանը,
                վայը տարավ մեկին,
թե որ մենակ է։
                Մարտիկ չէ միավորը։
Ամեն մի ուժեղ մարդ
                        տեր է նրա գլխին,



մինչև իսկ թույլերը,
                եթե երկուսով են։

Իսկ թե
        խմբվեն կուսակցության մեջ
                        ջահել, պատանի՝

անձնատո՛ւր, թշնամի,
                պառկի՛ր անշարժ,
                        և վե՛րջ։

Կուսակցությունը
                ձեռք է միլիոնմատնանի,

սեղմված
        կործանիչ
                մի բռունցքի մեջ։
Միավորն անմտություն է,
                միավորը՝ ոչնչություն.

մեկը,—
        եթե նույնիսկ
                շատ է նշանավոր,—

չի բարձրացնի
        հասարակ
                մի գերան հինգվերշոկանոց,

էլ ուր մնաց թե՝
                հինգհարկանի մի տուն։
Կուսակցությունը՝
                ուսեր են միլիոնավոր,
սեղմված մեկմեկու
                ամուր և պիրկ։
Կուսակցությունը՝
                կառույցներ
                        կխոյացնենք երկինք,

իրար
    բռնելով
        և բարձրացնելով։
Կուսակցությունը
                ողնաշարն է բանվոր դասակարգի։
Կուսակցությունը

մեր գործի անմահությունն է,
Կուսակցությունը
միակն է,
որ ինձ չի դավաճանի։
Այսօր գործակատար,
իսկ վաղը
կայսրություններ եմ ջնջում քարտեզից այն։
Ուղե՛ղը դասակարգի,
գո՛րծը դասակարգի,
ո՛ւժը դասակարգի,
փա՛ռքը դասակարգի՝
ահա թե՛ ինչ է կուսակցությունը։
Կուսակցությունն ու Լենինը
երկվորյակ եղբայրներ են,
ո՞վ է
մայր-պատմության համար
թանկ ավելի։
Մենք ասում ենք Լենին,
հասկանում ենք կուսակցություն,
ասում ենք կուսակցություն,
հասկանում ենք
Լենինին։
Դեռևս
լեռնանում են
գլուխները թագակիր,
բուրժուաներն են
սևին տալիս,
ոնց ագռավները ձմռան,
բայց արդեն
այրումը
լավայի՝ բանվորական
կուսակցության խառնարանով
ժայթքում է գետնի տակից։
Հունվարի ինը։
Վե՛րջ գապոնշչինային։
Ընկնում ենք,
հնձված ցարական արճիճով։



Վերջացած է
ողորմածության
պատրանքները ցարի
սպանդով Մուկդենյան,
Ցուսիմայի ճարճատյունով։
Բավական է։
Չե՛նք հավատում
կողմնակի զրույցներին։
Իրենք՝
պրեսնյացիք
զենքով ոտքի ելան։
Թվում էր՝
հենց հիմա
կտապալենք ցարին,
հետո էլ
կճայթի
բազկաթոռը բուրժուական։
Իլյիչն արդեն այստեղ է։
Օրը օրին նա
հինգ թիվը
բանվորների հետ է
անցկացնում։
Ամեն բարիկադում
կողքին է կանգնած,
ողջ ապստամբության
ընթացքն է
վարում։
Բայց
խարդախ մի լուր
տարածվեց շուտով՝
«Ազատություն»։
Բանտիկներ կապեցին մարդիկ,
ցարը
ելավ պատշգամբ,
ձեռքին մանիֆեստիկ։
Իսկ
«ազատության»

մեղրաշաբաթից հետո
ճառերը,
բանտիկները
և երգերը հոսուն
հրանոթային որոտն է
խլացնում
բասովն իր.
բանվորական արյան մեջ
լող էր տալիս, լողում
ցարի ադմիրալ
պատժիչ Դուբասովը։
Թքե՛լ եմ երեսին
տիղմի այն սպիտակ,
որ գազանություններից է
բարբաջում
Չեկայի։
Տեսեք,
ո՛նց են այստեղ,
արմունկները կապած,
բանվորներին մահու չափ
ենթարկում կոտանքների։
Սեակցիան գազան կտրեց։
Ինտելիգենտները
հեռացան ամեն ինչից,
ողջն ապականեցին։
Փակվեցին տներում,
հանեցին մոմերը,—
աստված որոնողնե՜ր,—
խնկել սկսեցին։
Պլեխանովն ինքը
նվնվաց,
կոծեց.
— Դուք եք մեղավոր։
Խճճեցիք, եղբա՛յր։
Ահա և
արյունը տաշտակներով հորդեց։


Զենքի դիմելու
ոչ մի հարկ
չկար։
Լենինը
ողբի մեջ այդ հիվանդագին
մխրճեց իր ձայնը
հնչեղ ու առույգ.
— Ո՛չ,
անհրաժեշտ էր
դիմել զենքի,
միայն թե
ավելի
վճռական
ու եռանդուն.
Նոր ապստամբությունների օրը
ես տեսնում եմ.
Բանվոր դասակարգը
նորից կբարձրանա։
Ոչ թե պաշտպանություն,
այլ հարձակումը
պետք է
մասսաների
լոզունգը դառնա։—
Թե՛ այդ վերքերը
բանակում բանվորական,
թե՛ այդ տարեթիվը
արյան փրփուրներում
լոկ
առաջին աստիճանի
դպրոց կլինեն
գալիք ապստամբությունների
մրրիկ-ամպրոպներում։

Եվ Լենինը
նորից
հեռու օտար երկրում
պատրաստում է

մեզ՝
նոր մարտից առաջ։
Սովորեցնում է,
ինքն էլ գիտելիքներով զինվում,
համախմբում
կրկին
կուսակցությունը ջախջախված։
Նայի՛ր,
գործադուլներն են
տարին վեր նետում,
քիչ էլ,
և ապստամբությունը կմոտենա էլի։
Բայց ահա,
տե՛ս մի դու,
տարիներից հառնում է
տասնչորսը սարսափելի։
Գրում են՝
իբրև զինվորը,
զոռ տալով ծխամորճին,
կսկսի
հին օրերի արշավներից
պատմել,
բայց այս մսաղացը
համաշխարհային՝
ո՞ր Պոլտավայի,
Պլևնայի հետ
համեմատել։
Իմպերիալիզմը
մերկությամբ իր ողջ,—
որովայնը ցցած,
ղնովի ատամներով,
արյան ծովերն էլ
ծնկներիցը ցած,—
խժռում է երկրներ,
սվինները ցցած։
Շուրջը
քծնողներն են



խմբվում քիչ առ քիչ,
հայրենասերները,—
Վովաները հարմարվել են*,—
գրում են,
լվանալով ձեռքերը մատնիչ.
— Բանվո՛ր,
կռվի՛ր մինչև արյան
վերջին կաթիլը։—
Երկրագունդը՝
երկաթի ջարդվածքի
լեռ ոնց որ,
իսկ նրա մեջ՝
մարդկային
ծվենները ցրված։
Եվ ամբողջ այդ հսկա
խելագարանոցում
զգաստ
կանգնեց
միայն մի Ցիմմերվալդ։
Այստեղից
Լենինը
մի բուռ ընկերներով
ելավ աշխարհի վրա
և բարձրացրեց իր
մտքերը՝
ավելի վառ
հրդեհներից բոլոր,
ձայնը՝
ավելի ուժգին
բոլոր համազարկերից։
Այնտեղից՝
ականջում
համազարկը միլիոնների
հազարաթուր
հեծելազորի վազքը
ի մարտ,
այստեղից՝

ընդդեմ
թրերի և հրանոթների
այտոսկրոտ
և ճաղատ գլխով
մի մարդ։
— Զինվորնե՛ր
մատնելով, վաճառելով ձեզ,
բուրժուաները
թուրքերի մոտ,
Վերդեն,
Դվինա են ճամփում լռին։
Բավակա՛ն է։
Դարձնե՛նք
ժողովուրդների կռիվը
քաղաքացիական կռիվ։
Բավակա՛ն են
ջարդերը,
վերքերը ու մահ,
ազգերը
չունեն
և ոչ մի մեղք։
Ողջ աշխարհի բուրժուաների
դեմ հանդիման
քաղաքացիական կռվի
դրոշը
պարզենք։
Թվում էր՝
թնդանոթ-վառարանը
մեկեն
կփչի նեխվածք
և կրակ կփռշտա,
հետո
դե արի
ու փնտրիր մարդուկին,
արի
ու հիշիր ազգանունը նրա։
Ոռնացող,



շաչող հրանոթների
կոկորդով
գոռում են
իրար
երկրները.
— Ծունկի՛։
Կռվեցին-պրծան,
և ահա
ո՛չ մի հաղթանակող,—
լոկ ընկեր Լենինը
հասավ հաղթանակի։
Իմպերիալիզմի խորխորա՛տ,
համբերությունը
հրեշտակային
մեր՝ սպառվե՛ց։
Քեզ ճեղքեց ահա
Ռուսաստանը
ապստամբ
Թավրիզից
մինչև Արխանգելսկ։
Իմպերիան՝
դա քեզ համար
հավ չէ մի քոսոտ։
Երկգլուխ իշխանությամբ
արծիվ է մեծկտուց։
Իսկ մենք,
ինչպես
ծխախոտի մնացորդ,
նրանց դինաստիան
պարզապես
թքեցինք դուրս։
Վիթխարի,
ծածկված ժանգով արնագույն,
ժողովուրդը՝
մերկ, առանց շալվարի,
կգա դեպի Սովետնե՞րը,
թե՞, ինչպես հնում,

բուրժուայի համար
կրակից
շագանակ կհանի։
«Ժողովուրդը
կտրատեց
ցարի կապանքները,
Ռուսաստանում՝ ամպրոպ,
Ռուսաստանում՝ մրրիկ»,
կարդաց
Շվեյցարիայում
Վլադիմիր Իլյիչը,
հուզմունքով,
դողով
խոնարհված թերթերին։
Բայց
թերթի պատառները
ի՞նչ կարող են տալ։
Ա՛յ,
թե սավառնակով
գեթ եթեր սլանար,
հենց տեղում
օգնելու
բանվորին ապստամբ,
միակ ցանկությունը,
միակ միտքն էր այս։
Մեկնեց,
կուսակցական կամքին հնազանդ։
Վագոնը՝ գերմանական։
Գերմանական՝ պլոմբը։
Օ՜,
թե Հոհենցոլլերն
իմանար այն ժամանակ,
որ Լենինը
նրա միապետության համար էլ
ռումբ էր...
Գիտերցիները
դեռևս,



հուրախություն բոլորի,
համբուրվում էին,
ցատկոտում մանկանց պես անքեն,
բայց, կարմիր ժապավեններով
զարդարված փոքր-ինչ,
Նևսկին
զենքերաշխով
վխտում էր արդեն։
Քայլ առ քայլ՝
և կհասնեն վերջակետին,
կհասնեն նաև
տալոցին ոստիկանական։
Սկսում են
ճանկերը
դուրս հանել կրկին։
բուրժուաները՝
թաթերից դուրս ու երկար,
առջևից մանրերը՝
ձկնկիթ ոնց որ։
Հետո ավելի մեծերը՝
շլխնաքից մինչև կի՛լկա։
Ապա Դարդանելսկին,
առաջնությունը՝ Միլյուկով,
Հետևից
թագադրմամբ
զոռում է Միխայլիկը։
Պրեմիերը ·
իշխանություն չէ,
այլ ձեռագործ նրբին։
Կոպիտ և անկիրթ
ժողովուրդ չի
սա քեզ։
Ուղղակի օրիորդ է՝
շոյիր դու օրիորդին։
Սիրում է
երգել,
հիստերիկա սարքել։

Դեռևս
ցող անգամ
չէր հասել մեզ
մի պուտ
ազատություններից
այդ նույն
փետրվարյան,
իսկ պաշտպանողականներն արդեն
ճիպոտներ առան.
«Հառա՛ջ,
դեպի ճակա՜տ,
բանվոր ժողովո՛ւրդ»։
Եվ ի լրումն
տեսարանի
այդ փառահեղ,
մատնիչները մեր
և՛ մինչ,
և՛ հետագա,
հսկում են մեզ
անքուն
էսէռ Սավինկովներ,
մենշևիկները՝
կատուներ գիտնական։
Եվ դեպի քաղաքն այս,
արդեն
ճարպակալող,
հանկարծ
Ֆինլանդական կայարանից,
սրընթաց,
այնտեղից,
Նևայի այն կողմով,
Վիբորգսկով
զրահապատը դղրդաց։
Եվ նորից
հողմը
պաղ և ուժին,
բարձրացրեց



հեղափոխության
փրփրալի ալիքները։

Բլուզներ և կեպիներ
հեղեղել են
Լիտեյնին.

«Լենինը մեզ հե՜տ է։
Կեցցե՛ Լենինը»։

— Ընկերնե՛ր,—
և առաջին հարյուրակների
գլխավերևը

առաջ պարզեց
առաջնորդող,
վարող ձեռքը իր։—

Նետե՛նք
էսդեկության
մաշված ցնցոտիները։

Կորչի՛
իշխանությունը
համաձայնողականների։

Մենք
ստորին խավերի
կամքի ձայնն ենք ցնցող,

ամբողջ աշխարհի
աշխատավոր խավերի։

Կեցցե՛
կուսակցությունը
կոմունիզմ կառուցող,

կեցցե՛
ապստամբությունը
հանուն Սովետների։—

Առաջին անգամ
ապշահար
ամբոխի առաջ,

հենց այստեղ,
քո դեմ,
մոտիկ ու ցանկալի,

բարձրացավ,

իբրև գործ հնարավոր
ու հասարակ,
անհասանելի խոսքը՝
«սոցիալիզմ»։
Փայլելով
հորիզոնով մեկ երկնակամարի,
սուլող գավողների հետևից,
հենց այստեղ,
բարձրացավ
վաղվա
կոմունյան աշխատավորների՝
առանց բուրժուա,
պրոլետար,
առանց ստրուկ ու տեր։
Խոսքն Իլյիչի
իջնում էր
կացնի հարվածներով
համաձայնողական
ոլորուն փոկերի
հաստությունը։
Եվ ճառն
ընդհատվում էր
որոտի փլվածքներով.
«Ճշմարի՛տ է, Լենին։
Ճի՛շտ է։
Ժամանա՛կն է»։
Քշեսինսկայայի
տունը,
ոտնացնցման համար
ընծայված,
այժմ
հավաքատեղին է բանվորական։
Այստեղ է հոսում
ֆաբրիկային բազմությունն անհամար,
այստեղ՝
դարբնոցում կոփվում
լենինյան։



«Կե՛ր անանասներ,
ծամիր դահուճ,
վերջըդ եկել է,
բուրժույ-դահիճ»։
Հասնում ենք արդեն
տերունական աթոռ
նստածներին.
Ինչպե՞ս եք,
ի՞նչ եք դարձյալ որոճում։
Բարձրացնելով ձեռքներս,
հուլիս ամսին
շոշափում ենք կոկորդները,
փորները սեղմում։
Բուրժույի ատամները
ցցվեցին իսկույն։
— Ստրուկն ապստամբե՜ց։
Դաղե՛լ մտրակներով
և արնախե՛ղդ անել։—
Եվ հրամանով
ձեռքն են շարժում
Կերենսկու՝
Լենինին նշանի առնե՛լ...
Եվ կուսակցությունն
անցավ ընդհատակ
կրկին։
Իլյիչը Ռազլիվում է,
Իլյիչը՝ Ֆինլանդիայում։
Բայց ո՛չ մի տանիք,
ո՛չ դաշտ,
ո՛չ քողտիկ
առաջնորդին
չեն հանձնի
նրանց կատաղի բա՛նդային։
Չի երևում Լենինը,
սակայն մոտ է նա։
Այն բանից,
թե ոնց է գնում աշխատանքը,

երևում է
ուղենիշ
միտքը լենինյան,
երևում է
լենինյան
առաջնորդող ձեռքը։
Շատ հարմար է հողը
Իլյիչի խոսքին.
ընկնում է,
իսկույն
գործ ծնելով,
և արդեն
բանվորի ուսերի
կողքին
ուսերն են
գյուղացիների միլիոնավոր։
Եվ երբ
մնում էր
դուրս գալ բարիկադներ,
օրը
նշելով
շաբաթների շարքում,
Լենինը
ինքը
եկավ Պիտեր.
— Ընկերնե՛ր,
բավական է սարքել քաշքշուկ։—
Սովը հրեշավոր,
ճնշումը կապիտալի,
ռազմի բանդիտիզմը,
ինտերվենցիան գողային,
կթվան
խալերից էլ
ճերմակ ավելի՝
հին պատմության՝
զառամած այդ տատիկի
մարմնին։



Եվ դեպի այս օրերը
նայելով
այնտեղից,
Լենինի գլուխը
կտեսնես
դու նախ։
Դա է՝
հազարամյակների
ստրկությունից
կոմունայի
դարերին
շողացող մի գագաթ։
Կանցնեն
տարիները
այս ծանր ու դժվարին,
կյանքը կչերմացնի
կոմունայի ամառն անամպ,
Հոկտեմբերյան
կարմիր ծաղիկներից
կհասնի
երջանկությունը՝
հսկա պտղի
քաղցրությամբ։
Այնժամ
դեկրետները
թերթելիս դեղնած,
աչքերից
լենինյան
պատգամներն ընթերցողի
կցայտեն
արցունքները՝
գործածումից հանված,
և արյունը
հուզմունքով
քունքերին կզարկի։
Երբ ես
ինչ ապրել եմ,

գումարում եմ ի մի,
և փնտրում օրերում
օրն ամենավառ ու ջինջ,
միևնույն բանն եմ
հիշում
հիմի,
քսանհինգը հոկտեմբերի,
օրն առաջին։
Մխվում է
սվիններով
ճայթյունը կայծակների,
նավաստիները,
ոնց գնդակ,
խաղում են ռումբերով։
Որոտմունքից
ցնցվում է
խռովահույզ Սմոլնին։
Վարում՝
գնդացրորդներն են պատրոնտաշներով։
— Ընկեր Ստալինը
կանչում է ձեզ շտապ։
Դեպի աջ՝
երրորդը,
այնտեղ է
նա։
— Ընկերնե՛ր,
կանգ չառնե՛լ։
Ինչո՞ւ եք կանգնած։
Նստեցեք զրահապատները
և դեպի պոչտա՞մտ։
— Լսո՛ւմ եմ,—
շուռ եկավ,
անհետացավ արագ,
և միայն
ծովայինի
ժապավենի վրա
լամպի լույսով



շողաց
մի բառ՝
«Ավրորա»։
Ո՛րը սլանում է հրամանով,
որը խմբի մեջ է վիճողների,
ո՛րը
փակաղակն է չխկացնում
ձախ ծնկի՛ն իր։
Այս կողմ՝
մյուս ծայրից հակա միջանցքի,
կողքանց,
աննկատ գալիս էր
Լենինը։
Արդեն
Իլյիչի կողմից
մարտերի տարված,
բայց դեռ,
նկարներից
չճանաչելով նրան,
հրմշտում,
գոռում էին
զինվորները տաք-տաք,
ածելիից էլ սուր,
կծու խայթում իրար։
Եվ այդ ցանկալի
երկաթե մրրիկում
Իլյիչը,
մինչև իսկ
քնատ կարծես թե քիչ,
քայլում,
կանգնում էր
և աչքը կկոցելով
մխրճվում
բազմության մեջ,
ձեռքերը
մեջքին։
Ինչ-որ

տոլաղավոր,
փրշոտ ջահելի
անվրեպ հարվածող աչքը
հառեց,
ասես
սիրտը հանեց
տակից իր խոսքերի,
ասես
հոգին ֆրազներից
զտեց ու մաքրեց։
Եվ գիտեի՝
հասկացված է արդեն
ամեն ինչը,
և այդ
աչքերով
հաստատ կորսացվի
թե՛ աղաղակը ճակատի,
թե՛ գյուղացու ճիչը,
թե՛ նոբելցու կամքը,
թե՛ կամքը պուտիլովցու։
Նա
գանգի մեջ
հարյուրավոր նահանգներ էր պտտում,
մեկ և կես միլիարդ
մարդ
կրում միայն։
Նա
կշռեց
աշխարհը
մի գիշերում,
իսկ առավոտյան.
— Բոլորի՛ն։
Բոլորի՛ն։
Բոլոր
ճակատների՛ն՝
արյունով արբած,
բոլոր ստրուկների՛ն,
ով որ.

հարուստներին
ստրկություն է տրված։
Իշխանություն Սովետների՛ն։
Հողը գյուղացիներին։
Հաշտություն ժողովուրդներին։
Հաց սովյալներին։
Կարդացին
բուրժույները,—
սպասեցե՛ք,
կորսա՞նք,—
փորներն ընկրկում են
ծանրակշիռ փաստից,—
Դուխոնինն ու Կոռնիլովը
ցո՞ւյց կտան դրանց,
ցո՞ւյց կտան
Գուչկովն ու Կերենսկին։
Բայց խոսքերն այդ
ճակատը
առա՞նց մարտ
գրավեցին,—
հեղեղեցին դեկրետները
քաղաք
ու գյուղ անտակ,
անգամ
անգրագետների
սրտերը վառեցին։
Գիտենք,
ո՛չ թե մեզ,
նրանց ցույց տվեցին,
թե ինչ ասել է՝
«ցույց տա՞լ»։
Անցնում են մոտիկից՝
մոտիկներին,
մոտիկներից՝
թունդ հանում սիրտը
հեռավորների.
«Խաղաղությո՞ւն խրճիթներին,

կռի՛վ,
կռի՛վ,
կռիվ պալատներին։
Կռվում էին
ամեն մի գործարանում,
ցեխում,
քաղաքներից գալիս,
ոնց սիսեռը
շաղ տան,
իսկ հետևից՝
Հոկտեմբերն էր
ուղենիշներ նշում
դեպի բոցավառվող
տներն ազնվական։
Հողը՝
ներքնակն էր նրանց խոշտանգման,
և հանկարծ
այդ հողը,
ոնց կապույտը հացի,
բոլոր բլրակներով,
առվակներով կեռման
ամուր իր ձեռքի մեջ
սեղմեց գյուղացին։
Մանժետիկներն
ակնոցավոր,
զայրույթ թքելով դուրս,
սողացին այնտեղ,
ուր թագավոր կար, կոմս։
Բա՞ց է ճանապարհը։
Մենք ամեն մի
խոհարարուհու
կուսուցենք
պետություն կառավարել։
Ռուսացիոնն է տալիս
առայժմ
արտադրանք։
Խրամատներից



գերմանացիների ականջին էր
թռչում.
— Ժամանակն է վերջացնելու։
Եկեք եղբայրանա՛նք։—
Եվ ճակատը
կորչում էր
խխունջ-վագոններում։
Մի՞թե
բռով կարգելակեք
հոսանքը նման։
Թվում էր՝
նավակը մեր
թեքվում է կողքի,
Վիլհելմի սապոգը,
Նիկոլայինից մեծախթան,
կջնջի
սահմանները սովետական երկրի։
Շրջում էին
էսէռները
պլաշները բաց,
իրենց շաղակրատանքով
որսում փախչողներին,
դուրս քաշում
ասպետորեն
սուսերիկներն հիմար,
գեղեցկորեն
թրատելու
զրահավոր հրեշներին։
Իլյիչն այդ աքլորացողներին.
Կացե՛ք ձեր տեղում։
Այդ բեռն էլ
թող կուսակցությունն
իր ուսերին վերցնի։
Տարածության կորուստ,
ժամանակի շահում։
Կառնենք

դաղարը
խայտառակ Բրեստի։—
Որպեսզի
չկոտորվենք
դաղարում,
որպեսզի
իմանանք,—
կհիշե՞ն հարվածներն իմ կրկին,—
ո՜չ թե մուշտրովկայով,
գիտակցությա՛մբ զինվիր,
կանգնիր դու
շարքերում
կարմիր բանակի։

Պատմաբանները
ճիվաղավոր
պլակատները հին
կպոկեն,— եղե՞լ է արդյոք,
թե՞ ոչ։—
Իսկ մենք
ճանաչում էինք
ահա այս ճիվաղին
նրա
բնական մեծությամբ ամբողջ։
«Մենք կկռվենք, մտած արյուն,
հանուն Սովետների,
մի մարդու պես այդ պայքարում
կմեռնենք մենք արի»։
Գալիս է Դենիկինը։
Նետում ենք Դենիկինին,
բարձրացնում
հրանոթից ավերված
օջախը։
Հիմա էլ Վրանգելն է
փոխարինում Դենիկինին։
Տապալում ենք բարոնին,
ահա՛ Կոլչակը։



Խժռում էինք կեղև,
գիշերում ճահիճներում,
բայց գնում էինք
կարմրաստղ միլիոններով մենք,
ամեն մեկում՝ Իլյիչը,
ամեն մեկի մասին հոգում,
մտածում է
ճակատում՝
տասնմեկ հազար վե՜րստ։
Տասնմեկ հազար
միայն շրջագծով,
իսկ որքա՞ն է
լայնքով ու երկայնքով։
Չէ՞ որ հարկավոր է
գրոհել ամեն տուն,
ամեն մեկը
դարպասի տակ
թշնամի է թաքցնում,
էսէռ ու մոնարխիստ
լրտեսում են անքուն,
այստեղ խայթում օձի պես,
այնտեղ թրատում։
Դու գիտե՞ս
Միխելսոնի գործարանի
ճամփան։

Կգտնես
արյամբ՝
Իլյիչի վերքից թափված։
Էսէռը
նշան է բռնում
ոչ այնքան էլ ճիշտ՝
էն մյուս ծայրով
ուղիղ
իր հոնքին։
Բայց ավելի ահավոր է
ռումբից,
տարճանակից՝

պաշարումը սովի,
      պաշարումը տիֆի։
Տեսե՛ք,
  փշրանքներին
      ճանճերն են պտտվում,
կուշտ են ավելի,
      քան մենք
       տասնութ թվին.
պատառ հացի համար
        օրերով կանգնում,
մնում էինք
    փողոցում,
       ցրտին։
Կուզեք՝ բանտարկեցեք,
        կուզեք՝ նստեք հոգուս,
զավոդը՝ կարտոֆիլո՞վ,
        չէր ափսոսում ո՞վ։
Եվ նավաշինարանը
      տասնակորպուս
փնչում էր,
   ճղղում
     հրահանների պատճառով։
Իսկ կուլակներն ունեն
       թե՛ բլիթներ, թե՛ յուղ։
Կուլակների հաշիվը
      ճշգրիտ ու պարզ է.
Թաքցրո՛ւ հացը,
    թաղի՛ր կճուճներում
նիկոլաևկաներն
     ու կերենկաները։
Այստեղ պետք է ճզմում,
       ոչ թե քնքշանք մոմի,
գիտենք՝
  քաղցը
     ջնջում է մաքուր,
        ողջ ճակատով,
և Լենինը



    բարձրանում է
       կուլակության դեմ կռվի
պարենհարկով
     և պարենջոկատով։
Մի՞թե
  «դեմոկրատ» խոսքը
       այսպիսի ժամանակ
հիմար գլխովը կանցներ
       մեկի։
Թե զարկում ես՝
    զա՛րկ,
       թշնամուց թաց տեղ մնա։
երկաթյա դիկտատուրան է
       բանալին հաղթանակի։
Մենք հաղթեցինք,
     բայց մենք
        ունենք ճեղքվածքներ.
մեքենան կանգնել է,
      շրջակարը՝
         ձորձեր։
Գնացե՛ք, ողողեցե՛ք։
      Վերցրե՛ք և լվացե՛ք։
Բեկորների թմբեր։
      Պաստառների քուրձեր։
Ո՞ւր է նավահանգիստը։
        Փարոսները՝
          ջարդված,
թեքվում ենք,
    կայմերով
       ալիքները խաչմերելով։
Կթափվենք ծովը՝
     նավեզրին աջ
գյուղացիների բեռն է
       հարյուրմիլիոնանոց։
Ոռնում են թշնամիները,
        ոռնում հրճվանքից,
բայց այդպես

լոկ Իլյիչն էր
կարող և ընդունակ,
Հանկարծ նա
ղեկանիվը
դարձրեց միանգամից,
ամբողջ
քսան ռումբ՝ մի կողմի վրա։
Եվ մեկեն
զարմանալի
անդորրություն լուռ.
Նավահանգիստ է հասցնում
հացն իր
ամեն կերպ
գյուղացին։
Սովորական ցուցանակ՝
առ
և տուր—
նէպ։
Աչքերը կկոցեց Լենինը.
— Նորոգվեցեք մի լավ,
վարժվիր արշինին,
չվարժվեցիր՝ վատ է։—
Հոգնած
անձնակազմին
օրորում էր ափը։
Մենք սովոր ենք մրրիկին.
ի՞նչ նենգություն է սա։
Ծովախորշն է խոր
Իլյիչը
մատնանշում,
գտնված է
կետը
զոդում-կառանման,
և խաղաղ
կառուցման նավաշինարանն է
մտնում
Սովետական հանրապետությունների


ամդահան։
Լենինը ինքն էր
երկաթ ու գերան
կրում,
նորոգելու
բոլոր տեղերը
ծակված։
Պողպատե թիթեղներով
վեր էր խոյացնում
կոոպերատիվներ,
տրեստներ
և կրպակ։
Եվ նորից
Լենինը
դառնում է շտուրման,
լույսեր՝ առջևում,
հետևում,
նավակողերին։
Այժմ
աբորդաժից և գրոհներից
մենք
անցնում ենք
աշխատանքային պաշարման։
Մենք
ետ քաշվեցինք
ճշգրիտ հաշվով։
Ով այլասերվեց՝
ափ նետեցինք։
Էռ—կա—պե՛,
անձնակազմը դեպի նավակող։
Այժմ առա՛ջ։
Նահանջը վերջացած է
ընդմիշտ։
Կոմունան՝ դարեր է,
ի՞նչ է նրան տասնամյակը։
Առա՛ջ,
և անցյալում

կծածկվի նէպիկը։
— Մենք շարժվում ենք հիմա
հարյուր անգամ դանդաղ,
փոխարենը՝
միլիոն անգամ
ամուր ու հաստատ—
Մանրբուրժուական այդ
տարերքի ներքո
դեռևս
օրորվում է
մեռյալ ծփանքը պիրկ,
բայց խաղաղ
ամպերը
շանթերից թրատվելով,
արդեն
վերածում են
համաշխարհային ամպրոպի։
Թշնամին
փոխարինում է
նոսրացած թշնամուն,
բայց մի օր
երկրի վրա
երկինքը կվառենք,
սակայն
այդ ավելի լավ է
կենսագործել կյանքում,
քան թե
դրա մասին գրել։
Այժմ,
թե որ խմում ենք,
կամ թե ուտում,
կամ ընդհանուր գործարան
շտապում
ճաշից,
գիտենք՝
պրոլետարիատն է
հաղթողը մարտում,



և Լենինը՝
հաղթության կազմակերպիչ։
Կոմինտերնից
մինչև
զնգուն կոպեկը՝
նոր պղնձից կտրած
մուրճ ու մանգաղիկը,

դեռևս
չգրված մի էպոպեա է
հաղթանակից
հաղթանակ տանող
Իլյիչի քայլերի։

Հեղափոխությունները՝
դժվար գործ են անվերջ,
մենակ չես բարձրացնի՝
ոտքըդ կծալվի։

Բայց Լենինը
առաջնագույնն էր
հավասարների մեջ

կամքի ուժով
և լծակներով մտքի։
Բարձրանում են երկրները
իրար հետևից՝
Իլյիչի ձեռքը
ցույց է տվել ճիշտ.
ժողովուրդները,—
դեղին,
սև
և սպիտակ,—
կանգնում են
Կոմինտերնի դրոշի տակ։
Իմպերիալիզմի
անսասան սյունաշարերը՝
բուրժուաները
աշխարհի մասերից հինգ,
քաղաքավարությամբ
բարձրացնելով

ցիլինդրներն ու թագերը։
Գլուխ են տալիս
Իլյիչի Սովետների Հանրապետությանը։
Ո՛չ ոքի ջանքերը
մեզ
սարսափելի՛ չեն,
աշխատանքի գնացքով
սուրում ենք
առաջ,
և հանկարծ
քոթը այդ հարյուրփթանոց՝
Իլյի՛չը
ստացել է
կաթված։

Եթե
թանգարանում ցուցադրեին
արտասուք թափող մի բոլշևիկ,
այնտեղ
ողջ օրերով
բերանբացները կցցվեին։
Հարկա՛վ,
այդպիսի բան
չես տեսնի դարերում իսկ։
Հնգաթև աստղեր են
մեջքներիս դաղել
պանական մարզպանները։
Մեզ
ողջ-ողջ
թաղել են հողում
բանդաները Մամոնտովի։
Շոգեքարշային հնոցներում
վառել են ճապոնացիները,
բերաններս լցրել
անագ ու արճիճ։
Հրաժարվեցե՛ք,— ոռնացել են,—
զուր է,—



բայց կոկորդներից մեր այրվող՝
հնչել է երկու խոսք-ճիչ.

— Կեցցե՛ կոմունիզմը։
Աթոռ առ աթոռ,
շարք առ շարք
այդ պողպատը,
երկաթն անկոտրելի
լցվում էր
քսաներկուսին հունվարի
Սովետների համագումարի դահլիճը
հնգահարկ։

Նստում էին,
կատակներ փոխանակում,
ոտքի վրա
վճռում
թեթև գործեր։
— Ժամանակն է սկսելու։
Ինչո՞ւ են ձգձգում։

Ինչո՞ւ է
պրեզիդիումը,
հնձածի պես, նոսրացել։

Ինչո՞ւ
աչքերը
օթյակներից էլ կարմիր են։
Ի՞նչ է եղել Կալինինին։
Հազիվ է ոտքի մնում։

Դժբախտությո՞ւն։
Ինչպիսի՞ն։
Անկարելի է...

Իսկ եթե նրա՞ն...
Ո՛չ։
Մի՞թե դժբախտություն...

Առաստաղն
ագռավի պես
իջավ մեզ վրա, ցած։
Խոնարհվեցին գլուխները՝
խոնարհիր էլի՛։

Դողդողացին հանկարծ
և սևացան
լույսերը
ճապաղվող ջահերի։
Խեղդվեց
զանգակի ղնգոցը
անհարկավոր։
Հաղթահարեց իրեն,
ոտքի ելավ Կալինինը։
Կուլ տալ
արցունքն այտերից
ու բեղից չես կարող։
Մատնեցին։
Փայլում են մորուքի սուր ծայրին իր։
Մտքերը խճճվեցին,
ճնշում են գլուխը ցած,
արյունը
եռում երակում,
խփում է քունքերի՛ն իր։
— Երեկ
ժամը վեցից հիսուն րոպե անց
վախճանվեց ընկեր Լենինը։
Այդ տարին
տեսավ,
ինչ չի տեսնի դարն իսկ։
Օրը
կանցնի
դարերին
իբրև տխուր ավանդ։
Սարսափը
հառաչանք քամեց
երկաթից։
Բոլշևիկների շարքերով
անցավ հեկեկանք։
Ծանրություն ահե՞ղ։
Մարդիկ
քարշ էին տալիս իրենց,



իմանալու՝
ե՞րբ և ինչպե՞ս։
էլ ի՞նչ եք թաքցնում։
Փողոցներով
ու նրբանցքներով,
դիակառք իբրև,
Մեծ թատրոնն էր
լողում։
Խնդությունը
սողում է խխունջի պես։
Վիշտը
վազում է խելահեղ։
Ո՛չ արև,
ո՛չ սառցաձող,
ամեն ինչ
լրագրային ցանցի միջով
ծածկել է
ձյունը սև։
Բանվորի վրա,
որ կանգնած էր
մոտն իր դազգահի,
հարձակվեց բոթը,
ոնց գնդակը մտքում։
Եվ ասես
բաժակը,
արցունքով լի,
գործիքի վրա են թափում։
Եվ մուժիկը,
որ կյանքում շատ բան էր տեսել,
շատ անգամներ
նայել
մահվան աչքերին,
շուռ եկավ կանանցից,
բայց մատնեց իրեն
բռունցքով
տրորված
կեղտը այտերի։

Կային մարդիկ՝
կայծքա՞ր,
բայց նրանք անգամ
կծելով,
արնոտում էին շրթունքները։
Մանուկները
լրջացան
ծերերի նման,
մանկան պես
լալիս էին սպիտակամորուսները։
Քամին
ոռնում էր
իբրև ողջ հողագնդի անքնություն,
և ապստամբն այդ
ո՛չ մի կերպ
չէր ըմբռնում, որ
ահա Մոսկվայի
փոքրիկ,
ցուրտ այդ սենյակում
դագաղն է
հեղափոխության
և՛ որդու, և՛ հոր։
Վե՛րջ,
վե՛րջ,
վե՛րջ։
Համոզել ո՞ւմ։
Տե՛ս,
ապակին,
և նրա տակը հենց...
Այդ
նրան են
Պավելեցկուց տանում
քաղաքով,
որ ինքը տերերից վերցրեց։
Փողոցը
ասես
խորունկ վերք լինի,



այնպես է ցավում
ու տնքում կսկծալից։
Այստեղ
ամեն քարը
Լենինին գիտի
հոկտեմբերյան գրոհների
առաջին
դոփյուններից։
Այստեղ
բոլորը,
ինչ ամեն դրոշ կարազարդել է,
հղացել է նա,
ու կարգադրել է նա։
Այստեղ
ամեն մի աշտարակ
Լենինին լսել է,
նրա հետևից
կրակի
ու ծխի մեջ կգնար։
Այստեղ
գիտե
Լենինին
ամեն մի բանվոր,
սիրտը—
եղևնու ճյուղ—
փռիր առաջն Իլյիչի։
Նա տարել է կռվի,
հաղթանակը գուշակելով,
և ահա
պրոլետարը
տերն է ամեն ինչի։
Այստեղ
ամեն գյուղացի
Լենինի
անունն է գրել
իր սրտում

ավելի սիրով,
քան տոնացույցում։
Նա հրամայեց
հողը
իրենցն համարել,
որ մահատանջ
պապերն են
երազել գերեզմանում։
Եվ կոմունարներն էլ
Կարմիր հրապարակի տակից
ասես
շշնջում են.
— Սիրելի՛ և հարազա՛տ։
Ապրի՛ր,
և պետք չէ
ավելի լավ ճակատագիր,
հարյուր անգամ կկռվենք
և կիջնենք գերեզման։—
Այժմ
թե հնչեին
մի կախարդի խոսքեր,
որպեսզի մեր մահով
նրան արթնացնեինք,
Փողոցների ամբարտակը
թափով ետ կբացվեր
և երգով
դեպի մահ
կնետվեին մարդիկ։
Բայց հրաշքներ չկան,
զուր մի կառչիր հույսին։
Կա Լենին,
դագաղ
և կորացած ուսեր։
Նա մարդ էր,
մինչև վերջը՝
մարդկային,
կրիր



և պատժվիր
մարդկային վշտով քո սև։
Դեռ
երբեք
դարերում
օվկիանները մեր արթուն
չէին կրել
այդպիսի
բեռ մի անգին,
ոնց դագաղն այդ կարմիր,
որ դեպ Միությունների տուն
լողում էր
ուսերին
քայլերգի
և հեկեկանքի։
Դեռևս
պատվո պահակ է
կանգնած
լենինյան կերտվածքի
գվարդիան խստաշունչ։
Իսկ մարդիկ
արդեն
սպասում են, տպված
Տվերսկոյի
և Դիմիտրովկայի
երկարությա՛մբ ողջ։
Տասնյոթ թվականին
պատահում էր, որ
աղջկադ
չէիր ճամփում հացի հերթ՝
թողնենք վաղվան։
Իսկ
այս հերթին,
և՛ ցուրտ, և՛ ահավոր,
բոլորն են կանգնել,
մանուկ թե հիվանդ։
Գյուղերը

շարվել էին
քաղաքի կողքին։
Վիշտը զնգում էր մերթ մանկականորեն,
մերթ արիաբար։
Անցնում էր շքերթով
երկիրն աշխատանքի,
իբրև Լենինի կյանքի
կենդանի
հանրագումար։
Դեղին արեգակը,
քնքուշ և շեղաչք,
ծագելով,
շողերը պատվանդանին է նետում։
Հույսը ողբալով,
ասես թե
ծեծկված,
վշտի տակ կռացած,
շինացիք են անցնում։
Լողում են
գիշերները
օրերի ուսերին,
ժամերը խառնելով,
շփոթելով տարեթվերը։
Ասես գիշեր չէ,
աստղեր չեն
երկնի պաստառին,
այլ սգում են
Լենինին
Նահանգների նեգրերը։
Սառնամանիքը դաժան
ներբաններն է այրում։
Իսկ մարդիկ
մթնեցնում են
իրար սեղմված։
Անգամ
ցրտից
ձեռքերն իրար զարկելու



միտ չեն անում,
չի կարելի,
անտեղի է այդ։
Սառնամանիքը
բռնում է
ու իրեն քաշում,
ասես փորձում՝
սիրտ մեջ կոփվա՞ծ են,
և շա՞տ…
Խուժում է ամբոխի մեջ։
Խճճվում հրմշտկոցում,
բազմության հետ
մտնում
դահլիճը Սյունաշար։
Աստիճաններն աճում,
խութեր են դառնում։
Բայց ահա
լռեցին
շունչ ու երգ հիմի,
քայլելն ահավոր է,
ոտքերիդ տակ՝
անդունդ,
անհատակ անդունդ
չորս աստիճանի։
Անդունդ
ստրկության հարյուր սերունդներից,
որ գիտեն
ոսկու զնգուն փաստարկը մերկ։
Անդունդը
և ափ—
այդ դագաղն է
ու Լենինը,
իսկ դենը՝
կոմունան
հորիզոնով մեկ։
Եվ ի՞նչ կտեսնես։
Ճակատը միայն

և Նադեժդա Կոնստանտինովնային՝
մշուշի մեջ,
հեռվից...
Գուցե
անարցունք աչքերով
կարելի է տեսնել շատ բան։
Այդպիսի
աչքերով նայել՝
չվիճակվեց ինձ։
Խոնարհվում է
լողացող
դրոշների մետաքսը սառ,
տալով
հարգանքը վերջին.
«Գնա՜ս բարո՜վ, ընկե՛ր,
դու պատվով անցար
քո ազնիվ, փառապանծ ուղին»։
Սարսափ։
Փակի՛ր աչքերդ
և չնայես,
ասես թե
քայլում ես
էլեկտրալարով բարակ։
Ասես
մի պահ
մնացել ես
երես առ երես
ճշմարտության դիմաց՝
վիթխարի
և միակ։
Ես երջանիկ եմ։
Մարմինս թեթև
տանում են
ալիքները գնգուն քայլերգի։
Այժմ
և ընդմիշտ,
ես հաստատ գիտեմ,



իմ մեջ կմնա ահա
րոպեն
այս վերջին։
Երջանիկ եմ,
որ ես էլ
մասնիկն եմ այդ ուժի,
որ ընդհանուր են
անգամ
աչքերիս արցունքները։
Անհնար է ճաշակել
ավելի մաքուր
և ուժգին
դասակարգ
կոչվող
մեծ զգացումը։
Ահա
դրոշների թևերը
խոնարհվեցին,
որպեսզի վաղը
կռվի ելնեն
կրկին.
«Ինքներս, հարազա՛տս, փակեցինք
աչքերը քո սուր, արծվային»։
Միայն թե ցած չընկնել,
միայն թե ուս ուսի,
սև դրոշներով
և աչքերով բոցբոց՝
գնում էինք
վերջին հրաժեշտ տալու
Իլյիչին,
և դանդաղում մի պահ
դամբարանի մոտ։
Հանդիսածեսն են կատարում իր։
Ճառեր են ասում,
խոսում,
և բավական է։
Միայն, ավա՜ղ,

կարճ է
ժամկետը րոպեի.
մի՞թե
կարող ես ընդգրկել
ողջ անզուգականը։
Անցնում են,
հայացքները վախով հառում
վեր՝
սև
ու ձյունապատ շրջանակին։
Ի՞նչ կատաղի են
թռչում
Սպասկիի սլաքները։
Մի պահ,
և թռիչք վերջին քառորդին։
Քարացե՛ք
մի րոպե
այդ սև բոթից։
Կա՛նգ առ դու,
շարժում,
կա՛նգ առ դու,
կյանք։
Մուրճ բարձրացնողներ,
չշարժվե՛ք տեղերից։
Երկրագո՛ւնդ, պապանձվի՛ր,
պառկի՛ր անարձագանք։
Լռություն։
Ավարտված է ուղին մեծագույն։
Որոտաց մի հրանոթ,
գուցե և հազարներ։
Եվ այդ
կրակոցը
ավելի բարձր չէր,
քան մանրուքի
զնգոցը
աղքատի գրպանում։
Տեսողությունս խղճուկ



ցավելու չափ
լարելով,
համարյա ցրտահար,
կանգնել եմ շունչս պահած։
Բարձրանում է
իմ դեմ
դրոշների ցոլքերով
հողագունդը
մթին,
անշարժացած։
Հողագնդի վրա
դագաղն է համր ու լռին։
Դագաղի մոտ՝
մենք,
ներկայացուցիչներս մարդկանց, որ
գործով ու պոեմներով,
մրրիկով ապստամբությունների
բազմապատկենք այն,
ինչ տեսանք այսօր։
Բայց ահա
հեռվից,
այնտեղից,
այլ դրոշներից,
ցրտության մեջ,
պահակին մեր՝
լուռ ու անշարժ,
հնչում է թնդալից.
«Քայլո՜վ մա՛րշ»։
Այդ
հրամանը
պետք էլ չի անգամ,
շնչելով դանդաղ,
հավասար
ու հաստատ,
պոկելով
մարմիններս տեղից
դժվարությամբ,

մխում ենք
քայլներս
հրապարակով ցած։
Ամեն մի դրոշակ
ամուր ձեռքերով
կրկին
գլուխներից
վերև է նետվում։
Հեղեղը ոտնատրոփի,
ուժը,
ծավալվելով,
Ջրջանածիր
տարածվում է
աշխարհի սրտում։
Բանվորի,
գյուղացու,
կտրիճ զինվորների
Մտքերն
օղակվել են ի մի
հաստատապես։
— Ծանր կլինի
ռեսպուբլիկային
առանց Լենինի։
Պետք է փոխարինել՝
ումո՞վ։
Եվ ինչպե՞ս։—
Բավակա՛ն
պառկել
փայտոշլոտ մահճակալին։
— Ընկե՛ր քարտուղար,
վերցրո՛ւ,
ահա նա,
խնդրում ենք
ավելացնես
էռ—կա—պեի բջիջին՝
միանգամից,
կոլեկտիվ,



ողջ գործարանը…
Բուրժուաներն են
նայում,
աչքերը չռած՝
դողում
դոփյունից
ամուր ոտքերի։
Չորս հարյուր հազար հոգի
տաք դազգահից
եկած՝
կուսակցական պսակն էր
Լենինի
առաջին։
— Ընկե՛ր քարտուղար,
գրիչըդ առ…
Ասում են՝ կփոխարինենք…
պետք է քանի որ…
Ես ծեր եմ արդեն,
վերցրեք
իմ թոռան,
հանգիստ չունեմ,
ասում է՝
տուր ինձ կոմսոմոլ։—
Ենթաշեֆ նավատո՛րմ,
սուրա՛ ծովերով,
ստորջրյա խլուրդները
հերիք
խարխլի նավերն։
«Ծովերո՞վ,
ծովերո՞վ,
այժմ այստեղ,
վաղն այնտեղ»։
Բարձրացի՛ր, արև։
Կլինես վկա,
հարթի՛ր
շուրթերից սուգը հապա։
Մանուկներն

անցնում են
մեծերին համաքայլ՝
տրա՛—տա՛—տա՛—տա՛—տա՛,
տա՛—տա՛—տա՛—տա՛։
«Մե՛կ,
երկո՛ւ,
երե՛ք։
Պիոներներ ենք մենք։
Չենք վախենում ֆաշիստներից,
սվինամարտի կելնենք»։
Ջուր է
Եվրոպայի բռունցքը
ցցվել սպառնալից։
Կխլացնե՛նք որոտյունով։
Ե՛տ։
Թող կորչի՛։
Դարձավ
մեծագույն
կոմունիստ-կազմակերպիչ
անգամ
ինքը՝
մահը Իլյիչի։
Արդեն
ծխնելույզների
հրեշավոր պուրակից վեր,
ձեռքերը
միլիոնների
խմբած
իբրև դրոշաձողեր,
Կարմիր հրապարակը,
ինց դրոշակ կարմիր,
վեր է
խոյանում
թռիչքով ահեղ։
Այդ դրոշակից,
Նրա ամեն ծալքից
Նորից



Լենինն է
կանչում հնչեղ.
— Պրոլետարնե՛ր,
շարվե՛ք
վերջին պայքարի։
Շտկեցե՛ք,
ստրուկնե՛ր,
ծնկներ ու մեջքեր։
Պրոլետարների բանա՛կ,
ելի՛ր շարք առ շարք։
Կեցցե՛ հեղափոխությունը
վերահաս ու բերկրալից։
Դա կլինի
մեծագույն պատերազմը
միակ՝
պատմության հայտնի
բոլոր պատերազմներից։
1924

# ԼԱ՜Վ Ե

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊՈԵՄ

### 1

Ժամանակը
երկար բան է
անսովոր կերպով.
եղել են ժամանակներ՝
անցել որպես էպոս։
Ոչ էպոպե,
ոչ էպոս,
ոչ զրուցավեպ։
Թռի՛ր հանց հեռագիր,
տող իմ,
անվրեպ.
Ծունկի իջիր,
խմիր
շուրթերով պապակ
այն գետից,
որ կոչվում է «Փաստ»։
Այդ ժամանակն է ընգում
որպես հեռագրաթել,
այդ սիրտըս է
ճշմարտության հետ միասին տրոփում,
այդ մարտիկների
կամ երկրի հետ է եղել
կամ թե
եղել է
իմ սրտում։
Ես ուզում եմ,
որ այս գիրքը կարդալով,
փոքրիկ աշխարհից քո



սենյակային,
նորից քայլես՝
գնդացրային կրակոցին
կրնկակոխ,
տողը շողացնելով,
ինչպես սվին։
Որպեսզի գրքի՝
բախտավոր վկայի
աչքերի միջով՝
լի խնդությամբ,
հոգնած մկանների մեջ ներխուժի
ուժը կառուցող
և ապստամբ։
Այս օրը
գովերգելու
ո՛չ ոքի չենք վարձի։
Մենք
կմեխենք
մատիտը թերթին,
որ էջերը ծփան
դրոշների նման՝
բոլոր տարիների
ճակատին։

### 2

«Վերջացրե՛ք պատերազմը։
Բավական է,
հերիք։
Այս սովատանջ տարում՝
էլ ուժ չկա դիմանալու։
Փչում էին.
«Ժողովրդին՝ ազատությո՜ւն,
հառա՛ջ,
էպո՜խա,
արշալո՜ւյս...»։
զուր հույս։

Ո՞ւր է հողը
և ո՞ւր է օրենքը,
որ ամռանը
հողը մեզ տան...
Չկա՞ն։
Իսկ ի՞նչ են տալիս
փետրվարի
աշխատանքի փոխարեն,
նրա համար,
որ ոչ ոք ճակատից չփախչի։
Ոչի՜նչ։
Մեր վզին
նստել են
Գուչկովներ,
պատանեք,
մինիստրներ,
Ռոդզյանկոներ...
Դրանց մե՛րը։
Իշխանությունը
մռութն իր
դարձնում է
հարուստներին։
Մի՛ ենթարկվիր,
խփի՛ր»։
Տրտունջն այս,
մերթ ամ[illegible]ձայն,
մերթ շշուկով,
սողաց
կերենսկիական
բան[illegible]ց վանդակապատ։
Գյուղերը մտավ
դաշտով,
արահետով,
գործարանում
կրճտացրեց ատամները պողպատ։
Օտար
կուսակցությունները



մի կողմ շպրտեցին.
Ինչների՞ն են պետք
այդ դատարկախոսները,
Եվ տվին
բոլշևիկներին
իրենց կոպեկները,
ուժերը,
ձայները։
Մինչև հողն ուղեղը
գեղջկական
հասավ համբավը,
լցվեց,
տարածվեց,
որ կան
ինչ-որ «բոլշևիկներ»
գեղջուկներին պաշտպան,
ա՛յ թե ուժ են մեծ...

3

Ռաստրելլին
պալատ կերտեց
ցարերին։
Ծնվում էին ցարերը,
ապրում,
զառամում։
Պալատը
չէր խորհում
այդ խելառի մասին,
չէր կռահում,
թե ինչ-որ
երդվյալ հավատարմատար*
պառկելու է
թագուհիների
մահճակալում։
Արծիվներից,
իշխանությունից,

ժանյակ-վերմակներից
պատվում է,
գլուխը
հավատարմատարի։
Մոռացած
և՛ դասակարգ,
և՛ կուսակցություն,
գնում է
հերթական ճառի։
Աչքերը նրա
բոնապարտյան են,
իսկ ֆրենչը՝
խաքի գույնի։
Բառեր ու բառեր։
Լավա հրաբարկ։
Դուրս է գալիս,
ինչպես ուրախ կաչաղակ։
Նա ինքն իր փառքից
արբած էր
վաղուց,
ավելի,
քան թե քառասնաստիճան օղուց։
Լսեցեք,
քանի դեռ չեք հոգնել,
մարդիկ,
թե ինչպես է ճռվողում
ոմն ադյուտանտիկ.
«Այսպիսի դեպքեր են եղել.
ավտոյով
գնում է նա տեղեր։
Իմանալով՝
ո՛վ է
և ո՛րն է՝
ամբոխին
անջատել է մոտորները։
Ձիու ուժի փոխարեն՝



ձեռքերի վրա է
տարել։
Ծափահարությունների
ճողփյունով
պրեմիերը
լողում է
Նևսկիով։
Եվ կանայք,
և ցմփոր մանուկներ
նետում են
վարդեր ու ծաղիկներ։
Իսկ եթե
թախծում է պարապությունից,
վստահ և արագ
ինքն իրան
նշանակում է
մերթ ռազմական,
մերթ արդարադատության,
մերթ մի այլ մինիստր։
Եվ ասած-պրծած,
նորից է դառնում
գործեր
ու գանձարան
շուռ ու մուռ տալու։
Ստորագրում է
արժանապես
ու փութաջան։
«Ի՞նչ...
Ագրարայի՞ն...
Խռովությո՞ւն...
Մի շա՞րք...
Ուղարկեցեք այդ,
ինչպես են ասում,
պատժիչ
ջոկատ։
Լենի՞ն...
Բոլշևիկնե՞ր...

Որսալ և ձերբակալել։
Ի՞նչ...
Թույլ չե՞ն տալիս։
Անակնոց չեմ լսում։
Ի դեպ...
Նորին գերազանցություն...
Կոռնիլովի մասին...
Չի՞ կարելի
այստեղ
կոզակներ ուղարկել...
Այո՛։
Դեհ գիտեմ։
Նորին մեծությո՞ւն...
Ով ձե՛ռքն է սեղմել։
Ի՞նչ անմտություն։
Կայսրի՞ն...
Միայն ջրո՞վ...
Եվ չոր հացո՞վ...
Ի՞նչ գործ ունի Սովետը....
Հրամայում եմ՝
այնտեղ,
Լոնդոն,
Գեորգ թագավորի մոտ»։
Համարակալված,
ամրացված է։
Պատմությանն են կարում։
Ու նրան
և՛ Բրոդսկին,
և՛ Ռեպինն են նկարում։

4

Խավար և կապույտ։
Պատուհաններ պետերբուրգյան։
Քաղաքը
շղթայված է
քնով ու հանգստով։



Սակայն...
քնած չէ
տիկին Կուսկովան*։
Վերադարձել են պառավի
և՛ սերը, և՛ կիրքը։
Մահճակալ
ու անուրջներ
վարդագունել է արևելքը։
Դեղնած տաշեղները
նրա մազերի՝
քմահաճ
սոսնձել է
արցունքոտ հիացմունքը։
Այդ ինչի՞ց է
աղջիկը
չորանում ու խամրում...
Լուռ է...
Բայց զգացմունքը
ոնց որ շատ է խոր։
Պե էն Միլյուկովն է
նրան մխիթարում՝
շատ-շատ բաներ տեսած
դայակն այդ
բեղավոր։
«Քունս չի տանում, տատիկ...
խեղդուկ է այնպես...
Պատուհանը բաց
և ինձ մոտ նստիր»։
— Կուսկովա՛, ի՞նչ կա։
«Տխուր եմ ես...
Անցած-գնացած
օրերից խոսիր»։
— Ինչի՞ մասին...
Երբեմն ես
հիշում էի
վեպեր պես-պես,
եղած-չեղած

Հին-հին բաներ՝
Թագավորնե՞ր,
Թագուհինե՞ր…
Ես էլ
տկար խելքովը իմ
կթագադրեի
Միխայիլին։
Քան թե ինչ-որ
օտար մի տոհմ…
Բայց դու,
աղջիկս,
ինձ չես լսում…
«Ա՜խ, տատիկ իմ,
Թախծում եմ ես։
Սիրտս մարում է, սիրելիս։
Պատրաստ եմ ես
լալու կրկին…»։
— Տերն ողորմա
ու քեզ փրկի։
Ի՞նչ ես ուզում.
ասա, խնդրիր։
Որպեսզի
չփքվես
դու մեզ վրա,
կտանք ազատություննե՞ր,
կոնստիտուցիա՞…
Թույլ տուր
ճառաշըրով
Թրջեմ
այրող խռովքդ…
«Ես հիվանդ չեմ։
Գիտես…
սիրահարված եմ…
ես…»։
— Զավակս,
աստված թող փրկի քեզ։
Եվ Միլյուկովին,



աղոթելով,
խաչակնքեց
նրան
պրոֆեսորական աչքով։
— Թո՛ղ, Կուսկովա,
տարիքում մեր
անիմաստ է
ձրի
սիրել։
«Ես սիրում եմ»,
շշնջաց նա
պրոֆեսորի
ականջն ի վար։
— Սրտակիցդ իմ,
առողջ չես դու։
«Թող ինձ,
սիրում եմ
այդ մարդուն»։
— Կուսկովա,
բուժվիր,
ջղերդ են այդ…
«Ա՜խ, տատիկ իմ…
տատիկ իմ,
ա՜խ…
Նրան տանում են
ձեռքերի վրա։
Իսկ ո՞նց է երգում
ազատության մասին…
Կամ նա,
կամ թե ջուրը կնետեմ
ես ինձ…»։
Պառավը
բարձերի մեջ է թաղվում,
և լսվում է լոկ.
«Սա՛շա…
Հոգյա՛կ»։

Թևով սրբելով
արցունքը
տաք,
բեղավոր դայակը բղավեց.
— Ո՞ւմ...
Դե, բացեիբաց պատասխանիր։—
«Կերենսկուն...»։
— Այդ ո՞ր...
Սաշկայի՞ն։—
Եվ խոստովանությունից
այդպիսի՝
ճապաղվեց
դեմքը
Միլյուկովի։
Պրոֆեսորն իսկույն
աշխուժացավ.
— Դե, այդ ի՛նչ,
այդ նույն բանն է,— ասավ։
— Նիկոլայի օրոք
և Սաշկայի՝
մենք կպահպանենք
կայք,
եկամուտ։—
Գուցե
ափերին Նևայի
այսպիսի
տիկնայք
տեսե՞լ եք դուք։

5

Ջրնգացնելով
խթանները
մինչպատերազմյան,
ակսելբանտները
քարշ տված
մինչև պորտերը.



(Լիգովկայի վրա «Սելեկտում»),
խոսում էին
մի ադյուտանտ
և շտաբս-կապիտան
Պոպովը։
«Պարոն ադյուտանտ,
մի՛ առարկեք...
Ասացեք,
էլ ինչի՞ ենք
սպասում մենք։
Ռուսաստանը
չհուղները
ծախում են չհուղներին,
և արդեն
հպատակ է նրանց
սպայությունը կադրային։
Դուք, անշուշտ,
պրոֆեսոր եք
ու լիբերալ եք։
Բայց խնդրում եմ
կոզակությունն իր տեղն
հանգիստ թողեք։
Օրինակ,
գանք ահա իմ դրությանը,
այդ...
սատանան գիտե, թե այդ ինչ բան է։
Այսօր
սպասյակիս
գոռում եմ ես.
— Մաքրիր կոշիկներս,
և այնպես,
որ ռեխ-մռեխդ
նրանց մեջ տեսնես,—
և, իհարկե,
մայր քաշում,
իսկ նա՝ ի ն ձ,
ի մ ի ն,

մո՛րս,
աչքիս լույս
Օլիզավետա Կիրիլովնային։
«Ո՛չ,
ես միապետական չեմ—
Թագեր
ու արծիվներ—
բ ա յ ց սոցիալիզմի համար
անհրաժեշտ է բազմ
Նախ՝ դեմոկրատիա,
ապա՝ պառլամենտ։
Կուլտուրա է պետք։
Իսկ մենք՝
Ասիա ենք։
Ես նույնիսկ
սոցիալիստ եմ,
բայց ոչ ալան-թալան։
Մի՞թե կարելի է
մեկեն, խկույն ևեթ։
Անհրաժեշտ է
քայլ առ քայլ,
թիզ-թիզ,
մատ առ մատ,
այսօր,
վաղը,
քսան տարուց ետ։
Իսկ սրա՞նք...
Վիլհելմից՝
խաչեր, ժապավեններ։
Բեռլինում
շրջում են
պերոնի տոմսով։
Դրամ,
շտաբներ,
լրտես-գործակալներ,
պետք է
Կրեստի գցել,



փտեցընել
նրանց,
որ գալիս են
կնքած վագոններով»։
«Դրան համաձայն եմ,
իհարկե, դեռ
այդ սրիկաներին
քիչ են կախել»։
«Լենինը,
որը
խռովություն է սերմանում,
նախագա՞հ է,
թե ինչ
Մինիստրների սովետի...
Պառավ Ռուսիա,
գժվե՞լ ես...
Ի՞նչ ես անում։
Լուծողական խմիր։
Կազդուրվիր,
ել ոտի։
Սպաները՝
Սուվորով,
Գոլենիշչև, Կուտուզով,
շնորհիվ քաղաքագետների՝
աճպարար-ճարպիկ,
պետք է ենթարկվեն
Բրոնշտեյնին անկարտուզ,
ինչ-որ Լյովկայի անհասարկ։
Ո՛նց չէ...
կողակության հետ
թող չանեն հանաք,
կթափենք
նրանց
փորոտին...»։
Եվ ազդոստանոտ անվերջ՝
հի՛-հի՛ և հա՛-հա՛,

Պոպովը՝
Հա՜-հա՜ և հի՜-հի՜։
«Երիցս կոտորվեք դուք,
չորիցս անիծյալ։
Պարոն ադյուտանտ,
ձեր ականջը մոտ բերեք.
Նորին
...բաղանցություն՜
Կալեդինը
գեներալ,
Դոնից,
մտրակիկով,
հաճեցեք հոտոտե՜լ։
Բայց մի՞թե մենակ է
գերազանցությունը նորին։
Կուբանի կոզակությունը,
Դնեպր,
Դոն...»։
Եվ մերթ բաժակներով՝
դո՜ն ու դի՜ն։
և խթաններով՝
դի՜ն ու դո՜ն։
Կապիտանը կոնծել էր,
ինչպես գիշերաբու։
Ծառաները
թեյնիկներն էին
անձայն մատուցում։
Իսկ Լիգովկայի ծայրում
ուրիշ բառեր էին
ներքնահարկերից
վեր բարձրանում։
«Ընկերնե՛ր,
ես ռազմբյուրոյից եմ
այսպես ուշ։
Նիստը հիմի՛, հիմի՛
վերջացրինք։
Ահա քեզ



մաուզերի
երկու հարյուր փամփուշտ,
իսկ այս հարյուր փամփուշտն էլ՝
հրացանի։

Մինչ
համաձայնողականները
բերանները կծեփեին,

մոտենում են
կազակները
և հեծանվորդները քիչ-քիչ
Պիտերցիներին. հրամայված է
ճակատ մեկնել,

իսկ այնտեղ
ուղարկում են
Գատչինայից։

Դուք,
որ Վիբորգյան թաղից եք,
Լիտեյնի կամուրջից
պիտի շարժվեք։
Տեսե՛ք,
երեկոյան մթության մեջ
չղովռաք,
գինետուն չսարքեք։
Ես
հեռախոսն եմ վերցնում,
չխեղդենք՝
մեզ կխեղդեն։
Կամ կվերցնեմ
և կամ հոգիս՝ դուրս,
պրոլետարական մարմնիցս
դեն։

Եկել է
ինքը,
պատռված վերարկուով է,
շրջում է անճանաչ,
զգույշ։
Այսօր,

ասում է,
շուտ է վեր կենալը,
իսկ վաղը չէ մյուս օրը՝
ուշ։
Ուրեմն, վա՞ղը։
Դեհ, չեն պրծնի մեզնից։
Կերենսկին ծեծ կուտի,
ծվեն-ծվեն կարվի։
Մենք վեր կհանենք
ցարի մահճակալից
այդ
Ալեքսանդրա Ֆյոդորովնային»։

6

Փչում են,
ինչպես միշտ,
Հոկտեմբերյան հողմերը,
ինչպես
փչում էին
կապիտալիզմի օրով։
Տրոիցկից* այն կողմ
սուրում են
տրամվայները,
սովորական
ռելսերը
օձապտույտելով։
Նևան է
կամուրջի տակով
սողում։
Կրոնշտադտցիներն են
Նևայով
լողում...
Ծուխով
հրացանների
զրույցից կորովի
Ձմեռայինը կորովի։



Սրընթաց ավտոյում,
մաշելով դողեր,
Հուշիկ,
ասես ծրարված
մի շեփոր լիներ,
նախկինը,
կծկված,
դեպ Գատչինա ճղեց։
«Ծպտել է պետք,
ապստամբ ստրուկնե՛ր...»։
Տեսնում են
ցան-ցիր աստղերը վերից՝
Ձմեռայինը
սառած
օղակում,
Ճիլիոննիով*
զորանոցներից,
կեքսհոլմցիներն են շտապում։
Իսկ Սմոլնիում
խորհելով
մարտի, զորքի մասին,
գրիմված
Իլյիչն է
քայլերն արագ նետում,
իսկ
քարտեզի մոտ
Անտոնովն ու Պոդվոյսկին
դրոշիկներ են
տնկում
այս-այն գրոհակետում։
Լավ է
իշխանությունդ
կամովին բեր ծունկի,
ո՛չ մի տեղ
չես ծլկի.
գալիս են
բոլոր ուղեկալներից կրկին

կարմիր գվարդիականները
դեպ Ձմեռային։
Շողացնելով սվինները,
եկան-հասան
ջոկատները բանվորների,
նավաստիների,
մերկերի.
ասես թե
ձեռքերը
իրար եկան
պալատի
գիրգ
կոկորդին։
Երկու ստվեր կանգնեցին։
Հսկա և անհաստատ։
Իրար եկան։
Ճակատ առ ճակատ։
Եվ պալատի բակը,
ցանկապատ-ձեռքերով մեծ,
ամբոխների
իրանը
սեղմեց։
Օրորվում էին
երկու
հսկայական ստվեր
խելահեղ քամուց
և գնդակների թափից։
Գնդացրերի
ճարճատյունը նման էր
սաստիկ
փշրվող ոսկորների
կափկափի։
Զայրանում են կանգնած պավլովցիները.
«Սկսեցին...
քաղաքականություն...
խաղալ...
Ինչ են



մեր դեմ
բոլշևիկյան հիմարուհիները*,
Հրամայեն
գրոհի գնալ»։
Բայց ստվերները
մաքառում էին,
խճճելով թաթերը,

և ոչ ոք
չէր անջատում թաթերն
ու չէր պոկում։

Լռությունը
չտանելով,
հանձնվեց Թույլը՝
հեռացավ
ջղաձիգ,
սարսափը հոգում։
Առաջինը,
վախից հաղթահարված,
դուրս եկավ
գումարտակը կանանց։
Տանմեկին մոտ
թողին մարտկոցները
միխայլովցիները կամ կոնստանտինովցիները...
Իսկ Կերենսկին
թաքնվեց.
փորձիր,
նրան հան դուրս,

Մտմտում էր
գլուխը կոզակի։
Եվ Ձմեռայինի պաշտպանները
թափվում էին,
նոսրանում,

ինչպես ատամները
սանրի։
Եվ երկար
տևեց
լռությունը այդ,

լռությունը հույսի
և լռությունը հուսահատության։
Իսկ Ձմեռայինում,
բրոնզյա դրվագներով
զարդարուն
փափուկ բազմոցներում,
նստած են
մինիստրները
պղնձյա կրծքանշաններով,
և մաքուր սափրվածքի
հոտ է բուրում։
Ոչ ոք չի նայում,
չի լսում նրանց,
սվինների անտառում են
նրանք արդեն։
Հասած տանձերի պես
կթափվեն ցած,
հենց որ
նրանց
ցնցեն։
Ձայնը՝
հազվադեպ է։
Շշուկով են խոսում։
— Կերենսկին ո՞րտեղ է։
— Կոզակների ետևում։
Եվ նորից՝ լուռ։
Ճնշիչ է։
Երեկոյան լոկ,
այսինչը.
— Ո՞ւր է Պրոկոպովիչը*։
— Չկա Պրոկոպովիչը։—
Իսկ Նիկոլաևյան
կամուրջի ետևից
չուգունապատ
նայում են
անսիրալիր,
ինչպես մահ,



Ավրորայի
աշտարակները
պողպատ։
Եվ ահա Կոնովալովի* դեմքը
օձիքից
վեր բարձրացավ։
Աղբյուրի պես
մեղմահոս
աղմուկը
այժմ
ալեբախությամբ դիզացավ։
Ո՞վ է այն բարձրահասակը...
Հասնե՞լ կարողացավ։
Ասես թե
ապակիներին
փայտերով հասցրին։
Այդ՝
երեքդյույմանոցներից
Պետրոպավլովսկի
բերդերը
շրմփացրին։
Իսկ քաղաքն ասես թե
պայթեցված,
ավեր է,
որոտացին
Ավրորայի վեցդյույմանոցները։
Եվ, ահա,
որոտյունը
չէր մարել դեռ՝
ահեղ
ու թնդաձայն,
երբ Պետրոպավլովսկից
վեր նետվեց
մի լապտեր,
ապստամբության
նշանը պայմանական։
— Կորչի՛։

Գրոհի՛ր։
Առա՛ջ։
Գրոհի՛ր։
Ներս խուժեցին։
Գորգերին։
Ոսկեզօծ ծածկի տակ են։
Ամեն մի աստիճանը
ամեն սանդուղքի
վերցնում էին,
կոխկրտելով
յունկերների դիակը։
Հեղեղի պես.
լցվելով
բոլոր սենյակները,
հոսում էին,
իրար խառնվում՝
եռուն ու փրփրոտ։
Կեսօրից էլ բորբ
բռնկվում էին
մարտերը
ամեն բազմոցի ետևում
ու վարագույրի մոտ։
Այս
անֆիլադով*,
որով անցել են
ցարերը՝
դիմավորված ողջույններով,
թավշյա դահլիճներով,
թեք միջանցքներով,
դղրդում, զարկվում էին
խզակոթերն ու սապոգները։
Ահա
շփոթված
ինչ-որ շան որդի,
իսկ նրա գլխին՝
մի պուտիլովցի,



քնքուշ,
ասես թե հերն է։

«Դո՛ւ, տղա՛ս,
գողացած ժամացույցը ցած դիր,
ժամացույցը
հիմա
մերն է»։
Աճեց ոտնատրոփը,
հարվածեց,
ծեծկեց,

սրբեց
ու կալնեց
այն տասներեքին*։
Խցկվեցին
փողկապի տակ.
ի՞նչ պիտ մտածեն։

Ասես
կացինն էր
կախվել ծոծրակներին։
Երկո՛ւ հարյուր քայլի համար...
երեսո՛ւն...
քսա՛ն...

«Կռվելն անմտությո՜ւն է»,
ճչում է մի յունկեր։

— Անձնատո՜ւր,
անձնատո՜ւր,—
լսվում է
տասներեք ձայն։

Իսկ դռներից՝
բաճկոննե՜ր,
շինելնե՜ր,
քուրքե՜ր...
Բավականությամբ գլորվելով
լռության միջից.

մի բաս,
կարծրանալով,
ճախր առավ վեր.

«Ովքե՞ր են այստեղ ժամանակավորները։
Իջի՛ր։
Վերջացավ ժամանակը ձեր»։
Ու մեկը
ներխուժածներից,
պենսնեն ուղղելով,
ասես ինչ-որ հասարակ ու պարզ բանի մասին,
ասաց.
«Ես,
ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ
Անտոնով,
ժամանակավոր կառավարությունը
հայտարարում եմ
տապալված»։
Իսկ Սմոլնիում
ամբոխը,
փքելով կուրծքն ի մի,
խլացնում էր
լուրերի
հրավառությունը չինչ։
Առաջին անգամ
փոխանակ՝
— Ու այդ կլինի...
երգում էին.
— Սա՛ է
մեր վերջին...
Պարզվել էին
շողերը
արեւելքից,
քիչ էր մնացել
մինչև լուսաբացը։
Ընկեր Պոդվոյսկին
մեքենա նստեց
և ասաց հոգնած.
«Քշիր Սմոլնի...
Վերջացած է»։
Լռեց գնդացիրը։



Լա՜վ հասցրեց էլի։
Լռեց գնդակների
փեթակն աղմկուն։
Վառվում էին,
հանց աստղեր,
կողերը ավիններին,
գունատվում էին
աստղերը
պահակակետում։
Ինչպես միշտ,
փչում էր
հողմաթև
հոկտեմբերը,
ռելսերը
կամուրջին
օձապտույտելով։
Շարունակեցին
իրենց վազքը
տրամվայները,
բայց արդեն՝
սոցիալիզմի օրով։

7

Նման գիշերներին,
նման օրերում,
գուրսը,
փողոցներում,
ամենուրեք
լոկ պոետներ
ու գողեր են
լինում։
Խավարն
աշխարհին
օվկիանն իր թավալեց
Կապույտ։

Խարույկներից վեր՝
դարչնագույն է։
Որպես սուզանավ՝
հատակ թաղվեց
պայթեցված
Պետերբուրգը։
Եվ երբ
հրավառ հողմերից
երերում էր
խավարը դարչնագույն,
նորից էր հիշվում,
վերևից
ու վարից,
անընդհատ բուքը։
Խավարն
այնպես էլ
նման է գետի,
կապույտ
խորխորատն
անհուն է։
Իսկ այստեղ,
ահա,
որպես տեսիլք
կետի,
«Ավրորա»-ի
հսկա մարմինը։
Գնդացրային
կրակը
խուզեց հրապարակը։
Գետափը՝
ամայի ու լուռ։
Եվ պարծենում են
լոկ խարույկները
թանձր
խավարում։
Եվ այստեղ,
ուր գետինը



կպչում է ջերմությունից,
վախից
կամ ցրտից ահավոր,
ձեռքերը
բռնած
բոցի լեզուներին՝
տաքանում է
մի զինվոր։
Լույսը
աչքերին
ընկավ զինվորի,
մազերի
փնջին
պառկելով։
Ես ճանաչեցի,
— զարմացա, ասի.
«Բարև ձեզ,
Ալեքսանդր Բլոկ*։
Ֆուտուրիստների
բախտը բանեց,
հնության
ֆրակը
թափվում է ցած»։
Բլոկը նայեց՝
վառվում են խարույկները։
«Շատ լավ է»,
ասաց։
Շուրջը
Բլոկի
Ռուսաստանն էր սուզվում...
Անծանոթուհիներ,
հյուսիսի մառախուղ,
իջնում էին
հատակ,
ինչպես նավաբեկորները
և պահածոների դատարկ
տուփերը։

Հանկարծ
դեմքը դարձավ
լումայափոխից ժլատ,
ավելի մռայլ,
քան մահը հարսանիքում։
«Գրում են…
գյուղում…
այրել են…
գրադարանը…*
իմ դաստակերտում»։
Հայացքը սառեց։
Եվ Բլոկի ստվերը
նայում է,
հենվելով պատին…
Ասես
սպասում են
երկուսով էլ՝
ջրի վրայով
քայլող Քրիստոսին։
Բայց
Քրիստոսը
չհայտնվեց Բլոկին։
Բլոկի աչքերի շուրջը՝
թախիծ։
Քրիստոսի փոխարեն,
երգելով ուժգին,
մարդիկ
հորդեցին
անկյունից։
Ծլե՛ք։
Ծլե՛ք,
ելե՛ք,
բանվորներ
ու բատրակներ։
Կռանող ու հնձող,
սեղմեցեք



հրացանը
ձեռքում երկաթե։
Դրոշակը՝
վեր։
Թշնամիներ՝
պառկե՛ք։
Ծլիր,
ով մերկ։
Օրն է
անպետք։
Հանուն խաղաղության,
հացի,
ազատության։

Կալվածատիրոջից
վերցրու հողը։
Վերցրու
բուրժույից գործարան։
Եղբայրացիր,
դասակ մարտնչող։
Նետիր
հնոտին։
Գետնին
զարկ։
Խփիր
հարուստին։
Թրա՛խկ…
Թա՛խկ։
Հերիք է,
հերիք է,
հերիք
հնազանդությունը
կրենք
սապատներիս։

Դողա,
սպասակազմ կապիտալ։
Ցնցվեցեք,
թագեր,

ճանկատներին։
Կուչ եկ,
ճարպ,
կառափնարան՝
վախ։
Թրա՛խկ...
Թա՛խկ...
Թա՛խկ...
Թրա՛խկ։
Այս երգը,
յուրովի երգված,
Հասավ
խուլ գյուղերը.
և ելան
նրանք
ցնցված,
ճամփին
խաչմերելով
կացինները։
Դա-
նա-
կով՝
ր՛խկ,
տեղն ու տեղ
կա-
տա-
ղի
տե-
րե-
րին մեր,
պա-
րոն
կալ-
վա-
ծատեր,
հա-
վա-



քեք
ձեր
իրերը։
Ժա-
մա-
նակն հասավ.
ով բո-
բիկ է՝
ել դուրս,
առ գերանդին
սուրսայր,
ճոճիր
կացինը սուր։
Է՜,
ինչո՞վ է վատ
իմ Նինան,
մենք ինքներս՝
աղա-ֆոն ենք։
Քարշ տուր
խրճիթ
պիանինոն
ու գրամոֆոնը։
Ո՛վ արծիվներ,
մոտ եկեք։
Թալանեցիք,
ու հերիք։
Դեմը ել
ցցափայտերով,
ճամփա դիր
փոցխերով։
Ստենկայի
ու Պուգաչևի
գործը
հիմա կավարտենք։
Ողջ
կալվածքներն
հարուստների

մենք
կրակով կմաքրենք։
Աքաղաղին
մոտ
Թողիր։
Բարձրացրու
եղանը։
Ա՜խ,
մի
մարիր,
սի-
րե-
լի աքաղաղ։
Թռցրու
կաղամբ-գլուխները։
Ջարդն է նրանց
ազգակից։
Ճարճատում է գնդացիրը,
մաղում հոպնակներից։
«Է՜խ, խնձորիկ,
լուսավո՛ր դու իմ։
Սպիտակներին
զարկ
աջից,
ձախից՝ կարմիրներին»։
Այդ մրրիկը,
մոքից մինչ Հրահան,
և ծուխը հրդեհի,
և հարկ,
կուսակցությունը
իր ձեռքն
առավ,
ուղղեց
և շարեց շարք առ շարք։





Ցուրտ է չափազանց։
Խիստ է ձմեռը։
Բայց քրտնած մարմնին են
կպչում բլուզները։
Կոմունիստներն են,
փայտ են բեռնում
աշխատանքային շաբաթօրյակում։
Մենք չենք գնա,
թեկուզ
գնալու
ունենք
մենք իրավունք։
Մ ե ր ճամփին,
մ ե ր վագոններում
մ ե ր փայտն ենք
բեռնում։
Կարելի է
գնալ երկուսին,
բայց ուշ կգնանք մ ե ն ք։
Մ ե ր փայտը
մ ե ր ընկերներին
պետք է
շուտ հասցնենք։
Գործը
ծանր է
ու հոգնաբեկ։
Փոխարենը՝
ոչ մի կոպեկ։
Բայց բանում ենք,
ասես թե մ ե ն ք։
Կերտում ենք
մեծ
մի էպոպե։
Աշխատենք,
ամեն ինչ տանելով,

որպեսզի կյանքը,
արագ վազքով,
երկաթե քայլերգով
սլանա,
**մեր** վագոններում,
**մեր** ստեպներով,
քաղաքները
**մեր**
սառած։
«Քեռի,
ի՞նչ եք անում այստեղերանք,
մեծ ու շատ
քեռիներ այսքան»։
— Ի՞նչ։
Սոցիալիզմ.
ազատ աշխատանք՝
կամովին
հավաքված մարդկանց։

## 9

Մեր
հանրապետության դեմ
կանգնած են հարուստները։
Բայց ինչպե՞ս հասկանալ նրան։
Եվ տարակուսանքի
հարցերն
անթիվ են.
այդ ի՞նչ
ազգություն է՝
«սոցիալիստական»,
և այդ ի՞նչ
«սոցիալիստական հայրենիք» է։
«Մենք
հրճվանքը ձեր հասկանալ
անզոր ենք։



Ինչո՞վ եք հրճվում,
ինչի՞ մասին երգում։
Այդ
ինչպիսի՞
նարինջ-պտուղներ են
աճում
բոլշևիկյան
ձեր դրախտում։
Ի՞նչ եք տեսել դուք
հաց ու ջրից բացի,
օրն օրին
գլուխ հանելով,
մի կերպ։
**Այդպիսի** հայրենիքի
ծուխը **այդպիսի**
**այդքան**
հաճելի՞ է միթե։
Ինչի՞ համար եք
կռվում,
երբ ասում են՝
«կռվիր»։
Կարելի է
ցրիվ գալ
ռումբի պայթյունից,
կարելի է
մեռնել
հողի համար **իր**,
բայց ո՞նց մեռնել
հողի համար
ընդհանուրի։
Հաճելի է
ռուսի հետ
ողջագուրվել
ռուսին,
բայց դուք
կորցրել եք

անունն իսկ՝
Ռուսաստան։
Այդ ի՞նչ
հայրենիք է
ազգուրացների։
Դուք ի՞նչ ազգություն եք...
Կոմինտերնակա՞ն
Կին,
և բնակարան,
և ընթացիկ հաշիվ՝
ա՛յ, դա՝
հայրենիք է,
երկիր դրախտավայր։
Հանուն
հայրենիքի,
ա՛յ, այդպիսի,
մենք կհասկանայինք
և՛ քաջություն,
և՛ մահ»։

Լսեցե՛ք,
ազգային պորտաբույծներ.
Հենց տքնությամբ է լավ
օրը մեր։
Սա
երգ երգոցը
կլինի
մեր առօրյայի,
աղետների,
հաղթանակների։

## 10

Քաղաքականությունը
պարզ է,
ինչպես մի կում ջուրը։
Հասկանում են
կուշտերը



երախաբաց՝
եթե թաղվեն
Ռուսաստանում
իրենց մագիլները,

բուրժուական
ողջ թռչնիկը
կորած է, կորած։
«Ինտելիջենս սերվիսից»,
«սյուրտեժեներալից»՝

«սիգուրանցներն»
ու «դեֆենզիվները»,
հորդում են
սրիկաներ
ու լրբեր զանազան,

կարել-կոճկելով
գորշ
շինելները,
պայուսակներում
տեղավորելով
ռումբերը։

Ծխավել են
նավամբարները,
տախտակամածն իսկ։
Հավաքագրող գործակալությունների
փողերով,
անարգել,

Նովոռոսիյսկ են
լողում Մարսելից,
Դուվրից
լողում են Արխանգելսկ։
Վիսկի,
երգ ու պար,
կուշտ են
խաղաբար։
Հերկված են
ողնուցներով
սառը ջրերը։

Դիտում են
պերիսկոպներով
սուզանավերը։
Լողում են հածանավերը,
արկեր թափելով։
Եվ
ականակիրներն են
տարվում ականներով։
Իսկ
այդ բոլորից
վեր,
պարզած
հրեշավոր հրանոթները,
գեր
դրեդնոուտները։
Ջրգվելիորեն
հոտելով
գազերով զանազան,
պրոպելլերներով ճեղքելով
ամպերը,
սավառնակից
սավառնակի վրա
ետ-առաջ են
ճախ-
րում
«հիդրոները»։
Ճամփեց
կապիտալը
կապիտաններ գիտուն։
Շոշափեցին
կոկորդը
և սեղմում են ձիգ։
Խցկվում ես
Սև ծով,
Սպիտակն ես
խցկվում,
Բալթիական,



թե Կասպից,
որտեղ էլ
նավը
խցկվի՝
վերջ
նավարկության.
կանգնած է
ծովերի տիրուհին՝
բուլդոգ
Բրիտանիան։
Չորս կողմից
բլոկադայի
օղակն է արդեն,
և հրանոթներն են
նայում դեմ առ դեմ։
— Կարմիրներին հաճելի չէ՞։
Սովա՞ծ են
նրանք։
Կիջնեն
ջրի տակ,
ձկնով
կկշտանան։—
Իսկ ում հաճելի էր
շորում
ալան-թալան,
որպես հետևակ՝
նավերից
ափ ելան։
— Ծովում՝
կխորտակենք,
ցամաքում՝
կդոփենք։—
Ուրիշի ձեռքով
կրակից շագանակ հանելով,
թոկից փախածները
բոլոր
քամուն են

տալիս
ծուխն հայրենիքի՝
դեռ չգնդակահարված
բարոն-կնյազներին
կանգնեցնում են առջևում
հիմարացրած տղերքի։
Փորեք գերեզմաններ,
դագաղ կուտակեք.
Յուդենիչի
զորքերը
զոռում են
դեպ Պիտեր։
Պահածոն՝
փթերով է,
ամեն ինչ՝
գումակում։
Տանկի թրթուրները
դեպ Պիտեր են
զոռում։
Հյուսիսից
գալիս է
ադմիրալը Կոլչակ,
Սիբիրի հացը
տալով
ոտքի տակ։
Բանվորներին՝ արճիճ,
աչքալույս իրիցկանանց,
երկնագույն
չեխերն են
ուղեկցում նրանց։
Խրամատներ՝
քանդված մեքենաներով,
սակրավորները
Ղրիմը ողջ
փորել են.
խոշոր տրամաչափի
հրանոթներով



Պերեկոպից
ջանում է
Վրանգելը։

Սիրում են
գնդապետներին
լեդիները սենտիմենտալ։

Գնդապետները
սիրում են
խնջույքներում դուրս տալ։

— Ես գնում եմ,
իբր
(վիսկի է խպշտում),

վրաս
տասը
բոլշևիկյան
հրեշներ են թափվում։

Մեկին՝ ա՛ռ քեզ,
մյուսին՝
ա՛ռռ, խփեցի.

Ի դեպ,
որպես դենդի,
մի կույս փրկեցի —

Լեդի,
ձեր այդ կրտած ձիուն
մի հարցրեք,

թե ո՞նց
ողջ Մուրմանսկը
նա ռմբարկեց։

Հարցրեք,
թե ինչպես
Դվինա գետը մեծ,
ներկված
արյունով,
դիակները
թաքցրած,
ահավոր
այդ գանձով

Հոսում էր
Սառուցյալ։
Թե ոնց սպանեցին
քաջերը այս
մի կոմունիստի,
և այն՝ կապկապած։
Ոնց սպաները
նորին մեծության,
մաքրելով ափը,
կրակոցներից
փախան։
Ոնց էր գորշ
խրճիթներին
պարն հրափետուրների։
և փափկասուն
ձեռքերը
ոնց էին սեղմում
կոկորդ։
Բայց...
«իթս է լոնգ ուեյ
թու Թըփերերի,
իթս է լոնգ ուեյ
թու գոու»*։
Բանվոր-գյուղացիների
առաջին
Հանրապետության վրա,
հրացաններ
շաչեցնելով,
շողացնելով սվիններ,
աշխարհի տուզերը՝
և՛ նրանք,
և՛ սրանք,
քշում էին
բանակներ,
շարժում տորմիղներ։
Անիծյա՛լ լինեք,
նեխած



կայսրություն, դեմոկրատիաներ։
բորբոսնած
«ֆրատերնիտե», «էգալիտեով»
ձեր։

Մեզ վրա
արճճի
եռաչուր է թափվում։
Մենք՝ մենակ,
թաքնվելու տեղ՝ չիք։
«Յանկի
Դուդըլ
քիփ իթ ըփ,
Յանկի Դուդըլ Դենդի»*։
Հրացան,
հրանոթների
ռռնոցների մեջ
Մոսկվան
կըղզի է,
և մենք՝ կղզում կանգնած։
Մենք
անոթի ենք,
մենք՝
աղքատ ու մերկ։
Լենինը գլխներիս մեջ,
ձեռքներիս մեջ՝ նագան։

## 11

Սլանում է
կյանքը,
իր մեջ առած մեզ.
Հասարակ
ու չոր։
Ապրում եմ
Ստախեևի տներում ես,
այժմ՝
ժողտնտգերխորհ։

Հրացանների զնգոցով
այստեղից տարան
տերերին
ու դրամարկղերը։
Այժմ այստեղ կան
ամեն տեսակ
մարդիկ
ու դասակարգեր։
Ձմռանը
փոքրիկ վառարանում
վառվում են
Շեքսպիրի հատորները։
Ատամներով
կափկափում.
կարտոֆիլը
նրանց համար
տոն է։
Իսկ ամառը
լսում են
պատուհանից,
պղնձյա դրամը
ձեռքերում.
«Տրանսվա՛լ,
Տրանսվա՛լ,
օ՜, երկիր իմ,
այրվում ես դու
բոցերում*»։
Ես
կաթսայի մեջ
այդ քարե
եփվում եմ,
և այդ կյանքը՝
ու վազք,
ու մարտ,
ու քուն,
ու մահ,



արտացոլվում է
մինչ մանրուքը
ոտից գլուխ
ամպրոպացող
տան
անթիվ հարկերում,
ինչպես տրամվայի մեջ
ընթացող
ամբոխն է
արտացոլվում։
Կռանալով՝
կրակոցին,
ընդմիջումին՝
աչքս օդանցքին,
որ տեսնեմ
նորից նոր,
սենյակ-նավակում այդ
լողացի
ես
երեք հազար օր։

## 12

Գլավտոպի շուրջը
շարժիններն են
վխտում։
Թուղթ համար
կգրկեն,
կհամբուրեն,
կսպանեն։
Դոփում են մույկերով
քարտուղարուհիները
պատասխանատու։
Փայտահատները
հացի
հերթի են կանգնել։
Գործն է
անհաշիվ,
բայց նրանց

հոգը չի.
մի ֆունտ հաց,
լրիվ,
առաջին կարգի։
Լոռու թեյ
խմելով,
քաշում են սղոց։
— Ֆիլիպովներ* չենք Գու,
սովոր ենք
վաղուց։
Կունենանք
և ճաշ,
կունենանք
և ընթրիք,
միայն թե
դռներից
սպիտակներին քշենք։
Ուտե՞լ ես ուզում՝
պնդացրու
գոտիդ,
հրացանը վերցրու
և մեկնիր ճակատ։—
Իսկ նրանց մոտով՝
մի
անփոխարինելի,
սապոգներով
ծեծում.
փայլի է գնում.
բաց է թողել
վարչությունը
ծիրանաշիր ու պովիդլո։
Տուզերը
ճարպիկ են անշուշտ.
Զունգելովիչի մոտ են
ճաշում*։
Ո՛չ շիլա,
ո՛չ շչի.



բիֆշտեքս,
բուլյոն,
հացը
քեզանից,
մեկուկես
միլիոն։
Շատ ավելի
վատ է
Գիտնականի բանը.
անհրաժեշտ է
ֆոսֆոր,
յուղ է պետք
տանը։
Բայց, ասես թե
դիտմամբ,
հեղափոխություն՝ կա,
իսկ յուղ՝ չկա։
Նրանք
գիտնական են,
կգրեն,
կբուժեն ձեռաց։
Ահա և
մանդատը՝
Լունաչարսկու գրած։
Որտեղ միս
և հաց՝
մի ժամով
այնտեղ կգան։
Կոմիսարը անքուն՝
մանդատն է կարդում
Լունաչարսկու գրած.
«Այդպե՞ս...
շաքար ձեզ...
այդպե՞ս...
ճար ;

Փայտ
կեչու...

չոր անպայման...
և մի մուշտակ՝
լայն
սպառման։
Ես ձեզ,
ընկե՛ր,
հարցնում եմ ուղղակի.
ուզո՞ւմ եք
տեր դառնալ
գլխարկի։
Գալի՞ս է
ամեն մեկը
զանազան քմահաճույքներով։
Քանի ուշ չի՝
վերցրեք,
ահա ձեզ
ձիու ոտքս։
Մորթին
աչքին քաշած,
ինչպես կախարդ-պառավ,
նա
երեք ոտքով
դեպի տուն դառավ։

13

Տասներկու
քառակուսի արշին բնակարան։
Չորսով ենք
բնակարանում մեր։
Լիլիան է,
ես եմ,
Օսյան
և Շչենիկ
շունն է։
Վերցրի
քրքրված



գլխարկս,
դուրս քաշեցի սահնակը։
— Ո՞ւր ես գնում։
— Զուգարան,
Յարոսլավսկի վրա։—
Քուրքս
առագաստի պես
փռփռում,
չորս կողմս բռնել է
այծահոտը.
Սահնակով
ծղան եմ
կրում,
քանդել եմ
խարխլած ցանկապատը։
Ծղանը
հաստ է,
Կարծր է քարից,
ուռած ծունկ
ասես թե
ինչ-որ
հսկայի։
Ներս եմ մտնում,
փայտը գրկած։
Քրտնած եմ,
թրջված։
Հանդիսավոր կարգով
տաշում եմ
գրչահատով։
Դանակը ժանգոտ
ու հին է։
Կտրում եմ,
հրճվում։
Գլխիս մեջ
ջերմությունը
աստիճանն է բարձրացնում։

Ծաղկում են մարգերը։
մայիսն է
երգում
ականջիս,
այդ
ձգվում է ուգարը
և կափույրի տակից։
Կոլոլվել են
իրար
չորս հոգի [illegible]։
Գալիս են
մարդիկ,
արթնացնում նրանց։
Արթնացան հազիվ.
Թունավորվել են գազից։
Նայում է
պատուհանից
ձյունակույտը սապատավոր։
Դեռևս չե՞ք սառել։
Ձյունե սապոգներով
սառնամանիքն է քայլում,
ճռճռացնում
ողջ գիշեր։
Երկնակամարը,
սենյակիս վրա
խոնարհված,
մայրամուտի
ցոլքերով
ջրցանվել է։
Վարդագույն
հարթությամբ
չվում են
հարավ
ամպանավերը։
Վարդագույն
հարթությունիցը դեռ
խարիսխ նետելու,



այնտեղ,
ուր կեչու
փայտերն են
վառվում։
Ես շատ եմ
թափառել
տաք երկրներում,
բայց
այս ձմեռ միայն
ինձ հասկանալի դարձավ
ջերմությունը
սիրո,
ընտանիքի,
ընկերության։
Միայն, ահա,
այսպիսի
ցրտին պառկելով,
ատամներով
մեկտեղ
կափկափելով՝
կհասկանաս,
որ չի կարելի
խնայել մարդկանց
ո՛չ վերմակ,
ո՛չ փայփայանք։
Երկիրն,
ուր օդը քաղցր է,
ինչպես մորս,
շատ հեշտ է
թողնել, հեռանալ։
Բայց այն երկիրը,
որի հետ
մեկտեղ ես մրսել,
չի կարելի
հավետ
մոռանալ։

14

Թաքցրեց
այն ձմեռը,
դաժան ու խիստ,
բոլորին,
ով հավես
մտավ խոր քուն։
Ի՞նչ խոսքերի տեղ է։
Ես տողերում
այս իմ
ես վոլգյան
ցավը
չեմ շոշափելու։
Ես վերցնում եմ օրեր՝
օրերի շարքից,
որ անհամար այլ
օրերի են նման։
Սովորական օրեր,
օրերի
գորշ շարքից—
Նավարկու
տարիներն են
քշում նրանց—
ոչ շատ
կուշտ,
ոչ շատ քաղցած։
Եթե
ես մի լավ բան գրել եմ,
եթե
ես
ասել եմ մի բան,
դրանում
մեղավոր են
երկինքները՝
սիրածի
աչքերը
միայն։



Ծագանակագույն,
կլոր,
բոցի նման
բորբ։
Հեռախոսը
խենթորեն դիվոտեց,
շրմփաց կոթառով
ականջիս.
ջագանակագույն
աչքերը
սեղմեց
ուռուցքը
քաղցի։
Բժիշկը բերանից թռցրեց՝
որպեսզի աչքերը
հառեն ջինջ,
ջերմություն է
անհրաժեշտ,
անհրաժեշտ է կանաչի։
Ո՛չ թե տուն,
սուպի համար,
այլ սիրելույս մոտ
հյուր,
կանաչ պոչերից
բռնած,
երկու
գազար եմ տանում։
Կոնֆետ,
ծաղկեփնջեր
ընծայել եմ ես շատ,
բայց բոլոր
ընծաներից
ավելի թանկ,
ես հիշում եմ
թանկագին
գազարը այդ

և կեչու փայտը
կես ծղան։
Բարակ է,
թաց է
փայտը
թևիս տակ,
մի փոքր
հաստ է
հոնքիցը միջակ։
Ուռել են
սիրելույս այտերը։
Աչքերը՝
ծերպեր են։
Կանաչին
ու սերը
բացեցին աչքերը։
Ափսեից էլ
մեծ են,
դիտում են
հեղափոխությունը։
Ես՝ Մայակովսկին եմ,
հեշտ է ինձ համար։
Նստել
և ուտում եմ
ձիու
մի պատառ։
Ճռնչաց լացով
դուռը։
Իմ կրտսեր
քույրն է.
— Բարև, Վոլոդյա։
— Բարև, Օլյա։
— Աղ ունե՞ս,
վաղը
Նոր տարվա
օրն է։—
Կիսում եմ,



կշռում ափերով
Մի պտղունց
աղը թաց։
Ջյուն
ու վախ
հաղթահարելով,
սայթաքում է քույրս,
գնում ցած։
Անցնում է Պրեսնյան եռավերստ,
որ աղի կարտոֆիլը քաղցրումեղցր։
Կողքից
ցուրտն է գնում,
աճում
ու մեծանում։
Խուտուտ է անում,
իբրև՝
տո՛ւր պտղունցը։
Եկավ,
հասավ տուն,
իսկ աղը
չի թափվում,
չի պոկվում մատներիցը։
Պատի այն կողմ՝
քը՛ստ-քը՛ստ.
«Գնա՛,
ա՛յ կնիկ,
ծախիր
պիջակըս
ու ցորեն
գնիր»։
Պատուհանի
Վերից
ձյունն է
թափվում.
քայլերը
ձյունի
մեղմ են.

փափուկ։
Մերկ է,
ճերմակ է
ժայռ
մայրաքաղաքը։
Քաղաք-ժայռին է
կպել
— անտառակմախքը մերկ։
Եվ ահա,
երկնքի շալի մեջ,
անտառի վերից,
Կուրս սողաց
ոսկին արևի։
Դեկտեմբերյան
լուսաբացը,
ուժասպառ
և ուշացած,
բացվում է
Մոսկվայի վրա
տրիֆտանենտով բռնված։
Սահեցին
ամպերը
դեպի գեր
երկրները։
Ամպերից
դենը
Ամերիկան է։
Ցառկել է,
լակում է
սուրճ
ու կակաո
Ձեր դեմքերին,
որ պարարտ են
խաղաղությունից,
ճաշափսեներից էլ
կլոր են,
գոչում եմ



մեր աղքատ
այս երկրից։
— Ես
սիրո՜ւմ եմ
այս երկիրը։—
Կարելի է
մոռանալ,
թե որտեղ և երբ ես
փորըդ
և կզակըդ
հաստացրել,
բայց անկարելի է
մոռանալ
այն երկիրը,
որի հետ
մեկտեղ ես
քաղցել։

15

Սանդուղքն է
հենց ականջիս տակ՝
մոտ երկու հարյուր
սանդուղքով։
Բերում են
բոլենները լրաբեր
սանդուղքով
լուրեր։
Օրերը դոփեցին
ու կանգ առան։
— Ահա՛ ձեզ,
հասաք այս օրին,—
վառելիք
չկա
զավոդների
որկորին։
Մինչ ծխնելույզը
մինչև երիթը,

երկնքի
   լաքը
      մրոտելով անվերջ.
Լոկոմոտիվն է
քարացել
      ձյունաթմբերի մեջ։
Գույնզգույն
      կարկատաններ
            փակցրած մույկերին,
դարբասների
      երկաթյա խոռոչից,
բոլորը,
   ովքեր մոբիլիզացվել էին,
բահերը վերցնելով՝
         դուրս եկան նորից։
Անտառի ետև
      ելան,
Մեկտեղ
   գործի կպան։
Ես եմ,
   դուք եք,
Մեկտեղ
   փորեցինք մենք։
Եվ նորից է
      գնացքը
         սուրում
դեպ ձյունածածկ
         հեռուն։
Առանց ջուր
   ու հաց
մարմինն է
      թուլանում։
Ձեռքներս իրար հյուսած,
պատգարակ ենք շինում։
Հիմա
   երգիր,
և կարելի է



      դեպի տուն քայլել։
Միայն թե
պառկած են ձեռքերիդ
հինգ ցրտահարներ։
Այսօր
   կեղտոտ ու մութ
         սանդուղքներին
քաղքենիական
      խոզային
         լուրերն էին զեռում.
— Դենիկինը
      ուղղակի
         Տուլայի
վառոդե
   սրտին է մոտենում։—
Զարդարվեցին քաղքենիները։
      Քչփչախումբը խոհարարական
փոշու մեջ
   քայլերն է տպում.
— Լինելու են...
   թեյի գետեր...
         պաքսիմատ,
            շաքար...
մանրամաղ ալյուր...
         անհաշիվ փութ...
Մո՜-ո՜-ո՜տ են սպիտակները,
թաքցրու կերենկաները։—
Բայց քաղաքը
      պլակատային կադրերով
            արթնացավ։
«Պրոլետարնե՛ր, ձի հեծեք»,
            այդ կուսակցությունն էր կանչում։
Եվ դեպի հարավ,
Մամոնտովի
      վաշտերին
         հասնելու համար,
կարմիրներն են թռչում։

Այսօր
օրը
ներս ընկավ շտապով,
լռությունը
ճիչով ճեղքելով,
Հաճախ խռխռացնելով
խոցված
թոքերով,
ընկավ,
շունչը փչեց
արնակոլոլ։
Արյունը,
փոշու հետ շաղախված,
սառեց,
Հոսելով
սանդուղքի տակից,
և նորից
կաթիլ-կաթիլ
հատակին
կաթեց
Կապլանի
գնդակից։
Քառաթաթները
ցատկոտեցին,
շնագայլի
ոռնոց
արձակեցին։
Սալոպն
ասում է
կապային,
կապան՝
սալոպին։
— Իրա՞ր անցան
երկարաքիթ շնաձկները։
Կլափեն
շուտով
բոլորին։—



Իսկ հետո
չռեցին
ափսեաչափ աչքերը
ազգանունների,
կոչումների
երկար արահետին։
Քամին
պոկոտում է
գնդակահարվածների ցուցակները։
Պտտում,
ոլորում է
ու զարկում գետնին։
Դասակարգի
թաթն է
գիշատչի վրա պառկել։
Մկանուտ
թաթը՝
Չեկան։
— Թշնամիներ, քարացե՛ք։
Հեռո՛ւ, ավելորդներ։
Զգա՛ստ,
քաղքենիներ։
Օջախի մո՛տ։—
Միլիոնանոց
դասակարգը
կանգնեց Իլյիչին պաշտպան,
սպիտակաժանիք
հրեշի դեմ
արնախում,
և լցվեց
Լենինի մեջ,
բուժելով նրան,
կամքի այդ
դեղը լավագույն։
Թաղվեցին
քաղքենիները
խոհանոցի խանձարուրի մեջ։

— Մեզ ձեռք մի՛ տվեք,
մենք՝
ճուտեր ենք խեղճ։
Մժղուկներ ենք մենք,
դուք մեզ կերակրեք։
Փակի՛ր,
ժամանա՛կ,
երախը քո։
Քաղքենիներ ենք մենք։
Դուք մեզ հասցրեք,
և մենք
ձեր իշխանության
կլինենք կողմ։—
Իսկ առավոտյան
երկինքը
հանրաժողովի զանգահարություն էր։
Երեկվան
ստի մեջ
մեղադրելով,
զանգահարում էին
արևն ու հավքերը՝
ո՛ղջ է,
ո՛ղջ է,
ո՛ղջ է,
ո՛ղջ։
Եվ օրերը
նորից
լարված կարգովը հին՝
վազում են
ու խնդրում.
— Գնանք
մեզ հետ՝
«կրկին
մի լարում»։
Մարտից դեպ աշխատանք,
աշխատանքից
դեպ գրոհ,



ու քաղցած,
ու մերկ,
ու ցրտում,
պահեցինք
նվաճածը
մեր ձեռքերով։
և այնպես,
որ արյունն էր եղունգներից ցայտում։
Ես տեսել եմ
վայրեր,
ուր թուզ ու սերկևիլ
աճում էին
բերանիդ մոտ
առանց ջանքի.
ա՛յլ կերպ ես
վերաբերվում
նման վայրերին։
Բայց այն երկիրը,
որ նվաճել,
խնամել ես կիսակենդան,
ուր հրացանի հետ պառկել ես,
թռել ինչպես գնդակ,
ու հանց կաթիլ
ձուլվել ես
մասսաներին,
նման երկրի հետ
կընթանաս
դեպ կյանք,
դեպ աշխատանք,
դեպ տոն,
և ընդառաջ մահին։

## 16

Պատմում էր
ինձ
խաղաղ հրեա
Պավել Իլյիչ Լավուտը*։

«Հենց ես
դռներից
դուրս ելա,
տեսնեմ՝
նրանք լողում են…»։
Վազում են
Սևաստոպոլով
ծխացող նավերի մոտ։
Այնքան ներբաններ
մաշեցին
մի օրում,
որքան մի տարվա երթերում։
Խարսխակայանում՝
տրանսպորտներ
ու տրանսպորտիկներ,
ծեծկռտուք,
ճիչեր,
հայհոյանք,
իրարանցում.
Թողած վարտիքները,
ճչում են
կամավորները,
մաքուր հասարակություն
ու զինվորականություն։
Մեկն առել է
դեղձանիկ,
մյուսը՝
առյալ,
մեկը պահարանով է,
մյուսը՝
հաքթուկով։
Կադետները,
որ ինչքա՞ն
մարդիկ են լոյալ,
մայր էին հայհոյում,
բոթում աքմունկներով։
Թողել էին մոդա,



մոռացել պատշաճություն,
մեկն առանց յուբկայի էր,
մյուսն՝ առանց գուլպայի։
Տղամարդը
կնոջ
մուշթին էր
զարկում,
զինվորը
կամրջակից
գլորում գնդապետին։
Մերոնք նեղում էին,
սանդղակները գնդակոծում,
վերջին էշելոնը
բարձվեց,
ինչպես շիլա։
Ճրխկացնելով
դուռը,
չոր, ինչպես զեկույց,
ամայի
շտաբից
դուրս եկավ նա։
Դիտելով
սապոգները,
քայլերով
կարուկ,
գնում էր
Վրանգելը
սև չերքեզկայում։
Ծովապատնեշը
դատարկ է։
Թողին քաղաքը։
Դատնեշի մոտ
կանգնած է
վեցթիանի
նավակը։
Եվ ծովի
ճերմակ անձրևին,

ասես թե զարկված
                    գնդակով,
ընկավ զույգ ծնկներին
Հրամանատարը գլխավոր։
Երիցս
        քաղաքը
                խաչակնքեց՝
երիցս
        հողը
            համբուրելով։
Գնդակների
            տարափի տակ
                        նավակ ցատկեց...
— Ձերդ գերազանցություն,
                        թիավարե՞լ։
— Թիավարել, այո՛։—
Հանեցին թիերը։
Գոթգոթաց
մոտորը։
Մոտորկան
            ուրախ
դեպ «Ալմազ»*
            սուրաց։
Դրոշակիրը
            գնդակի պես էր
                        սլանում։
Իսկ գալոշ-տրանսպորտներում,
                                հեռու-հեռվից,
քարշ էին գալիս մարդիկ՝
                        պոկված վարից,
                                    ցանից
կծկելով
        օրը
            հարյուր հիսուն հանգույց։
Փախչում էին տանից
                    ճանկը թուրք պոլիցիայի,
թուրքերի մոտ,



            ծակուռ,
                    դեպ նեղ Դարդանելը,
դողում էին
            վաղվա գալլիպոլցիները,
լողում էին
            երեկվա ռուսները։
Առջևում՝
        ծանը՛ր
                տարիներ ու տարիներ։
Դողա,
    ում որ տեսնես՝
                    սաղավարտ է կրում,
Արգենտինայում
                կկթես կովեր,
կմեռնես
        աֆրիկյան վիրապներում։
Օտար
    ալիքներն էին
                օրորում տրանսպորտները,
աչքի էին զարկում
                կիսալուսնով
                            դրոշները։
Եվ «Ալմազի» հասցեին
                    լսվում էին.
                                «Իժե՛ր,
գողացան գանձարանը,
                    ճղեցին,
                            սրիկանե՛ր»,
Արդեն հարկավոր էր
                    զգուշանալ
պատահական
            գնդակներից։
Ամերիկյան
            երկու ականանավ
կանգնած էին
            մոտիկ,
                    կողքից։

Ադմիրալն
ուղղեց դիտափողը
լեռների կողմը
հրացայտ.
օլ
ռայթ*։
Եվ ընթացան
նահանջող
ոհմակների պոչով,
Թոփերն ուղղած
քաղաքին,
ուղղությունը՝ Բաթում։
Աջարի ջեռոցներում
խորովվում են
լեռները,
օդը
օշարակել են
ծաղիկները։
Մերոնք
երգելով
գալիս են Ջանկոյից,
Թափվում
Սիմֆերոպոլից։
Ընդհատելով
զրույցը գնդակների.
դրոշի պես
փոթորկելով
մարտի կիրքը,
կարմիրների հետ
իջնում է
լեռներից
մարտական երգը։
Չխոնարհվեց,
երբ գնդացիրը նրան
փշրում էր,
անվախ



կանգնեց
անձրևի տակ արծիվ.
«Եվ մեզ հետ է
Վորոշիլովը,
կարմիր սպան առաջին»։
Արանքը ճղելով,
արագ ու լուռ,

լսում են
հրանոթները,
վհուկները ծովային,

թե ինչ է
լեռներից հասնում.
«Պատրաստ ենք մեռնելու

հանուն ՍՍՀՄ-ի»։
Շտաբի պետը
կնճռոտում է
ճակատը։
Չոր ձեռքի
մատները
ծռում են
անհնազանդ
տառերը.

«Շը-
պըրտ-
ված է ծով
Վրանգելը։

Գերիներ՝
չկան բոլորովին»։
Առայժմ՝
վե՛րջ
և՛ հեռագրին,
և՛ կռվին։

Հիշեցին,
թե ով չի հերկել,
չի հնձել՝ ով,

թե ում

դոմենյան հնոցներն են
սպասում հալոցքի։
Եվ շարժվեցին,
քրտինքը թևով սրբելով,
գետքեր
կարգելով
աշտարակներին։

## 17

Ոչ պարտք
և ոչ երգ
չեն հարկադրի
գովերգել
այն ամենը,
ինչ որ կատարում ենք
այսօր։
Ես
կես հայրենիքն իմ կարող էի
քանդել,
մյուս կեսը՝
կառուցել, մաքրելով։
Ես նրանց հետ եմ,
որ կառուցելու դուրս եկան
համատարած տենդում
առօրյայի։
Փառաբանում եմ
հայրենիքս,
որ հիմա կա,
բայց երիցս,
որը պիտի լինի։
Ես
ոփրում եմ մեր պլանների
անհագնությունը,
ամենենց քայլերը
մեր թափի։



Ուրախ եմ
քայլերգին,
որով ընթանում ենք
կռվի
և աշխատանքի։
Տեսնում եմ՝
ուր աղբն է այսօր
նեխում դեռ,
ուր միայն հող է հասարակ,
տեսնում եմ,
ընդերքից,
սաժեն առ սաժեն,
կոմունայի
տներն են
վեր խոյանում արագ։
Եվ խամրում է
հավատքը
բնության ընծաների
ու մի փութ
խոտի նկատմամբ,
և շուռ են գալիս
տրակտորները դեպի
գյուղացիների
սրտերը կոշտապատ։
Եվ պլանները,
որոնց
ճակատակայաններում
երբեմնի
աղքատության արգելակն էր պահում,
այսօր
բարձրանում են
կապույտ օրերից,
ձև առած
երկաթից ու քարից։
Եվ ես,
հանց մարդկության գարուն,
ծնված

մարտերում ու աքսորությամբ,
որ նույնն է,
իմ հայրենիքն եմ
երգում,
իմ հանրապետությունը։

## 18

Ես այստեղ
ինը
մայիս ու հոկտեմբեր,
տոնական
երթերի
դրոշների տակ,
միլիոնների հետ
իմ սիրտն եմ բերել,
հպարտ
ու հաղթական,
ուրախ
և վստահ։
Նետվել եմ
տագնապահար
դեպի կրակոցները թշնամու,
քանի դեռ
զոհվածի
արյունն էր տաք,
լռելու
և մռայլվելու,
ճչալու
և մռնչալու,
այստեղ,
սև դրոշների
ծփյունի տակ։
Ես եղել եմ
այստեղ
թմբկահարության ժամին,
և արցունքների



ու սառցի
ցրտության մեջ մեռյալ,
իսկ ավելի հաճախ՝
պարզապես
մենակ։
Վեր ցցած
սրածայր
սաղավարտները,
աշտարակ-գլխավորներն են
կանգնել
պահակ։

Կեղծում են
եկեղեցիները,
վանական անզգամները,
գմբեթ-գլուխներում
չարությունը
պահած։

Գիշեր է,
և մեր գլուխներին՝
լուսին։
Նա
տանում է
այն կողմից ինչ-որ...
այնտեղից,
ուր ժողկոմսովետն է
ու Կենտգործկոմը,

Կրեմլի
մի պատառը
խավարից խլելով
ատամներից
ցած է սողում։
Բարձրանում է
հարթ
քարաժայռին,
մի վայրկյան
գլուխը
խոնարհում,

և նորից
գլուխ-լուսինը
ժայռից
սահում է,
տարվում։
Գլխի համար
կառափնատեղը
շատ
անհարմար տեղ է։
Ահա
լուսնի լույսով
երևում է ինձ։
Հրապարակը՝
փայլի մեջ,
ցերեկվա հայտնությամբ...
Պարիսյան է
դրոշակիր մի կին,
խոնարհվել է նրանց վրա,
որ ննջել են
պատի տակ։
Հեղեղել է
կոպիճները
լուսնի նիկելը,
սվինները
լույսի տակ
է՛լ ավելի կարծր
ու չար են։
և
ինչպես իրար վրա կուտակված գրքերը,
Նրա
դամբարանն է։
Բայց և ո՛չ մի վիշտ
այդ դռներից,
ու սև,
ու կպչուն,
ներս չի քաշի ինձ,—
Հոգիս



մեռյալով
չեմ վրդովի երբեք,—
նա տրոփում է,
ինչպես
սրտերում ու քունքերում
մարդկային եռուն
այն գարնանն էր
տրոփում։
Բայց գերեզմանները
բաց չեն թողնում,
և ինձ
անուններն են կանչեցնում։
Ահա՛,
կարծես
մի ժամ առաջ եմ տեսել
սրան։
Ծիծաղում էր։
Նկարվեցի
կողքին կանգնած...
Եվ ընկնում է
Վոյկովը*
արնաքամ,
ու թերթը
արյունով է թաց։
Ապա
իմ առաջ,
ակնթարթում մի կարճ,
այնպես,
ինչպես նկարներով ենք նրան
հիշում,
սրածայր մորուքով,
շինելով ճմռթված,
անցավ նա՝
երկաթյա ու մկանուտ։
Պատանուն,
որ խորհում է
կյանքի մասին իր,

որը որոշում է՝
ընդօրինակել ո՞ւմ,
կասեմ
առանց մտածելու.
— Ընդօրինակեք
ընկեր
Ձերժինսկուն*։—
Ո՛րը ոսկրացած,
ո՛րը փոշիացած,
պարապի տակին
պառկել են...
Իսկ երբեմն էլ՝
փոշի անգամ չկա։
Մեռել են
գնդակներից,
աքսորից,
աշխատանքից,
ու համարյա
ոչ ոք՝ տարիներից երկար։
Եվ թվում է ինձ,
որ կարմիր այդ
գերեզմանոցում
ընկերներին
տագնապի
թույնն է տանջում։
Անցնում է փոշու միջով,
ոսկորներից քամվում՝
խոտի,
ծաղկի միջով
լույս աշխարհ ելնում։
Եվ խոտ
ու ծաղիկ
շրշում են անհանգիստ։
— Ասացեք,
այստե՞ղ եք։
Ասացեք,
չե՞ք դավաճանել։



Ընթանո՞ւմ են առաջ։
Կանգ չե՞ն առել,
ինչ է։
Կավարտի՞
կոմունան
լուսակերտ ու պողպատակերտ
ձեր
հանրապետության
այսօրվա բնակիչը։—
— Ընկերնե՛ր,
ննջեցեք խաղաղ...
Պատանի երկիրը
ձեր
ամրանում է
ամեն
մի նոր գարնան
ավելի շլացուցիչ,
վայելչակազմ,
ուժեղ։—
Եվ նորից
խշրտոց
աճյունասափորներում,
շշնջում են
պսակները
ժապավեն լեզուներով.
— Իսկ նրանց
սև Ասիաներում
ու Եվրոպաներում
վա՞խն է իշխում,
ու նի՞նչ,
ու շղթանե՞ր։—
— Ո՛չ։
Գալարուն օղերի
ու բանտերի,
բռնության,
դրամի աշխարհում,
արթնացնելով,

վարելով՝
նորից
ձեր
մեծ ստվերներն են
ընթանում։—
— Իսկ ձեզ չի՞ ներծծում
ամենազոր տիղմը,
պաշտոնամոլությունն ուղեղներում
չի՞ հյուսել
ոստայն։
Ասեք,
միասնակա՞ն է,
ասեք,
միասի՞ն է,
պատրա՞ստ է
մարտի
ուժը կուսակցական։—
— Խաղաղ ննջեցեք,
ընկերնե՛ր...
Ո՞վ կխլի
ձեր հանգիստը վաստակած։
Սվինները
ծառացրած,
կելնենք վեր
առաջին իսկ
կոչովը՝
«Առա՛ջ»։

19

Ես
մեր ողջ մոլորակը
շրջել եմ
համարյա թե.
և՛ կյանքը
լավ է,



և՛ ապրելն է
լավ։
Իսկ մեր ժխորում
մարտական,
եռուն,
է՛լ ավելի է
լավ։
Ձգվում է
օձ-փողոցը։
Տներն
օձի կողերին են։
Իմն է
փողոցը։
Տները
իմն են։
Լայն չռած
պատուհանները՝
շարվել են
խանութները։
Պատուհանում՝
մթերքներ,
գինիներ,
մրգեր։
Ճանճերի դեմ՝
մարմաշ։
Թարմ է
պանիրը։
«Գներն
իջեցված են»։
Փայլում են
լամպերը։
Իմ
կոոպերացիան
սկսել է
ամրանալ։
Խփում ենք
կոպեկով։

Լավ է չափազանց։
Կրծքով
սեղմվել եմ
ցուցափեղկին։
Իմ
ազգանունն է
ռուբրիկայում պոետական։
Ուրախանում եմ ես՝
այդ
աշխատանքն է իմ
ձուլվում
աշխատանքին
իմ հանրապետության։
Հաստաշուրթ շինով
փոշին են
խառնում.
իմ
դեպուտատներն են
իմ ավտոմոբիլում.
դեպի կարմիր շենք՝
ժողովի են շտապում։
Նստեք,
մի՛ քամհարեք
իմ Մոսսովետում։
Դեղին
ատրճանակ։
Դեմքեր վարդագույն։
Իմ
միլիցիան է
ինձ
պահպանում։
Ցույով
վարում է նա,
որ գնամ
աջից։
Աջից
կգնամ։



Լավ է, լավ է ինչ։
Երկինքը՝
մետաքս
գլխիս վերև,
դեռ երբեք
այսքան
լավ չէր եղել։
Անցան
օդաչուները՝
ամպա-
թումբերը։
Այդ
իմ օդաչուներն են.
կանգնել եմ
ոնց ծառ
հաստատուն։
Հենց
առաջին կոչով մեր
կհարվածեն
թշնամուն։
Աչքս գցում եմ
թերթին.
կեցցե՛ն
վիեննացիք*։
Բուրժույների
հետույքին
ծնկներով
հասցրին։
Դատարանն են
հրկիզում։
Ձեր
գութ*։
Բոցն է
անցնում
թղթերի միջից։
Դատախազներն են
ցնցվում։

Լավ է, լավ է ինչ։
Խայտաբղետում է
առաջնորդողը
սպառնալիքներով։
Կոկորդներում մնա։
Սպառնո՞ւմ են.
լավ։
Աչքերիս
առաջ
ընթանում են
գնդերը։
Զորքերը
զվարթ
թակում են
թմբուկները։
Ոտքերն ամուր են,
բարձր են
գլուխները։
Հրանոթները
տարվում են,
անցնում են
աստղակիրները։
Համարեցրի քայլերգին
տակտը
քայլերիս.
Ձեր
Թըշ-
նա-
մի-
ները՝
իմ
Թըշ-
նա-
մի-
ներն են։
Խցկվո՞ւմ են։
Ոչի՛նչ։



Կդարձնենք
փոշի։
Մուխը
տարածվում է։
Օդը պահպանիր։
Փա՛ֆ-փի՛ֆ՝
փնչացնում են
ֆաբրիկաներն իմ։
Դարձիր արագ,
մեքենա,
է՛լ ավելի,
որպեսզի
հավետ չլռես,
իմ
կոմերիտուհիներին՝
ավելի շատ
չթեղեն։
Քամին է
երգում
Հարևան այգում։
Բուր-
մունք-
նե-
րով
անցավ,
ա՜խ, որ-
քան է
լավ։
Քաղաքից դեն՝
հանդն է։
Հանդում
կան գյուղեր։
Գյուղերում
գյուղացիներ կան։
Մորուքներն՝
ավելիկներ։
Նստել են

Հայրիկները։
Ճարտար են
բոլոր։
Հերկում են
հողը,
գրում
ստանավոր։
Ամեն մի գյուղակ՝
առավոտից վաղ,
սիրով սրտաբաց
ցանում է,
թխում
ինձ համար
հաց։
Կթում,
հերկում է կամ
ձկներ որսում։
Մեր
Հանրապետությունը
կառուցվում,
ծառս է լինում։
Դարերով են հաշվում
մյուս երկրների
տարիքը։
Պատմությունը
նման է
գերեզմանի երախի։
Իսկ իմ երկիրը՝
պատանի է.
ստեղծի՛ր,
փորձի՛ր,
խիզախի՛ր։
Խինդն է հորդում,
ձեզ համար
չհանե՞նք բաժին։
Կյանքը զարմանալի է
ու հրաշալի։



Կապրենք
հազար տարի
առանց
ծերանալու մենք։
Կաճի
տարեցտարի
մեր կայտառությունը։
Փառաբանեք,
թուրճ
ու երգեր իմ,
չահելության երկիրը։

1927

# ԱՄԲՈՂՋ ՁԱՅՆՈՎ

## ՊՈԵՄԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

Հարգելի ընկերներ,
սերունդներ հետնորդ,
երբ այսօրվա քարացած
գարշակույտը քրքրեք,
ուսումնասիրեք խավարը
մեր օրերի,
դուք,
երևի,
իմ մասին էլ կհարցնեք
և, երևի, կասի
ձեր գիտունը,
էրուդիցիայով ծածկելով
տարափն հարցերի,
թե եղել է իբր
բանաստեղծ մի եռուն,
որ կատաղի թշնամի էր հում ջրի*։
Պրոֆեսոր,
հանեք ակնոց-հեծանիվը ձեր,
ես ինքս կպատմեմ
ժամանակի մասին
ու ի՛մ մասին էլ։
Ես ջրկիր եմ
ու աղբահան,
հեղափոխությամբ
կանչված ու կոչված,
գնացի ճակատ
պոեզիայի՝ կնոջ այդ քմահաճ,
աղայական այգեգործությունը
թողած։
տնկել է մեծ սիրով այգի,



աղջիկ,
տնակ,
ջուր
հուշիկ։
«Իմ ձեռքով եմ այգին տնկել,
ինքս էլ ջրեմ անուշիկ»։
Մեկը թափում է երգեր ցնցուղից,
մյուսը ցրցանում
ջրիք բերանից,
Միտրեյկաներ խոպոպավոր,
Կուդրեյկաներ իմաստախոր*։
դե՜հ գլուխ հանիր դրանցից։
Չկա կոկորդի համար կարանտին,
պատերի տակ ծնգացնում են
մանդոլին.
«Տարա-տինա, տարա-տինա,
տինն*...»։
Մի մեծ պատիվ չէ,
որ այդ վարդերից
կերտած քանդակներն իմ խոյանան
այգիներում,
ուր թոքախտն է խորխում,
ուր կա սիֆիլիս
և բ..ն է խուլիգանի հետ թրևում։
Ես իմ
ատամներին
ագիտպրոպն է սեղմվել.
Ես էլ կարող էի
ձեզ համար ռոմանսներ թխել։
շահավետ է դա
ու հաճելի։
Բայց ես զսպել եմ
ինքս ինձ,
կանգնելով
կոկորդին
սեփական իմ երգի։
Լսեք, ընկերներ,

սերունդներ հետնորդ,

ագիտատորին,

պարագլխին բարձրագոչ։

Խլացնելով

հեղեղները պոեզիայի,

ես կքայլեմ

լիրիկական հատորների վրայով,

ինչպես ապրողն

ապրողների հետ խոսի։

Ես կգամ ձեզ մոտ

կոմունիստական հեռուն

ո՛չ այնպես,

ինչպես եսենինյան երգահյուս դյուցազունը։

Երգս ձեզ կհասնի

դարերի լանջով,

բանաստեղծների ու կառավարության

գլխի վրայով։

Երգս կհասնի,

բայց կհասնի նա

ո՛չ ինչպես նետը

սիրո-քնարական որսի ժամանակ,

ո՛չ ինչպես նումիզմատին*

կհասնի դրամը մաշված

և կամ ինչպես

մեռնող աստղերի լույսն է հասնում [illegible]։

Երգս

դժվարությամբ

դարերի բեռը կճեղքի,

կհայտնվի

տեսանելի,

կոպիտ,

ծանրացած,

ինչպես մեր օրերն է

հասել ջրմուղը,

Հռոմի ստրուկների

ձեռքով դեռ

կառուցված։



Կուրգաններում* գրքերի,

ուր երգերն են թաղված,

պատահմամբ հայտնաբերելով տողերը երկաթե,

դուք

հարգանքով

շոշափում եք այն,

որպես թեկուզ հին,

բայց ահավոր զենք։

Ես

ականջը

խոսքով

սովոր չեմ շոյել.

խոպոպ-մազերի մեջ

աղջկային ականջները

չեն կարմիր բառերից

կիսաանպատկառ։

Զորատեսի հանած

իմ զորք-էջերը,

ես անցնում եմ

տողերով շարք առ շարք։

Արճիճ-ծանրությամբ

ոտանավորներն են կանգնած,

պատրաստ և՛ մահվան,

և՛ անմահ փառքի։

Պոեմներս են քարացել՝

երախները բաց,

նշան բռնած վերնագրերի

թնդանոթափողերն իրարու սեղմած։

Երգիծանքի հեծելազորն է

կանգնել ամուր,

ամենասիրված տեսակի

հրազենը՝

պատրաստ

կանչերով գրոհել ամենուր,

ցցած հանգերի

սուրծայր նիզակները։

Եվ մինչ ատամները

զինված այս զորքն իմ,
որ քանի տարի սուրաց
հաղթաբար,
մինչև թերթիկը
ամենավերջին
ես քեզ եմ տալիս,
երկրագնդի պրոլետար։
Բանվոր
վիթխարի դասի թշնամին
և իմ թշնամին է,

չար ու վաղուցվա։
Կարմիր դրոշի տակ
հանել են մեզ
կռվի
տարիներն աշխատանքի
և օրերը կիսաքաղց։
Մենք բացում էինք
Մարքսի
հատորները,
ինչպես տան մեջ
սեփական
կբանաս փեղկը,
բայց առանց կարդալու էլ
գիտենք արդեն,
ո՛ր բանակը գնալ,
ո՛ւմ հետ կռվել պետք է։
Ըստ Հեգելի
չենք մենք
սովորել դիալեկտիկան։
Մարտերի շառաչով էր
նա լցվում մեր երգը,
երբ բուրժույներն էին փախչում
մեր գնդակների տակ,
ինչպես նրանցից երբեմն
փախչում էինք
մե՛նք էլ։



Հանճարների հետքից,
անմխիթար այրու պես,
թաղման քայլերգով
թող քարշ գա փառքը,—
մեռի՛ր, դու իմ երգ,
շարքային որպես,
ինչպես մերոնք գրոհներում
անանուն մեռան։

Ծանրաքաշ բրոնզը
ինձ պետք չէ բնավ։

Թքել եմ
լորձին
սառը մարմարիոնի։
Կհաշտվենք փառքի հետ,—
հարազատ ենք իրար.—

պայքարների բովում
կերտած
սոցիալիզմը

թող դառնա
հուշարձան
բոլորիս համար։

Սերունդներ,
բառարանների ուղենիշերը ճշտեք.

Լեթայից*
դուրս կլողան
բառ-մնացորդներ,
ինչպես «պոռնկություն»,
«տուբերկուլյոզ»,
«բլոկադա»։

Ձեզ համար,
որ առողջ եք,
ճարպիկ ու մարմնեղ,

բանաստեղծը
լիզել է
խորխը թոքախտի
անողորկ լեզվով-պլակատ։
Տարիների պոչի հետ

սկսում են նմանվել
այն հրեշներին,
որ պոչավոր-հանածո են։
Ընկեր կյանք,
եկ
է՛լ արագ քայլենք,
դոփենք
հնգամյակներով
օրերի մնացորդը։
Տողերս ինձ
ռուբլի անգամ
չկուտակեցին,
կահույքագործներն
իմ տունը
կահույք ղրկած չեն։
Եվ թարմ լվացած
շապիկից բացի,
անկեղծ եմ ասում,
ինձ ոչինչ պետք չէ։
Երբ ներկայանամ
գալիք պայծառ օրերի
Ցե—Կա—Կան*,
գլխավերևից
պոետական բանդայի՝
գոփող ու գզլող,
ես կբարձրացնեմ,
իբրև կուսատոմս բոլշևիկյան,
կուսակցական գրքույկների
հարյուր հատորներն
իմ ողջ։

# ՊԻԵՍՆԵՐ

## ՄԻՍՏԵՐԻԱ-ԲՈՒՖ

Մեր դարաշրջանի
հերոսական
էպիկական
և սատիրական
պատկերը

*Երկրորդ խմբագրություն*

«Միստերիա-բուֆ»-ը ճանապարհ է։ Հեղափոխության ճանապարհը։ Ոչ ոք չի կարող ճշտությամբ կանխատեսել, թե այդ ճանապարհով ընթացողներս էլի ի՛նչ լեռներ պիտի պայթեցնենք։ Այսօր «Լլոյդ-Ջորջ» բառը ականջ է ծակում, իսկ վաղը անգլիացիներն իրենք էլ կմոռանան նրա անունը։ Այսօր միլիոնների կամքը մղվում է դեպի կոմունան, իսկ մի հիսուն տարի հետո, թերևս, կոմունայի օդային դրեդնոուտները գրոհեն հեռավոր մոլորակները։

Ուստի, անփոփոխ թողնելով ճանապարհը (ձևը), ես նորից փոփոխեցի բնանկարի մասերը (բովանդակությունը)։

Ապագայում, «Միստերիա-բուֆ»-ի բոլոր խաղացողնե՛ր, բեմադրողնե՛ր, ասմունքողնե՛ր, տպագրիչնե՛ր, փոխեք բովանդակությունը՝ դարձրեք այն այժմեական, րոպեական, հրատապ։

## ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

1. Յոթ զույգ մաքուրներ. 1) Հաբեշական նեգուս, 2) Հնդկական ռաջա, 3) Թուրք փաշա, 4) Ռուս սպեկուլյանտ, 5) Չինացի, 6) Բոած պարսիկ, 7) Կլեմանսո, 8) Գերմանացի, 9) Տերտեր, 10) Ավստրալիացի, 11) Ավստրալիացու կինը, 12) Լլոյդ-Ջորջ, 13) Ամերիկացի և 14) Դիվանագետ։
2. Յոթ զույգ անմաքուրներ. 1) Կարմիրբանակային, 2) Լապտերավառ, 3) Վարորդ, 4) Հանքափոր, 5) Հյուսն, 6) Բատրակ, 7) Ծառա, 8) Դարբին, 9) Բուլկեգործ, 10) Լվացարարուհի, 11) Դերձակուհի, 12) Մեքենավար, 13) Ձկնորս-էսկիմոս և 14) Որսորդ-էսկիմոս։
3. Համաձայնողական.
4. Ինտելիգենցիա
5. Տուփերով դամա
6. Սատանաներ. 1) Բեհեղզեբուղ, 2) Օբեր-սատանա, 3) Մունետիկ, 4) 2-րդ մունետիկ, 5) Պահնորդ, 6) 20 մաքուրներ՝ պոզ ու պոչերով։
7. Սրբեր. 1) Մաթուսաղա, 2) Ժան-Ժակ Ռուսսո, 3) Լև Տոլստոյ, 4) Գաբրիել, 5) Հրեշտակ, 6) 2-րդ հրեշտակ և 7) հրեշտակներ։
8. Սաբաովթ.
9. Ավետյաց երկրի գործողներ. 1) Մուրճ, 2) Մանգաղ, 3) Մեքենաներ, 4) Գնացքներ, 5) Ավտոմոբիլներ, 6) Ռանդա, 7) Ունելի, 8) Ասեղ, 9) Սղոց, 10) Հաց, 11) Աղ, 12) Շաքար, 13) Կտորեղեն, 14) Սապոն, 15) Լծակով տախտակ։
10. Ապագայի մարդ

### Գործողությունների տեղերը

1. Ամբողջ տիեզերքը: 2. Տապան: 3. Դժոխք: 4. Դրախտ: 5. Ավերակների երկիր: 6. Ավետյաց երկիր:

## ՆԱԽԱԲԱՆ

### ԱՆՄԱՔՈՒՐ

Քիչ հետո
մենք ձեզ ցույց կտանք...
Միստերիա-բուֆ։
Երկու խոսք պիտի ասեմ հիմի ձեր բոլորին․
սա նոր բան է
բոլորովին։
Թե ուզում ես գլխիցդ վերև ցատկես,
մեկը պիտի օգնի քեզ։
Պիեսից առաջ այս նոր՝
Նախաբան է հարկավոր։
Նախ՝
ինչո՞ւ է
ողջ թատրոնն իրար խառնված։
Սա խիստ կվրդովի
բարեմիտ մարդկանց։
Ինչի՞ համար եք գնում
մտիկ տալու պիեսը։
Որպեսզի հաճույք ստանաք,
այդպե՞ս է։
Դե, ի՛նչ հաճույք է մի մեծ,
եթե այդ հաճույքը բեմում է հենց,
իսկ բեմը
դահլիճի մեկ երրորդն է ընդամենը։
Ուրեմն,
հետաքրքիր ներկայացման մեջ,
թե որ տեղը տեղին փոխես ամեն բանի,
հաճույքդ էլ կմեծանա երեք անգամ,
իսկ եթե
ներկայացումը անմիտ է, թեթև,
ապա
չարժե նայել
նույնիսկ մեկ երրորդը։
Ուրիշ թատրոնների համար

Ներկայացումն ի՞նչ.
բեմը
Նրանց աչքում
բանալու ծակ է,
ուրիշ ոչինչ։
Նստիր տեղդ
ուղիղ կամ թեք մի քիչ
և մտիկ տուր մի կտոր ուրիշի կյանքից։
Նայում ես, տեսնում՝ է՞ն է,
ննջախոսում են բազմոցին
մորաքույր Մանյաները,
քեռի Վանյաները։
Իսկ մեզ չի հետաքրքրում
էդ տխուր տեսարանը.
քեռի ու մորաքույր
կգտնենք նաև տանը։
Մենք էլ ձեզ ցույց կտանք
իսկական կյանք,
Բայց այն
թատրոնը դարձրել է արտասովոր տեսարան։
Առաջին գործողության էությունն այս է.
երկիրը ծակ է մի տեղից։
Հետո՝ դոփյուն։
Բոլորը փախչում են հեղափոխության ջրհեղեղից։
Յոթ զույգ անմաքուրներ
և մաքուրներ յոթ զույգ,
այսինքն,
տասնչորս աղքատ-պրոլետար
և տասնչորս աղա-բուրժույ,
իսկ նրանց մեջտեղում՝ ճի՜կ,
մի մենշևիկ
արցունքոտ այտիկներով։
Ալիքներն սկսում են բռնել տակով անել։
Խորտակվում է վերջին ապաստարանը։
Եվ բոլորն սկսում են շինել
տապանը։
Տապա՜ն,



ի՜նչ տապան,
վիթխարի մի բան։
Երկրորդ արարում
հասարակությունը տապանն է վարում.
այստեղ է և՛ ինքնակալությունը,
և՛ դեմոկրատական հանրապետությունը
և, վերջապես,
մենշևիկյան ոռնոցով,
մաքուրներին տախտակամածից
նետում են ծով։
Երրորդ արարում ցույց է տրվում,
որ բանվորները
չպիտի վախենան ոչ մի բանից,
նույնիսկ դժոխքի սատանից։
Չորրորդում,—
ծիծաղեցեք մի կուշտ,—
ցույց են տրվում դրախտային տաղավարներն, անշուշտ։
Հինգերորդ արարում փլուզումը,
վիթխարի երախը բացած,
կործանում ու խժռում է։
Թեկուզ քաղցած փորով էինք աշխատում,
բայց հաղթեցինք
ավեր ու քայքայում։
Վեցերորդ արարում
կոմունան է.
դահլի՜ճ,
երգիր կոկորդով մեկ,
արձակիր խնդության ճիչ։

Պատրա՞ստ է ամեն ինչ։
Ե՞վ դժոխք։
Ե՞վ դրախտ։

**Բեմի ետևից**

Պ-ա-տ-ր-ա՞-ս-տ է։

**ՎԱՐԱԳՈՒՅՐ**

Սկսե՜ք։

# ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Հյուսիսափայլի ճառագայթով լուսավորված հողագունդը, որը բևեռով դեմ է առել հատակի առաստաղին։ Գնդով մեկ սանդղաձև իրար են խաչաձևվում լայնության ու երկայնության պարանները։ Աշխարհ պահող երկու ծովացուլերի միջև որսորդ էսկիմոսը, մատը հողագնդի մեջ խրած, ձայն է տալիս խարույկի մոտ մեկնված մյուս էսկիմոսին։

ՈՐՍՈՐԴ

Էհե՜յ,
Էհե՜յ,

ՁԿՆՈՐՍ

Ծղնղոցը գցել է,
Բան ու գործ չունի՝
երկրի մեջ է կոխում մատը։

ՈՐՍՈՐԴ

Ծակ է։

ՁԿՆՈՐՍ

Որտե՞ղ է ծակ։

ՈՐՍՈՐԴ

Հոսում է։

ՁԿՆՈՐՍ

Ի՞նչն է հոսում։

ՈՐՍՈՐԴ

Երկիրը։

ՁԿՆՈՐՍ

(վեր է թռչում և, մոտ վազելով, նայում է սեղմված մատի տակ)

Օ՜-օ՜-օ՜-օ՜։
Գրողը տանի։
Սա անմաքուր ձեռքի գործ է,
խարդախություն հետին։
Գնամ զգուշացնեմ բևեռային
գոտին։



վազում է։ Հողագնդի լանջին նրա դեմ է ելնում բևեռը մզող գեր-մանացին։ Մի պահ կռնակն է փնտրում և, չգտնելով, կառչում է մուշտակի մազերից։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Հեռ էսկիմոս։
Հեռ էսկիմոս։
Հույժ շտապ է։
Մի երկու խոսք…

ՁԿՆՈՐՍ

Ասա։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Այսպես, ահա, այսօր նստած էի ես
Ֆրիդրիխշտրասսեի իմ ռեստորանում։
Արեգակը պատուհանից
կանչում, տանում էր։
Օրը պարզ էր,
ինչպես բուրժույը հեղափոխությունից առաջ։
Հասարակությունը նստել,
հանգիստ շեյդեմանում էր։
Ապուրս ուտելով,
շշերի էյֆելներն էի դիտում
Ո՞ր բեֆը պատվիրեմ հիմա,
միտք էի անում։
Եվ արդյոք ձեռք զարկե՞մ բեֆին։
Մեկ էլ նայեմ՝ ի՜նչ.
վե՛րջ քեֆին,
ճաշը դեմ առավ կոկորդիս.
Հաղթանակի ծառուղու հետ
ինչ-որ վատ բան է կատարվում։
Քարե Հոհենցոլերները,
որ երիցուկների մեջ էին թառած,
հանկարծ գլխիվայր երկինք թռան։
Թնդյուն անտանելի։
Վազում եմ տանիք։
Գինետան կմախքի շուրջը գալարվելով,

Հոսանքը անջուր
շարժվում էր ահեղ մռմռոցով,
Թաղերը տակով անում։
Բեռլինը, ոնց խռովահույզ ծովի զառանցանք,
անտես ալիքների բասային նոտաներ։
Ե՛վ ետևում,
և՛ առջևում,
և՛ վերև,
և՛ ցած՝
տների դրեդնոուտներ։
Ու մինչդեռ մտքովս կանցնե՞ր,
Ցո՞շն է դա, թե մի այլ...

ԶԿՆՈՐՍ

Դե շուտ։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Ոտքից գլուխ
ջուր կտրեցի։
Նայեմ՝
ամեն ինչ չոր է, անհեղուկ,
բայց տեղում է, տեղում ու տեղում։
Եվ հանկարծ
Պոմպեյի կործանումից էլ փառահեղ
ժայթքեց տեսարանը,
պոկվեց հիմքից
Բեռլինը շքեղ,
թաղվեց անդունդում
աշխարհի հալված քուրայի։
Ուշքի եկա հոսող գյուղերի կատարին ես։
Հավաքեցի մի պահ ինձ,
և ահա
ձեր առջև է,
սիրելիս,
այն ամենը,
ինչ մնացել է Եվրոպայից։



ԶԿՆՈՐՍ

Մի բան չէ...

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Կխաղաղվի, անշուշտ, այո-ս,
մեկ-երկու օրից ետ...

ԶԿՆՈՐՍ

Այդ ինչ եվրոպական ծոմուտուք է։ Ամո՛թ։
Ասա, ի՞նչ ես ուզում։ Գլուխ չունենք ձեզ հետ։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

(ցույց տալով հորիզոնական դիրք)

Թույլ տվեք ինձ ձեր մեծարգո ծովացուլերի մոտ։

Զկնորսը բարկությամբ ձեռքով է անում դեպի խարույկը, գնում մյուս կողմը՝ նախազգուշացնելու բևեռային շրջանը և դեմ է առնում մյուս լանջի ետևից դուրս վազող բրչված ավստրալիացիներին։

ԶԿՆՈՐՍ

(զարմացած ետ քաշվելով)

Ավելի զզվելի սֆաթներ չէինք տեսել։

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

Ես ավտրալիացի եմ։

ԱՎՍՏՐԱԼՈՒՀԻ

Ավստրալիացի եմ ես էլ։

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

Մենք ամեն ինչ ունեինք։
Այսպես, օրինակ՝
բաղպտուց, կակտուս, արմավ...

ԱՎՍՏՐԱԼՈՒՀԻ

(հուզված արտասվելով)

Իսկ հիմի
կորանք մենք,
ամեն ինչ կորավ.
և՛ կակտուս,

*և՛ բաղակտուց,*
*և՛ արմավ,*
*ծովի հատակին են,*
*ջրերի տակ...*

ԶԿՆՈՐՍ
(ցույց տալով պառկած գերմանացուն)

*Գնացեք այնտեղ։*
*Մնացել են մենակ։*

Պատրաստվելով գնալ, էսկիմոսը նորից կանգ է առնում, ականջ դնելով երկրագնդի երկու կողմից լսվող երկու ձայներին:

ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ

*Կոտելոկ, էհե՜յ։*

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ

*էհե՜յ, Ցիլինդր, ի՞նչ...*

ԱՌԱՋԻՆ

*Ուժեղանում է։*
*Բռնեցեք հյուսիսային լայնությունից։*

ԵՐԿՐՈՐԴ

*Կատաղում է։ Կառչեցեք հարավային երկայնությունից։*

Լայնությունների և երկայնությունների ճոպաններով ցած են սահում անգլիացի և ֆրանսիացի: Ամեն մեկը տնկում է իր ազգային դրոշակը:

ԱՆԳԼԻԱՑԻ

*Դրոշակը հաստատված է։*
*Ձյան թագավորությանն էլ ահա հասա։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Ոչ, ներեցեք։*
*Ես ավելի շուտ եմ հաստատել։*
*Ի՛մ գաղութն է սա։*

ԱՆԳԼԻԱՑԻ
(ինչ-որ ապրանքներ դարսելով)

*Ոչ, իմն է,*
*ես արդեն առնում եմ, ծախում։*



ՖՐԱՆՍԻԱՑԻ
(սկսելով զայրանալ)

*Ոչ, իմն է,*
*ո՞ւմ եք հեքիաթներ պատմում։*

ԱՆԳԼԻԱՑԻ
(ցասկոտ)

*Ա՛խ, այդպե՞ս։*
*Կործանվես, գզվելի դու տիպ։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(ցասկոտ)

*Ա՛խ, այդպե՞ս։*
*Այ, քթիդ կոն տնկեմ վրադ։*

ԱՆԳԼԻԱՑԻ
(բռունցքներով հարձակվում է ֆրանսիացու վրա)

*Անգլիա, հի՛պ-հի՛պ։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(բռունցքներով հարձակվում է անգլիացու վրա)

*Վիվ լա Ֆրանս*։*

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ
(նետվում է նրանց բաժանելու)

*Ա՛յ քեզ ժողովուրդ։*
*Ի՛նչ ժողովուրդ, տականք իսկական.*
*արդեն ոչ կայսրություն կա,*
*ոչ իմպերիալներ*,*
*իսկ նրանք իրար մռութ են ջարդում։*

ԶԿՆՈՐՍ

*Ա՛խ, դուք,*
*իմպերիալիստնե՞ր։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Թողեք, իսկապես, ի՞նչ եք անում։*

ԶԿՆՈՐՍ

*Այ քեզ խաժամո՞ւժ։*

Էսկիմոսը նորից պատրաստվում է գնալ, բայց մեր վաճառական փլվում է ուղիղ նրա գլխին։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Հարգելիներ,*
*թյուրիմացություն է էս,*
*ասում եմ։*
*Դե, մի՞թե ես*
*Ասիա եմ։*
*«Ոչնչացնել Ասիան», սովնեք. որոշումը լսեցի։*
*Դե, ես կյանքումս չեմ եղել ասիացի։*

(Փոքր-ինչ հանդարտվելով)

*Երեկ Տուլայում,*
*ճիշտ այս ժամիս,*
*հանգիստ նստած էի աթոռիս։*
*Մեկ էլ որ դոները շշխկշխկացի՜ն...*
*Դե, մտածեցի,*
*Ջեկայի՜ց են։*
*Հասկանում եք, վրաս*
*դեմքիս գույնը թռավ։*
*Բայց*
*աստված ողորմած է, ամին.*
*պարզվեց Ջեկան չէր, այլ քամին։*
*Նախ սուլեց մի քիչ,*
*հետո փչեց,*
*հետո՝ ավելի,*
*ավելի բարձր,*
*լցվեց փողոցները, պոկեց տանիքները...*

ԲՈԼՈՐԸ

*Լռեցե՛ք։*
*Լռեցե՛ք։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Լսո՞ւմ եք։*
*Լսո՞ւմ եք թնդյունը ահեղ։*

**Մոտեցող բազում ձայներ:**



*Ջրհեղեղ, ջրհեղեղով, ջրհեղեղից, ջրհեղեղ։*

ԱՆԳԼԻԱՑԻ
(սարսափով)

*Օ՛, տե՛ր իմ։*
*Դժբախտությունները ոնց որ գլխիդ տեղա*
*իսկ այստեղ էլ, խնդրեմ, հարցը արևելյան։*

Առջևում նեգրուն է, նրան հետևում են չինացին, պարսիկը, թուրքը, ռաջան, տերտերը, համաձայնողականը: Երբը եզրափակում են բոլոր կողմերից իրար եկող յոթ զույգ անմաքուրները:

ՆԵԳՐՈՒՍ

*Թեկուզ ձյունից փոքր-ինչ սև,*
*սակայն*
*ես նեգուսն եմ հաբեշական։*
*Հարգանքներս։*
*Ես նոր եմ թողել իմ Աֆրիկան։*
*Այնտեղ գալարվում է Նեղոս վիշապ-գետը։*
*Նեղոսը կատաղեց,*
*թագավորությունս տանելով հետը,*
*խեղդելով ծոցում իմ Աֆրիկան։*
*Ջնայած կալվածք չունեմ ես,*
*բայց և այնպես...*

ՉԿՆՈՐՍ
(բարկությամբ)

*...բայց և այնպես*
*հարգանքներս։*
*Լսել ենք, լսել։*

ՆԵԳՐՈՒՍ

*Խնդրեմ չմոռանաք,*
*ձեզ հետ նեգուսն է խոսում,*
*և նեգուսն ուտել է ուզում։*
*Ի՞նչ է սա։*
*Երևի, համեղ շնի՞կ, սաս։*

ԶԿՆՈՐՍ

*Ես քեզ ցույց կտամ՝ շունս*
*Սա ծովացուլ է, ոչ շունս*

Նեգուսը սխալմամբ ուզում է նստել ճիշտ ծովացուլի նմանվող Լլոյդ-Ջորջի վրա:

*Գնա նստիր*
*և ոչ ոքի մի մրոտիր։*

ԱՆԳԼԻԱՑԻ

(վախեցած)

*Ես չեմ ծովացուլը,*
*Նա է ծովացուլը,*
*ես ծովացուլ չեմ, տես,*
*Լլոյդ-Ջորջն եմ ես։*

ԶԿՆՈՐՍ

(դիմելով մյուսներին)

*Իսկ դո՞ւք ինչ եք ուզում։*

ՉԻՆԱՑԻ

*Ոչի՜նչ։*
*Ոչի՜նչ։*
*Խեղդվե՜ց իմ Չինաստանը։*

ՊԱՐՍԻԿ

*Պարսկաստա՜նը,*
*Իմ Պարսկաստա՜նը ջրի տակ է անցել։*

ՌԱՋԱ

*Նույնիսկ Հնդկաստանը,*
*երկնային Հնդկաստանը...*

ՓԱՇԱ

*Իմ Թուրքիայից էլ միայն հուշ է մնացել։*

Մաքուրների բազմությունից դուրս է պրծնում մի դամա՝ անթիվ անհամար տուփերով:



ԴԱՄԱ

*Զգո՜ւյշ։*
*Զպատռե՛ք։*
*Նուրբ մետա՜քս է։*

(Զկնորսին)

*Մուժի՛կ,*
*օգնիր տուփերը դարսել։*

ՄԻ ՁԱՅՆ

(մաքուրների բազմությունից)

*Ի՜նչ սիրունիկն է։*
*Ի՜նչ գրգռիչ կարապ...*

ԶԿՆՈՐՍ

*Զրիակեր է պարապ-սարապ։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Դուք ի՞նչ ազգության եք։*

ԴԱՄԱ

*Իմ ազգությունը բազմազան է*
*Ռուս էի ես սկզբից,—*
*Ռուսիան սկսեց նեղ գալ ինձ։*
*Այդ բոլշևիկները սարսափելի են այնպես։*
*Նրբագեղ կին եմ ես,*
*տոհմից ազնիվ ու հին,—*
*վերցրի ու դարձա էստոնուհի։*
*Բոլշևիկներն սկսեցին ծայրամասերը գրավել,—*
*ուկրաինուհի դարձա ես էլ։*
*Մի տասն անգամ Խարկովը առան,—*
*ես Օդեսայում*
*ինչ-որ հանրապետության քաղաքացի դառա։*
*Օդեսան վերցրին,*
*Վրանգելը Ղրիմի տակ է,—*
*հիմա էլ դարձա նրա հպատակը։*
*Սպիտակներին քշեցին ներսում ու դրսում,—*
*ես արդեն թրքուհի եմ,*
*ճեմում եմ Կոստանդնուպոլսում։*

Բոլշևիկները ավելի են մոտենում,—
ես արդեն փարիզուհի եմ,
Փարիզում եմ ճեմում։
Մի քառասուն ազգություն եմ փոխել նոր ու հին,
այժմ պատկանում եմ կամչատկյան ազգին։
Բեռններում ի՜նչ շոգ է անտանելի.
այստեղ ոչ մի տուալետ ցույց տալ չի կարելի։

ՁԿՆՈՐՍ
(բղավում է մաքուրների վրա)

Կամա՜ց։
Լռություն։
Սինագոգ է ասես։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(հիստերիկայի մեջ անջատվում ամբոխից)

Լսեցեք,
չեմ կարող,
չեմ կարող էլ ես։
Լսեցեք։
Ի՞նչ բան է այս, ի՞նչ։
Աշխարհում չոր տեղ չի թողել գետը։
Լսեցեք։
Հանգիստ թողեք ինձ։
Բաց թողեք ինձ տուն,
իմ կաբինետը։
Լսեցեք։
Ես չեմ կարող։
Կարծում էի ես՝
ջրհեղեղը կլինի Կուցկու ասածի պես։
Գայլերը կուշտ կլինեն,
ոչխարները՝ ողջ-առողջ։
Իսկ հիմա
սպանում են իրար մարդիկ։
Սիրելի կարմիրներ։
Սիրելի սպիտակներ։
Լսեցեք, չեմ կարող։



ՖՐԱՆՍԻԱՑԻ

Դե, մի տրորեք աչքներդ…
շրթունքներդ մի կծեք…

(Դեպի խառույկ առաջացող անմաքուրներին, ամբարտավան տոնով)

Իսկ դո՞ւք ինչ ազգից եք։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ
(միասին)

Տարվում է աշխարհով մեկ, տարվում
մեր թափառ ժողովուրդն ինքը։
Մենք ոչ մի ազգի չենք պատկանում,
աշխատանքն է մեր հայրենիքը։

ՖՐԱՆՍԻԱՑԻ

Հի՜ն երգ է, հի՜ն երգ։

ՄԱՔՈՒՐՆԵՐ
վախվորած ձայներ

Սրանք պրոլետարնե՜ր են։
Պրոլետարնե՜ր են…
Ճղե՜նք…

ԴԱՐԲԻՆ
(թփթփացնելով ֆրանսիացու պարարտ փորին)

Ջրհեղեղի ձենը ականջներո՞ւմդ է դեռ։

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ
(նորից նրան, հեգնական ու ճղճղան ձայնով)

Կպառկեի՞ր հիմի մահճակալին, կքնեի՞ր մինչև լուսաբացը։
Ճամփեի՜ն քեզ խրամատներ ու հանքախորշեր։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ
(սպառնալից)

Կգնար խրամատներ,
բայց էնտեղ ավելի թաց է։

Տեսնելով մաքուրների և անմաքուրների միջև հասունացող «կոնֆլիկտը», համաձայնողականը նետվում է նրանց բաժանելու:

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Սիրելինե՛ր։ Պետք չէ։ Տուրուդմփոց մի սարքեք։
Խեթ-խեթ մի նայեք մեկմեկու վրա։
Պարոնայք, ընկերներ,
պետք է համաձայնել։
Ձեռքներդ պարզեցեք,
գրկեցեք իրար։

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(շարությամբ)

Ե՞ս համաձայնեմ։
Ուրիշ ի՞նչ կուզեք։

ՁԿՆՈՐՍ
(շարությամբ: Ե՛վ ձկնորսը, և՛ ֆրանսիացին հասցնում են համաձայնողականի պարանոցին)

Ա՛խ դու, համաձայնողական,
հիմի քեզ կխուզենք։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(ծեծված փախչում է, կուչումիգ անելով)

Դե ահա,
կրկին...
Ես նրանց քաղցրությամբ,
իսկ նրանք ինձ...
Այսպես է մշտապես.
համաձայնություն ես կոչում,
ու քեզ էլ հենց դնգսում են երկու կողմից։

Անմաքուրները ներխուժում են մաքուրների զզվանքով խռնվող ամբոխը, տեղավորվում խարույկի մոտ։ Մաքուրները շրջան են կազմում նրանց չորս կողմը:

ՓԱՇԱ
(կանգնում է մեջտեղում)

Ուղղափառնե՛ր։
Պետք է քննել, թե ինչ կատարվեց։
Եկեք խորանանք երևույթի մեջ։



ՎԱՃԱՌԱԿԱՆ

Պարզ է հարցը,
ի՞նչ խորանանք մեկ էլ.
աշխարհի վերջն է եկել։

ՏԵՐՏԵՐ

Իսկ իմ կարծիքով՝ ջրհեղեղ է։

ՖՐԱՆՍԻԱՑԻ

Ջրհեղեղ չէ բնավ,
այլապես
անձրև կտեղար։

ՌԱՋԱ

Այո,
անձրև կտեղար։

ԴԻՎԱՆԱԳԵՏ

Ուրեմն, այդ միտքն էլ անհեթեթ է, ակար...

ՓԱՇԱ

Բայց և այնպես,
ի՞նչ է կատարվել, ուղղափառներ։
Եկեք, ուղղափառներ, նայենք արմատին։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Իմ կարծիքով,
ժողովուրդը անհնազանդ է
և չի ուզում տալ մատը մատին։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Ես կարծում եմ՝ պատերազմ է։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Ոչ,
ըստ իս, պատճառը այլ է։
Ըստ իս, մետաֆիզիկական է...

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(դժգոհ)

Պատերազմը մետաֆիզիկակա՞ն է։
Հասան Աղամի՞ն։

ՁԱՅՆԵՐ

Հերթով։
Հերթով։
Սոդոմ մի սարքեք։

ՓԱՇԱ

Ս-ս-ս։
Եկեք մեկ-մեկ խոսենք։
Խոսքը ձերն է, ուսանող։

(Արդարանում է ամբոխի առաջ)

Թե չէ՝ շրթունքներին փրփուր է դուրս տվել։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Սկզբում
ամեն ինչ պարզ էր.
ցերեկը հաջորդում էր գիշերվան,
և միայն
արշալույսը չափից դուրս ալ էր։
Հետո՝
օրենքներ.
հասկացություններ,
հավատներ,
գրանիտե կույտեր մայրաքաղաքների
և արևի անշարժ կարմրաշեկություն,
ամեն ինչ դարձավ ասես փոքր-ինչ հոսուն,
սողացող փոքր-ինչ,
փոքր-ինչ ջրիկ։
Հետո որ սկսե՜ց հոսել...
Հոսում են փողոցները,
հալված տունը փլվում է տան վրա։
Ամբողջ աշխարհը,
հալված հեղափոխությունների դոմենյան հնոցներում,
համատարած ջրվեժով ցած է թափվում։



ՋԻՆԱՑՈՒ ՁԱՅՆ

Պարոնայք։ Ուշադրությո՜ւն։
Այստեղ անձրևում է հրեա։

ԱՎՍՏՐԱԼԻԱՑՈՒ ԿԻՆԸ

Լա՜վ անձրևել է։
Տզկեցինք խոճկորների պես։

ՊԱՐՍԻԿ

Մինչուցև աշխարհի վերջը մոտ է,
իսկ մենք
միտինգում ենք, ոռնում ու խրխնչում։

ԴԻՎԱՆԱԳԵՏ
(սեղմվում է բևեռին)

Կանգնեցեք այստեղ։
Ավելի կիպ։
Այստեղ ոչ մի ջուր։

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(ծնկով հարվածելով էսկիմոսին, որն իր ժողովրդին հատուկ համբերությամբ աշխատում է փակել անցքը)

Է՜յ, դո՜ւ։
Կորիր ծովացուլների մոտ։

Որսորդ-էսկիմոսը մի կողմ է թռչում. բաց անցքից ջուրը խփում է ներկաների երեսին: Մաքուրները ցրվում են հովհարաձև, անորոշ բացականչություններ անելով:

Ի-ի-ի-ի-ի՜։
Ու-ու-ու-ու-ո՜ւ։
Ա-ա-ա-ա-ա՜։

Մի րոպե հետո բոլոր նետվում են դեպի ջրի շիթը:

Փակե՜լ։
Խցկե՜լ։
Կալնե՜լ։

Ետ են ընկրկում: Միայն ավստրալիացին է մնում երկրագնդի մոտ՝ մատը անցքի մեջ: Ընդհանուր իրարանցման միջոցին տերտերը դըժվարությամբ բարձրանում է երկու ծղանների վրա:

ՏԵՐՏԵՐ

Եղբա՛յրք։
Զրկվում ենք վերջին վերշոկից։
Ջուրը ծածկում է վերջին պարանը։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ
(կամացուկ)

Այդ ո՞վ է։
Ո՞վ է այդ մորուքով պահարանը։

ՏԵՐՏԵՐ

Սույնը կտևի քառասուն գիշեր, քառասուն ցերեկ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ճիշտ է։
Տերը սրան խելքի բերեց։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Պատմության մեջ եղել է նման նախադեպ,
Հիշեցեք նշանավոր արկածը Նոյան։

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(հաստատվելով տերտերի տեղում)

Հիմարություն է այդ՝
պատմություն, նախադեպ և նման բան...

ՁԱՅՆԵՐ

Մոտեցիր խնդրին։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Եկեք, եղբայրներ, կառուցենք տապան։

ԱՎՍՏՐԱԼԻԱՑՈՒ ԿԻՆԸ

Ճի՛շտ է։ Տապա՛ն։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Այ քեզ ցանկությո՛ւն։
Կառուցենք շոգենավ։



ՌԱՋԱ

Երկո՛ւ շոգենավ։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ճի՛շտ է։
Ողջ կապիտալը դնում եմ ես։
Նրանք փրկվեցին,
Իսկ մենք նրանցից խելոք ենք, իսկապես։

Ընդհանուր աղմուկ.

Կեցցե՛,
կեցցե՛,
կեցցե՛ տեխնիկան։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ով որ համաձայն է՝
ձեռք բարձրացնի թող։

Ընդհանուր աղմուկ

Ձեռք հարկավոր էլ չէ,
երևում է աչքով։

Ե՛վ մաքուրները, և՛ անմաքուրները բարձրացնում են ձեռքերը:

ՖՐԱՆՍԻԱՑԻ

(գրավելով վաճառականի տեղը, չարությամբ զննում է ձեռք բարձրացնող դարբնին)

Դո՞ւ էլ ես քվեարկում։
Ապարդյուն ջանքե՜ր։
Պարոնա՛յք,
եկեք անմաքուրներին չվերցնենք։
Թող իմանան, ինչ ասել է՝ հայհոյել մեզ։

ՀՅՈՒՍՆԻ ՁԱՅՆԸ

Իսկ դու կարո՞ղ ես սղոցել ու ռանդել։

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(գլուխը կախելով)

Ես փոշմանեցի։
Վերցնենք անմաքուրներին։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Միայն կչոկենք չխմողներին ու ջանովներին։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

(բարձրանալով ֆրանսիացու տեղը)

*Ս-ս-ս, պարոնա՛յք,*
*Թերևս հարկ չլինի անմաքուրների հետ հաշտվել։*
*Խնդիրը այս է.*
*բարեբախտաբար մենք չգիտենք ինչ վիճակում է*
*աշխարհի մեկ հինգերորդ մասը։*
*Աղմկում ենք, մինչդեռ ցարդ չգիտենք՝*
*կա՞ն արդյոք մեր մեջ ամերիկացիներ։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

(ուրախ)

*Համա՛ թե գլուխ եմ ասել։*
*Ոչ թե մարդ է, այլ գերմանական կանցլեր։*

Ավստրալիացու կնոջ ճիչը ընդհատում է ուրախությունը:

*Ի՞նչ եղավ։*

Ուղղակի դահլիճից լարված դիտողների մեջ է մխրճվում մոտոցիկլետով ամերիկացին:

ԱՄԵՐԻԿԱՑԻ

*Ողորմած պարոններ,*
*որտե՞ղ են ուզում տապան կառուցել։*

(Պարզում է թուղթը)

*Ահավասիկ,*
*ջրասույզ Ամերիկայի կողմից՝*
*երկու հարյուր միլիարդի չեկ։*

Հուսահատ լռություն: Եվ ճանկած ջուրը փակող ավստրալիացու աղաղակը:

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

*Ի՞նչ եք աչքներդ չռել։ Էլ հերի՛ք։*
*Էն աստված, ձեռքս կհանեմ։*
*Մատներս փետացան։*
*Ձեր ծառա՞ն եմ, գերի՞ն։*



Մաքուրները անհանգստանում են, խմվում անմաքուրներին:

ՖՐԱՆՍԻԱՑԻ

(դարբնին)

*Դե ինչ, ընկերներ,*
*կկառուցենք, չէ՞։*

ԱՆՀԻՇԱՉԱՐ ԴԱՐԲԻՆ

*Ինչ կա որ,*
*թե որ ինձ մնա...*

(Ձեռքով է անում անմաքուրներին)

*Հա՛յդե, ընկերներ,*
*գնալ, ուրեմն, գնալ։*

Անմաքուրները բարձրանում են: Սղոցներ: Ռանդաներ: Մուրճեր:

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Շո՛ւտ-շո՛ւտ, ընկերներ,*
*շո՛ւտ-շո՛ւտ, սիրելիներ...*
*Ի գործ։*
*Առեք կացին ու սղոց։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

(քաշվում է մի կողմ)

*Մտքովս իսկ չի անցել*
*աշխատել անձամբ,*
*Կնստեմ ահա այստեղ,*
*կզբաղվեմ գործալքությամբ։*

(Բղավում է աշխատողների վրա)

*Արագ շարժվիր, քնա՛ծ։*
*Հարվածիր տեղին, էլի՛։*

ՀՅՈՒՍՆ

*Իսկ դո՞ւ ինչ ես նստել ձեռքերդ ծալած։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

*Ես մասնագետ եմ, անփոխարինելի...*

Վարագույր

# ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տապանի տախտակամածը։ Բոլոր կողմերում ալիքների մեջ սուզվող Երկրների տեսարաններ։ Ելարան-կայմը խճճված պարաններով դեմ է առել ցած կախված ամպերին։ Մեկուսի ձեղնախցիկ և նավագոգի մուտք։ Մաքուրներն ու անմաքուրները շարվել են մոտակա նավեզրին։

ԲԱՏՐԱԿ

*Հը՜մ...*
*Չէի ուզի հիմի նավից դուրս լինել։*

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Էնտեղ մտիկ.*
*ալիք հո չի, այլ ցանկապատ։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Իզուր տեղն էլ ձեզ հետ կապվեցի։*
*Այ, էսպես եք միշտ,*
*անօգտակար։*
*Ծովագնացնե՞ր եմ ասել։*
*Ծովային գայլ գտան։*

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

*Էհե՜յ, եկա՜վ, եկա՜վ։*
*Ոնց էլ կոծո՜ւմ է սա։*

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Ի՞նչ ցանկապատ։*
*Բարձր պարիսպ ասա։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Այո-ս։*
*Հիմարություն էր։*
*Դառնությամբ ու ցավով եմ ասում ձեզ։*
*Մնացինք տեղներումս։*
*Երկիրը դեռ դիմանում է։*
*Բեեռ է բայց և այնպես։*



ԲԱՏՐԱԿ

*Ալիքները ղնջրտում են,*
*ոնց որ գայլեր լինեն։*

ԵՐԿՈՒ ԷՍԿԻՄՈՍՆԵՐԸ ՎԱՐՈՐԴԸ ԵՎ ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻՆԵՐԸ ՄԵԿԵՆ

*Մտի՛կ,*
*այդ ի՞նչ է։*
*Ի՞նչ պատահեց Ալյասկային։*

ՆԵԳՐՈՒՍ

*Համա թե վեր թռա՜վ։*
*Ոնց որ քար նետես պարսատիկով։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Փլվե՜ց։*

ԷՍԿԻՄՈՍ

*Կորավ աչքից։*

ՁԿՆՈՐՍ

*Կորավ։*

ԲՈԼՈՐԸ

*Գնաս բարո՜վ։ Գնաս բարո՜վ։ Գնաս բարո՜վ։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(հիշողություններից նեղվելով, արտասվում է)

*Աստվա՜ծ իմ...*
*Աստվա՜ծ իմ...*
*Պատահում էր,*
*ողջ ընտանյոք*
*հավաքվում էինք թեյի սեղանի շուրջ՝*
*բլիթնե՛ր,*
*խավիա՜ր...*

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ
(ցույց տալով եղունգի ծայրը)

*Զարմանալի է, էն աստված։*
*Դե, այ էսքան էլ*
*չեմ ցավում դրա համար։*

### ԿՈՇԿԱԿԱՐ

*Ես օղի եմ պահել։*
*Կճարվի՞ բաժակ-բան։*

### ԾԱՌԱ

*Կճարվի։*

### ՀԱՆՔԱՓՈՐ

*Տղերք,*
*իջնենք նավամբար։*

### ԷՍԿԻՄՈՍ-ՈՐՍՈՐԴ

*Դե, ո՞նց էր ծովացուլը։*
*Հո լղար չէր շատ։*

### ԾԱՌԱ

*Հեչ էլ լղար չէր։*
*Տապակեցինք՝ լազա՜թ։*

Մաքուրները մնում են մենակ։ Անմաքուրները երգելով իջնում են նավամբար։

*Ի՞նչ ենք կորցնելու։ Վախենք ջրհեղեղի՞ց։*
*Ոտքներս հոգնել են աշխարհով մեկ դոփելուց։*
*Օ՛հ, այ թե լա՜վ է նավում,*
*հանգիստ է, օ՛հ։*
*Մեղք չի, ծովացուլ կուտենք, օղի կոնծելով,*
*մեղք չի, օ՛հ։*

Մաքուրները շրջապատել են ֆրանսիացուն։

### ՊԱՐՍԻԿ

*Ամո՜թ է, իսկապես։*
*Վե՛րջ տվեք տզզոցին։*

### ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Մի կերպ դուրս կպրծնենք,*
*կհասնենք Արարատին։*

### ՆԵԳՈՒՄ

*Մինչև տեղ հասնենք,*
*կկոտորվենք քաղցից։*



### ԱՄԵՐԻԿԱՑԻ

*Փող՝ ինչքան ուզես,*
*իսկ սովից քիչ մնա սատկես։*
*Տալիս եմ մի ֆունտ հացին՝*
*կես միլիոն*
*նիկոլաևկաներ,*
*երկու ֆունտ ադամանդից բացի։*

### ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Ջարաշահել եմ։*
*Երեք անգամ նստել եմ Չեկայում։*
*Իսկ հիմի այս փողը ինչի՞ս է։*

### ՉԻՆԱՑԻ

*Թքիր վրան, յա պատռիր։*
*Ի՜նչ ջինս է։*

### ՓԱՇԱ

*Ադամանդները՝ հե՛չ։*
*Հիմա, թե քար ունես երիկամում,*
*քեզ ավելի ապահով ես զգում.*
*ոնց որ թե փորդ լիքն է։*

### ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

*Խժռելու բան չկա,*
*միայն տապան։*

### ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Իսկ այստեղ փակված է նաև Սուխարևկան։*

### ՎԱՃԱՌԱԿԱՆ
(տերտերին)

*Խոնարհ կուսակրոն, հեչ բան էլ չկա,*
*Հիմի ամեն տեղ էլ ի՞նչն է բոլ՝ շուկան։*

### ԴԱՄԱ

*Համ յուղ կա շուկայում, համ կաթ կա մաքուր.*
*պուլիկի տեղակ ծակ գրպանդ դեմ տուր։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Էդ ղո՛ւ առանց կաթի կնստես, հիմար կնիկ,
իսկ բանվորը ունի պարգև, բնավարձ ունի,
կստանա
ու կփոխի։

ԴԱՄԱ

Իսկ ես գլխարկներս կփոխանակեմ ձվի հետ։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Կփոխանակես վերջին գլխարկը,
իսկ հետո կնստես,
մատներդ կծծես։

ՏԵՐՏԵՐ
(ականջ դնելով նավամբարի աղմուկին)

Մի տես՝ ո՞նց են խրխնչում։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Նրանց ի՞նչ,
ձուկը որսացել են, սարքել խնջույք։

ՏԵՐՏԵՐ

Վերցնենք ցանցերը կամ եռաժանին,
Նմանապես ձուկ որսանք այս ժամին։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Ե-ռա-ժա-նի՞։
Իսկ ինչպե՞ս գործածենք այն։
Ես կարող եմ սուսերով
մարդու փորոտիքը խառնել միայն։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ցանցը գցեցի,
կարծում էի հրես ձուկ կհանեմ։
Տանջվեցի, տանջվեցի,
և ոչինչ,
խոտ ու մոտից բացի։



ՓԱՇԱ
(մռմռելով)

Մինչև ո՞ւր հասան.
առաջին գիլդիայի վաճառական,
և խոտ են խժռում։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ
(Կլեմանսոյին)

Է՛վրիկա։
Եկեք վեճերը մի կողմ դնենք։
Ինչո՞ւ պետք է իրար հետ գժտվենք։
Գլխավորն այն է, որ ես փոր ունեմ,
դուք էլ փոր ունեք։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Ես էլ… ես էլ փոր ունեմ։

ԿԼԵՄԱՆՍՈ

Ի՞նչ ցավալի բան.
այսպիսի հիանալի պարոնի հետ
քիչ մնաց կռվեինք։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

Հիմա կռվելու ժամանակը չէ.
մենք ձեզ հետ ունենք ընդհանուր թշնամի։
Ահա թե ինչ եմ ուզում ասել ձեզ…

Թևանցուկ է անում Կլեմանսոյին ու տանում մի կողմ: Քչփչալով, ետ են գալիս:

ԿԼԵՄԱՆՍՈ

Պարոնա՛յք։
Մենք բոլորս ձեզ հետ մաքուր ենք նմանապես։
Ուրեմն, ինչո՞ւ պետք է աշխատենք նեգրերի պես։
Եկեք ստիպենք անմաքուրներին՝
աշխատեն մեր փոխարեն։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Ես նրանց կստիպեի՜։
Միայն թե ո՞ւր

իմ վտիտ տեղով։
Իսկ նրանցից ամեն մեկը լայնաթիկունք բան է։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

Աստված կռվից հեռու պահի։
Ոչ թե կռվել,
այլ, քանի դեռ խժռում են ճաշացանկը,
քանի դեռ բազմած
կոնծում են ու ռռնում,
վերցնենք ու գլխներին մի լավ խաղ խաղանք...

ԿԼԵՄԱՆՍՈ

Թագավոր ընտրենք նրանց համար։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Ինչո՞ւ թագավոր։
Ավելի լավ է՝ ոստիկան։

ԿԼԵՄԱՆՍՈ

Նրա համար, որ թագավորը կհռչակի մանիֆեստ՝
իբրև, բոլոր ուտելիքները ինձ մոտ բերեք։
Թագավորը կուտի,
մենք էլ կուտենք՝
նրա հավատարիմ հպատակները։

ԲՈԼՈՐԸ

Հիանալի՜ է։

ՓԱՇԱ

Խորամանկ ելք է։

ԳԵՐՄԱՆԱՑԻ
(ուրախ)

Ախր ասում էի՝
Բիսմարկի խե՛լք է։

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻՆԵՐ

Դե, շուտ ընտրենք։

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ

Բայց ո՞ւմ։



Ո՞ւմ ընտրենք։

ԱՆԳԼԻԱՑԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՑԻ

Նեգուսին։

ՏԵՐՏԵՐ

Ճշմարիտ է։
Գյամերն էլ նրա ձեռքին են։

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ի՞նչ գյամեր։

ԳԵՐՄԱՆԱՑԻ

Դե, ինչպես են ասում...
Կառավարման սանձերը։
Ի՞նչ եք մահանի ման գալիս։
Իմաստը նույնն է։

(նեգուսին)

Պարոն, վեր կացեք։

ԴԱՄԱ

Պարոնա՛յք։
Ասացեք՝
դա իսկակա՞ն թագավոր է լինելու,
թե շինծու մի բան։

ՁԱՅՆԵՐ

Իսկական, իսկական։

ԴԱՄԱ

Ա՛խ,
ես կլինեմ պալատական տիկին։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

Դե շուտ, շուտ,
մանիֆեստ թխեք.
իբրև թե՝ աստծու ողորմածությամբ, վերից...

ՓԱՇԱ ԵՎ ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

*Իսկ մենք կկանգնենք այստեղ,*
*որ դուրս չպրծնեն նավամբարից։*

Փաշան և մյուսները մանիֆեստ են բխում: Գերմանացին և դիվանագետը բոկը փարաքում են նավամբարի մուտքի առաջ: Անմաքուրները դուրս են գալիս օրորվելով: Երբ տախտակամած է սողում վերջինը, դիվանագետն ու գերմանացին տեղերը փոխում են, և անմաքուրները կապկպված են:

ԳԵՐՄԱՆԱՑԻ

(կոշկակարին)

*Է՜յ,*
*դո՛ւ,*
*երդում տուր։*

ԿՈՇԿԱԿԱՐ

(գլխի չընկնելով, թե ինչ է կատարվել)

*Միգուցե պառկեմ քնե՞մ։*

ԴԻՎԱՆԱԳԵՏ

*Այնպես մի պառկել ցույց տամ քեզ,*
*որ հարյուր տարի չզարթնես։*
*Պարոն պորուչիկ,*
*պիստոլետը պահեք վրան։*

ՖՐԱՆՍՈՒՀԻ

*Օհո՜։*
*Ուշքի եկան։*
*Այ, սիրում եմ այսպես, առանց կռիվ ու վեճ։*

ՈՐՈՇ ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

(տխուր)

*Տղերք, ընկանք,*
*ոնց որ հավը շորվայի մեջ։*

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

*Գլխարկները հանե՛լ։*
*Այդ ո՞վ է կանգնել գլխարկով։*



ՉԻՆԱՑԻ ԵՎ ՌԱՋԱ

(առաջ հրելով տերտերին, որ կանգնած է ձեղնախցիկի մոտ)

*Կարդա շուտ,*
*քանի դեռ չեն ընկել խոսքով։*

ՏԵՐՏԵՐ

(կարդալով)

*Աստուծո ողորմությամբ վերին,*
*մենք,*
*թագավոր անմաքուրների տապակած հավերի*
*ու մեծ իշխան ձվերի (ամեն),—*
*վեցը քերթում ենք, թողնելով մին,—*
*հայտնում ենք հավատարիմ հպատակներին մեր։*
*բերեք աստ լի ու լի՝*
*ձուկ, պաքսիմատ, ծովախոզուկներ*
*և ուրիշ ինչ ճարվի ուտելի։*
*Կառավարող սենատը*
*չի հապաղի,*
*ջոկջկելով ուտելիքի կույտերը,*
*հրամցնել մեզ,*
*ինչպես կամենում է տերը։*

ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ՍԵՆԱՏԸ՝ ՓԱՇԱ ԵՎ ՌԱՋԱ

*Լսո՛ւմ ենք, ձերդ մեծություն։*

ՓԱՇԱ

(կարգադրում է
ավստրալիացուն)

*Դուք՝ խցիկները։*

(ավստրալուհուն)

*Դուք՝ մառանները։*

(ընդհանուր)

*Որպեսզի ճամփին ոչինչ չուտեն անմաքուրները։*

(վաճառականին՝ բուլկեգործին արձակելով նրա համար)

*Դուք ահա սրա հետ նավամբար իջեք կամացուկ։*
*Ես և ռաջան ամեն ինչ կգնենք տախտակամածում։*
*Բերեք այստեղ ինչ կա,*
*Նորից վերադարձեք։*

Մաֆուրների ուրախ աղմուկը:

*Ուտելիքի ամբողջ մի սար կկիտենք։*

ՏԵՐՏԵՐ
(ձեռքերը շփելով)

*Հետո եղբայրաբար ավարը, ինչքան որ կա,*
*կբաժանենք սովորույթով քրիստոնեական։*

Մաֆուրների հսկողությամբ անմաֆուրներն իջնում են նավամբար: Մի րոպեից հետո վերադառնում են ու նեգուսի առաջ շարում ամեն տեսակ ուտելիք:

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(ուրախ)

*Քունջ ու պուճախ խուզարկեցինք,*
*էլ բան չմնաց։*
*Այ մթե՛րք եմ ասել։*
*Հիանալի է։*
*Մի խոսքով՝*
*նորմավորված։*
*Դե, տղերք, ատամներդ սրեք։*

ԱՄԵՐԻԿԱՑԻ

*Իսկ անմաքուրնե՞րը։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Պետք է փակել նկուղում։*

ՏԵՐՏԵՐ

*Դե, հապա,*
*ձերդ մեծություն,*
*կացեք մի րոպե։*

Անմաֆուրներին քշում են նավամբար և, մինչդեռ զբաղված են երանգով, նեգուսն ուտում է բերած ողջ մթերքը: Մաֆուրները վերադառնում են:

ԿԼԵՄԱՆՍՈ

*Գալի՞ս ես, Լլոյդ-Ջորջ։*

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

*Գալիս եմ, գալիս։*



ՄԱՔՈՒՐՆԵՐ
(հրհրում են իրար)

*Շուտ, շուտ,*
*ուտելու ժամն է։*

Բարձրանում են նեգուսի մոտ: Նեգուսի առջև դատարկ ափսեն է: Միահամուռ սպառնալից ձայնով:

*Այս ի՞նչ բան է։*
*Մամայի զո՞րքն է այստեղով անցել։*

ՏԵՐՏԵՐ
(մոլեգնորեն)

*Ախր մենակ էր,*
*մեն-մենակ,*
*և այդքան բարիքը մենակ խժռե՛*

ՓԱՇԱ

*Վերցնես ու շրմփացնես կուշտ մռութին։*

ՆԵԳՈՒՍ

*Լռե՛լ։*
*Աստծո օծյալն եմ ես։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Օծյա՛լ,*
*օծյա՛լ։*
*Պառկեիր, ոնց մենք...*

ԴԻՎԱՆԱԳԵՏ

*Սոված փորով...*

ՏԵՐՏԵՐ

*Հուդա՛։*

ՌԱՋԱ

*Թո՛ւ-ո՛ւ։*
*Ում մտքով կանցներ այս աղետը։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Պառկենք։*
*Լույսը բացվի, բարին հետը։*

Պառկում են: Գիշեր: Լուսինը արագ սահում է երկնքով: Լույսը խոնարհվում է: Լուսաբաց: Կապույտ առավոտի մեջ բարձրանում է դիվանագետի կերպարանքը: Մյուս կողմից բարձրանում է գերմանացին:

ԴԻՎԱՆԱԳԵՏ

*Դուք քնա՞ծ եք։*

Գերմանացին բացասաբար շարժում է գլուխը:

*Արթնացել եք այս վաղ ժամի՞ն։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Ե՛, ես, ո՛նց չէ։*
*Այնպիսի ղալմաղալ է փողոցում,*
*որ չեմ լսել օրումս։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Երազում մի գլուխ կոտլետներ եմ տեսնում։*

ՏԵՐՏԵՐ
(հեռվից)

*Ուրիշ ի՞նչ պիտի տեսնեիր։*
(նեգուսին)
*Ա՛խ, անիծյալ։ Ո՛նց է ռեխը պլպլում։*

ԱՎՍՏՐԱԼԻԱՑԻ

*Ցուրտ է։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
(նեգուսին)

*Ոչ մի հոգևոր պահանջմունք։*
*Կուշտ ու կուռ կերել և ուրախ է մարդը։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(կարճ լռությունից հետո)

*Պարոնա՛յք,*
*գիտե՞ք ինչ...*
*Ես զգում եմ, որ արդեն դեմոկրատ եմ։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Նորությո՛ւն ասաց։*
*Ես միշտ էլ ինքնամոռաց սիրել եմ ժողովրդին։*



ՊԱՐՍԻԿ
(նենգորեն)

*Իսկ ո՞վ էր երդման քշում կոշկակարին։*

ԴԻՎԱՆԱԳԵՏ

*Թողեք ձեր այդ թունավոր հարցերը։*
*Ինքնակալությունն իբրև կառավարման ձև,*
*անշուշտ, ծերացել է։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Կծերանա, թե որ բերանը չընկնի ոչ մի բրդուճ։*

ԳԵՐՄԱՆՑԻ

*Իսկապե՛ս։ Իսկապե՛ս։*
*Հասունանում է հեղաշրջում։*
*Հերիք է դժավենք,*
*վե՛րջ տանք լուտանքներին։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Ուռա՜։*
*Ուռա՜ սահմանադիր ժողովին։*

(բացում են միջանցքի դռնակը)

*Ուռա՛։ Ուռա՜-ա՜։*

(մեկմեկու)

*Եռանդո՛վ։*
*Հուպ տվե՛ք։*

Միջանցքից բարձրանում են արթնացրած անմաքուրները։

ԿՈՇԿԱԿԱՐ

*Ի՞նչ խաբար է։ Կոնծե՞լ են։*

ԴԱՐԲԻՆ

*Վթա՞ր է։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Քաղաքացիներ, համեցե՛ք միտինգ։*

(Բուլկեգործին)

*Քաղաքացի, դուք կո՞ղմ եք հանրապետության։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Միտի՞նգ։*
*Հանրապետությո՞ւն։*
*Էդ ո՞ր հանրապետությանը։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Սպասեցեք,*
*հիմա ինտելիգենտը կբացատրի բանը։*

(Ինտելիգենտին)

*Էյ դո՛ւ, ինտելիգենցիա։*

«Ինտելիգենցիան» և ֆրանսիացին բարձրանում են ձեղնախցիկ։

*Ժողովը հայտարարում եմ բացված։*

(Ինտելիգենտին)

*Խոսքը ձերն է։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

*Քաղաքացինե՛ր։*
*Այս թագավորն ունի բերան մի ահռելի։*

ՁԱՅՆԵՐ

*Ճի՛շտ է։*
*Ճի՛շտ է, քաղաքացի հռետոր։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

*Անիծվածը խժռում է, ինչ կա խժռելի։*

ՁԱՅՆ

*Ճի՛շտ է։*

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

*Եվ ոչ ոք*
*չի համնի Արարատին, ի վիշտ մեր։*

ՁԱՅՆԵՐ

*Ճի՛շտ է։*
*Ճի՛շտ է։*



ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

*Բավակա՛ն է։*
*Փշրեցեք ժանգոտ շղթաները։*

ԸՆԴՀԱՆՈՒՐ բնդյուն

*Կորչի՛։*
*Կորչի՛ ինքնակալությունը։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Ո՞ւմ վրա եք ձեռք բարձրացնում էդ։*
*Ա՛խ։*
*Միապե՜տ։*
*Ողջ կյանքներդ կապրեք աքսորավայրում,*
*չոր տախտամածին։*
*Պարոնայք,*
*ձեռք մի տաք նրան։*
*Համաձայնեցեք միապետությանը սահմանադրական,*
*գլխավորությամբ մեծ իշխան Նիկոլայի*
*կամ*
*Միխայիլի։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ ԵՎ ՄԱՔՈՒՐՆԵՐ
(խմբով)

*Համաձայնենք,*
*որ նա խժռի՞ մեզ։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Կհամաձայնենք, ո՜նց չէ։*

ԲՈՒԼՈՐԸ
(խմբով)

*Մենք համաձայնել ցույց կտանք քեզ։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(ծեծված, լալիս է)

*Դաղում են աջից։*
*Դաղում են ձախից։*
*Ավելի շուտ կմեռնես,*
*քան սրանց կհաշտեցնես։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(նեգուսին)

*Ժողովրդի արյունը խմեցի՛ր,*
*կերա՛ր կյանքը...*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(նեգուսին)

*Է՛յ, դո՛ւ,*
*ալոն կանֆան ջրի տակը։*

Ընդհանուր ջանքերով նեգուսին ճոճում են ու դուրս նետում նավից։ Ապա մաքուրները քահանցուն են անում անմաքուրներին և, փախչելով, գոռում։

ԴԻՎԱՆԱԳԵՏ
(ճանճափորին)

*Ընկերներ,*
*դուք նույնիսկ հավատալ չեք կարող,*
*ես ուրախ եմ անսահման.*
*չկան այժմ անջրպետներն այդ դարավոր։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(դարբնին)

*Շնորհավորում եմ ձեզ։*
*Դարավոր հիմքերը խորտակվեցին, վերջապես։*

ԴԱՐԲԻՆ
(անորոշ)

*Այո-ո...*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Մնացյալը կարգի կընկնի,*
*մնացյալը դատարկ բան է։*

ՏԵՐՏԵՐ
(դերձակուհուն)

*Հիմա մենք ձեր կողմն ենք, դուք՝ մեր կողմը։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(զոհ)

*Էդպես, էդպես։ Ման տուր քթից բռնած։*



ԴԱՄԱ

*Մի՞թե նեգուսի նկատմամբ ես անզուսպ էի տեղով։*
*Ես ապրում եմ,*
*շնչում սահմանադիր ժողովով։*
*Ես կողմնակից եմ ժամանակավոր կառավարության՝*
*ի՛նչ կամենաք՝ խնդրե՛մ.*
*Թեկուզ երկու տարի ոտի վրա հղի կմնամ։*
*Հիմա կկապեմ կարմիր փողպատներ,*
*Հո պետք է հեղափոխական մոդա հաստատել։*
*Մեկ րոպե հետո ետ կգամ էլի*
*ժողովրդի մոտ իմ անչափ պաշտելի։*

(Դուրս է վազում իր տուփերով)

ԿԼԵՄԱՆՍՈ
(ձեղնախցիկում)

*Դե, քաղաքացիներ, բավ է։*
*Զբոսնեցիք մի կուշտ։*
*Հիմա պետք է դեմոկրատական իշխանություն ստեղծել,*
*անշուշտ։*

*Քաղա՛քացիներ,*
*որպեսզի դա լինի շուտով և արագ,*
*ահա մենք,— հանգիստ, տե՛ր, նեգուսի աճյունին,—*
*տասներեք*

*մինիստրներ և մինիստրի օգնականներ,*
*իսկ դուք՝*
*քաղաքացիներ դեմոկրատական հանրապետության.*
*կոշիկ կկարեք,*
*կթխեք բուլկի,*
*կորսաք ծովածածան...*
*Առարկություն չկա՞։*
*Անցնում է միաձայն։*

ԲԱՏՐԱԿ

*Լավ,*
*միայն թե հեռու չլիներ ջուրը։*

ԽՄԲՈՎ

*Թող կեցցե՛,*
*կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ

*Իսկ հիմա ես*

(անմաքուրներին)

*առաջարկում եմ ձեզ աշխատել։*

(մաքուրներին)

*Իսկ դուք առեք գրիչ։*
*Դատեք, բանեք,*
*ամեն ինչ այստեղ բերեք,*
*իսկ մենք հավասար կբաշխենք այսպես՝*
*վերջին շապիկը կարվի երկու կես։*

Մաքուրները սեղան են դնում, թղթերով տեղավորվում դրա շուրջը և, երբ անմաքուրները ուտելիք են բերում, գրանցում են մուտքի մատյաններում ու անմաքուրների գնալուց հետո՝ անմիջապես սկսում ախորժակով ուտել։ Երկրորդ անգամ եկող բուլկեգործը փորձում է նայել թղթերի տակ։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

*Ի՞նչ ես մտիկ տալիս։*
*Քաշվիր, եղբայր, սա թանն չի,*
*ամեն մարդու բան չի։*

ԿԼԵՄԱՆՍՈ

*Ախր դուք պետության կառավարումից*
*պարզապես չեք հասկանում ոչ մի բան։*
*Ամեն մի ելից ափսե*
*և ամեն մի մտից՝*
*պետք է համարակալվի անպայման։*

ԴԱՐԲԻՆ

*Մինչև ձեր կողմից համարը դրվի,*
*մեր եղբայր անմաքուրը ոտքերը կփռի։*

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ

*Բերեք խոստացածը փայ-փայ անենք։*



ՏԵՐՏԵՐ

(վրդովմունքով)

*Եղբայրք,*
*սնունդի մասին խորհելը հույժ վաղաժամ է։*

ՌԱՋԱ

(հեռացնելով նրան սեղանից)

*Շնաձկանը մի լավ աչք ածիր.*
*ոնց որ թե բռնել, դեսն են բերում։*
*Տես՝ կաթ չի՞ տալիս,*
*տես՝ ձու չի՞ ածում։*

ԴԱՐԲԻՆ

*Է՛յ, առջա եք, փաշա,*
*միտ բերեք թուրքական առածը.*
*«Փաշա՛, թալան-թրաշ մի՛ արա»։*

Գնում է ու մի րոպե հետո վերադառնում մյուս անմաքուրների հետ։

*Սովորեցնո՞ւմ են։*
*Ինչքան կուզես՝ շնաձկանը կթիր,*
*մեկ է՝ կաթ չես ստանա և ոչ մի կաթիլ։*

ԿՈՇԿԱԿԱՐ

(գրագիրներին)

*Ճաշի ժամանակն է։ Հավաքի՛ր վռազ։*

ԱՄԵՐԻԿԱՑԻ

*Ուշադրություն դարձրեք՝*
*ի՜նչ գեղեցիկ են*
*ճայերը, ալիքները ճերմակաբաշ։*

ԲԱՏՐԱԿ

*Ավելի լավ է խոսենք շորվայից ու չայից։*
*Գործի անցեք,*
*գործի։*
*Գլուխ չունենք ալիքներից ու ճայից։*

ԿԼԵՄԱՆՍՕ

*Մտի՛կ արեք, մտի՛կ։*
*Կետն է լողում*
*ծովի ջրերում։*

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

*Սատանան նրա հետ։*
*Դու ինքդ ես կետ։*

ԽՄԲՈՎ
(սեղանը ջուր տալով)

*Դուք այստեղ գրասենյակային քաշքշուկ մի սարքեք։*

Դատարկ աթոռները շրխկում են տախտակամածին։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ ԵՎ
ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ
(տխուր)

*Ամեն ինչ խժռել է խորհուրդը մինիստրական։*

ՀՅՈՒՍՆ
(բռնելով ջուր տված սեղանին)

*Ընկերնե՛ր։*
*Սա դանակ է մեր մեջքին։*

ՁԱՅՆԵՐ

*Եվ պատառաքաղ։*

ՀԱՆՔԱՓՈՐ

*Ընկերնե՛ր։*
*Ի՞նչ բան է սա։*
*Առաջ մի բերան էր խժռում,*
*իսկ հիմի խժռում են վաշտով։*
*Հանրապետությունը*
*դուրս եկավ*
*նույն թագավորը,*
*միայն թե՝ հազարբերան։*

ՖՐԱՆՍԻԱՑԻ
(ֆչփորելով ատամները)

*Ի՞նչ եք իրար անցել։*
*Խոստացել ենք, հավասար կբաժանենք.*



*մեկին՝ բուբլիկը,*
*մյուսին՝ բուբլիկի ծակը։*
*Դեմոկրատիա ասածդ էլ հենց այդ է որ կա։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ

*Ախր բոլորին ձմերուկ չի հասնի,*
*մեկին էլ՝ կորիզները։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Մենք ձեզ ցույց կտանք*
*դասակարգային պայքարի ձևերը։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Եվ նորից*
*ու նորից տունը կործանվում է,*
*և նորից*
*ու նորից խռովություն, աղմուկ։*
*Հերի՛ք եղավ,*
*հերի՛ք։*
*Մի հեղեք արյունս։*
*Լսեցեք, ես չե՛մ կարող։*
*Այդ ամենը լավ է՝*
*և՛ կոմունա,*
*և՛ մյուս բաները։*
*Բայց ախր դրա համար քիչ են անգամ դարերը։*
*Ընկե՛ր բանվորներ,*
*համաձայնեք մաքուրների հետ կրկին,*
*ականջ դրեք տարեց*
*փորձված մենշևիկին։*

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

*Համաձայնե՞լ։*
*Ախր ես կզրկվեմ կապիտալից։*
*Մենք քեզ համաձայնել ցույց կտանք։*

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

*Ես քեզ համաձայնել ցույց կտամ։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Այ քեզ վիճակ։*
*Նորից երկկողմանի մամլակ։*

Անմաքուրները նեղում են մաքուրներին։

ՄԱՔՈՒՐՆԵՐ

*Սպասեք, քաղաքացիներ։ Քաղաքականությունը մեր...*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Հապա՛,*
*չորս կողմից կրակ բացեք, տղերք։*
*Ցույց տանք՝ ինչ բան է քաղաքականությունը։*
*Դիմացե՛ք, անիծյալներ։*
*Հիշեք Հոկտեմբերյան հեղափոխությունը։*

Զինվում են նաշի ժամանակ մաքուրների մի կողմ դրած զենքով։ Նրանց քշում են նավախել։ Փայլում են ցած նետված մաքուրների կրունկները։ Միայն վաճառականը, որ թոքրել է ծովացուլի կեսը, մտել է ածխարկղի մեջ. մյուսի մեջ խցկվել են ինտելիգենտը և դամանը։ Համաձայնողականը կառչել է բատրակի ձեռքից. աշխատելով նրան քաշ տալ իր կողմը, ճեծկլտում է։

ԲԱՏՐԱԿ

*Ա՛խ, անիծած,*
*տզզոցը դցեց։*
*Հեղափոխությունը, մըսյո, յունկեր չի քեզ համար։*

Համաձայնողականը ատամներ խրում է բատրակի ձեռքի մեջ։

ԴԱՐԲԻՆ

*Ա՛խ, դու, չարագործ։*
*Տղերք, նետեք նրան*
*անցքից ներքև։*

Գլորում են։

ՇԻՆԵԼՈՒՅՑ ՄԱՔՐՈՂ

*Շունը չկորի էնտեղ։*
*Այ քեզ մա՞րդ.*
*կազմը քնքուշ է,*
*խելը կնիկարմատ։*



ԲԱՏՐԱԿ

*Ի՞նչ է լմլմացնում։*
*Ետ կգան,*
*Հենց մեզ էլ կխուղեն։*
*Փափուկ կվարվենք,*
*Արարատը կուզեն։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Ճի՛շտ է*
*Ճի՛շտ է։*
*Կամ մե՛նք, կամ նրա՛նք։*

ԲԱՏՐԱԿ

*Ճամփա՛ տեռորին։*

ԴԱՐԲԻՆ

*Ընկերնե՛ր։*
*Դեն նետեք ճղճղաններին։*
*Է՛յ, ժողովուրդ, ինչո՞ւ չես ցնծում։*
*Ցնծա՛։*

Սակայն անմաքուրները մռայլ են՝ ճանապարհորդությունը խժռել է վերջին պաշարները։

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ

*Ցնծա՞։*
*Իսկ հացի մասին մտածե՞լ ես...*

ԲԱՏՐԱԿ

*Ցնծա՞։*
*Իսկ ի՞նչ ցանենք ցորենի տեղակ։*

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

*Ցնծա՞։*
*Երբ հերկերի տեղ խոշ ու խութեր են։*

ՋԿՆՈՐՍ

*Ձուկ ինչո՞վ որսաս։*
*Ցանցերը քրքրված են, ծակ-ծակ։*

ՎԱՐՈՐԴ

Ինչպե՞ս անցնես այդ խոշ ու խութով։
Գոնե չորս կողմը չոր լիներ, արձակ։

ՈՐՍՈՐԴ

Տապանը ճռնչում է։

ՎԱՐՈՐԴ

Կողմնացույց չկա։

ԲՈԼՈՐԸ

Փլուզում է, ավեր։

ԴԱՐԲԻՆ

Հո կանգ չե՞նք առնի կես ճանապարհին։
Կերածը խեղդվողների փորում է,
Ես չես հանի։
Մնում է մի բանի մասին մտածել՝
ուժերս չհատնեն մինչ Մասիս հասնել։
Թող փոթորիկը ծեծկի մեզ,
թող տապը տապակի,
քաղցը տանջի,
կնայենք նրա աչքերի մեջ,
կխմենք միայն ծովային փրփուր,
բայց չենք նահանջի։
Դրա փոխարեն հո մենք ենք տերը այստեղ։

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ

Էսօր կուտենք,
բաններս բուրդ է էգուց։
Սաղ տապանում եղած-չեղածը՝
երկու պաքսիմատ է։
Երկու։

ԲԱՏՐԱԿ

Է՜յ։
Ընկերնե՛ր։
Պաքսիմատ չտալ առանց քարտի։



Անկյունի արկղից դուրս են ցցվում դաման և ինտելիգենտը։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Լսո՞ւմ եք՝
ասում են.
«Բաց թողնել պաքսիմատ»,
իսկ այստեղ սով է, ցուրտ, փորձանքներ ամեն կարգի։

ԴԱՄԱ

Գնանք ծառայելու սովետական իշխանության։

Դուրս են գալիս արկղից։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

Է՞ս ովքեր են։
Էն աշխարհից եկածնե՞ր։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Բնավ ոչ։
Մենք յուրային ենք,
անկուսակցականներ,
մենք դուրս եկանք ածուխի արկղից։
Մենք սովետներին ենք կողմնակից։

ԴԱՄԱ

Ասում եմ բուրժույներին։
Սրիկանե՛ր։ Ինչպե՞ս չատեմ։
Շարունակ սպասում էի,
որ տապալվեն շուտով։
Թույլ տվեք
ես ձեզ մոտ
աշխատեմ
գրամեքենայի վրա, թեկուզ մի մատով։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ

Ինձ էլ ձեզ հետ առեք.
Առանց մասնագետի
ի՞նչ պիտի անեք։
Առանց մասնագետի

անհնար բան է։
Կմնա մի ելք՝
խեղդվեք։

ԴԱՐԲԻՆ

Ջենք խեղդվի,
մի կռռա ագռավավարի։

(դամային)

Նստիր, ընկեր։

(ինտելիգենտին)

Մա՛րշ ներքև։
Հնոցը կառավարիր։

ՎԱՐՈՐԴ

Առանց ուտելիք նույնն է, թե մեքենան անփայտ վարես։

ՀԱՆՔԱՓՈՐ

Նույնիսկ ե՛ս չեմ դիմանա,
Թեկուզ պինդ եմ այսպես։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

Պարզվում է՝ քիչ է մաքուրներին ջախջախել։
Հարկավոր է հաց։
Հարկավոր է ջուր ճարել։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

Հիմի ի՞նչ անենք։
Ո՞նց գլուխ հանենք։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Աստված չի թողնի, որ այսպես կորչենք։
Ձեռներս խաչենք, հանգիստ սպասենք։

ՈՐՍՈՐԴ

Քաղցից ջլերս մեկ-մեկ թուլանում են։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ
(ականջ դնելով)

Էս ի՞նչ է։



Լսո՞ւմ եք։
Լսո՞ւմ եք երաժշտությունը։

ՀՅՈՒՍՆ

Էդ Նեռը ճառում էր
Արարատի, դրախտի մասին։

(վոյնեցած վեր է թռչում տեղից, մատով ցույց տալով նավ-եզրից դուրս)

Էն ո՞վ է ալիքների վրայով
գալիս,
Նվագելով իր ոսկորներին։

ԾԽՆԵԼՈՒՅԶ ՄԱՔՐՈՂ

Ծովն ամայի է։
Բանից կաց։
Ո՞վ պիտի էնտեղից հայտնվի հանկարծ։

ԿՈՇԿԱԿԱՐ

Ահա նա
գալիս է...
Այդ սովն է գալիս՝
մեզ անուշ անի։

ԲԱՏՐԱԿ

Ինչ կա որ, արի։
Էստեղ չկա մեկը, որ սիրտը մարի։
Ընկերնե՛ր, թշնամին նավեզրին է։
Բոլորը փութաջան ու ժիր
բարձրանան տախտակամած։
Սովը
ինքն է գալիս աբորդաժի։

Օրորվելով դուրս են վազում, զինված ով ինչով կարող է։ Լուսացել է։ Դադար։

ԲՈԼՈՐԸ

Ինչ կա որ, արի։
Մարդ-մուրդ չկա...

Եվ ահա էլի
պիտի մտիկ տանք ամայի ջրերին։

**ՈՐՍՈՐԴ**

Էսպես ահա անապատի հնոցում
երազում ես մի պատառ ստվեր,
կառչում այդ մտքից,
պինդ կառչում ես։
Իսկ մեռնելուց առաջ
տեսնում ես, որպես թե անապատը սառչում է։
Միրաժ։

**ՎԱՐՈՐԴ**

(սարսափելի հուզված, ուղղում է ակնոցը, դիտում շուրջը։ Դարբնին)

Էնտեղ հրեն,
արևմտյան կողմը,
մի սև կետ չե՞ս տեսնում ջրերի անդունդում։

**ԴԱՐԲԻՆ**

Ի՞նչ տեսնես։
Այդ նույնն է, թե ակնոցը դնես պոչիդ
կամ ջուր ծեծես սանդում։

**ՎԱՐՈՐԴ**

(վազելով հեռանում է, փնտրում այստեղ-այնտեղ, հեռադիտակով բարձրանում առագաստակայի վրա, և մեկ րոպե հետո լսվում է նրա՝ ուրախությունից պայթող ձայնը)

Արարա՜տը։ Արարա՜տը։ Մասի՜սը...

**ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻՑ**

Օ՜, այ թե ավետիս է։
Այ թե ավետիս է...

Վարորդի ձեռքից խլում են հեռադիտակը։ Խռնվում են իրար գլխի։

**ՀՅՈՒՍՆ**

Ո՞ւր է։
Ո՞ւր է նա։



**ԴԱՐԲԻՆ**

Հրեն,
երևում է,
աջ կողմը մտիկ...

**ՀՅՈՒՍՆ**

Այդ ի՞նչ է։
Բարձրացավ։
Շտկվեց։
Գալիս է։

**ՎԱՐՈՐԴ**

Այսինքն, ո՞նց թե գալիս է։
Մասիսը սար է ու չի կարող քայլել։
Աչքերդ տրորիր։

**ՀՅՈՒՍՆ**

Ինքդ տրորիր։
Լավ մտիկ տուր։

**ՎԱՐՈՐԴ**

Այո, գալիս է։
Ինչ-որ մարդ է։
Այո, մարդ է... Ոչ թե մեկ, այլ երկու...
Ծերը ցուպով է։
Ջահելը՝ անցուպ։
Է՛խ, քայլում են ջրի երեսով,
ոնց որ ցամաքում։

**ԴԵՐՁԱԿՈՒՀԻ**

Զանգերը զարկե՛ք։
Զարկե՛ք զանգերը։
Այդ
նա էր գալիս,
ճեղքելով Գեննեսարեթի ջրերը։

**ԴԱՐԲԻՆ**

Աստված խնձորներ ունի,
բալեր,

նարինջներ,
կարող է օրը յոթ գարուններ փռել,
իսկ մեզ հետույքով է դառնում բարձրյալը,
հիմա էլ Քրիստոսով է ուզում գցել իր ծուղակը։

ԲԱՏՐԱԿ

Զե՞նք ուզում։
Զենք թողնի խաբեբային մոտ։
Քաղցած բերանները չեն աղոթում։
Տեղներիցդ չշարժվեք,
թե չէ կհասցնեմ։
Է՛յ,
ո՞վ ես դու։

Սսկված տախտակամած է բարձրանում ամենաասովորական մի մարդ։

ՄԱՐԴ

Ով եմ ե՞ս։
Ես չունեմ
ոչ ազգություն,
ոչ ցեղ,
ոչ դասակարգ։
Ես տեսել եմ երեսուներորդ,
քառասուներորդ դարերը։
Ես գալիքից եմ,
պարզապես մարդ։
Եկել եմ փչելու
հոգիների փուքսը,
քանզի գիտեմ,
թե ապրելը դժվար է որքան։
Լսեցեք
իմ քարոզը ահավասիկ,
որ կա։
Մասիհնե՞ր եք սպասում։
Մասիհներ չկան։
Ո՛չ մի Մասիհ։
Երազում եք տեսել անհեթեթ։
Իսկ եթե
սարը չի գնում Մուհամմեդի մոտ,



սատանան իր հետ։
Ես ձեզ չեմ քարոզում աստծու դրախտի մասին,
ուր ծոմ պահողները անշաքար թեյ են ֆռթացնում։
Ես իսկական,
երկրային
դրախտից եմ խոսում։
Ինչների՞ց է Քրիստոսի երկինքը խեղճ,
ավետարանիչների երկինքը պարապ։
Իմ դրախտում դահլիճները պայթում են կահույքից,
պերճաշուք սենյակները շողշողում լուսառատ։
Այնտեղ աշխատանքը չի կոշտուկում ձեռքերը,
այլ վարդի պես բացվում է ափում։
Այնտեղ արևն այնպիսի օյիններ է թափում,
որ ոտքերիդ տակից բացվում են ծաղիկները։
Այստեղ պարտիզպանը տքնում է կլոր տարին,—
ապակյա ծածկ, գոմաղբի սարեր,—
իսկ ինձ մոտ
սամիթի արմատներին
տարին վեց անգամ հասնում են անանասներ։

ԲՈԼՈՐԸ
(խմբով)

Բոլորս էլ կգանք։
Կորցնելու ի՞նչ ունենք։
Բայց մեր մեղավոր զորքը ներս կընդունե՞ն։

ՄԱՐԴ

Իմ դրախտը բոլորի համար է,
հոգով աղքատներից բացի,
որ մեծ պասից կլորացել են լուսնի պես,
դարձել լուսնի քաշի։
Ավելի շուտ ուղտը ասղածակով կանցնի,
քան ինձ մոտ այդպիսի փղերը հաստակաշի։
Ինձ մոտ եկ դո՛ւ,
որ դանակը թափով կայծակնային
թշնամու կուրծքը մխեցիր, գնացիր երգելով։
Ե՛կ, աններող,
առաջինը մտիր
իմ թագավորությունը

երկրային,
ո՛չ երկնային։
Բոլորը թող գան,
ովքեր բարձվող ջրի չեն,
որ քայլում են գլխիկոր։
Ամեն ոք,
ում կյանքը ծակուռ է հին,
իմացե՛ք՝
ձեզ համար է
արքայությունը իմ
երկրային,
ո՛չ երկնային։

ԽՄԲՈՎ

Սա մեզ՝ աղքատներիս ձեռ չի՞ առնում։
Ո՞ւր է հայպ։
Ի՞նչ հեքիաթներ ես պատմում։

ՄԱՐԴ

Երկար է ճամփան։
Պետք է մութ ամպերի միջով անցնենք մենք։

ԽՈՒՄԲԸ

Ամեն մի ամպին վերջ կտանք մեկ-մեկ։

ՄԱՐԴ

Իսկ եթե պժոխքը դժոխքին հաջորդի՞։

ԽՈՒՄԲԸ

Կգանք և այնտեղ։
Միայն առաջնորդիր։
Ետ-ետ չենք գնա։
Որտե՞ղ է նա։

ՄԱՐԴ

Որտե՞ղ։
Սպասում եք՝ ուրիշը ցույց տա։
Իսկ նա
ահա այստեղ է,



ձեզ մոտ,
ձեր ձեռքի տակ։
Ո՞ւր են քո ձեռքերը։
Ի՞նչ ես անում։
Պարապ ձեռքերից շինել եք խաչեր։
Աղքատների նման
իրար եք սեղմվում։
Մինչդեռ անչափ հարուստ եք։
Նայեք չորս կողմ՝
ինչպիսի՜ առատություն,
մի՞թե չունեք աչքեր։
Ո՞նց է համարձակվում խաղալ տապանի հետ
քամի-մակաբույծը։
Կորչի՛ բնության անպատկառ լուծը։
Դուք կապրեք լույսի մեջ
ու տաքության,
ստիպելով, որ ալիքները փոխվեն էլեկտրականության։
Իսկ եթե հանկարծ
ջրի տակ հայտնվեք,
նույնպես չսարսափեք։
Ծովի հատակը
մարգագետին-ածու է։
Հացը մեր հանապազօրյա
այնտեղ է աճում՝
քարածուխը։
Թող մրրիկը ոռնա, սարքի ջրհեղեղ,
թող ճռնչա տապանը,
պարանները պրկվեն։
Աջ ձեռքը և ձախը՝
այդ երկուսը մեկտեղ
մեզ կփրկեն։
Խոսքը ձերն է։
Ես լռում եմ։
Վերջ։

Չքանում է։ Տախտակամածին ճիացական վարանման մեջ են։

ԿՈՇԿԱԿԱՐ

*Ո՞ւր է նա։*

ԴԱՐԲԻՆ

*Ինձ թվում է՝ իմ մեջ է, իմ մեջ։*

ԲԱՏՐԱԿ

*Իմ կարծիքով, նա հասցրեց իմ մեջ էլ մտնել։*

ՁԱՅՆԵՐ

*Ո՞վ էր նա։*
*Ո՞վ էր ոգին այդ անմեղ։*
*Ո՞վ էր նա՝*
*անանուն։*
*Ո՞վ էր՝*
*անհայրանուն։*
*Ինչո՞ւ էր եկել։*
*Ի՞նչ մարգարեություն էր անում։*
*Չորս կողմ մահացու լոգարան է ջրհեղեղի։*
*Լինի՛ թող։*
*Կգտնենք ավետյաց երկիրը։*

ԲԱՏՐԱԿ

*Նշանակում է՝ դրախտը այնուամենայնիվ կա.*
*Նշանակում է՝ հիմարություն չէ ձգտել երջանկության։*

ՁԱՅՆԵՐ

*Որպեսզի շուտ հասնենք նպատակին մեր,*
*բարձրացրեք մուրճերը,*
*կացինները վեր։*
*Շարքերը հավասա՛ր։*
*Մի՛ ծռեք գիծը։*
*Տապանը ճոնչում է։*
*Կարգապահությունն է փրկիչը։*

ԴԱՐԲԻՆ
(ձեռքը առագաստաձողին)

*Չարագուշակ է հորձանուտը երախաբաց։*
*Ճանապարհը մեկն է՝*



*ամպերի միջով։*
*Առա՛ջ։*

Նետվում են դեպի կայմը։ Խմբով։

*Երկնքի միջով՝ առա՛ջ։*

Առագաստաձողերին ծայր է առնում մարտական երգը։

*Է՛յ, վե՛ր մագլցեք,*
*վե՛ր մագլցեք, վե՛ր։*
*Առա՛ջ, միշտ առա՛ջ, ծովային կոմիսարներ։*

ԽՈՒՄԲԸ

*Առա՛ջ, ծովային կոմիսարներ։*

ԿՈՇԿԱԿԱՐ

*Հաղթանակից հետո մենք հանգիստ կառնենք,*
*հոգնած ոտքներիս երկինքներ կհագնենք։*

ԽՈՒՄԲԸ

*Կհագնենք։*
*Արնածոր՝ երկինքներ կհագնենք։*

ՀՅՈՒՍՆ

*Երկնի հայացքի դեմ*
*երկիրն է պարզվել։*
*Արևային սանդուղքով,*
*ծիածանի սանդուղքով՝ վե՛ր։*

ԽՈՒՄԲԸ

*Արևային կամրջակով,*
*ծիածանի ճոճանակով։*

ՁԿՆՈՐՍ

*Հերի՛ք, մարգարեներ։*
*Նազովրեցի ենք մենք։*
*Ելեք կայմերն ի վեր,*
*ձողերից կառչեք։*

ԽՈՒՄԲԸ

*Կայմերի՛ն։*
*Կայմերի՛ն։*

Ձողերի՛ն։
Ձողերի՛ն։

Երբ ծածկվում է վերջին անմահուրը, նրա ետևից դեպի առաջա-տաձողերն են փառչ գալիս դաման և խնտելիգենտը: Մենշևիկը մի պահ խորասուզված մնում է մտքերի մեջ:

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Ո՞ւր եք գնում։
Դեպի կոմո՞ւնա։
Այդպիսի հեռուներում ի՞նչ եք կորցրել։

Նայում է շուրջը: Տապանը ճռճռում է:

Առա՛ջ, ընկերներ։
Լավ է առաջ գնալ, քան մեռնել...

Մենշևիկը ճռռանում է: Անխարկղից վերջապես ըմծիծաղով դուրս է գալիս վաճառականը:

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Մարդ պիտի ավանակ լինի։
Ձո՞րս հարյուր միլիոնի ապրանք
ամենաքիչը։
Նույնիսկ եթե ջարդելու տանք։
Այ թե օգուտ կքաղե՛մ...
Այս ի՞նչ է։
Ջարդվում է,
Ճեղքվում։
Փրկվեցե՛ք...
Սկո՛ւմ ենք։
Ընկերնե՛ր։
Ընկերնե՛ր։
Սպասեք մի րոպե։
Ընկերնե՛ր։
Ես այստեղ կործանվում եմ
մեն-մենակ։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Գնա, գնա,
քեզ էլ կոնցենսիա կհանեն այնտեղերը։

Վարագույր



# ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Դժոխք: Բեմը վիթխարի դռնով: Դռան վրա ցուցանակ. «Առանց զե-կուցման ներս չմտնել»: Կողքերին՝ պահակ սատանաներ: Ամբողջ պատրոնով մեկ իրար են ձայնում երկու բանբեր սատանաներ: Դռան ետև, բեմում, մեղմ երգեցողություն:

ԽՈՐ

Մենք սատանա ենք, սատանա ենք քաղցած։
Մենք խորովում ենք մեղավոր մարդկանց։

1-ԻՆ ԲԱՆԲԵՐ

Այո, եղբայրս,
զզվելի կյանք է։

2-ՐԴ ԲԱՆԲԵՐ

Վերջին ամիսներն իսկը տանջանք էր։

1-ԻՆ

Միով բանիվ՝
հինգերորդ անիվ։

ԽՈՐ

Որկրամոլ տերտերներին քչեցինք իրենց ժամը։
Հիմա մեզ մոտ էլ պարենային ճգնաժամ է։

2-ՐԴ

Ինչ այդ պարոններն այս կողմերը եկան,
մենք, սատանեքս, բոլորովին չկանք։
Մի գլուխ էս տուր,
մի գլուխ էն տուր։

1-ԻՆ

Ամենից վատը նեգուսն է հաբեշական։
Մուռթը՝ սև։
Ախորժակը՝ խոզական։

ԽՈՐ

Օ՜, աղետ, օ՜, աղետ չեղած-չլսված,
շուտով բոլորս կսատկենք սոված։

1-ԻՆ

Մի ժամանակ սատանեքիս թշերը ոնց ծմերուկներ։

2-ՐԴ

*Այո, իմ երեսը մի չորս կիլո կա։*

1-ԻՆ

*Իսկ տերտերներին քշելուց հետ՝ ո՛չ մի մատակարար։*

2-ՐԴ

*Վճարումը նվազ է։*

1-ԻՆ

*Օրապահիկը՝ չնչին։*

2-ՐԴ

*Էլի ոչինչ,*
*թե որ գրողի տարածները բանի նման լինեին։*
*Թե չէ, ախր, նողկալի են՝*
*ճաղատ,*
*պոչատ,*
*ցմփոր...*

1-ԻՆ

*Բան չկա,*
*մեզ մոտ էլ հեղափոխություն կլինի մի օր։*

1-ԻՆ

*Ս-ս։*
*Նորից զանգ։*

ԽՐԿՈԻՍՈՎ

*Վազենք արագ։*

Կտրում անցնում են ամբողջ բեմը։ Պահակները հարցաքննում են բանբերներին և, հակիրճ զեկույց տալուց հետո, բացում են դռները։

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

*Ա՛խ, դուք, սատանաներ։*
*Ա՛խ դուք, սատանի ճտեր։*
*Ինչո՞ւ մեղավորները չեն ընկնում ցանցեր։*



ՏԵՐՏԵՐ
(սպառնալով բանբերներին)

*Ինչ է, ես քեզ համար տքնում եմ բազմապատիկ,*
*որ սատ օրապարենո՞վ սնվեմ հույժ աղքատիկ։*

ԲԱՆԲԵՐՆԵՐ
(դժգոհությամբ)

*Եղան վերցրեք,*
*ինքներդ ուսացեք։*

ԿԼԵՄԱՆՍՈ

*Լռե՛լ։*
*Թողեք ձեր սովորույթը անհաշտ։*
*Մենք սատանաներ ենք սպիտակամաշկ։*
*Սևուկ սատանան*
*պետք է տքնաջան*
*աշխատի սպիտակներիս համար։*

2-ՐԴ ԲԱՆԲԵՐ

*Ձեր կարգերն եք հաստատել հին։*
*Սատանեքի մեջ էլ ծայր առավ*
*հակամարտությունը դասակարգային։*

ՓԱՇԱ

*Ա՛խ, դու դեռ խոսո՞ւմ ես։*
*Ի՞նչ կրակոտ ճառեր։*
*Ախր այս դանակով*
*փորդ կխառնեմ։*

ՍԱՏԱՆԱ-ԱՐԱՐՈՂԱՊԵՏ

*Նորին մեծություն Բեհեզզեբուղը*
*կամենում է խոսել*
*դժոխքի հետ իր հպատակ։*

ԳԵՐՄԱՆԱՑԻ

*Ոտքի՛։*
*Զգա՛ստ։*
*Հետույքները չխաղացնել աննպատակ։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(ներս է մտնում)

*Սատանանե՛ր, հավատարիմ իմ հպատակներ։*
*Այլևս դատարկ չեն լինի փորները ձեր։*
*Գոչեցե՛ք ուրախ։*
*Պոչներդ վե՛ր։ Ուռա՜։*
*Վերջանում է մեծ*
*պասը։*
*Ոչ պակաս տասնհինգ մեղավոր հասվեհաս են։*

ՏԵՐՏԵՐ
(խաչակնքում է)

*Փա՜ռք աստծու։*
*Վերջացավ մեր պասուց խորհուրդը։*

ՁԻՆԱՑԻ

*Ջնայած անանձնագիր,*
*բայց խիստ լուրջ ժողովուրդ է։*

ՆԵԳՈՒՍ

*Անքա՜ն խժռեմ,*
*որ սատանեքի սիրտն սկսի խառնել։*

ԼԼՈՅԴ-ՋՈՐՋ

*Եղջյուրներս սրեմ,*
*թող իմանան ինչ ասել է*
*պաշտոնը ձեռքիցս առնել։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(բանբերներին)

*Դե շո՛ւտ,*
*դեպի պահակակետ։*
*Ահա հեռադիտակները,*
*լավ մտիկ տաք,*
*որպեսզի ոչ ոք դուրս չպրծնի,*
*թե չէ՝ վզակոթներիդ կստանաք։*

Զինված հեռադիտակներով, սատանաները վազում են դռնին ու ականջ դնում: Դուռը փակվում է:



1-ԻՆ

*Միայն թող հանդիպե՜ն։*
*Ցո՜ւյց կտամ նրանց։*
*պոչս վեր կտնկեմ՝*
*եղջյուրներս ցցած։*

2-ՐԴ

*Ուղղակի սարսա՜փ։*

1-ԻՆ

*Այնպես գամ նրանց հախից,*
*որ թշնամիս էլ չտեսնի։*
*Սիրում եմ ռագու մեղավորների բոխախից։*

2-ՐԴ

*Ես նրանց կխժռեմ պարզապես։*
*Առանց հաշվելու։ Այնպես։*
*Ս-ս...*
*Լսո՞ւմ ես։*
*Թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ։*
*Թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ։*

Ականջ են դնում: Լսվում է անմահուրների կողմից դժոխքի նախադուռը տապալելու դղրդյունը:

1-ԻՆ

*Իսկ մեր ծերուկը*
*կուրախանա անչափ։*

2-ՐԴ

*Կամա՛ց, սատանա։*
*Դե շո՛ւտ, շտապիր,*
*նախազգուշացրու Բեհեղզեբուղի շտաբին։*

Առաջինը դուրս է վազում: Առաջին հարկի վերևում երևում է Բեհեղ-զեբուղը՝ ձեռքը ճակատին: Սատանաները ոտքի են կանգնում:

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(ճամոզվելով, բղավում է)

*Է՛յ, դո՛ւք,*
*գրողի տարածներ։*
*Քարշ տվեք մեծ կաթսան։*

*Եվ որքան կարելի է շատ փայտ՝*
*Հաստ,*
*չոր, որ չթշշան։*
*Թաքնվիր ամպերի տակ,*
*Հարյուրեղջյուր գումարտակ,*
*որպեսզի ոչ ոք մեր ձեռքից չփրթա։*

**Սատանաները թաքնվում են։ Ներսից լսվում է. «Կայծերի՜ն, կայծերի՜ն։ Ձողերի՜ն, ձողերի՜ն»։ Ներս է ընկնում անմաքուրների ամբոխը, և սատանաները վայրկենապես դուրս են թափվում, եղանները պատրաստ պահած։**

ՍԱՏԱՆԱՆԵՐ

*Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ։*
*Ա՜-ա՜-ա՜-ա՜-ա՜-ա՜։*

ԴԱՐԲԻՆ
**(ծիծաղելով, դերձակուհուն ցույց է տալիս ծայրի կանգնածներին)**

*Ծանոթներ են հին։*
*Ո՞նց է դուր գալիս քեզ։*
*Ոլորեցինք անկոտոշներին,*
*դրանց կոլորենք նույնպես։*

**Աղմուկն սկսում է ծանծրացնել։ Անմաքուրները սաստում են։**

*Ս-ս-ս...*

**Շփոթված սատանաները կծկվում են։**

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Սա դժո՞խքն է։*

ՍԱՏԱՆԱՆԵՐ
**(անվճռական)**

***Այո։***

ԲԱՏՐԱԿ
**(ցույց տալով խավարանը)**

*Ընկերնե՛ր։*
*Կանգ չառնե՛լ։*
*Ուղիղ այնտեղ։*



ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

*Այո, այո։*
*Սատանաներ, առա՛ջ։*
*Քավարանը անմաքուրներին ոչ է։*

ԲԱՏՐԱԿ

*Լսեք,*
*այդ ի՞նչ ոճ է։*

ԴԱՐԲԻՆ

*Թողեք դուք այդ։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
**(նեղացած)**

*Այսինքն, ո՞նց թողնեմ։*

ԴԱՐԲԻՆ

*Հենց էնպես։*
*Ամոթ է։*
*Ինչքան չլինի՝ սատանա ես ծեր,*
*հրեն մազերդ էլ սկսել են ճերմակել։*
*Էն աստված, եղանով վախեցնելն էր պակաս...։*
*Պղնձաձուլական*
*գործարանում*
*հեչ եղած կա՞ս։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
**(չոր-չոր)**

*Չեմ եղել ես ձեր ձուլարանում։*

ԴԱՐԲԻՆ

*Բանն էլ հենց այդ է։*
*Թե չէ*
*բուրդդ կթողնեիր։*
*Ապրում ես քեզ համար*
*պճնամոլի պես,*
*էնպես հարթ ու անդարդ ու կոպիտ էնպես։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

*Ինչպես չէ, անդա՞րդ,*
*ինչպես չէ, կոպի՞տ։*
*Հերիք խոսեցինք։ Համեցեք խարույկ։*

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ

*Սրամիտ եք ճառում։*
*Բա՞ն գտավ վախեցնելու...*
*Ծիծաղելի է, էն աստված։*
*Ախր, մեզ մոտ,*
*Մոսկվայում,*
*էդ փայտի համար դեռ մի բան էլ փող կտային։*
*Ցրտից ծակոցներ ես զգում էնտեղ,*
*իսկ ձեզ մոտ*
*ջերմաստիճանը այ թե ո՞ւր է թռել։*
*Նրանությո՞ւն։*
*Ման եք գալիս տկլոր։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

*Հերի՛ք կատակեք։*
*Դողացեք հոգիներիդ համար։*
*Բոլորիդ ծծումբով կխեղդենք հենց հիմա։*

ԴԱՐԲԻՆ
(բարկանալով)

*Բա՞ն գտավ պարծենալու։*
*Ի՞նչ կա ձեզ մոտ։*
*Ծծումբ է հոտում մի թեթև։*
*Մեզանում որ խեղդող գազը բաց չեն թողնում,*
*տափաստանը շինելներից գորշ գույն է ստանում,*
*ողջ դիվիզիան մեկեն գետին է փռվում։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

*Զգուշացեք, ասում եմ, շիկացած մանղալներից։*
*Եղաններին կղարկենք,*
*այնժամ չեք բլբլա նորից։*



ԲԱՏՐԱԿ
(ճամբերությունից դուրս գալով)

*Դե ինչ ես ինչ-որ եղաններով փքվում։*
*Մեզ համար քո հիմար դժոխքը մեղր ու կարագ է։*
*Պատահել է*
*գրոհի ժամին*
*մի ակնթարթում*
*զորքի երեք քառորդին հնձել է գնդացրի կրակը։*

Սատանաների ականջները կախում են։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(աշխատում է պահպանել կարգը)

*Ի՞նչ եք մոլորվել,*
*բերաններդ բացել գաղուկես։*
*Միգուցե նա փչում է պարզապես։*

ԲԱՏՐԱԿ
(գազազելով)

*Ե՞ս եմ փչում։*
*Ձեզ համար հանգիստ*
*շնթռել եք էստեղ։*
*Ականջ արեք,*
*պատմեմ ձեզ,*
*սատանաներ...*

ՍԱՏԱՆԱՆԵՐ

*Սո՛ւս կացեք։*

ԲԱՏՐԱԿ

*...երկրային ահավոր բաներ։*
*Ի՛նչ մի մեծ բան է ձեր Բեհեզզեբուղը։*
*Եղանով զբոսնում է դժոխքում ու դինջ է։*
*Ես ձեզ երկիր կտանեմ մի րոպեով։*
*Սատանաներ, գիտե՞ք բլոկադան ինչ է։*
*Մենք պիտի վախենանք եղաններից երկբերա՞ն։*
*Անգլիական տանկերը մեզ հյուրասիրել են կրակով։*
*Կապիտալն է խեղդել հանրապետությունը բանվորական՝*
*էսկադրաների և բանակների օղակով։*

Ձեզ մոտ գոնե չկան արդարներ ու մանուկներ,
չեք տեսնում նրանց արցունքն ու ցավը։
Իսկ մեզ մոտ այդ էլ կա։
Չէ՛, սատանանե՛ր,
ձեր դժոխքում, այստեղ, շատ ավելի լավ է։
Անկուլտուրական, բարբարոս Թուրքի պես
դուք մեղավորին ցցերի եք քաշում,
որ այստեղ, տեսնում եմ, կան։
Իսկ մեզ մոտ մեքենաներ են,
կուլտուրա է նմանապես...

ՁԱՅՆ
(սատանաների ամբոխից)

Այ քեզ բա՜ն։

ԲԱՏՐԱԿ

Արյո՞ւն եք խմում.
Անհամ հո՜ւմք։
Ուշ չլիներ, ֆաբրիկա կտանեի ձեզ։
Այնտեղ դրանից բուրժույների համար շոկոլադ են շինում։

ՁԱՅՆ
(սատանաների ամբոխից)

Այ քեզ բա՜ն։
Իսկապե՞ս։

ԲԱՏՐԱԿ

Իսկ թե տեսնեիք անգլիական գաղութի ստրուկին.
լեղապատառ կճղեիք թե տղամարդ, թե կին։
Հանում են նեգրի կաշին,
դաբաղում,
որպեսզի կազմեր պատրաստեն թանկ։
Ականջ մեխե՞լ։
Ինչո՞ւ չէ, խնդրեմ։
Խոզի մազը մտցնում են եղունգի տակ։
Տեսե՞լ եք զինվորին խրամատում.
Նրա համեմատությամբ լորդ է ձեր նահատակը։



ՁԱՅՆ
(սատանաների ամբոխից)

Հերի՛ք է։
Մազերս բիզ-բիզ են կանգնում։
Այդ պատմությունից կթրջես տակդ։

ԲԱՏՐԱԿ

Կարծում եք սարսափելի՞ է՝
խարույկներ եք սարքել հատուկ,
կաթսաներ կախ տվել։
Դուք ի՞նչ սատանա եք,
շան լակոտներ եք դուք։
Ֆաբրիկայում փոկերը ձգե՞լ են ջլերը ձեր,
ինչպես, որ ճիչը կոկորդում խեղդվեր։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(շփոթված)

Դե, ահա՜։
Ուրիշի բոստանը՝
սեփական դանակով։

ՏԵՐՏԵՐ
(առաջ հրելով Բեհեղզեբուղին)

Պատմիր,
պատմիր նրանց դժոխքի վառարանից։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

Պատմեցի՝
լսո՞ղն ով։
Բանի տեղ չեն դնում ինձ։

ԲԱՏՐԱԿ
(սպառնալից)

Ի՛նչ է, միայն վախկոտների վրա՞ եք երախներդ բացում։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

Դե, ի՛նչ եք կպել, աստված վկա։
Սատանա են, էլի, սովորական։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(աշխատում է բաժանել սատանաներին և անմաքուրներին)

Օ՜, աստվա՜ծ իմ։
Սկսվո՜ւմ է։
Ախր, ի՞նչ եք ուզում,
երկու հեղափոխությունը ձեզ համար քի՞չ էր։
Պարոնա՜յք, ընկերնե՜ր,
սկանդալ մի՜ սարքեք։
Ավելի լավ ուտելիք չունե՞ք դուք, ինչ է։
Տո՞րթ են գտել։
Դուք էլ լա՜վն եք
Նմանապես,
չեք կարող զիջել։
Տեսնում եք՝ սատանա է հարգարժան ու ծեր։
Թողեք ընդհարումը,
խնդրում եմ ձեզ։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

Ախ դու, շողոքո՛րթ։

ԲԱՏՐԱԿ

Ախ դու, աղվե՜ս...

Երկու կողմից հարվածում են համաձայնողականին։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(դիմում է հանդիսատեսներին)

Քաղաքացինե՛ր։
Դե, մի՞թե արդարություն կա։
Դու կոչ ես անում համաձայնության,
և երկու կողմից ստանում ես աքացիներ։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ
(անմաքուրներին, տխուր)

Ես ձեզ կհրավիրեի
աղ ու հացի,
միայն թե այժմ ի՜նչ հյուրասիրություն.
ոչինչ չի մնացել,



ոսկորից ու կաշուց բացի։
Ինքներդ էլ գիտեք, մարդիկ հիմա՝ հեչ.
տապակում ես, բան չի երևում ափսեի մեջ.
վերջերս աղբահորերից
քարշ տվին մի բանվոր՝ չորչոփ, տկար,
չեք հավատա՝ վրան մսի կտոր չկար։

ԲԱՏՐԱԿ
(զզվանքով)

Գրողի ծո՜ցը։
(վաղուց անհամբեր սպասող բանվորներին)
Գնա՛նք, ընկերներ։

Անմաքուրները շարժվում են, Բեհեղզեբուղը կպչում է վերջինի պոչից։

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

Դե, բարո՜վ գնաք։
Մեզ չմոռանաք։
Ես բանիմաց սատանա եմ,
բազմափորձ։
Կտեղավորվեք,
ինձ էլ կանչեք,
չեմ մնա անգործ։
Կլինեմ վարիչ
Գլխավորի։
Թե չէ, նստում ես սոված,
փորդ վեց-վեց է անում.
սատանան էլ, դե, հայտնի բան է,
սատանի ախորժակ է ունենում։

Անմաքուրները շարժվում են դեպի վեր։ Ամպերը, ջարդվելով, թափվում են ցած։ Խավար է։ Խավարից և ամայի բեմի պատառներից գծագրվում է հաջորդ պատկերը. Իսկ առայժմ դժոխքում թնդում է անմաքուրների երգը։

ԴԱՐԲԻՆ

Դժոխքի դռները ճեղքե՛նք։
Քավարանը՝ պատառ-պատառ։
Առա՛ջ։ Մի՛ քաշվեք։

ԽՈՒՄԲԸ

*Քավարանը՝ պատառ-պատառ։*
*Այդպես։*
*Մի՛ քաշվեք։*

ՀԱՆՔԱՓՈՐ

*Թոթափենք ծուլությունը մեր։*
*Հարկ առ հարկ։*
*Դեպի վեր։*
*Ամպերով միշտ վեր։*

ԽՈՒՄԲԸ

*Հարկ առ հարկ*
*Դեպի վեր։*
*Ամպերով միշտ վեր։*

ԳԱՄԱ

(չգիտես որտեղից նետվում է Բեհեղզեբուղի գիրկը)

*Բեհեղզեբո՛ւղիկ։*
*Սիրելի՛դ իմ։*
*Հոգյա՛կ։*
*Թույլ չտաք, որ ես կորչեմ մեն-մենակ։*
*Ներս առեք,*
*Ներս առեք ձերոնց մոտ ինձ։*
*Այդ անմաքուրներն այնպես չար են,*
*այնպես վայրենի։*

ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂ

*Դե ինչ։*
*Ապաստան կտամ։*
*Համեցեք, մադամ։*

(Ցույց է տալիս դուռը, որի ետևից վայրկենապես դուրս են թռչում եղաններով զինված երկու սատանա ու ներս են գլորում դամային: Բեհեղզեբուղը ձեռքերն է շփում)

*Ներս առանք այս մեկին։*
*Միշտ էլ հաճելի է ունել դասալիքին։*

Վարագույր



## ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Դրախտ: Ամպը ամպի գլխին: Սպիտակավուն է: Ճիշտ ամպերի մեջտեղում նստել են դրախտաբնակները: Մաքուսաղան ճառախոսում է:

ՄԱՔՈՒՍԱՂԱ

*Սրբազնագույննե՛ր։*
*Եկեք նշխարները շտկենք։*
*Մաքուր մաքրեցեք օրերը։*
*Գաբրիելը բարբառեց՝*
*գալիս են*
*մի դյուժին արդար-նորերը։*
*Մուկն ու կատու է խաղում*
*սովը նրանց հետ,*
*սպառնում է դժոխքն արնախում,*
*բայց նրանք գալիս են...*
*Ընդունենք*
*նրանց մեր շարքերը...*

ԴՐԱԽՏԱԲՆԱԿՆԵՐ

*Իսկույն երևում է՝ արժանավոր մարդիկ են։*
*Կընդունենք։*
*Անպայման կընդունենք։*

ՄԱՔՈՒՍԱՂԱ

*Պետք է սեղան գցել,*
*պատվել, հարգել։*
*Հանդիսավոր դիմավորում սարքել։*

ԴՐԱԽՏԱԲՆԱԿՆԵՐ

*Ավագագույնն եք դուք աստ,*
*եղեք արարողապետ։*

ՄԱՔՈՒՍԱՂԱ

*Ես անկարող եմ...*

ԲՈԼՈՐԸ

*Լա՛վ, լա՛վ։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ

(գլուխ է տալիս, գնում սեղանը կարգադրելու:
Շարում է սրբերին)

Ոսկեբերան, ա՛ստ։
Ողջույնի ճառը պատրաստիր,
դու պերճախոս ես։
Ջորօրինակ՝ ողջունում ենք մենք ձեզ, այլև տերն մեր
Քրիստոսը։
Ինքդ լավ գիտես, սովորեցնել պետք չէ։
Տոլստոյ, ահա աստ,
տեսքդ հույժ լավ է, դեկորատիվ.
տեղումդ էլ կմնաս։
Աստ՝ Ժան-Ժակը։
Այդպես էլ ծավալվեք անֆիլադով,
իսկ ես գնամ սեղանին աչք ածեմ։
Կթո՞ւմ ես ամպերը, ղավակս։

ՀՐԵՇՏԱԿ

Կթում եմ, հայր։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Կվերջացնես՝ դիր սեղանին։
Կտրատեցեք նույնիսկ
մի փոքրիկ ամպիկ —
սրտի սպեղանի —
ամեն մեկին մի-մի պատառ։
Սուրբ հայրերի ուտելիքը չէ կարևոր,
այլ հոգեփրկիչ զրույցը սեղանի շուրջբոլոր։

ՍՐԲԵՐ

Դե ինչ,
չե՞ն երևում։
Ամպի ծայրը մի տեսակ ուռած է աչքիս։
Գալի՞ս են։ Գալի՞ս են։ Գալի՞ս են, գալի՜ս։
Այդ նրա՞նք են։
Ծխնելույզ մաքրողնե՞ր։
Դրախտ են գալիս, տեսա՞ք։



Պետք է լողացնել։
Հը՛մ... Պարզվում է՝ սրբերն էլ են լինում տեսակ-տեսակ։

Ներքևից լսելի է.

Հրացաններ ճայթեցրեք։
Թոփեր անհամար։
Մենք և՛ Քրիստոս ենք, և՛ փրկիչ մեզ համար։

Ներս են թափվում, ծակելով հատակի ամպը:

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ
(խմբով)

Պահո՜, ա՛յ թե մորուքնե՜ր են։
Երեք հարյուր հատ կան։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Համեցեք, համեցեք
խաղաղ հանգրվան։

ՄԻ ՀՐԵՇՏԱԿԻ ՁԱՅՆ

Խելառ ժողովրդին ներս առան մեկեն։

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Բարև՛ ձեզ։ Բարև՛։
Բարի՜ եք եկել։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Հապա, Ոսկեբերան, ճառ ասել հարկ է։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

Գրողի ծո՛ցը Ոսկեբերանը։
Ի՛նչ ճառ,
երբ փորներս դափ-դատարկ է։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Համբերությո՜ւն, եղբայրք։
Մենք
հիմա, հիմա բոլորիդ կկշտացնենք։

Անմաքուրներին առաջնորդում է այնտեղ, ուր ամպե սեղանին դրված է ամպե կաթ ու ամպե հաց:

ՀՅՈՒՍՆ

*Ջարդվեցի քայլելուց։*
*Աթոռ-մաթոռ չունե՞ք։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ

*Ոչ,*
*նման բաներ*
*դրախտում ո՞ւր։*

ՀՅՈՒՍՆ

*Հրաշագործին խղճայիք՝*
*հրեն կանգնել է մեջքը ծուռ։*

ՀԱՆՔԱՓՈՐ

*Մի բարկանա։*
*Գլխավորն է՝ ուժ հավաքել։*
*Նստենք հացի։*

Հարձակվում են հացի սեղանի վրա, սկզբում զարմանում են, հետո զայրացած մի կողմ շպրտում այդ բուտաֆորիան:

ՄԱԹՈՒՍԱՂԱ

*Ճաշակեցի՞ք։*

ՀՅՈՒՍՆ
(սպառնալից)

*Ճաշակեցի, ճաշակեցի։*
*Իսկ չունե՞ք որևէ հիմնավոր բան։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ

*Անմարմին էակներիդ չիք գինու ավազան։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Սպասում ենք անիծվածներիդ,*
*մեռնում խաղաղ ու հաշտ։*
*Թե որ մարդիկ իմանան սպասում է իրենց էս...*
*Մենք ինքներս էլ*
*էս տեսակ դրախտ ունենք*
*ինչքան ուզես։*



ՄԱԹՈՒՍԱՂԱ
(մատնացույց անելով այն սրբին, որի վրա դարբինը բղավեց)

*Մի՛ բղավեք, անհարմա՞ր է։*
*Չին է հրեշտակային։*

ՁԿՆՈՐՍ

*Ավելի լավ է ձեր չինին հասկացնել դու տուր՝*
*մեզ համար եփի թարմ կաղամբապուր։*

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐԻ ՁԱՅՆԵՐ

*Դրախտն էսպես չէինք պատկերացնում վախտին։*

ՈՐՍՈՐԴ

*Որջ է,*
*ուրիշ ոչինչ։*

ՎԱՐՈՐԴ

*Դրախտի էլ հեչ նման չի։*

ԿՈՇԿԱԿԱՐ

*էսպես, աղավնյակներս,*
*դեմ առանք դրախտին։*

ԾԱՌԱ

*Համա՞ թե ծակուռ է։*

ԲԱՏՐԱԿ

*Ուրեմն, դուք էստեղ նստո՞ւմ եք հենց էսպես։*

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

*Ինչո՞ւ։*
*Պատահում է, իջնում ենք երկիր՝*
*արդար եղբորը մեր կամ քրոջը տես,*
*ու ետ գալիս, անդ զեղած մեր սպեղանին։*

ԾԱՌԱ

*Էդպես էլ փետուրներդ ամպերի՞ն եք տալիս։*
*Խելառնե՞ր։*
*Վերելակ դնեիք գոնե մի չորստեղանի։*

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԵՇՏԱԿ

Իսկ մենք ամպերին պարում,
Քրիստոսի ինիցիալներն ենք ասեղնակարում։

ԾԱՌԱ

Չէ մի արևածաղիկ էլ չրթեի՞ք։
Գավառացինե՛ր։

ԲԱՏՐԱԿ

Երկրի վրա լինեին էս անբանները,
կսովորեցնեի, թե ինչ ասել է բանել։
Երգում են հրեն.
«Կորչեն տիրանները, շղթաները կտրատեք»։
Ձեզ էլ կհասնեն,
չերևակայեք, որ երկնքում եք։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Իսկը ոնց Պիտերում.
ժողովուրդն իրար գլխի,
ուտելիք՝ չիք, ո՞ւր է։

ԱՆՄԱՔՈՒՐ

Տխուր է ձեզ մոտ, տղերք,
համա՞ թե տխուր է։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Ինչ արած, այս կարգը տերն է աստ հաստել։
Անշուշտ,
բարեկարգ չէ շատ բան դեռ այստեղ։

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
(նայում է մերթ Լև Տոլստոյին, մերթ Ժան-Ժակին, ապա դիմում է վերչլենին)

Ես ահա անվերջ նայում եմ
ձեզ
ու Լև Նիկոլաևիչին։
Ի՞նչ ծանոթ դեմքեր են, տեր իմ։
Դո՞ւք։
Ժան-Ժակ Ռուսսո՞ն եք դուք։



Ա՛հ։
Թույլ տվեք հաղորդակից դարձնել ձեզ իմ մտքերին։
Շունչս կտրվում է ուրախությունից։
Այդ դո՞ւք եք գրել ազատության, եղբայրության,
հավասարության մասին։
Այդ դո՞ւք եք գրել «Հասարակական պայմանագիրը»։
Թողություն շնորհեք ինձ։
Ախր ես ձեզ անգիր գիտեմ
այ այսքան հասակից։
Թույլ տվեք հարգանքներս մատուցել։
Ամենից շատ ես սիրում եմ լիբերալ գրքեր ընթերցել։
Ոչ մի տեղ էլ չեմ գնա ես՝
կմնամ այստեղ հենց այսպես։
Թող այստեղից գնան
անմաքուրներն անկուլտուրական։
Ես ձեզ երկար չեմ զբաղեցնի խոսակցությամբ։
Ձեր
«Հասարակական պայմանագրում»...

ԲԱՏՐԱԿ

Ո՞նց դուրս պրծնենք էստեղից։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Հարցրեք Գաբրիելին։

ԲԱՏՐԱԿ

Գաբրիելը ո՞րն է։
Բոլորդ էլ նման եք իրար։

ՄԱԹՈՒՍԱՂԱ
(ապարատորեն սղալելով մորուքը)

Այդպես մի ասեք,
կա տարբերություն էլ.
ահա, օրինակ, մորուքի երկարությունը։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

Ի՞նչ խոսելու վախտ է։
Ջարդե՛նք։
Մեր տեղը չի էս դրախտը։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Ս-ս, ս-ս,*
*ընկերներ, համաձայնեցե՛ք։*
*Թողեք տարաձայնություն-մարաձայնություն։*
*Դե, մի՞թե նույնը չէ,*
*թե որ դասակարգին ես պատկանում։*

(հրեշտակներին)

*Նայեք,*
*ի՜նչ տղերք են։*
*Ես*
*ձեր փոխարեն*
*ուրախ կլինեի շատ.*
*Հասարակության սերուցքը՝*
*պրոլետարիա՜տ։*

(անմաքուրներին)

*Դուք էլ լա՜վն եք, ա՛յ։*
*Ի՜նչ դասի է նա, հապա նայի՛ր։*

(ցույց տալով Մաքուսաղային)

*Սա ձեզ համար Վրանգելը չէ,*
*հրեշտակ է երկնային։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ

*Համաձայնել սրանց հե՞տ։*
*Տերն ազատի, հուսանք։*

ԴԱՐԲԻՆ

*Համաձայնել ցույց կտամ քեզ։*
*Որտեղից էլ բուսա՜վ։*

Խփում են։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(արտասվելով)

*Ջանում ես լավ լինի,*
*ստացվում է վատ։*
*Նորից ընկնում երկկողմանի։*



*Օ՜խ։*
*Մի անգամ էլ համաձայնության կոչեմ,*
*շունչս կփչեմ։*

ԲԱՏՐԱԿ

*Դեպ ավետյաց երկի՜ր։*
*Դրախտից դենը փնտրենք։*
*Քայլե՛ք։*
*Դրախտը քայլերով հերկենք։*

ԽՈՐ

*Կգտնենք։*
*Ողջ տիեզերքը ծերից ծեր կհերկենք։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ
(դիտելով, թե անմաքուրներն ինչպես են ավերում դրախտը, բղավում է աղեկտուր ձայնով)

*Հասե՛ք։*
*Բռնոտե՛ք։*
*Ե՛տ պահեք։*
*Էլ չեմ կարող...*
*Կայծակը ձեզ շանթի և տերն ամենակարող։*

Սարսափելի ամպրոպի հետ, կայծակների խուրձը ձեռքին, ամպերում հայտնվում է ինքը Սաբաովթը։

ՍԱԲԱՈՎԹ

*Ես ձեզ կայծակնահար կանեմ այս վայրկյանին։*

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ
(հանդիմանությամբ)

*Ոնց որ պստիկ երեխեք՝*
*վերցրին ու գանգատվեցին մայրիկին։*

Տեսնելով հասունացող անասելի սկանդալը, համաձայնողականը եղեղում է ծռված դեմքով։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Ո՜ւֆ։*
*Օ՜ֆ։*
*Ինքը Սաբաովթը։*

*Դողում եմ։*
*Ծնկներս ծալվում են*
*արդեն։*

(անմաքուրներին)

*Ուշքի՜ եկեք։*
*Համաձայնե՛ք։*
*Ո՞ւր այդպես։*
*Աստծու դե՞մ։*

ՍԱԲԱՈՎԹ
(բռունցք է ցույց տալիս համաձայնողականին)

*Թե որ չլինեի ամենաբարի,*
*քեզ համաձայնություն ցույց կտայի։*

ԴԱՐԲԻՆ

*Մենք,*
*բանվորներս,*
*աստծու հետ համաձայնե՞նք։*
*Համաձայնությունը*
*կողերից կհանենք։*

Դնքում են համաձայնողականին։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(լացակումած, բայց հարգալիր)

*Համոզմունքի համար չեմ երաշխավորում։*
*Այ թե բռունցքի թա՜փ է.*
*մի փոքր էլ համաձայնեմ,*
*վրայիցս կթափվի մենշևիկյան լաքը։*

ՄԻՔԵՆԱՎԱՐ
(ցույց տալով կայծակե նիզակներ թափահարող Սաբաովթին, որը չի ուզում գործի դնել դրանք, վախենալով վնասել յուրային մաթուսաղաներին)

*Աստծու ձեռից կայծակները ա՛ռ։*
*Թող իզուր տեղը չթնդան-որոտան։*
*Էլեկտրիֆիկացման համար*
*հետո պետք կգան։*



Առաջ նետվելով, խլում են կայծակները։

ՍԱԲԱՈՎԹ
(տխուր)

*Պլոկեցի՜ն։*
*Բուրդներս տվին քամո՜ւն։*

ՄԱԹՈՒՍԱՂԱ

*Հիմա ինչո՞վ պիտի մեղավորներին ձաղկենք։*
*Ստիպված պիտի խանութը փակենք։*

Անմաքուրները ջարդում են դրախտը, կայծակներով խոյանալով վեր։

ԴԱՐԲԻՆ

*Արշալույսը բացվում է,*
*առա՛ջ, տղերք,*
*հանուն դրախտի։*
*Այնտեղ էլ կթաթախվենք...*

Սակայն երբ, բեկորների միջով մագլցելով, հասնում են վերև, դերձակուհին ընդհատում է դարբնին։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Ի՞նչ ես քաղցածներիս արշալույսով խաբում։*

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ
(հոգնած)

*Մի գլուխ ջարդում, ջարդում ենք մենք*
*ամպերը։*
*Ավելի լավ չի՞ անցնենք նրանց կողքով։*
*Արդյոք ե՞րբ պիտի մայիսներով*
*հոգնած մարմիններս մաքրենք։*

ԷԼԻ ՁԱՅՆԵՐ

*Որտե՞ղ։*
*Չե՞նք ընկնի*
*մի նոր դժոխք հենց սրա պես։*
*Մեզ հիմարացրին։*
*Խաբեցին մեզ։*
*Հետո՞ ինչ։*
*Լավ օրվա ոչ մի հույս։*
(մտածելով)



34 Վ. Վ. Մայակովսկի

Բերեք ծխնելույզ մաքրողին։
Գնա՜, հետախույզ։

Դրախտի բեկորների խավարից հառնում է մի նոր պատկեր։ Առաջ ընթացող անմահուրներից բաժանվում է մտախոհ համաձայնողականը։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

Անցան դժոխքի միջով,
դրախտի միջով անգամ,
և գնում են էլի։
Ես ետ չդառնա՞մ։
Լավ ժողովուրդ են այդ հրեշտակները, ոչինչ։
Նրանք
կարծես թե համաձայն են փոքր-ինչ։

(ձեռքով է անում հեռացող անմահուրների ետևից)

Թող գնան, քանի որ ականջ չարին,
իսկ ես ետ կդառնամ
Տոլստոյի մոտ։
Կզբաղվեմ
չհակառակվելով
չարին։

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԱՐԲԻՆ

Է՜յ։
Ինչո՞ւ կանգնեցիր։
Առա՜ջ գնա։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Ո՞ւր գնաս,
երբ սարեր են կիտվել իրար վրա։
Այսպիսի ճամփով ո՞նց անցնես, ո՞ւր…



ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Ինչքա՜ն բեկորներ ջարդեցինք երեք տարում։

(դիտում է բեկորները)

Տեսեք, հրես տապանի մի կտոր։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

Հաբեշական նեգուսի մնացորդները։

ԿՈՇԿԱԿԱՐ

Դրախտի մի կտոր։

ԲԱՏՐԱԿ

Դժոխքի մի գանգ։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Ի՞նչ անել։
Ոչ թե գնալ՝
Նստելու տեղ էլ չկա։

ԴԱՐԲԻՆ

Ի՜նչ անել։ Ի՜նչ անել։
Հարկավոր է մաքրել։

ԲԱՏՐԱԿ

Նշանակում է՝ հարկ չկա միտք անել։ Հանգիստ
կազմակերպվենք, ընկերներ,
լծվենք աշխատանքի։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ
(ծանրումեծ)

Կազմակերպվել էլ կա, կազմակերպվել էլ։
Նախ հարկավոր է
ճիշտ ճանապարհ նշել։
Իմ կարծիքով, պետք է
վերցնել կազմակերպությունը,
մի լավ թափ տալ, ժշխել։

ՀԱՆՔԱՓՈՐ
(բարկությամբ)

*Սա էլ*
*օյին ծափեց՝*
*Թա՜փ տալ։*
*Չէ մի՝ հարվածե՜լ...*
*Հարկավոր են նշանակվածներ։*

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ
(գրգռված)

*Նշանակվածնե՜ր...*
*Այ քեզ բա՜ն։*
*Մեզ բուֆերներ են հարկավոր միայն։*

Անմաքուրները խմբվել ու նայում են իրար:

ԷՍԿԻՄՈՍ

*Իսկ իմ կարծիքով,*
*մարքսիստական*
*դոգմայի համաձայն չի դա։*
*Ես կանգնած եմ*
*միանգամայն ուրիշ պլատֆորմի վրա։*
*Ուզում եմ փրկել Ռուսիան աշխատավոր,*
*կտրատել աղքատության կապանքները բոլոր։*

ԲԱՏՐԱԿ
(հուսահատ)

*Սկսվե՜ց բանավեճը...*

ԴԱՐԲԻՆ
(բաժանելով կռվողներին)

*Ընկերնե՛ր,*
*ժամանակը սուղ է,*
*ժամանակը՝ թանկ։*
*Էստեղ հո ժողով չի պրոֆմիության։*

ՄԵՔԵՆԱՎԱՐ

*Բուֆերնե՞ր։*
*Հոնքի տեղ ճիշտ աչքին խփեց.*



*բուֆերից է խոսում լվացարարուհին,*
*իսկ շոգեքարշը անիվներ չունի,*
*ի՜նչ խոսես բուֆերի մասին։*

ԴԱՐԲԻՆ

*Խեղդվում ենք վեճերում,*
*իսկ ծանծաղուտ՝ չիք։*
*Խոսքակույտերի միջով*
*առա՛ջ,*
*գործի՛։*
*Ի՞նչ ենք անտեղի ջուր ծեծում մենք։*
*Վերցնենք բահերը։*
*Քլունգները վերցնենք։*

ԽՈՐ
(բեկորները գիրուցան անելով)

*Հապա,*
*Թա՛փ առ՝*
*էս մեկ,*
*և էլի՛, էլի՛։*
*Հաշիվն ինչի՞դ է պետք։*
*Թափ առ,*
*մարդ սիրելի։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ
(երևալով «Բեռլին» մակագրությամբ ամպի տակից)

*Օ՜-օ՜-օ՜...*
*Ընկերներ,*
*Թողեք, ի՛նչ աշխատանք։*
*Ինքներդ էլ գիտեք՝*
*ես զուր խորհուրդ չեմ տա,*
*ինձ ամեն ինչ երևում է արտասահմանյան իմ դրախտից։*
*Թողեք աշխատանքը, սիրելի մարդիկ,*
*դրախտից ոչինչ դուրս չի գա պարզապես։*
*Համաձայնեք ինձ հետ, ես...*

ԴԱՐԲԻՆ

*Մռութդ դուրս ես հանել,*
*այ տես,*

*մուրճը կիջնի ճակատիդ,*
*կանի երկու կես։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Հո՛պ,*
*ինչպես չէ, կոտե՛ս...*

(վայրկենապես փակում է ամպը)

ՀԱՆՔԱՓՈՐ

(կանգ է առել վեր բարձրացրած բլունգով)

*Ընկերներ,*
*ականջ դրեք։*
*Լսո՞ւմ եք՝ ինչ-որ տնքոց։*
*Մեկը*
*մնացել է*
*բեկորների տակ ողջ-ողջ։*
*Շուտ, օգնության հասեք։*
*Փորե՛ք։*

Նրա խոսքի վերջում փորում են տասնապատկված եռանդով, ամպերի միջից երևում են շոգեքարշը և շոգենավը։

ՇՈԳԵՔԱՐՇ

*Է՛յ։*
*Ականջ արեք շոգեքարշի տնքոցին։*
*Չհանգստանաք։*
*Չվառնեք շոգին։*
*Շուտով ինձ սև հաց հասցրեք*
*Դոնից,*
*որ չմեռնեմ սովից։*

ՄԵՔԵՆԱՎԱՐ

*Չէ,*
*մենք չենք թողնի, որ ձեռից գնաս։*
*Չէ, չէ,*
*բարեկամ, հանգիստ կաց, հանգիստ։*
*Կպոկենք ածուխը երկրի ընդերքից,*
*միայն թե դու սոված չմնաս։*



ՇՈԳԵՆԱՎ

*Օ՜-օ՜-օ՜...*
*Գետերի ակունքները թողեք խմեմ ես։*
*Անհամար ծակեր կան կողերիս։*
*Նավաշինարան տարեք ինձ անմիջապես։*
*Նավթ հասցրեք Բաքվի կողմերից։*
*Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ...*

ՀԱՆՔԱՓՈՐ

*Ճեղքեցեք երկրի ընդերքը խավար։*
*Է՜յ, ձեռք չծալել։*
*Եկեք, ընկերներ։*
*Ածուխի համար*
*ու նավթի համար։*
*Չի պահվի երակը նավթաբեր։*

ԽՈՐ

*Բարձրացրու քլունգը՝ թեթև չոփ։*
*Հարվածային հերթափոխի։*
*Ուժգին հարվածիր բրիչով։*
*Գայլիկոնը հողի մեջ մխիր։*

ՔԱՅՔԱՅՈՒՄ

*Ե՛տ կացեք։*
*Ի՞նչ եք մուրճերը թնդացնում։*
*Ո՞վ է համարձակվում ինձ հետ վիճել։*
*Ես կոչվում եմ քայքայում։*
*Այստեղ ես եմ տիրակալը՝*
*քայքայում-թագուհին ձեր.*
*ես խժռում եմ շոգեքարշ,*
*մեքենա եմ խժռում։*
*Փշեմ՝*
*օդ կթռչի ֆաբրիկան բմբուլի պես։*
*Փշեմ՝*
*գործարանն էլ չկա նմանապես։*
*Նայեմ միայն՝*
*շոգեքարշը կփչի հոգին։*
*Կրծեմ՝*

այլևս չկա երկաթուղին։
Եվ քաղաքը կծկվում է սովից
ու ցրտից,
գյուղը մեռնում է ցրտից
ու սովից։
Ե՜տ դարձեք։
Ատում եմ աշխատանքն արգասաբեր։
Ե՜տ դարձեք։
Ես ձեզ հետ չեմ անում հանաք։
Ինձ մոտ եկ, իմ զորք, մորթապաշտ-լորդեր։
Ինձ մոտ, սպեկուլյանտների հավատարիմ բանակ։

«Զորքը» շրջապատում է քայքայմանը։

ԽՈՐ

Ե՜տ կանգնեք։
Ի՞նչ եք մուրճերը ճոճում։
Ե՜տ կանգնեք։
Ո՞վ է
քայքայման հետ վիճում։

ՔԱՅՔԱՅՈՒՄ

Խոնարհվեցե՜ք։ Ե՜ս եմ ձեր թագուհին,
քաղցով պինդ կսեղմեմ կոկորդներդ հիմա։

ԴԱՐԲԻՆ

Հերիք է։
Կհասցրնենք թագուհու գլխին։
Զինվեցե՜ք։

ՀԱՆՔԱՓՈՐ
(հարձակվում է քայքայման վրա)

Պայքարեք ածուխի համար։
(պարկավորներին)
Եվ սրա՜նց էլ։
Ճամփորդում են, վագոնները շինած ձի։
Հերի՜ք է։
Բոլորին քշել գործի։



ԴԱՐԲԻՆ

Բռնեք մորթապաշտներին։
Կորչեն լորդերը։
Բոլորս աշխատանքի,
մինչ յոթ շապիկ փոխելը։

Անմաքուրները առաջ են շարժվում, և զորքը նահանջում է։

ՀԱՆՔԱՓՈՐ
(փորում է քայքայման տակ)

Մե՞նք քայքայման առաջ վիզներս ծռենք։
Ընկերնե՜ր,
հանքախորշի խրամատները փորեք։

ԲԱՏՐԱԿ

Դիրքերը դաշտի վրա ոնց որ ակոսներ։

ԲԱՏՐԱԿ ԵՎ ՀԱՆՔԱՓՈՐ

Ածուխն ու հացը
զենքերն են մեր։

ԴԱՐԲԻՆ
(հաղթում են։ Խոսքի վերջը գնում է ջախջախված քայքայման վրա)

Ուռա՜...
Ճղեցի՜ն։
Լինում են անձնատուր։
Մնում է
վերջին հարվածը։
Տո՜ւր...
Անձնատո՜ւր եղան։
Իջի՜ր,
հերիք է։
Ազատ է մուտքը
դեպի գալիքը։
(Ցույց է տալիս հանքահորի մուտքը)
Ահա։
Առա՜ջ գնա։

*Հանքախորշը հանքախորշին հետևեց։*
*Երգիր.*
*«Սա է մեր վերջին կռիվը*
*և պայքարը մեր մեծ»։*

Մտնում են ճանճախորշ։ Ձայները մարում են ճեղքում։

ՀԱՆՔԱՓՈՐ

(բերում է ածուխով բեռնված վագոնիկը)

*Առաջին Մերձմոսկովյանը։*

ՇՈԳԵՔԱՐՇ

*Շնորհակալություն։*
*Ուրախ եմ անսահման։*
*Բարձրացիր ամբարձիչին,*
*երբ կանգնենք նորոգման։*

ՄԵՔԵՆԱՎԱՐ

(գլորելով բերում է նավթի մի տակառ)

*Ահա, ընդունիր*
*Բաքվիցը պարգև։*

ՇՈԳԵՆԱՎ

*Պատրաստ է՝*
*կողիս էլ չկան ծակեր։*

ՀԱՆՔԱՓՈՐ

(ևս մի վագոնիկ)

*Ահա Դոնբասի պարգևը քեզ։*

ՇՈԳԵՔԱՐՇ

*Այ, հիմա շոգի կպատրաստեմ ես։*

ՄԵՔԵՆԱՎԱՐ

(ևս մի տակառ)

*Ահա բերեցինք էլի մի ցիստեռն...*

ՇՈԳԵՆԱՎ

*Շնորհակալություն։*
*Հիմա շարժիչները կաշխատեն։*



ՄԵՔԵՆԱՎԱՐ

(ևս մի տակառ)

*Ահա քեզ մի նոր նվեր Ուխտայից։*

ՀԱՆՔԱՓՈՐ

(ևս մի վագոնիկ)

*Էս էլ քեզ Ուրալ։*

ՇՈԳԵՆԱՎ ԵՎ ՇՈԳԵՔԱՐՇ

*Շունչ ենք առնում։*
*Ուռա՜։*

ՇՈԳԵՔԱՐՇ

*Անիվներս դառնում են թափով։*

ՇՈԳԵՆԱՎ

*Կենդանացա։*
*Հիմա կլողամ միջընթացով։*

Հանճաճորից դուրս են թռչում անմաքուրները, ճեղվում իրար վրա։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

*Իսկ ես քեզ մոտ։*

ՀԱՆՔԱՓՈՐ

*Իսկ ես քեզ մոտ։*

ԴԱՐԲԻՆ

*Իսկ ես ձեզ մոտ։*

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ

*Իսկ ես ձեզ մոտ։*

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

*Արտասովոր է։*

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Անհավատալի է։*

ԷՍԿԻՄՈՍ

*Ֆանտաստիկ լուր է։*

ՀԱՆՔԱՓՈՐ

Այնտեղ, վերջին աշտարակից դենը...

ՀԱՆՔԱՓՈՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐ

Ինչ-որ բան կա։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Ո՞ւր է...

ՀԱՆՔԱՓՈՐ

Ես փակում էի հանքախորշը վերջին...

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Ես այս
վերջին տակառն էի բերում...

ՀԱՆՔԱՓՈՐ

Մեկ էլ լսեմ՝
Հեռո՜ւ-հեռուներից...

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Մեկ էլ տեսնեմ՝
էնտեղ,
հեռո՜ւ-հեռվում...

ՀԱՆՔԱՓՈՐ

Սրտի ձեն է հասնում,
անիվների աղմուկ,
ֆաբրիկաների շնչառությունը բարկ...

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Արևն եմ տեսնում,
վաղ այգաբացը,
քաղաք է, հավանաբար։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

Մենք հաղթեցինք կարծես։
Կարծես թե մենք
իսկական դրախտի
դռան մոտ ենք։



ՇՈԳԵՔԱՐՇ

Շոգեքարշը պատրաստ է։

ՇՈԳԵՆԱՎ

Պատրաստ է շոգենավը։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Նստեցե՛ք։
Սրանցով
կթռչենք դեպի վաղը։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ
(բարձրանում է շոգեքարշի վրա, նրա ետևից՝ մյուսները)

Ուղիղ է ճամփան,
հարթ, հավասար։
Առաջինը եղիր,
մեքենավար։
Ալիքների՛ն։
Ռելսերի՛ն։
Նվաճված աշխատանքով,
մոտ է նա,
խնդուն գալիքը քո։
Տարածությունը խժռեք,
ճանապարհ է, ալիք։
Մեքենայով միայն
կհասնենք գալիք։
Քայլ քայլի ետևից։
Թափ առեք, թափ։

ԽՈՐ
(կրկնում է)

Առա՛ջ։
Մեքենաներ, շնչեցե՛ք սթափ։

Վարագույր

## ԱՐԱՐՎԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

Ավետյաց երկիր։ Հսկայական դարբաս։ Ինչ-որ անկյուններ, որոնցից աղոտ կերպով գծագրվում են երկրային վայրերի փողոցներն ու հրապարակները։ Դարբասի վերևում ինչ-որ ծիածաններ, անչափ խոշոր ծաղիկներ։ Դարբասի մոտ հեռախոսույզ, որը նուզված ձայն է տալիս վերև մագլցողներին։

ՀԱՆՔԱՓՈՐ

*Այստե՛ղ, ընկերներ։*
*Այստե՛ղ։*
*Իջեցրեք դեսանտ։*

Անմահները բարձրանում են ու մեծ զարմանքով դիտում դարբասը։

ՀԱՆՔԱՓՈՐ

*Հրա՛շք։*

ՀՅՈՒՍՆ

*Ի՞նչ հրաշք։*
*Դե սա*
*Իվանովո-Վոզնեսենսկ է հին։*

ՄԱԹԱ

*Արի սրանից ետ ակա՛նջ դիր փչոցներին։*

ԴԱՐԲԻՆ

*Վոզնեսենսկը չի,*
*հավատացեք ինձ։*
*Մարսելն է սա։*

ԿՈՇԿԱԿԱՐ

*Իսկ իմ կարծիքով՝ Շույան է։*

ՎԱՐՈՐԴ

*Ոչ մի Շույա։*
*Մանչեստր հասանք։*

ՄԵՔԵՆԱՎԱՐ

*Ուրիշ ի՛նչ հիմարություններ դուրս կտաք։*
*Ի՛նչ Մանչեստր։*



*Մոսկվան է սա։*
*Ահա Արբատը,*
*տեսեք՝ Տվերսկայան,*
*Սադովայան,*
*ահա և ՄԽԱՏ-ը։*

ԲԱՏՐԱԿ

*Մոսկվան է, Մանչեստրը, թե Շույան՝*
*էդ չի բանը։*
*Կարևորն էն է,*
*որ նորից երկրում ենք,*
*նորից տանը։*

ԲՈԼՈՐԸ

*Կլոր է անիծյալ երկիրը,*
*համա՛ թե կլոր է։*

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ

*Երկիրն է, միայն էն չի։*
*Կասեմ այ թե ինչ.*
*կեղտաջրի հոտը*
*գալիս է շատ քիչ։*

ՄԱԹԱ

*Միրանի անուշ հոտ եմ առնում օդից,*
*նայի՛ր։*

ԿՈՇԿԱԿԱՐ

*Միրանի՞։*
*Շույայո՞ւմ։*
*Եղանակն էլ ոնց որ աշնանային։*

Կլուխները բարձրացնում են վեր։ Ծիածանը խփում է աչքերին։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

*Հապա, լապտերավառ,*
*սանդուղք ունես.*
*բարձրացիր,*
*աչք ածիր էստեղերք։*

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

(բարձրանում է ու կանգ առնում fարացած, հազիվ կարողանալով շշնջալ)

Հիմարնե՞ր ենք։
Այ թե հիմարներ ենք, տղերք։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

Դե պատմիր։
Նայում է, ոնց սագը կայծակին։
Պատմիր։
Բվե՛ճ։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Չեմ կարող։
Լեզուս
չի շարժվում բերանիս մեջ։
Տվեք ինձ,
տվեք լեզու հարյուրվերստանոց,
որ արևի նման վառման լիներ ու բոց։
Լաթի պես կախ չընկներ,
քնարի պես զնգար,
ոսկերիչները օրորեին կամկար,
բառերը բերանիցս սախակներն հանեին...
Ի՞նչ եմ ասում։
Այնժամ էլ ես ինչ պիտ անեի։
Բազմահարկ տները երկինք են ճեղքում։
Տների վրայով
ձգվում են կամուրջները ճապուկ։
Տների տակ՝
ուտելիքնե՞ր։
Ապրանքի սարե՞ր։
Կամուրջներին՝
հեռացող գնացքների պոչեր։

ԽՈՐ

Պոչե՞ր։



ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Այո, պոչեր։
Լամպերը չռել են աչքերն էլեկտրական։
Դրանց մեջ
միլիոնուժ շարժիչները հսկա
շողեր են լցնում։
Երկիրը շողում է ու լույս է տալիս։

ԽՈՐ

Լո՞ւյս է տալիս։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Այո, լույս է տալիս։

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ

Ինքներս ենք աշխատել։
Ի՞նչ են ղարմանում։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Աշխատելն աշխատել ենք,
բայց չես հավատում,
որ այդ հրաշքը
աշխատանքն է ծնում։

ԲԱՏՐԱԿ

Հերիք է փչե՛ք։
Դասախո՞ս գտան։
Երբեք էդպիսի բան չի ծնել ակցիան։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Ի՞նչ եք ղովռում։
Սա
էլեկտրիֆիկացիա է։

ԽՈՐ

Էլեկտրիֆիկա՞ցիա։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Այո,

էլեկտրիֆիկացիա։
Խրոցները մտցված են սաժենանոց խցակներում։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Հրա՞շք։
Չի հավատա ոչ ոք իր օրում։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Գալիս է էլեկտրատրակտորը։
Էլեկտրացանը։
Էլեկտրակալսիչը։
Իսկ մի վայրկյան հետո՝
արդեն թխած
հացը։

ԽՈՐ

Թխա՞ծ։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Այո,
թխած։

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ

Իսկ փոխ ուռած-փքված տիրուհին,
իսկ մոպսանման տերը
թրևո՞ւմ են քաղաքում, այլանդակելով մայթերը։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Չէ,
մարդ չի երևում։
Բան չեմ տեսնում ես։
Այ, շաքարի մեծ մի գլուխ։
Էլի երկուսը։
Սարի պես։

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Շաքա՞ր։
Լսո՞ւմ ես։
Հիմի ի՞նչ անեմ։
Շտապելուց չհասցրի քարտերը վերցնեմ։



ԽԱՐ

Դե, գոնե մի քիչ մանրամասն պատմիր։

ԼԱՊՏԵՐԱԺԱՌ

Ման են գալիս
տեսակ-տեսակ
իրեր,
ուտելիքներ։
Ամեն մեկը ձեռք ունի
և ունի ոտքեր։
Ֆաբրիկաները ձգվում են
վերստ առ վերստ,
դրոշակներով զարդարված։
Ուր էլ աչքդ գցես՝
կանգնած են պարապ
գործասեղան,
դազգա՝
ծաղիկներում կորած։

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ
(անձանգիստ)

կանգնա՞ծ են։
Պարա՞պ։
Իսկ մենք վարժվում ենք իրար խոսք նետել։
Գուցե անձրև տեղա,
մեքենաները ժանգոտե՞ն...
Հասե՛ք։
Ջե՛ն տվեք։
Է՛յ։
Ո՞վ կա էդտեղ։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ
(իջնելով)

Գալի՛ս են։

ԲՈԼՈՐԸ

Ովքե՞ր։

ԼԱՊՏԵՐԱՎԱՌ

Իրերն են գալիս։



Ա

Դարպասը լայն բացվում է, և երևում է քաղաքը: Բայց ի՞նչ քաղաք: Թափանցիկ ֆաբրիկաների ու տների վիթխարի զանգվածները երկինք են խոյանում: Կանգնած են ծիածաններով զարդարված գնացքներ, տրամվայներ, ավտոմոբիլներ, իսկ մեջտեղում՝ լուսաստղային այգին է՝ պսակված արևի շողշողուն կամարով: Ցուցափեղկերից դուրս են հորդում լավագույն իրերը և, առաջնորդվելով մուրճ ու մանգաղով, աղ ու հացով գալիս են դեպի դարպասը: Իրար սեղմված անմաքուրները՝ համրացած շարքերով:

ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ

*Ա՜-ա՜-ա՜-խ-խ-խ...*

ԻՐԵՐ

*Հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛:*

ԲԱՏՐԱԿ

*Ո՞վ եք դուք:*
*Ո՞ւմն եք դուք:*

ԻՐԵՐ

*Ի՛նչ ասել է՝ ո՞ւմն եք դուք, ո՞ւմը:*

ԲԱՏՐԱԿ

*Ինչպե՞ս է ձեր տիրոջ անունը:*

ԻՐԵՐ

*Ո՛չ մի տեր:*
*Տերեր չիք:*
*Այդ ե՜րբ էր...*
*Մենք պատգամավորներ ենք:*
*Մուրճ ու մանգաղն են*
*ձեզ դիմավորում՝*
*հանրապետության գերբը:*

ԲԱՏՐԱԿ

*Իսկ ո՞ւմ համար է*
*էս աղ ու հացը:*
*Գլուխ շաքարը:*
*Նահանգապետի՞ն եք դիմավորում, ինչ է:*



ԻՐԵՐ

*Ոչ,*
*ձեզ,*
*բոլորը ձեզ համար է:*

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ

*Փչե՜ք, էլի փչե՜ք:*
*Պստիկ երեխեք չենք:*
*Երևի*
*ձեզ ծախում են դախլի տակից:*
*Երևի,*
*սպեկուլյանտներն են*
*կանգնել շարքի:*

ԻՐԵՐ

*Ո՛չ մի սպեկուլյանտ,*
*տեսեք:*

ԾԱՌԱ

*Հասկանո՜ւմ եմ:*
*Կդարսեն ձեզ կոոպերատիվի պահեստներում*
*ու մի տարի հետո կբաշխեն պուտ-պուտ:*

ԻՐԵՐ

*Մեզ ոչ մի տեղ էլ չեն դարսելու:*
*Վերցրեք թեկուզ ամեն մեկդ մի փութ:*

ՁԿՆՈՐՍ

*Երևի, քնի մեջ ենք:*
*Երազում ենք տեսնում:*

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Մի անգամ*
*Հապես*
*Նստած եմ: Վերնահարկ է:*
*Բեմում՝ պարահանդես:*
*Տրավիատա:*
*Ընթրիք...*
*Դուրս եկա՝*

ու էնպես ղառը թվաց
կյանքը.
կեղտ,
սապնաջուր,
թրիք...

ԻՐԵՐ

էլ ոչ մի տեղ ձեր ձեռքից սա փախուստ չի տա,
երկիրն է սա։

ԴԱՐԲԻՆ

Ի՞նչ ես քրթմոստում...
Սա ի՞նչ երկիր է։
Երկիրը կեղտ է,
երկիրը՝ գիշեր։
Աշխատում ես, ու դեռ բերանդ չբացած՝
ճարպոտը վերցնում է, ինչ ունես վաստակած։

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻ
(ճացին)

Կանչում է,
փսկ ինքը,
երևի,
ուզում է խածի։
Ամեն փութը,
երևի,
100 000 է հացի։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

Նույնպե՛ս...
Մոտ-մոտ է անում...
Սուսիկ-փուսիկ,
Մկան պես,
ասես քիչ են այլանդակել մեքենաները մեզ։
Բանվորի վրա ատամներ սրեք...

ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ներեք, բանվորներ,
բանվորներ, ներեք։



Դուք մեզ հավաքել եք,
մշակել,
ձուլել։
Իսկ մեզ վերցրել են
ու ստրկացրել։
Պտտվիր, թափանիվ, պտտվիր անխոնջ,
պտտվիր դու, հսկա,
պտտվիր դու, հզոր,
մեզ հրամայում էին ծառայել հլու,
բանել նրանց համար ու գիշեր, ու զոր։
Ձեզ դարեդար
կտրատել են փոկերով,
կտրատել անդադար
թափանիվներով։
Ճչացեք, շարժիչներ,
ուրախությունն է ծով,
ճարպոտներին քշեցին,
ազատ ենք մենք, ազատ։
Շչա գործարանում, անիվներդ շարժելով,
սուրա արագընթաց ուժերով պողպատ։
Աշխարհը պտտվում է,
այսուհետև մենք
ձեզ ենք լույս տալու,
բանվոր մարդիկ։

ԻՐԵՐ

Իսկ մենք, իսկ մենք ահա իրեր ենք օգնական։
Մենք՝ մուրճ ու ասեղներ, սղոց ու աքցան։
Օրը դեռ չբացված, դունատ-դեղնավուն,
դու, կռացած մեր տակ, գործի էիր գնում։
Տերերի հաշիվը մաքրեցինք հիմա,
այսուհետ կդատենք-կբանենք քեզ համար։
Քեզ,
որի մեջքը ծռվում էր մեր տակ,
հիմա առ մեզ անքեն ու պայքարի տար։
Նոր դրախտի արձակ, լուսե դարբնոցում
բարձրացրու մուրճը, թեթև խաղացրու։

ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

*Իսկ մենք ուտելիք ենք, խմելիք, ապրանք.*
*բանվորը մեզանից ուժել է շարունակ։*
*Առանց հացի չկա մարդկային իշխանություն,*
*առանց շաքար չկա մարդկային քաղցրություն։*
*Հաղիվ ձեռք բերված մարդու աշխատանքով,*
*այդ մենք ենք ձեզ կերել անխիղճ ուբլիներով։*
*Բերաններս բացած թանկությամբ,*
*եղկելի*
*շների պես հաչել ենք ցուցափեղկերից։*
*Եվ ահա ձրիակերներին բղավեցինք՝ ցա՛ծ,*
*այսուհետ ազատ են ընդեղեն ու հաց։*
*Ում սոված աչքով էիք նայում երեկ,*
*այսօր վերցրեք հանգիստ, կտրեք ու կերեք։*

ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԻՐԵՐ ԵՎ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ
(խմբով)

*Վերցրեք,*
*վերցրեք ձերը։*
*Առե՛ք։*
*Գնացե՛ք։*
*Բոլորն, ինչով բանում եք,*
*բոլորը, ինչ ուտում եք։*
*Առեք, առեք անփող։*
*Գնա՛, հաղթանակող։*

ԴԱՐԲԻՆ

*Երևի, պիտի մանդատ ներկայացնել,*
*իսկ մենք մանդատ չունենք.*
*ուղիղ դրախտից ենք գալիս,*
*դժոխքից քանդած։*

ԻՐԵՐ

*Պետք չէ,*
*պետք չէ ոչ մի մանդատ։*



ԲԱՏՐԱԿ

*Հո տերներիս տակ*
*ձու չի դրած։*
*Տղերք, եկեք փորձենք,*
*գնանք առաջ։*

Անմահուրներն առաջանում են:

ԲԱՏՐԱԿ
(շոշափում է երկիրը)

*Երկի՞րը…*
*Նա՛ է։*
*Հարազատ երկի՞րը մեր։*

ԲՈԼՈՐԸ

*Մարդ ուզում է երգել։*
*Ճչալ։*
*Աղոթել։*

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ
(նյութին)

*Շաքա՞րը*
*լիղեցի՞ ես…*

ՀՅՈՒՍՆ

*Դե՞։*

ԲՈՒԼԿԵԳՈՐԾ

*Քա՞ղցր է,*
*քաղցր է պարզապես։*

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ

*Հիմի ուրախությանն էլ վերջ չի լինի։*

ԲԱՏՐԱԿ
(հարբելով)

*Ընկեր իրեր,*
*գիտե՞ք ինչ։*
*Հերիք բախտը փորձեք։*
*Այսպես։*

*Եկեք մենք ձեզ պատրաստենք,*
*իսկ դուք կերակրեք մեզ։*
*Իսկ թե տերը հայտնվի՝ կաշին կքերթենք։*
*Ապրե՜նք։*

ԲՈԼՈՐԸ

*Ապրե՛նք։*
*Ապրե՛նք։*

ՎԱՃԱՌԱԿԱՆ
(ամբոխը ճեղքելով, դուրս է թռչում վրդովված)

*Ինչպե՞ս չէ...*
*Ախորժակիդ քացա՜խ։*
*Ների՛ր...*
*Մի բան էլ պիտի թողնել կոմիսարներին։*

ԴԱՐԲԻՆ

*Կորի՛ր։*
*Վերջացավ քո գործը հարմար.*
*կաթի փող հանեցիր երեխեքի համար։*
*Ուզում էինք բեղնից քաշել որոշ բաներ՝*
*քաշեցինք,*
*իսկ հիմի՝ նամուսն էլ լավ բան է։*

Վաճառականին դուրս են նետում։ Անմաքուրները ազատությամբ նայում են իրերին։

ԲԱՏՐԱԿ

*Ես սղոցը կվերցնեի։ Մնացել է պարապ։*

ՍՂՈՑ

*Վերցրու։*

ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

*Իսկ ես՝ ասեղը բարակ։*

ԴԱՐԲԻՆ

*Ձեռս քոր է գալիս՝ մուրճը դեպի տայիք։*

ՄՈՒՐՃ

*Վերցրու։ Փայփայիր։*

Անմաքուրները, իրերը և մեքենաները շրջապատում են արևային այգին։

ՄԵՔԵՆԱՎԱՐ
(մեքենաներին)

*Ես ձեզ գործի կդնեի։*
*Չե՞ք հարձակվի վրաս։*

ՄԵՔԵՆԱՆԵՐ

*Ի՞նչ ես ասում...*
*Լծակը իջեցրու վրաս։*

Մեքենավարն իջեցնում է լծակը։ Վառվում են գնդերը։ Անիվները պտտվում են։ Անմաքուրները նայում են հիացական զարմանքով։

ՄԵՔԵՆԱՎԱՐ

*Երբեք այսպիսի լույս տեսած չկամ։*
*Սա երկիր չի,*
*չի տեսել ոչ ոք.*
*սա վառվող դիսաստղ է՝ փնտրվողների արշավով։*
*Ի՞նչ էինք բառաչում լծած եզների պես։*
*Սպասում էինք,*
*սպասում,*
*աչքներս տարիներին,*
*ու երբեք չենք նկատել, որ ահա այսպես*
*երանությունն է դրված մեր կողքին։*
*Ի՞նչ են թանգարաններ այցելում մարդիկ։*
*Կենդանի գանձերը կիտված են մեր շուրջ։*
*Սա ի՛նչ է՝ կապույտ կտո՞ր, թե՞ մաքուր երկինք։*
*Թե որ սա մեր ձեռքի աշխատանքն է լուրջ,*
*էլ ո՞ր դուռը, ասե՛ք, չի բացվի մեր առջև։*
*Ճարտարապետներն ենք մենք բոլոր աշխարհների,*
*մոլորակների դեկորատորները,*
*հրաշագործներ ենք մենք.*
*շողերը կկապենք ավելների նման,*
*որ երկնքի երեսից սրբենք մութ ամպերը։*
*Մենք աշխարհի գետերը մեղրով կողողենք,*
*աստղերով կսալարկենք երկրային փողոցները։*
*Փորի՛ր։*

*խփի՛ր։*
*Տակիր վրա-վրա։*
*Ամեն ինչը կեցցե՛։*
*Ամեն ինչին՝ ուռա՜։*
*Սրանք լոկ բուտաֆորական զենքեր են այսօր,*
*էգուց*
*կյանք կդառնա փոշին թատերականի։*
*Մենք այդ գիտենք։*
*Հավատում ենք դրան։*
*Այստե՛ղ, հանդիսատես,*
*պոետ,*
*ռեժիսոր։*

Բոլոր հանդիսատեսները բարձրանում են բեմ:

ԲՈԼՈՐԸ ԽՄԲՈՎ

*Աշխարհի տաճարի արևապաշտներ,*
*ցույց տանք, թե ինչպես երգել գիտենք մենք։*
*Կանգնեք խումբ առ խումբ,*
*գալիքներին սաղմոս պիտի երգենք։*

Չգիտես որտեղից հայտնված համաձայնողականը զարմանքով նայում է կոմունային. գլխի ընկնելով, թե բանն ինչ է, քաղաքավարությամբ հանում է գլխարկը:

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ

*Ո՛չ,*
*դրախտը ջանասեր մարդու տեղը չէ,*
*չեմ սիրում ես այդ մռութները պասուց։*
*Սոցիալիզմը անխուսափելի է,*
*ես այդ ասել եմ վաղուց,*

(անմաքուրներին)

*Ընկերներ, անտեղի բերաններդ մի բացեք,*
*երգն էլ պետք է անպայման համաձայնեցնել։*

(քաշվում է մի կողմ ու ձեռքով կամացուկ չափ տալիս։ Դարբինը քաղաքավարությամբ հեռացնում է նրան)



ԱՆՄԱՔՈՒՐՆԵՐ
(Երգում են)

*Փշրեցինք հնության զնդանը*
*բոլորիս համերաշխ ջանքով։*
*Ճորտերի անեծքով աշխարհը*
*վերջապես ազատվեց այսօր։*
*Վերացավ բռնության լուծը,*
*փշրել ենք, պայթեցրել, իսկ հիմա*
*փռվիր աշխարհի շուրջը,*
*բացվիր բոլորին, կոմունա։*

*Հաղթական այս հիմնը*
*երգիր, ողջ տիեզերք։*
*Ինտերնացիոնալը*
*աշխարհը փրկեց։*

*Չօգնեցին մեզ աստված կամ չարքը,*
*փրկություն չանսացինք վերից։*
*Մենք՝ անկոր բանվոր դասակարգը,*
*զենքով իրավունք ձեռինք։*
*Կոմունան է փրկել աշխարհը։*
*Հնչիր դու, հաղթական մեր ճիչ։*
*Կարո՞ղ ես հանել աշխարհը*
*մեր ամուր ձեռքերի միջից։*

*Հաղթական այս հիմնը*
*երգիր, ողջ տիեզերք։*
*Ինտերնացիոնալը*
*աշխարհը փրկեց։*

*Կցնդեն անցյալի հուշերը,*
*չեն դառնա բուրժույներն էլ ետ։*
*Երկիրը այսուհետ մերն է,*
*մերն է երկիրը առհավետ։*
*Կանչում է բոլորիդ շեփորը՝*
*եկեք գավառից, դաշտերից,*

*Մերն է նորածագ այս օրը,*
*ով ոչինչ էր՝ դարձավ ամեն ինչ։*

*Հաղթական այս հիմնը*
*երգիր, ողջ տիեզերք։*
*Ինտերնացիոնալը*
*աշխարհը փրկեց։*

**Վ ա ր ա գ ո ւ յ ր**

***1920—1921***

# ՓԱՅՏՈՋԻԼԸ

## Ֆեերիական կոմեդիա ինը պատկեր

### ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ

Պրիսիպկին — *Պյեռ Սկրիպկին — նախկին բանվոր, նախկին կուսակցական, այժմ՝ փեսացու*
Զոյա Բերյոզկինա — *բանվորուհի*
Էլզևիրա Դավիդովնա — *հարսնացու, մատնահարդարուհի, վարսավիրանոցի գանձապահուհի*
Ռոզալյա Պավլովնա — *մայր-վարսավիրուհի*
Դավիդ Օսիպովիչ — *հայր-վարսավիր*
Օլեգ Բայան — *բնածին տաղանդ, տնատերերից*
Միլիցիոներ
Պրոֆեսոր
Կենդանաբանական այգու դիրեկտոր
Հրշեջապետ
Հրշեջներ
Խաչեղբայր
Ռեպորտյոր
Բանվորներ
Քաղսովետի նախագահ
Հռետոր
Բուժականներ
Տնակառավարությունների կարգադրիչ
Քաղսովետի նախագահություն, ռուսորդներ
Երեխաներ, ծերունիներ

# I

Անտառում՝ ունիվերմագի պտտվող խոշոր դուռ. կողքերին՝ ապակեպատ, ապրանքներով լեցուն ցուցափեղկեր: Ներս են մտնում դատարկ, դուրս գալիս փաթեթներով: Թատրոնով մեկ շրջում են մասնավոր-մանրավաճառներ:

ԿՈՃԱԿ ՎԱՃԱՌՈՂ

*Մի կոճակի համար չարժե պսակվել, մի կոճակի համար չարժե բաժանվել: Սեղմիր բութ մատով ու ցուցամատով, շալվարդ ցած չի ընկնի, չես մնա ամոթով:*

*Հոլանդական,*
*մեխանիկական,*
*ինքնակար կոճակներ,*
*6 հատը 20 կոպեկ...*
*Համեցեք, մըսյո:*

ՏԻԿՆԻԿ ՎԱՃԱՌՈՂ

*Պարող մարդիկ*
*բալետի ստուդիայից:*
*Լավագույն խաղալիք*
*տանը, թե պարտեզում,*
*իրեն՝ հենց ժողկոմի*
*ցուցումով է պարում:*

ԽՆՁՈՐ ՎԱՃԱՌՈՂ ԿԻՆ

*Անանա՞ս:*
*Չունեմ...*
*Բանա՞ն:*
*Չունեմ...*
*Անտոնովյան խնձորներ՝ 4-ը 15 կոպեկ:*
*Հրամայեցեք, քաղաքացուհի:*

ՀԵՍԱՆ ՎԱՃԱՌՈՂ

*Գերմանական*
*հեսան,*
*չի ջարդվում երբեք,*
*ածելու*
*կտորը՝*
*30 կոպեկ!*



*Սրում է*
*ամեն ուղղությամբ,*
*հարմար,*
*ածելի*
*և լեզուներ՝*
*բանավեճի համար:*
*Համեցեք, քաղաքացիներ:*

ԼՈՒՍԱՄՓՈՓ ՎԱՃԱՌՈՂ

*Լուսամփոփներ*
*ամեն գույնի ու երանգի,*
*կարմիրը*
*հեշտանքի համար,*
*կապույտը՝ զգանքի:*
*Ձեռք բերեք, ընկերներ:*

ՕԴԱՊԱՐԻԿ ՎԱՃԱՌՈՂ

*Օդապարիկ երշիկաձև:*
*Թռիր անվախ, թեթև:*
*Թե այսպիսի*
*օդապարիկ*
*Նոբիլեն* ունենար,*
*բևեռում*
*ավելի երկար կմնար:*
*Վերցրեք, քաղաքացիներ...*

ՏԱՌԵԽ ՎԱՃԱՌՈՂ

*Ահա և լավագույն*
*տառեխներ հանրապետական,*
*օղու հետ*
*միակ հարմար ուտելու բան:*

ԱՐԴՈՒԶԱՐԴ ՎԱՃԱՌՈՂ ԿԻՆ

*Կրծկալներ մորթապատ:*
*Կրծկալներ մորթապատ:*

ՍՈՍԻՆՁ ՎԱՃԱՌՈՂ

*Մեզ մոտ*
*և արտասահմանում,*

այլև ամենուր
ջարդած ամանեղենը
դեն են նետում
իզուր։
Ճռչակավոր
էկցելզիոր սաքսնձը ծանոթ
ճպցնում է
և՛ Վեներա,
և՛ գիշերանոթ։
Ձգո՞ւմ եք, տիրուհի։

ՕԾԱՆԵԼԻՔ ՎԱՃԱՌՈՂ ԿԻՆ

Օծանելիք Կոտի*՝
[illegible]
Օծանելիք Կոտի՝
[illegible]

ԴՐԱՎԱՃԱՌ

Ի՞նչ է անում կինը, երբ ամուսինը տանը չէ։ 105 ուրախ անեկդոտ, հեղինակություն նախկին կոմս Լև Նիկոլաևիչ Տոլստոյի, մեկ ռուբլի քսան կոպեկի փոխարեն՝ տասնհինգ կոպեկով։

ԱՐԴՈՒԶԱՐԴ ՎԱՃԱՌՈՂ ԿԻՆ

Կրծկալներ մորթապատ։
Կրծկալներ մորթապատ։

Ներս են մտնում Պրիսիպկինը, Ռոզալյա Պավլովնան, Բայանը։

ԱՐԴՈՒԶԱՐԴ ՎԱՃԱՌՈՂ ԿԻՆ

Կրծկալներ...

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(զմայլանքով)

Ի՞նչ արիստոկրատիկ գլխանոցներ են...

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ի՞նչ գլխանոցներ, չէ՞ որ դրանք...



ՊՐԻՍԻՊԿԻՆ

Ինչպե՞ս, ես աչք չունե՞մ, ինչ է։ Իսկ թե որ մենք չուխտակ ունեցա՞նք։ Այս մեկը Դորոտիի*, իսկ այս՝ Լիլիանի* համար... Ես արդեն որոշել եմ նրանց արիստոկրատիկ-կինեմատոգրաֆիական անուններ տալ... Այ, այդպես էլ միասին կզբոսնեն։ Հապա՞։ Իմ տունը լի ու բոլ պետք է լինի։ Վերցրեք, Ռոզալյա Պավլովնա։

ԲԱՅԱՆ

(Փռփչալով)

Վերցրեք, վերցրեք, Ռոզալյա Պավլովնա։ Մի՞թե նրանց գլխում գռեհկություն կա։ Նրանք ջահել դասակարգ են, նրանք ամեն ինչ յուրովի են հասկանում։ Նրանք ձեր տուն են բերում իրենց վաղնջական, անբիծ պրոլետարական ծագումը և պրոֆմիութենական տոմսը, իսկ դուք ռուբլիներն եք ափսոսում։ Նրանց տունը լի ու բոլ պետք է լինի։

Ռոզալյա Պավլովնան հառաչելով գնում է։

ԲԱՅԱՆ

Ես կտանեմ... սրանք թեթև են... մի անհանգստանաք։ Նույն փողով...

ԽԱՂԱԼԻՔ ՎԱՃԱՌՈՂ

Պարող մարդիկ՝ բալետի ստուդիայից...

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Իմ ապագա տոհմական զավակները պետք է դաստիարակվեն նրբագեղության ոգով։ Հապա՞։ Վերցրեք, Ռոզալյա Պավլովնա։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ընկեր Պրիսիպկին...

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Ինձ ընկեր մի անվանեք, քաղաքացուհի. դուք դեռ պրոլետարիատի հետ ազգակցություն չեք հաստատել։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ապագա ընկեր, քաղաքացի Պրիսիպկին, տխր այս փողերով տասնհինգ մարդ կարող են մորուքները խուզել, չհաշ-

վաժ մանրուքը՝ բեղերը և ուրիշ բաներ։ Ավելի լավ է հարսանիքի համար ես մի դյուժին գարեջուր վերցնել, հը՞։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(խիստ)

Ռոզալյա Պա՛վլովնա։ Իմ տունը...

ԲԱՅԱՆ

Նրա տունը լի ու բոլ պետք է լինի։ Ե՛վ պարերը, և՛ գարեջուրը նրա մոտ պետք է շատրվանեն, ինչպես առատության եղջյուրից։

Ռոզալյա Պավլովնան առնում է։

ԲԱՅԱՆ

(արագ վերցնելով փաթեթները)

Մի անհանգստանաք, նույն փողի դիմաց։

ԿՈՃԱԿ ՎԱՃԱՌՈՂ

Մի կոճակի համար չարժե պսակվել։
Մի կոճակի համար չարժե բաժանվել։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Մեր կարմիր ընտանիքում ո՛չ մի քաղքենիական կենցաղ և շալվարային անախորժություններ։ Հապա՞։ Վերցրեք, Ռոզալյա Պավլովնա։

ԲԱՅԱՆ

Քանի դեռ դուք պրոֆմիութենական գրքույկ չունեք, մի գրգռեք նրան, Ռոզալյա Պավլովնա։ Նա հաղթող դասակարգ է, ամեն ինչ լավայի պես կսրբի իր ճամփին, և ընկեր Սկրիպկինի շալվարն էլ պետք է լի ու բոլ լինի։

Ռոզալյա Պավլովնան գնում է ճառաչելով։

ԲԱՅԱՆ

Թույլ տվեք, ես կտանեմ նույն գումարի...

ՏԱՌԵԽ ՎԱՃԱՌՈՂ

Լավագույն տառեխներ հանրապետական։
Օղու հետ միակ հարմար ուտելու բան։



ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ի՞նչ եմ ասել՝ տառե՞խ։ Այ քեզ հարսանիքի ուտելի՜ք։ Ես սա իսկույն կվերցնեմ։ Մի կողմ քաշվեք, մըսյո տղամարդիկ։ Ի՞նչ արժե այդ կիլկը։

ՏԱՌԵԽ ՎԱՃԱՌՈՂ

Այս սաղմոնը արժե կիլոն 2,60։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

2,60 այս պառավ տառեխիկի համա՞ր։

ՎԱՃԱՌՈՂ

Ի՞նչ եք ասում, մադամ, ընդամենը 2,60 այս թառափի թեկնածուի համար։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

2,60 այս թթու դրած կորսետի ոսկորների՞ն։ Լսեցի՞ք, ընկեր Սկրիպկին։ Ուրեմն, դուք իրավացի էիք, երբ սպանեցիք թագավորին և պարոն Ռյաբուշինսկուն* վռնդեցիք։ Ախ, այս բանդիտնե՜րը։ Ես իմ քաղաքացիական իրավունքները և իմ տառեխները ձեռք կբերեմ պետական սովետական հասարակական կոոպերացիայում։

ԲԱՅԱՆ

Սպասենք այստեղ, ընկեր Սկրիպկին։ Դուք ինչո՞ւ պիտի ձուլվեք այս մանրբուրժուական տարրերին և տառեխ գնեք այսպիսի դիսկուսիոն կարգով։ Ձեր 15 ռուբլով և մեկ շիշ օղիով ես հիանալի հարսանիք կկազմակերպեմ ձեզ համար։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Ընկեր Բայան, ես դեմ եմ այդ քաղքենիական կենցաղին՝ դեղձանիկ-մեղձանիկներ։ Ես մեծամեծ պահանջների մարդ եմ... Ես հետաքրքրվում եմ հայելապատ պահարանով...

Զոյա Բերյոզկինան քիչ է մնում ընդհարվի խոսողների հետ, զարմանքով ետ է քաշվում և սկսում է ականջ դնել։

ԲԱՅԱՆ

Երբ ձեր հարսանեկան կորտեժը...

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Ի՞նչ եք դուրս տալիս։ Ի՞նչ կարտոժ։

ԲԱՅԱՆ

*Ես ասում եմ՝ կորտեժ։ Ընկեր Սկրիպկին, այդպես է կոչվում այլազգի գեղեցիկ լեզուներում ամեն մի և հատկապես հարսանեկան հանդիսավոր երթը։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Հա՜։ Պա՛հ-պա՛հ-պա՛հ։*

ԲԱՅԱՆ

*Այդպես, ուրեմն, երբ կորտեժը մտնենա, ես ձեզ համար կերգեմ Հիմենեի էպիտալաման*։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ի՞նչ ես դուրս տալիս։ Այդ ի՞նչ Հիմալայներ են։*

ԲԱՅԱՆ

*Ոչ թե Հիմալայներ, այլ Հիմենեյ աստծու էպիտալաման։ Այդպիսի անունով սիրո մի աստված ուներին հույները։ Ոչ թե այս դեզին, գազազած համաձայնողական վենիզելոսները*, այլ հին, հանրապետական հույները։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ընկեր Բայան, ես պահանջում եմ, որ իմ փողերով կարմիր հարսանիք կատարվի, և ո՛չ մի աստված։ Հասկացա՞ր։*

ԲԱՅԱՆ

*Ի՜նչ եք ասում, ընկեր Սկրիպկին, ոչ միայն հասկացա, այլև, համաձայն Պլեխանովի, մարքսիստներին թույլատրված երևակայության ուժով կարծես պրիզմայի միջով ես տեսնում եմ ձեր դասակարգային, վսեմ, նրբագեղ և զմայլեցուցիչ ցնծությունը... Հարսնացուն դուրս է գալիս կառքից՝ կարմիր հարսնացու... ամբողջովին կարմիր, ինչ որ բաղնիքից նոր դուրս եկած. նրան դուրս է բերում կարմիր հարսանեհայրը, հաշվապահ Երիկալովը,— նա հենց իսկը շաղ, կարմիր, կաթվածային տղամարդ է որ կա,— ձեզ ներս են բերում կարմիր խաչեղբայրները, ամբողջ սեղանը ծածկված է կարմիր խոզապուխտով, շշերն էլ կարմիր գլխիկներ ունեն։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(հավանությամբ)

*Այդպե՜ս։ Այդպե՜ս։*



ԲԱՅԱՆ

*Կարմիր հյուրերը բղավում են. «Դա՞ռն է, դա՞ռն է», և այստեղ կարմիր (արդեն կինը) ձեզ է պարզում իր կարմի՜ր-կարմիր շրթունքները...*

ԶՈՅԱ

**(շփոթված բռնում է երկուսի թևերից։ Նրանք հեռացնում են աղջկա ձեռքերը, պլնքրակով թոցնելով թևերի փոշին)**

*Վանյա, այդ ի՞նչ է ասում սա։ Ի՞նչ է դուրս տալիս այս փողկապավոր մեկյմունը։ Ի՞նչ հարսանիք։ Ո՞ւմ հարսանիքը։*

ԲԱՅԱՆ

*Կարմիր աշխատանքային պսակադրությունը Էլզևիրա Դավիդովնա Ռենեսանսի և...*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Սիրում եմ, Զոյա, ես մեկ ուրիշին։*
*Վայելչակազմ է նա, նրբիրան,*
*և ընտիր ժակետը սեղմում է շիկ*
*ուսերը և պիրկ կուրծքը նրա։*

ԶՈՅԱ

*Վա՛նյա։ Հապա ե՞ս։ Այդ ի՞նչ է նշանակում։ Քեֆ քաշեցիր ու լքեցի՞ր։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(պարզում է վանող ձեռքը)

*Մենք բաժանվեցինք, ինչպես նավերը ծովում...*

ՌՈԶԱԼԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(դուրս է ընկնում խանութից, տառեխները գլխավերևում պահած)

*Կետե՛ր։ Դելֆինե՛ր։* (Տառեխ վաճառողին)։ *Հապա մի ցույց տուր, հապա, մի համեմատիր քո խխունջը։* (Համեմատում է, վաճառողի տառեխը մեծ է, ձեռքերն իրար է զարկում)։ *Մի ամբողջ պոչ ավե՞լ։ Հանուն ինչի կռվեցինք, հը՞, քաղաքացի Սկրիպկին։ Հանուն ինչի սպանեցինք թագավոր իմպերատորին և դուրս վռնդեցինք պարոն Ռյաբուշինսկուն,*

հր՞։ Ինձ գերեզման կգնի ձեր այդ սովետական իշխանությունը... Մի պոչ, ամբո՞ղջ մի պոչ ավելի...

ԲԱՅԱՆ

Հարգելի Ռոզալյա Պավլովնա, համեմատեցեք մյուս ծայրից, և կտեսնեք, որ միայն մի գլխով է մեծ։ Իսկ գլուխը ձեր ինչի՞ն է հարկավոր, չէ՞ որ գլուխը չի ուտվում, կտրիր ու գեն նետիր։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Լսեցի՞ք, թե ինչ է ասում։ Գլուխը կտրել։ Այդ ձեր գլուխը կտրեն, քաղաքացի Բայան, բան չի պակասի ու ոչինչ չարժե, իսկ սրա գլուխն արժե տասը կոպեկ։ Դեհ, դեպի տուն։ Արհեստակցական միության տոմսն ինձ շատ հարկավոր է տանը, բայց աղջիկս եկամտաբեր գործի է՝ դա էլ մի բան նշանակում է։

ԶՈՅԱ

Ապրել էինք ուզում, աշխատել էինք ուզում... Նշանակում է, ամեն ինչ...

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Քաղաքացուհի, մեր սերը լիկվիդացվել է։ Մի խանգարեք իմ քաղաքացիական ազատ զգացմունքին, թե չէ միլիցիա կկանչեմ։

Զոյան արտասվելով կպչում է Պրիսիպկինի թևից։ Պրիսիպկինը պոկվում է։ Ռոզալյա Պավլովնան կանգնում է նրա և Զոյայի միջև, ձեռքից ցած գցելով գնումները։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ի՞նչ է ուզում այս քածը։ Ի՞նչ եք կպչում իմ փեսային։

ԶՈՅԱ

Նա իմն է։

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

Ա՛-ա՛-ա՛... Սա երեխով է։ Ես սրան ալիմենտ կտամ, բայց մութը կշարդեմ։

ՄԻԼԻՑԻՈՆԵՐ

Քաղաքացիներ, վերջ տվեք այս այլանդակ տեսարանին։



II

Երիտասարդական հանրակացարան։ Գյուտարարը փափացնում է և գծագրում։ Երիտասարդը փռվել է մահճակալին. մահճակալի ծայրին նստած է աղջիկը։ Ակնոցավորը քաղվել է ընթերցանության մեջ։ Երբ բացվում է դուռը, երևում են միջանցքը և լապտերները։

ԲՈԲԻԿ ԽՐԻՏԱՍԱՐԴ

(բղավում է)

Ո՞ւր են սապոգներս։ Էլի՞ չնթել են։ Հիմի ինչ անեմ, գիշերն էդ անտերները Կուրսկի կայարան տանեմ ձեռքի և ոտքի ծանրոցարանում պա՞հ տալու, ինչ է։

ՀԱՎԱՔԱՐԱՐ

Էդ դրանցով էր, որ Պրիսիպկինը տեսակցության գնաց իր մեյմունի մոտ։ Հագնում էր, հետո էլ հայհոյում։ Վերջին անգամն է, ասում է, իսկ երեկոյան, ասում է, ներկայանալու եմ նորոգված կերպարանքով, որը ավելի է համապատասխանում իմ նոր սոցիալական դրությանը։

ԲՈԲԻԿ

Սրիկա՛։

ԽՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐ

Նրա թողած աղբն էլ է մի տեսակ աղնիվ, քաղաքավարի դառել։ Առաջ ո՞նց էր։ Մի շիշ գարեջուր ու վոբլայի մի պոչ, իսկ հիմի՝ տեժեի սրվակներ, ծիածանագույն ժապավեններ։

ԱՂՋԻԿ

Հերիք է դուրս տաս. տղայի առածը մի փողկապ է, և արդեն Մակդոնալդ եք շինում։

ԽՐԻՏԱՍԱՐԴ

Հենց Մակդոնալդ է, որ կա։ Բանը փողկապը չի, այլ այն, որ ոչ թե փողկապն է իր վզին կապել, այլ ինքն է կապվել փողկապին։ Նույնիսկ չի էլ մտածում, վախենում է գլուխը շարժել։

ՀԱՎԱՔԱՐԱՐ

Լաքով ծակերն էր ծածկում. վռազում էր, գուլպայի վրա ծակ կար, նա էլ առանց կանգնելու ոտքը քիմիական մատիտով ներկեց։

ԽՐԻՏԱՍԱՐԴ

Նրա ոտքը առանց ներկելու էլ սև է։

ԳՅՈՒՏԱՐԱՐ

Միգուցե այնտեղը չի սև։ Նա պետք է գուլպաները ոտնափոխ հագնի։

ՀԱՎԱՔԱՐԱՐ

Իսկույն երևում է, որ գյուտարար է։ Պատենտ պահանջիր։ Տես, որ գաղափարդ չթռցնեն։

Քուրջով թափով սրբում է սեղանը, ցած է գցում մի տուփ, ֆառտերը շաղ են գալիս հովհարաձև։ Կռանում է հավաքելու, մոտեցնում է լույսին, սկսում է ֆրֆչալ, ձեռքով հազիվ կանչելով ընկերներին։

ԲՈԼՈՐԸ
(կարդում են, կրկնում)

Պյեռ Սկրիպկին։ Պյեռ Սկրիպկին։

ԳՅՈՒՏԱՐԱՐ

Այդ նա է իր համար ազգանուն հնարել։ Պրիսիպկին։ Դե, ի՞նչ ասել է Պրիսիպկին։ Ինչի՞ համար Պրիսիպկին։ Ո՞ւր է Պրիսիպկին։ Ո՞ւմ է պետք Պրիսիպկին։ Իսկ Պյեռ Սկրիպկի՛ն, այդ արդեն ոչ թե ազգանուն է, այլ ռոմանս։

ԱՂՋԻԿ
(երազկոտ)

Ախր ճիշտ է. Պյեռ Սկրիպկին՝ շատ նրբագեղ է ու հիանալի։ Դուք այստեղ հռհռում եք, իսկ միգուցե նա իր տանը կուլտուրական հեղափոխություն է կատարում։

ԽՐԻՏԱՍԱՐԴ

Մուռթով նա արդեն նույնիսկ Պուշկինից է անցել։ Բակենբարդները կախ են ընկել, ոնց որ շան պոչը։ Նույնիսկ չի լվանում՝ վախենում է գզգզի։

ԱՂՋԻԿ

Հարրի Պիլի* մոտ էլ այդ կուլտուրան աճում է ամբողջ երեսով մեկը։

ԳՅՈՒՏԱՐԱՐ

Այդ բանը մազերի կողմից նրա ուսուցիչն է զարգացնում։



ԽՐԻՏԱՍԱՐԴ

Եվ ախր ինչի՞ վրա են այդ ուսուցչի մազերը մնում. մեջտեղը գլուխ չկա, իսկ դանդաղությունն՝ ինչքան ուզես։ Խոնավությունի՞ց են արդյոք աճում այդպիսի մազերը։

ԳՐՔՈՎ ԽՐԻՏԱՍԱՐԴ

Ջե-է։ Նա գրող է։ Թե ինչ է գրել՝ չգիտեմ, միայն գիտեմ, որ նշանավոր է։ «Երեկոյան Մոսկվան» երեք անգամ գրել է նրա մասին. Ապուխտինի ոտանավորներն, ասում է, սաղացրել է իբրև իրենը, իսկ նա թունդ նեղացավ, հերքում գրեց։ Հիմար եք դուք, ասում է, բոլորը սուտ է, ես Նադսոնից եմ արտագրել։ Ո՞վ է նրանցից իրավացի՝ չգիտեմ։ Տպելը՝ նրան այլևս չեն տպում, բայց հիմի շատ հայտնի է նա՝ երիտասարդներին է սովորեցնում։ Ոմանց ոտանավոր գրել, ոմանց՝ երգել, ոմանց՝ պարել, ոմանցից էլ այնպես... պարտքով փող վերցնել։

ԱՎԽԼՈՀ ԽՐԻՏԱՍԱՐԴ

Կոշտուկը լաքով հանելը բանվորի գործ չի։

Խոսքի կեսին ներս է մտնում յաղթված փականագործը, թափնում է ձեռքերը, շուռ գալիս։

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

Բանվորի հետ նա ոչ մի կապ չունի, այսօր վերջնահաշիվ տացավ. ամուսնանում է վարսավիրի աղջկա, նույն ինքը գանձապահուհու և մատնահարդարուհու հետ։ Հիմի մադմուազել Էլզևիրա Ռենեսանսը նրա ճանկերն է խուզելու։

ԳՅՈՒՏԱՐԱՐ

Էլզևիր անունով տառատեսակ կա։

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

Տեսակի մասին չգիտեմ, իսկ որ կորպուսը կարգին է՝ այդ ճիշտ է։ Հաշվապահին նկարն էր ցույց տալիս, ո՜ր հաշիվը շուտ վերջացնի։

Այ քեզ հրաշք, այ քեզ մութ,
ամեն ծիծը՝ երկուական փութ։

ԲՈՋԻԿ

Դրստվե՞ց։

ԱՂՋԻԿ

*Ի՞նչ։ Նախանձո՞ւմ ես։*

ԲՈԲԻԿ

*Բա ինչ, երբ դառնամ տեխնիկ ու մշտական սապոգներ ձեռք գցեմ, ես էլ մի լավ բնակարան եմ հոտվտալու ինձ համար։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Ես քեզ այ թե ինչ եմ խորհուրդ տալիս՝ վարագույրներ ձեռք բեր։ Բացում ես վարագույրը՝ փողոցն ես տնտղում։ Ծածկում ես վարագույրը՝ կաշառք ես չանթում։ Միայն մենակ աշխատելն է ձանձրալի, իսկ մենակ հավ ուտելը ուրախալի է։ Ճի՞շտ է։ Քեզպեսները խրամատներից նույնպես ճղում էին դրստվելու, միայն թե մենք նրանց շրմփացնում էինք։ Ինչ կա որ, գնա՞։*

ԲՈԲԻԿ

*Եվ կգնա՛մ, և կգնա՛մ։ Իսկ դու ի՞նչ ես քեզ Կարլ Լիբկնեխտ ձևացնում։ Թե որ լուսամուտից ծաղիկներով հրապուրեն, երևի նույնպես ցած իջնես... Հերո՞ս։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Ոչ մի տեղ էլ չեմ գնա։ Կարծում ես ինձ այս հնոտին ու գարշահոտությունը դո՞ւր են գալիս։ Չէ։ Մենք, տեսնում ես, շատվոր ենք։ Բոլորիս համար նէպմանական աղջիկներ չես ճարի։ Տներ կշինենք ու միանգամից վրա կտանք... Միանգամից բոլորը։ Բայց մենք այս խրամատային ծակուտից սպիտակ դրոշակներով դուրս չենք գա։*

ԲՈԲԻԿ

*Մի գլուխ՝ խրամատ, հա խրամատ։ Հիմի տասնինը թվականը չէ։ Մարդիկ իրենց համար ապրել են ուզում։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Ինչ է, որ խրամատ չէ՞։*

ԲՈԲԻԿ

*Փչո՛ւմ ես։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Ոչինչ՝ ինչքան ուզես։*



ԲՈԲԻԿ

*Փչո՛ւմ ես։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Իսկ կրակում են անձայն վառոդով։*

ԲՈԲԻԿ

*Փչո՛ւմ ես։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Այ, Պրիսիպկինին արդեն ցած են տապալել աչքերի երկփողանիով։*

Ներս է մտնում Պրիսիպկինը լաքի կոշիկներով, առաջ պարզած ձեռքում թելերից բռնած բերում է մի զույգ մաշված կոշիկներ, նետում բոբիկին։ Բայանը՝ գնումներով։ Ծածկում է Սկրիպկինից մեկուսացող փականագործին։

ԲԱՅԱՆ

*Ընկեր Սկրիպկին, ուշադրություն մի դարձրեք այդ կոպիտ պարերին, դրանք կփչացնեն ձեր նոր ծնվող նուրբ ճաշակը։*

Հանրակացարանի տղաները երեսները շուռ են տալիս։

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Հերիք խոնարհվես։ Ջեռնափայտի գլուխը կջարդես։*

ԲԱՅԱՆ

*Ես հասկանում եմ ձեզ, ընկեր Սկրիպկին, դժվար է, անհնարին է ձեր քնքուշ հոգով հանդերձ ապրել սրանց կոպիտ հասարակության մեջ։ Եվս մի դաս համբերեցեք։ Ամենապատասխանատու քայլը կյանքում առաջին ֆոքստրոտն է ամուսնությունից հետո։ Տպավորությունը պետք է մնա ամբողջ կյանքի ընթացքում։ Դե՛հ, անցեք ենթադրյալ դամայի հետ։ Ի՞նչ եք դոփում, ինչպես մայիսմեկյան շքերթի ժամանակ։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ընկեր Բայան, կոշիկներս հանում եմ. առաջին՝ սեղմում են, երկրորդ՝ կմաշվեն։*

ԲԱՅԱՆ

*Ահա՛, ահա՛։ Այդպես է, այդպես, անաղմուկ քայլով։*

ասես թե լուսնկա գիշերը վերադառնում ես գարեջրատնից, թաղված անուրջներում ու մելանխոլիայի մեջ։ Այդպես, այդպես։ Դե, հետույքներդ մի՛ շարժեք, հո վագոնետ չեք տանում, այլ մազմուազելին։ Այդպես, այդպես։ Ձեռքներդ ո՞ւր է։ Ցած իջեցրեք ձեռքներդ։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(ձեռքը սահեցնում է երևակայական ուսի վրայով)

*Չեմ կարողանում պահել օդի մեջ։*

ԲԱՅԱՆ

*Իսկ դուք, ընկեր Պրիսիպկին, թեթև հետախուզությամբ գտեք կրծկալը և, իբր թե հանգստանալու համար, բութ մատիկով սեղմեցեք. և՛ դամային է այդ համակրությունը հաճելի, և՛ ձեզ համար էլ թեթևացում, կարող եք մտածել մյուս ձեռքի մասին։ Ի՞նչ եք ուսերդ ցնցում։ Այդ արդեն ֆոքստրոտ չէ, այդ արդեն հաճեցիք շիմմական «պա» ցուցադրել։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ոչ։ Այդ ես այնպես... Ընթացքի մեջ քորվեցի։*

ԲԱՅԱՆ

*Դե մի՞թե այդպես կարելի է, ընկեր Պրիսիպկին։ Եթե պարի ոգեշնչման պահին ձեզ հետ այդպիսի դիպված պատահի, աչքներդ չռեք, որպես թե խանդում եք դամային, իսպանական ձևով ետ-ետ քաշվեք դեպի պատը, արագ քաշվեք, որևէ արձանի քսվելով (պերճաշուք հասարակության մեջ, որի հետ դուք պետք է շփվեք, այդ արձաններն ու ամեն կարգի վազաները միշտ էլ կիտված են անթիվ-անհաշիվ քանակությամբ)։ Քորվեցեք, ծռմռվեցեք, փայլեցրեք աչքերդ և ասացեք. «Ես ձեզ հասկացա, նե՛նգ արարած, դուք խաղում եք ինձ հետ... բայց...», և նորից՝ անցեք պարելուն, իբրև թե աստիճանաբար հովանալով ու հանգստանալով։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Այսպե՞ս։*

ԲԱՅԱՆ

*Բռա՛վո։ Լավ է։ Դուք տաղանդ ունեք, ընկեր Պրիսիպկին։ Բուրժուական շրջապատման և մի երկրում սոցիալիզմի կա-*



*ռուցման պայմաններում դուք ծավալվելու հնարավորություն չունենք։ Մի՞թե մեր Սրեդնի Կոզի նրբանցքը ձեզ համար արժանի ասպարեզ է։ Ձեզ համաշխարհային հեղափոխություն է հարկավոր, Եվրոպա դուրս գալ, մի գլուխ Չեմբեռլեններ և Պուանկարեներ ջախջախել, և այն ժամանակ դուք Մուլեն Ռուժերն ու Պանթեոնները կհիացնեք ձեր մարմնի շարժումների գեղեցկությամբ։ Այդպես էլ հիշեցեք, այդպես էլ քարացեք։ Հոյակա՜պ է։ Իսկ ես գնացի։ Այդ խաչեղբայրների վրա աչք է պետք ու աչք. մինչև հարսանիքը կանխավճարով միայն մի բաժակ և ոչ մի կաթիլ ավելի, իսկ երբ աշխատանքն ավարտեն, այն ժամանակ թեկուզ շշով։ Օրևուար։* (Գնում է, ձայն տալով դռների միջից)։ *Երկու փողկապ միաժամանակ մի կապեք, մանավանդ տարբեր գույնի, և ականջներդ գինդ արեք. չի կարելի օսլայած շապիկը հագնել փեշերը դուրս թողած։*

Պրիսիպկինը փորձում է նոր զգեստները։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

*Վանկա, թող այդ զիրթուզիբիլը, ի՞նչ ես այդպես խըրտվիլակ կտրել։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ձեր գործը չէ, հարգելի ընկեր։ Ինչի՞ համար եմ կռվել։ Ես լավ կյանքի համար եմ կռվել։ Ահա նա իմ ձեռքում է. և՛ կին, և՛ տուն, և՛ իսկական վերաբերմունք։ Ես իմ պարտքը, հարկ եղած դեպքում, միշտ էլ կարող եմ կատարել։ Ով որ կռվել է, իրավունք ունի հանգստանալու խաղաղ գետակի ափին։ Հապա՜։ Միգուցե իմ բարեկարգությամբ ես իմ ամբողջ դասակարգն եմ բարձրացնում։ Հապա՜։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

*Մարտի՛կ։ Սուվո՛րով։ Ճի՛շտ է։*

*Գնում էի,*
*գնում, գնում,*
*սոցիալիզմի կամուրջ շինում,*
*չավարտեցի,*
*հոգնեցի,*
*կամուրջի մոտ նստեցի։*

Ոչխարներն են անցնում արագ։
Կամուրջի մոտ բռնել է խոտ։
Մենք ուզում ենք,
                    շատ հաստատ,
Հանգստանալ գետակի մոտ։
Այնպես չէ՞։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Դե, դու է՛լ... Թող ինձ քո այդ կոպիտ ագիտկաներով... Հապա՜...

Նստում է մահճակալին, երգում կիթառի նվագակցությամբ:

*Լունաչարսկու փողոցում*
*կար հինավուրց մի տուն,*
*աստիճանները լայն ու մուգ,*
*լուսամուտները սիրուն։*

Կրակոց: Նետվում են դեպի դուռը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ
(դռան միջից)

Զոյա Բերյոզկինան ինքնասպանություն գործեց։

Բոլորը նետվում են դեպի դուռը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Է՛խ, այ թե հիմի բշիչում կգզեն նրան։

ՁԱՅՆԵՐ

Շո՛ւտ...
Շո՛ւտ...
Շտապ օգնությո՜ւն...
Շտապ օգնությո՜ւն...

ՁԱՅՆ

Շտապ օգնությո՛ւն։ Շո՛ւտ։ Ի՞նչ։ Ինքնասպանություն։ Դուրս է եկել սրտից։ Սրեդնի Կոզի, 16։

Պրիսիպկինը մենակ, շտապով հավաքում է իրերը:

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

Քո պատճառով, բրդոտ նողկանք, այդպիսի կինը ինքնասպանություն գործեց։ Դո՛ւրս։

Բռնում է Պրիսիպկինի բանկոնից, դռնից դուրս շպրտում, ետևից նետելով իրերը:



ՀԱՎԱՔԱՐԱՐ
(որ ներս է վազում բժշկի հետ, բռնում և բարձրացնում է Պրիսիպկինին, տալով նրան դուրս թռչող գլխարկը)

Համա՜ թե տրաքոցով ես բաժանվում քո դասակարգից, երիտասարդ։

ՊՐԻՍԻՊԿԻՆ
(չուռ գալով, բղավում է)

Կառապա՛ն, Լունաչարսկու փողոց, 17։ Իրերո՛վ։

## III

Վարսավիրանոցային մեծ սենյակ: Պատերին՝ հայելիներ: Հայելիների առջև բրբե մեծ-մեծ ծաղիկներ: Անկյունի սեղանիկներին՝ շշեր: Նախաբեմի ձախ կողմում ռոյալ՝ լայն բացված երախով, աջ կողմում վառարան, որի խողովակները ծռմռվում են սենյակով մեկ: Սենյակի մեջտեղում հարսանեկան կլոր սեղան: Սեղանի մոտ են Պյեր Սկրիպկինը, էլզևիրա Ռենեսանսը, երկու խաչեղբայրները՝ իրենց կանանցով, մայրիկ և հայրիկ Ռենեսանսները: Հարսանեհայր-հաշվապահ և նույնպիսի էլ հարսանեմայր: Օլեգ Բայանը կարգադրություններ է անում սեղանի կենտրոնում, մեջքով դեպի դահլիճը:

ԷԼԶԵՎԻՐԱ

Սկսե՞նք, Սկրիպոչկա։

ՍԿՐԻՊԿԻՆ

Սպասե՛լ։

Դադար:

ԷԼԶԵՎԻՐԱ

Սկրիպոչկա, սկսե՞նք։

ՍԿՐԻՊԿԻՆ

Սպասե՛լ։ Ես ուզում եմ ամուսնանալ կազմակերպված կարգով, պատվավոր հյուրերի ներկայությամբ և հատկապես գործարհկոմի քարտուղար, հարգելի ընկեր Լասսալչենկոյի անձի ներկայությամբ... Հապա՜։

ՀՅՈՒՐ

**(ներս վազելով)**

*Հարգելի նորապսակներ, մեծահոգաբար ներեցեք ուշացման համար, բայց ես լիազորված եմ հաղորդելու ձեզ մեր հարգելի առաջնորդ ընկեր Լասսալչենկոյի ամուսնական ցանկությունները։ Վաղը, ասում է, թեկուզ եկեղեցի, իսկ այսօր, ասում է, գալ չեմ կարող։ Այսօր, ասում է, կուսոր է, և ուզես-չուզես, բայց բջիջ գնալ, ասում է, անհրաժեշտ է։ Անցնենք, այսպես ասած, հերթական խնդիրներին։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Հարսանիքը հայտարարում եմ բացված։*

ՌՈԶԱԼՅԱ ՊԱՎԼՈՎՆԱ

*Ընկերներ և մըսյո, կերեք խնդրեմ։ Որտե՞ղ կարող եք հիմա այսպիսի խոզեր ճարել։ Ես այս ազդրը գնել եմ երեք տարի առաջ, վախենալով պատերազմից կամ Հունաստանի, կամ Լեհաստանի դեմ։ Բայց... դեռ պատերազմ չկա, իսկ ապուխտն արդեն փչանում է։ Կերեք, մըսյո։*

ԲՈԼՈՐԸ

**(բարձրացնում են բաժակներն ու ըմպանակները)**

*Դա՜ռն է։ Դա՜ռն է։*

էլզևիրան և Պյեռը համբուրվում են:

*Դա՜ռն է։ Դա-ա՜-ա՜-ա՜-առն է։*

էլզևիրան կախվում է Պյեռից: Պյեռը համբուրում է լրջմտությամբ և դասակարգային արժանապատվության գիտակցությամբ:

ՀԱՐՍԱՆԵՀԱՅՐ-ՀԱՇՎԱՊԱՀ

*Բեթհովե՛նը... Շաքսպե՛արը... խնդրում ենք որոշ բան արտահայտել։ Հո ամեն տարի իզուր չենք տոնում ձեր հոբելյանները։*

Քարշ են տալիս ռոյալը:

ԶԱՅՆԵՐ

*Թևի տակ, թևի տակ առեք դրան։ Համա՜ թե ատամներ ունի, հա՜։ Մարդ ուզում է մի հատ հասցնել։*



ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Մի՛ տրորեք իմ ռոյալի ոտքերը։*

ԲԱՅԱՆ

**(վեր է կենում, օրորվում է ու թափում ըմպանակը)**

*Ես երջանիկ եմ, երջանիկ եմ տեսնելու տվյալ ժամանահատվածում ընկեր Սկրիպկինի պայքարով լի ուղու ներկայացրած ավարտը։ Ճշմարիտ է, այդ ուղում նա կորցրեց մեկ բացեղ* ... 

*Ես երջանիկ եմ, երջանիկ եմ տեսնելու տվյալ ժամանակահատվածում ընկեր Սկրիպկինի պայքարով լի ուղու նըրբագեղ ավարտը։ Ճշմարիտ է, այդ ուղում նա կորցրեց մեկ պեմասնավոր կուսակցական տոմս, սակայն ձեռք բերեց պետական փոխառության բազմաթիվ տոմսեր։ Մեզ հաջողվեց համաձայնեցնել ու շաղկապել սրանց դասակարգային և այլ հակասությունները, որի մեջ մարքսիստական հայացքով զինված մարդը չի կարող չտեսնել, այսպես ասած, ինչպես մի կաթիլ ջրում, մարդկության ապագա երջանկությունը, որ հասարակ ժողովուրդը անվանում է սոցիալիզմ։*

ԲՈԼՈՐԸ

*Դա՛ռն է։ Դա՜ռն է։*

էլզևիրան և Սկրիպկինը համբուրվում են։

ԲԱՅԱՆ

*Ինչպիսի՜ կապիտալ քայլերով ենք առաջ ընթանում մեր ընտանեկան շինարարության ուղիով։ Արդյոք երբ մենք մեռնում էինք Պերեկոպի տակ, իսկ շատերը նույնիսկ մեռան, արդյոք մենք կարո՞ղ էինք ենթադրել, թե այս վարդերը կծաղկեն ու անուշ կբուրեն արդեն իսկ տվյալ ժամանակահատվածում։ Արդյոք երբ մենք տնքում էինք ինքնակալության լծի տակ, արդյոք թեկուզ մեր մեծ ուսուցիչներ Մարքսը և էնգելսը կարո՞ղ էին ենթադրաբար երազել կամ նույնիսկ երազելով ենթադրել, որ մենք անհայտ, բայց մեծ աշխատանքը հիմենեի կապերով կմիացնենք տապալված, բայց հմայիչ կապիտալին։*

ԲՈԼԱՐԸ

*Դա՜ռն է... Դա՜ռն է...*

ԲԱՅԱՆ

*Հարգելի քաղաքացիներ։ Գեղեցկությունը առաջադիմության շարժիչն է։ Ի՞նչ կլինեի ես իբրև հասարակ աշխատա-*

վոր։ Բոչկին, և ուրիշ ոչինչ։ Ի՞նչ կարող էի անել ես իբրև Բոչկին։ Բառաչել։ Եվ ուրիշ ոչինչ։ Իսկ իբրև Բայան՝ [illegible]-բեմ։ Օրինակ.

*Մեր Օլեգը Բայան*
*Հարբել է բախտից միայն։*

Եվ ահա ես հիմա Օլեգ Բայան եմ և, իբրև հասարակության իրավահավասար անդամ, օգտվում եմ կուլտուրայի բոլոր բարիքներից և կարող եմ արտահայտվել. այսինքն՝ ոչ, արտահայտվել չեմ կարող, բայց կարող եմ խոսել թեկուզ ինչպես հին հույները. «Էլզևիրա Սկրիպկինա, տվեք հապա ձուկը այն»։ Եվ ինձ ողջ երկիրը կարող է պատասխանել իբրև ինչ-որ մի տրուբադուր.

*Որ իր կոկորդը ողողի,*
*սիրո համար ու վայելքի,*
*մատուցում ենք մենք Օլեգին՝*
*ձկան պոչ, մի գավաթ օղի։*

ԲՈԼՈՐԸ

Բրավո՛։ Ուռա՛։ Դա՜ ոն է։

ԲԱՅԱՆ

Գեղեցկությունը մայրիկը...

ԽԱՉԵՂԲԱՅՐ

(մռայլ և տեղից վեր ցատկելով)

Մա՛յրիկը։ Ո՞վ ասաց «մայրիկը»։ Խնդրեմ նորապսակների ներկայությամբ չարտահայտվել։

Խաչեղբորը բռնում, հեռացնում են:

ԲՈԼՈՐԸ

Բեթհովե՛ն։ Կամարի՛նսկի։

Բայանին քարշ են տալիս ռոյալի մոտ:

ԲԱՅԱՆ

*Հավաքվեցին զագսի մոտ տրամվայները,*
*կարմիր հարսանիք էր այնտեղ...*

ԲՈԼՈՐԸ

(ձայնակցում են)



*Փեսացուն իր նոր արտահագուստով էր,*
*պրոֆտոմսն էր ցցվել գրպանից։*

ՀԱՇՎԱՊԱՀ

Հասկացա՛։ Ամեն ինչ հասկացա։ Այդ նշանակում է.

*Ողջույն, Օլեգ Բայանչիկ,*
*դու գանգրահեր մեր ոչխարիկ...*

ՎԱՐՍԱՎԻՐ

(պատառաքաղը ձեռքին խցկվում է դեպի հարսանեմայրը)

Չէ, մադամ, հիմի, հեղափոխությունից հետո, իսկական գանգրահերներ չկան։ Շինյոն գոֆֆրեն արվում է այսպես... վերցնում են ունելին (շուռումուռ է տալիս պատառաքաղը), տաքացնում հանդարտ կրակի վրա, ա լյա էտուալ (պատառաքաղը կոխում է վառարանի բոցի մեջ), և գագաթին հարում են մի տեսակ մազերի սուֆլե։

ՀԱՐՍԱՆԵՄԱՅՐ

Դուք վիրավորում եք իմ արժանապատվությունը իբրև մոր և իբրև կույսի... Թողե՛ք... Շա՛ն որդի...

ԽԱՉԵՂԲԱՅՐ

Ո՞վ ասաց «շան որդի»։ Խնդրեմ նորապսակների ներկայությամբ չարտահայտվել։

Հաշվապահը բաժանում է նրանց, ֆրի տակ երգելով ու փորձելով պտտել դրամարկղային հաշվիչի բռնակը, որ նա ման է ածում ինչպես շարմանկա:

ԷԼԶԵՎԻՐԱ

(Բայանին)

Ա՜խ։ Նվագեցեք, ա՜խ։ «Մակարովի կարոտը Վերա Խալոդնիին» վալսը։ Ա՛խ, դա այնպես շարման է, ախ, դա պարզապես պըտիտ խուտուար է...

ԽԱՉԵՂԲԱՅՐ

Ով ասաց «պիսուար»։ Խնդրեմ նորապսակների ներկայությամբ...

Բայանը բաժանում է ու հարձակվում ստեղների վրա:

ԽԱՉԻԴՐԱՅՐ
(դիտելով, սպառնալից)

*Դու էդ ինչո՞ւ ես մենակ սև ոսկորի վրա նվագում, հը՞։ Պրոլետարիատի համար, ուրեմն, կեսի վրա, իսկ բուրժուազիայի համար՝ ամբողջի՞։*

ԲԱՅԱՆ

*Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, քաղաքացի։ Սպիտակ ոսկորների վրա ես առանձնապես եմ ջանում։*

ԽԱՉԻԴՐԱՅՐ

*Ուրեմս, էլի դուրս է գալիս, որ սպիտակ ոսկորը լա՞վ է։ Նվագիր բոլորի վրա...*

ԲԱՅԱՆ

*Հենց բոլորի վրա էլ նվագում եմ։*

ԽԱՉԻԴՐԱՅՐ

*Ուրեմս, սպիտակների հետ միասի՞ն, համաձայնողակա՞ն։*

ԲԱՅԱՆ

*Ընկեր... Ախր այս... ցեղուրա է։*

ԽԱՉԻԴՐԱՅՐ

*Ո՞վ ասաց «դուրա»։ Նորապսակների ներկայությամբ։ Ա՛ռ քեզ։*

Կիթառով դրմփացնում է ծոծրակին: Վարսավիրը պատառաքաղը խրում է հարսանեկան մազերի մեջ: Պրիսիպկինը հաշվապահին ետ է մղում կնոջից:

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Դուք այդ ի՞նչ եք տառեխը ճխտում իմ կնկա ծոցը։ Դա ձեզ համար ծաղկաթումբ չի, այլ կուրծք է, և սա էլ ձեզ համար քրիզանթեմ չի, այլ տառեխ։*

ՀԱՇՎԱՊԱՀ

*Իսկ դուք մեզ սաղմոնով հյուրասիրեցի՞ք։ Հյուրասիրեցի՞ք։ Այո՞։ Եվ ինքներդ էլ բղավում եք, հա՞։*

Կռվի մեջ շղարշե հարսնացուին ցած են տապալում վառարանի վրա, վառարանը շուռ է գալիս, բոց, ծուխ:



ԲԱՑԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Այրվո՜ւմ ենք։ Ո՞վ ասաց «այրվում ենք»... Հրդե՜հ... Սաղմոն... Գալիս էին տրամվայները զագսից...*

IV

Սեփ-սև գիշերում մոտակա բոցից փայլկտում է հրշեջի սաղավարտը: Պ ե տ ը մենակ է: Ներս են գալիս ու դուրս գնում զեկուցող հ ր շ ե ջ ն ե ր:

1-ԻՆ ՀՐՇԵՋ

*Ջապել անհնար է, ընկեր պետ։ Երկու ժամ ոչ ոք չի զանգել... Հարբած են լրբերը։ Վառվում է, ոնց որ վառոդի պահեստ։*

Գնում է։

ՊԵՏ

*Ինչո՞ւ չպետք է վառվի։ Սարդոստայն ու սպիրտ։*

2-ՐԴ ՀՐՇԵՋ

*Հանգչում է, ջուրը սառույց է կտրում անմիջապես։ Նկուղը բերնեբերան ջրով ենք լցրել՝ սղարանից էլ հարթ։*

Գնում է։

ՊԵՏ

*Դիակներ գտա՞ք։*

3-ՐԴ ՀՐՇԵՋ

*Մեկին դրին ավտոյի մեջ, գանգն ամբողջովին փշրված է։ Երևի գերանն է ջարդել։ Ուղղակի տարան մորգ։*

Գնում է։

4-ՐԴ ՀՐՇԵՋ

*Բարձեցին... Անհայտ սեռի մի այրված մարմին՝ պատառաքաղը գլխի մեջ։*

1-ԻՆ ՀՐՇԵՋ

*Վառարանի տակ գտնվել է նախկին մի կին՝ ծոծրակի ոսկորներին մետաղալարե պսակ։*

3-ՐԴ ՀՐՇԵՋ

*Հայտնաբերվել է նախապատերազմյան կազմվածքի ան-*

հայտ մի մարդ՝ ձեռքին դրամարկղ. հավանորեն, կյանքում բանդիտ է եղել։

2-ՐԴ ՀՐՇԵՋ

Ոչ ոք կենդանի չի մնացել... Դիակների մեջ պակասում է մեկը, այնպես որ, ելնելով չլինելուց, ենթադրում եմ, թե այրվել է մանր կտորներով։

1-ԻՆ ՀՐՇԵՋ

Համա թե հրավառությո՜ւն էր։ Ուղղակի թատրոն, միայն թե բոլոր գործող անձերը վառվել են։

3-ՐԴ ՀՐՇԵՋ

Տանում էր նրանց կառքը հարսանիքից,
կառքը, որ կարմիր խաչ ուներ։

Փողհարը ձայնում է հրշեջներին: Շարվում են: Քայլում են պատոնի միջով. բացականչելով:

ՀՐՇԵՋՆԵՐ

Ընկերներ և քաղաքացիներ,
թույն է օդին։
Հանրապետությունը
կայրի
ձեռքն հարբեցողի։
Քանի բուխարիկի,
պրիմուսի հետ ապրեք,
կայրեք բնակարանը,
դուք էլ հետը կայրվեք։
Պատահական քունն է
հրդեհ պատճառող,
քնից առաջ
մի՛ կարդաք
Նադսոն ու Ժարով։

# V

Նիստերի վիթխարի դահլիճ, որ ամֆիթատրոնաձև բարձրանում է մինչև առաստաղ: Մարդկային ձայների փոխարեն՝ ռադիոբարձրախոսներ, դրանց կողքին մի քանի կախ ընկած ձեռներ, նման ավտոմեքենաների դուրս պարզվող ձեռների: Յուրաքանչյուր բարձրախոսի վերևում գունավոր էլեկտրալամպեր, ուղղակի առաստաղի տակ՝ էկրաններ: Մեջտեղում ամբիոն՝ միկրոֆոնով: Կողքերին՝ ձայների ու լույսի բաշխիչների ու կարգավորիչների տրիբունաներ: Երկու մեխանիկ՝ ծեր և երիտասարդ, աշխատում են մութ դահլիճում:



ԾԵՐՈՒՆԻ

(փետուրե փոշոտ խոզանակով թափ տալով բարձրախոսների փոշին)

Այսօր կարևոր քվեարկություն է։ Երկրագործական շըրջանների քվեարկության ապարատը յուղիր և ստուգիր։ Վերջին անգամ խաթարում եղավ։ Քվեարկում էին ճռճռոցով։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Երկրագործակա՞ն։ Լավ։ Կենտրոնականները կյուղեմ։ Անձամբ կմաքրեմ Սմոլենսկի ապարատների կոկորդը։ Անցյալ շաբաթ նորից խռխռացնում էին։ Հարկավոր է ամրացնել մայրաքաղաքի ծառայության հաստիքների ձեռքերը, թե չէ նրանք ինչ-որ թեքում ունեն. աջը կառչում է ձախից։

ԾԵՐՈՒՆԻ

Ուրալի գործարանները պատրաստ են։ Կուրսկի մետալուրգիականները կմիացնենք, այնտեղ Զապորոժյեի էլեկտրակայանի երկրորդ խմբից անց են կացրել վաթսուներկու հազար ձայնի նոր ապարատ։ Դրանց հետ, ոչինչ, աշխատանքը հեշտ է։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Իսկ դու դեռ հիշո՞ւմ ես, թե առաջ ինչպես էր։ Ծիծաղելի՞ էր, երևի։

ԾԵՐՈՒՆԻ

Մի անգամ մայրս ինձ գրկած տարավ ժողով։ Ժողովուրդը բոլորովին քիչ էր, մի հազար մարդ, նստել էին ոնց ձրիակերներ ու լսում էին։ Ինչ-որ կարևոր ու աղմկալից հարց էր, անցավ մեկ ձայնի մեծամասնությամբ։ Մայրս դեմ էր, բայց քվեարկել չկարողացավ, որովհետև ձեռքերով գըրկել էր ինձ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Դե, իհարկե։ Տնայնագործությո՜ւն։

ԾԵՐՈՒՆԻ

Առաջ այսպիսի ապարատ հարկավոր էլ չէր։ Պատահում էր, մարդուն անհրաժեշտ է առաջինը ձեռք բարձրացնել, որպեսզի նկատեն, թե ինչպես է նախագահի հենց քթի տակ ցցում, ուղղակի ռունգերին է հասցնում երկու ձեռքն էլ, ափսոսելով միայն, որ հին Իգիդա աստվածուհին չէ, թե չէ տասներկու ձեռքով կքվեարկեր։ Իսկ շատերը ծլկում էին։ Մեկի մասին ասում էին, թե ինչ-որ կարևոր բանավեճի ամբողջ ընթացքում նստել էր զուգարանում, վախենալով քվեարկությունից։ Նստել ու մտածում էր, պաշտոնական մաշկն էր, ուրեմն, պահպանում։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Պահպանե՞ց։

ԾԵՐՈՒՆԻ

Պահպանե՜ց... Միայն թե փոխադրեցին ուրիշ աշխատանքի։ Տեսան զուգարան շատ է սիրում, այնտեղ էլ գլխավոր նշանակեցին սապոնի և սրբիչների վրա։ Պատրա՞ստ է։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Պատրաստ է։

Վազում են ցած, դեպի բաշխիչ տախտակներն ու լարերը։ Ակնոցավոր ու պստլիկ մորուքով մ ա ր դ ը, դուռը լայն բանալով, ուղիղ քայլերով բարձրանում է էստրադա և, մեջքով դեպի հանդիսատեսը, բարձրացնում է ձեռքերը։

ՀՌԵՏՈՐ

Միաժամանակ միացնել ֆեդերացիայի բոլոր շրջանները։

ԾԵՐՈՒՆԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Լսում ենք։

Միաժամանակ վառվում են դահլիճի բոլոր կարմիր, կանաչ և կապույտ լույսերը։

ՀՌԵՏՈՐ

Ալլո՛։ Ալլո՛։ Խոսում է մարդկային հարության ինստիտուտի նախագահը։ Հարցը հրապարակված է հեռագրերով, քննարկված է պարզ ու հասարակ։ Նախկին Տամբովի վաթսուներկուերորդ փողոցի և տասնյոթերորդ պողոտայի խաչ-



մերուկում հիմք փորող բրիգադան յոթ մետր խորության
վրա գտավ հողով ծածկված, սառցակալ մի նկուղ։ Ցեմենտի
սառցաշերտի միջից երևում է սառած մարդկային մի մար-
մին։ Ինստիտուտը հնարավոր է համարում այդ անհատի հա-
րությունը, որը սառել է հիսուն տարի առաջ։
Կարգավորում ենք կարծիքների տարբերությունները։
Ինստիտուտը գտնում է, որ յուրաքանչյուր բանվորի
կյանքը պետք է օգտագործվի մինչև վերջին վայրկյանը։
Լուսարկումը այդ էակի ձեռքերին ցույց տվեց կոշտուկ-
ներ, որոնք կես դար առաջ աշխատավորի նշան էին։ Հիշեց-
նում ենք, որ աշխարհի վրայով անցած պատերազմներից
հետո, քաղաքացիական կռիվներից հետո, որոնք ստեղծեցին
աշխարհի ֆեդերացիան, 1965 թվականի նոյեմբերի յոթի
դեկրետով մարդու կյանքը անձեռնմխելի է։ Հայտնում եմ
ձեզ ի գիտություն առարկությունները էպիդեմիկ կայանի,
որը վախենում է բակտերիաների տարածման սպառնալիքից,
բակտերիաներ, որոնցով լի էին նախկին Ռուսաստանի նախ-
կին արարածները։ Պատասխանատվության լիակատար գի-
տակցությամբ անցնում եմ որոշմանը։ Ընկերներ, հիշեցեք,
հիշեցեք և նորից հիշեցեք.

Մենք

քվեարկում ենք

մարդկային կյանքը։

Լամպերը մարում են, խլացնոր զանգ, էկրանի վրա վառվում է որոշումը, որը կրկնում է ռետորը։

«Հանուն բանվոր մարդկության աշխատանքային ունակությունների հետազոտման, հանուն կենցաղի ցուցադրական, համեմատական ուսումնասիրության, պահանջում ենք հարություն տալ»։

Բարձրախոսներից կեսի ձայները. «Ճիշտ է, ընդունել», ձայների մի մասը. «Կորչի»։ Ձայները մի ակնթարթում լռում են։ Էկրանը մարում է։ Երկրորդ զանգ. վառվեց մի նոր բանաձև։ Հռետորը կրկնում է։

«Դոնբասի մետալուրգիական և քիմիական ձեռնարկությունների ասնիտարավերահսկչական կետերի բանաձևը։ Խուսափելու համար քծնանքի և գոռոզամտության բակտե-

*րիաներից, որոնք բնորոշ էին քանինը թվականի համար, պահանջում ենք էքսպոնատը թողնել սառած վիճակում»։*

Բարձրախոսների ձայները: «Կոռչի»: Հատուկենտ ճիչեր. «Ճիշտ է»։

*Ուրիշ որոշում կամ լրացումներ կա՞ն։*

Վառվում է Երրորդ էկրանը, հռետորը կրկնում է:

*«Սիբիրի երկրագործական շրջանները խնդրում են հարություն տալ աշնանը, դաշտային աշխատանքներն ավարտվելուց հետո, հեշտացնելու համար տեսնել ցանկացող լայն մասսաների ներկայությունը»։*

Բարձրախոսների հնչող մեծամասնությունը. «Կոռչի», «Մեր-ժել»:

Լամպերը վառվում են:

*Դնում եմ քվեարկության, ով կողմ է առաջին որոշման, խնդրում եմ ձեռք բարձրացնել։*

Բարձրանում է երկաթե ձեռների հնչող մեծամասնությունը:

*Թողնել։ Ո՞վ է կողմ Սիբիրի ուղղման։*

Բարձրանում է երկու ձեռք:

*Ֆեդերացիայի ժողովը որոշեց. «Հա-րու-թյուն տալ»։*

Բոլոր բարձրախոսների զռոցը. «Ուռա՜»: Ձայները լռում են:

ՀՌԵՏՈՐ

*Ժողովը փակված է։*

Լայն բացվող երկու դռներից ներխուժում են ռ ե պ ո ր տ յ ո ր ն ե ր: Հռետորը ճեղքելով դուրս է գալիս, ուրախ նետելով ամեն կողմ:

*Հարություն տալ։ Հարություն տալ։ Հարություն տալ։*

Ռ ե պ ո ր տ յ ո ր ն ե ր ը գրպաններից հանում են միկրոֆոնները և բղավում.

1-ԻՆ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո... Ալիք 472½ մետր... «Չուկոտսկիե իզվեստիա»... Հարություն տալ։*

2-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալիք 376 մետր... «Վիտեբսկայա վեչերնայա պրավդա»... Հարություն տալ։*



3-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալիք 211 մետր... «Վարշավսկայա կոմսոմոլսկայա պրավդա»... Հարություն տալ։*

4-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*«Արմավիրսկի լիտերատուրնի պոնեդելնիկ»։ Ալլո։ Ալլո։*

5-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալլո։ Ալիք 44 մետր։ «Իզվեստիա չիկագսկավո սովետա»... Հարություն տալ։*

6-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալլո։ Ալիք 115 մետր... «Ռիմսկայա կրասնայա գազետա»... Հարություն տալ։*

7-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալլո։ Ալիք 78 մետր... «Շանխայսկայա բեդնոտա»... Հարություն տալ։*

8-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալլո։ Ալիք 220 մետր... «Մադրիդսկայա բատրաչկա»... Հարություն տալ։*

9-ՐԴ ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ալլո։ Ալլո։ Ալլո։ Ալիք 11 մետր... «Կաբուլսկի պիոներ»... Հարություն տալ։*

Լրագրավաճառները ներս են ընկնում պատրաստի օտիսկներով:

1-ԻՆ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

*Ետ բերե՞լ,*
*թե՞ չբերել արարածին սառած։*
*Խմբագրականներ արձակ*
*ու չափածո գրված։*

2-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

*Համաշխարհային հարցաթերթ թեմայով անծանոթ՝*
*քննանքի համաճարակ հնարավո՞ր է մեզ մոտ։*

3-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

*Հոդվածներ հին-հին՝*

կիթառի ու ռոմանսի
և մասսային
հիմարացնելու
այլ ձևերի մասին։

4-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Վերջին լուրեր... Հարցազրույց։ Հարցազրույց։

5-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Գիտական համբավաբեր,
խնդրեմ չվախենաք։
Այսպես կոչված հայհոյանքների
լիակատար մի ցանկ։

6-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Վերջին ռադիոն։

7-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Պատմական հարցի
թեորետիկ դրվածքը հին.
կարո՞ղ է
ծխախոտը
սպանել փղին։

8-ՐԴ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Տխուր է անչափ,
անչափ ծիծաղելի
բացատրությունը
«հարբեցող» բառի։

## VI

Ապակյա փայլատ երկփեղկ դուռ, պատերի միջով թափանցում են բժշկական գործիքների մետաղյա մասերը: Պատի առաջ կանգնած են ծեր պրոֆեսորը և տարեց ասիստենտուհին, որը դեռևս պահպանել է Զոյա Բերյոզկինայի դիմագծերը: Երկուսն էլ հիվանդանոցային սպիտակ զգեստով են:



ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ընկե՛ր։ Ընկեր պրոֆեսոր, խնդրում եմ ձեզ, այդ փորձը մի՛ արեք։ Ընկեր պրոֆեսոր, նորից իրարանցում կսկսվի, բուզա...

ՊՐՈՖԵՍՈՐ

Ընկեր Բերյոզկինա, դուք սկսեցիք հիշողություններով ապրել և խոսեցիք անհասկանալի լեզվով։ Մեռած բառերի համատարած բառարան։ Ի՞նչ ասել է «բուզա» (փնտրում է բառարանում): Բուզա... բուզա... բուզա... բյուրոկրատիզմ, բուբլիկներ, բոհեմա, Բուլգակով... բուզա — այնպիսի մարդկանց գործունեության մի ձև, որոնք խանգարում էին ամեն տեսակ գործունեության...

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Հիսուն տարի առաջ նրա այդ «գործունեությունը» քիչ մնաց մի կյանք խլեր։ Ես նույնիսկ հասա... ինքնասպանության փորձի։

ՊՐՈՖԵՍՈՐ

Ինքնասպանությո՞ւն։ Ի՞նչ ասել է «ինքնասպանություն»։ (Փնտրում է բառարանում:) Ինքնահարկում, ինքնակալություն, ինքնառեկլամ, ինքնախտացում... Գտա «ինքնասպանություն»-ը (Զարմանքով): Դուք կրակել եք ձեզ վրա՞։ Դատավճի՞ռ։ Դա՞տ։ Հեղափոխական տրիբունա՞լ։

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ոչ... Ես ինքս։

ՊՐՈՖԵՍՈՐ

Ինքնե՞րդ։ Անզգուշությունի՞ց։

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ոչ... Սիրուց։

ՊՐՈՖԵՍՈՐ

Անմտությո՛ւն... Սիրուց պետք է կամուրջներ կառուցել ու երեխաներ ծնել... Իսկ դուք... Այո՛։ Այո՛։ Այո՛։

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ազատեցեք ինձ, ես, իսկապես, չեմ կարող։

ՊՐՈՖԵՍՈՐ

*Հենց այդ էլ կոչվում է... Ինչպե՞ս ասացիք... Բուլա։ Այո՛։ Այո՛։ Այո՛։ Այո՛։ Բուլա։ Հասարակությունը առաջարկում է դրսևորել ձեզ մոտ եղած բոլոր զգացմունքները, որպեսզի նոր բերված սուբյեկտը առավելագույն դյուրությամբ հաղթահարի անաբիոզային հիսուն տարիները։ Այո՛։ Այո՛։ Այո՛։ Այո՛։ Ձեր ներկայությունը հույժ, հույժ կարևոր է։ Ուրախ եմ, որ դուք գտնվեցիք և եկաք։ Նա կլինի ինքը։ Իսկ դուք՝ կլինեք դուք։ Ասացեք, իսկ նրա թարթիչները փափո՞ւկ էին։ Հո արագ վերակենդանացման դեպքում չեն ջարդվի։*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Ընկե՛ր պրոֆեսոր, ես ինչպե՞ս կարող եմ հիշել հիսուն տարի առաջ եղած թարթիչները...*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Ինչպե՞ս... Հիսուն տարի առա՞ջ։ Այդ երեկ էր... Հապա ես ինչպե՞ս եմ հիշում կես միլիոն տարի առաջ ապրած մաստոդոնտի պոչի մազերի գույնը։ Այո՛։ Այո՛։ Այո՛։ Իսկ դուք չե՞ք հիշում՝ գրգռված հասարակության մեջ շնչելիս նա ռունգերը ուժե՞ղ էր փքում...*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Ընկեր պրոֆեսոր, ինչպե՞ս կարող եմ հիշել։ Արդեն երեսուն տարի է՝ նման դեպքերում ոչ ոք ռունգերը չի փքում։*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Այդպես։ Այդպես։ Այդպես։ Իսկ դուք տեղյակ չե՞ք ստամոքսի և լյարդի ծավալին, ի նկատի ունենալով սպիրտի և օղու հնարավոր քանակության զատումը, որոնք կարող են բռնկվել անհրաժեշտ բարձր վոլտաժի պայմաններում։*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Որտեղի՞ց կարող եմ հիշել, ընկեր պրոֆեսոր։ Հիշում եմ, կար ինչ-որ փոր...*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Ախ, դուք ոչինչ չեք հիշում, ընկեր Բերյոզկինա։ Գոնե հիշեցեք՝ տաքարյո՞ւն էր նա արդյոք։*



ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Չգիտեմ... Հնարավոր է, բայց... միայն ոչ ինձ հետ։*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Այդպես։ Այդպես։ Այդպես։ Ես վախենում եմ, որ մենք ետ ենք բերում նրան, բայց առայժմ սառել եք դուք։ Այո։ Այո... Դե՛, սկսում ենք։*

Սեղմում է կոճակը, ապակյա պատը հանդարտ ետ է գնում: Մեջտեղում, վիրահատման սեղանի վրա, մարդահասակ ցինկապատ փայտյա մի արկղ: Արկղը ծորակներ ունի, ծորակների տակ՝ դույլեր: Արկղին միացված են էլեկտրական հաղորդալարեր: Թթվածնի գլաններ: Արկղի շուրջը վեց բ ժ ի շ կ, սպիտակազգեստ, հանգիստ: Արկղի առջև, նախաբեմում, վեց լվացարան: Անտեսանելի մետաղալարի վրա, ասես օդում, կախված է վեց սրբիչ:

ՊՐՈՖԵՍՈՐ

(բժշկից բժիշկ անցնելով, ասում է)

Առաջինին

*Հոսանքը միացնել իմ ազդանշանով։*

Երկրորդին

*Ջերմությունը հասցրեք մինչև 36,4՝ յուրաքանչյուր տասներորդականը տասնհինգ վայրկյանում։*

Երրորդին

*Թթվածնի բարձերը պատրաստ։*

Չորրորդին

*Ջուրը բաց թողնել աստիճանաբար, սառույցը փոխարինելով օդի ճնշմամբ։*

Հինգերորդին

*Կափարիչը մեկեն բանալ։*

Վեցերորդին

*Հայելու մեջ հետևել կենդանացման էտապներին։*

Բժիշկները խոնարհում են գլուխները ի նշան պարզության և գրավում իրենց տեղերը:

*Սկսում ենք։*

Միացվում է ռասանը, ննտեում են չերմաստիճանին: Կաթկթում է ջուրը:

Հայնլիավոր փոքրիկ աջ պատի մոտ ճայացքը սեեռած բժիշկը:

6-ՐԴ ԲԺԻՇԿ

*Երևան է գալիս բնական գույնը։*

Լռություն:

*Աղատված է սառույցից։*

Լռություն:

*Կուրծքը թրթռում է։*

Լռություն։

*Պրոֆեսոր, ուշադրություն դարձրեք անբնական պոռթկունությանը...*

ՊՐՈՖԵՍՈՐ

(մոտենում է, դիտում, հանգստացնող տոնով)

*Շարժումները նորմալ են, քորվում է, հավանորեն կենդանանում են նման ինդիվիդներին հատուկ պարազիտները։*

6-ՐԴ ԲԺԻՇԿ

*Պրոֆեսոր, անհասկանալի բան. ձախ ձեռքի շարժումով մարմնից բաժանվում է...*

ՊՐՈՖԵՍՈՐ

(դիտում է)

*Նա սերտաճել է երաժշտության հետ, նրանք այդ անվանում էին «զգայուն հոգի»։ Հնում ապրում էին Ստրադիվարիուսը և Ուտկինը։ Ստրադիվարիուսը պատրաստում էր ջութակներ, իսկ սա պատրաստում էր Ուտկինը և կոչվում էր կիթառ։*

Պրոֆեսորը դիտում է ջերմաչափը և արյան ճնշումը ռոոշող ապարատը:

1-ԻՆ ԲԺԻՇԿ

*36,1։*

2-ՐԴ ԲԺԻՇԿ

*Զարկերակը՝ 68։*



6-ՐԴ ԲԺԻՇԿ

*Շնչառությունը կանոնավորվեց։*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Տեղերո՛ւմ։*

Բժիշկները ճեռանում են արկղից: Կափարիչը վայրկենապ՝ ս եա է բնկնում, արկղի միջից բարձրանում է զզզված ու զարմացած Գրիսիպկինը, նայում է շուրջը, կիթառը սեղմելով կրծքին:

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Համա թե ընեցի, հա՜։ Ներեցեք, ընկերներ, իհարկե, խմած էի։ Սա միլիցիայի ո՞ր բաժանմունքն է։*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Ոչ, սա բոլորովին այլ բաժանմունք է։ Սա բաժանմունքն է մաշկային ծածկույթների, որ դուք ցրտահարել էիք...*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ի՞նչ։ Այդ դուք եք էն բանը ցրտահարել։ Դեռ կտեսնենք, թե մեզանից ո՞վ է հարբած։ Դուք, իբրև մասնագետ-բժիշկներ, ինքներդ եք մի գլուխ սպիրտների մոտ քարշ գալիս։ Իսկ ես ինձ, իբրև անձնավորություն, միշտ էլ կարող եմ* հավաստիացնել։ Փաստաթղթերն ինձ մոտ են։ (Վեր է թըռչում, զսպանները շուռ է տալիս:) *17 ռուբ. 60 կոպեկ կա ինձ մոտ։ Մո՞պր։ Տվել եմ։ Պաշըավիաքի՞մ։ Մուծել եմ։ «Կորչի անգրագիտությո՞ւնը»։ Խնդրեմ։ Ա՞յս ինչ է։ Ջագսի քաղվա՞ծքը։* (Շվացնում է:) *Ախր ես երեկ եմ ամուսնացել։ Որտե՞ղ եք դուք հիմի, ո՞վ է համբուրում ձեր մատները։ Համա՜ թե կհասցնեն ինձ տանը։ Խաչեղբայրների ստացականն այստեղ է։ Պրոֆմիության գրքույկն այստեղ է։* (Հայացքն ընկնում է օրացույցի վրա, տրորում է աչքերը, նայում չորս կողմը:) *1979 թվի մայիսի 12։ Այդ, ուրեմն, ինչքա՞ն ժամանակ պրոֆանդամավճար չեմ մուծել։ Հիսո՜ւն տարի։ Ախր տեղեկանք, տեղեկանք կպահանջեն։ Գավբաժին։ Կենտկոմ։ Աստվա՜ծ իմ։ Կնի՜կ։ Բա՛ց թողեք։* (Սեղմում է շրջապատողների ձեռքերը, նետվում դեպի դուռը:)

Նրան հետևում է անհանգստացած Բերյոզկինան։ Բժիշկները շրջապատում են պրոֆեսորին։

ԽՄԲՈՎ

*Այդ ի՞նչ էր անում նա ձեռքերով։ Տանում էր այստեղ ու քորում, տանում էր այնտեղ ու քորում...*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Հնում մի այդպիսի հակասանիտարական սովորություն կար։*

Վեց բժիշկներ և պրոֆեսորը մտախոհ լվանում են ձեռքերը։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(դեմ առնելով Զոյային)

*Իսկապես ասած, քաղաքացիներ, ովքե՞ր եք դուք։ Ո՞վ եմ ես։ Որտե՞ղ եմ ես։ Արդյոք դուք Զոյա Բերյոզկինայի մայրիկը չե՞ք։* (Շչակի ոռնոցը շուռ է տալիս Պրիսիպկինի գլուխը։) *Որտե՞ղ եմ ընկել։ Ո՞ւր են բերել ինձ։ Ի՞նչ բան է սա... Մոսկվա՞... Փարի՞զ... Նյու-Յո՞րք... Կառապա՜ն...*

Ավտոմոբիլային սիրենաների կանչեր։

*Ո՛չ մարդիկ կան, ո՛չ ձիեր։ Ավտոդորնե՜ր, ավտոդորնե՜ր, ավտոդորնե՜ր։* (Սեղմվում է դռանը, մեջքով քորվում, փրնտրում մատներով, ջուր է գալիս, տեսնում սպիտակ պատի վրա օձիքից քաշված փայտոջիլը։)

*Փայտոջի՛լ, փայտոջիլի՜կ, ջիլիկ-միլի՜կ...* (Ծլնգացնում է կիթառի լարերը, երգում։) *Ախ, մի գնա, մնա ինձ մոտ...* (Աշխատում է որսալ փայտոջիլը, բայց նա խույս է տալիս։) *Մենք բաժանվեցինք, ինչպես նավերը ծովում... Սողաց... Մենա՜կ։ Կառապան, ավտոդորներ... Լունաչարսկու փողոց, 17։ Առանց իրերի՛...* (Բռնում է գլուխը, ուշաթափ ընկնում դռնից ներս վազող Բերյոզկինայի ձեռքերի վրա։)

## VII

Բեմի մեջտեղը պուրակի եռանկյունի։ Պուրակում՝ երեք արհեստական ծառ։ Առաջին ծառ՝ կանաչ քառակուսի, տերևների վրա խոշոր ափսեներ, ափսեների մեջ՝ մանդարիններ։ Երկրորդ ծառ՝ թղթե ափ-



սեներ, ափսեների մեջ խնձորներ։ Երրորդը՝ կանաչ, եղևնու կոնռով, օծանելիքների բաց արկղներ։ Կողքերը՝ տների երեսպատված և ապակյա պատեր։ Եռանկյունու կողմերին՝ երկար նստարաններ։ Ներս է մտնում ռեպորտյորը, նրա ետևից՝ չորս հոգի. տղամարդիկ և կանայք։

ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Ընկերներ, այստե՛ղ, այստե՛ղ։ Դեպի ստվերը։ Ես ձեզ հերթով կպատմեմ բոլոր այդ մռայլ ու զարմանալի դեպքերի մասին։ Առաջին... Մանդարին տվեք ինձ։ Ճիշտ է վարվում քաղաքային ինքնավարությունը, որ այսօր ծառերը մանդարինում են, թե չէ երեկ միայն տանձեր էին՝ ոչ հյութեղ, ոչ համեղ, ոչ սննդարար...*

Աղջիկը ծառի վրայից վերցնում է մանդարինով ափսեն, նստածները մաքրում են, ուտում, հետաքրքրությամբ թեքված դեպի ռեպորտյորը։

1-ԻՆ ՏՂԱՄԱՐԴ

*Դե շուտ, ընկեր, պատմեցեք ամեն ինչ հերթով ու մանրամասն։*

ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Այսպես, ուրեմն... Ի՜նչ հյութեղ դիլիմներ են։ Չե՞ք ուզում... Դե լավ, լավ, պատմում եմ։ Էլ ո՜նց կլիներ, անհամբերություն։ Իհարկե, ինձ, իբրև ռեպորտաժի պրեզիդենտի, հայտնի է ամեն ինչ... Այսպես ահա, տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք...*

Արագ քայլվածքով անցնում է մի մարդ, ջերմաչափի բժշկական արկղիկը թևի տակ։

*Նա անասնաբույժ էր։ Համաճարակը տարածվում է։ Թողնված լինելով մենակ, այդ վերակենդանացված կաթնասունը շփման մեջ է մտնում երկնաքերի բոլոր տնային կենդանիների հետ, և այժմ բոլոր շները կատաղել են։ Նա սովորեցրել է նրանց կանգնել ետևի թաթերին։ Շները ոչ հաչում են, ոչ խաղում, այլ միայն ծառայում են։ Անասունները նեղում են բոլոր ճաշողներին, քծնում են, շողոքորթում։ Բժիշկները ասում են՝ այն մարդիկ, որոնց նման կենդանիները կկծեն, ձեռք կբերեն համաճարակային քծնանքի բոլոր նախանշանները։*

ՆՍՏԱԾՆԵՐ

*Օ՜-օ՜-օ՜։*

ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Տեսե՛ք, տեսե՛ք։*

Անցնում է երերացող մի մարդ, բեռնված գարեջրի շշերով լի զամբյուղներով։

ԱՆՑՈՐԴ

**(Երգում է)**

*Մարդիկ տասնիններորդ դարում*
*զարմանալի էին ապրում.*
*խմում՝ օղի ու գարեջուր,*
*կապտավուն քիթ, ոնց որ դամբուլ։*

ՌԵՊՈՐՏՅՈՐ

***Տեսեք***, *վերջացած, հիվանդ մարդ է։ Դա երկրորդ բժշկական լաբորատորիայի հարյուր յոթանասունհինգ բանվորներից մեկն է։ Անցման շրջանի գոյության թեթևացման նպատակով բժիշկները սահմանել են վերակենդանացած կաթնասունին սնել մի խառնուրդով, որը թունավոր է մեծ դոզաներով և զզվելի՝ փոքրով, այսպես կոչված գարեջրով։ Թունավոր հոլորշիացումներից նրանք գլխապտույտ զգացին և սխալմամբ խմեցին այդ զովացնող խառնուրդը։ Եվ այդ պահից բանվորների արդեն երրորդ խումբն են փոխում։ Հինգ հարյուր քսան բանվորներ պառկած են հիվանդանոցներում, բայց ժանտախտի ահավոր համաճարակը եռում է, փրփրում և հնձում է ոտքերը։*

ՆՍՏԱԾՆԵՐ

*Ա՜-ա՜-ա՜-ա՜։*

ՑՊԱՄԱՐԴ

**(Երազկոտ ու տանջահար)**

*Ես ինձ կզոհաբերեի գիտությանը՝ թող այդ հանելուկային հիվանդությամբ ինձ էլ պատվաստեն։*

ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Պատրա՛ստ է։ Սա էլ է պատրաստ։ Կամա՜ց... Մի՛ խըրտնեցրեք այդ լուսնոտին...*



Անցնում է աղջիկը, ոտերը խճճվում են ֆոքստրոտի և չարլստոնի պարաքայլում, շշնջալով ռոմանսներ է արտասանում առաջ պարզած ձեռքի երկու մատներին դրված գրքույկով։ Մյուս ձեռքի երկու մատների մեջ երեսակայական վարդ, մոտեցնում է ռունգերին ու ճոտոտում։

*Խեղճ աղջիկ, նա ապրում է այդ կատաղի կաթնասունի հարևանությամբ, և ահա գիշերը, երբ քաղաքը քնում է, հարևանի մեջ սկսում են նրա ականջին հասնել կիթառի ծլընպատի միջով սկսում են նրա ականջին հասնել կիթառի ծլընգոցներ, ապա երկար սրտակեղեք հագագներ ու երգեցիկ հեծկլտոցներ, ինչպե՞ս է կոչվում այդ նրանց մոտ։ «Ռոմա՞նս» է, թե ինչ... Մեկ-երկուս, դժբախտ աղջիկն սկսում է ցնորվել։ Վշտահար ծնողները կոնսիլիում են հրավիրում։ Պրոֆեսորներն ասում են, թե դա սուր «սիրահարվածության» նոպա է. այդպես է կոչվել այն հին հիվանդությունը, երբ խելացիորեն ողջ կյանքի վրա բաշխված մարդու սեռական էներգիան հանկարծ սրընթացորեն խտացվում է մեկ շաբաթվա մեջ, բորբոքուն մի պրոցեսում, առաջնորդելով դեպի անհավատալի ու խելահեղ արարքներ։*

ԱՂՋԻԿ

(աչքերը ծածկում է ձեռքերով)

*Ավելի լավ է չնայեմ. զգում եմ, թե ինչպես են օդի միջով պտտվում այդ սարսափելի սիրահարված մանրէները։*

ՌԵՊՈՐՏՅՈՐ

*Պատրաստ է, սա էլ է պատրաստ... Համաճարակը ծավալվում է։*

30 զ ե ր լ ս անցնում են պարելով։

*Նայեցեք այս երեսնագլուխ վաթսունոտնանուն։ Պատկերացրեք, որ այս ոտնակարկառումը սրանք* (**ճանդիսատեսներին**) *անվանել են արվեստ։*

ՖՈՔՍՏՐՈՏՈՂ ԶՈՒՅԳ

*Համաճարակը հասել է... հասել... Ինչի՞ն է հասել։* (Նայում է բառարանը։) *Ա-պո-գեյին... Դե... այս արդեն երկսեռ չորքոտանի է։*

Ներս է ընկնում կենդաբանական այգու դ ի ր ե կ տ ո ր ը, ձեռքին մի փոքրիկ ապակյա արկղիկ։ Դիրեկտորի ետևից՝ ամբոխ, զինված դիտափողերով, ֆոտոապարատներով և հրշեջ սանդուղքներով։

ԴԻՐԵԿՏՈՐ

(բոլորին)

*Տեսա՞ք։ Տեսա՞ք։ Որտե՞ղ է նա։ Ախ, դուք ոչինչ չեք տեսել։ Որսորդների ջոկատն հայտնեց, որ նրան տեսել են այստեղ քառորդ ժամ առաջ. նա բարձրացել էր չորրորդ հարկ։ Եթե միջին արագությունը հաշվենք ժամում մեկ և կես մետր, նա հեռու չէր կարող գնալ։ Ընկերներ, անհապաղ զննեցեք պատերը։*

Դիտորդները հանում են փողերը: Նստարաններից ցատկում են, դիտում են՝ ձեռքերը աչքերի վրա պահած: Դիրեկտորը բաշխում է խմբերը, որոնումները ղեկավարում:

ՁԱՅՆԵՐ

*Մի՞թե նրան կգտնես... Անհրաժեշտ է ամեն մի պատուհանում սավանին պառկած մերկ մարդ դնել՝ նա կվազի մարդու վրա...*

*Մի՛ դողդողար, կվախեցնեք...*
*Եթե ես գտնեմ, ոչ ոքի չեմ տա...*
*Իրավունք չունես. դա կոմունալ ունեցվածք է...*

ՑՆԾԱԳԻՆ ՁԱՅՆ

*Գտա՜։ Ահա՛։ Սողում է...*

Հեռադիտակներն ու դիտափողերն ուղղված են մի կետի: Լռություն, որը ընդհատվում է ֆոտո և կինոապարատների չխկոցներով:

ՊՐՈՖԵՍՈՐ

(խեղդված շշուկով)

*Այո... Այդ նա է... Դարաններ դրեք ու պահպանություն։ Հրշեջներ, այստե՛ղ։*

Մարդիկ ցանցերով շրջապատում են վայրը: Հրշեջները բացում են սանդուղքը, մարդիկ մագլցում են իծաշարուկ:

ԴԻՐԵԿՏՈՐ

(ցած թողնելով դիտափողը, արտասվաձայն)

*Փախա՜վ... Անցավ հարևան պատի վրա... Ցած կընկնի՝ ջարդուփշուր կլինի։ Խիզախնե՛ր, կամավորնե՛ր, հերոսնե՛ր։ Այստե՛ղ։*



Սանդուղքը բաց են անում երկրորդ պատի մոտ, մագլցում են: Հանդիսատեսները խառնվում են,

ՑՆԾԱԳԻՆ ՁԱՅՆ ՎԵՐԵՎԻՑ

*Բռնեցի՛։ Ուռա՜։*

ԴԻՐԵԿՏՈՐ

*Շո՛ւտ։ Զգո՜ւյշ... Բայց մի թողեք, մի՛ ճմլեք կենդանու թաթիկները...*

Սանդուղքի վրայից ձեռքից ձեռք են տալիս միջատին, որը վերջապես հայտնվում է դիրեկտորի ձեռքում: Դիրեկտորը միջատին փակում է արկղիկում և արկղիկը բարձրացնում գլխավերևում:

*Շնորհակալություն ձեզ, գիտության անփոխարինելի աշխատավորներ։ Մեր կենդանաբանական այգին երջանիկ է... Մենք բռնել ենք արդեն բնաջնջված, բայց դարասկզբին խիստ հանրահայտ միջատի հազվագյուտ մի օրինակ։ Մեր քաղաքը կարող է հպարտանալ՝ գիտնականներն ու տուրիստները կսկսեն հոսել այստեղ... Այստեղ, իմ ձեռքում է միակ կենդանի «փայտոջիլուս նորմալիսը»։ Հեռացեք, քաղաքացիներ, կենդանին քնեց, կենդանին խաչել է թաթիկները, կենդանին ուզում է հանգստանալ։ Ես ձեզ բոլորիդ հրավիրում եմ կենդանաբանական այգու հանդիսավոր բացմանը։ Բռնելու կարևորագույն, տագնապալից գործողությունն ավարտված է։*

## III

Սենյակի հարթ, օպալե, կիսաթափանցիկ պատեր: Վերևից, կառնիզի տակից, կապտավուն լույսի հավասար մի շերտ: Ձախից մեծ պատուհան: Պատուհանի դիմաց՝ գծագրական սեղան: Ռադիո, էկրան: Երեք-չորս գիրք: Աջ կողմը պատից հեռացրած մահճակալ, մահճակալին, մաքրագույն վերմակի տակ, կեղտոտագույն Պ ր ի ս ի պ կ ի ն: Օդափոխիչներ: Պրիսիպկինի շուրջը ամենայնը կեղտոտված է: Սեղանին ծխախոտի մնացորդներ, ընկած շշեր: Լամպին վարդագույն թղթի մի պատառ: Պրիսիպկինը տնքում է: Բժիշկը ջղայնորեն քայլում է սենյակում:

ՊՐՈՖԵՍՈՐ

(ներս է մտնում)

*Ինչպե՞ս են հիվանդի գործերը։*

ԲԺԻՇԿ

*Հիվանդինը՝ չգիտեմ, իսկ իմը՝ զզվելի են։ Եթե կես ժամը մեկ հերթափոխ չսահմանեք, բոլորին կվարակի։ Հենց որ արտաշնչում է, ոտքերս սկսում են ծալվել։ Արդեն յոթ օդափոխիչ եմ դրել՝ շունչը դուրս մղելու։*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Օ՜-օ՜-օ՜։*

Պրոֆեսորը նետվում է դեպի Պրիսիպկինը:

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Պրոֆեսոր, օ՜, պրոֆեսոր։*

Պրոֆեսորը մոտենում է և, գլխապտույտ զգալով, ետ ցատկում, ձեռքերն օդում տարուբերելով:

*Մի բան տվեք խումարությունից դուրս գամ...*

Պրոֆեսորը մի քիչ զարեջուր է լցնում բաժակի մեջ, հրամցնում։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(բարձրանում է արմունկներին: Հանդիմանանքով)

*Հարություն են տվել... և ձեռ են առնում։ Սա ի՞նչ է ինձ համար. ոնց որ լիմոնադը՝ փղին...*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Հասարակությունը հուսով է զարգացնել քեզ մինչև մարդու աստիճան։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Սատանան ձեզ հետ ու ձեր հասարակության։ Ես ձեզ չխնդրեցի ինձ հարություն տալ։ Նորից ետ սառեցրեք։ Հապա՜...*

ՊՐՈՖԵՍՈՐ

*Չեմ հասկանում ինչի՞ մասին ես խոսում։ Մեր կյանքը պատկանում է կոլեկտիվին, և ոչ ես, ոչ էլ որևէ մեկ ուրիշը չեն կարող այդ կյանքը...*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Ախր ի՞նչ կյանք է այդ, երբ նույնիսկ սիրածդ աղջկա նկարը չի կարելի պատին փակցնել։ Բոլոր կնոպկաները ջարդվում են անիծյալ ապակու վրա... Ընկեր պրոֆեսոր, մի բան տվեք խումարությունից դուրս գամ։*



ՊՐՈՖԵՍՈՐ

(լցնում է բաժակը)

*Միայն թե իմ կողմը մի շնչեք։*

Ներս է մտնում Զոյա Բերյոզկինան երկու կիտուկ գրքերով: Բժիշկները շշուկով խոսում են նրա հետ, դուրս են գնում:

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

(նստում է Պրիսիպկինի մոտ, հանում գրքերը)

*Չգիտեմ, սա պետք կգա՞ արդյոք։ Ինչ որ ասում էիր, չկար, և ոչ ոք էլ այդ մասին չգիտի։ Վարդերի մասին կա միայն այգեգործության դասագրքում, անուրջներ կան միայն բժշկության մեջ, երազների բաժնում։ Ահա մոտավորապես այն ժամանակի երկու խիստ հետաքրքրական գիրք։ Թարգմանություն անգլերենից. Հուվեր, «Ինչպե՞ս պրեզիդենտ դարձա»։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(վերցնում է գիրքը, շպրտում)

*Ոչ, սա սրտի համար չի, հարկավոր է այնպիսին, որ սիրտը նվաղի...*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Ահա երկրորդը՝ ինչ-որ Մուսոլինի. «Նամակներ աքսորից»։*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

(վերցնում է, նետում)

*Ոչ, ախր սա հոգու համար չի։ Ձեռ քաշեք դուք ձեր կոպիտ ագիտկաներով։ Պետք է այնպիսին, որ կսկծացնի...*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

*Չգիտեմ, թե սա ի՞նչ բան է։ Նվաղի, կսկծացնի... կսկծացնի, նվաղի...*

ՊՐԻՍԻՊԿԻՆ

*Այս ի՞նչ բան է։ Ինչի՞ համար էինք աշխատում, արյուն թափում, երբ ես, հեգեմոնս, ուրեմն, իմ հասարակության մեջ նոր սովորածս պարն էլ պարել չեմ կարող։*

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ես ձեր մարմնի շարժումը ցույց տվեցի նույնիսկ շարժումների կենտրոնական ինստիտուտի դիրեկտորին։ Նա ասաց, որ նման բան տեսել է փարիզյան բացիկների հին հավաքածուներում, իսկ այժմ, ասաց, չկա նույնիսկ մեկը, որին հարցնես դրա մասին։ Մի զույգ ծերունիներ կան՝ հիշում են, բայց ցույց տալ չեն կարող ռևմատիզմի պատճառով։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Էլ ուրեմն ես ինչո՞ւ էի ինձ համար ժառանգական նրբագեղ կրթություն մշակում։ Աշխատել ես հո մինչև հեղափոխությունն էլ կարող էի։

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Ես վաղը քեզ կտանեմ տասը հազար բանվոր-բանվորուհիների պարին։ Շարժվելու են հրապարակով մեկ։ Դա դաշտային աշխատանքների նոր սիստեմի մի ուրախ փորձ է լինելու։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Ընկերնե՛ր, ես բողոքում եմ։ Ես հո նրա համար չհալվեցի, որ դուք հիմա չորացնեք ինձ։ (Նետում է վերմակը, վեր է թռչում, վերցնում է գրքի կիտուկը և թափ տալիս ծրարի միջից։ Ուզում է թուղթը պատռել և հանկարծ զննում է տառերը, լապտերից լապտերի մոտ վազելով։) Ո՞րտեղից։ Ո՞րտեղից եք վերցրել դուք այս...

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

Փողոցում բաժանում էին բոլորին... Երևի, գրադարանում են դրել գրքերի մեջ։

ՊՐԻՍԻՊԿԻՆ

Փրկվա՛ծ եմ։ Ուռա՜... (Նետվում է դեպի դուռը, դրոշակի նման ծածանելով թուղթը)։

ԶՈՅԱ ԲԵՐՅՈԶԿԻՆԱ

(մենակ)

Ես հիսուն տարով սրանից առաջ եմ անցել, մինչդեռ կարող էի, այդ հիսուն տարին չապրած, մեռնել այս նողկանքի պատճառով։



IX

Կենդանաբանական այգի։ Մեջտեղում պատվանդանին վանդակ, զարդարված կառոններով ու դրոշներով։ Վանդակի ետևում երկու ծառ։ Ծառերի ետևում փղերի և ընձուղտների վանդակներ։ Վանդակից ձախ՝ ամբիոն, աջ՝ բարձրություն՝ պատվավոր հյուրերի համար։ Չորս կողմ երաժիշտներ։ Խումբ-խումբ մտնում են հանդիսատեսներ։ Ժապավենակիր կարգադրիչները դասավորում են մոտեցողներին՝ ըստ զբաղմունքի և հասակի։

ԿԱՐԳԱԴՐԻՉ

Ընկեր օտարերկրյա թղթակիցներ, այստե՛ղ։ Ավելի մոտ ամբիոններին։ Մի կողմ քաշվեցեք ու տեղ տվեք բրազիլացիներին։ Նրանց աերոնավն այժմ վայրէջք է կատարում կենտրոնական աերոդրոմում։ (Ետ-ետ է գնում, դիտում։) Ընկեր նեգրեր, կանգնեցեք անգլիացիների հետ մեկընդմեջ գեղեցիկ գունավոր խմբերով. անգլոսաքսոնական ճերմակությունը ավելի կընդգծի ձեր ձիթապտղի սևությունը... Բուհերի ուսանողներ՝ ձախ, հարյուրամյակների միությունից ձեզ մոտ են ուղարկված երեք պառավ և երեք ծերունի։ Նրանք պրոֆեսորների բացատրությունները կլրացնեն ականատեսների պատմությամբ։

Սայլակներով ներս են գալիս ծերունիներ ու պառավներ։

1-ԻՆ ՊԱՌԱՎ

Այսօրվա պես հիշում եմ...

1-ԻՆ ԾԵՐՈՒՆԻ

Ոչ, այդ ես եմ այսօրվա պես հիշում։

2-ՐԴ ՊԱՌԱՎ

Դուք հիշում եք այսօրվա պես, իսկ ես հիշում եմ, ինչպես առաջ։

2-ՐԴ ԾԵՐՈՒՆԻ

Իսկ ես ինչպես այսօր հիշում եմ, ինչպես առաջ։

3-ՐԴ ՊԱՌԱՎ

Իսկ ես հիշում եմ, ինչպես ավելի առաջ, բոլորովին, բոլորովին առաջ։

3-ՐԴ ՄԵՐՈՒՆԻ

*Իսկ ես հիշում եմ և՛ ինչպես այսօր, և՛ ինչպես առաջ։*

ԿԱՐԳԱԴՐԻՉ

*Կամաց, ականատեսներ, մի սվսվացրեք։ Ետ քաշվեք, ընկերներ, ճամփա տվեք երեխաներին։ Այստեղ, ընկերներ։ Շտապեցեք։ Շտապեցեք։*

ԵՐԵԽԱՆԵՐ

**(Քայլում են սյունաշարով, երգում)**

*Սովորում ենք*
*միշտ շատ լավ,*
*դասը սերտում ենք մենք։*
*Հետո էլ*
*բոլորից մենք լավ*
*զբոսնել*
*գիտենք։*
*Իքսերը*
*և իգրեկները*
*վաղուց*
*հանձնել ենք ձեզ։*
*Գնում ենք այնտեղ,*
*ուր վագրերն են*
*և փղերն են հեզ։*
*Այստեղ,*
*ուր շատ գազաններ կան,*
*մեծերի հետ,*
*խնդուն,*
*մենք այգին ենք*
*կենդանաբանական*
*գնում,*
*գնում*
*գնում։*

ԿԱՐԳԱԴՐԻՉ

*Քաղաքացիներ, էքսպոնատներին բավականություն պատճառել ցանկացողները, այլև դրանք գիտական նպատակներով օգտագործել կամեցողները թող բարեհաճեն ձեռք բերել*



*դոզավորված էկզոտիկ մթերքներ և գիտական գործիքներ միայն կենդանաբանական այգու պաշտոնական ծառայողներից։ Դոզաների խնդրում դիլետանտությունը և չափազանցությունը մահացու են։ Խնդրում ենք օգտվել միայն այն մթերքներից ու գործիքներից, որ բաց է թողնվել բժշկական կենտրոնական ինստիտուտի և ճշգրիտ մեխանիկայի քաղաքային լաբորատորիաների կողմից։*

Այգու միջով և պատռնով անցնում են կենդանաբանական այգու ծ ա ռ ա յ ո ղ ն ե ր ը։

1-ԻՆ ԾԱՌԱՅՈՂ

*Անմիտ բան է*
*մանրէն զննել,*
*ձեռքը դարձրած բռունցք։*
*Ընկերներ,*
*վերցրեք*
*միկրոսկոպ ու խոշորացույց։*

2-ՐԴ ԾԱՌԱՅՈՂ

*Բժիշկ Տոբոլկինը*
*խորհուրդ է տալիս*
*թքոտվելու դեպքում՝*
*լուծույթ կարբոլկայի։*

3-ՐԴ ԾԱՌԱՅՈՂ

*էքսպոնատների կերակրումը,*
*անմոռա՜ց պատկեր։*
*Վերցրեք*
*նիկոտինի և ալկոհոլի*
*դոզաներ։*

4-ՐԴ ԾԱՌԱՅՈՂ

*Խմեցրեք ալկոհոլ,*
*և կենդանիներն անթիվ*
*ապահովված են*
*ապուշությամբ*
*և լայնացմամբ լյարդի։*

5-ՐԴ ԾԱՌԱՅՈՂ

Կրակի մեխակը
    և վարդը ծխոտ
Երաշխիք են
    կարծրախտի 100 տոկոսանոց։

6-ՐԴ ԾԱՌԱՅՈՂ

Ականջներդ զինված պահեցեք,
    մարդիկ։
Ականջականները
    բռնում են
        խոսքերը գռեհիկ։

ԿԱՐԳԱԴՐԻՉ

(մաքրում է ֆաղսովետի ամբիոնի ճանապարհը)

Ընկեր Նախագահը և նրա մերձավորագույն աշխատակիցները թողել են իրենց կարևորագույն աշխատանքը և պետական հինավուրց քնչլերգի տակ ժամանել մեր հանդեսին։ Ողջունում ենք մեր թանկագին ընկերներին։

Բոլորը ծափահարում են, անցնում է մի խումբ՝ պորտֆելներով, մեծալրջությամբ գլուխ տալով ու երգելով:

ԲՈԼՈՐԸ

Բեռն աշխատանքի
մեզ չի կնճռոտել։
Գործին
    ժամեր տանք լի,
խաղին՝
    րոպեներ։
Ողջույն ձեզ
    այս առթիվ,
որսորդներ հերոս։
Հայրերս քաղաքի
հպարտ ենք
    ձեզնով։

ՆԱԽԱԳԱՀ

(բարձրանում է ամբիոն, թափահարում դրոշը, բոլորը լռում են)



Ընկերներ, տոնախմբությունը հայտարարում եմ բացված։ Մեր տարիները հղի են ներքին կարգի խորին ցնցումներով ու ապրումներով։ Արտաքին իրադարձությունները հազվադեպ են։ Նախընթաց դեպքերից հոգնած մարդկությունը նույնիսկ ուրախ է այս համեմատական հանգստության համար։ Սակայն մենք երբեք չենք հրաժարվում այն տեսարանից, որը, արտաքնապես ֆեերիական լինելով, ծիածանագույն փետրավորման տակ թաքցնում է գիտական խորը իմաստ։ Ցավալի դեպքերը մեր քաղաքում, որ հետևանք էին երկու պարազիտների այնտեղ լինելու անզգույշ թողտվության, իմ ուժերով և համաշխարհային բժշկության ուժերով վերացված են։ Սակայն այդ դեպքերը, իբրև անցյալի թույլ հիշեցում, ընդգծում են սարսափը տապալված ժամանակի և բանվոր մարդկության կուլտուրական պայքարի հզորությունն ու դժվարությունը։

Թող մեր երիտասարդության սիրտն ու հոգին կոփվեն այդ չարագուշակ օրինակներով։

Չեմ կարող շնորհակալությամբ չնշել և խոսքը չտալ մեր ֆառապանծ դիրեկտորին, որը կռահեց տարօրինակ երևույթների իմաստը, կործանարար երևույթներից ժամանակի գիտական և ուրախ ժամանցի հետևություններ արավ։

Ուռա՛։

Բոլորը բղավում են «ուռա», երաժշտությունը տուշ է նվագում, գլուխ տալով ամբիոն է բարձրանում կենդանաբանական այգու դ ի ր ե կ տ ո ր ը:

ԴԻՐԵԿՏՈՐ

Ընկերներ, ես ուրախ եմ և հուզված ձեր ուշադրությունից։ Հաշվի առնելով նաև իմ մասնակցությունը, այնուամենայնիվ չեմ կարող շնորհակալություն չհայտնել որսորդների միության անձնուրաց աշխատավորներին, որոնք պարազիտ բռնելու անմիջական հերոսներն են, այլև հարության ինստիտուտի հարգելի պրոֆեսորին, որը հաղթահարեց սառցամահը։ Չնայած չեմ կարող չնշել նաև, որ հարգելի պրոֆեսորի առաջին սխալը հայտնի աղետների անուղղակի պատճառը եղավ։ Դատելով արտաքին միմիկրիայի նշաններից,— կոշտուկներից, հագուստից և այլն,— հարգելի պրոֆեսորը

կենդանացրած կաթնասունին սխալմամբ դասում էր «Հոմո սապիենս»-ի և սրա բարձրագույն տեսակի՝ բանվոր դասակարգի կարգը։ Հաջողությունը չեմ վերագրում բացառապես կենդանիների հետ իմ երկարատև շփմանը և նրանց հոգեբանության մեջ թափանցելուն։ Ինձ օգնեց առիթը։ Անսրող, ենթագիտակցական հույսը պնդում էր. «Գրիր, տուր, հրապարակիր հայտարարություն»։ Եվ ես տվի.

«Ելնելով կենդանաբանական այգու սկզբունքներից, փնտրում եմ մարդկային կենդանի մի մարմին՝ մշտապես խնայելու համար, և սովորական, նորմալ պայմաններում պահպանելու ու զարգացնելու համար նարերս ձեռք բերած միջատին»։

ՁԱՅՆ ԱՄԲՈԽԻ ՄԻՋԻՑ

Ախ, ի՜նչ սարսափ...

ԴԻՐԵԿՏՈՐ

Համաձայնում եմ, որ սարսափելի է, ես ինքս էլ չէի հավատում իմ սեփական աչքերիս, և հանկարծ... արարածը հայտնվում է։ Նրա արտաքինը համարյա մարդկային է... այո, ինչպես մենք ձեզ հետ...

ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

(զանգահարում է)

Ընկեր դիրեկտոր, ես ձեզ կարգի եմ հրավիրում։

ԴԻՐԵԿՏՈՐ

Ներեցեք, ներեցեք։ Ես, ի՛հարկե, խսկույն եմ հարցման և համեմատական զարդանագրության միջոցով համոզվեցի, որ մենք գործ ունենք անհավոր մարդակերպ սիմուլյանտի հետ, և որ դա ամենաապշեցուցիչ պարազիտն է։ Մանրամասնությունների մեջ չեմ մտնի, մանավանդ որ դրանք կկանգնեն ձեր աչքի առաջ մի քիչ հետո, իմ պատմով ապշեցուցիչ այս վանդակում։

Դրանք երկուսն են՝ չափերով տարբեր, բայց միևնույնը ըստ էության. դրանք են նշանավոր «փայտոջիլուս նորմալիսը» և... և «քաղքենիուս վուլգարիսը»։ Երկուսն էլ ապրում են ժամանակի նեխած ավանններում։



«Փայտոջիլուս նորմալիսը», սնվելով ու շաղանալով մեկ մարդու մարմնի վրա, գլորվում է մահճակալին։

«Քաղքենիուս վուլգարիսը», սնվելով ու շաղանալով ամբողջ մարդկության մարմնի վրա, գլորվում է մահճակալին։

Ահա ամբողջ տարբերությունը։

Երբ հեղափոխության աշխատավոր մարդկությունը թոթափվում էր ու ցղաձգվում, իր վրայից մաքրելով կեղտը, նրանք այդ նույն կեղտի մեջ իրենց համար բույն էին հյուսում ու տնակներ շինում, ծեծում էին կանանց, երդվում Բեբելով և հանգստանում ու ցնծում էին սեփական գալիֆեների վրանում։ Բայց «քաղքենիուս վուլգարիսը» ավելի սարսափելի է։ Իր հրեշավոր միմիկրիայով նա հրապուրում է կծոտվածներին, ձևանալով մերթ ոտանավորաթուխ ճպուռ, մերթ ռոմանսերգու թռչուն։ Այն ժամանակներում նրանց հագուստն անգամ միմիկրիական էր. թռչնային կերպարանքի, թիկնոց և պոչազգեստ, ճերմա՜կ-ճերմակ օսլայած կրծքով։ Այդպիսի թռչնակները բույն էին հյուսում թատրոնների օթյականներում, բարձրանում օպերաների հարթակները ինտերնացիոնալի տակ, բոլշևիկներում ոտքերն իրար քսելով քորվում, ճյուղերին ոտանավորներ քաշ տալիս, Տոլստոյին խուզում ըստ Մարքսի, ձայնում ու ոռնում էին զայրացուցիչ չափերով և... ներեցեք արտահայտությանս, բայց մենք եկել ենք գիտական վեկուցման, ապականում էին այնպիսի չափերով, որոնք չեն կարող դիտվել իբրև թռչնային մանր տհաճություն։

Ընկերներ։ Ասենք... ինքներդ համոզվեցեք։

Նշան է տալիս, ծառայողները մերկացնում են վանդակը, պատվանդանին փայտոջիլի արկղիկը, նրա ետևում բարձրության՝ երկտեղ մահճակալով. Մահճակալին Պրիսիպկինը կիթառով։ Վանդակի վերևից կախ է տրված դեղին լուսամփոփով մի լամպ։ Պրիսիպկինի գլխավերևում բացիկների փայլուն պսակ՝ ճոկհար։ Շշերը՝ գրված և թափված ճառակին։ Վանդակը շրջապատված է թքամաններով։ Վանդակի պատերին՝ մակագրություններ, կողքերից՝ ֆամիչներ ու օդափոխիչներ։ Մակագրություններ. 1. «Զգույշ, թքում է»։ 2. «Առանց զեկուցման ներս չմտնել»։ 3. «Պահպանեցեք ականջներդ, հայհոյում է»։ Երաժշտությունը նվագում է տուշ. լուսավորությունը՝ բենգալյան. ներս ընկնող բազմությունը մոտենում է, հիացմունքից ճար կտրելով։

**ՊՐԻՍԻՊԿԻՆ**

*Լունաչարսկու փողոցում*
*կար հինավուրց մի տուն,*
*աստիճանները լայն ու մութ,*
*լուսամուտները սիրուն։*

**ԴԻՐԵԿՏՈՐ**

*Ընկերներ, մոտեցեք, մի վախեցեք՝ նա բոլորովին հանդարտ է։ Մոտեցեք, մոտեցեք։ Մի անհանգստացեք. կողքերին դրված չորս քամիչներ հայհոյանքները պահում են վանդակի ներսում, դուրս թողնելով միայն փոքրաքանակ ու լիովին արժանավայել խոսքերը։ Քամիչներն ամեն օր մաքրվում են հակագազեր հագած հատուկ ծառայողների կողմից։ Նայեցեք, նա հիմա կսկսի այսպես կոչված «ծխել»։*

Ձայն ամբոխի միջից:

*Ահ, ի՜նչ սարսափ։*

**ԴԻՐԵԿՏՈՐ**

*Մի վախեցեք, հիմա նա կսկսի այսպես կոչված «ոգեշնչվել»։ Սկրիպկին, կոնծեցե՛ք։*

Սկրիպկինը ձեռքը պարզում է օղու շշին:

**ՁԱՅՆԵՐ ԱՄԲՈԽԻ ՄԻՋԻՑ**

*Ահ, հարկավոր չի, հարկավոր չի, մի տանջեք խեղճ անասունին։*

**ԴԻՐԵԿՏՈՐ**

*Ընկերներ, ախր դա բոլորովին սարսափելի չէ. նա ձեռնասուն է։ Նայեցեք, ես հիմա նրան դուրս կբերեմ ամբիոն։* (Գնում է դեպի վանդակը, հագնում ձեռնոցները, պիստոլետները զննում, բացում է դուռը, դուրս բերում Սկրիպկինին, կանգնեցնում ամբիոնին, դեմքով շուռ տալիս դեպի պատվավոր հյուրերի տեղերը:) *Հապա, ասացեք որևէ համառոտ բան, նմանեցնելով մարդկային արտահայտությանը, ձայնին ու լեզվին։*

**ՍԿՐԻՊԿԻՆ**

(Հնազանդորեն կանգնում է, հազում, բարձրացնում է կիթառը և հանկարծ շուռ է գալիս, մի հայացք նետում հանդիսասրահին: Սկրիպկինի դեմքը փոխվում է, դառնում սքանչացած: Սկրիպկինը մի կողմ է հրում դիրեկտորին, կիթառը նետում և բղավում դեպի հանդիսասրահ:)

*Քաղաքացինե՛ր։ Եղբայրնե՛ր։ Իմ հարազատնե՛ր։ Որտեղի՞ց։ Ինչքա՞ն եք դուք։ Բոլորի՞դ ե՞րբ հալեցին, ետ բերեցին։ Ինչո՞ւ եմ մենակ ե՛ս վանդակում։ Հարազատներ, եղբայրներ, համեցեք ինձ մոտ։ Ինչի՞ համար եմ ես տանջվում։ Քաղաքացինե՛ր։*

**ՀՅՈՒՐԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ**

*Երեխաներին, երեխաներին դուրս տարեք...*
*Դնչակալ... դնչակալ հագցրեք...*
*Ահ, ի՜նչ սարսափ...*
*Պրոֆեսոր, վե՛րջ տվեք...*
*Ահ, միայն մի կրակեք...*

Դիրեկտորը օդափոխիչով, երկու ծառայողների ուղեկցությամբ վազում է էստրադա: Ծառայողները ճաշ են տալիս Սկրիպկինին: Դիրեկտորը օդափոխում է ամբիոնը: Երաժշտությունը նվագում է տուշ: Ծառայողները փակում են վանդակը:

**ԴԻՐԵԿՏՈՐ**

*Ներեցեք, ընկերներ... Ներեցեք... Միջատը հոգնեց։ Աղմուկը և լուսավորությունը նրան հալյուցինացիայի մեջ գցեցին։ Հանգստացեք։ Ոչինչ չկա։ Վաղը նա կհանդարտվի... Ցրվեցեք մինչև վաղը։ Երաժշտությո՛ւն, մա՛րշ։*

*1928—1929*

Վերջ

# ԲԱՂՆԻՔ

## Դրամա վեց գործողությամբ, կրկեսով և հրավառությամբ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ընկեր Պոբեդոնոսիկով—*համաձայնեցման կառավարման գլխավոր պետ, համկառգլխպետ*
Պոլյա—*նրա կինը*
Ընկեր Օպտիմիստենկո—*նրա քարտուղարը*
Իսակ Բելվեդոնսկի—*դիմանկարիչ, մարտանկարիչ, բնանկարիչ*
Ընկեր Մոմենտալնիկով—*ռեպորտյոր*
Միստր Պոնտ Կիչ—*օտարերկրացի*
Ընկեր Ունդերտոն—*մեքենագրուհի*
Վատնիչ Նոչկին
Ընկեր Վելոսիպեդկին—*թեթևհեծելազորային*
Ընկեր Զուդակով—*գյուտարար*
Մադամ Մեզալյանսովա—*կուլտուրական կապի համամիութենական ընկերության (ВОКС) աշխատակցուհի*

Ընկեր Ֆոսկին, Ընկեր Դվոյկին, Ընկեր Տրոյկին—*բանվորներ*

Խնդրատուներ
Ռանկկոմի նախագահ
Ռեժիսոր
Իվան Իվանովիչ
Հիմնարկային ամբոխ
Միլիցիոներ
Կապելդիներ
Ֆոսֆորային կին



# I ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

**Աջ և ձախ՝ սեղաններ: Ամենուրեք կախ տված ու ամեն տեղ թափթփված գծագրեր: Մեջտեղում ընկեր Ֆ ո ս կ ի ն ը զոդալամպով զոդում է օդը:**

Զուդակովը լամպից լամպ է անցնում, զննելով գծագիրը:

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(ներս ընկնելով)

*Ինչ է, էլի՞ այդ սոսր Վոլգան թափվում է Կասպից ծովը։*

ԶՈՒԴԱԿՈՎ

(թափահարելով գծագիրը)

*Այո, բայց այժմ արդեն դա երկար չի տևի։ Ժամացույցդ գրավ դիր ու վաճառիր։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Լավ է, որ դեռ չեմ էլ գնել։*

ԶՈՒԴԱԿՈՎ

*Չգնե՛ս։ Ո՛չ մի դեպքում չգնես։ Շուտով այդ ճնկճնկացող տափակ հիմարությունը կդառնա ավելի ծիծաղելի, քան ցուլը Ավտոդոմարխը Դնեպրոշինում, ավելի անզոր, քան ցուլը Ավտոդոռում։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Ուրեմն, ծալեցի՞ր Շվեյցարիան։*

ԶՈՒԴԱԿՈՎ

*Լեզուդ մի չխկացրու այսօրվա քաղաքական մանր հաշվիչի վրա։ Իմ գաղափարը շատ ավելի վիթխարի է։ Մարդկային ժամանակի Վոլգան, որ նետել է մեզ մեր ծնունդը, ինչպես գերաններն են լողարկում, նետել է թպրտալու և լողալու հոսանքն ի վար, այդ Վոլգան այսուհետև ենթարկվում է մեզ։ Ես կստիպեմ ժամանակին և՛ կանգնել, և՛ սլանալ ուզածդ ուղղությամբ, ուզածդ արագությամբ։ Մարդիկ կարող են դուրս գալ օրերի միջից, ինչպես ուղևորները՝ տրամվայներից ու ավտոբուսներից։ Իմ մեքենայով դու կարող ես կանգնեցնել երջանկության վայրկյանը և մի ամբողջ ամիս վայելք ստանալ, մինչև որ կձանձրանաս։ Իմ մեքենայով կարող ես փոթորկի պես կտրել-անցնել վշտի երկարա-*

ծիգ տարիները, գլուխդ քաշել ուսերիդ մեջ, և քո վրայով,
առանց քեզ դիպչելու ու վնասելու, րոպեն հարյուր անգամ
կանցնի արևի արկը, վերջ տալով սև օրերին։ Նայիր, Ուել-
սի հրաշալի երևակայությունը, էյնշտեյնի ֆուտուրիստական
ուղեղը, արջերի և յոգերի քուն մտնելու գաղտնային սովո-
րույթները, ամեն, ամեն ինչ մամլած, խտացված ու ձու-
լված է այս մեքենայի մեջ։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Համարյա ոչինչ չեմ հասկանում և, համենայն դեպս,
ոչինչ չեմ տեսնում։

ԶՈԻԴԱԿՈՎ

Դե ախր ակնոցդ դիր։ Քեզ կուրացնում են պլատինե և
բյուրեղապակե այդ ձողիկները, ճառագայթների միահյուս-
ման այդ ցոլքը։ Տեսնո՞ւմ ես։ Տեսնո՞ւմ ես։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Տեսնում եմ....

ԶՈԻԴԱԿՈՎ

Նայիր, տեսնո՞ւմ ես կշեռքի լծակի պես բաժանումներ
ունեցող այն երկու քանոնները՝ մեկը հորիզոնական, մյուսը՝
ուղղահայաց։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Տեսնում եմ...

ԶՈԻԴԱԿՈՎ

Այդ քանոններով դու չափում ես անհրաժեշտ տարածու-
թյան խորանարդը։ Նայիր, տեսնո՞ւմ ես այն անիվաձև կար-
գավորիչը։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Տեսնում եմ...

ԶՈԻԴԱԿՈՎ

Այդ բանալիով մեկուսացնում ես միացված տարածու-
թյունը, երկրային ձգողականության բոլոր հոսանքները զա-
տում ամեն տեսակ ծանրություններից, և ահա այդ տարո-



րինակ լծակներով միացնում ես ժամանակի ուղղությունն ու
արագությունը։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Հասկանում եմ։ Լավ բան է... Արտասովոր։ Այդ նշանա-
կում է՝ ասենք թե հրավիրվում է Գամամիութենական հա-
մագումար՝ հարուցված հարցերը հանգստացնելու խնդրով։
և դե, իհարկե, Գիտական դեղարվեստների պետական ակա-
դեմիայի կողմից ողջույնի խոսք է տրվում պետական ընկեր
Կոգանին, և հենց որ նա սկսում է. «Ընկերներ, համաշխար-
հային իմպերիալիզմի շոշափուկների միջով կարմիր թելի
պես անցնում է մի ալիք...», ես նրան անջատում եմ նա-
խագահությունից ու ժամանակը բաց թողնում քառորդ ժամը
հարյուր հիսուն րոպեի արագությամբ, իսկ հասարակությու-
նը նայում է։ Դեռ նոր է ակադեմիկոսը բերանը բացել, և
արդեն լսվում են խլացուցիչ ծափահարություններ։ Բոլորը
թեթևացած շունչ են քաշում, թարմ հետույքները բարձրաց-
նում բազկաթոռներից ու հայդե աշխատանքի։ Այդպե՞ս։

ԶՈԻԴԱԿՈՎ

Թո՛ւ, ինչպիսի զզվանք։ Ի՞նչ ես դու ինձ ոմն Կոգանի
խցկում։ Ես քեզ բացատրում եմ տիեզերական հարաբերա-
կանության այդ գործը, ժամանակի սահմանումը մետաֆի-
զիկական սուբստանցիայից, նոումենից քիմիական ու ֆի-
զիկական ներգործության ենթակա ռեալականության փոխա-
դրելու խնդիրը։

ՎԽԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Իսկ ե՞ս ինչ եմ ասում։ Հենց այդ էլ ասում եմ. դու քեզ
համար ռեալ կայան կառուցիր՝ քիմիական ու ֆիզիկական
լիակատար ներգործությամբ, իսկ մենք այնտեղից հաղոր-
դալարեր կանցկացնենք, դե, ասենք, դեպի բոլոր խոշոր ին-
կուբատորները, տասնհինգ րոպեում կաճեցնենք կեսփթանոց
հավ, իսկ հետո խոզը կմտցնենք նրա թևի տակ, կանչա-
տենք ժամանակը,— և նստիր, հավիկ, ու սպասիր, մինչև որ
քեզ կխորովեն ու կուտեն։

ԶՈԻԴԱԿՈՎ

Ի՞նչ ինկուբատորներ, ի՞նչ հավեր։ Ես քեզ...

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Դե լավ, լավ. ուզում ես քեզ ու քեզ մտածիր փղերի կամ թեկուզ ընձուղտների մասին, եթե մանր անասունների մասին մտածելը ստորացուցիչ է։ Իսկ մենք այդ ամենը ինքներս կհարմարեցնենք մեր գորշ ճուտիկներին…

ՉՈՒԴԱԿՈՎ

Այ քեզ գռեհկությո՜ւն։ Ես զգում եմ, որ դու քո պրակտիկ մատերիալիզմով շուտով հենց ինձանից հավ կպատրաստես։ Հազիվհազ եմ թափ առնում, որ թռչեմ, և դու արդեն սկսում ես փետրահան անել ինձ։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Դե լավ, լավ, մի տաքացիր։ Իսկ եթե ես քո որևէ փետուրը հանել եմ նույնիսկ, ապա ներիր, նորից տեղը կդնեմ։ Թռիր, սավառնիր, զոռ տուր երևակայությանդ, մենք քո ոգևորության օգնականներն ենք, ոչ թե արգելակիչները։ Դե, մի չարանա, երիտասարդ, գործի դիր քո մեքենան։ Ինչո՞վ կարող եմ օգնել։

ՉՈՒԴԱԿՈՎ

Ուշադրությո՜ւն։ Ձեզ անխիղճ գիպցնեմ թե չէ, ժամանակը կսկսի սեղմել ու փոփոխել մեկուսիչների վանդակում փակված տարածությունը։ Հիմա ես բոլոր մարգարեների, գրբացների ու կանխագուշակների հացը կկտրեմ։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Սպասիր, Չուդակով, թող ես կանգնեմ այստեղ. միգուցե հինգ րոպեից հետո դառնում եմ մորուքավոր Մարքս։ Կամ ոչ, կդառնամ հին բոլշևիկ՝ երեքհարյուրամյա ստաժով։ Այն ժամանակ ես իսկույն ամեն ինչ կհաջողացնեմ քեզ համար։

ՉՈՒԴԱԿՈՎ

(վախեցած ետ քաշելով նրան)

Զգո՜ւյշ, խելագար։ Եթե ընթացող տարիների միջով այստեղ ձգվի ստորգետնյա ուղու պողպատե ֆերման, ապա, քո փոքրիկ մարմնով ամփոփվելով պողպատի զբաղեցրած տարածության մեջ, դու վայրկենապես կվերածվես ատամի փոշու։ Ու թերևս ապագայում վագոններն ռելսերից դուրս



թռչեն, իսկ այստեղ հազար բալի չտեսնված ժամանակաշարժով ամբողջ նկուղը գրողի ծոցն անցնի։ Այժմ ցած իջնելը վտանգավոր է, պետք է սպասել այնտեղից եկողներին։ Դարձնում եմ դանդա՜ղ-դանդաղ՝ բոլեում ընդամենը հինգ տարի…

ՖՈՍԿԻՆ

Մի րոպե սպասիր, ընկեր։ Մեկ է՝ դու քո մեքենան պտըտեցնելու ես։ Խնդրում եմ՝ դիր քո մեքենայի մեջ իմ պարտատոմսը,— զուր չէ, որ ես կպել եմ սրանից ու չեմ ծախում,— միգուցե հինգ րոպեից հետո սա արդեն հարյուր հազար է շահում։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Այ թե գլուխ ընկար, հա՜։ Այդ դեպքում ամբողջ ֆինժողկոմատը պետք է խոթել այնտեղ, թե չէ դու կշահես, իսկ նրանք, միևնույնն է, չեն հավատա քեզ՝ աղյուսակ կպահանջեն։

ՉՈՒԴԱԿՈՎ

Դե ահա, ես ձեր առաջ բացում եմ ապագայի դուռը, իսկ դուք սողում եք դեպի ռուբլին… Թո՜ւ, պատմական մատերիալիստներ։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Հիմար, ախր ես այդ շահումով շտապում եմ քեզ մոտ։ Դու քո փորձերի համար փող ունե՞ս։

ՉՈՒԴԱԿՈՎ

Այո… Փող կա՞…

ՖՈՍԿԻՆ

Փո՞ղ։

Դռան թակոց: Ներս են մտնում Իվան Իվանովիչը, Պոնտ Կիչը, Մեզալյանսովան և Մոմենտալնիկովը:

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

(Չուդակովին)

Դու յու սփիք ինգլի՞շ*։ Ահա, ուրեմն, շպրեխեն զի դո՞յչ*։ Վերջապես, պարլե վու ֆրանսե՞*։ Դե, ես այդպես էլ գիտեի։

*Դա շատ հաջողեցինք։ Ստիպված եմ մեր լեզվից տրադուկցիոն՝ անել բանվորագյուղացիական լեզվի։ Մայո Իվան Իվանովիչ։ Դուք, անշուշտ, գիտե՞ք Իվան Իվանովիչին։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Բարև ձեզ, բարև ձեզ, թանկագին ընկեր։ Մի նեղվեք։ Ես ցույց եմ տալիս մեր նվաճումները, ինչպես սիրում է ասել Ալեքսեյ Մաքսիմիչը։ Ես ինքս էլ երբեմն... Բայց, հասկանում եք, այս բեռնվածությունը։ Մեզ, բանվորներիս և գյուղացիներիս, անչափ, անչափ հարկավոր է մեր կարմիր էդիսոնը։ Իհարկե, մեր աճման ճգնաժամը, մեխանիզմի փոքրիկ թերությունները, ծառը կտրում են՝ տաշեղներ են թռչում։ Ուժերի ևս մի լարում՝ և դա էլ կվերացնենք։ Դուք հեռախոս ունե՞ք։ Դուք հեռախոս չունեք։ Դե, ես կասեմ Նիկոլայ Իվանովիչին, նա չի մերժի։ Բայց եթե մերժի, կարելի է գնալ իրեն՝ Վլադիմիր Պանֆիլիչի մոտ. նա, իհարկե, կընդառաջի։ Ախր նույնիսկ Սեմյոն Սեմյոնովիչն է շարունակ ասում ինձ. «Հարկավոր է մեզ, ասում է, բանվորներիս և գյուղացիներիս, հարկավոր է մեր, կարմիր, սովետական էդիսոնը»։ Ընկեր Մոմենտալնիկով, անհրաժեշտ է լայն կամպանիա ծավալել։*

ՄՈՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

*Էչելենցա*, հրամայեցեք։*
*Չունենք մենք մեծ ախորժակ։*
*Դուք մեզ առա-ջա-ջա-դրանք տվեք,*
*կկատարենք անհապաղ։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Մըսյո Մոմենտալնիկով, ընկեր Մոմենտալնիկով։ Աշխատակից։ Ուղեկից։ Տեսավ՝ սովետական իշխանություն է գալիս՝ միացավ։ Տեսավ՝ մենք ենք գալիս, եկավ։ Կտեսնի՝ նրանք գնում են, կգնա։*

ՄՈՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

*Միանգամայն, միանգամայն ճիշտ է՝ աշխատակից եմ։ Աշխատակից մինչհեղափոխական ու ետհեղափոխական մամուլի։ Միայն թե հեղափոխականությունը, հասկանում եք, ինչ-որ ժամանակ դուրս է ընկել իմ միջից։ Այստեղ սպիտակներն են, այնտեղ՝ կարմիրները, այստեղ՝ կանաչները։ Ղրիմ, ընդհատակ... Ստիպված էի առևտուր անել կրպակում։ Ոչ թե իմ, այլ հորս կամ նույնիսկ, կարծեմ, պարզապես քեռուս կրպակում։ Ինքս համոզմունքներով բանվոր եմ։ Ես միշտ էլ ասել եմ, որ ավելի լավ է մեռնել կարմիր դրոշի տակ, քան ցանկապատի տակ։ Այդ լոզունգով կարելի է միավորել մեծ թվով իմ տիպի մտավորականության։ Էչելենցա, հրամայեցեք, չունենք մենք մեծ ախորժակ։*

ՊՈՆՏ ԿԻՉ

*Ըհը՛, ըհը՛։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Պարդոն։ Ներեցեք։ Միստր Պոնտ Կիչ, պարոն Պոնտ Կիչ։ Բրիտանական անգլոսաքս։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Դուք եղե՞լ եք Անգլիայում։ Ախ, ես եղել եմ Անգլիայում... Ամենուրեք անգլիացինե՛ր... Ես այնտեղ կեպի գնեցի Լիվերպուլում և դիտեցի այն տունը, որտեղ Անտիդյուրինգն էր ապրել։ Զարմանալի հետաքրքիր էր։ Պետք է լայն կամպանիա ծավալել։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Միստր Պոնտ Կիչ, հայտնի, հայտնի ֆիլատելիստ Լոնդոնում և Սիթիում։ Ֆիլատելիստ (սկոնապել*, ռուսերեն՝ նամականիշ սիրող), և նա շա՜տ-շատ է հետաքրքրվում քիմիական գործարաններով, ավիացիայով ու ընդհանրապես արվեստով։ Շա՛տ-շատ կուլտուրական է ու մարդամոտ։ Նույնիսկ մեցենատ է։ Սկոնապել... Դե, ինչպե՞ս թարգմանել... մի խոսքով, օգնում է կինոաշխատողներին, գյուտարարներին... Դե, մի տեսակ ինչ որ բանգյուղտեսչություն, միայն թե ընդհակառակը... Վու քոմփրընե՞։ Նա արդեն «Իզվեստիայի» (նախրիխտեն) երկնաքերից դիտել է Մոսկվան, արդեն եղել է Անատոլ Վասիլիչի մոտ, իսկ այժմ, ասում է, ձեզ մոտ է եկել... Այնպես կուլտուրական է, մարդամոտ, նույնիսկ ձեր հացեն գիտեր։*

ՖՈՍԿԻՆ

*Մեծքիթ սրիկա՛. Հոտառություն ունի։*

ՄԵԶԱԼՅԱՆՑՈՎԱ

*Փլի՜վ, սըր։*

ՊՈՆՏ ԿԻՉ

*Դու թեյ խմել, ռանաց դուռ, իսկ վերին Հնդկաստանից շալ բերել, դու խզորբեստեյշն։*

ՄԵԶԱԼՅԱՆՑՈՎԱ

*Միստր Պոնտ Կիչն ուզում է իրեն հատուկ լեզվով ասել, որ իր մառախլապատ հայրենիքում, Մակդոնալդից մինչև Չերչիլ, բոլորը գազանների նման հետաքրքրվում են ձեր գյուտով, և նա շատ ու շատ է խնդրում...*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Դե, իհարկե, իհարկե։ Իմ գյուտը պատկանում է ողջ մարդկությանը, և ես, իհարկե, այս րոպեին... Ես շատ և շատ ուրախ եմ։* (Մի կողմ է տանում օտարերկրացուն, որը հանում է ծոցատետրը, ցույց է տալիս ու բացատրում): *Այս բանն ահա այսպես են անում։ Այո... այո... այո... Այստեղ երկու լծակներ կան, իսկ զուգահեռ բյուրեղապակյա հաշվիչ քանոնի վրա... Այո... այո... այո... այ, այստեղ։ Իսկ սա ահա այսպես են անում... Այո... այո...*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(մի կողմ տանելով Իվան Իվանովիչին)

*Ընկեր, պետք է երիտասարդին օգնել։ Ես եղել եմ ամենուրեք, ուր «առանց զեկուցման չմտնել», ժամերով ցցվել եմ այն տեղերում, ուր «գործդ վերջացրիր...» և այլն, և համարյա գիշերել եմ «եթե եկել եք զբաղված մարդու մոտ, ապա հեռացեք» ցուցանակի տակ, և ոչ մի օգուտ։ Մի տասնյակ չերվոնեց հատկացնելու վախի ու վախկոտության պատճառով թերևս վիթխարի գյուտը խափանվի։ Ընկեր, դուք պետք է ձեր հեղինակությամբ...*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Այո, այդ սարսափելի է։ Ծառը կտրում ես՝ տաշեղներ են թռչում։ Ես հենց այս րոպեին ուղղակի կկապվեմ համաձայնեցման գլխավոր վարչության հետ։ Անհապաղ կասեմ Նիկոլայ Իգնատիչին... Իսկ եթե նա մերժի, կխոսեմ իրեն՝*



*Պավել Վարֆոլոմեևիչի հետ... Դուք հեռախոս ունե՞ք։ Ա՜խ,*
*դուք հեռախոս չունեք։ Մեխանիզմի փոքրիկ թերություն-*
*ներ... Ա՜խ, ի՜նչ մեխանիզմներ կան Շվեյցարիայում։ Դուք*
*եղե՞լ եք Շվեյցարիայում։ Ես եղել եմ Շվեյցարիայում։ Ամե-*
*նուրեք միայն շվեյցարացինե՞ր։ Զարմանալի հետաքրքիր է։*

ՊՈՆՏ ԿԻՉ

(ծոցատետրը գրպանը դնելով և սեղմելով Չուդակովի ձեռքը)

*Դուրս ել տրամվայ վերի խլեզ այ շալ ու փոնթ։ Տուր, Իվան։ Չերվոնցի՞։*

ՄԵԶԱԼՅԱՆՑՈՎԱ

*Միստր Պոնտ Կիչն ասում է, որ եթե ձեզ չերվոնեց է հարկավոր...*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Սրա՞ն... Սրան հարկավոր չէ, սա թքել է չերվոնեցների վրա։ Ես հենց նոր սրա համար փռշեցի պետքանկ ու ետ եկա ոտից գլուխ չերվոնեցների մեջ։ Զզվելի է նույնիսկ։ Գրպաններս սեղմում են։ Այ, այստեղ ճխտել եմ երկուական, այ, այստեղ երեքական կտրոններ, իսկ այդ երկու գրպաններումս միայն տասչերվոնեցանոցներ են, որ կան։ Օլ ռայթ։ Գուդ բայ։* (Ցնցում է Կիչի ձեռքը, երկու ձեռքով գրկում է երան ու հիացած ուղեկցում դեպի դուռը):

ՄԵԶԱԼՅԱՆՑՈՎԱ

*Ես շատ եմ խնդրում ձեզ մի փոքր տակտ հանդես բերել. ձեր այդ կոմերիտական սովորույթների հետ կհասունանա, եթե դեռես չի հասունացել, միջազգային վիթխարի մի կոնֆլիկտ։ Գուդ բայ, ջենտլմեն։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

(թփթփացնելով Չուդակովի ուսին ու հուժեշտ տալով)

*Ձեր տարիքում ես էլ... Ծառը կտրում ես՝ տաշեղներ են*
*թռչում։ Մեզ հարկավոր է, հարկավոր է մեր սովետական*
*Էդիսոնը։* (Արդեն դռների միջից): *Դուք հեռախոս չունե՞ք։*
*Դե, ոչինչ, ես անպայման կասեմ Նիկանոր Պիրամիդոնո-*
*վիչին։*

ՄՈՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

(դոփդոփում է երգելով)

*Էչելենցա, հրամայեցեք...*

ՉՈՒԴԱԿՈՎ

(Վելոսիպեդկինին)

*Այդ լավ է, որ փող կա։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Փող չկա։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Այսինքն, ինչպե՞ս թե փող չկա։ Չեմ հասկանում, այդ դեպքում ինչո՞ւ պարծենալ և ասել... Մանավանդ հրաժարվել, երբ լուրջ առաջարկություններ են արվում օտարերկրացիների կողմից...*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Չնայած դու հանճար ես, բայց հիմար ես։ Ուզում ես, որ քո գաղափարը, երկաթե շապիկ հագած, թռչի մեզ մոտ Անգլիայից իբրև թափանցիկ, ժամանակների հրամանատու գրեղնոտ՝ անտեսանելիորեն հարվածելու մեր գործարաններին ու սովետների՞ն։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Բայց ախր այդ ճիշտ է... Ինչպե՞ս ամեն ինչ պատմեցի նրան։ Իսկ նա դեռ ծոցատետրում էլ գրեց։ Ինչո՞ւ փեշս չբռնեցիր։ Դեռ ինքդ էլ տարար մինչև դուռը, գրկախառնվեցիր։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Խելառ, իզուր չէի գրկում նրան։ Նախկին անապաստանությունը պետք եկավ։ Ես նրան չէի գրկում, այլ իր գրպանը։ Ահա նրա անգլիական ծոցատետրը։ Անգլիացին ծոցատետրը կորցրեց։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Կեցցես, Վելոսիպեդկին։ Դե, իսկ փող կա՞։*



ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Չուդակով, ես ամեն ինչ կանեմ։ Կկրծեմ կոկորդներն ու կատիկները կուլ կտամ։ Այնպես կկռվեմ, որ թշերս վեր-վեր թռչեն։ Ես համոզում էի, բղավում այդ Օպտիմիստենկոյի վրա։ Նա հարթ է ու ողորկ, ինչպես բիլիարդի գնդակը։ Նրա պետհայելյա մաքրության վրա արտացոլվում են միայն պետերը, այն էլ գլխիվայր։ Ես համարյա համոզեցի հաշվապահ Նոչկինին։ Բայց ի՞նչ ասես այդ անիծյալ ընկեր Պոբեդոնոսիկովին։ Նա պարզապես ամեն մեկին ճզմում է իր ծառայություններով ու ստաժով։ Դու նրա կենսագրությունը գիտե՞ս։ Այն հարցին, թե «ի՞նչ եք արել մինչև 17 թվականը», անկետաներում գրել է. «Եղել եմ կուսակցության մեջ»։ Ո՞ր կուսակցության՝ հայտնի չէ, հայտնի չէ նաև՝ փակագծերում «բե» է եղել, թե «մե», գուցե ոչ բե, ոչ մե։ Հետո նա բանտից ճզմում է, պահակի աչքերը ծխախոտ լցնելով։ Իսկ հիմա, քսանհինգ տարի հետո ժամանակն ինքն է մանրուքների ու արոպեների ծխախոտ ցանել նրա աչքերին, և աչքերն արցունքոտվում են գոհունակությունից ու բարեհոգությունից։ Այդպիսի աչքերով ի՞նչ կարելի է տեսնել։ Սոցիալի՞զմ։ Ոչ, միայն թանաքամանն ու պրեսպապյեն։*

ՖՈՍԿԻՆ

*Ընկերներ, թքո՞վ պիտի կպցնեմ, ինչ է։ Էստեղ էլի երկու հատ հարկավոր է դնել։ Երկու հարյուր ռուբլի մինիմաքս։*

ՊՈԼՅԱ

(Ներս է ընկնում, թափահարելով դրամի կապոցը)

*Փո՛ղ, մազալու է։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(փողերը տալիս է Ֆոսկինին: Ֆոսկինը դուրս է թռչում)

*Դե, թռիր։ Տաքսիով։ Նյութեր, օգնականներ վերցրու ու ետ արի։* (Պոլյային): *Դե ոնց է, պետին համոզեցիր ընտանեկա՞ն կարգով։*

ՊՈԼՅԱ

*Մի՞թե նրա հետ կարելի է հենց էնպես։ Մազալու է։ Ամեն անգամ, երբ նա որոշումներով հղիացած տուն է վերադառնում, ֆշշացնում է թղթե վիշապօձի նման։ Մազալու չէ։ Այդ*

Նոչկինը... Նրա հիմնարկության հաշվապահն է, առաջին անգամ էի տեսնում նրան... Այսօր ճաշին ներս ընկավ, ծրարը խոթեց ձեռքս, հանձնեցեք, ասում է... գաղտնի... Մաղալու է։ Իսկ ես, ասում է, նրանց մոտ գալ չեմ կարող... մասնակցության հնարավոր կասկածանքի պատճառով։ Մաղալու չի։

ՉՈՒԴԱԿՈՎ

Ցույցե այդ փաստերը...

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Այո։ Այստեղ մտածելու շատ բան կա։ Մի տեսակ ինձ թվում է... Լավ։ Միևնույնն է։ Վաղը կպարզենք։

Ներս են մտնում Ֆոսկինը, Դվոյկինը, Տրոյկինը:

ՖՈՍԿԻՆ

Պատրա՞ստ է։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Պատրաստ է։

(բոլորին թևերի մեջ առնելով)

Դե, հայդե։ Գործի անցեք, ընկերներ։

ՉՈՒԴԱԿՈՎ

Այդպես, այդպես... Հաղորդիչները զոդված են։ Մեկուսիչ միջնապատերը՝ կարգին վիճակում։ Լարվածությունն ստուգված է։ Թվում է, կարելի է։ Առաջին անգամ մարդկության պատմության մեջ... Հեռու քաշվեք։ Միացնում եմ... Մեկ, երկու, երեք։

Բենգալյան պայթյուն, ծուխ: Ետ-ետ են ցատկում, մի վայրկյան հետո խռնվում են պայթյունի վայրում. Չուդակովը ձեռքն այրելով խլում է պատռված եզրով թափանցիկ ապակյա թղթի մի պատառ.

ՉՈՒԴԱԿՈՎ

Վեր-վեր թռեք։ Ծիծաղեք։ Նայեցեք այստեղ։ Սա նամակ է։ Գրված է սրանից հիսուն տարի հետո։ Հասկանո՞ւմ եք՝ սրանից հետո։ Ի՞նչ արտասովոր բան է։ Կարդացեք։



ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Ի՞նչը կարդանք... «Կա լյուն նո մեն 2, 3, 4—24—20»։ Սա երևի ինչ-որ ընկեր Կալյուննոմենի հեռախո՞սն է։

ՉՈՒԴԱԿՈՎ

Ոչ թե «Կա լյուն նո մեն», այլ «կլինեմ»։ Նրանք գրում են միայն բաղաձայններով, իսկ 2, 3, 4 ձայնավորների հերթական համարն է։ Ա-է(ե)-ը-ի և այլն. «Կլինեմ»։ Այբուբենի քսանհինգ տոկոսի խնայողություն։ Հասկացա՞ր։ 24-ը վաղվա օրն է, 20-ը՝ ժամը։ Նա կամ նե կլինի այստեղ վաղը, երեկոյան ժամը ութին։ Աղետ... Ի՞նչ... Տեսնո՞ւմ ես այս այրված, մոխրացած եզրը։ Դա նշանակում է՝ ժամանակի ճամփին արգելակ է հանդիպել, որևէ մարմին, որը հիսուն տարիներից որևէ մեկում փակել է այժմ դատարկ այդ տարածությունը։ Այստեղից էլ պայթյունը։ Այնտեղից եկողին չսպանելու համար անհապաղ անհրաժեշտ են մարդիկ և դրամ... Շուտ։ Անհրաժեշտ է փորձն անհապաղ դուրս տանել որքան կարելի է բարձր, ամենադատարկ տարածության մեջ։ Եթե ինձ չօգնեն, սեփական միջոցով դուրս կտանեմ այս վիթխարի զանգվածը։ Բայց վաղն ամեն ինչ կվճռվի։ Ընկերներ, եկեք ինձ հետ։

Նետվում են դեպի դուռը:

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Գնանք, ընկերներ, բռնենք նրանց օձիքներից ու ստիպենք։ Ես կխժռեմ այդ չինովնիկներին ու կոճակները կթքեմ։

Դուռը լայն բացվում է նրանց առաջ:

ԲՆԱԿԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ

Քանի անգամ եմ ասել՝ մաքրվեք այստեղից ձեր մասնավոր խանութ-մանութով։ Դուք վատ հոտեր եք արձակում վերև, պատասխանատու վարձվոր ընկեր Պոբեդոնոսիկովի սենյակը։ (Նկատում է Պոլյային): Դուք... Դ-դուք է՞լ եք այստեղ։ Ասում եմ՝ թող ասված օգնի ձեր հասարակական գործունեությանը։ Ես ձեզ համար մի հիանալի օդափոխիչ եմ պահել։ Ցտեսություն։

# II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընդունարանի գրասենյակի պատը։ Աջից դուռ, լուսավոր ցուցանակով՝ «Առանց զեկուցման ներս չմտնել»։ Դռան մոտ դրված սեղանի կողքին Օ պ տ ի մ ի ս տ ե ն կ ո ն ընդունում է պատի երկայնքով ձգված խնդրատուների երկար շարքը։ Խնդրատուները ընդօրինակում են իրար շարժումներ, ինչպես իրար վրա թափված խաղաքարեր։ Երբ պատը ներսից լուսավորվում է, երևում են խնդրատուների սև ուրվանկարները միայն և Պ ո բ ե դ ո ն ո ս ի կ ո վ ի աշխատասենյակը։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Բանն ի՞նչ է, քաղաքացի։*

ԽՆԴՐԱՏՈՒ

*Ընկեր քարտուղար, կարգի բերեք, խնդրում եմ, կարգի բերեք։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Այդ կարելի է։ Կարգի բերել ու համաձայնեցնել՝ կարելի է։ Ամեն հարց կարելի է և՛ կարգի բերել, և՛ համաձայնեցնել։ Գործին վերաբերող զեկուցագիր ունե՞ք։*

ԽՆԴՐԱՏՈՒ

*Վերաբերող վերաբերմունք կա... էն էլ ի՜նչ տեսակ վերաբերմունք։ Հանգիստ չի տալիս։ Մեր է քաշում ու կոխ սարքում, կոխ է սարքում ու մեր քաշում։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Այդ ի՞նչ խնդիր է, որ հանգիստ չի տալիս։*

ԽՆԴՐԱՏՈՒ

*Դե, ոչ թե խնդիր է, այլ Պաշկա Տիգրոլապովը։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ներողություն, քաղաքացի, ինչպե՞ս կարելի է Պաշկային կարգի բերել։*

ԽՆԴՐԱՏՈՒ

*Ճշմարիտ է, մենակ ոչ մի կերպ չի կարելի կարգի բերել։ Բայց երկու հոգով, երեքով, թե որ հրամայեք, ցած կգլորեն նրան ու կարգի կբերեն՝ կկապոտեն։ Ես ձեզ խնդրում եմ, ընկեր, կապոտեք այդ խուլիգանին։ Սաղ տունը նրա ձեռքից ախ է քաշում...*



ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Թո՛ւհ։ Ի՞նչ եք այդպիսի մանրուքներով խցկվում պետական խոշոր հիմնարկություն։ Դիմեցեք միլիցիային։ Դո՞ւք ինչ եք ուզում, քաղաքացուհի։*

ԽՆԴՐԱՏՈՒ ԿԻՆ

*Համաձայնեցնել, եղբայր, համաձայնեցնել։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Այդ կարելի է. և՛ համաձայնեցնել կարելի է, և՛ շաղկապել։ Որոշում ունե՞ք։*

ԽՆԴՐԱՏՈՒ ԿԻՆ

*Չէ, եղբայր, չի կարելի նրան որոշման տակ գցել։ Միլիցիայում ասին, կարելի է նրան, ուրեմն, մի շաբաթով նստեցնել, իսկ ես, եղբայր, ի՞նչ պիտի ուտեմ։ Նա, ուրեմն, ընտեղից դուրս կգա, էլի կսկսի ինձ թակել։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ներողություն, քաղաքացուհի, ախր դուք հայտարարեցիք, որ ուզում եք համաձայնեցնե՞լ։ Ուրեմն ի՞նչ եք ձեր ամուսնով գլուխս տանում։*

ԽՆԴՐԱՏՈՒ ԿԻՆ

*Հենց մարդուս հետ էլ, ուրեմս, պետք է համաձայնեցնել, եղբայր. անհամաձայն ենք ապրում մենք, խմում է նա շատ կանոնավոր, տեղը տեղին։ Իսկ ձեռ տալ, ուրեմն, վախենում ենք, քանի որ կուսակցական է։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Թո՛ւհ։ Ախր հազար անգամ ասացին ձեզ՝ ձեր մանրուքներով մի խցկվեք պետական խոշոր հիմնարկություն։ Մենք չենք կարող մանրուքներով զբաղվել։ Պետությունը հետաքրքրվում է խոշոր բաներով՝ զանազան ֆորդիզմներ, այսային։*

Ներս են ընկնում Զ ո ւ գ ա կ ո վ ը և Վ ե լ ո ս ի պ ե դ կ ի ն ը։

*Օ՜... Իսկ դո՞ւք ուր։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(աշխատելով մի կողմ հրել Օպտիմիստենկոյին)

*Տապ, շուտափույթ ու անհապաղ ընկեր Պոբեդոնոսիկո-վի մոտ։*

ՉՈՒԴԱԿՈՎ

(կրկնում է)

*Շուտափույթ... անհապաղ...*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ահա՜-ա՜։ Ես ձեզ ճանաչեցի։ Այս դո՞ւք եք, թե՞ ձեր եղ-բայրը։ Այստեղ մի երիտասարդ էր գալիս գնում։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Հենց ես եմ որ կամ։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Դե ոչ... Ախր նա մորուք չուներ։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Երբ ես սկսեցի թակել ձեր դռները, նույնիսկ բեղ չունեի։ Ընկեր Օպտիմիստենկո, հարկավոր է վերջ տալ սրան։ Մենք գնում ենք իր՝ համկառգլխպետի մոտ, մեզ հարկավոր է ինքը Պոբեդոնոսիկովը։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Նե տրեբա, չի կարելի։ Չի կարելի նրան անհանգստաց-նել։ Ախր ես անձամբ կարող եմ լիովին բավարարել ձեզ։ Ամեն ինչ կարգին է։ Ձեր դիմումի վրա սպառիչ որոշում կա։*

ՉՈՒԴԱԿՈՎ

(ուրախ հարցնելով)

*Լիովին բավարարե՞լ։ Այո՞։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(ուրախ հարցնելով)

*Սպառիչ որոշո՞ւմ։ Այո՞։ Նշանակում է, ջարդեցի՞նք բյուրոկրատներին։ Այո՞։ Հիանալի է։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ի՞նչ եք ասում, ընկեր։ Ի՞նչ բյուրոկրատիզմ կարող է լի-նել զտումից առաջ։ Ինձ մոտ ինդիկատորի վրա պարզ երե-*



*վում է առանց ելից-մտիցի, նորագույն քարտային սիստե-մով։ Հո՛պ, գտնում եմ ձեր արկղը։ Հո՛պ, վերցնում եմ ձեր գործը։ Հո՛պ, ձեռքումս է սպառիչ որոշումը՝ ահա՛-ահա՛։*

Բոլորն առաջ են մղվում:

*Ձե՞ր որ ասացի՝ սպառիչ որոշում։ Ահա։ Մեր-ժե՛լ։*

Առաջին պլանը մթնում է: Աշխատասենյակի ներսը:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(թերթում է թղթերը, պտտեցնում հեռախոսային զանգի բռնակը: Հարևանցիորեն թելադրում է)

*«...Եվ այսպես, ընկերներ, այդ ահազնացող, հեղափո-խական բարձրագոչ տրամվայի ազդանշանը զանգի պես պետք է զրնգանչի յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու սըր-տում։ Այսօր Իլյիչի ռելսերը «Սովետական բժշկության տաս-նամյակի անվան» հրապարակը կկապեն «Դարմանի շուկայի հետ...»* (Հեռախոսով): *Այո։ Ալլո, ալլո...* (Տարուբերում է)։ *«Ո՞վ էր տրամվայով երթևեկում մինչև հոկտեմբերի 25-ը։ Ապադասակարգայնացած ինտելիգենտները, տերտերներն ու ազնվականները։ Քանիսո՞վ էին երթևեկում։ Նրանք երթևե-կում էին կայարանը հինգ կոպեկով։ Ինչո՞վ էին երթևեկում։ Դեղին տրամվայով։ Իսկ այժմ ո՞վ պետք է երթևեկի։ Այժմ մենք պիտի երթևեկենք, տիեզերքի շինարարներս։ Ինչպե՞ս պետք է երթևեկենք։ Մենք պետք է երթևեկենք սովետական բոլոր հարմարություններով։ Կարմիր տրամվայով։ Քանի-սո՞վ։ Ընդամենը տասը կոպեկով։ Եվ այսպես, ընկերներ...»։* (Հեռախոսի զանգ: Լսափողի մեջ): *Այո, այո, այո։ Ոչ... Ինչի վրա կանգ առա՞նք։*

ՄԵՔԵՆԱԳՐՈՒՀԻ ՈՒՆԴԵՐՏՈՆ

*«Եվ այսպես, ընկերներ»-ի վրա...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Այո, այո... «Եվ այսպես, ընկերներ, հիշեցեք, որ Լև Տոլստոյը գրչի մեծագույն և անմոռանալի արվեստագետ է։ Նրա անցյալի ժառանգությունը փայլում է մեր դեմ երկու աշխարհների սահմանագծում, ինչպես գեղարվեստական մի*

մեծ սատղ, ինչպես ամբողջ մի համաստեղություն, ինչպես մեծ համաստեղություններից ամենամեծը՝ Մեծ արջի համաստեղությունը։ Լև Տոլստոյը...»։

ՈՒՆԴԵՐՏՈՆ

Ներեցեք, ընկեր Պոբեդոնոսիկով։ Դուք վերևում գրում էիք տրամվայի մասին, իսկ այստեղ չգիտես ինչու ընթացքի ժամանակ ներս առաք Լև Տոլստոյին։ Որքան ես հասկանում եմ, այստեղ կատարվեց տրամվայագրական կանոնների ինչ-որ խախտում։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ի՞նչ։ Ի՞նչ տրամվայ։ Այո, այո... Այդ մշտական ողջույններից ու ճառերից մարդ մի տեսակ... Աշխատանքի ժամին խնդրեմ առանց դիտողությունների՛։ Ինքնաքննադատության համար հատկացված է պատի թերթը։ Շարունակում ենք... «Անգամ Լև Տոլստոյը, անգամ գրչի այդ մեծագույն արջը, եթե նրան հաջողվեր տեսնել մեր նվաճումները ի դեմս վերոհիշյալ տրամվայի, անգամ նա կազդարարեր համաշխարհային իմպերիալիզմի երեսին. «Չեմ կարող լռել»։ Ահա դրանք, համընդհանուր և պարտադիր լուսավորության կարմիր պտուղները։ Եվ հոբելյանական այս օրերին...»։ Խայտառակությո՛ւն։ Կոշմա՛ր։ Այստեղ կանչել ընկեր... քաղաքացի հաշվապահ Նոչկինին։

Պոբեդոնոսիկովի աշխատասենյակը մթնում է։ Նորից մուտքի ճերբը։ Չուդակովն ու Վելոսիպեդկինը աշխատում են ներս ընկնել։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Ընկեր Օպտիմիստենկո, սա ծաղրուծանակ է։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Ի՛նչ եք ասում, ոչ մի ծաղրուծանակ նեմա։ Լսեցին, որոշեցին՝ մերժե՛լ։ Ձեր գյուտը չի մտնում մոտակա եռամսյակի հեռանկարային պլանի մեջ։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Բայց ախր սոցիալիզմը միայն մոտակա եռամսյակով չի կառուցվում։



ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Վերջապես դուք ձեր ֆանտազիաներով մի խանգարեք մեր պետական գործունեությանը։ (Ներս մտնող Բելվեդոնսկուն): Համեցեք։ Ներս անցեք։ Ծավալվեցեք։ (Վելոսիպեդկինին): Ձեր առաջարկությունը համաձայնեցված չէ ՀԾԺԿ-ի հետ և հարկավոր չէ լայնածավալ բանվորներին ու գյուղացիներին։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Ի՞նչ գործ ունի այստեղ հաղորդակցության ճանապարհների ժողկոմատը։ Սա ի՞նչ քյալլագյողություն է։

ՉՈՒԴԱԿՈՎ

Անշուշտ, չի կարելի կանխագուշակել հետևանքների ամբողջ վիթխարիությունը, և հնարավոր է, ժամանակին հնարավոր է իմ գյուտն օգտագործել նաև տրանսպորտային խնդիրների ուղղությամբ՝ առավելագույն արագության պայմաններում ու համարյա ժամանակից դուրս...

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Դե, իհարկե, իհարկե, կարելի է ՀԾԺԿ-ի հետ շաղկապել։ Օրինակ, նստում եք գիշերվա ժամը երեքին, իսկ առավոտյան հինգին արդեն Լենինգրադում եք։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Դե տեսնո՞ւմ եք, իսկ ես ինչ էի ասում։ Մերժե՛լ։ Կենսական չէ։ Եվ ինչի՞ համար հինգին Լենինգրադում լինենք, երբ դեռևս բոլոր հիմնարկները փակ են։ (Վառվում է ճեռախոսի կարմիր լամպը: Լսում է, բղավում): Նոչկինին՝ ընկեր Պոբեդոնոսիկովի մոտ։

Ետ-ետ քաշվելով իրեն ճնշող Չուդակովից և Վելոսիպեդկինից, արագ մանրաքայլով Պոբեդոնոսիկովի դռանն է մոտենում Նոչկինը: Պոբեդոնոսիկովի աշխատասենյակը:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(պտտելով զանգի բռնակն ու փչելով խոսափողի մեջ)

Փո՛ւհ։ Իվան Նիկանորի՞չն է։ Ողջույն, Իվան Նիկանորիչ։ Խնդրում եմ քեզանից երկու տոմս։ Այո, այո, միջազգային։ Ինչպես, արդեն չե՞ս տնօրինում։ Փո՛ւհ։ Այս բեռնվածության

պատճառով պարզապես կտրվում ես մասսաներից։ Տոմս է հարկավոր, և չգիտես ում զանգես։ Ալլո, ալլո։ (**Մեքենագրուհուն**)։ Որտե՞ղ կանգ առանք։

ՌԻՆԴԵՐՏՈՆ

*«Եվ այսպես, ընկերներ...»։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*«Եվ այսպես, ընկերներ, Ալեքսանդր Սեմյոնիչ Պուշկինը, անգերազանցելի հեղինակը ինչպես «Եվգենի Օնեգին» օպերայի, այնպես և համանուն պիեսի...*

ՌԻՆԴԵՐՏՈՆ

*Ներեցեք, ընկեր Պոբեդոնոսիկով, դուք նախ Տոլստոյին ներս թողիք տրամվայ ու տեղավորեցիք, իսկ հիմա էլ, առանց որևէ կանգառի, ներս խցկվեց Պուշկինը։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ի՞նչ Տոլստոյ։ Ի՞նչ գործ ունի այստեղ տրամվայը։ Ա՜խ, այո՛, այո՛։ Այդ մշտական ողջույնների պատճառով... Խընդրեմ առանց հակաճառությունների՛։ Ես այստեղ վարժ և կատարելագործված գրում եմ մի թեմայով, առանց այս ու այն կողմ թեքվելու, իսկ դուք... Ե՛վ Տոլստոյը, և՛ Պուշկինը, և՛ նույնիսկ, եթե կուզեք, Բայրոնը, դրանք բոլորն էլ, չնայած տարբեր ժամանակներում, բայց համահոբելյարներ են, և ընդհանրապես։ Միգուցե ես երբևէ գրեմ մի ընդհանուր ղեկավար-հոդված, իսկ հետո դուք կարող եք, առանց ինքնաքննադատությունը խեղաթյուրելու, հոդվածը կտրատել ըստ առանձին հարցերի, եթե ընդհանրապես դուք ձեր տեղում եք։ Բայց դուք ընդհանրապես ավելի շատ մտածում եք շրթները ներկելու և դիմափոշի քսելու մասին, ուստի իմ հիմնարկը ձեր տեղը չէ։ Վաղուց ժամանակն է երիտասարդ կոմերիտուհիների հաշվին բանվորականացնել քարտուղարությունը։ Կխնդրեի այսօր ևեթ...*

**Ներս է մտնում Բելվեդոնսկին։**

*Ողջույն, ողջույն, ընկեր Բելվեդոնսկի։ Առաջադրանքը կատարվա՞ծ է։ Հարմարվածային կարգո՞վ։*



ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Կատարված է, անշուշտ, կատարված է։ Համարյա առանց աչք փակելու, այսպես ասած, սոցիալիստական մրցության մեջ մտնելով ինքս ինձ հետ, բայց ամեն ինչ կատարված է համաձայն սոցիալական պատվերի ու ավանսի, երեք հարյուր տոկոսով։ Կհաճեի՞ք, ընկեր, դիտել ձեր ապագա կահույքը։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ցուցադրեցեք։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Հաճեցեք։ Դուք, անշուշտ, գիտեք ու նկատում եք, ինչպես ասել է նշանավոր մի պատմաբան, որ ոճերը լինում են զանազան Լուիների։ Ահա սա Լուի Քատորզ Տասնչորսերորդն է, որ այդպես է կոչվել ֆրանսիացիների կողմից քառասունութ թվականի հեղափոխությունից հետո, քանի որ անմիջականորեն հաջորդել է Լուի Տասներեքերորդին։ Այնուհետև ահա սա Լուի Ժակոբն է, և, վերջապես, թույլ եմ տալիս ինձ ու հանձնարարում Լուի Մովե Գուին իբրև ամենաժամանակակիցը։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ոճերը ոչինչ, լավ են ընտրված, իսկ ի՞նչ արժեն։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Երեք Լուիներն էլ մոտավորապես նույնը։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Այդ դեպքում, ես կարծում եմ, մենք կանգ կառնենք Լուի Տասնչորսերորդի վրա։ Բայց, իհարկե, համաձայն բանգյուղտեսչության էժանացման պահանջի, կառաջարկեմ ձեզ շտապ կարգով շտկել աթոռների ու բազմոցների ոտքերը, մաքրել ոսկին, ներկել էբենացված կաղնու գույնի և այս ու այնտեղ, թիկնակներին ու այլ աչքի ընկնող տեղերում, նկարել սովետական զինանշանը։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Հիասքա՜նչ է։ Ավելի քան տասնհինգ Լյուդովիկոսներ են եղել. և ոչ ոք այդ մասին չի մտածել, իսկ դուք իսկույն՝ բոլշևիկորեն, հեղափոխական կարգով։ Ընկեր Պոբեդոնոսիկով,*

*Թույլ տվեք ինձ շարունակել ձեր դիմանկարը և պատկերել ձեզ իբրև նորարար-ադմինիստրատորի, այլև վարկեր բաշխողի։ Բանտը և աքսորը կարոտ են ձեզ, այսինքն, ուզում եմ ասել, իհարկե, ամսագիրը։ Հեղափոխության թանգարանը կարոտ է ձեզ. օրգինալը կուղարկենք այնտեղ, իսկ պատճենները, կարճ ժամկետով ու աշխատավարձից պահելու պայմանով, երախտագետ աշխատակիցները ձեռքից ձեռք կթռցնեն։ Թույլ կտա՞ք։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ո՛չ մի դեպքում։ Նման հիմարությունների համար ես, անշուշտ, չեմ կարող իշխանության ղեկը ձեռքիցս բաց թողնել, բայց եթե պատմության ամբողջության համար է անհրաժեշտ և եթե այդ բոլորն արվի ընթացքի մեջ, առանց աշխատանքն ընդհատելու, ապա խնդրեմ։ Ես կնստեմ այստեղ, գրասեղանի առաջ, բայց դու ինձ պատկերիր ռետրոսպեկտիվ կերպով, այսինքն՝ որպես թե ձիու վրա։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Ձեր ձին ես արդեն հիշողությամբ նկարել եմ տանը, ոգեշնչվելով ձիարշավներում և նույնիսկ, չեք կարող հավատալ, անհրաժեշտ դեպքերում ինքս եմ հայելուն նայել։ Այժմ ինձ մնում է միայն ձեզ հարմարեցնել ձիու վրա։ Թույլ տվեք թղթերի ղամբյուղը հեռացնել։ Ինչպիսի՜ համեստություն՝ նման ծառայությունների առկայության դեպքում։ Մաքրեցեք ձեր մարտական ոտքի գծագրությունը։ Ինչպիսի՜ մաքրությամբ է փայլում կոշիկը. մարդ ուղղակի ուզում է լիզել։ Միայն Միքելանջելոյի մոտ է հանդիպում այսպիսի մաքուր գիծ։ Դուք ճանաչո՞ւմ եք Միքելանջելոյին։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Անժելոյին։ Հա՞յ է։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Իտալացի։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ֆաշի՞ստ։*



ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Ի՞նչ եք ասում։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Չեմ ճանաչում։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Չեք ճանաչո՞ւմ։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Իսկ նա ինձ ճանաչո՞ւմ է։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Չգիտեմ... Նա նույնպես նկարիչ է։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ա՜, Դե, նա կարող էր և ճանաչել։ Գիտեք, նկարիչները շատ են, իսկ համկառգլխպետը մեկն է։*

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

*Մատիտը դողում է։ Անհնարին է պատկերել բնավորության դիալեկտիկան՝ ընդհանուր կենցաղային համեստության հետ մեկտեղ։ Ձեր ինքնահարգումը, ընկեր Պոբեդոնոսիկով, ուղղակի տիտանական չափերի է հասնում։ Աչքերդ փայլեցրեք աջ ուսի և ինքնահոսի վերևից։ Թույլ տվեք հավերժացնել այդ ակնթարթը։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Մտե՛ք։*

Ներս է մտնում Նոչկինը։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Դո՞ւ*

ՆՈՉԿԻՆ

*Ես...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Երկու հարյուր երեսո՞ւն։*

ՆՈՉԿԻՆ

*Երկու հարյուր քառասուն։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Եմեցի՞ք...*

ՆՈՉԿԻՆ

Տանում տվի։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Հրեշավո՜ր է։ Անըմբռնելի։ Ո՞վ։ Վատնիչը։ Որտե՞ղ։ Ինձ մոտ։ Ո՞ր ժամանակ։ Այն ժամանակ, երբ ես իմ հիմնարկությունը Կարլ Մարքսի հանճարեղ հետքերով և համաձայն կենտրոնի առաջադրանքների տանում եմ ուղիղ դեպի սոցիալիզմ...

ՆՈՉԿԻՆ

Ինչ անենք, Կարլ Մարքսն էլ էր թուղթ խաղում։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Կարլ Մա՞րքսը։ Թո՞ւղթ։ Երբե՛ք։

ՆՈՉԿԻՆ

Ինչպե՜ս չէ, երբե՜ք... Իսկ ի՞նչ է գրել Ֆրանց Մերինգը։ Ի՞նչ է գրել նա իր «Կարլ Մարքսը անձնական կյանքում» կապիտալ աշխատության յոթանասունհինգերորդ էջում։ Խաղացել է։ Խաղացել է մեր մեծ ուսուցիչը։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ես, իհարկե, կարդացել եմ Մերինգին ու գիտեմ։ Նախ, որ նա չափազանցում է, իսկ երկրորդ, Կարլ Մարքսը իսկապես խաղացել է, բայց ոչ ազարտ, այլ առևտրական խաղեր։

ՆՈՉԿԻՆ

Բայց ահա նույն դասարանցի, ժամանակակից ու գիտակ, նշանավոր Լյուդվիգ Ֆոյերբախը գրում է, որ խաղացել է նաև ազարտ խաղեր։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Դե այո, ես, իհարկե, կարդացել եմ ընկեր Ֆոյերբախին։ Կարլ Մարքսը երբեմն խաղում էր նաև ազարտ խաղեր, բայց ոչ փողով...

ՆՈՉԿԻՆ

Ո՛չ... Փողով էր խաղում։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Այո, բայց իր փողով, և ոչ թե պետական։



ՆՈՉԿԻՆ

Դե, Մարքսին ուսումնասիրող ամեն ոք գիտե, որ եղել է, ճիշտ է՝ մեկ անգամ, հիշարժան մի դեպք նաև պետական փողերով։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Իհարկե, պատմական այդ դեպքը մեզ կհարկադրի, նկատի ունենալով պատմական նախադեպը, ավելի ուշադիր մոտենալ ձեր արարքին, բայց և այնպես...

ՆՈՉԿԻՆ

Հերիք է անմտություններ դուրս տաք։ Կարլ Մարքսը երբեք թուղթ չի խաղացել։ Ասենք, ի՜նչ խոսել ձեզ հետ։ Մի՞թե դուք մարդու ասածը կհասկանաք։ Ձեզ մոտ միայն թե ամեն ինչ համապատասխանի նմուշներին ու պարագրաֆներին։ Է՛հ, դու, ճխտուն պորտֆել։ Գրասենյակային սոսինձ։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ի՞նչ։ Սադրուժանակե՞լ։ Ե՛վ իր անմիջական, պատասխանատու պետերին, և՛ Մարքսի միջակ... Թո՛ւհ, ինչ եմ ասում, անպատասխանատու սովերը... Բաց չթողնե՛ք։ Բռնե՛լ...

ՆՈՉԿԻՆ

Ընկեր Պոբեդոնոսիկով, զանգահարություններով նեղություն մի տվեք ձեզ, ես ինքս կհայտնեմ քրեական հետաքննության Մոսկվայի վարչությանը։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Կդադարեցնե՛մ։ Թույլ չե՛մ տա։

ԲԵԼՎԵԴՈՆՍԿԻ

Ընկեր Պոբեդոնոսիկով։ Պահպանեցեք ձեր կեցվածքն իբրև այդպիսին։ Թույլ տվեք հավերժացնել այդ ակնթարթը։

ՈՒՆԴԵՐՏՈՆ

Հա՛-հա՛-հա՛։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Համակրա՞նք։ Վատնիչի նկատմա՞մբ։ Ծիծաղե՞լ։ Եվ այն էլ ներկած շրթունքներո՞վ... Դո՛ւրս։ (Մենակ, պատելով ճե-

ռախոսի բռնակը)։ *Ալլո, ալլո... փո՛ւ, փո՛ւ... Ո՞վ է։ Ալեքսանդր Պետրովիչ։ Ախր երեք օր է ես քեզ... Անցա՞վ։ Շնորհավորում եմ։ Դե իհարկե, իհարկե։ Ինչ կասկած... Ինչպես միշտ, ամբողջ օրերով, ամբողջ գիշերներով... Այո, վերջապես այսօր։ Երկու տոմս։ Փափուկ։ Առաջին։ Սղագրուհու հետ։ Ի՞նչ գործ ունի այստեղ բանգյուղտեսչությունը։ Անհրաժեշտ է թելադրել-վերջացնել հաշվետվությունս։ Ի՞նչ նշանակություն ունի երկու հարյուր քառասուն ռուբլին այստեղից այնտեղ և այնտեղից այստեղ։ Այո, կծախսենք որպես օրապահիկ կամ մի ուրիշ եղանակով։ Հարվածային կարգով, թղթատարի ձեռքով... Դե իհարկե, քո թեկնածությունը առաջ կմղեմ... Ահա, ահա։ Կանաչ Հրվանդան... Ինձ։ Դե, սեղմում եմ ձեռքդ, պատասխանատու ողջույններով։* (Խոսափողը ցած է նետում։ Տրեստորի եղանակով)։ *Ա՛լլո, ա՛լլո։*

Ընդունարան։ Զույգակովը և Վելոսիպեդկինը հարձակվում են։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Դե ախր ո՞ւր եք խցկվում վերջապես։ Գոնե հարգանք ունեցեք պետական անձնակազմի աշխատանքների ու գործունեության հանդեպ։*

Ներս է մտնում Մեզալյանսովան։ Զույգակովը և Վելոսիպեդկինը նորից առաջ են մղվում։

*Ոչ, ոչ... Սա հերթից դուրս է, համաձայն հեռախոսագրի...* (Առաջնորդում է բեմանցուկ, խոսելով)։ *Ամեն ինչ պատրաստ է...* А як же ж... *Հապա ո՞նց։ Ես նրան պատմեցի հատուկ նշանակությամբ, որ իր կինը վազեց կոմսոմոլների ետևից։ Սկզբում ո՞նց բարկացավ։ Չե՛մ հանդուրժի, ասում է, անզուսպ սիրահետումներն առանց լուրջ ստաժի ու պաշտոնական բազիսի, իսկ հետո նույնիսկ ուրախացավ։ Մեքենագրուհուն արդեն լիկվիդացրեց շրթունքների ոչ էթիկական լինելու պատճառով։ Ուղիղ գնացեք, մի վախենաք։ Ամեն թղթի տակ, բարակ թե հաստ, նա մի ողջ տեղկոմ ունի պատրաստ...*

Մեզալյանսովան գնում է։

ԶՈՒՅԳԱԿՈՎ

*Դե ահա, հիմա էլ սրան բաց թողին։ Ընկեր, ախր հասկացեք՝ ոչ մի գիտական, ոչ մի չար ուժ չի կարող արդեն*



*կանգնեցնել գալիքը։ Եթե մենք փորձը դուրս չբերենք քաղաքի վերևում, տարածության մեջ, կարող է մինչև իսկ պայթյուն տեղի ունենալ։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Պայթյո՞ւն։ Դե, թողեք այդ։ Մի սպառնացեք պետական հիմնարկությանը։ Մեզ համար անհարմար է ջղայնանալ և հուզվել, իսկ երբ պայթյուն լինի, այն ժամանակ ձեր մամին կհայտնենք ուր որ հարկն է։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Ախր հասկացիր դու, հիմարի գլուխ... Այդ քո մասին է հարկավոր հայտնել և՛ ուր որ հարկն է, և՛ ուր հարկը չէ։ Մարդիկ ամբողջ բանվորական տիեզերքով մեկ այրվում են աշխատելու ցանկությամբ, իսկ դու, կույր աղիք, գրասենյակային խոսակցություններով միզում ես այդ էնտուզիազմի վրա։ Ախր...*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Խնդրեմ առանց անձնավորության։ Անձնավորությունն առանձին դեր չի խաղում պատմության մեջ։ Սա ձեզ համար ցարական ժամանակները չեն։ Այդ առաջ էին էնտուզիազմ պահանջում։ Իսկ հիմա մեզ մոտ պատմական մատերիալիզմ է, և ձեզանից ոչ մի էնտուզիազմ էլ չի պահանջվում։*

Ներս է մտնում Մեզալյանսովան։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ցրվեցեք, քաղաքացիներ, ընդունելությունը վերջացած է։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ
(պորտֆելով)

*Օ, բայադերա, քո գեղեցկության առաջ։ Տարա-րամ-տարա-րամ...*

## III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է թատերական աթոռաշարքերի շարունակություն։ Առաջին կարգում մի քանի ազատ տեղեր։ Ազդանշան. «Սկսո՛ւմ ենք»։ Հանդիսատեսները հեռադիտակներն ուղղել են դեպի բեմ, բեմը

**Ռեռադիտակներն ուղղել է դեպի հանդիսատեսները: Սկսվում են սու-
լոցներ, դոփյուն, կանչեր. «Ժամանա՛կն է»:**

ՌԵԺԻՍՈՐ

*Ընկերներ, մի՛ հուզվեք։ Մեզանից անկախ պատճառնե-
րով ստիպված ենք երրորդ գործողությունը մի քանի րոպե
ուշ սկսել։*

**Մի րոպե դադար, նորից կանչեր. «Ժամանա՛կն է»:**

ՌԵԺԻՍՈՐ

*Մի րոպե, ընկերներ։ (Կողմ): Դե, գալի՞ս են։ Անհարմար
է այսպես ձգձգել։ Վերջ ի վերջո, հետո էլ կարելի է խորհըր-
դակցել. կանցնեք ֆոյե, քաղաքավարությամբ կակնարկեք։
Ա՜, գալիս են... Համեցեք, ընկերներ։ Չէ, ի՜նչ եք ասում։
Շատ հաճելի է։ Դե, կարևոր չէ՝ մեկ րոպե, նույնիսկ կես
ժամ. գնացք հո չի, միշտ էլ կարելի է ուշացնել։ Ամեն ոք
հասկանում է, ապրում ենք այդպիսի ժամանակներում։ Կա-
րող են ամեն տեսակ պետական, մինչև իսկ համամոլորա-
կային գործեր լինել։ Առաջին և երկրորդ գործողությունները
նայեցի՞ք։ Դե, ինչպե՞ս է։ Մեզ բոլորիս, անշուշտ, հետա-
քրքրում է այն տպավորությունը և ընդհանրապես հայեցա-
կետը...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ոչինչ, ոչինչ։ Ահա մենք խոսում ենք Իվան Իվանովիչի
հետ։ Սուր է վերցված։ Դիտված է։ Բայց և այնպես ինչ-որ
այն չէ...*

ՌԵԺԻՍՈՐ

*Բայց ախր այդ ամենը կարելի է ուղղել, մենք միշտ ձըգ-
տում ենք դրան։ Դուք միայն կոնկրետ ցուցմունքներ տվեք
և, իհարկե, մինչև աչքներդ բացեք փակեք...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Այդ ամենը խտացված է, կյանքում այդպես չի լինում...
Դե, ասենք այդ Պոբեդոնոսիկովը։ Այնուամենայնիվ անհար-
մար է... Դատելով ամեն ինչից, պատկերված է պատասխա-
նատու ընկեր, և մի տեսակ նրան դուրս են բերել այնպիսի
լույսի տակ ու հետո էլ անվանել «համկառգլխպետ»։ Չկան*



*մեզ մոտ այդպիսի մարդիկ, անբնական է, ո՛չ կենսական,
նման չէ։ Անհրաժեշտ է վերափոխել, մեղմացնել, պոետակա-
նացնել, կլորացնել...*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Այո, այո, անհարմար է։ Դուք հեռախոս ունե՞ք։ Ես կզան-
գեմ Ֆյոդոր Ֆյոդորովիչին, նա, իհարկե, կընդառաջի... Ա՜խ,
գործողության ժամանակ անհարմա՞ր է։ Լավ, ես հետո։
Ընկեր Մոմենտալնիկով, անհրաժեշտ է լայն կամպանիա
ծավալել։*

ՄՈՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

*Էչելենցա, հրամայեցեք։
Չունենք մենք մեծ ախորժակ։
Միայն մի խոսք ասեք դուք մեզ,
Կհայհոյենք անհապաղ։*

ՌԵԺԻՍՈՐ

*Ի՞նչ եք ասում, ի՜նչ եք ասում, ընկերներ։ Ախր այս բո-
լորն արվում է հրապարակված ինքնաքննադատության կար-
գով և գլավլիտի թույլտվությամբ դուրս է բերված լոկ իբրև
բացառություն, իբրև բացասական գրական տիպ։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ինչպես ասացի՞ք։ «Տի՞պ»։ Մի՞թե պատասխանատու
պետական գործչի մասին կարելի է այդպես արտահայտվել։
Այդպես կարելի է ասել միայն ինչ-որ բոլորովին անկուսակ-
ցական խարդախ-խաբեբայի մասին։ Տի՜պ։ Դա այնուամե-
նայնիվ ոչ թե «տիպ» է, այլ, ինչքան չլինի, ղեկավար օր-
գանների կողմից դրված համկառգլխպետ, իսկ դուք՝ տի՜պ։
Եվ եթե նրա գործողություններում ապօրինի խախտումներ
կան, անհրաժեշտ է հայտնել ուր հարկն է՝ քննության առ-
նելու համար և, վերջապես, դատախազության կողմից
ստուգված տեղեկությունները, որոնք հրապարակվում են բան-
վոր-գյուղտեսչության միջոցով, մարմնավորել սիմվոլիկ կերպար-
ներում։ Ահա այդ ես հասկանում եմ, բայց դուրս բերել
թատրոնում իբրև ընդհանուր ծաղրուծանակի առարկա...*

ՌԵԺԻՍՈՐ

*Ընկեր, դուք միանգամայն իրավացի եք, բայց ախր այդ*
*բանը տեղի է ունենում գործողության զարգացման հետ։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Գործողությո՞ւն։ Ի՞նչ գործողություն։ Դուք ոչ մի գործո-*
*ղություն չպետք է ունենաք։ Ձեր խնդիրն է ցուցադրել, իսկ*
*գործել, մի անհանգստացեք, առանց ձեզ էլ համապատաս-*
*խան կուսակցական և սովետական օրգանները կգործեն։ Իսկ*
*հետո անհրաժեշտ է ցույց տալ նաև մեր իրականության*
*լուսավոր կողմերը։ Վերցրեք որևէ օրինակելի բան, օրինակ,*
*մեր հիմնարկությունը, որտեղ ես աշխատում եմ, կամ օրի-*
*նակ ինձ...*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Այո, այո, այո։ Այցելեցեք հապա նրա հիմնարկությունը։*
*Դիրեկտիվները կատարվում են, հրահանգները անց են կաց-*
*վում, ռացիոնալիզացիան կարգի է գցվում, թղթերը տարի-*
*ներով դարսված են լինում լիակատար կարգուկանոնով։ Դի-*
*մումների, բողոքների ու խնդրագրերի համար՝ կոնվեյեր։*
*Իսկական սոցիալիզմի մի անկյուն։ Զարմանալի հետաքրք-*
*քիր է։*

ՌԵԺԻՍՈՐ

*Բայց, ընկեր, թույլ տվեք...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Թույլ չե՛մ տա։ Իրավունք չունեմ և նույնիսկ զարմանում*
*եմ, թե ընդհանրապես ինչպե՞ս են ձեզ թույլ տվել։ Դա մեզ*
*նույնիսկ վարկաբեկում է Եվրոպայի աչքում։* (Մեզալյանսո-
վային): *Այս վերջինը մի թարգմանեք, խնդրեմ։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Ախ, ո՜չ, ո՜չ, օլ ռայթ։ Նա հենց քիչ առաջ բանկետում*
*կուշտ խավիար կերավ և այժմ ննջում է։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Իսկ ո՞ւմ եք հակադրում մեզ։ Գյուտարարի՞ն։ Իսկ ի՞նչ*
*է հնարել նա։ Վեստինգհաուզի արգելակի՞ը։ Հորինել է ինք-*
*նահոս գրի՞չ։ Տրամվա՞յն է գնում առանց նրա օգնության։*
*Ռացիոնա՞կն է գրասենյակացրել։*



ՌԵԺԻՍՈՐ

*Ի՞նչ։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ասում եմ, գրասենյա՞կն է ռացիոնալիզացրել։ Ոչ։ Ուրե-*
*մըն, բանն ի՞նչ է։ Մեզ երազողներ պետք չեն։ Սոցիալիզմը*
*հաշվարկ է։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Այո, այո։ Դուք եղե՞լ եք հաշվապահությունում։ Ես եղել*
*եմ հաշվապահությունում՝ ամենուրեք թվեր ու թվեր, և՛*
*փոքր, և՛ մեծ, ամենատարբեր տեսակի, իսկ վերջում բոլոր*
*թվերը բռնում են իրար։ Հաշվա՜րկ։ Զարմանալի հետաքրք-*
*քիր է։*

ՌԵԺԻՍՈՐ

*Ընկեր, մեզ սխալ չհասկանաք։ Մենք կարող ենք սխալ-*
*վել, բայց ուզում էինք մեր թատրոնն ի սպաս դնել պայքարի*
*ու շինարարության գործին։ Կդիտեն և կսկսեն աշխատել,*
*կդիտեն և կարթնանան, կդիտեն և կմերկացնեն։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Իսկ ես բոլոր բանվորների և գյուղացիների անունից*
*խնդրում եմ չարթնացնել ինձ։ Զարթուցիչի՞ս տեսեք։ Դուք*
*պետք է շոյեք իմ լսողությունը և ոչ թե գրգռեք, ձեր գործն*
*է շոյել իմ տեսողությունը և ոչ թե գրգռել։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Այո, այո, շոյել...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Մենք ուզում ենք պետական և հասարակական գործու-*
*նեությունից հետո հանգստանալ։ Ե՛տ դեպի կլասիկները։*
*Սովորեցեք անիծյալ անցյալի մեծագույն հանճարներից։*
*Քանի՜-քանի՜ անգամ եմ ասել ձեզ։ Հիշեցեք, թե պոետն ինչ-*
*պես էր երգում.*

*Ժողովներից դուրս գալիս մենք*
*ոչ ուրախ ենք, ոչ տրտում,*
*ապագայի հույսեր չունենք,*
*տա՛մ-տա՛մ, բան չենք ափսոսում...*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

Դե, իհարկե, արվեստը պետք է արտացոլի կյանքը, գեղեցիկ կյանքը, գեղեցիկ անհանգիստ մարդկանց։ Ցույց տվեք մեզ այդ գեղեցիկ անհանգիստներին գեղեցիկ լանդշաֆտների ֆոնի վրա և ընդհանրապես բուրժուական այլասերումը։ Մինչև իսկ, եթե անհրաժեշտ է ագիտացիայի համար, ապա նաև պորտապար։ Կամ, ասենք, ինչպե՞ս է նեխող Արևմուտքում թարմ պայքար գնում հին կենցաղի դեմ։ Ցույց տալ, օրինակ, բեմում, որ նրանց Փարիզներում կինբաժին չկա, դրա փոխարեն ֆոքստրոտ կամ ինչպիսի նորաձև յուբկաներ է հագնում հին, զառամյալ աշխարհը՝ սկոնապել բո մոնդ։ Պա՞րզ է։

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Այո, այո։ Գեղեցիկ բաներ արեք։ Մեծ թատրոնում միշտ գեղեցիկ բաներ են անում մեզ համար։ Դուք եղե՞լ եք «Կարմիր կակաչի» ներկայացմանը։ Ես եղել եմ «Կարմիր կակաչի» ներկայացմանը։ Զարմանալի գեղեցիկ է։ Ամենուրեք ճախրում են ծաղիկներով, երգում, պարում զանազան էլֆեր ու օդաղշեր։

ՌԵԺԻՍՈՐ

Ուզում եք ասել՝ օդանույշնե՞ր։

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Այո, այո, այո։ Այդ լավ նկատեցիք՝ օդանույշներ։ Պետք է լայն կամպանիա ծավալել։ Այո, այո, այո, թռչում են զանազան էլֆեր... և ցվելֆեր... Զարմանալի հետաքրքիր է։

ՌԵԺԻՍՈՐ

Ներեցեք, բայց էլֆերն առանց այդ էլ շատ են, և նրանց հետագա բազմացումը հնգամյակով չի նախատեսված։ Եվ պիեսի գործողության հետ դրանք բոլորովին չեն առնչվում։ Իսկ հանգստի հարցում ես ձեզ, իհարկե, հասկանում եմ, և պիեսի մեջ համապատասխան փոփոխություններ կմտցվեն իբրև նրբագեղ ու առույգ հավելվածներ։ Ահա, օրինակ, այսպես կոչվող ընկեր Պոբեդոնոսիկովը. եթե նրան խուտուտ ածող թեմա տաս, կարող է բոլորին ծիծաղախեղդ անել։ Ես հենց այս րոպեին մի երկու ցուցում կտամ, և դերը պարզապես ալմաստի պես կշողշողա։ Ընկեր Պոբեդոնոսիկով, վերցրեք մի երեք-չորս բան, օրինակ՝ գրիչ, ստորագրություն, թուղթ և կուսմաքսիմում, և մի քանի ժոնգլյորական վարժություններ կատարեցեք։ Գրիչը նետեցեք, բռնեցեք թուղթը, դրեք ստորագրությունը, վերցրեք կուսմաքսիմումը, որսացեք գրիչը, վերցրեք թուղթը՝ դրեք ստորագրությունը, վերցրեք կուսմաքսիմումը։ Մեկ, երկու, երեք, չորս։ Մեկ, երկու, երեք, չորս։ Սով-օր-կուս-օր-բյուր-ռո-կրա-տի։ Սով-օր-կուս-օր-բյու-ռո-կրա-տի։ Հասկո՞ւմ է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(Եիացմունքով)

Լա՜վ է։ Առույգ է։ Ոչ մի անկումայնություն, ոչ մի բանցած չի գցում։ Այդպիսով կարելի է մարմինը մարզել։

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

Վույ, սե տրե պեդագոժիկ։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Շարժումների թեթևություն, որը հույժ բարոյախոսական է կարիերան նոր-նոր սկսող ամեն մի նոր մարդու համար։ Պարզ է, մատչելի, կարելի է նույնիսկ երեխաներին բերել։ Մեր մեջ ասած, մենք ջահել դասակարգ ենք, բանվորը մեծ մանուկ է։ Սա, անշուշտ, փոքր-ինչ չոր է, չկա այն կլորությունը, հյութեղությունը...

ՌԵԺԻՍՈՐ

Դե, եթե սա ձեզ դուր է գալիս, ուրեմն այստեղ երևակայության հորիզոններն անսահման են։ Առկա դերասանական կադրերի միջոցով մենք կարող ենք ուղղակի սիմվոլիկ պատկերներ ստեղծել։ (Ծափ է տալիս): Տղամարդկանց ազատ անձնակազմը՝ բեմ։ Իջեք մի ծունկի և կորացեք ստրկացված տեսքով։ Անտեսանելի քլունգով ու տեսանելի ձեռքով փորեք անտեսանելի ածուխը։ Դեմքերը, դեմքերն ավելի մռայլ... Սևմութ ուժերը չարությամբ ճնշում են ձեզ։ Լա՜վ է։ Ծկսում ենք... Դուք կլինեք կապիտալը։ Կանգնեցեք այստեղ, ընկեր կապիտալ... Պարեք բոլորի վրա դասակարգային տիրապետության տեսքով։ Անտեսանելի ձեռքով գրկեցեք ձեր երե-

վակայական դամային ու խմեք ձեր երևակայական շամպայնը։ Սկսում ենք։ Լա՜վ է։ Շարունակեցեք։ Կանանց ազատ անձնակազմը՝ բեմ։

Դուք կլինեք ազատությունը, ձեր վարմունքը կարգին է։ Դուք կլինեք հավասարությունը, ուրեմն, միևնույն է, թե ինչ եք խաղում։ Իսկ դուք եղբայրությունն եք. միևնույն է, դուք ուրիշ զգացմունքներ չեք էլ առաջացնում։ Պատրա՞ստ ենք։ Ծկսեցինք։ Երևակայական հրավերով ոտքի հանեք երևակայական մասսաներին։ Բոլորին վարակեցեք, վարակեցեք էնտուզիազմով։ Ի՞նչ եք անում։

Ոտքներդ բարձր նետեք, որպես թե երևակայական վերելք եք հաղթահարում։ Կապիտալ, պարեք ձախ կողմը Երկրորդ ինտերնացիոնալի տեսքով։ Ի՞նչ եք ձեռքներդ թափահարում։ Պարզեցեք իմպերիալիզմի շոշափուկները։ Շոշափուկներ չունե՞ք։ Այդ դեպքում հարկ չկա խցկվել դերասանների շարքերը։ Պարզեցեք ինչ ուզում եք։ Երևակայական հարստությամբ գայթակղեք պարող դամաներին։ Դամաներ, հրաժարվեցեք ձախ ձեռքի կտրուկ շարժումով։ Այդպես, այդպես, այդպես։ Երևակայական բանվորական մասսաներ, սիմվոլիկորեն ապստամբեցեք։ Կապիտալ, գեղեցիկ կնրպով ցած տապալվեք։ Լա՜վ է։

Կապիտալ, շունչներդ փչեք ազդեցիկ կերպով։

Տվեք գունագեղ ջղաձգումներ։

Հոյակա՜պ է։

Տղամարդկանց ազատ անձնակազմ, փշրեցեք երևակայական շղթաները, մղվեցեք դեպի սիմվոլիկ արևը։ Ձեռքներդ թափահարեցեք հաղթականորեն։ Ազատություն, հավասարություն և եղբայրություն, պատկերեք բանվորական կոհորտաների երկաթե ոտնատրոփը։ Ձեր որպես թե բանվորական ոտքերը դրեք որպես թե տապալված կապիտալի վրա։

Ազատություն, հավասարություն և եղբայրություն, ժպտացեք, որպես թե ուրախանում եք։ Տղամարդկանց ազատ անձնակազմ, ձևացրեք, որ դուք՝ «ով ճորտ է, մերկ է և սրուկ», և երևակայեցեք, որ դուք՝ «մեր նոր աշխարհը կշինենք մենք, ուր ոչ սոռուկ կա, ոչ դժգոհ»։ Բարձրացեք մեկմեկու ուսի, պատկերելով սոցիալիստական մրցության աճը։ Լա՜վ է։



Իբրև թե հզոր մարմիններից կառուցեք աշտարակ, պլաստիկ պատկերի մեջ մարմնավորելով կոմունիզմի սիմվոլը։

Ազատ երկրի տակտով թափահարեցեք ազատ ձեռքում բռնած երևակայական մուրճը, զգացնել տալով պայքարի պաթոսը։ Նվագախումբ, երաժշտության մեջ ավելացրեք ինդուստրիալ դղրդյունը։

Այդպե՛ս։ Լա՜վ է։

Կանանց ազատ անձնակազմ՝ բեմ։

Երևակայական ծաղկաշղթաներով դրասանգեք աշխատանքի տիեզերական մեծ բանակի աշխատավորներին, սիմվոլացնելով սոցիալիզմի օրոք բացվող երջանկության ծաղիկները։ Լա՜վ է։ Բարեհաճեցեք։ Պատրաստ է։ Ոգեշունչ մնջակատակ այս թեմայով.

«Կապիտալ ու հոգնություն՝
դերասաններին օգնություն»։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Բռա՜վո։ Սքանչելի՜ է։ Եվ ինչպե՞ս եք կարողանում ձեր այդպիսի տաղանդը սպառել հրատապ մանրուքների, դատարկ ֆելիետոնների վրա։ Այ սա իսկական արվեստ է՝ հասկանալի և՛ ինձ, և՛ Իվան Իվանովիչին, և՛ մասսաներին։

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Այո, այո, զարմանալի հետաքրքիր է։ Դուք հեռախոս ունե՞ք։ Ուզում եմ զանգել... Որևէ մեկին զանգել։ Ուղղակի հոգիս լի է բերնեբերան։ Սա վարակում է։ Ընկեր Մոմենտալնիկով, պետք է լայն կամպանիա ծավալել։

ՄՈՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

Էչելենցա, հրամայեցեք։
Ձունենք մենք մեծ ախորժակ։
Հաց-տեսարան դուք մեզ տվեք,
կգովերգենք անհապաղ։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Շատ լավ է։ Ամեն ինչ կա։ Ավելացրեք նաև փոքր-ինչ ինքնաքննադատություն։ Մի տեսակ սիմվոլիկ ձևով, հիմա դա խիստ այժմեական է։ Մի կողմի վրա փոքրիկ մի սեղան

եք, և, մինչդեռ դուք ձեր գործով կզբաղվեք, թող իր համար հոդվածներ գրի։ Շնորհակալություն, ցտեսություն։ Ես չեմ ուզում այսպիսի նրբագեղ ավարտից հետո տպավորությունը ծանրացնել ու փչացնել։ Ընկերական ողջույններով։

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Ընկերական ողջույններով։ Ի դեպ, ինչպե՞ս է ծայրից երրորդ այն դերասանուհու ազգանունը։ Շատ գեղեցիկ ու քնքուշ... տաղանդ է։ Կարելի է ծավալել լայն կամպանիա, կարելի է նույնիսկ նեղ, դե, ասենք... Ես և նա։ Ես կզանգեմ հեռախոսով։ Կամ թող նա ինքը զանգի։

ՄԱՄԵՆՏԱԼՆԻԿՈՎ

Էչելենցա, հրամայեցեք։
Ամոթ-մամոթ չունենք մենք։
Միայն հասցեն, հասցեն տվեք,
մենք անհապաղ կզանգենք։

Երկու սպասավոր կանգնեցնում են դեպի առաջին կարգ նետվող Վելոսիպեդկինին։

ՍՊԱՍԱՎՈՐ

Քաղաքացի, այ քաղաքացի, ձեզ քաղաքավարությամբ խնդրում են, հեռացեք այստեղից։ Ո՞ւր եք խցկվում։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Ես ուզում եմ անցնել առաջին կարգ...

ՍՊԱՍԱՎՈՐ

Իսկ ձրի քաղցրաբլիթներ չե՞ք ուզում։ Ձեզ քաղաքավարի խնդրում են, քաղաքացի, այ քաղաքացի։ Ձեր տոմսը բանվորական թաղում է, իսկ դուք խցկվում եք մաքուր հասարակության մեջ։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Ես գնում եմ առաջին կարգ, ընկեր Պոբեդոնոսիկովի մոտ, գործով։

ՍՊԱՍԱՎՈՐ

Քաղաքացի, այ քաղաքացի, թատրոն գնում են բավականության համար և ոչ թե գործով։ Ձեզ քաղաքավարությամբ ասում են, դուրս կորեք այստեղից։



ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Բավականությունը էգուց չէ մյուս օրվա գործ է, իսկ ես այսօրվա գործով եմ եկել, և, եթե անհրաժեշտ լինի, մենք ոչ միայն առաջին կարգը, բոլոր կարգերն իրար կխառնենք, օթյակներն էլ հետը։

ՍՊԱՍԱՎՈՐ

Քաղաքացի, ձեզ քաղաքավարությամբ ասում են, մաքրըվեք այստեղից։ Հանդերձարանի համար չվճարեցիք, ծրագիր չգնեցիք, տոմս էլ չունեք։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Դե ախր ես չեմ եկել նայելու։ Իմ գործի համար ես կուսակցական տոմսով էլ կանցնեմ այստեղ... Ես ձեզ մոտ եմ եկել, ընկեր Պոբեդոնոսիկով։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ի՞նչ եք գոռում։ Ով ո՞վ է նա։ Ինչ-որ Պոբեդոնո՞սիկով։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Հանաքը դենը, վերջ տվեք խաղին։ Հենց դուք եք այդ «նա»-ն, և ես եկել եմ ձեզ մոտ, որը ինքը համկառգլխպետ Պոբեդոնոսիկովն է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Նախքան վերևում նստած պատասխանատու ընկերոջը դիմելը պետք է իմանալ եթե ոչ նրա անուն-հայրանունը, ապա գոնե ազգանունը։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Քանի որ դու ես պատասխանատուն, դու էլ պատասխանիր, թե ինչո՞ւ են քո գրասենյակում Չուդակովի գյուտը թթու դրել։ Մեր տրամադրության տակ րոպեներ են մնում։ Դըժբախտությունն անուղղելի կլինի։ Բաց թողեք իսկույն դրամը, փորձը դուրս տանենք առավելագույն բարձր մի տեղ և...

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ի՞նչ անմտություն։ Ի՞նչ Չուդակով։ Ի՞նչ բարձր տեղ։ Ես ընդհանրապես այսօր ես ինքս եմ մեկնում Կովկասի բարձունքները։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Ջուղակովը գյուտարար է...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Գյուտարարները շատ են, իսկ ես եղակի եմ, և ընդհանրապես խնդրում եմ չանհանգստացնել ինձ գոնե համապատասխան ինստանցիաների կողմից կարգավորված հազվագյուտ հանգստի պահերին։ Անցեք ուրբաթ օրը։*

Ռեժիսորը եռանդագին ձեռքով է անում Վելոսիպեդկինին:

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Քեզ մոտ կգան ոչ թե ուրբաթ օրը, այլ այսօր, ոչ թե ես, այլ...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ով ուզում է թող գա, բայց ոչ թե ինձ մոտ, այլ իմ տեղակալի։ Եթե հրամանով հայտարարված է իմ արձակուրդի մասին, ուրեմն ես չկամ։ Պետք է հասկանալ մեր սահմանադրության կառուցվածքը։ Դա խայտառակությո՜ւն է։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*(Իվան Իվանովիչին)*

*Հասկացրեք սրան, հեռախոսեցեք, չէ՞ որ դուք խոստացաք։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Գործերով ձանձրացնել մի անձի, որը գտնվում է արձակուրդի մե՜ջ։ Զարմանալի հետաքրքիր է։ Դուք հեռախոս ունե՞ք։ Ես կզանգեմ Նիկոլայ Ալեքսանդրովիչին։ Պետք է պահպանել ծերացած պատասխանատուների առողջությունը, քանի դեռ նրանք ջահել են։*

ՌԵԺԻՍՈՐ

*Ընկեր Վելոսիպեդկին, աղաչում եմ ձեզ, սկանդալ մի սարքեք։ Ախր նա պիեսի Պոբեդոնոսիկովը չէ։ Նա պարզապես նման է, և աղաչում եմ ձեզ, որ նրանք գլխի չընկնեն։ Դուք լիակատար գոհացում կստանաք գործողության ընթացքում։*



ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Մնաք բարով, ընկեր։ Խոսք չունեմ, հեղափոխական թատրոն եք կոչվում, իսկ ինքներդ գրգռում եք... Ինչպես ասացի՞ք... անհանգստացնում պատասխանատու աշխատողներին։ Դա մասսաների համար չէ. բանվորները և գյուղացիները չեն հասկանա այդ, ու լավ է, որ չեն հասկանա, և բացատրել էլ պետք չէ նրանց։ Ի՞նչ եք մեզանից ինչ-որ գործ[illegible]անձեր դուրս բերում։ Մենք ուզում ենք անգործ լինել... Ինչպե՞ս են ասում, հանդիսատեսներ։ Ո-ո-ո՜չ։ Հաջորդ անգամ ես ուրիշ թատրոն կգնամ։*

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Այո, այո, այո։ Դուք տեսե՞լ եք «Բալենու քառակուսին»։ Իսկ ես եղել եմ «Քեռի Տուրբիններում»։ Զարմանալի հետաքրքիր է։*

ՌԵԺԻՍՈՐ

*(Վելոսիպեդկինին)*

*Ի՞նչ արիք։ Քիչ մնաց ամբողջ ներկայացումը տապալեիք։ Համեցեք բեմ։ Պիեսը շարունակվում է։*

## IV ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը խաչաձևվում է մուտքի սանդուղքներով: Սանդուղքների անկյուններ, հարթակներ և բնակարանների դռներ: Վերևի հարթակին երևում է հագնված Պ ո բ ե դ ո ն ո ս ի կ ո վ ը, ճամպրուկը ձեռքին: Փորձում է ուսով փակել դուռը, սակայն Պ ո լ յ ա ն բացում է դռնակը և դուրս վազում հարթակ: Ձեռքը դնում է ճամպրուկին:

ՊՈԼՅԱ

*Ես այսպես էլ պիտի մնա՞մ... Մաղալու չի։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ես խնդրում եմ վերջ տալ այս խոսակցությանը։ Ինչպիսի՜ ընտանեկան քաղքենիություն։ Ամեն մի բժիշկ կասի, որ լիակատար հանգստության համար անհրաժեշտ է պոկել իրեն,— հասկացիր, իրեն, և ոչ թե քեզ,— սովորական միջավայրից. դե, ահա ես էլ գնում եմ վերականգնելու պետու-*

թյան համար կարևոր օրգանիզմս, ամրապնդել այն զանազան լեռնային վայրերում։

ՊՈԼՅԱ

Ախր ես գիտեմ, սեփական աչքերովս տեսա, որ երկու տոմս բերին քեզ։ Ես կարող էի մտածել... Դե, ես քեզ ինչո՞վ եմ խանգարում։ Մազալու է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Թող քո այդ քաղքենիական պատկերացումները հանգստի մասին։ Ես նավակներով զբոսնելու ժամանակ չունեմ։ Դրանք մանր-մունր զվարճություններ են զանազան քարտուղարների համար։ Լող տուր, իմ գոնդոլ։ Իմը ոչ թե գոնդոլ է, այլ պետական նավ։ Ես չեմ գնում արևի տակ սևանալու։ Ես շարունակ մտածում եմ ընթացիկ մոմենտի մասին, իսկ հետո... զեկուցում, հաշվետվություն, բանաձև, սոցիալիզմ։ Ելնելով իմ հասարակական դիրքից, ինձ օրենքով սղագրուհի է հասնում։

ՊՈԼՅԱ

Ես քո սղագրությանը ե՞րբ եմ խանգարել։ Մազալու է։ Դե, լավ, ուրիշների առաջ աշխատում ես կեղծավորություն անել, բայց ո՞ւր ես ինձ խաբում։ Մազալու չի։ Ի՞նչ ես ինձ ծածկոց դարձրել։ Բաց թող ինձ, ի սեր աստծու, հետո կուզես ամբողջ գիշերը սղագրիր։ Մազալու է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ս-ս-ս... Դու ինձ խայտառակում ես քո անկազմակերպ և նամանավանդ կրոնական բացականչություններով։ «Ի սեր աստծո՜»։ Ս-ս-ս... Ներքևում ապրում է Կոզլյակովսկին, նա կարող է հայտնել Պավել Պետրովիչին, իսկ Պավել Պետրովիչը ծանոթ է Սեմյոն Աֆանասիչի ընտանիքի հետ։

ՊՈԼՅԱ

Թաքցնելու ի՞նչ կա։ Մազալու է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Դո՛ւ, դո՛ւ պետք է թաքցնես, թաքցնես քո կանացի քաղքենիական, անկումային տրամադրությունները, որոնք այսպիսի անհամապատասխան ամուսնություն ստեղծեցին։ Գոնե



մի միտք արա, երեսդ շուռ տված դեպի այն բնությունը, ուր ես գնում եմ հանգստանալու։ Միտք արա՝ ես և դու։ Հիմի այն ժամանակները չեն, երբ հերիք էր կողք կողքի հետախուզության գնալ ու քնել մի շինելի տակ։ Ես վերև եմ բարձրացել մտավոր, պաշտոնական և բնակարանային սանդուղքով։ Դու էլ պետք է աշխատես ինքնազարգանալ և դիալեկտիկորեն խուսանավես։ Մինչդեռ ես ի՞նչ եմ տեսնում ի դեմս քո։ Անցյալի մնացուկ, հին կենցաղի շղթաներ։

ՊՈԼՅԱ

Ես քեզ խանգարո՞ւմ եմ։ Մազալու է։ Դո՛ւ ինձ դարձրիր փետրած թխսամեռ։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ս-ս-ս... Հերիք է խանդես։ Ինքդ ես քարշ գալիս ուրիշների բնակարանում։ Կոմերիտական բավականություններ, այո՞։ Կարծում ես չգիտե՞մ։ Չես կարողանում նույնիսկ իմ հասարակական դիրքին համապատասխան սիրեկաններ ճարել։ Անառակ յուբկա։

ՊՈԼՅԱ

Լռի՛ր։ Մազալու չի։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ս-ս-ս... Ասացի քեզ, որ ներքևում ապրում է Կոզլյակովսկին։ Ներս գնանք։ Վերջապես պետք է վերջ տալ սրան։

Պոլյային ներս հրելով, շրխկացնում է դուռը: Ներքևի աստիճաններն երևում է Վ ե լ ո ս ի պ ե դ կ ի ն ը, նրա ետևից՝ Չ ո ւ դ ա կ ո վ ը, բեռնված անտեսանելի մեքենայով: Անտեսանելի մեքենան պահում են Դ վ ո յ կ ի ն ը և Տ ր ո յ կ ի ն ը:

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

Հուպ տվեք, ընկերներ։ Մնաց մի քանի աստիճան։ Կամա՞ց։ Որպեսզի նա նորից չթաքնվի քարտուղարների ու թղթերի ետևում։ Թող ժամանակի այս ռումբը նրա մոտ պայթի։

ՉՈՒԴԱԿՈՎ

Վախենում եմ չկարողանանք ժամանակին տեղ հասցնել։ Մեկ տասներորդական վայրկյանի սխալը մեր ժամանակով մի ամբողջ ժամվա տարբերություն կտա։

ԴՎՈՅԿԻՆ

Զգո՞ւմ ես, թե մասերը ոնց են տաքանում ձեռքի տակ։ Ապակին եռում է։

ՏՐՈՅԿԻՆ

Քանոնն իմ կողմում անասելի շիկացել է։ Էլեկտրասալիկ է, ազնիվ խոսք, իսկական էլեկտրասալիկ։ Քիչ է մնում ափիցս բաց թողնեմ։

ՉՈՒԴԱԿՈՎ

Մեքենայի ծանրությունը վայրկյան առ վայրկյան մեծանում է։ Համարյա կարող եմ երաշխավորել, որ մեքենայի մեջ օտար մարմին է կազմավորվում։

ԴՎՈՅԿԻՆ

Ընկեր Չուդակով, շուտ-շուտ գնա։ Էլ անհնար է պահել։ Կրակ ենք տանում։

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

(մոտ է վազում և, ձեռքերն այրելով, պահում)

Ընկերներ, անձնատուր մի լինեք։ Էլի մի տասը-տասնհինգ աստիճան։ Նա այստեղ է, վերևում։ Օ՜, գրողը տանի, դժոխքի կրակ է (Հեռացնում է այրված ձեռքը)։

ՉՈՒԴԱԿՈՎ

Այլևս բարձրացնել չի կարելի։ Ինչպես երևում է, վայրկյաններ են մնացել։ Շուտ։ Գոնե մինչև հարթակ հասցնենք։ Ցած դրեք։

Դռնից դուրս է նետվում Պոբեդոնոսիկովը, դուռը շրխկոցով փակում, ապա ծեծում է։ Դուռը կիսաբացվում է, երևում է Պոլյան։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Դու, իհարկե, մի հուզվիր... Պոլեչկա, հիշիր, որ դու ինքդ կարող ես հասկանալ, թե մեր կյանքը, իմ կյանքը կարող է կարգավորել միայն քո բարի կամքը։

ՊՈԼՅԱ

Ի՞մ։ Ի՞նքս։ Մագալու չի։



ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ի դեպ, ես մոռացա բրաունինգը թաքցնել։ Երևի ինձ պետք չգա։ Պահիր, խնդրում եմ։ Հիշիր, սա լցված է, և կրակելու համար հարկավոր է միայն ետ տանել ահա այս պահպանակը։ Մնաս բարով, Պոլեչկա։

Փակում է դուռը, ականջը սեղմում բանալու անցքին, լսում է։ Ներքևի աստիճանին երևում է Մեզալյանսովան։

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

Քթիկ, շո՞ւտ կիջնես։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ս-ս-ս...

Դղրդյուն, պայթյուն, կրակոց։ Պոբեդոնոսիկովը բացում է դուռն ու ներս ընկնում բնակարան։ Ներքևի հարթակին՝ հրավառություն։ Ցած դրած ապարատի տեղում լուսաշող կին՝ լուսաշող տառերի պսակով։ Ճոճում է «Մանդատ» բառը։ Ընդհանուր քարացում։ Շալվարը վեր քաշելով, հողաթափերը բոբիկ ոտքերին, զինված դուրս է ընկնում Օպտիմիստենկոն։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Որտե՞ղ։ Ո՞ւմ։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Ողջույն, ընկերներ։ Ես 2030 թվականի պատգամավորուհին եմ։ Քսանչորս ժամով կցված եմ ներկային։ Ժամկետը կարճ է, առաջադրանքները՝ արտակարգ։ Ստուգեցեք փաստաթղթերս ու տեղյակ եղեք։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

(նետվում է դեպի պատգամավորուհին, զննում է մանդատը, շուտասելուկի պես փնթփնթալով տեքստը)

«Կոմունիզմի ծննդյան պատմության ինստիտուտը...» այդպես... «լիազորված է...» ճիշտ է... «ընտրել լավագույններին...» պարզ է... «...փոխադրելու կոմունիստական դարաշրջան...»։ Ինչե՞ր են կատարվում, Ինչե՞ր են կատարվում, աստված իմ... (վազում է աստիճաններն ի վեր)։

Շեմքին հայտնվում է գրգռված Պոբեդոնոսիկովը։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ընկեր Պոբեդոնոսիկով, ձեզ մոտ պատգամավոր է եկել կենտրոնից։*

Պոբեդոնոսիկովը ճանում է կեպին, նամպրուկը ցած գցում, ցրված աչքի անցկացնում մանդատը, ապա ձեռքով շտապ հրավիրում է բնակարան: Օպտիմիստենկոյին շշնչյունով, ապա Ֆոսֆորային կնոջը։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(Օպտիմիստենկոյին)

*Շտապ զանգիր։ Տեղեկացիր, գիտես ումից, թե արդյոք դա հնարավո՞ր բան է, համապատասխանո՞ւմ է կուսէթիկային և աթեիստի համար խելքին մո՞տ բան է այսպիսի գերբնական բաներին հավատալը։* (Ֆոսֆորային կնոջը:) *Ես, իհարկե, արդեն տեղյակ եմ այս գործից և ամեն տեսակ աջակցություն ցույց եմ տվել։ Ձեր իրավասու օրգանները միանգամայն խելացի են վարվել, ձեզ ինձ մոտ ուղարկելով։ Այդ հարցն արդեն մեր հանձնաժողովում մշակվում է և ղեկավար հրահանգներ ստանալուն պես կհամաձայնեցվի ձեզ հետ։ Անցեք ուղղակի իմ կաբինետը, առանց ուշադրություն դարձնելու հավասարության անհարիրության հետևանքով ամուսնության կուլտուրական մակարդակի որոշ քաղքենիությանը։* (Վելոսիպեդկինին): *Խնդրե՛մ։ Չէ՞ որ ես ձեզ ասացի՝ անցեք ուղղակի ինձ մոտ։*

Պոբեդոնոսիկովը բաց է թողնում Ֆոսֆորային կնոջը, որը ճետրզհետե սառչելով, բնական տեսք է ստանում:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(մոտ վազող Օպտիմիստենկոյին)

*Դե, ինչ կա, ի՞նչ է պատահել։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Նրանք ծիծաղում են ու ասում, որ դա մարդկային հասկացողության սահմաններից դուրս է։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ա՛խ, սահմաններից դո՞ւրս է։ Ուրեմն, պետք է ԱՕՔՄԻ հետ կարգավորել։ Ամենաչնչին բաներն էլ պետք է բացատրել։ Իրենք չեն կարող ոչ մի նախաձեռնություն հանդես*



*բերել։ Ընկեր Մեզալյանսովա, ողագրությունը հետաձգված է, վերև բարձրացեք՝ անհապաղ արտաժամյա կուլտուրական կապի համար։*

# V ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մաներկրորդ գործողության ձևավորումը, միայն անկարգ վիճակում: «Կոմունիստական դարաշրջան, ընտրության և առաժման կազրություն. «Կոմունիստական դարաշրջան, ընտրության և առաժման»: Պատի երկայնքով նստած են Մեզալյանսովան, Բելբյուրո»: Պատի երկայնքով նստած են Մեզալյանսովան, Բելվեդոնսկին, Իվան Իվանովիչը, Կիչը, Պոբեդոնոսիկովը: Ընդունարանում հարտուղարում է Օպտիմիստենկոն, Պոբեդոնոսիկովը ետ ու առաջ է քայլում դժգոհ, երկու ձեռքով պահած երկու պորտֆելները:

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ի՞նչ կա, քաղաքացի։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ոչ, այսպես շարունակվել չի կարող։ Ես դեռ կխոսեմ այդ մասին։ Պատի թերթին էլ կգրեմ։ Անպայման կգրեմ։ Պետք է պայքարել բյուրոկրատիզմի և պրոտեկցիոնիզմի դեմ։ Ես պահանջում եմ ինձ առանց հերթի ներս թողնել։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ընկեր Պոբեդոնոսիկով, ախր ի՞նչ բյուրոկրատիզմ կարող է լինել կադրերի ստուգումից ու զտումից առաջ։ Հարկ չկա, որ դուք նրան անհանգստացնեք։ Գնացեք առանց հերթի։ Այ, երբ հերթը կանցնի, այն ժամանակ քշեք գնացեք առանց որևէ հերթի։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ինձ հարկավոր է այս րոպեին։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Այս րոպեի՞ն։ Խնդրեմ, այս րոպեին։ Միայն թե ձեր ժամացույցն ախր նրանի հետ չի բռնում։ Ախր, ընկեր, նրա ժամանակն ուրիշ է, և հենց որ նա ինձ ասի, դուք իսկույն ներս կանցնեք...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Բայց ախր ինձ անհրաժեշտ է տեղափոխման կապակցությամբ բազմաթիվ հարցեր պարզել՝ և՛ ռոճիկ, և՛ բնակարան, և՛ ուրիշ բաներ։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Թո՛ւհ։ Ախր ասում եմ ձեզ՝ մանրուքներով մի խցկվեք խոշոր պետհիմնարկություն։ Մենք չենք կարող մանրուքներով զբաղվել։ Պետությունը հետաքրքրվում է մեծամեծ գործերով. ասենք, ֆորդիզմ, ժամանակի մեքենա, այս, այն…

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Դուք երբևէ եղե՞լ եք հերթում։ Ես առաջին անգամ եմ հերթերում լինում։ Զարմանալի անհետաքրքիր է։

Պոբեդոնոսիկովի նախկին կաբինետը լիքն է: Հոկտեմբերյան առաջին օրերի բարձր տրամադրությունն ու մարտական անկարգությունը: Խոսում է Ֆոսֆորային կինը:

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Ընկերներ, այս հանդիպումը խիստ հապճեպ եղավ։ Շատերի հետ մենք տարիներ կանցկացնենք։ Ես ձեզ դեռևս մեր ուրախության շատ մանրամասնություններ կպատմեմ։ Նոր-նոր էր ձեր փորձի լուրը տարածվել, երբ մեր գիտնականները հերթապահություն սահմանեցին։ Նրանք շատ օգնեցին ձեզ, հաշվի առնելով ու ճշտելով ձեր անխուսափելի վրիպումները։ Մենք շարժվում էինք իրար ընդառաջ, ինչպես թունել փորող երկու բրիգադներ, մինչև որ այսօր ահա հանդիպեցինք։ Դուք ինքներդ էլ չեք նկատում ձեր գործերի ամբողջ վիթխարիությունը։ Մեզ համար ավելի նկատելի է. մենք գիտենք, թե ինչն է կյանք մտել։ Ես զարմանքով էի դիտում այն պստլիկ բնակարանները, որոնք անհետացել են մեզ մոտ և ուշիուշով վերականգնվում են թանգարանների կողմից, և ես դիտում էի պողպատի ու հողի այն հսկաները, որոնք պահպանվում են մեր երախտագետ հիշողության մեջ, որոնց փորձը այսօր էլ հասնում է մեզ կոմունիստական կառուցման ու կյանքի կերպարանքով։ Ես դիտում էի ձեզ համար աննկատելի այն յուղոտված շապիկներով պատանիներին, որոնց անունները վառվում են արժեզրկված ոսկու



սալիկներին։ Միայն այսօր ես իմ կարճատև թռիչքի ժամանակ նայեցի ու հասկացա ձեր կամքի հզորությունն ու շառաչը ձեր փոթորկի, որն այնպես արագ վերաճեց, դարձավ մեր երջանկությունը և մեր ողջ մոլորակի խնդությունը։ Ինչպիսի՜ հիացմունքով էի ես այսօր դիտում ձեր պայքարի լեգենդների կենդանացած տառերը, պայքարը մակաբույծների ու հարստահարիչների ողջ սպառազեն աշխարհի դեմ։ Աշխատանքով տարված, դուք ժամանակ չունեք ետ քաշվելու և հիանալու ձեզանով, սակայն ես ուրախ եմ ասելու ձեզ ձեր մեծության մասին։

ՉՈՒԴԱԿՈՎ

Ընկեր, ներեցեք, որ ես ընդհատում եմ ձեզ։ Բայց մեր ժամանակով մնում է վեց ժամ, և ինձ անհրաժեշտ են ձեր վերջին ցուցմունքները։ Քանի՞ հոգի պետք է ուղարկվի, նշանակման տարեթիվը, արագությունը։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Ուղղությունը՝ անվերջություն, արագությունը՝ վայրկյանտարի, տեղը՝ 2030 թվական, քանի հոգի և ովքեր՝ անհայտ է։ Հայտնի է միայն նշանակման կայանը։ Այստեղ արժեքը պարզ չէ։ Անցյալը ապագայի համար ձեռքի ափ է։ Կընդունեն նրանց, ովքեր կպահպանվեն հարյուր տարվա ընթացքում։ Սկսենք, ընկեր։ Ովքե՞ր են ձեզ հետ։

ՖՈՍԿԻՆ

Ե՛ս։

ԴՎՈՅԿԻՆ

Ե՛ս։

ՏՐՈՅԿԻՆ

Ե՛ս։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Իսկ մաթեմատիկոսների՞ց ով է՝ գծագրերի ու ղեկավարման համար։

ՖՈՍԿԻՆ

Մե՛նք։

ԴՎՈՅԿԻՆ

*Մե՛նք։*

ՏՐՈՅԿԻՆ

*Մե՛նք։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ինչպես։ Դուք և՛ բանվորներ եք, և՛ մաթեմատիկոսնե՞ր։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Շատ պարզ։ Մենք և՛ բանվորներ ենք, և՛ ուսանողներ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Մեզ համար պարզ է։ Ես չգիտեմ, թե ձեզ համար հե՞շտ է կոնվեյերից անցնել ղեկավարության, խարտոցից՝ հաշվեմեքենային։*

ԴՎՈՅԿԻՆ

*Այդպիսի անցումներ չէ, որ կատարել ենք, ընկեր։ Մենք գրահակիրներ ենք պատրաստել, հետո վառիչներ, վառիչների հաշիվը մաքրել, սկսել ենք սվիններ շինել, սվիններ շինեցինք-պրծանք, անցանք տրակտորներին, հետո էլ ամեն տեսակ բուհական գիտությունների... Մեզ մոտ էլ շատերին չէին հավատում, միայն թե մենք բանվոր դասակարգին չհավատալու այդ հիվանդությունը վերացրինք։ Երբ դուք ուսումնասիրում էիք մեր ժամանակը, մի փոքրիկ սխալ թույլ տվիք։ Դուք, կարծես, մտածում եք անցյալ տարվա մասի՞ն։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ինչպես տեսնում եմ, ձեր շարժուն, ճեպընթաց ուղեղով դուք կարող եք ուղղակի կանգնել մեր շարքերում ու ձեռք զարկել մեր աշխատանքին։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Հենց դրանից էլ վախենում ենք, ընկեր։ Մեքենան մենք գործի կդնենք և, իհարկե, կգանք, եթե բջիջն ուղարկի։ Բայց խնդրում եմ առայժմ մեզ ոչ մի տեղ էլ չտանեք։ Հենց այժմ մեր արտադրամասը պատրաստվում է անցնել անընդհատի. շատ կարևոր ու հետաքրքիր է իմանալ, թե արդյոք հնգամյակը չորս տարում կկատարե՞նք։*



ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Մի բան խոստանում եմ։ Տեղեկանքներ ստանալու համար կանգ կառնենք 1934 թվական կայարանում։ Բայց եթե ձեզ նմանները շատ են, տեղեկանք էլ հարկավոր չէ։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Գնացինք, ընկերներ։*

Գրասենյակի պատը։ Վազում-անցնում են Չուդակովը, Վելոսիպեդկինը, Դվոյկինը, Տրոյկինը, Ֆոսկինը, ընթացքի մեջ բաղդատելով պլանները։ Պոբեդոնոսիկովը մանրավարգում է Չուդակովի ետևից։ Չուդակովը ձեռքն է թափ տալիս։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(վրդովված, ձեռքը թափահարելով)

*Պա՛հ, ինչ-որ Չուդակով օգտվում է այն բանից, որ հնարել է ինչ-որ ժամանակի ապարատիկ և այդ պատասխանատու կնկա հետ ավելի շուտ է ծանոթացել։ Ես ընդհանրապես դեռ համոզված չեմ, թե այստեղ կենցաղային այլասերում գոյություն չունի և ընդհանրապես ֆրիդլյանդական կարգի կապեր։ Սեռ և բնավորություն։ Այո՛, այո՛։* (Օպտիմիստենկոյին։) *Սոորադրյալ ընկեր Օպտիմիստենկո, ախր դուք պետք է հասկանաք, որ խնդիրը վերաբերում է իմ, պատասխանատու աշխատողիս, հարյուրամյա պաշտոնական գործուղման մեկնելու կարևորագույն հարցին։ Ամբողջ մի հիմնարկության գլուխն անցած։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ախր ձեր ճանապարհորդությունը չի համաձայնեցված։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Այսինքն, ինչպե՞ս թե չի համաձայնեցված։ Ես արդեն վաղ առավոտից և՛ մանդատներ եմ դուրս գրել ինձ, և՛ լիտերներ։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Այ, տեսնում եք, իսկ ճանժողկոմատի հետ չի համաձայնեցված։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Բայց ի՞նչ գործ ունի այստեղ ճանճողկոմատը։ Ախր դա քյալլագյոզություն է։ Ախր դա գնացք չի։ Այստեղ մի վայրկյանում քառասուն մարդ կամ ութ ձի ամբողջ մի տարով առաջ կթռցնեն։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Մերժե՛լ։ Կենսական չէ՛։ Ո՞վ կհամաձայնի գործուղում գնալ, երբ նրան հարյուր տարվա համար օրապահիկ է պահանջվում, մինչդեռ դուրս են գրելու վայրկենապահիկ։

Պոբեդոնոսիկովի կաբինետը:

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Ընկերներ...

ՊՈԼՅԱ

Ձայն եմ խնդրում։ Ներեցեք անքաղաքավարության համար, ես առանց որևէ հույսի, ի՞նչ հույս կարող է լինել։ Մազալու է։ Ես պարզապես եկել եմ տեղեկանք վերցնելու, թե ինչ է սոցիալիզմը։ Ընկեր Պոբեդոնոսիկովն ինձ շատ բան է պատմել սոցիալիզմի մասին, բայց այդ բոլորը մի տեսակ մազալու չի։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Մի քիչ էլ սպասեք։ Դուք կմեկնեք ձեր ամուսնու, երեխաների հետ։

ՊՈԼՅԱ

Երեխաների՞ հետ։ Մազալու է։ Ես երեխաներ չունեմ։ Ամուսինս ասում է, որ մեր մարտական ժամանակներում ավելի լավ է չկապվել այդպիսի անգիտակից էլեմենտի սեմ, թե ալիմենտի հետ։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Լավ։ Երեխաները ձեզ չեն կապում, բայց չէ՞ որ շատ ուրիշ բաներ կապում են, քանի որ ապրում եք ձեր ամուսնու հետ։

ՊՈԼՅԱ

Ապրո՞ւմ։ Մազալու է։ Ես ամուսնուս հետ չեմ ապրում։



Նա ապրում է ուրիշների հետ, որոնք խելքով, զարգացմամբ հավասար են նրան։ Մազալու չի։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Իսկ ինչո՞ւ եք նրան ամուսին անվանում.

ՊՈԼՅԱ

Որպեսզի բոլորը տեսնեն, որ նա սանձարձակության դեմ է։ Մազալու է։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Հասկանում եմ։ Ուրեմն, նա պարզապես հոգում է ձեր մասին, որպեսզի դուք ամեն ինչ ունենա՞ք։

ՊՈԼՅԱ

Այո... Նա հոգում է, որ ես ոչինչ չունենամ։ Նա ասում է, որ իմ նոր զգեստը նրան կվարկաբեկի ընկերների աչքում։ Մազալու է։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Մազալու չի՛։

Գրասենյակի պատը: Անցնում է Պոլյան:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Պոլյա՞։ Ինչպե՞ս ընկար այստեղ։ Մատնեցի՞ր։ Գանգատվեցի՞ր։

ՊՈԼՅԱ

Գանգատվեցի՞։ Մազալու է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Դու նրան, գլխավորը, պատմեցի՞ր, թե մենք ինչպես էինք միասին, ուս ուսի ընդառաջ գնում կոմունիզմի արևին։ Ինչպես էինք պայքարում հին կենցաղի դեմ։ Կանայք սիրում են սենտիմենտալություն։ Այդ դո՞ւր եկավ նրան։ Այո՞։

ՊՈԼՅԱ

Միասի՞ն։ Մազալու է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Տես, հա, Պոլյա։ Դու չպետք է արատավորես իմ՝ կարևոր պաշտոն ունեցող կուսակցության անդամիս պատիվը։

*Դու պետք է հիշես կուսակցական էթիկան և աղբը սենյակից դուրս չհանես։ Ի դեպ, լավ կլիներ գնայիր խրճիթ, այսինքն՝ բնակարան, և հավաքեիր, աղբը դուրս տանեիր, իրերս դասավորեիր։ Ես մեկնում եմ։ Ես դեմ եմ համատեղությանը և առայժմ մենակ կգնամ, իսկ քեզ դուրս կգրեմ, երբ ընդհանրապես դուրս գրեմ ազգականներիս։ Տուն գնա, Պոլյա, թե չէ…*

ՊՈԼՅԱ

*Ի՞նչ «թե չէ»… Մաղալու չի։*

Պոբեդոնոսիկովի կաբինետ։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ձեր հիմնարկության ընտրությունը պատահական էր, ինչպես և գյուտերն են պատահական թվում։ Թերևս լավագույն մարդիկ այն հիմնարկում են, որտեղ աշխատում են Տրոյկիններն ու Դվոյկինները։ Բայց ձեզ մոտ ամեն քայլափոխում շինարարություն է, այստեղից էլ կարելի է մարդկանց լավ օրինակներ տանել։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ասացեք, իսկ ինձ կարելի՞ է ձեզ հետ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Դուք այստեղի՞ց եք։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Առայժմ ոչ մի տեղից։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ինչպե՞ս թե։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Կրճատեցին։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Այդ ի՞նչ է նշանակում։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ասում են, շրթունքներդ ներկում ես։*



ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ո՞ւմ շրթունքները։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Իմ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ուրիշ ոչինչ չե՞ք արել։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ձխկչխկացնում էի։ Սղագրում։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Լա՞վ։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Լավ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ուրեմն ինչո՞ւ ոչ մի տեղից։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Կրճատեցին։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ինչո՞ւ։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Շրթունքներ էին ներկում։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ո՞ւմ շրթունքները։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Իմ, ուրիշ էլ ո՞ւմ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Դե ախր ում ինչ գործն է։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Կրճատեցին։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ինչո՞ւ։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ասում են, շրթունքներդ ներկում ես։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Իսկ ինչո՞ւ էիք ներկում։*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ձներկես, բոլորովին չեն ընդունի։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Չեմ հասկանում։ Եթե դուք գոնե մեկ ուրիշի, ասենք, տեղեկանքի համար եկողի շրթունքները ներկեիք, դե, այն ժամանակ կարող էին ասել՝ խանգարում է, այցելուները նեղանում են։ Թե չէ...*

ՈՒՆԴԵՐՏՈՆ

*Ընկեր, շրթունքների համար դուք ինձ ներեցեք։ Ի՞նչ անեմ։ Ընդհատակում չեմ եղել, իսկ քիթս պեպենոտ է, այնպես որ ինձ վրա ուշադրություն են դարձնում միայն շրթունքներիս պատճառով։ Եթե ձեզ մոտ առանց դրա էլ մարդկանց վրա ուշադրություն են դարձնում, ասացեք ինձ, միայն թե ցույց տվեք ձեր կյանքը, թեկուզ մի քիչ։ Իհարկե, էնտեղ, մեզ մոտ, բոլորը կարևոր անձեր են... ծառայություններով, զանազան Պոբեդոնոսիկովներ։ Ես նրանց աչքին չեմ երևա, միայն թե թողեք... Թե որ հարմար չգամ, ետ կդառնամ... Իսկույն ետ ճամփեցեք։ Իսկ ճանապարհին կարող եմ որոշ բաներ անել. ձեր տպավորությունները կթելադրեք կամ ծախսերի հաշվետվությունը՝ կտպագրեմ։*

ՆՈՉԿԻՆ

*Իսկ ես կհաշվեմ։ Ավելի լավ է ես ձեր քրեական հետախուզության վարչությանը հայտնեմ, թե չէ այստեղ դատաքանները մինչև դես-դեն...*

Ընդմիջում:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Գրեք, մտցրեք արձանագրության մեջ։ Այդ դեպքում ես պետք է հայտարարեմ, որ ամեն տեսակ պատասխանատվություն վերցնում եմ իմ վրայից, և եթե նախընթաց գրագրության հետ ծանոթ չլինելու, այլև անձնակազմի անհաջող ընտրության պատճառով աղետ պատահի...*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Դե, դե, թողեք այդ... Մի սպառնացեք պետական խոշոր հիմնարկությանը, մենք չպետք է հուզվենք ու ջղայնանանք։ Իսկ եթե աղետ պատահի, տեղյակ կդարձնենք միլիցիային՝ արձանագրություն կազմելու համար։*

Անցնում է Նոչկինը, թաքնվելով Ունդերտոնի ետևում:

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(կանգնեցնելով Նոչկինին և հայացքով չափելով Ունդերտոնին)

*Ինչպե՞ս։ Դեռևս հիմնարկո՞ւմ եք։ Դեռևս ազատության մե՞ջ։ Ընկեր Օպտիմիստենկո։ Ինչո՞ւ միջոցներ ձեռք առնված չեն։ Բայց, ասենք, քանի որ դեռևս ազատության մեջ եք, չեք կարող խույս տալ հույժ շտապ աշխատանքից։ Անհրաժեշտ է համաձայն իմ գործուղումների դուրս գրել չվագրամ և օրապահիկ հարյուր տարվա համար, ելնելով ժամանակի ու միջին աշխատավարձի նորմալ հասկացողությունից, դե, և մնացած բաները՝ գործուղման ու հաշվետվության գումարներ... Մեքենայի փչացման դեպքում միգուցե հարկ լինի մի քսան, երեսուն տարի կանգ առնել որևէ խուլ կիսատարում, անհրաժեշտ է այս ամենը նախատեսել և ի նկատի ունենալ։ Չի կարելի այդպես անկազմակերպ թռչել...*

ՆՈՉԿԻՆ

*Իսկ դու կազմակերպված կերպով թռիր դրողի ծոցը, երշի՛կ։*

Անհետանում է:

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

*Երշի՞կ։ Դուք եղե՞լ եք Նիստերում։ Ես եղել եմ Նիստեքրում։ Ամենուրեք պանրի, խոզապուխտի, երշիկի բուտերբրոդներ, զարմանալի հետաքրքիր է։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(մենակ, փլվում է բազկաթոռին)

*Դե լավ, ես կհեռանամ։ Այսպիսի վերաբերմունքի դեպքում կասեմ գնում եմ թոշակի։ Թող հետագայում ինձ ուսումքում...*

*նասիրեն ժամանակակիցների հիշողություններով ու դիմանկարներով։ Ես կհեռանամ, ընկերներ, բայց հենց ձեզ համար ավելի վատ կլինի։*

Ներս է մտնում Ֆոսֆորային կինը։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ընդունելությունը վերջացած է։ Եկեք վաղը, նորմալ հերթի կարգով։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ի՞նչ ընդունելություն։ Ի՞նչ վաղը։ Ի՞նչ հերթ։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

(ցույց տալով «Առանց զեկուցման ներս չմտնել» ցուցանակը)

*Համաձայն հիմնական օրենքների։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ախ, դուք մոռացե՞լ եք այդ հիմարությունը հանել։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(վեր թռչելով տեղից ու քայլելով Ֆոսֆորային կնոջ հետ հեռու կողմի)

*Ողջույն, ողջույն, ընկեր։ Ներեցեք, որ ես ուշացա, սակայն այս գործերը... Բայց և այնպես մի րոպեով մտա ձեզ մոտ։ Ես հրաժարվեցի։ Բայց ոչ ոք լսել անգամ չի ուզում։ Մեկնիր, ասում են, ներկայացրու։ Դե, քանի որ կոլեկտիվը խնդրում է, ստիպված ես համաձայնել։ Միայն թե ի նկատի ունեցեք, ընկեր, ես կենտրոնական նշանակության աշխատող եմ, թող ուրիշները կոլխոզնիկություն անեն։ Դուք այդ բանը նախապես ի նկատի առեք ու վերաբերվեք։ Ընկեր Օպտիմիստենկոն կարող է կայծակ հեռագիր տալ մեր հաշվին։ Դուք, անշուշտ, ինքներդ էլ հասկանում եք, որ հարկ կլինի պաշտոն տրամադրել ինձ համաձայն իմ ստաժի ու հասարակական դիրքի, որպես այս բնագավառի խոշորագույն աշխատող։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր, ես ոչ ոքի ոչ մի տեղ չեմ ուղարկում։ Ես եկել եմ*



*ձեզ մոտ միայն համոզվելու համար։ Չեմ կասկածում, որ ձեզ հետ կվարվեն այնպես, ինչպես հարկն է։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ինկո՞գնիտո։ Հասկանում եմ։ Սակայն իբրև երկուստեք վստահված անձեր, մեր մեջ ոչ մի գաղտնիք լինել չի կարող։ Ես իբրև ավագ ընկեր պետք է նկատեմ, որ ձեզ շրջապատող մարդիկ ոչ լրիվին հարյուրտոկոսանոց մարդիկ են։ Վելոսիպեդինը ծխում է։ Չուդակովը խմում է, խմում է, երևի, համակինը ծխում է։ Չուդակովը խմում է, խմում է, երևի, հա... Պետք է ասեմ նաև կնոջս մապատասխան երևակայությանը։ Պետք է ասեմ նաև կնոջս մասին,— չեմ կարող կազմակերպությունից թաքցնել,— քաղքենի է, հակված դեպի նոր կապերը և նոր յուբկաները, որոնք միասին առած կոչվում են հին կենցաղ։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Դե, ձեր ի՞նչ գործն է։ Դրա փոխարեն աշխատում են...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Հետո ի՞նչ, որ դրա փոխարեն։ Ես նույնպես դրան կողմ եմ, բայց դրա փոխարեն չեմ խմում, չեմ ծխում, «նա չայ» չեմ տալիս, դեպի ձախ չեմ թեքվում, չեմ ուշանում, ան...* (թեքվում է ականջին), *անժուժկալ չեմ, չեմ ծեծում...*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Դուք խոսում եք այն բոլորի բաների մասին, որ «չեք, չեք, չեք»... Իսկ կա՞ որևէ բան, որ «եք, եք, եք»։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Եմ, եմ, ե՞մ։ Իհարկե։ Դիրեկտիվներ եմ անցկացնում, կուբանաձևեր եմ կցում գործին, կապն եմ կարգավորում, կուսանդամավճարներ եմ մուծում, կուսմաքսիմում եմ ստանում, սոցիաստորագրություն եմ դնում, կնքում եմ։ Պարզապես սոցիալիզմի տաքուկ անկյուն։ Այնտեղ ձեզ մոտ, երևի, թղթերի ցիրկուլյացիան կարգավորված է, այո՞, կոնվեյեր։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Չգիտեմ ինչի մասին եք խոսում, բայց, իհարկե, թերթերի թուղթը կանոնավոր կերպով մեքենաներին է հասցվում։*

Ներս են մտնում Պոնտ Կիչը և Մեզալյանսովան։

ՊՈՆՏ ԿԻՉ

*Ըհը՛, ըհը՛։*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Փլիզ, սըր։*

ՊՈՆՏ ԿԻՉ

*Սահյան, բերետով, դա վոլգա, լիք բենզին, և արժեք իջնել մաքուր չասեյշն...*

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

*Միստր Պոնտ Կիչը ուզում է ասել, որ կարող է պետական մատչելի գնով առնել բոլոր ժամացույցները, քանի որ դրանք բոլորովին ավելորդ են, և այն ժամանակ ինքը կհավատա կոմունիզմին։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Առանց թարգմանության էլ հասկանալի է։ Նախ ճանաչեցեք՝ օգուտները հետո։ Ընկերներ, չուշանաք. ժամանակի առաջին գնացքը դեպի 2030 թվական կայարանն է մեկնում ճիշտ ժամը տասներկուսին։*

## VI ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Չուդակովի ներքնահարկը: Անտեսանելի մեքենայի վրա աշխատում են Չուդակովը և Ֆոսկինը, Վելոսիպեդկինը և Դվոյկինը: Ֆոսֆորային կինը անտեսանելի մեքենան համեմատում է պլանի հետ:

Տրոյկինը պահպանում է դուռը։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր Ֆոսկին։ Քամին մեղմացնող պարզ վահաններ դրեք։ Հնգամյակը վարժեցրել է արագության ու տեմպին։ Անցումը համարյա աննկատելի կմնա։*

ՖՈՍԿԻՆ

*Ապակին փոխեմ։ Կեսմիլիմետրանոց։ Չջարդվող։*



ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր Դվոյկին։ Ստուգեցեք զսպանակները։ Տեսեք, որ տոների դերբուկներում չցնցի։ Անընդհատ իր սահուն ընթացքով երես է տվել։*

ԴՎՈՅԿԻՆ

*Սահուն կանցնենք, միայն թե ճամփին օղու շշեր ընկած չլինեն։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր Վելոսիպեդկին, հետևեցեք կարգապահության մանոմետրին։ Շեղում թույլ տվողները դուրս կթռչեն։*

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Բան չկա։ Ամուր կարգուկանոն կհաստատենք։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր Չուդակով, պատրա՞ստ է։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Կանգառման գիծն էլ չափենք, և կարելի է գործի գցել։*

Սպիտակ չափիչ ժապավենը ձգվում է անտեսանելի մեքենայի անիվների միջով:

ՎԵԼՈՍԻՊԵԴԿԻՆ

*Տրոյկին, բաց թող։*

«Ժամանակի քայլերգի» հնչյունների տակ չորս կողմից պլակատներով ներս են ընկնում ուղևորները:

### Ժամանակի քայլերգ

*Ճախրիր դու, երգ իմ,*
*թևիր ազատ,*
*Հայացքդ մեր վաշտերին*
*հառած։*

*Ա-*
*ռա՛ջ,*
*ժա-*
*մա-*
*նակ։*

Ժա-
մա-
նակ,
առա՛ջ,
Առա՛ջ, երկիրն իմ թող,
թևի առած,
Հինը
թոթափի,
նետի ցած։
Ա-
ռա՛ջ,
ժա-
մա-
նակ։
Ժա-
մա-
նակ,
առա՛ջ։
Քայլի՛ր, երկիր իմ,
արագ, արագ,
Կոմունան
շեմքիդ է կանգնած
Ա-
ռա՛ջ,
ժա-
մա-
նակ։
Ժա-
մա-
նակ,
առա՛ջ։
Իբրև մեծ պարգև,
հնգամյա՛կ,
Մի տարիդ
կառնենք ցած։
Ա-
ռա՛ջ,



ժա-
մա-
նակ։
Ժա-
մա-
նակ,
առա՛ջ։
Ուժ տուր, երկիր իմ,
արա՛գ,
Անկանգ թափ առած։

Ա-
ռա՛ջ,
ժա-
մա-
նակ։
Ժա-
մա-
նակ,
առա՛ջ։
Կոմո՛ւնա,
կենցաղին նեղած,
Տուր մահացու հարված։
Ա-
ռա՛ջ,
ժա-
մա-
նակ։
Ժա-
մա-
նակ,
առա՛ջ։
Ճախրի՛ր դու, երգ իմ,
թևիր ազատ,
Հայացքդ մեր վաշտերին
հառած։

Ա-

ռա՜ջ։

ժա-

մա-

նակ։

Ժա-

մա-

նակ,

առա՜ջ։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

(ջոկվելով ամբոխից, Չուդակովին)

*Ընկեր, ես պետք է կոնֆիդենցիալ կերպով հարցնեմ ձեզ՝ բուֆետ լինելո՞ւ է։ Այդպես էլ գիտեի։ Իսկ ինչո՞ւ հրամանով չի հայտնված։ Մոռացե՞լ եք։ Դե, ոչինչ, խմելիքը հերիքում է, ուտելիքի հարցում յոլա կգնանք։ Անցեք մեր կուպեն։ Ո՞ր տեղն է։*

ՉՈՒԴԱԿՈՎ

*Կանգնեցեք կողք կողքի։ Ուս ուսի։ Հրվելու մասին մի անհանգստացեք։ Հերիք է միայն այս անիվը դառնա, և մի վայրկյանից հետո...*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

(ներս է մտնում Մեզալյանսովայի ուղեկցությամբ)

*Դեռ զանգը չի՞ եղել։ Կարելի է տալ։ Իսկույն երկրորդը։* (Իվոյկինին): *Ընկեր, դու կուսակցակա՞ն ես։ Այո՞։ Օգնիր, խնդրում եմ, իրերը ներս բերելու։ Օ-օ-օ՜, կարևոր փաստաթղթեր կան։ Չի կարելի վստահել զանազան անկուսակցական բեռնակիրների, որոնք միայն փողով են տեղափոխում, իսկ քեզ, իբրև առաջքաշվածի, խնդրեմ՝ կրի՜ր։ Վստահում եմ... Ո՞վ է տեղավորում մարդկանց։ Ո՞վ է այստեղ գլխպետը։ Որտե՞ղ է իմ կուպեն։ Իմ տեղը, անշուշտ, ներքևում է...*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ժամանակի մեքենան դեռևս լիովին կահավորված չէ։ Դուք, իբրև այս տիպի տրանսպորտի պիոներներ, պետք է բոլորի հետ ոտքի վրա մնաք։*



ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Ի՞նչ գործ ունեն այստեղ պիոներները։ Պիոներական հավաքը վերջացել է, և խնդրում եմ այլևս երբեք ինձ չձանձրացնել պիոներներով։ Այդ կամպանիան անց է կացված։ Ես պարզապես չեմ գա։ Սատանան գիտի, թե ինչ է։ Անհրաժեշտ է, վերջապես, որ սովորեք պահպանել հին գվարդիականին, թե չէ ես կհեռանամ գվարդիայից։ Վերջապես, ես փոխհատուցում եմ պահանջում չօգտագործված արձակուրդի դիմաց։ Մի խոսքով, որտե՞ղ են իմ իրերը։*

Իվոյկինը ներս է բերում վագոնիկը, բարձված թղթե կապոցներով, գլխարկի տուփերով, պորտֆելներով, որսի հրացաններով և Մեզալյանսովայի պահարան-սնդուկով։ Վագոնիկի չորս անկյուններում չորս սետտերներ։ Վագոնիկի ետևից Բելվեդոնսկի՝ ճամպրուկով, արկղով, վրձիններով, դիմանկարով։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ընկեր, այս ի՞նչ վիթխարի հանրախանութ է։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Ի՞նչ եք ասում։ Սա փոքրիկ-փոքրիկ մամռակալում է։*

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

*Ախ, ինչնե՞րի՞դ է հարկավոր։ Գոնե մի մասը թողեք։*

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

*Իհարկե, ընկեր, հետո փոստով կուղարկեք։*

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

*Խնդրեմ առանց դիտողությունների։ Կախեք պատի թերթը և այնտեղ որքան կուզեք դիտողություններ արեք։ Ես պետք է գոնե իրեղեն շների առկայությամբ հրահանգներ, լիտերներ, պատճեններ, թեզիսներ, պատճենի պատճեններ, ուղղումներ, քաղվածքներ, տեղեկանքներ, քարտեր, որոշումներ, հաշվետվություններ, արձանագրություններ և այլ արդարացուցիչ փաստաթղթեր ներկայացնեմ։ Ես կարող էի լրացուցիչ վագոն-բիս պահանջել, բայց չեմ պահանջում, ելնելով անձնական կյանքի համեստությունից։ Աչքից մի կորցրեք հեռանր-շանի քաղաքականությունը։ Դա շատ և շատ պետք կգա նաև ձեզ։ Հաստիքներ ստանալով, ես իմ գրասենյակը կփոխադրեմ*

համաշխարհային մասշտաբի ռելսերի վրա։ Ընդարձակելով հասարակությունը, ես մասշտաբը կդարձնեմ միջմոլորակային։ Հուսով եմ, որ դուք չե՞ք ուզում գրասենյակայնացնել ու կաղմալուծել մեր մոլորակը։

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

(Ֆոսֆորային կնոջը)

Մի առարկեք, քաղաքացուհի։ Ախր մեղք է մեր մոլորակը։

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Միայն թե շուտ վերջացրեք։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ես կխնդրեի չխառնվել ձեր իրավասությանը չվերաբերող գործերին։ Այդ արդեն չափազանց է։ Կխնդրեի չմոռանալ, որ սրանք իմ մարդիկ են, և քանի դեռ չեմ ազատված, ե՛ս եմ այստեղ ամենագլխավորը։ Այս թուղթը ձանձրացրել է ինձ։ Հենց որ կառավարման սանձերը ձեռքս առնեմ, բոլորին կզանգատվեմ վճռականապես բոլորի բոլոր գործողությունների դեմ։ Ընկեր, մի կողմ քաշվեք։ Իրերը դրեք այստեղ։ Ո՞ւր է մոնոգրամ ունեցող, ջահել հորթի կաշվից պատրաստված բացդեղին պորտֆելը։ Օպտիմիստենկո, վազ տվեք։ Մի հուզվեք, կսպասեն։ Ես գնացքը կանգնեցնում եմ պետական անհրաժեշտությունից, և ոչ թե դատարկ բաների համար։

Օպտիմիստենկոն նետվում է դեպի դուրս, ընդառաջ է գալիս Պոլյան, ճամպրուկը ձեռքին։

ՊՈԼՅԱ

Խնդրեմ չփշշացնես։ Ես տունն էի հավաքում, ինչպես հրամայել էիր, հիմի կվերադառնամ, կվերջացնեմ։ Տես՝ մոռացել ես։ Մտածեցի՝ կարևոր բան է։ Մաղալու է։ Վազեցի բերի՝ խնդրեմ (Հանձնում է պորտֆելը)։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Ընդունում եմ պորտֆելը և ընդունում եմ ի գիտություն։ Պետք է ավելի շուտ հիշեցնեիր։ Հաջորդ անգամ ես այդ կդիտեմ իբրև ամուսնական կարգապահության ճեղքվածք ու թուլացում։ Ուղեկցորդներ, դո՛ւրս։ Մնաս բարով, Պոլյա։ Երբ տեղավորվեմ, կուղարկեմ քեզ ռոճիկիս երրորդ մասը՝ համաձայն դատական պրակտիկայի և ընդհուպ մինչև հնացած օրենսդրության փոփոխումը։



ՊՈՆՏ ԿԻՉ

(ներս մտնելով ու կանգ առնելով)

Ըհը՛, ըհը՛։

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

Փլիզ, սըր։

ՊՈՆՏ ԿԻՉ

Որ նա գող դուռն լիք համբիկ դառնամ քլունգով բիլլետեր։

ՄԵԶԱԼՅԱՆՍՈՎԱ

Միստր Կիչն ուզում է ասել և ասում է, որ թեքն առանց տոմսի է, որովհետև չգիտեր ինչ տոմս է հարկավոր՝ կուսակցակա՞ն, թե երկաթուղային, բայց համաձայն է ներածել ամեն մի սոցիալիզմի մեջ, միայն թե դա եկամտաբեր լինի իր համար…

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Փլիզ, փլիզ, սըր։ Ճամփին կպայմանավորվենք։

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Ողջո՛ւյն։ Մեր ողջույնը ձեզ, ձեր և մեր նվաճումներին։ Դուք տեսնվս մի վերջին ճիգ, և ամեն բան կհաղթահարվի։ Դուք տեսե՞լ եք սոցիալիզմը։ Ես հիմա կտեսնեմ սոցիալիզմը։ Զարմանալի հետաքրքիր է։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Եվ այսպես, ընկերներ… Որտեղ և ինչի՞ վրա կանգ առանք։

ՈՒՆԴԵՐՏՈՆ

Մենք կանգ առանք «Եվ այսպես, ընկերներին» վրա։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Այո։ Խոսք եմ խնդրում։ Վերցնում եմ խոսքը։ Եվ այսպես, ընկերներ, մենք ապրում ենք այն ժամանակ, երբ իմ ապարատում հնարել են ժամանակի ապարատը։ Այստված ժամանակի այդ ապարատը հնարված է հենց իմ ապարատում,

որովհետև իմ ապարատում ազատ ժամանակ որքան ուզես։ Ներկա ընթացիկ մոմենտը բնորոշ է նրանով, որ դա անշարժ մոմենտ է։ Իսկ քանի որ անհայտ է, թե անշարժ մոմենտում որտեղ է սկիզբն ու վերջը, ապա ես նախ եզրափակման խոսք կասեմ, հետո՝ բացման խոսք։ Ապարատը հիանալի է, ապարատը հպարտ է՝ ուրախ եմ և ես, և իմ ապարատը։ Մենք ուրախ ենք, որովհետև քանի որ արձակուրդ ենք գնում տարին մեկ անգամ և տարի բաց չենք թողնում, ապա կարող ենք յուրաքանչյուր տարի արձակուրդում լինել երկու տարի։ Եվ ընդհակառակը, այժմ մենք ամիսը մեկ անգամ ենք ռոճիկ ստանում, բայց քանի որ կարող ենք ամբողջ ամիսը մի օրում բաց թողնել, ապա կարող ենք ամբողջ ամսվա ընթացքում ամեն օր ռոճիկ ստանալ։ Եվ այսպես, ընկերներ...

ՁԱՅՆԵՐ

— Կորչի՛։
— Բավակա՛ն է։
— Առանց գլխներիս ավետարան կարդալու։
— Զուզակով, փակիր դրա ժամանակը։

Զուզակովը փակում է Պոբեդոնոսիկովի ժամանակը: Պոբեդոնոսիկովը շարունակում է ձեռքերը թափահարել, բայց արդեն ոչ մի ձայն չի լսվում:

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Իր հերթին խոսք եմ վերցնում բոլորի անունից և ուղղակի ձեր դեմքին կասեմ, առանց դեմքերին նայելու, որ մեզ համար մեկ է, թե ինչ դեմք է կանգնած հիմնարկի գլուխ. որովհետև մենք հարգում ենք միայն այն դեմքը, որ դրված է ու կանգնած է։ Բայց կասեմ առանց երեսպաշտության, որ ամեն դեմքի համար հաճելի է, որ ինքը նորից ձեր հաճելի դեմքն է։ Ուստի բոլորի անունից այս ժամացույցը մատուցում եմ ձեզ, որովհետև այս աշխատող ժամացույցը կապի հենց ձեզ, իբրև մի դեմքի, որը կանգնած է...

ՁԱՅՆԵՐ

— Կորչի՛։
— Աղ դրեք լեզվին։
— Փակիր դրա ծորակը, Զուզակով։



Զուզակովը անջատում է Օպտիմիստենկոյին: Օպտիմիստենկոն ևս շարունակում է ձեռին-ոտին անել, բայց ոչինչ չի լսվում:

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Ընկերներ։ Առաջին իսկ ազդանշանով մենք առաջ կսլանանք, ճեղքելով զառամած ժամանակը։ Գալիքը կընդունի յուրաքանչյուրին, ով կոմունայի կոլեկտիվին հարազատ թեկուզ մի գիծ կունենա՝ աշխատելու ուրախություն, զոհաբերության ծարավ, գյուտարարության անխոնջ եռանդ, գոռոզությունը մարդկայնությամբ փոխարինելու պատրաստակամություն։ Տանապատկենք ու շարունակենք հնգամյակի քայլերը։ Կանգնեք կուռ շարքերով, իրար կողք կողքի։ Թռչող ժամանակը կսրբի հնոտիով ծանրաբեռնված բալաստը, թերահավատությամբ ամայացած հոգիների բալաստը։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Պոլյա, ետ քաշվիր։

ՆՈՉԿԻՆ

(Ներս է ընկնում, խույս տալով հետապնդումից)

Միայն սոցիալիզմին հասնեի, իսկ այնտեղ արդեն կպարզեն։

ՄԻԼԻՑԻՈՆԵՐ

(հասնում է նրան, սուլելով)

Բռնեցեք դրան։

Ցատկում են մեքենայի մեջ:

ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԿԻՆ

Մեկ, երկու, երե՛ք։

Բենգալյան պայթյուն: «Ժամանակի քայլերգը»: Մթություն: Թեմում են Պոբեդոնոսիկովը, Օպտիմիստենկոն, Բելվեդոնսկին, Մեզալյանսովան, Պոնտ Կիչը, Իվան Իվանովիչը՝ ժամանակի սատանի անիվով դես ու դեն նետված:

ՕՊՏԻՄԻՍՏԵՆԿՈ

Հասանք, իջեք։

ՊՈԲԵԴՈՆՈՍԻԿՈՎ

Պոլյա, Պոլեչկա։ Շոշափիր ինձ, զննիր բոլոր կողմերից։

*Ինձ թվում է, թե ժամանակն անցել է իմ վրայով։ Պոլի՛նա... Տարե՞լ են։ Բռնե՛լ, հասնել ու անցնել։ ժամի քանի՞սն է։* (Նայում է նվեր ստացած ժամացույցին):

Օ Պ Տ Ի Մ Ի Ս Տ Ե Ն Կ Ո

*Վերադարձրեք, վերադարձրեք ժամացույցը, քաղաքացի։ Կենցաղային կաշառքն իբրև այդպիսին վայել չէ մեզ, մանավանդ որ ես մենակ բոլորի անունից իմ ամբողջ ամսվա աշխատավարձը գրել եմ այդ ժամացույցի վրա։ Մենք մեզ համար մի այլ անձ կգտնենք, որպեսզի ժամացույցը նվեր մատուցենք ու հարգենք։*

Ի Վ Ա Ն Ի Վ Ա Ն Ո Վ Ի Չ

*Ծառը կտրում են՝ տաշեղներ են թռչում։ Մեխանիզմի փոքրիկ... մեծ թերություններ։ Պետք է գնալ ու ներգրավել սովետական հասարակայնությանը։ Զարմանալի հետաքրքիր է։*

Պ Ո Բ Ե Դ Ո Ն Ո Ս Ի Կ Ո Վ

*Նկարի՛չ, որսա վայրկյանը, կենդանի մարդուն պատկերիր մահացու փիրավորանքի պահին։*

Բ Ե Լ Վ Ե Դ Ո Ն Ս Կ Ի

*Ո-ո-ո՜չ։ Ձեր ռակուրսն այժմ մի տեսակ անհաջող է։ Բնորդին պետք է նայել այնպես, ինչպես բաղը նայում է պատշգամբին։ Ինձ մոտ միայն վարից վեր է ֆիովին գեղարվեստական ստացվում։*

Պ Ո Բ Ե Դ Ո Ն Ո Ս Ի Կ Ո Վ

(Մեզալյանսովային)

*Լավ, լավ, թող փորձեն, լողան թող առանց առաջնորդի ու առաղաստի։ Հեռանում եմ դեպի անձնական կյանք՝ հուշեր գրելու։ Գնանք, ես քեզ հետ եմ, քո քթիկը։*

Մ Ե Զ Ա Լ Յ Ա Ն Ս Ո Վ Ա

*Ես արդեն քթիկով եմ, նույնիսկ քթով, և նույնիսկ շատ մեծ քթով։ Ոչ սոցիալիզմ կարողացաք կարգավորել, ոչ էլ մի կնոջ։ Ախ, դուք տպա... վորիշ ֆիգուրա եք, խոսք չկա։*



*Գուդ բայ, ադյո, աուֆիդերզեյն, մնաք բարով։ Փլիզ, մայ Կիչիկ, մայ Պոնչիկ։*

Գնում է Պոնտ Կիչի նետ։

Պ Ո Բ Ե Դ Ո Ն Ո Ս Ի Կ Ո Վ

*Ե՛վ նա, և՛ դուք, և՛ հեղինակը, ի՞նչ էիք ուզում ասել այս ամենով... Որ ես իբրև թե պետք չե՞մ կոմունիզմին։*

Վ Ե Ր Ջ

*1929—1930*

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ես ինքս (էջ 5)։ Ինքնակենսագրական այս դիտողությունները Վ. Վ. Մայակովսկին գրել է 1922 թ. և տպագրել Բեռլինում լույս տեսնող «Նոր ռուսական գիրք» հանդեսում։ Հետագայում, 1928-ին, այդ դիտողությունները զետեղել է իր երկերի ժողովածուի առաջին հատորում, շարունակելով շարագրանքը մինչև այդ թվականը ներառյալ։ Դավիթ Բուրլյուկ — բանաստեղծ և նկարիչ, որը Վ. Մայակովսկու հետ ելույթներ էր ունենում գրական երեկոներին։ Բաղդադի գյուղը ՍՍՀՄ Գերագույն Սովետի 1940 թ. ապրիլի 13-ի հրամանագրով վերանվանված է Մայակովսկի (Վրացական ՍՍՀ-ի Մայակովսկի շրջանի կենտրոնը)։ Մ. Յու. Լերմոնտովի «Վեճը» («Спор») բանաստեղծությունը։ Ալիխանով-Ավարսկի — գեներալ-մայոր, 1905 թ. Քութայիսի նահանգի զինվորական նահանգապետ։ Հայտնի է հեղափոխական հուզումների ճնշման իր դաժանությամբ։ «Էրֆուրտյանը» — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի էրֆուրտյան ծրագիրը, որն ընդունված է 1891 թ. Էրֆուրտում կայացած համագումարում։ Մարքսի կողմից ջախջախիչ քննադատության ենթարկված Գոթայի ծրագրի փոխարեն ուսումնասիրվում էր մարքսիստական անլեգալ խմբակներում։ Լասսալ Ֆ. (1825—1864) — գերմանական բանվորական շարժման գործիչներից մեկը և ռեֆորմիզմի հիմնադիրը։ «Այն օրից ես ատում եմ Բեմերին» — խոսքը վերաբերում է նկարչուհի-ակվարելիստ Ելիզավետա Բեմին, որը հաջողություն ուներ բուրժուաքաղքենիական հասարակության շրջանում։ «Սանին» — Մ. Արցիբաշևի պոռնոգրաֆիկ վեպը։ Հոլբեյն — Հանս Հոլբեյն Կրտսեր, XVI դարի գերմանական նկարիչ, Վերածնության շրջանի արվեստի խոշորագույն վարպետներից մեկը։ Սաշա Չյոռնի (Ա. Գլիկբերգ — 1880—1932) — բանաստեղծ, նախահեղափոխական շրջանում հայտնի էր իր սատիրաներով։ «Ռուսական ֆուտուրիզմ» ասելով, Վ. Մայակովսկին նկատի ունի այն գրական խմբակը, որի մեջ, բացի իրենից, մտնում էին Վ. Կամենսկին, Վ. Խլեբնիկովը, Ա. Կրուչոնիխը և ուրիշ-



ներ։ «Ապտակ հասարակական ճաշակին» — ժողովածու, որը 1912-ին հրատարակեցին Դ. Բուրլյուկը, Վ. Մայակովսկին, Վ. Կամենսկին, Վ. Խլեբնիկովը, Ա. Կրուչոնիխը և ուրիշներ։ Ժողովածուի մեջ տպագրված էր նույն անունը կրող հայտնի մանիֆեստը։ «Բուբնովի վալետ» — 1909 թ. կազմակերպված նկարիչների միություն, որի մեջ մտնում էին Պ. Կոնչալովսկին, Ի. Մաշկովը, Մ. Լարիոնովը և ուրիշներ։ Կուոկկալա — այժմ Ռեպինո, ամառանոցային վայր ֆիննական ծոցի ափին, որտեղ ապրում էին նկարիչ Ի. Ռեպինը, գրող Չուկովսկին, ռեժիսոր Ն. Եվրեինովը։ 1905 թ. ամռանը Վ. Մայակովսկին լինում էր նրանց մոտ։ Կուոկկալայից ոչ հեռու, Մուստամյակիում, ապրում էր Մ. Գորկին։ «Լեֆ» — ամսագիր, լույս էր տեսնում Վ. Մայակովսկու խմբագրությամբ 1923 թ. մարտից մինչև 1925 թվականի գարունը։

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայրիկը և գերմանացիների կողմից սպանված երեկոն (էջ 29)։ Գլազկ — ոսկեթել կամ արծաթաթել կտոր։ Կովնո — Լիտվայի Կաունաս քաղաքի նախկին անունը։

Էժան լուծարքավաճառք (էջ 38)։ Այսօր Պետրոգրադում, Նադեժդինսկում... — փողոց Պետրոգրադում, որտեղ այն ժամանակ ապրում էր Մայակովսկին։ Այժմ՝ Մայակովսկու փողոց։

Ժողովամոլներ (էջ 59)։ 1922 թ. մարտի 5-ին «Իզվեստիայում» տպագրված այս բանաստեղծությունը գրավում է Վ. Ի. Լենինի ուշադրությունը։ Հաջորդ օրը, մարտի 6-ին, հանդես գալով մետաղագործների համառուսաստանյան համագումարի կոմունիստական ֆրակցիայում, Վլադիմիր Իլյիչն ասաց. «Երեկ ես պատահաբար «Իզվեստիայում» կարդացի Մայակովսկու մի բանաստեղծությունը քաղաքական թեմայով։ Ես նրա բանաստեղծական տաղանդի երկրպագուներից չեմ, թեև լիովին ընդունում եմ իմ անկոմպետենտ լինելը այդ ասպարեզում։ Բայց վաղուց է ես այդպիսի հաճույք չէի զգացել քաղաքական և վարչական տեսակետից։ Իր բանաստեղծության մեջ նա սարսափելի ծաղրում է նիստերը և ծաղր ու ծանակի է ենթարկում կոմունիստներին, թե նրանք շարունակ նիստեր ու նորից նիստեր են անում։ Չգիտեմ, պոեզիայի տեսակետից ինչպես, բայց քաղաքականության տեսակետից երաշխավորում եմ, որ այդ միանգամայն ճիշտ է» (Վ. Ի. Լենին, 4-րդ հրատ., հատ. 33, էջ 260—61)։ Тео-ն և Гукон-ը միավորելու — այսինքն, Լուսժողկոմատին կից Գլխքաղլուսվարի թատերական բաժինը և Հողժողկոմատին կից Ձիաբուծության գլխավոր վարչությունը։

Ընկեր Նետտեին (էջ 67)։ Թեոդոր Նետտե — Արտաքին գործերի ժողկոմատի դիվանագիտական սուրհանդակը։ Սպանվել է 1926 թ. փետրվարի 5-ին, գնացքի մեջ դիվանագիտական փոստը հերոսաբար պաշտպանելու ժամանակ։ Նետտեի անվամբ կոչված է սևծովյան նավերից մեկը։

Հարեյյանական (էջ 73)։ Գրված է 1924 թ. Ա. Ս. Պուշկինի ծննդյան 125-ամյակի առիթով։ «Կոոպսախ»— շաքարի արդյունաբերության կոոպերացիայի ռուսերեն կրճատ անունը։ Կոոպսախի ցուցանակները կապույտ էին՝ դեղին ճառագայթներով, որոնց միջից բարձրանում էր շաքարագլուխը։ «Red» և «White Star»— «Կարմիր» և «Սպիտակ Աստղ»— ամերիկյան շոգենավային ընկերությունների անուններ։ Entre nous (ֆրանս.)— մեր մեջ մնա։ Դորոգոյչենկո, Ռոդով, Կիրիլով, Գերասիմով— «Կուզնիցայի» և ՌԱՊՊ-ի շրջանի բանաստեղծներ։ Ժիրկոստ (Трест жировой и костяной промышленности)— ճարպի և ոսկորի արդյունաբերության տրեստ։

Վերսալ (էջ 83)։ Կապետ— ֆրանսիական թագավորների՝ Կապետինգների դինաստիան, որը Ֆրանսիայում թագավորեց X—XIV դարերում։ Մայակովսկին նկատի ունի հեղափոխության ժամանակ Լյուդովիկոս XVI-ի փախուստը Փարիզից Վերսալ. Բուրբոնների դինաստիան, որին պատկանում էր Լյուդովիկոսը, իգական գծով Կապետինգների ժառանգորդն էր։ Պոմպադուր— Լյուդովիկոս XV-ի սիրուհին։ Անտուանետա— Մարիա Անտուանետա, ֆրանսիական թագուհի, որին գլխատեցին հեղափոխության ժամանակ։

Վեց կույսեր (էջ 87)։ Քվոտա— էմիգրանտներին Ամերիկա գնալ թույլատրելու նորմա։ Լեոն և Պիոս— Հռոմի պապերի անուններ։

Բլաք ընդ ուայթ (էջ 90)։ Բլաք ընդ ուայթ— սև և սպիտակ։ Կոլլարիո— հավաննական ծաղիկներ։ Վեդադո— հարուստների քաղաքամերձ թաղամասը Հավաննայում։ Հենրի Կլեյ ընդ Բոք լիմիթըդ— ակցիոներական ընկերություն։ Պրադո— Հավաննայի գլխավոր փողոցը։ Այ բեգ յոր փարդըն— ներողություն եմ խնդրում։

Մարտանրավեր (էջ 107)։ Նիք Քարտեր— ամերիկյան ոստիկանության հռչակավոր խուզարկու, դետեկտիվ գրքերի հերոս։ Պրոհիբիշըն— ոգելից խմիչքների գործածությունն արգելող օրենքը Ամերիկայում։

Սերգեյ Եսենինին (էջ 113)։ Այս բանաստեղծությունը Մայակովսկին համարում էր իր լավագույն գործերից մեկը։ «Տեսնում եմ՝ կտրված երակով ձեր դանդաղ ճոճում եք պարկը սեփական ոսկորների»— Սերգեյ Եսենինը ինքնասպանություն գործեց 1925 թ. դեկտեմբերի 27-ին։ Նա կախվեց, նախապես բանալով երակը և սենյակի պատին արյամբ գրելով իր վերջին ոտանավորը։ Նապոստովականներ— ՌԱՊՊ-ի (պրոլետարական գրողների ռուսաստանյան ասոցիացիա) ղեկավար օրգան «Նա պոստու» ամսագրի շուրջը համախմբված գրողներ և քննադատներ։ Կոգանին— ռուս ժամանակակից գրող։ Անգլետեր— հյուրանոց Լենինգրադում, որտեղ Եսենինը ինքնասպանություն գործեց։

Մեր պատանեկությանը (էջ 138)։ MXAT— Մոսկվայի Գորկու անվան Գեղարվեստական Ակադեմիկ թատրոնը, որ 1898-ին հիմնադրել են Կ. Ս. Ստանիսլավսկին և Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն։ ՄԽԱՏ-ի դերասանական կոլեկտիվը որպես օրենք օգտվում է ռուսերեն լեզվի լավագույն և հստակ մոսկովյան առոգանությունից։ Խոխոլ— հեղափոխությունից առաջ



շովինիստ վիկիկտուսները այդպես էին անվանում ուկրաինացիներին։ «Կացապ»— նախահեղափոխական շրջանի հայհոյական արտահայտություն. այդպես էին կոչում ռուսներին շովինիստ ուկրաինացիները։

## Պոեմներ

Վարտիքավոր ամպը (էջ 168)։ Պոեմն ավարտված է 1915 թվականի հուլիսին, Մայակովսկին այն համարում էր ծրագրային գործ. «Նախնական անունը՝ «Տասներեքերորդ առաքյալ», ջնջված է գրաքննիչի կողմից։ Չեմ վերականգնում։ Վարժվել եմ։ «Կորչի ձեր սերը», «Կորչի ձեր արվեստը», «Կորչի ձեր հասարակարգը», «Կորչի ձեր կրոնը»— չորս մասերի չորս ճիչը»։

Ջոկոնդա— Լեոնարդո դա Վինչի— Մոննա Լիզայի դիմանկարը։ 1911 թ. գողացվեց Լուվրի թանգարանից։ Լուզիտանիա— անգլիական մարդատար շոգենավ, որը 1915 թվականի մայիսի 7-ին տորպեդահարվեց գերմանական սուզանավի կողմից ու այրվեց բաց ծովում։ Զրադաշտ— հին իրանական կրոնի միֆական ստեղծողը, «Լոկ Վան-Գուտենի կակաոն խմեք»— մահվան դատապարտվածը, իր ընտանիքն ապահովելու համար, համաձայնում է գլխատման պահին բղավել այդ խոսքերը։ Այդ փաստը Մայակովսկին վերցրել էր թերթերից։ Բարաբբա— ըստ ավետարանական ավանդության՝ ավազակ, որը խաչելության էր դատապարտված նույն օրը, ինչ և Քրիստոսը։ Ամբոխը դատավորներից պահանջում է ներումն շնորհել Բարաբբային և խաչել Քրիստոսին։ Տիանա— կանացի անուն Իգոր Սևերյանինի համանուն բանաստեղծությունից։ Հերովդա— համաձայն ավետարանական ավանդության՝ սկուտեղին դրված Հովհաննես Մկրտչի գլխի շուրջը պարել է ոչ թե Հերովդան, այլ նրա դուստր Սալոմեն։ Այստեղ Մայակովսկին օգտվում է այն ապոկրիֆից, ըստ որի, Հերովդան և Սալոմեն միանում են մի անձնավորության մեջ։

Ողնաշար-ֆլեյտա (էջ 192)։ Պոեմը գրված է 1915 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին. նվիրված է Լ. Յու. Բրիկին։

«... ասես երազում էր ինչ-որ նոր Բյալիկ»— Բյալիկ Խաիմ Նախման (1873—1934)— հրեա բանաստեղծ, սիոնիզմի գաղափարախոս։ «Ալբերտ արքան, որ հանձնել էր քաղաքներն իր»— Բելգիայի Ալբերտ թագավորը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իր քաղաքները հանձնեց Բելգիայի տերիտորիայով Ֆրանսիայի վրա արշավող գերմանացիներին։

Սիրում եմ (էջ 204)։ Պոեմը գրված է 1922 թվականի սկզբներին և նվիրված է Լ. Յու. Բրիկին։

Մյուլլեր— շվեդական մարմնամարզության սիստեմի հեղինակը։ «Գնացի թափառելու մոսկովյան բանտերը»— 1909 թվականին Մայակովսկին ձերբակալվեց կանանց բանտից 13 կալանավորների փախուստը կազմակերպելուն մասնակցելու համար։ Նրան տեղավորեցին Բուտիրյան բանտի մենախցում։ Իլովայսկի Դ. Ի. (1832—1920)— պատմության բազմաթիվ դասագրքերի հեղինակ։ Նրա դասագրքերը հավանություն էին ստացել ցարական կառավարության կողմից ու տարածված էին դպրոցներում։

Այս մասին (էջ 214)։ Մայակովսկին պոեմի աշխատանքներն սկսել է 1922 թվականի դեկտեմբերի վերջերին և ավարտել 1923 թվականի փետրվարի 11-ին։ Ինքնակենսագրության մեջ այդ առթիվ նա գրում է. «Գրեցի «Այս մասին»։ Անձնական մոտիվներով ընդհանուր կենցաղի մասին»։

Բալշին — Մայակովսկու հարևանը։ Բեկլին — գերմանացի նկարիչ։ Նախահեղափոխական շրջանում նրա «Մեռյալների կղզին» նկարի վերատպությունը կարելի էր տեսնել յուրաքանչյուր քաղքենիական ընտանիքում։ Ռասկոլնիկով — Դոստոևսկու «Ոճիր և պատիժ» վեպի հերոսը։ Լյուբան, Տվեր, Կլին — կայարաններ Պետրոգրադից Մոսկվա տանող ճանապարհին։

Վ. Ի. Լենին (էջ 265)։ «Վլադիմիր Իլյիչ Լենին» պոեմը Մայակովսկին գրել է 1924 թվականին։ Ինչպես երևում է պոեմի տեքստից, դրա վրա Մայակովսկին սկսել է աշխատել Լենինի թաղումից որոշ ժամանակ անց և ավարտել է 1924 թվականի հոկտեմբերին։ Նույն թվականի հոկտեմբերի 18-ին Մայակովսկին պոեմը կարդացել է Մոսկվայի Մամուլի տանը, իսկ 21-ին՝ ՌԿ(բ)Կ Մոսկվայի կենտկոմի Կարմիր դահլիճում, Մոսկվայի կուսկազմակերպության ակտիվի համար։ Այդ ընթերցման մասին «Ռաբոչայա Մոսկվա» լրագիրը գրել է. «Դահլիճը լեփ-լեցուն էր։ Պոեմն ընդունվեց ամբողջ դահլիճի ջերմ ծափահարությամբ։ Բացված մտքերի փոխանակության ժամանակ մի շարք ընկերներ ասացին, որ դա ամենաուժեղն է այն ամենից, ինչ գրվել է Լենինի մասին»։

Բրոմլեյ և Գուժոն — գործարանատերեր նախահեղափոխական Մոսկվայում։ «Իսկ ցուցափեղկերի մոտ բոլոր Ելիսեևների...» — Ելիսեևը գաստրոնոմիական խոշոր խանութների տերերից մեկն էր։ «Հայրենասերները, Վոլաները հարմարվել են...» — առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարածված էր Միրովիչի «Վոլան հարմարվեց» վոդևիլը, որի գլխավոր գործող անձը, բուրժուական փափկակյաց մի որդյակ, գործողության ընթացքում դառնում է «կտրիճ-ռազմիկ»։

Լավ է (էջ 350)։ «Լավ է» պոեմը Մայակովսկին գրել է Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ։ Պոեմի նախնական անունն էր «Հոկտեմբեր»։

Երդվյալ հավատարմատար — Կերենսկին։ Կուսկովա — աջ սոցիալ-դեմոկրատ։ 1917 թ. հետո՝ սովետական միության կատաղի թշնամի։ Միլյուկով — կադետների կուսակցության առաջնորդը։ Կրեստի — բանտ Պետրոգրադում։ Տրոիցկի — կամուրջ Պետրոգրադում։ Միլիոննայա — փողոց Պետրոգրադում, որ անցնում էր Ձմեռային պալատի մոտով։ «Ի՞նչ են մեր դեմ ռուչկարյովյան հիմարությունները» — հոկտեմբերի 24-ին Ձմեռային պալատը պաշտպանելու համար Կերենսկին հրավիրել էր Պետրոգրադի առաջին կանանց գումարտակը, որի հրամանատարն էր Բոչկարյովան։ Պրոկոպովիչ — Ժամանակավոր կառավարության պարենավորման մինիստրը։ Կոնովալով — առևտրի և արդյունաբերության մինիստրը։ Անֆիլադ — սենեկաշարք։ «...սրբեց ու կալնեց այն տասներեքին» — Ժամանակավոր կառավարության տասներեք մինիստրներին։ Ալեքսանդր Բլոկ — այստեղ նկարագրված հանդիպման մասին Մայակովսկին հիշում է Բլոկի մահվանից հետո՝ 1921 թվականին գրած



հոդվածում. «Հիշում եմ, հեղափոխության առաջին օրերին ես անցնում էի մի նիհար, կորացած զինվորի մոտով, որը տաքանում էր Ձմեռայինի առջև սարքված խարույկի մոտ։ Ինձ ձայն տվեցին։ Բլոկն էր։ Քայլեցինք մինչև Մանկական մուտքը։ Հարցրի. «Դո՞ւր է գալիս»։ «Լավ է».— ասաց Բլոկը, իսկ հետո ավելացրեց. «Գյուղում այրել են իմ գրադարանը»։ Ահա այդ «լավ է»-ն և այդ «գրադարանը այրեցին»-ը հեղափոխության երկու զգացողություններն են, ֆանտաստիկորեն իրար կապված նրա «Տասներկուսը» պոեմում»։ Աֆաղադին մոտ քողիր — հրդեհել։ «...իթս է լոնգ ուեյ թու թիփերերի, իթս է լոնգ ուեյ թու գոու» — «Հեռու է ճամփան մինչև Թիփերերի, հեռու պետք է գնանք մենք» — 1914—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմի տարիներին խիստ տարածված անգլիական երգի սկզբնատողերը։ «Յանկի Դուդլ քիփ իթ ըփ, Յանկի Դուդլ Դենդի» — «Յանկի Դուդլ, ամուր կաց, Յանկի Դուդլ՝ պճնամոլ» — ամերիկյան երգի խոսքեր։ 1918-ին այն երգում էին Վլադիվոստոկ ներխուժած ամերիկյան օկուպանտները։ «Տրանսվալ, Տրանսվալ, օ՛, երկի՛ր իմ, այրվում ես դու բոցերում» — 1899—1902 թթ. անգլո-բուրական պատերազմի ժամանակաշրջանի ժողովրդական երգ։ Ֆիլիպով — մոսկովյան հայտնի բուլկեգործ։ Ձունգելովիչի մոտ են նաշում — այն տանը, որտեղ բնակվում էր Մայակովսկին, մասնավոր բնակարաններից մեկում, Ձունգելովիչի ճաշարանն էր։ Լավուտ Պավել Իլյիչ — Մայակովսկու ելույթ-երեկույթների կազմակերպիչը 1926—1930 թվականներին։ «Ալմազ» — այն նավը, որով Վրանգելը Ղրիմից փախավ։ Օլ ռայթ — ամեն ինչ լավ է (անգլ.)։ Վոյկով Պ. Լ.— ՍՍՀՄ լիազոր ներկայացուցիչը Լեհաստանում։ Սպանվեց Վարշավայում 1927 թ. հունիսի 7-ին սպիտակգվարդիական Կավերդայի ձեռքով։ Մայակովսկին Վոյկովին հանդիպել էր 1927 թ. մայիսի կեսերին, Վարշավայում եղած օրերին։ Ձերժինսկի Ֆ. Է. (1877—1926) — բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, Լենինի հավատարիմ զինակից, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության առաջնորդներից մեկը։ Իր 23 տարվա ընդհատակյա աշխատանքից 10 տարին անց է կացրել բանտերում և տաժանավայրերում։ Հոկտեմբերյան հեղափոխության օրերին ապստամբությունը նախապատրաստող և ղեկավարող կենտրոնի անդամ, հետո Պետերբուրգի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ։ 1917 թ. դեկտեմբերի 20-ից մինչև իր մահը՝ Չեկայի (ՀԱՀ-ի) անփոփոխ նախագահ։ Ձերժինսկին աչքի էր ընկնում իր պողպատյա կամքով, թշնամու դեմ պայքարելու իր անսասան վճռականությամբ և համարձակությամբ։ Սոցիալիստական շինարարության տաղանդավոր կազմակերպիչներից մեկն էր։ «Կեցցեն վիեննացիք» — Մայակովսկին խոսում էր 1927 թ. հուլիսին Վիեննայում ծագած բանվորական ապստամբության մասին։ Ապստամբության առիթ ծառայեց երկու բանվորի սպանող ֆաշիստների արդարացումը դատարանի կողմից։ Ձեր գութ — շատ լավ (գերմ.)։

Ամբողջ ձայնով (էջ 436)։ Վերջին գործը, որի վրա Մայակովսկին աշխատել է մահվանից առաջ, և որը մնաց անավարտ, հնգամյակի մասին պոեմն էր։ «Ամբողջ ձայնով»-ը այդ պոեմի առաջին նախերգանքն

է, սակայն այն, համարեցված լինելով բանաստեղծի գրական գործունեության քսանամյակին, փաստորեն նրա բոցաշունչ ու նպատակասլաց կյանքի և բանաստեղծական գործունեության հանրագումարն է։ «Ամբողջ ձայնով»-ը գրված է 1929 թ. դեկտեմբեր—1930 թ. հունվար ամիսներին։ Առաջին հրապարակային ընթերցումը տեղի է ունեցել 1930 թ. փետրվարի 1-ին, սովետական գրողների ակումբում, Մայակովսկու գործունեության քսանամյակին նվիրված ցուցահանդեսի բացմանը։ «Ամբողջ ձայնով»-ը տպագրվել է առաջին անգամ «Օկտյաբր» ամսագրի 1931 թ. № 2-ում։

**«Կատաղի բշնամի էր նում ջրի»**— կենսագրական մանրամասնություն։ Մայակովսկին համարյա ամբողջ կյանքում խուսափել է հում ջուր խմելուց և միշտ աշխատել է եփած ջուր գործածել։ Այս տողերով Մայակովսկին ծաղրում է այն «ակադեմիական» գիտուններին, որոնք հաճախ փորփրում են գրողի կենսագրականը, փորձելով «իմաստավորել» նրա ստեղծագործության հետ ոչ մի կապ չունեցող կենցաղային մանրամասնություններն անգամ։ «Միտրեյկաներ խոպոպաձոր, Կուդրեյկաներ իմաստախոր»— Մայակովսկին ակնարկում էր բանաստեղծներ Կ. Միտրեյկինին և Ա. Կուդրեյկոյին։ Իր ելույթներից մեկում խոսելով Կուդրեյկոյի ոտանավորի մասին, Մայակովսկին ասում է. «Այդ պոեզիան ընթանում է հնի, անկումային պոեզիայի ուղղությամբ»։ Ցիտատ Ի. Սելվինսկու «Գնչուական վալս կիթառի վրա» բանաստեղծությունից, որտեղ հետևյալ տողերը կան.

*Եվ լավում են միայն հառաչանքներ կիթառի։*
*Տարատեննա-տարատեննա-տեն...*

Որպես ցիտատ մեջ բերելով Սելվինսկու վերջին տողը, Մայակովսկին ծաղրի է ենթարկում քաղքենիական-դեկադենտական անկումային անհատապաշտական լիրիկան։ Նումիզմատ— դրամագետ, դրամահավաք, Կուրգան— գերեզմանաթումբ, դամբանաբլուր։ Գերեզմանի վրա հողաթումբ, դամբարան կազմելու սովորությունը առաջացել է դեռ քարի դարում։ Կուրգանների պեղումները հայտնաբերում են անցյալ դարաշրջանների նյութական կուլտուրայի արժեքավոր հուշարձաններ։ Լեթա— մոռացության գետ հին հունական առասպելներում։ «Լեթայից դուրս կլողան»— մոռացությունից դուրս կգան։ Ցե-Կա-Կա— (ռուս. Це-Ка-Ка) ЦККВКП(б)— ՀամԿ(բ)Պ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով։

## Պիեսներ

**Միստերիա-բուֆ** (էջ 443)։ Պիեսի այս երկրորդ տարբերակը Մայակովսկին ավարտել է առաջինից ավելի քան երկու տարի հետո։ Սկսել է 1920 թվականի հոկտեմբերին և ավարտել 1921-ի հունվարին։

Վիվ լա Ֆրանս — կեցցե Ֆրանսիան։ Իմպերիալ — ռուսական հին ոսկեդրամ։



**Փայտոջիլը** (էջ 559)։ Պիեսը գրվել է 1928 թվականի աշնանը։

Նոբիլե Ումբերտո — դեպի Հյուսիսային բևեռ իտալական օդային արշավախմբի պետը (1928 թ.)։ Նոբիլեին և նրա «Իտալիա» դիրիժաբլի աղետի ենթարկված խմբի անդամներին փրկեց սովետական «Կրասին» սառցահատը։ Կոտի— օծանելիքների փարիզյան ֆաբրիկանտ։ Դորոտի և Լիլիան — Դորոտի Գիշ (ծն. 1898) և Լիլիան Գիշ (ծն. 1896) — ամերիկյան կինոդերասանուհիներ, քույրեր։ Ռյաբուշինսկի— ցարական Ռուսաստանի կինոդերասանուհիներ... խոշորագույն կապիտալիստներից մեկը։ «Ես ձեզ համար կերգեմ Հիմենեի էպիտալաման» — նորապսակներին երջանկություն մաղթող հարսանեկան երգ։ Վենիզելոս Էլեֆտերի (1864—1936) հույն բուրժուական քաղաքական գործիչ։ Հարրի Պիլ (ծն. 1893) — գերմանացի կինոդերասան։

**Բաղնիք** (էջ 614)։ Պիեսի վրա Մայակովսկին սկսել է աշխատել 1929 թվականի մայիսին և ավարտել նույն տարվա սեպտեմբերի կեսերին։

Դու յու սպիկ ինգլիշ— դուք անգլերեն խոսո՞ւմ եք։ Շպրեխեն զի դոյչ— դուք գերմաներեն խոսո՞ւմ եք։ Պարլե վու ֆրանսե— դուք ֆրանսերեն խոսո՞ւմ եք։ Տրադյուկսիոն— թարգմանություն։ Էչելենցա— ձերդ գերազանցություն (իտ.)։ Սկոնապել— ինչպես ասում են (ֆր.)։

## Պիեսներ

Միստերիա-բուֆ— Թարգմ.՝ Խ. Հրաչյանի . . . . . . 443
Փայտոջիլը— Թարգմ.՝ Խ. Հրաչյանի . . . . . . 559
Բաղնիք— Թարգմ.՝ Խ. Հրաչյանի . . . . . . 614

Ծանոթագրություններ . . . . . . . . 684

Վլադիմիր Վլադիմիրովիչ Մայակովսկի
ՀԱՏԸՆՏԻՐ

Владимир Владимирович Маяковский
ИЗБРАННОЕ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1982

Խմբագիր՝ Վ. Հ. Բաբայան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլհակյան
Գեղ. խմբագիր՝ Օ. Ա. Աստոյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Օ. Գ. Թերզյան

ИБ № 2950

Հանձնված է շարվածքի 08. 12. 81։ Ստորագրված է տպագրության՝ 10. 03. 82։ Ֆորմատ $84 \times 108^{1}/_{32}$։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 36,54 պայմ. տպ. մամ., 31,8 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր 1976։ Գինը՝ 2 ռ. 90 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.